****

ՄԱՀԸ

1880-ական թթ. հայ մտավորականության կենցաղն ու հասարակական պատկերը շատ ավելի լայն ու խորն է տրված «Մահը» վեպում (1912): Գրողը ժողովրդի գործին կյանքը նվիրաբերելու իդեալական ձգտումները հակադրում է եսամոլությանը և շահամոլությանը: «Մահը» բազմաստիժե ստեղծագործություն է՝ լի կոնֆլիկտային բարդ իրադարձություններով: Վեպը ոչ միայն հեղինակի, այլ հայ քննադատական ռեալիզմի բարձրագույն նվաճումներից է:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1

Բաթումիից երկաթուղու մարդատար գնացքը սլանում էր դեպի Թիֆլիս: Թեև ամառը դեռ չէր վերջացել, բայց օդի մեջ արդեն զգալի էր վաղահաս աշնան ցուրտ շունչը, որ գուժկան էր 1890-91 թվականի խստաշունչ ձմռան: Շոգեմեքենայի և վագոնների հանած միակերպ աղմուկն ուղևորների համար անլսելի էր կացուցանում փոթորկի ձայնը, որ կատաղորեն սուլում ու մռնչում էր դուրսը, Իմերեթի Լեռնուտների վրա: Նկատելի և հազիվ լսելի էր լինում միայն, թե ինչպես անձրևի խոշոր կաթիլներն ուժգնությամբ զարկվում էին վագոնների փակ լուսամուտների ապակիներին և թրջում: Արտասվող ապակիների միջից ոչինչ չէր երևում դուրսը: Միայն հաճախ, երբ գնացքն անցնում էր փորված տեղերով, հանկարծ երևում և արագորեն, կարծես պտտվելով, հակառակ կողմն էր վազում բարձր մնացած հողաթմբերի մուգ զանգվածը:

Երկրորդ կարգի վագոններից մեկում, երկայն նստարաններից մեկի վրա երեսն ի վեր պառկած էր մի երիտասարդ, ձմեռվա տաք վերարկուի մեջ կոլոլված: Ամառվա սպիտակ գլխարկը ցած էր քաշել մինչև ականջները, այնպես որ հազիվ էին երևում նրա ոսկեպատ ակնոցի պարզ ապակիները, գլուխը հենել էր վագոնի պատն ի վեր ցից դրած ճանապարհորդական բարձին, ձեռները ներս էր կոխել վերարկուի թևերի մեջ և նիրհում էր վագոնի հետ օրորվելով: Հանդեպի նստարանի վրա ոչ ոք չկար: Մյուս նստարանների վրա նստած էին կենտ ու կունտ մարդիկ, որոնք ծուլաբար մի-մի խոսք էին փոխանակում իրար հետ, և նրանց ձայնը վագոնի միակերպ խուլ աղմուկի մեջ հնչում էր մի առանձին խորհրդավորությամբ, ինչպես դավադիրների քչփչոց:

Դռներից մեկը բացվեց, ցուրտ օդի մի հոսանք ներս թողնելով, և շրխկալով փակվեց նորից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— «Միխայլովո», — լսվեց կոնդուկտորի ձայնը: Երիտասարդն աչքերը բաց արեց, ձեռները կամաց հանեց վերարկուի թևերի միջից, ոտները դանդաղորեն ցած թողեց նստարանից, նստեց և գլխարկը բարձրացրեց աչքերից:

Կոնդուկտորն անցավ վագոնի երկայնքով և դուրս գնաց հակառակ կողմից, դուռը նորից շրխկացնելով իր ետևից:

Լսվեց շոգեմեքենայի երկար խուլ սուլոցը, որ կարծես հորից էր դուրս գալիս, և մի քանի րոպեից հետո գնացքը կամաց-կամաց դանդաղեցնելով իր ընթացքը, անզգալի կերպով կանգ առավ «Միխայլովո» կայարանում:

Երիտասարդը վեր կացավ և մի րոպե տատանման մեջ էր՝ դո՞ւրս գնա, թե ոչ: Բայց տեսնելով, որ ամենքը դուրս են գնում, ինքն էլ հետևեց նրանց:

Հենց ոտը գցեց պլատֆորմի վրա և ուզում էր ուղղվել դեպի բուֆետի դահլիճը, մեկը, որ մի փոքրիկ ճամպրուկ ձեռին բռնած շտապ քայլերով անցնում էր նրա առաջով, հանկարծ կանգ առավ և նայեց նրան:

Դա մոտ երեսուն տարեկան, խիստ համարձակ և վերին աստիճանի կրակոտ աչքերով մի երիտասարդ էր, որի այրական գեղեցիկ արտաքինին ուրույն գրավչություն էր տալիս զուտ արտիստական ճաշակով կարված նրա հագուստը — կինամոնագույն փափուկ կաստորի գլխարկը, նույն գույնի մահուդի կարճ բաճկոնը, աջ ուսից ձախ կողքին կախ ընկած սև պայուսակով, և երկարաճիտ պլպլան կոշիկները:

— Շահյա՞ն... Լևո՞ն, — բացականչեց նա, ճամպրուկն աջ ձեռքից արագությամբ փոխադրելով ձախ ձեռքը:

Շահյանն իր պլպլան ակնոցի միջից կես-զարմացած, կես-ապուշ հայացքով նայեց նրա ահագին սևաթույր աչքերին:

— Բա... բա..., — մեքենայաբար արտասանեց նա. ըստ երևույթին ջանք անելով հիշելու նրա անունը:

— Հա, հա, Բազենյան, — վրա գցեց նրան իր անակնկալ բարեկամը և պինդ սեղմեց նրա ձեռքը: — Տնաշեն, մի՞թե այնքան թույլ հիշողություն ունիս, որ մինչև անգամ ինձ էլ չես կարողանում միանգամից հիշել: Բա-բա ես անում, կարծես զատկի գառ լինես: Կարծես, ես այնքան էլ չեմ փոխվել: Իսկ դու... Երևակայիր, որ միայն ակնոցիցդ ճանաչեցի քեզ: Դեմքդ այնքան սպիտակել և քնքշացել է, որ կարծես աղջիկ լինես... Բայց այս ինչպիսի՞ բան է. մենք գալիս ենք այս միևնույն գնացքով և միայն այստե՞ղ ենք հանդիպում իրար:

— Դու է՞լ այս գնացքով ես գալիս, — զարմացավ Շահյանը:

— Եկա, և գնացքն այստեղից կշարունակի իր ճանապարհը, առանց այլևս իմ մարմնի ծանրությունը կրելու:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Այստեղից բաժանվո՞ւմ ես:

— Այո՛, բարեկամս. ես գնում եմ Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ, Կարս և այլն... Գիտեմ, իսկույն պիտի հարցնես, թե որտեղից եմ գալիս: Գալիս եմ ուղղակի Ղրիմից: Իսկ որպեսզի ավելորդ նեղություն չտաս քեզ հարցնելու ինձ, թե ինչ բանի եմ, այդ մասին քեզ հետ կխոսեմ Թիֆլիսում, երբ այս կողմերն անելիք կարճ էքսկուրսիայիցս հետո կգամ այնտեղ և մի անգամ առանձնապես կտեսնվեմ քեզ հետ: Առայժմ... Լսիր, քանի՞ տարի կլինի՝ չենք տեսել իրար:

— Եթե չեմ սխալվում տասը-տասներկու տարի կա:

— Մի՞թե: Երևում է, ժամանակը շատ առողջ թևեր ունի: Ցտեսություն: Ներիր, որ այսպես շուտ եմ բաժանվում քեզնից: Ես մենակ չեմ: Տեսնո՞ւմ ես այն կնոջը: — Բազենյանը մատով ցույց տվեց դահլիճի դռան մոտ կանգնած բարձրահասակ մի կին, որի դեմքը Շահյանը չկարողացավ տեսնել, որովհետև այդ կինը նայում էր դեպի դահլիճ: — Նա լեհացի է: Ճանապարհին ծանոթացա և ընկերացա հետը: Ամուսինը ռուս է, ծառայում է Կարսում: Գնում է նրա մոտ... Ի՛նչ, դու ժպտո՞ւմ ես:

Շահյանն այս անգամ ծիծաղեց:

Բազենյանը հանգստությամբ նայեց նրա անալի դեմքին և նույն հանգստությամբ նկատեց.

— Եթե այդքան անհամ չծիծաղեիր, ես քեզ լրջորեն կապացուցեի, որ նա պատվավոր կին է... Բայց ցտեսություն: Նա սպասում է ինձ: Մենք, երևի, կճաշենք այստեղ ու հայդա: Հա, ես դեռ կառք էլ պիտի վարձեմ:

Եվ Բազենյանը, ճամպրուկը նորից փոխադրելով աջ ձեռը, վազեց լեհացի կնոջ ետևից: Վերջինս, տեսնելով, որ նա գալիս է, համր քայլերով ներս մտավ դահլիճ, չափից դուրս հարուստ մազերով ծածկված գլուխը բարձր բռնած:

Շահյանը, երկմիտ ժպիտը դեմքին, հետևեց նրանց և, նստելով դահլիճի հեռավոր անկյուններից մեկում դրված մի առանձնակի սեղանի մոտ, պատվիրեց, որ իր համար թեյ բերեն:

Գրեթե ամբողջ գնացքը փոխադրվել էր դահլիճ: Ոմանք ձեռաց ուտելու բան էին պահանջել, ոմանք թեյով կամ ուրիշ խմիչքով էին ուզում կենդանություն տալ իրենց թմրած անդամներին: Կային և նոր ուղևորներ, գլխավորապես ամառանոցներից վերադարձող ընտանիքներ դպրոցական երեխաներով և անհամար մանր-մունր իրեղեններով:

Շահյանից ոչ շատ հեռու, մի բոլորովին առանձնացած սեղանի մոտ, լուսամուտի առաջ, իրար դեմուդեմ նստած էին Բազենյանն ու լեհացի կինը: Բազենյանը արմունկները սեղանի վրա դրած, ամբողջ մեջքով թեքվել էր դեպի իր ուղեկցուհին և խոսում էր նրա հետ այնպես, կարծես ինչ-որ ծածուկ բան էր պատմում նրան: Հետո նա վեր կացավ, արագ քայլերով մոտեցավ բուֆետին, ինչ-որ պատվիրեց այնտեղ, — երևի ուտելու բան, — և նույն արագ քայլերով դուրս գնաց, պլպլացնելով իր փայլուն երկարաճիտ կոշիկները:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Լեհացի կինը մնաց մենակ սեղանի մոտ իր հպարտ իրանով շիփ-շիտակ նստած:

Շահյանն այս անգամ տեսնում էր իր ակնոցի միջից այդ կնոջ դեմքը: Դա պատկանում էր այն հազվագյուտ կանանց տեսակին, որոնց առողջ մարմնակազմը, լավ խնամվելով, տարեցտարի աճում, փարթամանում է կաղնու ծառի պես, ընդսմին պահպանելով իր շնորհալիությունը: Չնայելով, որ նրա տարիքը երեսունից անց էր երևում, բայց և այնպես թվում էր, թե նրա մարմինը դեռևս ընդունակ է շքեղորեն զարգանալու: Նրա չափից դուրս հարուստ մազերը հազիվ էին ծածկվում զլխարկի տակ և իրենց ծանրությամբ կարծես անզոր կերպով ճնշում էին նրա հպարտորեն բարձրացած խոշոր զլուխը: Ինչպես խոշոր էր գլուխը, այնպես և խոշոր էին աչքերը, որոնց վերևը, սակայն, կարծես հոնքեր չկային — այնքան բարակ և աննկատելի էին այդ հոնքերը:

Գուցե մի քիչ ավելի լայն էր բերանը, որ նա ամենևին չէր էլ աշխատում փոքր ցույց տալու. ընդհակառակը, կարծես դեռ հպարտանում էլ էր իր բերանի լայնությամբ, որը մի առանձին ինքնավստահ հաղթական գեղեցկություն էր տալիս նրա դեմքի խոշոր, տպավորիչ գծերին: Բայց թվում էր, թե ավելի ևս հպարտանում էր կորսեթի մեջ խիստ սեղմված իր փարթամ կրծքով, որ լեռնացած էր նրա լիքը կզակի տակ:

Շահյանը դիտում էր նրան արուի վախկոտ ցանկասիրությամբ և տեսնում էր, որ դահլիճում եղած տղամարդկանցից ոչ մեկը աչքից բաց չէր թողնում նրան:

«Ինչպես մենք ամենքս նման ենք իրար», — մտածեց նա իր և այն բոլոր տղամարդկանց մասին, որոնք նայում էին այդ կնոջ վրա ցանկասեր արուի գիշատիչ հայացքով, և այն միտքը, որ ինքը նման էր ամենքին և ամենքը նման էին իրեն, ստիպեց նրան ամաչելու իր այն ստոր զգացումից, որ այդ կնոջ արտաքինը հարուցանում էր իր մեջ:

Վերջացնելով թեյի երկրորդ բաժակը, տասը կոպեկ ավելի վճարեց սպասավորին և վեր կացավ: Հակառակ իր կամքին, անդիմադրելի փափագ էր զգում մի անգամ ևս նայելու լեհացի կնոջը, բայց վախկոտությունից, թե ամոթից՝ չկարողացավ նայել և արագ քայլերով դիմեց դեպի դուրս:

Դուրսը, դահլիճի դռան մոտ, նրա դեմն ելավ նորից Բազենյանը:

— Կառքն արդեն վարձեցի, — ասաց նա: — Մնում է, որ իրեղենները ստանամ: Լսիր, Լևոն, ինչ եմ ասում: Թիֆլիսում անպատճառ ուզում եմ քեզ տեսնել: Էլի հին տա՞նն եք կենում:

— Միշտ միևնույն տանը:

— Շատ գեղեցիկ: Թիֆլիս կգամ մի՝ կամ, եթե շատ ուշացա, երկու ամսից հետո: Ես քեզ շատ բան ունիմ պատմելու: Մենք պետք է վերանորոգենք մեր հին բարեկամությունը: Դեհ, այժմ շտապիր, երրորդ զանգը շուտով կտան: Ցտեսություն:

Երբ Շահյանը մտավ վագոն, տեսավ, որ բավականաչափ նոր ուղևորներ են ավելացել և արդեն վառված է առաստաղից կպած լապտերը, թեև մութը դեռ չէր կոխել: Նա նստեց իր տեղը և սկսեց մտածել Բազենյանի մասին: Շատ լավ հիշում էր լրբի չափ հանդուգն իր դասընկերին, որի հետ ուսումնարանում եղած ժամանակ կապված էր ընկերական-

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

կրավորական այն տարօրինակ կապով, որը շատ անգամ երկյուղի և նախանձի արդյունք է լինում: Օր չէր անցնում, որ Բազենյանը մի որևէ խայտառակություն չգործեր, բայց միշտ դուրս էր պրծնում անվտանգ: Ինչպես Շահյանը, այնպես և մյուս դասընկերներից շատ-շատերը նրանից անհամեմատ ավելի բարեխիղճ և աշխատասեր աշակերտներ էին, բայց դրա փոխարեն Բազենյանը զարմանալի ընդունակություն ուներ ամենքի վրա իշխելու: Նա բոլորովին որբ էր, և ոչ ոք չէր իմանում, թե ով էր վճարում նրա ուսման վարձը և ով էր պահում նրան, բայց նա գրպանում միշտ փող էր ունենում և ինքն էլ միշտ լավ էր հագնվում: Մի անգամ, դեռ ուսումը չավարտած, նա ոտով-գլխով կորավ, և Շահյանը, որ նրա ամենամտերիմ ընկերն էր, սկզբում տխրեց, հետո իսպառ մոռացավ նրան: Բայց ահա, երկար տարիներից հետո, նորից հանդիպում է Բազենյանին ինչ-որ թափառաշրջիկի պաշտոնով, մի ինչ-որ «պատվավոր» կնոջ հետ...

Շահյանը նորից ժպտաց:

Բայց իսկապես ի՞նչ պաշտոն էր Բազենյանի պաշտոնը և ով էր այդ հաղթանդամ կինը...

Սակայն Շահյանը չուզեց ապարդյուն ենթադրություններով տանջել իր թմրած ուղեղը, բարձը քաշեց գլխի տակ, պառկեց և աշխատեց քնել:

Գնացքը շարունակում էր իր ճանապարհը: Վագոնը նորից բարձրացրել էր իր սրտամաշ աղմուկը: Անձրևի կաթիլները կտկտալով զարկվում էին լուսամուտների ապակիներին և, նրանց վրա ջրային ցանցեր կազմելով, թորում էին ներքև: Առաստաղից կպած լապտերի մեջ մոմի ճրագը ցնցվում, դողդողում էր և իր ցոլքերով խաղում Շահյանի ակնոցի երկու պլպլան ապակու մեջ:

Շահյանը ոչ քնած էր, ոչ արթուն. նա ընկել էր ճանապարհորդներին հատուկ կիսաքուն տանջող դրության մեջ: Մեկ էլ — վագոնում տիրած խաղաղությունը հանկարծ սթափեցրեց նրան: Նա նստեց և տեսավ, որ գնացքը կանգ է առել մի ինչ-որ կայարանում: Նստած տեղից մեկնվելով, աշխատեց թրջված ապակու միջից դուրս նայել դեպի կայարանը, սակայն ոչինչ չտեսավ, բացի վառ լապտերների շաղ անցած լույսից և մի քանի մարդկանց ուրվագծերից, որոնք շտապով այս ու այն կողմն էին անցնում: Կայարանում տիրում էր կատարյալ անդորրություն: Երևում էր, որ քամին ու անձրևը եթե ոչ դադարել, գոնե մեղմացել էին:

Լսվում էր միայն շոգեմեքենայի փշշոցը և վագոնների անիվներին խփած մուրճի հարվածների ձայնը, որ խուլ արձագանք էր տալիս ամայի կայարանի մեջ:

Շահյանը պինդ կոլոլվեց իր ձմեռվա վերարկուի մեջ, գլխարկը նորից ցած քաշեց մինչև ականջները, ձեռները կոխեց վերարկուի թևերի մեջ և կուչ եկավ նստարանի անկյունում:

Թրջված անձրևակալը ձեռին, վերարկուի օձիքը բարձրացրած և աներևակայելի ցեխոտ երկարաճիտ կոշիկներով ներս մտավ մի պարոն — նոր ուղևոր: Արագությամբ աչքի անցնելով վագոնում նստողներին և անձրևակալը դնելով դռան մոտ, նա նստեց Շահյանի դիմացի նստարանի վրա: Նա հասակն առած մարդ էր, համակրելի, ուրախ դեմքով և փոքր-ինչ դուրս ցցված փորով: Անձրևը բավական թրջել էր նրան: Նա վերցրեց գլխարկը, դրեց կողքին, վեր կացավ, վերարկուն հանեց, կախ արեց, դիտեց իր ցեխոտ կոշիկները, ոտները թափ տվեց և, թաշկինակով սրբելով քրտնած ճակատն ու ճաղատ ծոծրակը, նորից նստեց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանը առանց դիրքը փոխելու, ոչխարի աչքերով մի անգամ միայն նայեց նրան և նորից սկսեց նիրհել:

Նոր ուղևորն ուշադրությամբ դիտեց նրան և շարունակեց սրբել ճակատը, ծոծրակն ու վիզը: Շոգեմեքենան սուլեց, և գնացքը շարունակեց առաջ շարժվել: Շահյանը մի անհանգիստ շարժում գործեց և նստեց ուղիղ: Նոր ուղևորի հարևանությունը սկսել էր խանգարել նրան իր նիրհը շարունակելու:

— Չեք կարողանամ քնել, հա՞, — դիմեց նրան նոր ուղևորը քաղցրությամբ ժպտալով:

Շահյանը վիզն ավելի ներս կոխեց վերարկուի օձիքի մեջ:

— Ոչ, — պատասխանեց նա:

— Ձանձրանո՞ւմ եք:

— Այո:

— Իսկապես շատ ձանձրալի է երկաթուղով ճանապարհորդելը. մարդ մի տեսակ հիմար դրության մեջ է ընկնում. ոչ կարողանում է քնել, ոչ արթուն մնալ և ոչ գոնե մի բանի մասին մտածել: Այդպես չէ՞:

— Այդպես է:

— Զարմանալի արարած է մարդս առհասարակ, — շարունակեց Շահյանի անծանոթ ուղեկիցը: — Երկաթուղին ամենահարմար և ամենաարագ միջոցն է, չէ՞, փոխադրության համար. բայց արի տես, որ մարդս էլի դժգոհ է. ուզում է այնպիսի մի նոր միջոց, որով կարելի լինի ավելի կարճ միջոցում ավելի երկար ճանապարհ կտրել: Ես հավատում եմ մտքի հաղթանակին և ամենևին չեմ տարակուսում, որ այդպիսի մի միջոց կգտնվի անպատճառ, հենց թեկուզ այնպիսի մի բան, որով մարդ կարողանա թռչել օդի մեջ, ոչ թե օդապարիկով, ոչ, — օդապարիկն էլ շատ վտանգավոր բան է, — այլ ուղղակի թռչունի պես: Սակայն այդպիսի փորձեր, կարծեմ, եղել են, չէ՞:

— Կարծեմ:

Նոր ուղևորն, ըստ երևույթին, ուզում էր շարունակել խոսակցությունը, բայց տեսնելով, որ երիտասարդ ուղեկիցը տրամադրություն չունի խոսելու, լռեց: Սակայն երկար չհամբերեց և հարցրեց.

— Դուք անշուշտ Քութայիսից եք գալիս, այնպես չէ՞:
«Ինչո՞ւ անշուշտ», — մտածեց Շահյանը և պատասխանեց:
— Ոչ,
— Կամ Աբասթումանից... կամ Բորժոմից: Հա՞:
— Ոչ, այդ կողմերից չեմ գալիս:
— Ուրեմն անշուշտ Բաթումից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

«Էլի անշուշտ», — մտածեց Շահյանը և պատասխանեց.
— Այո,
— Եվ Թիֆլիս եք գնում:
— Այո:

Շահյանը նորից կոլոլվեց վերարկուի մեջ, նորից կուչ եկավ նստարանի անկյունում և աչքերը փակեց:

— Ներեցեք, ես ձեզ, գուցե, ձանձրացնում եմ, — շտապեց նկատել նոր ուղևորն այնպիսի քաղցրությամբ, որ Շահյանը նոր զգաց, որ իր վարմունքը մի ցույց էր նրա հարցասիրության դեմ:

Նա ժպտաց և նորից նստեց ուղիղ:

— Ամենևին, — պատասխանեց նա բնավորություն չունեցող մարդկանց հատուկ կակղությամբ, — Ընդհակառակը, ես շատ ուրախ եմ, որ դուք ուզում եք ինձ ընկերակցել:

— Այդ ավելի լավ թե ձեզ և թե ինձ համար, — վրա բերեց ինքնակոչ բարեկամն ավելի մեծ քաղցրությամբ, — որովհետև, կարծում եմ, ոչինչ այնքան տաղտկալի չէ, որքան մենակ ճանապարհ գնալը: Այդպես չէ՞:

— Այդպես է:

— Ուրեմն, կարծում եմ, կարող ենք ծանոթանալ առանց այլևայլության:

— Համեցեք:

— Ձեր անունը բաշխեցեք ինձ:

— Լևոն...Շահյան:

Նոր ուղևորն աչքերը չռեց:

— Շահյա՞ն, — հարցրեց նա:

— Այո:

— Դուք Շահյանի որդի՞ն եք:

— Այ՛ո :

— Կարապե՞տ Շահյանի:

— Այո: Դուք ճանաչո՞ւմ եք հորս:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Վա՛հ, ինչպե՛ս չէ, — բացականչեց նոր ուղևորը վերին աստիճանի աշխուժով: — Մի ժամանակ ես ու ձեր հայրը լավ բարեկամներ և լավ հարևաններ էինք, բայց հետո... մեր հարաբերությունները կտրվեցին, առանց մի որևէ պատճառի: Դուք նկատած կա՞ք, որ շատ մոտիկ բարեկամների մեջ կամաց-կամաց, աննկատելի կերպով այնպիսի փոփոխություններ են կատարվում երբեմն, որ չես հասկանում, թե ինչպես եղավ, չես կարողանում ըմբռնել պատճառը: Ձեր հոր և իմ միջև եղած հարաբերություններն էլ հենց այդպես կտրվեցին: Սկզբում կլուբում էլի երբեմն-երբեմն հանդիպում էինք իրար, բայց վերջին տարիներս նա էլ չի երևում: Ասում են, հիվանդ է, ճշմարի՞տ է:

— Այո: Տնից բոլորովին դուրս չի գալիս:

— Ի՜նչ եք ասում: Ինչո՞վ է հիվանդ:

— Իսկապես... ինքս էլ չգիտեմ: Բժիշկները ասում են, որ աղիքների հիվանդություն ունի: Բայց շատ է տանջվում. երբեմն ցավից այնպես բղավում է, որ ականջ պետք է դիմանա:

— Ի՜նչ եք ասում: Խե՜ղճ մարդ: Ես հիշում եմ, որ նա այդպիսի մի հիվանդություն ուներ: Երևում է՝ հնացել է, ժամանակին չի բժշկվել: Ի սեր աստծո, տուն որ գնաք, բարևեցեք նրան իմ կողմից և ասացեք, որ ես անկեղծ ցավում եմ և չեմ մոռացել իրեն: Կասե՞ք:

— Ուրախությամբ:

— Ներեցեք, ես մոռացա ձեզ ազգանունս հայտնել. — Մարության Գևորգ: Ձեր հայրն ինձ իսկույն կհիշի: Հա՛յ գիդի աղա Կարապետ... Հախ աստծո, շատ լավ մարդ է, վերին աստիճանի բարի մարդ է: Ափսոս, հազար ափսոս... Ես ձեզ հիշում եմ. դուք այն ժամանակ շատ փոքր էիք: Ձեր հայրն երբեմն բերում էր ձեզ գրասենյակ: Այժմ մեծացել, հասունացել եք: Ներեցեք, դուք Բաթումում պաշտո՞ն ունիք:

— Ոչ:

— Գիտեմ, որ համալսարան էիք գնացած. ավարատե՞լ եք:

— Ոչ, — հապաղելով պատասխանեց Շահյանը:

— Ինչո՞ւ:

— Հիվանդությանս պատճառով ուսումս կիսատ թողի:

— Հա՞... Ինչո՞վ էիք հիվանդ:

«Սա ի՞նչ հարցուփորձ է», — նեղացած մտածեց Շահյանը և պատասխանեց.

— Վատառողջ էի... կրծքացավ ունեի:

— Հա՜ ... շատ պարապելուց, երևի: Ներեցեք, հապա Բաթումում ի՞նչ էիք շինում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանը զգաց, որ արդեն անտանելի է դառնում այդ երկար ու բարակ հարցուփորձը, բայց և այնպես այդ հարցին էլ պատասխանեց.

— Ես իսկապես Բաթում չէի, այլ — Սոչի: Բժիշկների խորհրդով գնացել էի այս ամառ կազդուրվելու:

Ուրիշ մի քանի հարցեր էլ տվեց Մարությանը, որից հետո արդեն իրենից սկսեց պատմել, թե ո՛րտեղից է գալիս և ո՛ւր է գնում: Նրա երկար ու բարակ պատմությունից Շահյանն իմացավ, որ նա այդ ամառ ընտանիքով Աբասթումանումն է եղել դրանից մի շաբաթ առաջ թողել է ամառանոցը և, Թիֆլիս վերադառնալիս, զիջելով Գորիում բնակվող իրենց մի ինչ-որ բարեկամի խնդիրքին, ամբողջ ընտանիքով հյուր է գնացել նրա տուն մի քանի օրով: Բարեկամի տանը շատ քաղցր հյուրասիրություն վայելելուց հետո, Թիֆլիս վերադառնալուց առաջ, այդ օրն առավոտյան «ձեռաց վազել է» հենց նոր անցած կայարանի մոտ գտնված սեփական այգիները դիտելու, որոնց այնքան էլ լավ դրության մեջ չի գտել, և այժմ վերադառնում է Գորի, որտեղ, կայարանում, այժմ սպասելիս պիտի լինի ընտանիքը՝ այս միևնույն գնացքով ուղղակի Թիֆլիս գնալու համար:

— Բայց չեմ կարծում, որ այս գիշեր նրանք կամենան Թիֆլիս գնալ, որովհետև եղանակը սարսափելի է, և մեր բարեկամն էլ չի թողնիլ, — ավելացրեց Մարությանը: — Նայեցեք մեկ կոշիկներիս, գյուղից կայարան գալիս՝ ոտներս ուղղակի չէի կարողանում հանել ցեխի միջից:

Մինչև որ գնացքը «Գորի» կայարան կհասներ, ինքնակոչ ծանոթն իր շատախոսությամբ փառավորապես ձանձրացրեց Շահյանին: Մարությանը պատկանում էր այն մարդկանց կարգին, որոնց համար լռությանը մի տանջանք է, և եթե մարդ չգտնեն, որ իրենց լսի, կխոսեն իրենք իրենց հետ և, իրենք էլ կլսեն իրենց:

Մասնավորից ընդհանուրին անցնելով, Մարությանը խոսում էր մամուլի, գրականության, կուսակցությունների, թատրոնի, առևտրի, քաղաքական անցքերի, ազգային գործերի մասին: Պարզ երևում էր, որ նա ջերմ կերպով հետևում էր այդ բոլորին, և նրա ունեցած տեղեկությունները բավական հիմնավոր էին: Այդ ընդհանուր խնդիրներն էլ կամ ամենևին չէին հետաքրքրում Շահյանին, կամ նրա ունեցած տեղեկությունները այնքան վայրիվերո էին, որ նա չէր համարձակվում վիճաբանության բռնվելու Մարությանի հետ, երկյուղ կրելով, թե միգուցե իր անգիտությունն երևան հանի այդ մարդու առաջ, որի վրա սկզբում բարձրից էր սկսել նայել Մարությանն ասաց, որ ինքը Խալիպյան դպրոցի հին սաներից է, որ մի ժամանակ ջերմ փափագ ուներ գրականության նվիրվելու, բայց հանգամանքներն ստիպեցին իրեն վաճառական դառնալու:

Ձեռները վերարկուի թևերի մեջ կոխած, Շահյանը իր պարզ ակնոցի միջից ապուշի պես նայում էր խոսակցի վերին աստիճանի շարժուն կենսուրախ դեմքին և նրա հարցմունքներին պատասխանում էր ծուլաբար արտասանած կարճ, անորոշ խուսափողական նախադասություններով:

Մարությանը աննկատելի կերպով դարձավ այդ միջոցին Հայաստանում երևան եկած խառնակություններին, որոնց մասին հեռագիրը լարեր էր հաղորդում լրագրերին: Շահյանը կարդում էր այդ լուրերը. գիտեր, որ հունիսի կեսին Էրզրումում թուրք իշխանությունը խուզարկել էր հայոց եկեղեցին ժամերգության ժամանակ, կասկածելով, թե այնտեղ զենք կա

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

պահված, որից և մի ընդհարում էր առաջացել թուրք զինվորների և հայերի միջև. գիտեր նույնպես, որ հուլիսի 15-ին Կ. Պոլսում, Կում-Կափուի Մայր եկեղեցում, ժողովուրդը հարձակում էր գործել Աշըղյան պատրիարքի վրա, այնպես որ պատրիարքը ստիպված էր եղել փախչել և թաքնվել մոտակա տներից մեկում. — բայց միայն կարդացել և անցել էր անտարբեր կերպով, ինչպես կարդում և անցնում էր նույն այդ ժամանակներում Բրազիլիայի և Արգենտինյան հասարակապետության մեջ կատարվող պետական հեղափոխությունների մասին նույն հեռագրի հաղորդած լուրերը: Ընդհանուր հայությունը ցնցող այդ մեծ գործի նախաբանն էլ անկարող էր եղել որևէ թել շարժել նրա մեռած հոգու մեջ: Այդպես չէր Մարությանը, տարիքով Շահյանից անհամեմատ մեծ և գրեթե ծերունի, նա այդ նշանավոր դեպքերի մասին խոսելիս, ոգևորված էր պատանու պես և ապագայի վրա նայում էր ամենավառ հույսերով:

— Դուք ճանաչո՞ւմ եք իմ որդուն, — հանկարծ հարցրեց Մ արությանը:

— Արմենակ Մարության: Դուք երևի չեք հիշում նրան, բայց անկարելի է, որ նրա հոդվածները կարդացած չլինիք. սկզբում Գերմանիայից, հետո Լոնդոնից թղթակցում էր մեր լրագրերին Արմենակ ստորագրությամբ:

— Ախ, հիշեցի. Արմենակ... Ինչպե՜ս չէ. ես նրա գրածները կարդում էի. բավական խելացի հոդվածներ էին նրա քաղաքական հոդվածները: Այժմ նա որտե՞ղ է. էլ ոչինչ չի

գրում կարծեմ:

— Նա՞... Այժմ նա... այնտեղ է, — ասաց Մարությանը ձեռքի մի խորհրդավոր նշանով, որից Շահյանը, սակայն, ոչինչ չհասկացավ:

Լսվեց շոգեմեքենայի երկարատև խուլ սուլոցը: Դուրսը, վագոնի լուսամուտների առաջով, սկսեցին ետ փախչել ինչ-որ վառ ճրագներ, վայրկյան առ վայրկյան լուսավորելով կիսախավար վագոնի ներկը:

Մարությանը շտապով վեր կացավ:

— Նա այնտեղ է, ուր պետք է, ուր պարտավոր է գնալ ամեն մի հայ երիտասարդ, — շարունակեց նա մի տեսակ ցնծագին տրամադրությամբ: — Ե՛ս չէի ուղարկողը, նա ի՛նքը գնաց... իր ներքին դրդումով... Ողջ կվերադառնա այնտեղից, թե ոչ, միայն աստծուն է հայտնի, բայց որ մեր նորագույն պատմության մեջ կփառավորի իր և իմ անունը, — դրան ես համոզված եմ և ո՛չ մի տարակույս չունիմ, որովհետև.... Ինչևիցե: Այդ մասին մենք դեռ կխոսենք: Իսկ այժմ արդեն հասանք Գորի:

Նա ծածկեց գլխարկը, վերարկուն հագավ և վերցրեց անձրևակալը:

— Եթե մերոնք հիմա եկել են կայարան, խո լավ, իսկ եթե ոչ, ապա մնաք, այսինքն գնաք բարյավ, ցտեսություն: Կարծում եմ, որ քաղաքում մենք դարձյալ կտեսնվենք իրար հետ, այնպես չէ՞. մենք խո բարեկամներ ենք արդեն:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Անպատճառ, անպատճառ, — ժպտալով պատասխանեց Շահյանը, սեղմելով Մարությանի ձեռքը:

— Ուրեմն ցտեսության: Չմոռանաք իմ կողմից բարևեք ձեր հորը:

Երբ Մարությանը դուրս գնաց, Շահյանը կարճ ժամանակ մնաց անորոշ մտախոհության մեջ: Նա ինքն էլ չէր իմանում, թե ինչ է մտածում. միտքն նրա աչքի առաջ կարծես թե քարացել էր այն խորհրդավոր շարժումը, որ արավ Մարությանը ձեռքով, ավելի ևս խորհրդավոր «այնտեղ» բառն արտասանելիս...

Նրան ուշքի բերեց կայարանում տիրող ժխորը և նա դանդաղորեն դուրս գնաց:

3

Դահլիճում մի կտոր խավյարով բուտերբրոդ և չափից դուրս հում բիֆշտեքս ուտելուց և վրան էլ մի քանի բաժակ գարեջուր խմելուց հետո, երբ Շահյանը վերադարձավ վագոն, տեսավ, որ վագոնը գրեթե լցված է նոր ուղևորներով: Նոր ուղևորներից մի քանիսը բռնել էին իր հանդեպի նստարանը, և մինչև անգամ իր նստարանի վրա փառավորապես բազմել էին երկու գորեցի՝ խուրջիններով, կողովներով և ուրիշ կապոցներով: Նա ուզում էր խուրջինների վրայից շեք տալով անցնել իր տեղը, լուսամուտի տակ, նստելու համար, երբ հանկարծ լռեց Մարությանի ձայնը.

— Պարոն Շահյան, համեցեք այստեղ, համեցեք այստեղ:

Շահյանը նայեց այն կողմը, որտեղից եկավ այդ ձայնը, և տեսավ Մարությանին, որ իր ընտանիքի հետ տեղավորվել էր ուրիշ երկու նստարանի վրա վագոնի մյուս ծայրին:

— Այստեղ, այստեղ, ձեր տեղը բռնել են, եկեք մեզ մոտ, — բղավում էր Մարությանը:

— Շնորհակալ եմ. ինձ համար էլի տեղ կա, — պատասխանեց Շահյանը ժպտալով:

Այս անգամ նա տեսավ, որ երեք կին և մի երեխա հետաքրքրությամբ նայում էին իրեն սպասողական դրության մեջ:

— Դե՛հ, մենակ խո չե՞ք նստիլ այդտեղ. եկեք կխոսենք, էլի: Տեղ շատ կա այստեղ, մի վախենաք. եկեք:

Շահյանը մեկ ուզեց վերցնել իր բարձը, առանց իմանալու, թե ինչու, բայց թողեց և գնաց Մարությանների մոտ: Մարությանն անմիջապես ծանոթացրեց իր ընտանիքի անդամների հետ և իր կողքին տեղ տվեց նրան: Այդ ընտանիքը կազմում էին չորս հոգի. Մարությանի կինը — Թեկլեն, աղջիկը — Եվան, եղբոր աղջիկը — Աշխենը և չորս-հինգ տարեկան տղան — Սուրենը:

Առհասարակ հասարակությունից խույս տալով, Շահյանը միշտ խույս էր տվել մանավանդ կանանց հասարակությունից: Նա գիտեր, որ կանանց զբաղեցնելու համար առանձին շնորհք էր հարկավոր, իսկ այդպիսի շնորհք ինքը չուներ: Կանանց մոտ եղած ժամանակ շփոթվում,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

կարմրում էր և չէր իմանում ինչպես պահի ձեռները: Այդ բանը սաստիկ տանջում էր նրան, որովհետև չափազանց ինքնասեր և կասկածամիտ էր:

Այժմ նրա մոտ նստած և հետաքրքրությամբ դիտում էին նրան մի տարիքավոր կին և երկու հասունացած օրիորդ, որոնց առաջին անգամ էր տեսնում և չգիտեր, թե դրանք ի՛նչ հոգու, ի՛նչ մտքի, ի՛նչ բնավորության տեր էին: Դրանց ներկայությունը շատ ծանր պետք է լիներ նրա համար, եթե Մարությանի ներկայությունը փոքր առ փոքր համարձակություն չներշնչեր նրան: Իսկ Մարությանն այս անգամ նրան ներկայանում էր այնպես, որ այդ մարդու հետ կարծես ծանոթ էր շատ վաղուց:

Բանից երևաց, որ Թեկլեն և Եվան պակաս հետաքրքրվող ու շատախոս չեն եղել Մարությանից: Մի կողքից Մարությանը, մյուս կողմից Թեկլեն, երրորդ կողմից Եվան այնքան բաներ էին հարցնում, որ նա չէր իմանում որի հետ խոսի, որի հարցին պատասխանի: «Որտեղից են հավաքվել այս շատախոսները», — մտածում էր նա ժպտալով և զարմանքով զգում էր, որ եթե ամբողջ օրերով, այդպես նստած, խոսի նրանց հետ, երբեք չի ձանձրանալ: Մինչդեռ մի կես ժամ առաջ էր, որ նա վերին աստիճանի ձանձրացել էր Մարությանի շատախոսությունից:

Իսկույն երևում էր, որ Մարությանի ընտանիքն ինտելիգենտ ընտանիքներից էր: Մամուլի և հասարակության մեջ շոշափված առօրյա ոչ մի խնդիր, ինչպես երևում էր, բաց չէին թողնում նրանք: Այդ միջոցին էլ նրանց խոսակցության նյութն այդ առօրյա խնդիրներն էին: Շահյանը զարմանքով տեսնում էր, որ Մարությանը, կինը, աղջիկը երբեմն բոլորովին տարբեր, շատ անգամ հակառակ կարծիքներ էին հայտնում միևնույն նյութի մասին և բավական տաքացած վիճաբանում էին իրար հետ, մանավանդ հայրն ու աղջիկը: Երբ չէին կարողանում իրար համոզել, նրանք դիմում էին Շահյանին, իբրև մի հեղինակավոր մարդու, որի կարծիքը վճռական նշանակություն պիտի ունենար: Շահյանը շատ լավ տեսնում էր, որ իր խելքը նրանց խելքից բարձր չի հասնում, և իր տեղեկությունները, նրանց ունեցած տեղեկությունների հետ համեմատած, շատ վայրիվերո են, ուստի այդպիսի դեպքերում ի ներքուստ խիստ ամաչում էր, որ իրեն այդքան մեծ նշանակություն են տալիս. միևնույն ժամանակ երկյուղ էր կրում, թե միգուցե իրեն անծանոթ նյութի մասին հանկարծ այնպիսի անհեթեթ կարծիք հայտնի, որ միանգամից հիասթափեցնե նոր ծանոթներին իր վերաբերմամբ: Այդ պատճառով հարկավոր դեպքում չափազանց զգույշ էր պահում իրեն և ամեն կերպ աշխատում էր, որ պատվով դուրս գա որոգայթից, թեև նրա պատասխանները կցկտուր և անորոշ էին լինում:

Շահյանին ամենից ավելի դուր էր գալիս Եվայի վիճաբանությունը: Եվան խոսում էր համարձակ, արագ. նախադասությունների կեսում հանկարծ կանգ էր առնում, մտառու աչքերով անթարթ նայում էր խոսակցի դեմքին, կարծես բառեր էր որոնում միտքը լավ արտահայտելու համար և շարունակում էր նույն համարձակությամբ, նույն արագությամբ. իրեն ուղղված հարցերին պատասխանում էր իսկույն, շատ անգամ բառը կիսատ թողնելով հարցնողի բերնին. հաճախ պատասխանելու տեղ ինքն էր հարց առաջարկում: Եվ այդ բոլորի հետ ձեռներով, աչքերով, հոնքերով այնքան անհանգիստ շարժումներ էր անում, որ Շահյանին թվում էր, թե նա խոսում է ոչ միայն լեզվով, այլև ձեռներով և բոլոր դիմագծերով:

Եվան նստած էր Շահյանի դիմաց, մոր կողքին: Կապույտ ներկված բամբակի փոքրիկ թեթև շալը վերցրել էր գլխից և դրել էր ծնկներին: Փայլուն մազերը հյուսված էին մի հաստ գիսակի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

մեջ, որով գագաթի վրա մի սպիտակ գիծ էին ակոսել դեպի ետև՝ սկսած ճակատից: Նա սովորություն ուներ երկու ձեռքով շուտ-շուտ ուղղելու մազերը և ականջների ետևը քաշելու: Երբ ժպտում էր, նրա աչքերը հեգնական, կծու արտահայտության էին ստանում, իսկ զարմանալիս նրա այնքան շարժուն դիմագծերը հանկարծ սառչում, քարանում էին և առանց այն էլ խոշոր աչքերը զարմանալի կերպով մեծանում էին ու խորանում:

Ժամանակը թռչում էր աննկատելի կերպով: Շահյանի ձանձրույթը չքացել էր: Խոսակցությունը շարունակվում էր անվերջ: Բացի Սուրենից, որ, գլուխը հոր ծնկան վրա դրած, քնել էր, խոսակցությանը չէր մասնակցում մեկը. դա Մարությանի եղբոր աղջիկն էր — Աշխենը:

Նա նստած էր նստարանի ծայրին, լուսամատի մոտ, գունատ ու վտիտ և կարծես աշխատում էր, որ իր ներկայությունն աննկատելի մնա: Շահյանը երբեմն հետաքրքրությամբ նայում էր Աշխենին, և նրան զարմացնում էր այդ աղջկա երկայն նիհար դեմքի վերին աստիճանի անշարժ, քարացած արտահայտությունը: Այնինչ Աշխենը տգեղ չէր. նա մինչև անգամ կարող էր գեղեցկուհի համարվել, եթե չափից դուրս նիհար չլիներ: Եվան շատ հաճախ դիմում էր նրան զանազան հարցերով, բայց նա պատասխանում էր կարճ, կտրուկ և բոլոր ժամանակ նայում էր լուսամուտից դուրս, որտեղ անվերծանելի խավարի մեջ դեպի հակառակ կողմն էին թռչում շոգեմեքենայի ցանած կայծերը: Երբեմն միայն իր խելացի աչքերը հեռացնում էր լուսամուտից և հանդարտ, անտարբեր հայացքով նայում էր Շահյանին, նայում էր այնպես, որ կարծես նրա բռնած տարածությունը դատարկ տարածություն լիներ, և ինքը նայում էր այդ դատարկ տարածության մեջ և չէր տեսնում Շահյանին: Այդ միջոցներին միայն Շահյանը կարողանում էր ուղիղ նայել նրա դեմքին և ամենևին չէր կարողանում հասկանալ, թե ինչ տպավորություն է թողնում այդ աղջիկն իր վրա. միայն զգում էր, որ եթե Աշխենը խոսեր իր հետ, ինքը չէր կարողանալ նրա հետ խոսել այնպես ազատ, ինչպես խոսում էր Մարությանի, նրա կնոջ և նրա աղջկա հետ:
Ինչ-որ զսպող և ճնշող բան կար Աշխենի խելացի աչքերի և կրծքային ձայնի մեջ:

4

Ուշ գիշերին գնացքը «Թիֆլիս» կայարան հասավ, Մարությանները վերցրին իրենց ձեռքի իրեղենները և շտապեցին դուրս գնալ վագոնից: Շահյանն էլ առավ իր բարձն ու ճամպրուկը և հետևեց նրանց:

— Դե՛հ շուտ գնանք, որ կառք ճարենք, — ասաց Մարությանը, բռնելով փոքրիկ Սուրենի ձեռքից, և, կայարանում խռնվող ժողովուրդը ճղելով, առաջ անցավ: — Եկեք այս կողմը, չկորչեք... Այս կողմը, այս կողմը... Թեկլե՛, Աշխե՛ն, Եվա՛... այս կողմ... Պարոն Շահյանն ի՞նչ եղավ... Հա, դուք գալի՞ս եք...

Դուրսը, կայարանի հրապարակի վրա, մարդիկ և կառքեր իրար էին անցել: Ամեն կողմից կառք էին կանչում: Կառապանները հայհոյում էին իրար: Վերևից բարակ անձրև էր մաղում: Եղանակը խոնավ էր և ցուրտ: Մարությանն իր բոլոր ընտանիքով ներս թափվեց առաջին պատահած կառքը: Շահյանն էլ իր համար մի կառք ճարեց և, ճամպրուկն ու բարձը դնելով այնտեղ, շտապով մոտեցավ Մարությանների կառքին, որի մեջ նրանք տեղավորվելու վրա էին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Պարոն Մարության, դուք շատվոր եք, դժվարությամբ կտեղավորվեք. լավ չի՞ լինի, որ երկու հոգի գաք ինձ մոտ:

— Հա՛, եթե այդպիսի բարություն կանեք, — ասաց Մարությանը: — Ես կնստեմ պարոն Շահյանի մոտ, — կանչեց Եվան և իսկույն ցած թռավ կառքից:

— Ուրիշ ո՞վ է գալիս, — հարցրեց Շահյանը:

— Սուրե՛ն, Սուրե՛ն, դու արի, — կանչեց Եվան: Շահյանը խստեց Սուրենին և, նրա ծանրության տակ տնքալով, տարավ դեպի իր կառքը:

Շահյանն ու Եվան նստեցին միասին և Սուրենին առան իրենց մեջտեղը:

Կառքերն առաջ շարժվեցին:

Կարճ ժամանակ Շահյանն ու Եվան լուռ էին: Եվան իրեն հատուկ արագ շարժումներով զբաղված էր փոքրիկ եղբորը շալի մեջ փաթաթելով: Իսկ Շահյանը մտածում էր, թե ինչ խոսի, որ լուռ չմնա: Այդ առաջին անգամն էր, որ նա մեն-մենակ նստած էր մի օրիորդի հետ միմիայն մի փոքրիկ երեխայի ներկայությամբ: Նա ուզում էր այդ երեխայի հետ խոսել, բայց երեխայի հետ խոսելու եղանակն չգիտեր: Թեև նրա լեզվի ծայրին էր եղանակի մասին խոսելու մշտապատրաստ նյութը, բայց որովհետև մի տեղ կարդացել էր, թե խոսելու նյութ չգտնող անշնորհք մարդիկ լուռ չմնալու համար միշտ եղանակի մասին են սկսում խոսել այդ պատճառով ավելի լավ համարեց լռել, քան թե եղանակի մասին խոսել սկսելով իր անշնորհքությունը ցույց տալ:

Բայց Եվան կամ չէր կարդացել խոսելու նյութ չգտնող անշնորհք մարդկանց մասին նրա կարդացածը, կամ ամենևին չվախեցավ, թե ինքը կարող է այդպիսի անշնորհքներից մեկը համարվել, եթե եղանակի մասին խոսակցություն բանար:

— Ի՜նչ վատ եղանակ է, տե՛ր իմ աստված, — ասաց նա ոտները կուչ ածելով և մի ձեռքով ամուր գրկելով եղբորը: — Խոնավ, ցուրտ, մառախլապատ... Ի՜նչ լավ է, որ դուք ձմեռվա վերարկու եք վերցրել:

— Ես մրսկան եմ, — ասաց Շահյանը և իսկույն մտածեց, թե «տղամարդուն» վայել բա՞ն էր արդյոք իր ասածը:

— Եվ գիտեք, կան մարդիկ, — շարունակեց Եվան, — որոնք սիրում են այսպիսի եղանակ: Այ, օրինակ, Աշխենը, հորեղբորս աղջիկը: Նա այսպիսի եղանակ սիրում է: Ասենք, այսպիսի եղանակ չէ: Եղանակը հիմա ուղղակի անպիտան է և զզվելի: Ուզում եմ ասել սարսափելի եղանակ: Սարսափելի եղանակը գիտե՞ք որն է. — երբ սև ամպերն ու գետնի փոշին խառնվում են իրար, երբ կատաղի փոթորիկը ծռում է ծառերի կատարները, երբ երկինքը փայլատակում, գոռում ու ճայթում...

— Լավ, այդպիսի եղանակի մեջ ի՞նչ կա սիրելու, որ սիրում է ձեր հորեղբոր աղջիկը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Այ, ասեմ: Մի անգամ, անցյալ մայիսին, գիշերը, հանկարծ սկսեց անձրև գալ, ուղղակի հեղեղ: Երկինքը սարսափելի փայլատակում և այնպես որոտում էր, որ լուսամուտները զնգզնգում էին: Որ գիտենաք ինչպես վախենում եմ երկնքի որոտումից, մանավանդ գիշերը, երբ ամեն ձայն լռած է շուրջդ: Կարծում եմ, թե ահա որտեղ որ է կայծակ պիտի ընկնի և — ուղղակի մեր տան վրա: Մերոնք ամենքն արդեն քնած էին: Ես էլ նոր էի պառկել, Աշխենն էր միայն զարթուն իր սենյակում, որ իմ սենյակին կից է: Նա միշտ ամենից ուշ է քնում: Ճրագը հանգցրել էի:

Սենյակս այնպես լուսավորվում էր փայլատակումներից, որ թվում էր ինձ, թե վերմակի տակ, աչքերս փակած ժամանակ անգամ տեսնում եմ այդ էլեկտրական սարսափելի լույսը: Դողը բռնել էր ամբողջ մարմինս: Վերջը, երբ տեսա, որ այլևս չեմ կարողանում դիմանալ, վեր կացա և գնացի Աշխենի մոտ, որ մենակ չլինեի: Երևակայեցեք. նա բաց էր արել լուսամուտը, կանգնել էր առաջին և նայում էր երկնքին: Նույն րոպեին, երբ ես մտա նրա սենյակը, հրեղեն փայլակն օձի նման սողաց մութ երկնքի վրայով և մի քանի վայրկյան հետո երկինքն այնպես ճայթեց, որ ես ճչացի սարսափահար և փռվեցի հատակի վրա: Աշխենը վեր կացրեց ինձ, լուսամուտը փակեց, և տեսնեմ ծիծաղում է: Բարկությունս բռնեց: «Ես, — ասում եմ, — քիչ էր մնում այստեղ վախից մեռնեի, իսկ դու ծիծաղում ես: Եվ ինչպե՞ս չես սարսափում այդ փայլատակումներից, այդ ահարկու ձայներից»: — «Սարսափո՞ւմ, — զարմացավ նա: — Ընդհակառակը. ես սաստիկ սիրում եմ տարերքի այդ կատաղությունը, որովհետև վերին, իդեալական ուժի մասին ոչինչ ինձ այնքան պարզ ու շոշափելի գաղափար չի տալիս, որքան այն, երբ մութ երկինքն այդպես հանկարծ փայլատակում և ճայթում է: Ինձ թվում է, թե, — ավելացրեց նա, — այդ բոլորն ավելի հրաշալի պիտի լինի ծովի վրա, փոթորկի ժամանակ, եթե նավով ճեղքում ես անհայտ անհունը»: Ահա թե ինչ բանի համար է սիրում Աշխենն իմ ասած սարսափելի եղանակը:

Շահյանն ակամա մտախոհության մեջ ընկավ:

— Մի՞թե օրիորդը ձեզ հետ է ապրում, — հարցրեց նա:

— Այո, Աշխենը մեզ մոտ է ապրում: Նա բոլորովին որբ է... Սուրեն, մրսո՞ւմ ես:

— Ոչ, — պատասխանեց Սուրենը և պինդ կպավ քրոջ կողքին:

— Իսկույն տուն կհասնենք, չքնես: Դուք ո՞ր փողոցում եք ապրում, պարոն Շահյան: Շահյանը տվեց իրենց փողոցի անունը:

— Ո՛ւու, — բացականչեց Եվան, — ուրեմն դուք կիջնեք ճանապարհին:

— Ոչ. ինչպե՞ս կարելի է, օրիորդ. մինչև ձեր տուն ճանապարհ կդնեմ ձեզ, հետո ետ կդառնամ:

— Նեղության չի՞ լինի ձեզ համար:

— Ի՞նչ նեղություն:

— Ուրեմն շնորհակալ կլինեմ: Ո՛ւֆ, ինչպես խոնավ է օդը: Սուրեն, խո չե՞ս քնում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ոչ, — պատասխանեց Սուրենը շալի տակից:

— Դուք եղբայր ունի՞ք, պարոն Շահյան:

— Երեք եղբայր ունեի: Մեռան: Երեքն էլ մի ամսում:

— Մի՜ ամսում... երեքն էլ, — արտասանեց Եվան սարսափած: — Այդ ի՞նչպես կարելի է: Երևի կատակ եք անում, հա՞:

— Այստեղ ի՞նչ կա կատակ անելու:

— Երեքն էլ մի՜ ամսում, տե՛ր իմ աստված... Այդ սարսափելի է: Դրանից խո գժվել կարելի է... Ինչի՞ց մեռան:

— Դիֆտերիտից:

— Ա՜խ, այդ դիֆտերի՜տը, այդ դիֆտերի՜տը, — շշնջաց Եվան, ավելի ևս պինդ գրկելով փոքրիկ եղբորը: — Երևի փոքր էին, հա՞:

— Ամենից փոքրը երեք տարեկան էր, ամենից մեծը, — տասը տարեկան:

— Ա՜խ, խե՜ղճ, խե՜ղճ մանուկներ... Դուք սիրո՞ւմ էիք նրանց:

— Իբրև եղբայր, իհարկե, սիրում էի:

— Իսկ քույր... ունի՞ք: — Մի քույր ունեի, նա էլ մեռավ:

— Նա էլ... Տե՛ր աստված... Դուք սարսափելի բաներ եք ասում... Երևակայում եմ, թե ինչքան դժբախտ պիտի լինիք դուք, չէ՞:

— Իհարկե, մեծ դժբախտություն է, երբ մարդ զրկվում է երեք...

— Նա՞ ինչից մեռավ, — հարցրեց Եվան, խոսքը կիսատ թողնելով Շահյանի բերանին:

— Թոքախտից:

— Ո՜ւֆ, երանի ոչինչ չէի հարցրել: Այս ի՞նչ արիք ինձ: Բոլորովին փչացրիք տրամադրությունս: Իսկ նա, ձեր քույրը, երևի մեծ էր, հա՞:

— Տասնյոթ տարեկան:

— Տասնյո՞թ... իմ հասակում... Ո՛չ, ո՛չ, էլ ոչինչ չեմ ուզում, էլ ոչինչ չասեք... Եվ չէ՞ որ դուք նրան ավելի էիք սիրում, քան թե... Ձեր քրոջն ավելի էիք սիրում, այնպես չէ՞:

— Ես նրան սաստիկ սիրում էի:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Եվ նա էլ ձեզ, իհարկե... Որ գիտենաք, պարոն Շահյան, որքա՜ն ես վախենում եմ մեռնելուց... Ո՛չ, ո՛չ, այդ մասին չեմ ուզում մտածել: Խոսենք ուրիշ բանի մասին, ուրիշ, բոլորովին ուրիշ բանի մասին... Ուրեմն միայն դո՞ւք եք մնացել:

— Որ մեռնե՞մ, — վրա բերեց Շահյանը և ծիծաղեց:

— Ո՛ւֆ, — տնքաց Եվան սաստիկ նեղացած: — Ի՜նչ վատ մարդ եք եղել: Ինչո՞ւ եք ինձ վիրավորում:

Շահյանը ներքին գոհունակությամբ զգաց, որ նա նեղացավ անկեղծորեն:

— Ես կատակ արի, օրիորդ, — ասաց նա, շարունակելով ծիծաղել:

— Չար կատակ: Ես այդպիսի կատակներ չեմ սիրում:

— Հենց թեկուզ ես էլ մեռնեմ, ի՞նչ կա որ: Եվան շատ լուրջ կերպով նայեց նրան:

— Պարոն Շահյան, եթե դուք կշարունակեք, ես իսկույն եղբորս հետ կիջնեմ և կնստեմ մեր կառքը: Հավատացեք, ես լուրջ կերպով եմ խոսում:

Շահյանը ստիպված էր ներողություն խնդրել: Եվայի անկեղծությունը սկսել էր վերին աստիճանի գրավել նրան: Նրան թվում էր, թե այդ կարճ միջոցում, այդ խոսակցության շնորհիվ, ինքն արդեն ճանաչում է այդ աղջկան, ճանաչում է նրա սիրտը, հոգին, զգացումները, բնավորությունը, կարծես թե իր մանկական ընկերուհին լիներ նա, որի հետ ամեն օր խաղ էր արել և որին պատրաստ էր սիրելով ջգրացնելու:

— Կյանքիս մեջ ես միայն մի անգամ եմ մահ տեսել, — ասաց Եվան: — Բայց այդ մի անգամն էլ բավական էր, որ զգայի մահվան պատճառած բոլոր սարսափն ու վիշտը: Մեռնողն իմ ընկերուհին էր: Նա չափազանց լավ աղջիկ էր: Չեմ կարծում, թե հարազատ քրոջս այնքան սիրելի, որքան նրան էի սիրում: Նա էլ ինձ համար հոգին չէր խնայիլ: Ամեն օր իրար տեսնելը մի կատարյալ պահանջ էր դարձել մեզ համար: Երևակայեցեք, որ նրա հիվանդ ժամանակ գիշերներն անգամ չէի հեռանում նրանից: Իսկ նա միշտ այն էր ասում, որ եթե մահից ազատվելու լինի, կազատվի միմիայն իմ սիրո զորությամբ: Բայց սերս չկարողացավ փրկել նրան: Որ մեռավ, հիվանդացա վշտից: Թաղման օրը քիչ էր մնում, որ մայրս փակի ինձ տանը: Բայց, իհարկե, ես դարձյալ գնացի: Դագաղը տանում էին ընկերուհիները — բոլորն ինձ հասակակից աղջիկներ: Այն ժամանակ ես տասներեք տարեկան էի: Այս րոպեին էլ, կարծես, տեսնում եմ նրան դագաղի մեջ, թարմ ծաղիկներով զարդարված, գլուխը ձախ ուսի վրա ծռված, ծնոտը սպիտակ թաշկինակով կապված: Այդ առաջին անգամն էր, որ աչքովս տեսնում և ականջովս լսում էի, թե ինչպես են թաղում մեռելը: Տե՛ր իմ աստված, ի՜նչ զարհուրելի գոգոց, ի՜նչ սարսափելի փոշի... Մի՞թե կարելի է այդպես անխիղճ և անտարբեր կերպով քարերի ու հողի տակ ջարդել մի արարած, որ երբեմն մեզ պես շնչել, զգացել, մտածել է... մարդիկ գազանացած էին թվում ինձ այդ րոպեին: Ես ուշաթափվեցի, բայց ոչ թե վշտից, ոչ թե այն գիտակցությունից, որ այլևս երբե՛ք, երբեք չպիտի տեսնեի իմ սիրելի ընկերուհուն, այլ — սարսափից, այո՛, միմիայն սարսափից, այ՛ն սարսափից, որ ինձ էլ մի ժամանակ... Ո՛չ, ո՛չ, այս մասին չեմ ուզում մտածել: Այս սարսափելի է, սարսափելի... Գիտե՞ք՝ ես ինչ եմ մտածում, պարոն Շահյան, շատ լավ բան է, որ հայերիս մեջ կանանց համար սովորություն չկա թաղման

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ժամանակ գերեզմանատուն գնալու: Երկաթի ականջ և ջղեր են պետք այդ գոգռոցի ձայներին դիմանալու համար:

— Իսկ ինձ թվում է, թե այդ վատ սովորության է: Կանայքդ թույլ, վախկոտ և ջղային եք հենց նրա համար, որ չեք վարժեցնում ձեզ այդպիսի սարսափների:

— Ոչ, ոչ, ի՞նչ եք ասում: Ուզում եք, որ մենք է՞լ գազանանայինք ձեզ պես: Այնպիսի եռանդով եք հարձակվում անպաշտպան դիակի վրա և քարերի ու հողի տակ ջարդում, որ կարծես դատարկ հոր եք լցնում: Եվ չեք մտածում, որ այնտեղ մարդ կա պառկած:

Շահյանը ծիծաղեց:

— Լավ, հապա ի՞նչ կհրամայեք, որ անեինք դիակը: Այրեի՞նք, ինչպես...

— Պարո՛ն Շահյան: Վերջապես այս բանի նման չէ: Թողնենք այս հիմար խոսակցությունը: Չեմ ուզում: Մի՞թե ուրիշ բան չկա խոսելու... Սուրե՛ն, Սուրե՛ն ջան, մի՛ քնիր: Ա՛խ, ի՞նչ անեմ, դու կմրսես: Սուրե՛ն, սիրելի՛ս, ա՛յ, տուն ենք հասնում... Դուք գիտե՞ք, պարոն Շահյան, որ ես մի եղբայր էլ ունիմ:

— Այո, ձեր հայրը պատմում էր նրա մասին:

— Ի՞նչ եք կարծում, ճի՞շտ է այն ասացվածքը, թե՝ «քույրն ասաց եղբայր ունիմ, եղբայրն ասաց քույր չունիմ»:

— Ինչի՞ վրա եք ասում այդ:

— Օ՛, մի կարծեք, թե իմ եղբայրս այն եղբայրներից է, որ ասի քույր չունիմ: Ընդհակառակը: Անջատման ժամին գիտե՞ք ինչ էր անում: Չէր ուզում ինձ գրկից բաց թողնել: Եվ գիտե՞ք ինչպես էր լաց լինում... Ինչո՞ւ տղամարդիկդ այդքան ուշ-ուշ եք լաց լինում, բայց որ լաց եք լինում, քարի սիրտ պիտի լինի, որ ձեզ դիմանա: Ձեր արտասուքը, կարծես, հեղուկ չէ, այլ քարի պես մի պինդ մարմին, որ փշուր-փշուր լինելով է դուրս գալիս: Ինձ թվում է, թե արտասուքն ամենևին թեթևություն չի պատճառում ձեզ, և դրա համար է, որ ուշ-ուշ եք լալիս, և երբեք չէիք լալ, եթե կարողանայիք մինչև վերջը զսպել ձեզ, ինչպես եղբայրս չկարողացավ զսպել իրեն: Նամակներն էլ նա միշտ իմ անունով է գրում: Բայց և այնպես, ես նրան ավելի եմ սիրում, քան թե նա ինձ:

Շահյանը դարձյալ ծիծաղեց:

— Սերը դուք մասշտաբո՞վ եք չափում, — հարցրեց նա:

— Այո՛: Թեև ուզում եմ, որ իմ սիրո մասշտաբը միշտ ավելի մեծ լինի, քան թե նրանը, որին սիրում եմ:

— Ուրեմն էլ ինչո՞ւ եք տրտնջում ձեր եղբոր վրա:

— Տրտնջում եմ, որովհետև շատ ուշ-ուշ է նամակ գրում. ամիսն ընդամենը երեք-չորս անգամ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Եվ այդ շա՞տ ուշ-ուշ է:

— Իսկ ես իմ մասշտաբով գիտե՞ք քանի անգամ եմ գրում. — գրեթե ամեն օր:

— Ամեն օ՛ր... իսկ նյո՞ւթ:

— Նյո՛ւթ... Մի՞թե ամբողջ աշխարհը լիքը նյութ չէ: Սակայն ի՞նչ հարկավոր է ամբողջ աշխարհը. իմ ներքին աշխարհն էլ բավական է: Ես չափազանց հետաքրքիր և չափազանց տպավորվող եմ: Այդ բանն օգնում է ինձ միշտ նոր բան գրելու եղբորս: Ա՛խ, ինչպե՛ս կուզեի իմանալ, թե այս րոպեիս ինչ է անում նա այնտեղ:

Եվան, մի ձեռքով գրկած փոքրիկ եղբորը, գլուխը կամաց կպցրեց նրա գլխին և կարճ ժամանակ տխուր մտախոհության մեջ ընկավ: Հետո հանկարծ գլուխը հեռացրեց եղբոր գլխից և նայեց Շահյանին:

— Գիտե՞ք, պարոն Շահյան, երբեմն ինչ եմ մտածում: Այս բանն առավելապես պատահում է այն ժամանակ, երբ նրան նամակ եմ գրում, որովհետև նամակ գրելիս ամենից ավելի եմ կարոտում նրան: Ի՞նչ կլինի, մտածում եմ, երբ ետ նայեմ և տեսնեմ, որ նա կանգնած է ետևս և ժպտալով նայում է ինձ... Այդ միտքն երբեմն այնպես պաշարում է ինձ, որ մինչև անգամ վախենում եմ ետ նայել...

Կառքերը գոգոալով առաջ էին վազում, նրանց լապտերների ցնցվող լույսն այս ու այն կողմից լուսավորում էր անձրևի ջրերով ծածկված խորդուբորդ սալահատակը: Եվան խոսում էր առանց մի րոպե դադար առնելու, և Շահյանին զարմացնում էր այն հանգամանքը, թե որպիսի դյուրությամբ նա անցնում էր մի նյութից մյուսը:

— Սո՛ւրեն, Սո՛ւրեն, այ մեր փողոցը... Ահա և մեր տունը, — բացականչեց Եվան, երեխայի պես ուրախացած: — Պարոն Շահյան, տեսնո՞ւմ եք այն լապտերը, այն դուռը լապտերի առաջ. այն է մեր տունը... լուսամուտներում որ ճրագ չկա... վերին հարկում: Տեսնո՞ւմ եք:

Կառքերը կանգ առան Մարությանների տան առաջ, փողոցի լապտերի տակ: Շահյանն իջավ կառքից և նախ իջեցրեց Սուրենին, հետո, ձեռքը տալով Եվային, օգնեց նրան իջնելու: Մարությանները խնդրեցին նրան, որ մտնի, բայց նա, ժամանակն անհարմար համարելով, հրաժարվեց:

— Որ այդպես է, մեզ չմոռանաք, մեր տունն արդեն գիտեք, — ասաց Մարությանը, կրկին սեղմելով նրա ձեռքը: — Բարևեցեք ձեր հորը: Շնորհակալություն, որ մեզ բարի ծառայություն մատուցիք:

— Չարժե՛, չարժե՛, — ուրախ բացականչեց Շահյանը և թռավ իր կառքը:

— Շնորհակալությո՛ւն, պարոն Շահյան, — կանչեց Եվան:

— Չարժե՛, չարժե՛, — կրկնեց Շահյանը և կառքը քշել տվեց իրենց տան կողմը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մոտ տասը րոպեից Շահյանն արդեն իրենց տանն էր: Նախասենյակում, երբ նա վերարկուն հանելու վրա էր, շտապով դուրս եկավ նրա առաջ մայրը: Թամարը ժամանակից շատ վաղ ծերացած մի կին էր, զարմանալի սպիտակ դեմքի խիստ համակրելի, ազնիվ և փափուկ գծագրությամբ: Նրա, կարծես, հոգնած աչքերը հանգիստ տխրություն էին արտահայտում մինչև անգամ այդ րոպեին, երբ երկու ամսվա անջատումից հետո, նորից տեսնում էր իր միանուագար զավակին:

— Լևոն ջա՛ն, — կամաց արտասանեց նա և կամաց գրկեց նրա գլուխը: — Վերջապես եկար... Բայց այս անիրավ եղանակին...

— Անիրավ եղանակն ի՞նչ պիտի աներ, մայրիկ, քանի որ վագոնում ինձ համար տաք նստած էի: Հայրիկն ինչպե՞ս է, լա՞վ է:

— Հայրդ էլի այնպես է, ինչպես որ կար: Դո՞ւ ինչպես ես, դո՞ւ: Ապա մեկ լավ նայեմ երեսիդ, խո չե՞ս լղարել:

Շահյանը ծիծաղեց:

— Դու էլ, մայրիկ... այնպես ես ընդունում, որ կարծես տասը տարի է չես տեսել: Երկու ամիս է, էլի, որ գնացել եմ:

— Ա՜խ, անաստվա՛ծ, երկու ամիսը քիչ է՞ ինձ համար: Ասա, խո լա՞վ ես:

— Շատ լավ եմ, մայրիկ, այնպե՛ս լավ, որ երբեք այսպես չեմ եղել:

— Բաս թող համբուրեմ:

Եվ մայրը իր փափուկ, խորշոմած սառը շրթունքները կպցրեց որդու ժպտող այտին:

Շահյանն երբեք չէր սիրել մոր համբույրները, իսկ մայրն այդ կողմից միշտ շատ շռայլ էր եղել դեպի նա: Չէր սիրել նույնպես այն բոլորը, ինչ որ առհասարակ կանացի թույլ, քնքուշ զգացումների զեղումն է: Չէր սիրել, որովհետև այդ բոլորի մեջ միմիայն իր տղամարդկային արժանապատվության ստորացումն էր տեսել այն արժանապատվության, որը տղամարդուն թելադրում է միշտ բարձր մնալ կնոջից և առհասարակ այն ամենից, ինչ որ կանացի է: Դրա պատճառը թերևս այն էր, որ Շահյանը տղամարդ չէր և չուներ տղամարդի արժանապատվություն, բայց ուզում էր տղամարդ լինել և տղամարդի արժանապատվություն ունենալ: Մոր համբույրները նրան երեխայի դրության մեջ էին դնում, և այդ բանն էր, որ նրան չափազանց անախորժություն էր պատճառում:

Սակայն այս անգամ նա ոչ թե միայն անախորժություն չզգաց համբույրից, այլև ինքը համբուրեց նրան, որպիսի բան երբեք չէր պատահել: Ինչո՞ւ: Ո՞վ գիտե, թե նոր, տակավին շատ թարմ տպավորությունները և այդ տպավորություններից ծնված նոր, անծանոթ, թեև տակավին իրենց որոշ գույնը չընդունած զգացումներն ինչպես և որքան փոխում են մարդու

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ներքինը գոնե այնքան ժամանակ, որքան այդ տպավորություններն ու զգացումները թարմ են...

Տեղեկանալով, որ հայրը դեռևս քնած չէ, Շահյանն ուղղակի գնաց նրա մոտ: Երբ մայր ու որդի մտան աղա Կարապետի սենյակը, վերջինս, խալաթը հագին և թրքական ֆեսը գլխին, նստած էր իր սովորական լայն բազկաթոռի մեջ և սպասողական հայացքով նայում էր դռանը: Ծնկների վրա նա դրած էր Աստվածաշնչի ընկերության աշխարհաբար թարգմանած Ավետարանը և ձախ ձեռքի ցուցամատը դրել էր ընթերցումը կիսատ թողած երեսների մեջ: Առաստաղից կախված մեծ լապտերն ընդարձակ տափակ լուսամփոփով առատ լույս էր սփռում նրա բոլորովին լերկ ծոծրակի վրա, որը պլպլում էր սոխի կճեպի պես:

Շահյանի հայրը մոտ վաթսուն տարեկան մարդ էր խոշոր արտաքինով: Նրա մարմինն ավելի ուռած էր երևում, քան գեր: Ֆիզիկական երկարատև սուր ցավերը ձգձգել, սառցրել էին նրա սափրած դեմքի մկանունքները: Ավետարանի շարունակ ընթերցումից նա չէր սովորել համբերատար լինել. տրտնջում էր ամեն բանի, առավելապես իր հիվանդության դեմ, որ իսկապես սաստիկ տանջում էր նրան: Մինչդեռ նա վերին աստիճանի բարի մարդ էր, թեև, զուրկ չէր փող դիզելու ընդունակությունից: Հիվանդությունը սաստկանալուց հետո վերջ էր դրել իր առևտրական գործերին և աճուրդների ժամանակ քաղաքում ձեռք էր բերել մոտ քսան տեղ զանազան շենքեր, որոնք բավական արդյունք էին տալիս նրան: Չնայելով, որ հիվանդությունը շատ էր նեղում նրան, բայց և այնպես կալվածներն անձամբ ինքն էր կառավարում: Նրա գովելի հատկություններից մեկն էլ հենց այն էր, որ նա սիրում էր գործ կատարել, — մի հատկություն, որից զուրկ էր փափկակեցության մեջ մեծացած և ինքն իր կամքին թողնված նրա որդին:

Որդուն շատ էր սիրում, թեև միշտ տրտնջում էր նրա դեմ այն բանի համար, որ նա չի օգնում իրեն: Իսկ որդուն ամենևին չէին հետաքրքրում հոր գործերը, և նա կատաղում էր ամեն անգամ, երբ հայրն սկսում էր այդ մասին տրտնջալ: Դուրսը մուկ լինելով, տանը կատարյալ բռնակալ էր Շահյանը: Շատ անգամ ամենաչնչին պատճառով այնպես բղավում էր հոր և մոր վրա, որ նրանք վախեցած լռում էին: Թեև նա հասկանում էր, որ իր վարմունքն անարդար և անվայել է, բայց չէր կարողանում զսպել իրեն: Ծուլությունը զրկել էր նրան բնավորությունից, նրա մեջ զարգացրել էր սաստիկ նեղ անձնասիրություն, որը վիրավորվում էր ամեն մի չնչին բանից: Այնինչ այդ անձնասիրությունը սաստիկ վախկոտ էր օտար մարդու առաջ, օտարն ապտակ էլ տար նրան, նա կլռեր: Նա չէր կարողանում տանել միայն հոր և մոր կշտամբանքը, ինչքան էլ որ չնչին և արդարացի լիներ այդ: Շատ քիչ կպատահեր, որ նա հաշտ աչքով նայեր ծնողների վրա, որոնց հանցանքն այն էր միայն, որ նրանք ամեն կերպ հոգում էին նրա բարեկեցության համար:

Այդ սակավ ժամերից մեկն էլ այժմ էր, երբ նա համբուրեց մորը, իսկ հոր հետ սկսեց մինչև անգամ կատակներ անել:

Տեսնելով որդուն ուրախ տրամադրության մեջ և բավական կազդուրված, հայրն ու մայրը կատարելապես երջանիկ էին զգում իրենց, այնքան երջանիկ, որ աղա Կարապետը մինչև անգամ մոռացել էր իր ֆիզիկական ցավերը և այլևս չէր տրտնջում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Սակայն Շահյանն երկար չմնաց ծնողների մոտ: Հրաժարվելով մոր առաջարկած ընթրիքից, նա քաշվեց իր ննջարանը և անմիջապես պառկեց, որ քնի: Բայց, չնայելով որ ճանապարհից բավական ջարդված էր, շուտ չկարողացավ քնել:

Փափուկ անկողնի մեջ պառկած երկար ժամանակ մտածում էր Բազենյանի և նրա ուղեկցուհու մասին, մտածում էր հոր մասին, մոր մասին, Մարությանների մասին, Եվայի մասին, առավելապես Եվայի մասին:

Տպավորությունները դեռևս շատ թարմ էին, իսկ երիտասարդական պարապ երևակայությունը — վառ: Այդ թարմ տպավորությունների տակ ցնորքներ էին, որ վխտում էին նրա գլխում: Երիտասարդական պարապ ու ծույլ կյանքի մեջ, երբ նրա ուղեղն իր գործունեության համար իրական ոչ մի հենակետ չէր ունեցել, — երևակայությունը միշտ թռել էր դեպի վերացական աշխարհը, որտեղ երևույթներն ու պատկերները հոգի ու մարմին չունին, ուրեմն և ո՛չ մի կենդանի կապ իրական կյանքի հետ: Այո՛, ցնորքնե՛ր, ցնորքնե՛ր...

Ցնորքներ հրաշալի են և միտք ունին, երբ դրանց ստեղծում է այն մարդկանց երևակայությունը, որոնց մեջ գործելու եռանդ ու կրակ կա, որոնց կյանքը նպատակ, վսեմ նպատակ ունի, որոնք ապրում և գործում են լավագույն ապագայի բաղձանքներով. բայց նա, որ իր երակների մեջ արյան տաքության չի զգացել երբեք, որ ոչ մի եռանդ, ոչ մի ձգտում և այդ ձգտման հասնելու կամք չի ունեցել և կյանքը քարշ է տվել ամենառողորմելի կերպով, քարշ է տվել իբրև արդեն ուժից ընկած, թմրած ու փտած ծերունի, — ինչացո՞ւ են եղել այդ ցնորքները: Դրանք լոկ բոպեական զվարճություն են պատճառել նրան, անմիտ, հիմար զվարճություն, որպեսզի հետո ավելի վառ գույներով ցույց տան նրան իր կյանքի ատելի դատարկությունը:

Հետևյալ օրը բավական ուշ էր, որ նա արթնացավ: Օրը սաստիկ մառախապատ էր, տխուր և ծուլություն ազդող: Փոշու նման անձրև էր մաղում դուրսը: Նա երեսն ի վեր դարձյալ ընկավ բարձի վրա և մնաց այդպես: Ինչո՞ւ վեր կենար, ո՞ր պետք է գնար, ի՞նչ պետք է աներ: Եղանակն անպիտան, տունը տաք, կերակուրը պատրաստ, հոգսերից էլ բոլորովին ազատ: Մի՞թե սա փառավոր կյանք չէ, որին երանի են տալիս միլիոնավոր մարդիկ: Չէ՛, նա ծակ փիլիսոփայություն է անում, որ շատ հաճախ, ձանձրանալով այդպիսի կյանքից, դժգոհություն է հայտնում: Ի՞նչ ձգտում, ի՞նչ նպատակ, ի՞նչ եռանդ: Դրանք կամ անմիտ բառեր են գեղեցիկ խոսելու համար հնարված, կամ դրանցից յուրաքանչյուրը ոչ այլ ինչ է նշանակում, եթե ոչ մի-մի անվերջ տանջանք, հոգս և արյան զուր վրդովմունք: Մարդկանց, բոլոր մարդկանց ձգտումը մի՞թե այն չէ, որ կարելույն չափ ապահով և հանգիստ կյանք վարեն, մտքի և արվեստի աշխարհում ինչ որ կա և ինչ որ ստեղծվում է նոր, չէ՞ որ բոլորը մարդկային բարեկեցության համար է. գործ, աշխատանք, ամեն ինչ կյանքի անդորրության համար չէ՞ միթե: Աստված առատաձեռն կերպով տվել է նրան այդ ապահով կյանքը, բարեկեցությունը, անդորրությունը, էլ ի՞նչ է հարկավոր:

«Ուո՛ւ...», — հիշեց նա Եվայի սովորական բացականչությունը, ժպտաց, շուռ եկավ պատի կողմը և սկսեց անթարթ աչքով նայել ծաղկանկար պաստառի մի սպիտակ գծի, որը նրան Եվայի գագաթի վրա մազերի մեջտեղից դեպի ետևն անցնող սպիտակ գիծը հիշեցրեց: Նրա գլխում նորից սկսեցին ցնորքներ վխտալ, մի հրաշալի իդիլիա ստեղծելով:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Այդ իդիլիան ներկայացնում էր գարնանային այն հրաշալի մեջ-գիշերներից մեկը, երբ երկիրը ննջում է որպես մանուկ, երբ պայծառ լուսինը լուսավորում է իր փափուկ լույսով, որի մեջ երկրի հորիզոնները, կարծես, գոլորշիանում, կամաց, աննկատելի կերպով բարձրանում են դեպի վեր, և մարդը, լցված մեղմ, անհասկանալի բաղձանքներով, գերեզմանական լռության մեջ հազիվ լսում է բնության ձայնը, որը թվում է մերթ, թե անհուն վշտի ողբ է և մերթ՝ թե անհուն երանության օրհներգ: Սենյակում ճրագը մարած էր: Լուսինը ներս է նայում լուսամուտից և խորհրդավոր կերպով ժպտում: Լուսամուտի առաջ նստած են Շահյանն ու Եվան իրար գրկած, գլուխ գլխի կպցրած: Եվան ամբողջապես սպիտակ հագուստի մեջ է, որը պլաստիկական նրբությամբ գծագրում է նրա կուրծքը և ծնկները: Շահյանը սեղմում է նրա իրանը, և նրան թվում է, թե այդ իրանն առաձգական է ռետինի պես: Եվայի փափուկ մազերը, կարծես շնչելով, կրքոտ համբույր են տալիս նրա ականջին: Նրանք նստած են անշարժ ու լուռ այնտեղ, ուր զգացմունքներն են խոսում, լեզուն պապանձվում է. այնտեղ, ուր ինքը կենդանի բանաստեղծությունն է խոսում, պրոզան փախուստ է տալիս: Լուռ են, բայց ուշի-ուշով լսում են իրար շնչառությունը, իրար սրտի զարկը և հոգիների հրաշալի զուգավորությամբ զգում են, թե մտածողություններով, զգացումներով և իղձերով մի են, ինչպես մի է Շահյանն առանձնապես, ինչպես մի է Եվան առանձնապես, և երկուսը միասին լրացնում են իրար: Այդպես միացած՝ նրանք նայում են լուսնի կաթնավուն լույսի մեջ գոլորշիացող հորիզոններին, և նրանց թվում է, թե իրենք ևս գոլորշիանում են կամաց-կամաց, խառնվում են իրար հետ, բարձրանում և անէանում... Լուսինը չարաճճի կերպով նայում է նրանց և շարունակում է ժպտալ խորհրդավոր կերպով... Դուռը զգուշորեն բացվեց, և Շահյանի մայրը ներս կոխեց գլուխը:

Իդիլիան չքացավ: Շահյանը շուռ եկավ և երազից սթափվողի նման նայեց մորը: Ըստ երևույթին, Թամարը կարծում էր, թե որդին դեռևս քնած է, բայց տեսնելով, որ արթուն է, ներս մտավ և դուռը ետ դրեց: Իր հետ բերել էր որդու տաք ֆուֆայկը, որ հագներ, չմրսեր:

Անախորժ տպավորություն գործեց Շահյանի վրա մոր անժամանակ ներս մտնելը, — անժամանակ, որովհետև նա կամենում էր կարելույն չափ երկար ապրել պարապ երևակայության ստեղծած ցնորական քաղցր կյանքի մեջ, մինչդեռ, մոր ներս մտնելուց սթափվելով, դուրսն այդ ցնորական կյանքի ատելի հակապատկերը ներկայացավ նրա աչքին: Ինչպե՛ս մռայլ էր երկինքը, ինչպե՛ս բարակ, սիրտ մաշող կերպով մաղում էր անձրևը:

Մոտ մի ժամ տևեց, մինչև որ նա մի քանի անգամ շուռումուռ եկավ անկողնում, նստեց, նորից պառկեց, նորից նստեց, մատների խաղերը ճրթճրթացրեց, հորանջեց, ճմլկոտաց, ոտները կոխեց փափուկ մաշիկների մեջ, լվացվեց, հագնվեց, սանրվեց և, վերջապես, ակնոցի ապակիները թաշկինակի ծայրով սրբելով, դուրս գնաց սեղանատուն, ուր հայրն ու մայրը վաղուց սպասում էին նրան թեյի: Չնայելով այդ ծանր ու բարակ գործողություններին, որոնց կատարելու համար ուղտի համբերություն էր հարկավոր, Շահյանն, այնուամենայնիվ, հակառակ իր սովորական մեռած տրամադրության, առանձին աշխույժ էր զգում իր մեջ այդ օրը:

Գիշերը հորն ու մորը թռուցիկ կերպով արդեն պատմել էր Մարությանների մասին, այս անգամ մանրամասնությունների մեջ մտավ և իր հիացմունքը հայտնեց առանձնապես Մարությանի մասին:

— Միայն մի պակասություն ունի, — ավելացրեց նա. — չափից դուրս շատախոս է:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Միայն այդ պակասությունը չէ, — նկատեց աղա Կարապետը. — նա անպիտան մարդ էլ է:

— Ի՜նչ, — բացականչեց Շահյանը:

Հայրը նայեց որդու զարմացած դեմքին և ծիծաղեց, ինչ որ շատ հազիվ էր պատահում. որդու ուրախ տրամադրությունը տեսնելով, նա ինքը շատ ուրախ էր:

— Ասենք, ես մի քիչ խիստ ասացի, — ասաո նա: — Մի վախենար. Մարությանը էլի քո կարծած լավ մարդն է, միայն... մի փոքրիկ անպիտանություն է արել:

— Եղբորը, որ հորական ժառանգությունից զրկե՞ց, — հարցրեց կինը ամուսնուն:

— Հա՛:

Եվ աղա Կարապետը պատմեց որդուն Մարությանի հետևյալ «անպիտանությունը»: Մարությանը մի եղբայր ուներ. այդ եղբայրը շատ ողորմելի մարդ էր, այնքան ողորմելի, որի հետ չէր կարողանում համարձակ խոսել: Ընդսմին նա ծույլ էր և անուղղելի արբեցող: Հոր մահից հետո Գևորգը բանն այնպես էր սարքել, որ հայրական բավական մեծ կարողությունից արբեցող եղբորն ընկել էր մի խրճիթ և մի համեստ գումար: Բայց դրանով էլ գոհ էր մնացել ողորմելի եղբայրը և, ունեցած-չունեցածը խմելուց հետո, իր կնոջ հետ մեռել էր վերջին ծայր աղքատության մեջ:

Հոր պատմությունը միանգամից հիասթափեցրեց Շահյանին Մարությանի վերաբերմամբ, և այդ բանը վերին աստիճանի անախորժ էր նրա համար, նա չէր ուզում, որ Մարությանն այդպես վարված լիներ իր եղբոր հետ, և այդ զգացումը նրան թելադրողը ոչ թե այն էր, որ նա ցավակցում էր Մարությանի եղբորը, կամ այն, որ մարդկանց անխիղճ արարքներն առհասարակ խորապես ազդում էին նրան, — ո՛չ, այլ Մարությանն այն աստիճան լավ տպավորություն էր թողել նրա վրա, և նա այն աստիճան նպաստավոր կարծիք էր կազմել այն մարդու մասին, որ հոր ասածները խիստ հակասական կերպով էին ազդում նրան: Պարզն այն էր, որ նա չէր ուզում մի որևէ արատ տեսնել այն ընտանիքի մեջ, ուր կար Եվայի պես մի աղջիկ...
— Հիմա խո եղբոր աղջկան ինքն է պահում և եղբոր կենդանության ժամանակ էլ խո ինքն էր այդ աղջկան ուսման տվել, — ասաց Թամարը: — Շուտով էլ կպսակի, լավ փող ու բաժինք կտա և քաված կլինի հին մեղքերը: Ասում են, որ եղբոր մահից հետո շատ է զղջացել: Եղբորն էլ, կնոջն էլ խո ինքը թաղեց:

— Գնա մեռիր, ասում է, արի սիրեմ, — նկատեց աղա Կարապետը:

Մոր խոսքերի վրա Շահյանը հիշեց Աշխենին, հիշեց նրա դեմքի կանոնավոր, երկայն սառած պրոֆիլը միայն, այն դրությամբ, երբ այդ աղջիկը նայում էր վագոնի լուսամուտից դեպի դուրս, և նրան թվաց, թե Աշխենն այդ միջոցին մտածում էր իր որբության և այն մասին, թե որքան ծանր է մի անտեր ու աղքատ աղջկա համար ուրիշի խնամքի տակ ապրելը: Անցյալ գիշեր վագոնի մեջ Շահյանն ուշադրություն չէր դարձնում Աշխենի վրա, երևի նրա համար, որ Եվան էր գրավել նրան, կամ նրա համար, որ Աշխենը ոչնչով ցույց չէր տալիս իրեն. բայց այժմ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

այդ աղջիկն սկսեց հետաքրքրել նրան, և այդ հետաքրքրությունը լոկ կարեկցություն էր շարժում նրա բարի սրտում:

Անցավ մի, երկու, երեք... տասն օր: Շահյանը սաստիկ ցանկանում էր Մարությաններին այցելել: Թեև ինքն իրեն չէր ուզում խոստովանել, բայց պարզորեն զգում էր, որ իրեն դեպի Մարությանների տուն գրավողն Եվան էր: Բայց նրա բնավորության իրեն սաստիկ ատելի կողմերից մեկն էլ այն էր, որ նա երբեք այնքան համարձակություն չէր ունեցել, որ ազատ կերպով այցելեր ոչ թե միայն իր նորածանոթ կամ հեռավոր բարեկամներին, այլև, մինչև անգամ, ամենամոտ ազգականներին:

Ամոթխածությունը չէր միայն, որ այդ համարձակությունը չէր տվել նրան, այլև իր վերին աստիճանի կասկածամտությունը. նրան միշտ թվում էր, որ եթե աննպատակ կերպով, հենց այնպես, լոկ այցելած լինելու համար այցելեր իր բարեկամներին, նրանք պետք է ընդունեին իրեն լոկ քաղաքավարությունից դրդված և մտքներումը պիտի ասեին դժգոհությամբ՝ ինչո՞ւ է եկել: Այդտեղ էլ երևում էր նրա նեղ, վախկոտ անձնասիրությունը, որը միշտ այն հոգսումն էր, թե ինչպես անի, որ ոչ ոք, թեկուզ մտքումը, չվիրավորի իրեն:

Այդ էր պատճառը, որ նա չէր վստահանում գնալ Մարությանների տուն:

Մի երեկո, վերջապես, ստիպեց իրեն, որ գնա, գնաց և... ետ դարձավ Մարությանների դռնից:

Այդպես անցավ մոտ երկու շաբաթ: Մարությաններին այցելելու և Եվային տեսնելու ցանկությունն սկսեց հետզհետե սառչել նրա մեջ. նույնիսկ Եվայի նրա վրա թողած տպավորությունն սկսեց անցնել:

Այդպիսով նրա կյանքը նորից սկսեց մտնել իր հին, առանձնակի, դանդաղ ընթացքի մեջ, երբ մի օր փողոցում հանդիպեց Մարությանին:

Իրար հետ ծանոթանալու օրից այդ առաջին անգամն էր, որ նրանք հանդիպում էին իրար: Մարությանը կշտամբեց նրան, որ նա չի կատարել իր խոստումը և չի այցելել իրենց: Շահյանն արդարացավ նրանով, որ ասաց, թե սաստիկ զբաղված էր, ժամանակ չէր գտնում այցելելու և խոստացավ, որ մոտ օրերում անպատճառ կայցելի:

Այս անգամ էլ փոքրիշատե համարձակություն ստացավ և վճռեց, որ հետևյալ օրն անպատճառ գնա Մարությունների տուն: Սակայն հետևյալ օրն ավելի լավ համարեց իր այցը հետաձգել մյուս օրվան: Մյուս օրն էլ հետաձգեց երրորդ օրվան, ամեն անգամ մի պատճառ հնարելով, իր սովորական անհամարձակությունն արդարացնելու համար իր աչքում:

Այսպիսով գլորվեցին, անցան դարձյալ մի քանի օրեր, և նա դեռ գնում էր Մարութանների տուն: Վերջապես, մի երեկո, ուղղակի ամոթից, և ոչ թե համարձակություն ստանալուց, հազիվհազ, հազար ու մի նախատինք թափելով իր գլխին, վճռեց գնալ և ճիշտ որ գնաց:

Կառք նստած, նոր էր մտել Մարությանների փողոցը, երբ հանկարծ աչքով ընկավ Մարությանի եղբոր աղջիկը: Ձեռքերը՝ սև, հասարակ վերարկուի գրպանները կոխած: Աշխենը մայթի վրայով գնում էր հակառակ կողմը: Շահյանը շտապով վերցրեց գխարկը և

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

գլուխ տվեց նրան: Աշխենը կանգ առավ, զարմացած նայեց նրա կառքի ետևից և, երբ կառքը հեռացավ, շարունակեց իր ճանապարհը:

«Չճանաչեց», — մտածեց Շահյանը, այդպիսի դեպքերում սովորական անհամ դրության մեջ զգալով իրեն:

Երբ կառքը կանգ առավ Մարությանների տան առաջ, Շահյանն ինքն էլ զարմացավ, թե ինչպիսի համարձակաթյամբ ցած թռավ, փողը դրեց կառապանի բուռը և ամուր սեղմեց էլեկտրական զանգակի կոճակը: Ճանապարհին և այժմ, երբ սպասում էր, որ դուռը բանան, նա մտածում էր, թե ինչ բառերով պիտի դիմավորի Մարությանին, նրա կնոջը և աղջկան և ինչով պիտի արդարացնի իր այցելության հետաձգումը:

— Տա՞նն են, — սովորականից ավելի բարձր ձայնով հարցրեց նա դուռը բաց անող ծառային:

— Ո՞ւմն եք կամենում, — իր պստիկ, ցավագար աչքերով նայելով նրան, հարցրեց ծառան:

— Մարություններին: Տանը չե՞ն:

— Ո՞վ է, — վերևից, նախասենյակից, լսվեց Թեկլեի ձայնը:

Շահյանը տեսավ Մարությանի կնոջը, որը ոլորապտույտ, սանդուղքի վանդակապատից նայում էր ներքև:

— Ես եմ, տիկին: Բարև ձեզ, — կանչեց նա և շտապով ներս մտավ: — Կարելի՞ է:

— Ա՜խ, դո՞ւք եք: Համեցեք, համեցեք, խնդրեմ: Վերջապես մեզ հիշեցիք:

— Ի՞նչ անեմ, տիկին, — վրա բերեց Շահյանը, շտապ քայլերով վերև բարձրանալով. — ամեն օր մի նոր գործ էր պատահում, այնպես որ այսօր միայն հազիվ կարողացա ժամանակ գտնել ձեզ այցելելու:

Այդ խոսքերը նա պատրաստել էր Մարությանի համար, բայց տեսավ, որ դրանք շատ հարմար եկան նրա կնոջն ասելու:

Թեկլեն հրավիրեց նրան հյուրասենյակ, խնդրեց, որ նստի, և ինքը նստեց նրա դիմաց: Ասաց, որ ինքը մենակ է մնացել տանը. Աշխենը հենց նոր դուրս գնաց, իսկ ամուսինն ու աղջիկը Սուրենի հետ ճաշից հետո գնացել են զբոսանքի և, երևի, շուտով կվերադառնան:

Լսելով այդ, Շահյանն անհաջող համարեց իր առաջին այցելությունը: Նրան սկսեց մտահոգություն պատճառել այն հանգամանքը, թե ինչ պիտի խոսի ինքը մեն-մենակ այդ կնոջ հետ մինչև Մարությանի և Եվայի վերադարձը, իսկ նրանք կարող էին շատ ուշանալ: Սակայն շուտով ուրախությամբ տեսավ, որ Թեկլեն գրեթե չի թողնում իրեն խոսելու: Տիկինը խոսում էր անվերջ. խոսում էր իր մասին, իրենց ընտանիքի անդամների մասին, թատրոնում ներկայացված նոր պիեսի մասին, իրենց տան ներքին հարկում ապրող չինովնիկի մասին, իրենց ծառաների մասին: Խոսում էր այնպիսի մանրամասնություններով, որ Շահյանը

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

զարմանում էր, թե որտեղի՞ց է գտնում այդքան բառեր և ինչպե՞ս չի հոգնում կամ չի մտածում, որ այդ բաները կարող են չհետաքրքրել իրեն:

Բազկաթոռի վրա նստած, Շահյանն իր պարզ ակնոցի միջից ուշադրությամբ նայում էր այդ անչափ շատախոս կնոջ տակավին թարմ, բայց փոքր-ինչ կոպիտ դեմքին ու մի քիչ շիլ աչքերին և մտածում էր՝ «ի՜նչ հիմար կին է»:

Դուրսն արդեն մթնել էր: Ներսը, սեղանի վրա, վառվում էր հսկա լամպը ձմերկաձև չեչոտ լուսամփոփով: Շահյանն արդեն բավական ձանձրացել էր տիկնոջ շատախոսությունից և աստված, աստված էր անում, թե երբ պետք է գան Մարությանն ու Եվան:

Նախասենյակում լսվեց դռան էլեկտրական զանգակի աղմկալի ձայնը, որը չափից դուրս երկար շարունակվեց:

— Այ, հիմա չի՜ դադարիլ, — ասաց Թեկլեն և, դեմքը թթվեցրած, երկու ձեռքով փակեց ականջները, մինչև որ զանգակը, երկարատև աղմուկ հանելուց հետո, վերջապես լռեց: — Աղջիկս է, — բացատրեց Շահյանին: — Միշտ այսպես է, մի անգամ խո չի ածում ու սպասում. մինչև ծառան գնա դուռը բանա, շարունակ պիտի ածի զանգակը: Օհ, պեծի կրակ է տեղնուտեղը:

Հյուրասենյակի դուռը շրխկոցով բացվեց, և շտապով ներս մտավ Եվան գլխարկով և աշնանային վերարկու հագին: Շահյանին տեսնելուն պես կանգ առավ դռան մոտ, հոնքերը սաստիկ բարձրացրեց, որից նրա քթածակերը լայնացան, ժպտաց և ուսի վրայից ետ նայեց բաց դռնից դեպի նախասենյակը:

— Հայրիկ, պարոն Շահյանն եկել է, — կանչեց նա:

— Ա՜, վերջապես, — լսվեց Մարությանի ձայնը նախասենյակից:

Շահյանը վեր կացավ և շտապեց դեպի Եվան: Եվան ծանր և հանդիսավոր քայլերով առաջ գնաց դեպի նա և, չարաճճի ժպիտը դեմքին, ձեռքը լուռ մեկնեց նրան: Շահյանը սեղմեց ձեռնոցի մեջ պինդ սեղմած այդ փոքրիկ ձեռքը: Հենց առաջին հայացքից տեսավ, որ Եվայի այդ շինծու ծանր ու հանդիսավոր ընդունելությունը մտերմական բաց կեղծավորություն էր և արտահայտում էր նրա ուրախությունն իր այցելության համար: Եվ շնորհակալության նման մի քաղցր զգացում համակեց Շահյանին:

— Չգիտեմ, ե՞րբ պետք է թողնես քո այդ սովորությունը, որ զանգակի ձայնով այլևս զահլա չտանես, — դժգոհությամբ նկատեց մայրն աղջկան:

Եվան կրունկների վրա արագ շուռ եկավ դեպի մայրը:

— Մայրի՛կ, ախր վախենում եմ, որ ծառան չլսի՛, — բացականչեց նա, նորից հոնքերը սաստիկ բարձրացնելով:

— Խուլ չէ, կլսի:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ո՛ւռ, դու կարծում ես, թե միայն խլությունի՞ց է, որ չեն լսում: Հապա ծուլությո՞ւնը, դանդաղաշարժությո՞ւնը: Վերջապես, խո գիտես, որքան ես անհամբեր եմ. մի վայրկյան որ ուշացան, արդեն ջղերս գրգռվում են: Բայց գիտե՞ս, մայրիկ, ուր գնացինք: Թանգարան, թափառական թանգարան: Մումիա տեսանք, եգիպտական մումիա: Դուք չե՞ք տեսել, պարոն Շահյան:

— Ոչ:

— Ո՛ւռ, ինչ սարսափելի՛ է, որ տեսնեք... Երկու հազար տարեկան է... այսինքն ուզում եմ ասել՝ երկու հազար տարվա է, գիտե՞ք... թե՞ չորս հազար տարվա: Չորս հազար տարվա, չէ՞, հայրիկ, — հարցրեց Եվան, արագ դառնալով դեպի հայրը, որ շտապով ներս մտավ այդ րոպեին:

— Ինչը, — հարցրեց հայրը:

— Մեր տեսած մումիան:

— Չորս հազար տարվա:

— Չորս հազա՛ր տարվա, պարոն Շահյան, — բացականչեց Եվան: — Ո՛չ, չեմ հավատում, թե դիակն այդքան երկար ժամանակ դիմանա:

— Փառք աստծո, աչքովդ տեսար, — ասաց Մարությանը, որ իրեն հատուկ պարզ ուրախությամբ Շահյանին բարևելուց հետո խնդրեց նրան, որ նստի, և ինքը նստեց նրա մոտ:

— Կարծես թե չէր կարող կեղծ լինել, — նկատեց Եվան: —

Եվ, իհարկե, կեղծ էր: Երևակայեցեք, պարոն Շահյան, փտած փայտի վրա փտած փալասներ են փաթաթել, մի փտած գերան փորել մեջն են դրել և անունը դրել են չորս հազա՛ր տարվա մումիա:

— Հապա դեմքը, բերանը, քիթը, աչքերը:

— Ոչինչ չէր երևում, բոլորը մաշված էր. զոռով մաշել էին, որ հին բան երևա: — Զոռով էլ մաշե՞լ կլինի:

— Ինչո՞ւ չի լինիլ. մարդիկ այնքա՛ն խորամանկ են: Կեղծ էր, կե՛ղծ: Չեմ հավատում:

— Լավ, լավ, գլխարկդ վերցրու, վերարկուդ հանիր, — նկատեց մայրը: — Չես հավատում, մի՛ հավատա:

— Չե՛մ հավատում, չէ՛, — կրկնեց Եվան ձեռնոցներն արագ դուրս քաշելով ձեռքերից: — Կուզե՞ս այս րոպեին խաբեմ քեզ, հայրիկ:

— Ինչպե՞ս թե խաբես:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Հապա տասը մատդ այնպես համարիր, որ տասնևմեկ երևա:

— Ահա. մեկ, երկու, երեք, չորս, հինդ, վեց, յոթ, ութ...տասը, տասնևմեկ:

— Ինը կուլ տվիր, այդ չեղավ, Հիմա տես ինչպես եմ քեզ խաբում, — Եվան ձեռնոցները շպրտեց աթոռի վրա, — Նայիր մատներիս, Դուք էլ, պարոն Շահյան, Դու էլ, մայրիկ: Լավ նայեցեք: Մե՛կ, հետո — ե՛րկու, հետո — ե՛րեք, հետո — չո՛րս, հետո. հի՛նգ, վե՛ց, յո՛թ, ո՛ւթ, ի՛նը, տա՛սը: Տասն էր չէ՞:

— Այո, և ոչ թե տասնևմեկը:

— Սպասիր է՛, ես խո քեզ պես ինը կուլ չտվի: Տասը: Հիմա ետ համարենք: Տա՛սը... ի՛նն... ո՛ւթ... յո՛թ... վե՛ց: Այս մի ձեռքիս մատները լրացան վեցով, չէ՞, Ուրեմն վեց: Այս ձեռքս էլ հինգ մատ ունի, վեց պլյուս հինգ-տասնևմեկ: Ինչպե՞ս էր, հայրիկ, Մումիայի տերն էլ այդպես է քեզ խաբել:

Եվ նախքան հայրը, մայրը, Շահյանն ուշքի կգային ֆոկուսի այդ անսպասելի լուծումից, Եվան աթոռի վրայից թռցրեց ձեռնոցներն ու դուրս վազեց:

Հանկարծ ընդհանուր քրքիջ բարձրացավ:

— Տեսնում ե՞ս... ճիշտ որ խաբեց, — բացականչեց Մարությանը: — Ինչպե՞ս արավ:

Եվ նա կրկնեց աղջկա ֆոկուսը: Դարձյալ ընդհանուր քրքիջ բարձրացավ:

— Չե՛մ հավատում, չէ՛, — կանչելով ներս մտավ Եվան, գլխարկն ու վերարկուն հանած: Նա շտապով մի աթոռ վերցրոց, դրեց մոր բազկաթոռի մոտ և երկու ձեռքով ուղղեց շրջազգեստը ծնկների վրա:

Հայրը նայեց նրան և լուռ դողդոջուն կերպով ծիծաղեց: Եվան իր կողմից լուռ նայեց հոր աչքերին: Դեմքին նա այնպիսի կեղծ-լուրջ արտահայտություն էր տվել, որ Մարությանի հետ չկարողացան չծիծաղել նաև Թեկլեն ու Շահյանը:

— Զարմանալի է. ի՞նչ եք ծիծաղում, — նկատեց Եվան:

— Ի՞նչպես արիր, ինչպե՞ս. հապա մեկ էլ արա, — ասաց Մարությանը:

— Չէ՛, հայրիկ. ֆոկուսը մի անգամ կանեն, այլապես համ չի ունենալ: Նույնիսկ քո այն իսկական համարած մումիան մի անգամ էլ որ տեսնես, այլևս հետաքրքրություն չի շարժիլ: Բայց գիտե՞ք, պարոն Շահյան, թանգարանում ի՞նչ ազդեց ինձ վրա ավելի:

— Ի՞նչ:

— Մարի Ստյուարտը մահապատժից առաջ... Դուք կարդացե՞լ եք Շիլլերի դրամը:

— «Մարի Ստյո՞ւարտը»: Կարդացել եմ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Հրաշալի է, չէ՞: Բայց պետք է տեսնեք այդ անբախտ թագուհու մոմից ձուլված պատկերը, որ խոր, շատ խոր տպավորություն ստանաք: Այնքա՛ն կենդանի, այնքա՛ն վեհ, այնքա՛ն հանգիստ վիշտ է արտահայտում նրա գեղեցիկ դեմքը, որ... մինչև անգամ ցանկանում ես նրա տեղը լինել:

— Ի՜նչ հիմարություն, — նկատեց Մարությանը: Եվան զարմացած նայեց նրան:

— Հայրիկ, դու անսիրտ մարդ ես:

— Որովհետև չեմ ցանկանում, որ Մարի Ստյուարտի պես ինձ տանեն կառափնարա՞ն:

— Ո՛ւֆ, ի՞նչ ես ասում, հայրիկ. ես խո այդ չեմ ասում:

— Հապա՞:

— Ես ա՛յն եմ ասում, որ Մարի Ստյուարտի վիճակը չի շարժում քո կարեկցությունը:

— Եվ ի՞նչ կարիք կա, ասա խնդրեմ, որ շարժի:

— Տեսնո՞ւմ եք, պարոն Շահյան. տղամարդիկ միշտ այսպես գործնական տեսակետից են նայում բանի վրա: Նրանք ամենևին չեն ուզում գեթ մի րոպե զգացմունքով ապրել:

— Տղամարդուն այդպես էլ վայել է, հապա՛, — նկատեց Մարությանը: — Հենց որ տղամարդն սկսեց ապրել զգացմունքներով կամ, ուրիշ խոսքով ասած՝ վերացական աշխարհի մեջ, նա այլևս տղամարդ չէ, նա կին է:

— Նախ, խնդրում եմ, հայրիկ, հարգանքով խոսես կնոջ մասին: Նկատիր, որ ես կատակով չեմ ասում այս: Հետո... ինչո՞ւ վերացական աշխարհի մեջ: Մի՞թե զգացմունքներով ապրելը նշանակում է վերացական աշխարհի մեջ ապրել:

— Հապա ի՞նչ:

— Հապա ա՛յն, որ զգացմունքներով ապրել, նշանակում է զգալ, կարեկցել, քարասիրտ չլինել:

— Ես այդպես չեմ հասկանում: Եվան բարկացած նայեց հորը և ուզում էր, ըստ երևույթին, տաքացած խոսել, բայց հանգիստ կերպով դարձավ Շահյանին:

— Տեսնո՞ւմ եք, — ասաց նա. — մենք միշտ այսպես ենք վիճաբանում իրար հետ. հայրս միշտ հակառակում է ինձ:

— Զարմանալի է. այդ ինչի՞ցն է, որ դու իրավունք ունիս հակառակել քո հորը, իսկ ես, որ քո հայրն եմ, պետք է զրկվեմ այդ իրավունքից, — նկատեց Մարությանը և աչքով արեց Շահյանին:

— Է՛հ, — զայրագին պատասխանեց Եվան, ձեռքը խփելով ծնկանը, և լռեց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանը նկատեց, որ Մարությանը կատակով է վիճաբանում աղջկա հետ և սիրում է նրան բարկացնել:

7

Անցել էր մոտ երկու ժամ, որ Շահյանը նստած էր Մարությանների հյուրասենյակում: Եվան հենց նոր դուրս էր գնացել թեյի պատրաստություն տեսնելու, երբ լսվեց դռան զանգակի ձայնը:

— Աշխենն է, — ասաց Թեկլեն:

— Տանը չէ՞ր: Ո՞ւր է գնացել, — հարցրեց Մարությանը:

— Աշակերտուհիներից երկուսն այս մի քանի օրը գալիս չեն եղել. ասաց, որ գնում է տեսնելու ինչ է պատահել:

Շահյանը զարմանքով նկատեց, որ Աշխենի մասին խոսք բացված ժամանակ սառնության նման ինչ-որ զգաստություն տիրեց Մարությանին և նրա կնոջը: Նա հիշեց հոր պատմությունը Մարության եղբայրների ժառանգության մասին և զգաց, որ իր ուրախ տրամադրությունը խանգարվեց: Բայց այդ ոչ թե այն պատճառով էր, որ Մարությանը նրան վատ մարդ երևաց, այլ այն պատճառով, որ նա, կարծես բնազդմամբ, զգաց, թե Աշխենի ներկայությամբ ինքն այնպես ազատ չպիտի լինի այդ տան մեջ, ինչպես նրա բացակայության ժամանակ:

— Դուք գիտե՞ք, պարոն Շահյան, որ եղբորս աղջիկը չքավոր մարդկանց երեխաներին ձրի դասեր է տալիս տանը, — ասաց Մարությանը:

— Չէ:

— Հապա՛: Այդ կողմից նա էլ որդուս պես իդեալիստ է կամ իդեալիստուհի, ինչպես ուզում եք ասացեք: Ասենք, այստեղ իդեալիստության ոչինչ չկա, կարծեմ. ավելի լավ է բարի գործ կատարել, քան թե պարապ նստել: Այնպես չէ՞:

— Իհարկե:

Մարությանը կանչեց աղախնուն և պատվիրեց, որ Աշխենին ասի՝ չի՞ ցանկանալ արդյոք իրենց մոտ գալ, հյուր ունեն: Աղախինը դուրս գնաց:

Մի քանի րոպեից հանդարտ քայլերով ներս մտավ Աշխենը և տեսնելով Շահյանին, հետաքրքրությամբ նայեց նրան իր լուրջ աչքերով: Շահյանն իսկույն վեր կացավ, շտապեց դեպի նա, բայց տեսնելով, որ նա չի ճանաչում իրեն, շփոթված կանգ առավ:

— Չե՞ս ճանաչում, — շտապով դիմեց Մարությանն եղբոր աղջկանը: — Ամառանոցից գալիս չծանոթացա՞նք վագոնում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ա՛խ, — հանկարծ հիշելով, արտասանեց Աշխենը, շտապով առաջ գնաց դեպի Շահյանը և, մի հիվանդոտ ժպիտ դեմքին, սեղմեց նրա ձեռքը: — Խնդրում եմ, ներեցեք. մութ կերպով մտաբերում էի, որ ուր որ տեսել եմ ձեզ, բայց չէի կարողանում հիշել: Ով գիտե, դուք էիք, որ այս երեկո գալիս էիք կառքով և բարևեցիք ինձ:

— Ես էի, — ասաց Շահյանը վախկոտ ժպիտով:

— Ուրեմն դարձյալ ներեցեք, խնդրում եմ. ես կրկնակի հանցավոր եմ ձեր առաջ:

— Խնդրեմ, խնդրեմ, — վրա բերեց Շահյանը, բավական անհարմար դրության մեջ զգալով իրեն այդ բարակ, հիվանդոտ աղջկա առաջ, որը թեև պարզ ու անկեղծ կերպով ներողություն էր խնդրում իր «հանցանքի» համար, այնուամենայնիվ մի անհասկանալի ճնշող տպավորություն էր գործում նրա վրա:

Աշխենը կրկին հիվանդոտ կերպով ժպտաց, թեթևակի գլխով արավ և գնաց նստեց հորեղբոր բազկաթոռի մոտ, գահավորակի վրա:

Շահյանը նույնպես նստեց իր տեղը և ուզեց նայել նրան լավ դիտելու համար, բայց հայացքը միայն թռցրեց նրա դեմքի վրայով, որովհետև այդ միջոցին ինքն՝ Աշխենն իր սառած, կարծես ոչինչ չտեսնող, բայց ճնշող աչքերը հառել էր նրա դեմքին:

— Այդ ո՞ւմ երեխաներն են, որ չեն գալիս, — հարցրեց Մարությանը, դիմելով եղբոր աղջկան, և Շահյանը նրա թե ձայնի և թե հայացքի մեջ նկատեց այդ բաց ու կենսուրախ մարդուն չսազող մի տարօրինակ ինքնազսպում և հարգանք:

— Մեկը կալատող Սարգսինը, մյուսը խարազ Զաքարինը:

— Հետո: Իմացա՞ր ինչու չեն գալիս:

— Մեկի մայրն է հիվանդ, սաստիկ տենդ ուներ, մոտը նստած պահում է, մյուսին ծնողներն ուխտ են տարել Բոլնիս:

— Այդ ո՞րն է Բոլնիս գնացողը:

— Խարազ Զաքարը:

— Մտիկ արա: Տանը հաց չունի ուտելու և Բոլնիս է գնում: — Այն էլ այս ցրտերին: Հետո ի՛նչ ցրտեր, — նկատեց Թեկլեն:

— Ի՞նչ է, մրսո՞ւմ եք, — կանչեց Եվան, իրեն հատուկ փութկոտությամբ ներս մտնելով: — Իսկույն թեյը պատրաստ կլինի:

— Գիտե՞ս՝ Աշխենն ինչ է ասում, — դիմեց նրան հայրը: — Ի՞նչ:

Եվան նստեց Աշխենի մոտ և ձեռքերի արագ շարժումով մազերը քունքերից քաշեց ականջների ետևը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Հապա իմացիր ինչու խարազ Զաքարի աղջիկն այսքան օրս չի եղել գալիս դասի:

— Երևի հիվանդ է: Հա՞, Աշխեն:

— Ոչ. ծնողներն, ասում է, ուխտ են տարել իրենց հետ Բոլնիս:

— Հապա ո՞ւմ մոտ պիտի թողնեին, հայրիկ, որ չտանեին:

— Չես հասկանում ինձ. ես խո երեխային տանելու կամ չտանելու մասին չեմ ասում:

— Հապա՞:

— Ես ուզում եմ ասել, թե ախր ի՞նչ ունին նրանք, որ դեռ հեռավոր տեղեր ուխտ էլ են գնում:

— Հայրիկ, այդպես ինչպե՞ս կարելի է դատել. մի՞թե ունևորության կամ չունևորության հետ որևէ կապ ունի հավատի գործը:

— Հավատ էլ ասում է: Հիմարություն ասա:

— Եվ նախապաշարմունք, — ամուսնու խոսքին վրա բերեց Թեկլեն:

— Ոչ, մայրիկ ջան. դու էլ ես սխալվում, հայրիկն էլ: Դա հավատ է: Ի՞նչ անենք, թե նրանք աղքատ են: Դուք ուզում եք, որ նրանք համ փող չունենան, համ էլ զո՞ւրկ մնան հավատի մխիթարանքից:

— Ես ուզում եմ, որ նրանք եթե փող չունին, գոնե խելք ունենան, — բացականչեց Մարությանը:

— Այդ, իհարկե, ավելի լավ է, հայրիկ. բայց և այնպես հավատն է՛լի հարկավոր է: Վատն այն է, որ մարդ փող էլ է ունենում, խելք էլ, բայց հավատ չի ունենում: Չեմ հիշում, կարդացե՞լ եմ, թե ինձ ասել են, որ խոր հավատ են ունենում միայն շատ զարգացած և մեկ էլ շատ տգետ մարդիկ: Գլադստոնն, ասում են, իր քաղաքական ծանր գործերից հետո կատարյալ մխիթարություն և հանգստություն է գտնում ավետարան կարդալով:

— Ասելդ ի՞նչ է. որ Գլադստոնն է՞լ կարող է խարազ Զաքարի պես ուխտ գնալ Բոլնիս:

Եվ Մարությանն սկսեց ծիծաղել:

— Սպասիր, հայրիկ ջան, մի ծիծաղիր. մենք սկսել ենք լավ նյութի մասին խոսել: Այ, թող պարոն Շահյանն ասի: Պարոն Շահյան, ի՞նչ եք կարծում, խարազ Զաքարի Բոլնիս գնալը հիմարությո՞ւն է, թե հավատ:

— Ես չեմ ճանաչում խարազ Զաքարին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Հարկ էլ չկա ճանաչելու: Ընդունեցեք մի հասարակ արհեստավոր, որը ծանրաբեռնված է բազմամարդ ընտանիքով և օր աշխատում է, օր ուտում, իսկ այն օրը, որ ոչինչ չի աշխատում, քաղցած է մնում իր ընտանիքով: Այդպիսի մի մարդու ուխտ գնալը հիմարությո՞ւն է, թե հավատ:

— Ասա՝ այս ցրտերին և Բոլնիսի պես վաթսուն վերստ հեռու տեղ ուխտ գնալը, — նկատեց Մարությանը:

— Այո, այս ցրտերին և Բոլնիսի պես վաթսուն վերստ հեռու տեղ ուխտ գնալն այդպիսի մարդու համար հիմարությո՞ւն է, թե հավատ:

— Այդ պետք է իրեն՝ խարազ Զաքարին հարցնել, — ոչ իսկույն պատասխանեց Շահյանը և ծիծաղեց:

— Դժբախտաբար, այս րոպեիս նա Բոլնիսումն է. ես ձեր կարծիքն եմ հարցնում, պարոն Շահյան:

Շահյանի դեմքը լարված մտքի արտահայտություն ստացավ:

— Իմ կարծիքով... հիմարություն չէ, — ասաց նա:

— Ուրեմն հավա՞տ:

— Ոչ էլ հավատ:

— Հապա՞:

— Նախապաշարմունք միայն:

— Այդ, կարծեմ, մայրիկս էլ ասաց:

— Դե, հիմար նախապաշարմունք է, բաս ի՞նչ է, — զայրացած բացականչեց Թեկլեն: — Ի՞նչ է նշանակում մանր-մունր երեխաներին առնել ու գնալ այս ցրտերին մի քանի օր վայր ընկնել բաց երկնքի տակ: Հիմարությունից էլ վատ: Դեռ չեմ ասում, որ նրանք տաք շոր էլ չունին հագնելու:

— Ա՛յ, ա՛յ, մայրիկը մոտեցավ խնդրի լուծմանը: Հենց այդ պատճառով էլ ասում եմ, մայրիկ ջան, որ խարազ Զաքարի Բոլնիս գնալը հավատից է, և ոչ թե հիմարությունից կամ նախապաշարումից, որովհետև, — լսիր, հայրիկ, ինչ եմ ասում, — որովհետև եթե հավատից և խոր հավատից չլիներ, ո՛չ մի մարդ, մանավանդ աղքատ մարդը, ինչքան էլ որ տգետ և նախապաշարված լիներ, երբեք չէր առնիլ իր մանր-մունր երեխաներին և չէր գնալ տասնյակ վերստեր այս ցրտերին բաց երկնքի տակ անցկացնելու խաչի տակ: Վերջապես, դու ասա, Աշխեն. ճիշտ չե՞մ ասում:

— Ես լիովին համաձայն եմ քեզ հետ, — ասաց Աշխենը: Եվան վեր թռավ տեղից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Բռա՛վո, — բացականչեց նա երեխայի պես ուրախացած և ծափ տվեց: — Հայրիկը հաղթվե՛ց, հայրիկը հաղթվե՛ց:

Մարությանը ծիծաղեց:

— Ի՛նչպես չէ, կարծում ես, — նկատեց նա:

— Ոչ թե կարծում եմ, այլ իսկապես այդպես է: Հաղթվեցի՛ր, հաղթվեցի՛ր, հաղթվեցի՛ր, հաղթվեցի՛ր, — հորը ջգրացնելով արագ-արագ վրա տվեց Եվան, աջ ձեռքը բռունցք կազմած՝ խփելով ձախ ձեռքի ափին:

— Դե, սպասիր, է՛:

— Ո՛չ, դու սպասիր, հայրիկ, և լսիր ինչ է ասում Աշխենը:

— Թե վիճաբանում ես, դո՛ւ վիճաբանիր ինձ հետ, թե չէ՝ ի՞նչ ես Աշխենին մեջ գցում:

— Ի՛նչ, դու կարծում ես ես խուսափո՞ւմ եմ քեզ հետ վիճաբանելուց: Սխալվում ես, պարո՛ն հայրիկ: Բանը որ վիճաբանելուն գա, մինչև լույս կնստեմ և կվիճաբանեմ քեզ հետ այս խնդրի մասին: Բայց ես դեռևս կարծիքներ եմ հավաքում: Այժմ...

— Դե թող, որ ես էլ խոսեմ, է՛:

— Ոչ, հայրիկ ջան, սպասիր, այժմ Աշխենի հերթն է, — ասաց Եվան աղաչական տոնով և նորից նստեց Աշխենի մոտ: — Դու ուզում ես քո կարծիքը հայտնել չէ՞, քույրիկ ջան:

Աշխենը քնքուշ սիրով նայեց Եվայի չքնաղ աչքերին և կամաց ծիծաղեց: Այնուհետև նա նորից ընդունեց իր սառած դեմքի խաղաղ արտահայտությունը և կարճ ժամանակ լուռ մնաց:

Ամենքը նայում էին նրա լուրջ դեմքին սպասողական դրությամբ:

— Սխալմունքն ա՛յն է, որ ամեն բանի վրա նայում ենք մեր տեսակետից, — ասաց նա, կարծես յուրաքանչյուր բառն արտասանելուց առաջ կշռադատելով, որպեսզի ամփոփ և կարճ կերպով արտահայտած լինի իր միտքը: — Գուցե այլ կերպ նայել չենք էլ կարող. բայց այդ ճանապարհով, ես կարծում եմ, երբեք չենք հասնիլ ճշմարտությանը: Եվ պարոն... — պարոն Շահյանը, իմ կարծիքով, սխալ չասաց, թե իրեն՝ խարազ Զաքարին պիտի հարցնել՝ ինչո՞ւ է ցրտերին և այդքան հեռու տեղ մանր-մունր երեխաներով ուխտ գնացել խաչի դուռը, թեև պարոնը, ինչպես նկատեցի, կատակով ասաց այդ և հետո փոխեց իր խոսքը: Մայրս սաստիկ նախապաշարված էր... այսինքն ուզում եմ ասել խիստ հավատացող կին էր և անկեղծ նեղանում էր, երբ ես ասում էի նրան, որ խաչերին ուխտ գնալն անօգուտ բան է, որ երազները դատարկ բաներ են և այլն: Հիշում եմ. երկար ժամանակ նրա աչքերը ցավում էին. ուխտեց յոթ անգամ բոբիկ ոտով Ծաղկեվանք գնալ, գնաց և առողջացավ:

— Եվ ինչի՞ց, հայրիկ, — վրա բերեց Եվան, նորից ջգրացնելով հորը. — հավատից, իհարկե, և ոչ թե քո ասած հի...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Նա հանկարծ կծեց շրթունքը և սաստիկ կարմրեց: Հայրը հասկացավ նրան և շինծու խստությամբ շարժվեց նստած տեղում:

— Ի՞նչ... ինչ էիր ուզում ասե՞լ... Եվան ոտը զայրացած խփեց հատակին:

— Է՛հ, գնա՛ է՛... այնքան կռվում ես հետս, որ վերջը հիմարացնում ես:

— Իմացա՞ք, պարոն Շահյան, լսեցի՞ք... Լսեցի՞ք՝ աղջիկս, հարազատ աղջիկս ի՛նչ էր ուզում ասել ինձ... ի՛նձ, իր հարազատ հո՛րը...

— Ո՛ւֆ, ի՛նչ անտանելի հայրիկ ես... ես չեմ կարող քեզ լսել:

Եվան, աչքերը զայրույթի արցունքով լցված, վեր թռավ տեղից և դուրս փախավ:

Հայրը բարձրաձայն ծիծաղեց նրա ետևից: Ամենքը հասկացել էին, թե բանն ինչումն է, և խնդում էին:

— Հա՛, ծիծաղեցեք, ծիծաղեցեք, — մի րոպեից ներս մտնելով, ասաց Եվան և խռովածի պես նստեց հեռու: — Ձեր ջիգրու ես այլևս չեմ խոսիլ:

— Այդ ավելի լավ, — նկատեց Մարությանը, — այլևս չես վիրավորիլ հորդ:

— Երբ որ այդպես է, է՛լի կխոսեմ:

— Այսինքն՝ է՛լի կվիրավորես հորդ:

— Ո՛ւֆ... Հայրի՛կ, ղու իսկապես որ անտանելի հայրիկ ես եղել: Ուզում ես որ քաշվեմ սենյակս և այլևս դուրս չգամ այս երեկո այստեղ:

— Լավ, բավական է, — լրջությամբ նկատեց մայրն աղջկան, առաջինը վերջ տալ ուզելով կատակին: — Թեյն ի՞նչ եղավ:

— Ես գործ չունեմ թեյի հետ:

— Զարմանալի է. համ վիրավորում ես, համ էլ ինքդ ես բարկանում, — նկատեց հայրը ծիծաղելով:

— Քեզ հետ չե՛մ խոսում, հայրիկ:

— Գոնե առանց թեյի մի՛ թողնիր:

— Կասեմ, որ թեյն այստեղ բերեն:

Եվան վեր կացավ, դուրս գնաց և վերադարձավ աղախնի հետ, որն արծաթե մատուցարանով բերում էր թեյը: Խռովածի պես նա դարձյալ նստեց հեռու, բայց թեյ առավ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Եթե խռոված ես, թեյ էլ չպետք է խմես, — նկատեց հայրը:

Եվան ոչինչ չպատասխանեց:

Կարճ ժամանակ լռություն տիրեց, որի միջոցին ամենքը ժպտալով նայում էին Եվային, իսկ Եվան ոչ ոքի չէր նայում և նստած էր ուռած-փքված:

— Եվա, — կանչեց Աշխենը:

— Ի՞նչ է:

— Երեկ ես Վարոյի մոտ էի: Ասաց, որ ինքը և իրենց մի քանի վարժուհիներ թատերասերների հետ ուզում են մի ներկայացում տալ բարեգործական նպատակով: Հարմար են դատել խաղալ «Ռուզան», բայց Ռուզանի դերը կատարող չեն ճարում: Արի դու վերցրու այդ դերը:

— Հա՛, — ասաց Մարությանը, դառնալով Աշխենին, — հենց նոր, որ վերադառնում էինք տուն, պատահեցինք օրիորդ Սահակյանին: Նա մեզ էլ ասաց այդ և այն էլ ասաց, որ Ռուզանի դերը քեզ են առաջարկել, բայց դու մերժել ես: Ինչո՞ւ: Աշխենը ժպտալով նայեց հորեղբոր դեմքին, որին Մարությանը միշտ լուրջ արտահայտություն էր տալիս եղբոր

աղջկա հետ խոսելիս:

— Ինքներդ ասացեք, հորեղբայր, ես կարո՞ղ եմ կատարել Ռուզանի դերը:

— Ի՞նչ է, ինչո՞ւ չես կարող:

— Է՛հ, թողեք: Ի՞նչ իմ բանն է:

— Ընդհակառակը, օրիորդ. ես կարծում եմ, որ դուք շատ լավ կկատարեք Ռուզանի դերը, — մեջ մտավ Շահյանը, որպեսզի, վերջապես, մի բան էլ ինքն ասած լինի:

Աշխենը նայեց նրա ակնոցին:

— Ինչո՞ւ դուք այդպես եք կարծում: Շահյանը շփոթվեց. շփոթվեց թե՛ նրա տարօրինակ համառ հայացքից և թե՛ առաջարկված հարցի պատասխանը չունենալուց:

— Որովհետև... ինձ այդպես է թվում, — ասաց նա և զգաց, որ հիմարաբար ժպտում է:

Աշխենը ձեռքի հանդարտ շարժումով ետ քաշեց ճակատի վրա ընկած մազերը և ոչինչ չասաց:

Այդ լռությունից Շահյանն ավելի շփոթվեց և ձեռքը մեքենայաբար մեկնեց դեպի թեյի բաժակը:

— Եվա, ի՞նչ ես ասում, — նորից դիմեց նրան Աշխենը: — Կվերցնե՞ս Ռուզանի դերը: Ես կարծում եմ, որ դու շատ լավ կարող ես կատարել այդ դերը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

«Ա՞յս ինչ է. ծաղրո՞ւմ է ինձ», — մտածեց Շահյանը և նայեց Աշխենին: Բայց Աշխենը, որ այդ րոպեին նայում էր Եվային, ըստ երևույթին, ամենևին չէր էլ մտածում նրա մասին:

— Ինչո՞ւ դու այդպես ես կարծում, — հարցրեց Եվան նույն եղանակով, ինչ եղանակով որ Աշխենը տվեց այդ հարցը Շահյանին:

Շահյանը հայացքն Աշխենի դեմքից փոխադրեց Եվայի դեմքին: «Սա է՞լ է ինձ ծաղրում, թե՞... պաշտպանում է ինձ», — մտածեց նա:

— Որովհետև քո մեջ կա հանկարծ բռնկվող այն կրակը, որ հարկավոր է Ռուզանի դերը կատարողին, — պատասխանեց Աշխենը:

— Խնդրեմ: Իմ մեջ ո՛չ մի կրակ չկա:

— Թո՛ղ, ի սեր աստծո, — նկատեց Թեկլեն: — Հիմա բեմ դուրս գալն է պակաս:

— Վերջապես, ի՞նչ դրա բանն է դրամատիկ դերեր կատարելը, — նորից սկսեց ջգրացնել աղջկան Մարությանը: — Ես այդ օրիորդ Սահակյանին էլ ասացի. նա ախր, դրան էլ առաջարկեց Ռուզանի դերը: Դրան ասա սուբրետի թեթև դերեր կատարի:

— Հայրիկ. ասացի, որ քեզ հետ չեմ խոսում:

— Լավ, քեզ հետ ո՞վ է խոսում:

— Դո՛ւ, հենց այս րոպեիս — չե՞ս խոսում: Ա՛յ, պարոն Շահյանի, մայրիկի, Աշխենի հետ կխոսեմ, քեզ հետ չեմ խոսիլ:

— Լավ. ես լռում եմ. տեսնենք ինչ ես խոսում: Եվան աթոռը մոտ քաշեց:

— Պարոն Շահյան, Աշխենն ասաց, որ ես Ռուզանի դերը կարող եմ շատ լավ կատարել, որովհետև իմ մեջ հանկարծ բռնկվող ինչ-որ կրակ կա եղել. մայրիկն ասաց, որ ինձ բեմ դուրս գալն է պակաս, իսկ հայրիկն ասաց, որ Ռուզանի պես դրամատիկ դեր կատարելն իմ բանը չէ և որ ես շատ-շատ կարող եմ կատարել սուբրետի թեթև դերեր: Դո՞ւք ինչ եք կարծում, պարոն Շահյան, իմ ընդունակությունների մասին:

— Ես կարծում եմ, որ դուք... Հիանալի կլինիք Ռուզանի դերում:

Եվան հանգստությամբ վեր կացավ տեղից և մի քանի քայլ հեռացավ:
Շահյանը սարսափեց: «Չլինի՞ թե հիմար բան ասացի», — մտածեց նա:

— Փորձենք, — ասաց Եվան: — Ես այս րոպեիս կներկայացնեմ այն տեսարանը, ուր Ռուզանը հոր երկիրը փրկելու համար փախչում է ծնողական տնից և գնում է թշնամու բանակը: Այդ տեսարանումն է, կարծեմ, արտասանում նա այն մենախոսությունը, որի մեջ ասում է...

Նա լռեց և մատը դրեց ճակատին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Սահյանն ազատ շունչ քաշեց, նա տեսավ, որ ոչ մի հիմարություն դուրս չի տվել:

— ... որի մեջ ասում է. «... և այս սահմանի վրա ա՛ռ իմ հոգին»: — Աստծուն է դիմում: «Թող այս սահմանը լինի իմ գերեզմանը...» և այլն: Ես, իհարկե, չեմ կարող այդ մենախոսությունն արտասանել այնպե՛ս, ինչպես որ բնագրի մեջ է գրված, որովհետև միայն ներկայացումն եմ տեսել: Մենախոսությունը կարտասանեմ և շատ բան էլ ինձնից կսարքեմ. բավական է, որ ես հասկանում եմ Ռուզանի դրության հոգեբանությունը և գիտեմ, թե անձնական ինչպիսի ծանր զոհաբերություն է անում նա իր հայրենիքը փրկելու համար: Մայրիկ ջան, թույլ կտա՞ս, որ գոնե մեր տանը բեմ դուրս գամ:

Մայրն, առանց կատակի, ընդդիմացավ, աստված գիտե, թե ինչու, այդ բանը նրա հասակին անվայել երեխայություն համարելով: Աշխենն սկսեց թախանձել Թեկլեին, որ թույլ տա: Շահյանն էլ իր կողմից մի քանի անգամ «խնդրում եմ, տիկին, խնդրում եմ» ասաց: Մարությանը դիտմամբ լռում էր:

— Այստեղ տարաձայնություններ կան, — ասաց Եվան: — Ավելի լավ է, ձայն հավաքենք: Խնդրում եմ, մի նեղանար, մայրիկ ջան, տարաձայնությունները միշտ տարաձայնություններով են վճռում: Պարոններ, ով ուզում է, որ ես արտասանեմ Ռուզանի մենախոսությունը, թող մատ բարձրացնի:

Մատ բարձրացրին միայն Աշխենն ու Շահյանը:

— Մեկ, երկու, — համարեց Եվան: — Երկու հոգի ցանկանում են, չի ցանկանում միայն մի հոգի — մայրիկս:

— Հապա ե՞ս, — բացականչեց Մարությանը: — Ես էլ. ախր, մատ չբարձրացրի:

— Դու ձայն չունես. հայրիկ, ասացիր, որ լուռ ես:

— Դա՞ ինչ է նշանակում, դա՞ ինչ բռնություն է: Ես բողոքում եմ: Դու իրավունք չունես ինձ զրկելու ձայնի իրավունքից:

— Լավ. ես քեզ ձայնի իրավունք եմ տալիս, հայրիկ, և իմ ձայնը միացնում եմ Շահյանի և Աշխենի ձայնի հետ: Ուրեմն, պարոն Շահյանը, Աշխենը և ես, — երեք հոգի, — ցանկանում ենք, որ ես արտասանեմ Ռուզանի մենախոսությունը. իսկ դու և մայրիկը, — երկու հոգի, — չեք ցանկանում: Եվ որովհետև երեքը շատ է երկուսից, հետևաբար ես կարտասանեմ Ռուզանի մենախոսությունը:

— Երբ որ այդպես է, ես ձայն չեմ ուզում:

— Իսկ երբ որ այդպես է, հայրիկ, ձայնս միացնում եմ մայրիկի ձայնի հետ, այսինքն ուզում եմ պահպանել status-quo-ն, ինչպես որ գրում են լրագրերի քաղաքական բաժնում, և զրկում եմ քեզ ինձ Ռուզանի դերում տեսնելու հաճույքից:

Եվ Եվան կոմիկական հանգստությամբ նստեց մոր կողքին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Սենյակում ընդհանուր քրքիջ բարձրացավ:

8

Առաջին այցելությունից հետո Շահյանն այլևս չէր ուզում Մարությանների տուն գնալ: Նա շատ լավ ճանաչում էր իրեն. գիտեր, որ Մարությանների պես մի ընտանիքի հաճախ այցելելու համար հարկավոր էր քիչ թե շատ հետաքրքրելու կամ գոնե լոկ խոսելու շնորհք ունենալ: Ոչ այս ուներ, ոչ այն: Իսկ նորահարսի պես լուռ նստելը թե ձանձրալի էր, թե անհամ: Թեպետ նա տարակույս չուներ, որ Մարությանները միշտ սիրով պիտի ընդունեն իրեն, հենց թեկուզ իրենց շատախոսությանը հագուրդ տալու համար միայն, բայց ինքը՝ Շահյանը, խո նույնը պիտի մնար, ինչ որ կար — վարվելու ընդունակությունից զուրկ, խոսելու պաշար չունեցող, անդադար երկմտող, կասկածոտ ու վախկոտ անձնասեր: Ոչ, ավելի լավ էր հեռու մնալ, այդ ամենալավ միջոցն էր հոգու անդորրության համար:

Բայց Եվայի պատկերը խորապես տպավորվել էր նրա հոգու մեջ: Թեև այդ աղջկա ազատ վարվեցողությունը, սեփական խելքով դատելու ընդունակությունը մի կողմից մտավախություն էր պատճառում նրան, բայց մյուս կողմից Եվայի մեջ տեսնում էր մի բան, որը միանգամայն գրավել էր նրան: Այդ մի բանը երեխայական այն պարզամտությունն էր, որ արտահայտում էր Եվան ամենքի հետ խոսելիս, նույնիսկ լուրջ բաների մասին դատելիս: Բացի դրանից, Շահյանը Եվայի մեջ ամենևին չէր տեսնում դիմացինի անձնավորությանը քննական աչքով նայելու սովորությունը, — մի բան, որից նա խույս էր տալիս միշտ սարսափով: Եվան շարունակ զբաղված էր իրենով, իր զգացումներն ու մտքերն արտահայտելով և ժամանակ չուներ Աշխենի պես լռելով դիտելու, որպեսզի հետո հարցնի դիմացինին՝ «Ինչո՞ւ եք դուք այդպես կարծում»:

Այժմ ավելի, քան առաջ, ինքնավստահություն չունենալով այլևս այցելելու Մարությաններին, Շահյանն օրը երկու-երեք անգամ անցնում էր նրանց տան մոտակա փողոցներով այն բաղձանքով, որ գեթ դուրսը տեսնի Եվային կամ նրա մորն ու հորը (Աշխենին տեսնելու միտքը նրան վախեցնում էր): Այդպիսի դեպքերում նա անցնում էր գործի գնացող մարդու շտապ քայլերով, որպեսզի եթե հանդիպելու լիներ Մարությաններին և նրանք հարցնեին (նրան այնպես էր թվում, թե անպատճառ պիտի հարցնեին), թե ի՞նչ է շինում այդ կողմերը, կարողանար ասել, թե գործի է գնում կամ գործից է գալիս:

Հիրավի, մի անգամ պատահեց Եվային ու նրա մորը, բայց ոչ այն փողոցներում, ուր թափառում էր նրանց տեսնելու հույսով, այլ բոլորովին ուրիշ փողոցում և հենց այն ժամանակ, երբ նրանց տեսնելու հույսով չէր դուրս եկել տնից: Հանդիպումն անակնկալ էր: Բայց զարմանալի է. նրա ամենօրյա տենչն այն էր, որ հանդիպեր նրանց, այժմ կատարված էր նրա տենչը, և մի տասը-քսան քայլ էր մնում, որ մոտենային, բարև տային իրար, խոսեին իրար հետ: Բայց նա Եվայի ու նրա մորը տեսնելուն պես ծռեց ճանապարհը և անցավ հեռացավ, իբր թե չտեսավ նրանց: Մինչդեռ նրա սիրտը սկսել էր թրթռալ: Բավական հեռանալուց հետո ծածուկ ետ նայեց, բայց այլևս չտեսավ Եվային ու նրա մորը: Նա կանգ առավ ակամա և ինքն իրեն հարցրեց, թե ինչո՞ւ այդպես արեց. ինչո՞ւ ցույց տվեց, թե չտեսավ նրանց, քանի որ տեսավ և ուզում էր տեսնել... Բան չհասկանալով իր այդ անմիտ վարմունքից, նա միայն ուսերը վեր քաշեց տարակուսանքով:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Բայց ավելի զարմանալին այն էր, որ այդ փորձն ամենևին խրատ չեղավ Շահյանի համար: Գրեթե նույնպիսի պայմաններում նա մի անգամ ևս հանդիպեց Եվային ու նրա մորը և էլի ցույց տվեց, թե չտեսավ նրանց: «Վերջապես, բավական է, ա՛յ ջրի տարած, մի քիչ մարդ եղիր», կատաղեց նա իր դեմ և մի անգամ էլ, երբ արդեն պատրաստվում էր «մարդ» լինել, էլի փորձանքի հանդիպեց: Բայց այս անգամ փորձանքն այնպիսի փորձանք էր, որից, հազար էլ ուզենար, չէր կարող խույս տալ:

Կիրակի երեկո էր: Շահյանը դարձյալ դուրս էր եկել այն մտադրությամբ (ասենք, նա ուրիշ մտադրություններ չուներ), որ հանդիպե Մարությաններին, և շտապ քայլերով անցնում էր նրանց տան հարակից փողոցներից մեկով, Մարությաններից ոչ ոքի չհանդիպելով, արդեն ապարդյուն էր համարել այդ երեկոյի աշխատանքը և պիտի ծռվեր մյուս փողոցը, ուղղակի տուն վերադառնալու համար, երբ երկու փողոցների հենց անկյանը հանկարծ երես առ երես հանդիպեց Եվային:

Շահյանը դողաց և կանգ առավ. կարծես գող լիներ և հանկարծ բռնեցին նրան գողության տեղում:

— Ուո՛ւ, պարո՛ն Շահյան, — բացականչեց Եվան: — Ով գիտե, մեր տունն էիք գնացել: Հա՛:

— Ոչ, օրիորդ, — պատասխանեց Շահյանը, հանկարծակիի եկած: — Ես այստեղ... մեկի մոտ գործ ունեի:

— Կիրակի օրը ի՞նչ գործ: Եկեք գնանք մեր տուն: Զարմանալի է. դուք կարծես թե խուսափում եք մեզնից: Քանի անգամ մենք տեսել ենք ձեզ փողոցում, և դուք չեք կամեցել մեզ բարև տալ:

— Ո՞րտեղ... ե՞րբ... ի՞նչ եք ասում, — կմկմաց Շահյանը շփոթված: — Ներողություն, երևի չեմ տեսել. չէ՞ որ ես կարճատես եմ:

— Ուո՛ւ, ճի՛շտ որ, — ծիծաղեց Եվան: — Ես մոռացա, որ դուք ակնոց եք կրում: Դե գնանք. մենք այստեղ խանգարում ենք մարդկանց անցուդարձը: Տանը ոչ ոք չկա. Աշխենն է միայն: Կգնանք մի քիչ զրույց կանենք: Գնանք:

— Դժբախտաբար...

— Կարծեմ, մեծ դժբախտություն չէ: Ի՞նչ կա որ: Կիրակի օր է. չեմ կարծում, թե ձեր գործը մի առանձին կարևորություն ունենա: Մենակ մնալն ինձ համար ուղղակի սպանիչ բան է: Իսկ Աշխենը շարունակ պարապում է: Բայց այս երեկո ես կստիպեմ նրան, որ մեզ ընկերանա: Գնանք:

Շահյանը քիչ չվախեցավ, երբ իմացավ, որ ոչ Մարությանն էր տանը, ոչ նրա կինը. վախեցավ առավելապես, երբ լսեց Աշխենի անունը: Մի րոպեում պատկերացրեց իր առաջ երկու օրիորդների մեջ մենակ մնալու տխուր հեռանկարը և վճռեց միանգամայն խույս տալ:

— Ոչ, օրիորդ... ես ամենայն ուրախությամբ... բայց... տանը կանհանգստանան, — կմկմաց նա նորից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվան քրքջաց իր բարձրահնչուն ծիծաղով:

— Ի՞նչ եք ասում, պարո՛ն Շահյան, — բացականչեց նա, — Աղջիկ խո չե՞ք... Սակայն ես ձեզ չեմ ստիպում, — ավելացրեց նա լրջությամբ: — Տեսնում եմ, որ դուք չեք ուզում գալ մեր տուն:

— Ընդհակառակը...

— Ուրեմն գնանք:

Շահյանը հետևեց Եվային չափազանց նվաստացած և ամոթահար: «Աղջիկ խո չե՞ք»՝ Եվայի այդ խոսքերը և դրա հետ միասին նրա բարձրահնչուն ծիծաղը մեխի պես ցցվեցին Շահյանի ուղեղի մեջ, և նա զգաց, որ այդ սպանիչ խոսքերն ու ծիծաղը երբեք չպիտի կարողանա մոռանալ: Բայց այժմ այդ մասին նա շատ քիչ էր մտածում. նրան մտահոգություն էր պատճառում այն հանգամանքը, թե ինչպես պիտի անցկացներ մի քանի ժամ Եվայի և Աշխենի մոտ, առանց Մարությանի և նրա կնոջ.

— Գիտե՞ք ինչ, պարոն Շահյան, — ասաց Եվան կամաց, երբ տուն հասան, և Շահյանը նախասենյակում հանում էր վերարկուն: — Մենք ուղղակի կմտնենք Աշխենի մոտ:

— Ասում եք պարապում է. չե՞նք խանգարիլ:

— Այդ քաջությունը ե՛ս եմ հանձն առնում:

Եվան մոտեցավ Աշխենի սենյակի դռան, նախ միջամատով թրխկթրխկացրեց, հետո կամաց բաց արեց և գլուխը ներս կոխեց: Շահյանը նրա ուսի վրայից տեսավ Աշխենին գրասեղանի մոտ նստած, լամպի լուսով գիրք կարդալիս:

— Կարե՞լի է, — հարցրեց Եվան:

Աշխենը գլուխը բարձրացրեց գրքի վրայից և նայեց նրան:

— Դու ե՞ս, Եվա:

— Ես չեմ, հյուր է:

— Ո՞վ է:

— Պարոն Շահյանը: Կարելի՞ է:

— Եկեք, ինչո՞ւ չեք գալիս:

— Պարոն Շահյան, խնդրեմ: Եվ Եվան ճանապարհ տվեց:

Շահյանը շոշափեց սյուրտուկի կոճակները և ներս մտավ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Իսկ ես՝ իսկույն, — ասաց Եվան և անհայտացավ: Հիվանդոտ ժպիտը դեմքին, Աշխենը բարևեց Շահյանին և աթոռ առաջարկեց, որ նստի:

Շահյանը ետ քաշեց աթոռը և նստեց:

— Կարծեմ, մենք խանգարեցինք ձեզ, — ասաց նա և իսկույն մտածեց, թե ինչո՞ւ արտասանեց «մենք» բառը:

— Ոչ, ես արդեն հոգնել էի, — պատասխանեց Աշխենը, լամպի պատրույգը մի քիչ ցածրացրեց և նստեց իր առաջվա տեղը:

Շահյանը լռեց: Նա մտածում էր, թե այժմ ինչ ասի:

— Գիտե՞ք, օրիորդն ինձ զոռով քարշ տվեց այստեղ, — ասաց նա և ծիծաղեց:

— Ինչո՞ւ զոռով: Չէի՞ք ուզում գալ:

— Ոչ... ընդհակառակը... Ուզում եմ ասել, որ փոքր-ինչ գործ ունեի... Ասենք, այնքան էլ կարևոր չէր:

Եվ Շահյանը նորից լռեց:

Աշխենը նույնպես չէր խոսում: Նա, կարծես սաստիկ հոգնած, հանգստանում էր: Սակայն դժվար էր որոշել՝ Աշխենը հոգնած էր, թե տխուր: Նրա երկայն դեմքն, ըստ սովորականին, խաղաղ էր վերին աստիճանի. կարծես մի ծանր վիշտ ուներ, որի հետ վաղուց հաշտվել էր, բայց որը խլել էր նրանից կյանքով և իր շրջապատով հետաքրքրվելու ընդունակությունը: Նա նստած էր անբռնազբոսիկ կերպով, լուռ ու անտարբեր և, ըստ երևույթին, ամենևին ուշադրություն չէր դարձնում Շահյանի վրա, իսկ Շահյանը, սաստիկ նեղվելով իր դրությունից, շուտ-շուտ նայում էր դռան կողմը, սպասելով Եվայի վերադարձին, և դիտում էր սենյակը:

Սենյակը փոքր էր, համեստ, գրեթե աղքատ կահավորանքով, բայց լավ տպավորություն էր գործում: Աչքի էր ընկնում կարգ ու կանոն և վերին աստիճանի մաքրություն: Փողոցի կողմը նայող երկու լուսամուտի տախտակե փեղկերը փակ էին: Գրասեղանի վրա վառվող լամպի կապույտ լուսամփոփն առաստաղն ու պատերը կեսից բարձր ներկել էր կապտավուն գույնով, որից սենյակի մեջ հանգուցիչ կիսախավար էր տիրում: Պատերից մեկի մոտ դրված էր գրքերի մի մեծ պահարան ապակյա դռներով, բոլոր դարակները գրքերով լի: Գրասեղանի վրա ճկճկում էր նիկելի մի փոքրիկ կանացի ժամացույց ղայթանի շղթայով: Շահյանի աչքովն ընկավ լամպի տակ դրված մի երիտասարդի լուսանկար գեղեցիկ կանգուն շրջանակի մեջ: Դարձյալ մի բան ասած լինելու համար, ուզեց հարցնել, թե ով է այդ երիտասարդը, բայց վախեցավ, որ դարձյալ չոր ու ցամաք պատասխան ստանա և նորից նայեց դռան կողմը:

Լռության ճնշումն արդեն անտանելի էր դառնում մինչև անգամ Աշխենի համար, որը, ըստ երևույթին, ամենևին ընդունակություն չուներ հյուր զբաղեցնելու, երբ իրեն հատուկ աշխույժ քայլերով ներս մտավ Եվան հագուստը փոխած: Նրա ներս բերած շարժումն այնքան կենդանարար էր, որ սենյակում տիրող կիսախավարն անգամ, կարծես, պայծառացավ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Չե՞ս զարմանում, Աշխեն, որ ես հայրիկին ու մայրիկին թողի այնտեղ և տուն եկա. — մտնելուն պես ասաց նա և մի աթոռ առնելով, նստեց հորեղբոր աղջկա մոտ: — Նրանք ուզում էին ինձ պահել այնտեղ, որ հետո կլուր տանեն, բայց ես չուզեցի: Գալիս էի, որ նամակ գրեմ Արմենակին, — գիտե՞ս, այս շաբաթ ոչ մի նամակ չեմ գրել, — բայց ճանապարհին հանդիպեց պարոն Շահյանը, և մենք եկանք մի քիչ ժամանակ անցկացնելու քեզ հետ: Ի՞նչ ես կարդում: — Եվան մի ձեռքով գրկեց Աշխենի ուսը, գլուխն առաջ տարավ և մյուս ձեռքով բաց արեց գրքի երեսը: — Ընդհանուր պատմություն: Պարոն Շահյան, դուք չե՞ք ձանձրանում: Գիտե՞ք ինչու եմ հարցնում, — որովհետև ես չափից դուրս շատ եմ խոսում, — ինչպես մեր տանն ամենքը, բացի Աշխենից, — և վախենում եմ, որ այս անգամ էլ շատ խոսեմ, թեև արդեն, կարծեմ, շատ եմ խոսում: Գիտե՞ք, ես ամեն բանից կարող եմ խոսել, թե ինչպես — այդ ուրիշ հարց է: Օրինակ, հենց ընդհանուր պատմությունից, որից, այս էլ ասեմ, շատ բան մոռացել եմ: Կամ թե — ձանձրանալու մասին: Պետք է խոստովանեմ, որ ես առհասարակ շատ խոսել սիրում եմ առավելապես այնպիսի բաների մասին, որոնց համար հարկավոր է խելքին զոռ տալ: Ի դեպ. խոսենք ձանձրանալու մասին: Այստեղ երեք հոգի ենք. տեսնենք ով ինչից է ձանձրանում: Գիտե՞ք, այսպիսի դատարկ բաների մասին խոսելիս մարդու ուղեղի մեջ երբեմն խելացի մտքեր են հղանում: Ես, օրինակ, ձանձրանում եմ, որ մարդ չկա մոտս, որ խոսեմ. Աշխենը ձանձրանում է պարապ մնալուց, — այդպես չէ՞, Աշխեն. — իսկ դո՞ւք ինչից եք ձանձրանում, պարոն Շահյան: Շատախոսների՞ց: Շահյանը ծիծաղեց:

— Չէ, հավատացեք, պարոն Շահյան, խոսենք լրջորեն: Զարմանալի է, Աշխեն, ինչո՞ւ, որ ես խոսում եմ, ամենքը կարծում են, թե կատակ եմ անում: Հայրիկը խո բոլորովին կատաղեցնում է ինձ: Դու էլ ասենք, քիչ ու միչ... այնպես, էլի՛... Տեսնո՞ւմ ես, ծիծաղեցիր: Պարոն Շահյանն էլ է ծիծաղում, տե՛ս: Հավատացեք, պարոն Շահյան. եթե իմ շատախոսությունը ձանձրացնում է ձեզ, քիչ կխոսեմ, կաշխատեմ քիչ խոսել:

— Ընդհակառակը, օրիորդ:

— Ի՞նչ ընդհակառակը. որ իմ շատախոսությունը զբաղեցնում է ձեզ:

— Այո:

Եվան ուսերը վեր քաշեց:

— Այդ ավելի վատ: Ուրեմն դուք միայն զվարճանում եք ինձ վրա և, գուցե, թեթևսոլիկներից մեկն եք համարում ինձ:

— Ի՛նչ եք ասում, օրիորդ, — անկեղծ հանդիմանությամբ նկատեց Շահյանը:

Եվան այս անգամ նայեց նրան շատ լուրջ կերպով:

— Նկատեցեք, պարոն Շահյան, ես շատ նեղանում եմ, երբ մարդիկ ճիշտ չեն ասում ա՛յն, ինչ որ մտածում և զգում են:

— Հավատացնում եմ ձեզ, օրիորդ, ես ճիշտ եմ ասում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ի՞նչն եք ճիշտ ասում, որ դուք զվարճանո՞ւմ եք իմ շատախոսության վրա:

— Ո՛չ... Այսինքն... որ... ձեր շատախոսությունը ձանձրալի չէ ինձ համար:

Եվան հոնքերը սաստիկ բարձրացրեց:

— Ա՜, ուրեմն դուք ինձ իսկապե՞ս շատախոս եք համարում: Շատ շնորհակալ եմ ձեր այդ կոմպլիմենտի համար:

Եվան այդ բառերն արտասանեց այնպիսի կոմիկական հանգիստ զարմանքով, որ Աշխենը չկարողացավ զսպել իր ծիծաղը:

Շահյանի դեմքը ճակնդեղի պես կարմրեց, բայց նա էլ ժպտաց, զգալով հանդերձ, որ այդ չարաճճի աղջիկը, թերևս ակամա, հիմարացնում է իրեն:

— Շատ բարի, — ասաց Եվան: — Երբ որ ես շատախոս եմ և իմ շատախոսությունը ձանձրալի չէ ձեզ համար, ես շատ կխոսեմ, այնքան կխոսեմ, մինչև որ ձանձրանաք: Դուք հեռու եք նստած, խնդրում եմ մոտիկ նստեք:

Շահյանը փոքր-ինչ առաջ քաշեց աթոռը: Նա շարունակ ժպտում էր ինչ-որ բութ ժպիտով:

— Այժմ սկսենք: Մենք պետք է խոսենք ձանձրանալու մասին, այսինքն այն մասին, թե մեզնից ով ինչից է ձանձրանում: Ասացի, որ ես ձանձրանում եմ, երբ մոտս մարդ չի լինում, որ խոսեմ. Աշխենը ձանձրանում է պարապ մնալուց. իսկ դո՞ւք ինչից եք ձանձրանում, պարոն Շահյան:

— Ե՞ս... կյանքից, — դուրս թռավ Շահյանի բերանից:

— Ինչ ասացի՞ք... կյանքի՞ց, — բացականչեց Եվան խիստ զարմացած: Նրա դեմքի վայրկենական փոփոխությունը պարզ ցույց տվեց, որ նա ամենևին չէր սպասում, թե կատակով արած իր այդ հարցմունքին այդպիսի պատասխան կստանա:

Աշխենը հետաքրքրությամբ նայեց Շահյանի ակնոցին:

Իսկ Շահյանը թե վախեցավ և թե շփոթվեց:

— Նկատեցեք, պարոն Շահյան, մենք այժմ արդեն կատակով չպետք է խոսենք, — զգուշացրեց Եվան խոսակցության թեթև տոնը լրջության փոխելով, — որովհետև դուք շատ լուրջ բան ասացիք:

Շահյանի երկյուղն ավելացավ. նա զգաց, որ թակարդն է ընկնելու և, այդ բանից խույս տալու համար, ուզեց կատակի ձև տալ իր ասածին: Բայց Եվան պինդ բռնեց նրան:

— Ես չեմ թույլ տալ, որ դուք ետ կանգնեք ձեր ասած խոսքից, պարոն Շահյան, որովհետև ես չափից դուրս սիրում եմ կյանքը, իսկ դուք ասացիք, որ ձանձրանում եք կյանքից և, որքան նկատեցի, կատակով չասացիք այդ: Ինձ համար շատ հետաքրքրական է իմանալ, թե ինչպե՞ս կարելի է ձանձրանալ մի բանից, որը միայն մի անգամ է տրվում մարդուս: Կյանքը... Չէ՞ որ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

այդ ես եմ, այդ դուք եք, այդ այս գիրքն է, այս թանաքամանը, այս լուսանկարը, — իմ եղբա՛յրը, — ամբողջ տիեզերքը, այն բոլորը, ինչ որ տեսնում, շոշափում և զգում եմ... Ինչպե՞ս կարելի է ձանձրանալ այս բոլորից... Խնդրում եմ, բացատրեցեք:

Շահյանը կատարելապես վախեցավ:

— Հավատացնում եմ, օրիորդ, ես իսկապես կատակ արի, — այս անգամ ուղղակի ուզեց խոյս տալ նա:

— Ո՛չ, ո՛չ: Խնդրում եմ բացատրեցեք: Դուք կատակ չարիք, ո՛չ: Գուցե ես չեմ ճանաչում կյանքը, գուցե սխալ է կյանքի մասին իմ ունեցած հասկացողությունը: Դուք չգիտեք, թե որքան հարցասեր եմ և որքան ուզում եմ միշտ նոր բան իմանալ, նոր բան սովորել: Դուք տղամարդ եք և անշուշտ անհամեմատ ավելի փորձված եք, ավելի լավ եք ճանաչում կյանքը, քան թե ես: Խնդրում եմ: Ինչո՞ւ է կյանքը ձեզ ձանձրալի թվում:

Ճար չկա: Շահյանը սիրտ տվեց իրեն և վճռեց ասել այն բոլորը, ինչ որ իր տաղտկալի կյանքի մեջ, իր սիրած հոռետես փիլիսոփաների գրվածքների ընթերցման ազդեցության տակ, մշտական խորհրդածության նյութ էր դարձել իր պարապ ուղեղի համար: Մտքերն արդեն պատրաստ էին, թեև խառնաշփոթ, և այդ մտքերն այժմ ավելի խառնվում ու շփոթվում էին Եվայի համառ հարցապնդումների առաջ:

— Ես նոր բան չպիտի ասեմ, օրիորդ, — սկսեց նա ակնոցն ուղղելով: Ժպիտն արդեն չքացել էր նրա դեմքից, և այդ դեմքը մտքի բռնի լարված դրություն էր արտահայտում: — Կյանքն առհասարակ ձանձրալի է... Ամեն մարդ ձեզ նույնը կասի:

— Ես, օրինակ, տեսնում եք, նույնը չեմ ասում:

— Դուք... այո... բայց... Մինչև անգամ ամենալավատես մարդը չեմ կարծում, թե գոհ լինի կյանքից... եթե միայն, իհարկե, նա չի կեղծում:

— Հավատացնում եմ ձեզ, ես չեմ կեղծում, իսկ ես այնքան լավատես եմ, այնքան լավատես...

— Ես ձեզ համար չեմ ասում, օրիորդ: Ես կատարելապես հավատացած եմ, որ դուք երբեք չեք կեղծում: Ես խոսում եմ գլխավորապես իմ մասին: Ասացի, որ ձանձրանում եմ կյանքից: Ձանձրանում եմ ինչո՞ւ: Որովհետև... նրա՛ համար, որ ... տեսնում եմ, որ... ամեն բան ունայն է... բացարձակ ունայնություն է տիրում աշխարհիս երեսին... սկսած թագավորի պալատից մինչև ամենավերջին մուրացկանի խրճիթը... բացարձակ ունայնություն... մնայուն ոչինչ չկա:

Զարմացած, մեծ աչքերով Եվան անթարթ նայում էր Շահյանի ակնոցին և ահագին հետաքրքրությամբ սպասում էր, թե նա կշարունակի. բայց Շահյանը նրա հայացքի ազդեցության տակ կորցրեց իր մտքերի պաշարը և լռեց:

— Հետո՞, հետո՞: Շարունակեցեք խնդրեմ, — բացականչեց Եվան:

— Էլ ի՞նչ շարունակեմ: Ասացի, էլի...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Չէ, սպասեցեք: Այդ այնքան հետաքրքրական նյութ է, որ ես կուզեի ավելի շատ բան իմանալ ձեզնից: Սպասեցեք: Ուրեմն կյանքը ձեզ ձանձրալի է թվում նրա համար, որ ամեն ինչ ունա՞յն աշխարհիս երեսին, որ մնայուն ոչի՞նչ չկա:

— Այո:

— Զարմանալի է... Շատ լավ: Բայց մի՞թե իսկապես մնայուն ոչինչ չկա:

— Ի՞նչ կա:

— Ինչպե՞ս թե ինչ կա: Նախ ասացեք, խնդրեմ, մնայուն ասելով ի՞նչ եք հասկանում:

— Մնայո՞ւն... Ա՛յն, որ... մնում է, չի մեռնում:

— Շատ լավ: Եվ դուք մնացող, չմեռնող ոչի՞նչ չեք գտնում աշխարհիս երեսին:

— Ոչինչ:

— Ի՞նչ եք ասում, պարոն Շահյան, հապա լավ գործը, լավ անունը, լավ հիշատակը — մի՞թե դրանք չեն մնում, մի՞թե դրանք մեռնում են: Մի՞թե մեռած են, օրինակ, այս թանաքի, այս գրչի, այս գրերի հնարողները, որոնց շնորհիվ ես կարողանում եմ իմանալ ոչ թե միայն այն, թե ինչ է կատարվել ինձնից դարեր առաջ, այլև կարող եմ հաղորդել ինձնից դարեր հետո գալիք սերնդին, թե ինչ է կատարվում այժմ: Մի՞թե մեռած է այս լուսանկարչության հնարողը, որի շնորհիվ ես ամեն րոպե, ամեն վայրկյան, երբ կամենամ կարող եմ տեսնել իմ սիրասուն եղբոր պատկերը այնպես, որ կարծես թե նա կանգնած լինի առաջս: Ո՞ր մեկն ասեմ, կարելի է միթե մի առ մի թվել: Եթե մենք լավ նայենք մեր շուրջը, լավ քննենք մեզ շրջապատող առարկաները, հենց թեկուզ այս չնչին լուցկին, որի շնորհիվ մենք միշտ կարող ենք կրակ և լույս ունենալ, — մենք կտեսնենք, որ այս բոլոր առարկաներից ամեն մեկը կապված է մի լավ գործի, մի լավ անվան, մի լավ հիշատակի հետ, որը մեռած չէ և երբեք էլ չի մեռնիլ, քանի մարդկությունը գոյություն կունենա: Ես այդպես եմ կարծում: Իսկ դուք, պարոն Շահյան, խնդրում եմ, դո՞ւք ինչ եք կարծում: Մի՞թե լավ գործը, անունը, լավ հիշատակը, հիրավի, չեն մնում, մեռնում են:

Շահյանը դարձյալ ուղղեց իր ակնոցը:

— Լավ գործը, լավ անունը, լավ հիշատակը... Իհարկե, դրանք, կարելի է ասել... մնում են, չեն մեռնում, բայց... միշտ չէ... մի որոշ ժամանակ... բայց... պետք է ասել, որ... էլի մեռնում են:

Եվան դարձյալ սպասեց, որ նա կշարունակի, բայց տեսնելով, որ էլ ոչինչ չի ասում, դարձյալ ինքը խոսեց:

— Շատ լավ: Ուրեմն դուք ուզում եք, որ ամեն բան հավիտյա՞ն մնա, երբե՞ք չմեռնի:

— Այո:

— Մարդն է՞լ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Մարդն էլ:

— Եվ ձեր կարծիքով, ամե՞ն, ամե՞ն բան մեռնում է:

— Ամեն բան:

Եվան ծիծաղեց և նայեց Աշխենին:

Աշխենը շարունակում էր հետաքրքրությամբ նայել Շահյանին: Շահյանը նրա տարօրինակ համառ հայացքից և շարունակ լուռ մնալուց ավելի էր շփոթվում, քան թե Եվայի անհանգիստ, արագ հարցուփորձերից:

— Ներողություն, պարոն Շահյան, — ասաց Եվան ժպտալով: — Ինձ թվում է, թե մենք շեղվեցինք մեր խոսակցության նյութից. մենք սկսեցինք խոսել ձանձրանալու մասին... չէ, դուք պետք է խոսեք այն մասին, թե ինչո՞ւ եք ձանձրանում կյանքից, և եկանք հասանք մինչև ամեն բանի մեռնելը... թե՞ չմեռնելը: Այդպես չէ՞:

Շահյանը ակամա ժպտաց:

— Այդպես է:

— Բայց վնաս չունի. դուք ավելի լուրջ բանի մասին սկսեցիք խոսել. այդ ավելի է հետաքրքրում ինձ: Շարունակենք: Չէ՛, սպասեցեք: Գիտե՞ք ձեր խոսքերն ինչ տպավորություն են գործում ինձ վրա: Ինձ թվում է, թե դուք ինչ-որ սարսափելի բաներ գիտեք, որ չեք ուզում ուղղակի ասել, երևի նրա համար, որ վախենում եք, թե ես կհիասթափվե՞մ: Հա՞:

Շահյանը դարձյալ ակամա ժպտաց:

— Այո, օրիորդ:

— Իզուր, բոլորովին իզուր: Դուք ինձ ճշմարտությունն ասացեք, և ես չափազանց շնորհակալ կլինեմ ձեզնից: Ի՞նչ անենք, թե հիասթափությունը ծանր կլինի: Ավելի լավ չէ՞ ճշմարտությունն իմանալ, քան թե սուտ երազներով ապրել: Իմ բնավորության՝ չգիտեմ ամենալա՞վ, թե՞ ամենավատ կողմն այն է, որ ես հավատում եմ անպայման, կուրորեն, եթե կեղծ ոչինչ չեմ գտնում, իսկ եթե տեսա, որ կեղծ է — պրծավ: Ուստի խնդրում եմ, ինչ որ ասելու եք, ասացեք պարզ, անկեղծ, ասացեք այնպես, ինչպես ձեզ կասեիք: Խնդրում եմ-ի՞նչ գիտեք:

Շահյանը կատարելապես կրակն էր ընկեր: Նա տեսնում էր, որ ինքը իսկապես ոչինչ չգիտե, ոչինչ չի կարող ասել: Այդ հարցասեր աղջիկն իր ջերմ հետաքրքրությամբ բոլորովին խճճում էր նրա դանդաղ միտքը: Նա լիովին զգում էր իր մտավոր բոլոր թուլությունը Եվայի՝ կայծակի պայծառ ցոլացումների պես թռչկոտող ճկուն մտքի առաջ, իսկ մյուս կողմից տեսնում էր Աշխենի համառ, ճնշող հայացքն իր ակնոցի վրա քարացած:

— Ոչ, օրիորդ, ավելի լավ է, ուրիշ բանի մասին խոսենք, — ասաց նա, վճռելով այս անգամ բոլորովին խույս տալ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ոչ, ոչ, ոչ: Աղաչում եմ, պարոն Շահյան: Համարեցեք, թե ես ձեր աշակերտուհին եմ և բան եմ ուզում սովորել ձեզնից: Ինչո՞ւ դուք ուշադրություն եք դարձնում այն հանգամանքի վրա, որ ամեն բան մեռնում է աշխարհիս երեսին, և ինչո՞ւ ուզում եք, որ ոչինչ չմեռնի:

— Մի՞թե դուք չեք ուզում:

— Ա՛խ, ինչպե՞ս չէ: Կյանքն այնքան սիրելի է... Որքան էլ տխրալի բան է մահը, որքան էլ ես վախենում եմ մեռնելուց, այնուամենայնիվ հաշտվում եմ, որովհետև տեսնում եմ, որ ուրիշ կերպ չի լինում, ուրիշ կերպ չի կարող լինել, և այդ պատճառով ավելի ևս սիրում եմ կյանքը: Բայց դուք այդպես չեք երևում, դուք հուսահատվում եք, ձանձրանում եք, չեք սիրում կյանքը, ինչո՞ւ, ինչո՞ւ, հարցնում եմ ձեզ:

— Հավատացնում եմ, օրիորդ, լավ կլինի, որ այս մասին չխոսենք, — ասաց Շահյանը, կարծես աղերսելով, որ նա խնայե իրեն:

Բայց Եվան իր պարզամտությամբ չհասկացավ նրա միտքը:

— է՛հ, — արտասանեց նա թեթև նեղացած: — Իմ տեղ դուք եք վախենում:

— Ես չեմ վախենում, օրիորդ, այլ ուզում եմ, որ... այսպիսի տխուր բաների մասին չխոսենք... Վերջապես ես մտադիր չեմ երկար խոսելու. և նոր բան էլ չպետք է ասեմ: Ես միայն այս եմ ասում, որ... կյանքն ինքնըստինքյան հուսահատեցուցիչ է (Շահյանն այդ բառն արտասանեց լեզվի ծիծաղեի խճճումներով, որից նա ավելի շփոթվեց), որովհետև... ընդհանուր բացարձակ ունայնության գիտակցությունը չափից դուրս արդեն ճնշում է մարդուս...

— Ընդհանուր բացարձակ գիտակցությունը, — մտառությամբ կրկնեց Եվան: — Ներողություն, ինչպե՞ս ասացիք:

— Ընդհանուր բացարձակ ունայնության գիտակցությունն, ասացի, չափից դուրս ճնշում է մարդուս:

— Ընդհանուր բացարձակ... ունայնության... գիտակցությունը... Սպասեցեք մտածեմ:

Եվ Եվան անթարթ նայելով Շահյանի ակնոցին, դարձյալ նույն մտառությամբ կրկնեց հատ-հատ այդ բառերը, որի ժամանակ նա գլուխը ետ ու առաջ էր շարժում:

— Այսինքն դուք ուզում եք ասել, որ մարդ գիտե, որ ամեն բան ունայն է, և ճնշվո՞ւմ է այդ գիտակցությունից:

— Այո:

— Շատ լավ: Հետո՞:

— Հետո ի՞նչ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ուրիշ ոչի՞նչ:

— Ուրիշ ոչինչ:

Եվան նորից տարակուսանքով վեր քաշեց ուսերը և սառեց.

— Ես ծուծն եմ ուզում, դուք միայն ընդհանուր բառերն եք ասում: Լավ, այլևս չխոսենք այս մասին, ես չեմ ուզում ձեզ ստիպել:

Եվ Եվան վեր կացավ, կանչեց աղախնուն և պատվիրեց, որ թեյ բերի:

Նրա այդպես հանկարծ սառչելը սպանիչ ազդեցություն ունեցավ Շահյանի վրա: Երբեք այնպես ողորմելի, այնպես մտավախ չէր թվացել ինքն իր աչքում, ինչպես այդ րոպեին:

Կարճ ժամանակ տիրեց նրա համար վերին աստիճանի ծանր լռություն:

— Ներողություն, պարոն Շահյան, — լսվեց Աշխենի սովորական հանգիստ ձայնը. — ուզում եմ ձեզ մի բան հարցնել:

Շահյանն իր պլպլան ակնոցի միջից նայեց նրան և դողաց:

— Հրամայեցեք, — ասաց նա թուքը ցամաքած:

Աշխենն իսկույն չսկսեց իր ասելիքը:

Նա խոնարհվեց գրասեղանի վրա և մատներով սկսեց խաղալ առջևը դրած գրքի թերթերի հետ:

Շահյանն սպասում էր: Այդ օտարոտի հանգիստ աղջկա խոսելու հանդիսավոր եղանակն ուղղակի սարսափեցնում էր նրա վախկոտ միտքը:

Եվան կանգնել էր հեռու և մեծ հետաքրքրությամբ սպասում էր նույնպես, թե ինչ է ասելու հորեղբոր աղջիկը:

— Ասացեք խնդրեմ, — վերջապես սկսեց Աշխենը և կանգ առավ: — Ներողություն, — միջանկյալ ասաց նա, — որ ես ուզում եմ դառնալ ձեր շոշափած հարցին, հենց թեկուզ միայն նրա համար, որ մի որոշ եզրակացության բերենք Եվային: — Նա բարձրացրեց գլուխը, նայեց Եվային, ժպտաց և, նորից հանգիստ կերպարանք ընդունելով, շարունակեց խաղալ գրքի թերթերի հետ, — Ասացեք խնդրեմ, պարոն Շահյան, ընդհանուր բացարձակ ունայնության գիտակցության տակ — ինչպես դուք ասացիք — չճնշվելու դեմ մի՞թե դուք միջոց չգիտեք:

— Միջո՞ց: — Այո:

— Ո՞րն է այդ միջոցը:

— Այդ միջո՞ցը: Ես կարծում եմ ա՛յն պիտի լինի, որ կոչվում է ձգտում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Զգտո՞ւմ,

— Այո՛, ձգտում:

— Ինչ՞ ձգտում: Զգտումներ շատ կան:

— Այդ միևնույն է: Հենց թեկուզ, օրինակի համար, այնպիսի մի ձգտում, որի իրագործումը կարող էր երջանկության բերել ոչ թե լոկ ձեզ, այլև ուրիշի համար, որքան կարելի է՝ շատերի, օրինակ՝ այն հասարակության կամ ազգի համար, որին պատկանում եք դուք... Մի՞թե դուք այդպիսի ձգտում չունիք:

Շահյանի ձեռքերը դարձյալ բարձրացան դեպի ակնոցը:

— Մի՞թե այդպիսի ձգտումը կամ առհասարակ որևէ ձգտում կարող է դեղ լինել ունայնության դեմ... այսինքն ուզում էի ասել — ունայնության գիտակցության ճնշման դեմ, — ասաց նա և ինքն էլ չհասկացավ, թե ինչու ժպտաց:

Աշխենը նայեց նրան:

— Ես կարծում եմ, որ կարող է, — պատասխանեց նա և նույնպես ժպտաց. բայց նա հասկացավ, թե ինչու ժպտաց:

Շահյանն էլ հասկացավ նրա ժպիտի իմաստը և զգաց, որ տաք արյունը հանկարծ սկսեց այրել իր դեմքը: Այնուամենայնիվ հարցրեց այս անգամ մեքենայաբար.

— Ինչպե՞ս:

Աշխենը դիրքը ետ քաշեց առաջից:

— Շատ հասարակ կերպով: Զգտումներ ունեցող մարդը ժամանակ չի ունենում ունայն բաների մասին մտածելու, հետևաբար նրա մեջ ունայնության գիտակցության ճնշում էլ չի լինում. Եթե չեմ սխալվում, այդպես է:
Եվ Աշխենը նորից ժպտաց: Որքան մեղմ, նուրբ էր նրա ժպիտը, այնքան ավելի սպանիչ էր Շահյանի համար:

Շահյանը, մահվան ցնցումների մեջ եղած մարդու նման, հավաքեց իրեն և վերջին ճիգը թափեց, որ պահպանի իրեն կատարյալ անկումից:

— Բայց... ունայնության մեջ... ի՞նչ ձգտում... և ինչի՞ է պետք այդ, — թոթովեց նա:

Աշխենն այլևս չէր դադարում ժպտալուց: Նա կարծես երեխայի հետ էր խոսում:

— Իսկ ես ձեզ կասեմ, պարոն Շահյան, թե ձգտումների մեջ ի՞նչ ունայնություն և ինչի՞ է պետք այդ մասին մտածելը...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Ամեն ինչ կատարյալ էր: Վարագույրի վերջին ծալքն էլ բացվեց, և Շահյանը նվաստացած տեսնում էր, որ ուրիշի աչքերից այնքան խնամքով ծածկած իր ներքին ոչնչությունը դրված է բեմի վրա այդ երկու օրիորդների առաջ, որոնցից մեկը նայում է և ժպտում, մյուսը նայում և ապշում:

Նա այլևս ապարդյուն համարեց այդ նյութի մասին խոսելը կամ, ավելի ճիշտն ասած, նրան այլևս չխոսեցրին այդ մասին: Զգաց, որ իրեն հասկանում են և խղճում:

Աղախինը ներս բերեց թեյը: Շահյանը մեքենայաբար վերցրեց իր բաժակը, թեև մի ումպ խմելու էլ ախորժակ չէր զգում:

Աշխենը վարպետությամբ փոխեց խոսակցության նյութը և, զարմանալի է, այս անգամ խոսողը գրեթե նա էր միայն: Մեղմ ժպիտն ամենևին չէր հեռանում նրա խաղաղ դեմքից. նա կարծես նստած էր երեխաների մեջ և մանկական զվարթ հեքիաթ էր պատմում նրանց զբաղեցնելու համար: Բայց այդ հեքիաթի զվարթությունը գուցե ինքն էր միայն, որ զգում էր:

Եվան նորից նստել էր նրա մոտ և այլևս ոչ մի աշխույժ չէր ցույց տալիս: Նրա այնքան շարժուն դեմքը սառել, բայց ավելի շնորհալի գեղեցկություն էր ստացել: Նա գրեթե չէր խոսում այլևս, այլ միայն խոշոր, լուրջ աչքերով նայում էր Շահյանի ակնոցին համառորեն, կարծես մտածում էր զարմանքով, թե ինչո՞ւ է այդ ակնոցը դրված նրա աչքերին:

Շահյանն իր ուղտի տաժանելի համբերությամբ հաշվում էր րոպեները և սպասում էր, թե ե՞րբ պիտի հասնի այն հարմար րոպեն, երբ ինքը կարող կլինի վեր կենալ և հեռանալ այդ անտանելի պատժարանից:

Եվ հասավ, վերջապես, այդ րոպեն, և փախավ նա:

Դա տղամարդու բարոյական ոչնչության մի փախուստ էր կնոջ, հետևաբար ավելի զորեղ, բարոյական ուժի հալածանքից:

10

Մի կատարյալ դժոխք էր, որ այդ երեկո Շահյանը տարավ իր մեջ Եվայի և Աշխենի մոտից: Այդ չարաբաստիկ երեկոն դրոշմվել էր նրա ուղեղի մեջ իբրև մի անտանելի ծանր հիշատակ, որ շուտ չի մոռացվում: Նրա ինքնասիրությունը չափից դուրս նեղ էր և զգայուն. նա չափից դուրս ներքին, փակ կյանքով էր ապրում, որպեսզի այդ երեկոյի հիշատակը երկար ժամանակ սպանիչ ազդեցության չունենար նրա վրա: Ամեն րոպե, ամեն վայրկյան զգում էր, թե դեռևս նստած է Աշխենի սենյակում, տեսնում է Աշխենին ու Եվային այն դրությամբ, ինչպես որ դրանք ներկայանում էին նրան այդ երեկո — մեկին՝ մեղմ, խորհրդավոր կերպով ժպտալիս, մյուսին՝ հիասթափության ապշությամբ իրեն դիտելիս: Տեսնում էր և իրեն՝ դասը չիմացող աշակերտի պես ողորմելի դրության մեջ կուչ եկած, լեզուն հազիվ շարժելիս, անդադար կարմրելիս: Ի՜նչ խայտառակ դրություն...

Դա մահ էր, բարոյական մահ՝ թելադրված այն գիտակցությունից, որ իր հոգեկան ու մտավոր սնանկությունը հրապարակ էր հանվել իբրև ծաղրի, հիասթափության ու խղճահարության առարկա: Եվ հրապարակ հանողներն ովքե՞ր էին. — երկու աղջի՜կ... իսկ իր անունը

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

երիտասա՛րդ էր, տղամա՛րդ... Բարոյական մի թեթև հարվածով այդ երկու աղջիկը տեղից շարժել էին անշարժության մեջ փտած երիտասարդին, ցնցել էին նրա թմրած ուղեղը և միմիայն այն պատճառով, որ իրենք կին էին և իրենց կին տեղովը նրան կյանքի նպատակն էին ցույց տալիս — տակնուվրա էին արել նրա ամբողջ էությունը:

Ամոթը սպանում էր Շահյանին: Սեփական ապիկարության գիտակցությունը շիկացած երկաթի պես շանթում էր նրա ուղեղը:

Թերևս այդ փտած երիտասարդի մեջ ևս խոկում էր տղամարդու անձնապաստանությունը, — դարերից ի վեր որոշ հանգամանքների շնորհիվ տղամարդու մեջ զարգացած այն մեծամտությունը, թե կինը կարող չի իր հասկացողությամբ, ոգով ու գաղափարներով բարձր լինել տղամարդուց:

Իր հոգու ամբողջ կարողությամբ Շահյանն սկսեց ատել իրեն: Նրա նեղ ինքնասիրությունն իր ողորմելի անզորության մեջ դարձավ իր հակառակ ծայրին — փոխվեց ինքնատյացության:

Սակայն նրա ատելությունն իրենով միայն չսահմանափակվեց. նա սկսեց միաժամանակ ատել ամենքին և ամեն ինչ, և ամենից ավելի նրանց, որոնք իր պես մի անհյութ ու անալի արարած էին լույս աշխարհ բերել, կարծես, նրա համար միայն, որ մարդիկ խղճահարության մի առարկա ունենային:

Այժմ նա արդեն կատարյալ պատիժ դարձավ իր ծնողների գլխին. բառիս բուն նշանակությամբ նա լացացնում էր հորն ու մորը, և, կարծես, մխիթարվում էր նրանց արտասուքով: Շատ անգամ չէր ուզում տեսնել նրանց երեսը և սպառնում էր կատաղած, որ եթե նրանք այս կամ այն կերպ կանհանգստացնեն իրեն, կգնա ջուրը կընկնի կխեղդվի, ատրճանակ կպարպի իր ճակատին, թույն կխմի, մի խոսքով, վերջ կտա իր ատելի և անտանելի կյանքին, որպեսզի, վերջապես, ազատվի նրանց և աշխարհի ձեռքից:

Շահյանը գլխից իսպառ հանեց Մարությանների հետ իր բարեկամությունը շարունակելու միտքը: Այդ ընտանիքը, որի մասին հրճվանքով էր մտածում իր նոր ծանոթացած ժամանակ, այժմ միանգամից կորցրեց նրա աչքում իր բոլոր գրավչությունը: Այժմ ոչ միայն չէր ցանկանում Մարությաններին այցելել, ոչ միայն չէր ձգտում թափառել նրանց տան մոտակա փողոցներում՝ նրանց գեթ հեռվից տեսնելու տենչով լցված, այլև, եթե հնար լիներ, իսպառ կջնջեր այդ ընտանիքն իր հիշողությունից և նորից կդառնար իր նախկին կյանքին, ուր թեև մխիթարական և ցանկալի ոչինչ չկար, բայց և չկար գոնե սեփական ոչնչության գիտակցության և անձնաքննության ծանր ճնշում:

Շահյանի մեջ վառվող ինքնատյացության զգացումը, կամաց-կամաց բթանալով, փոխվեց խոր մելամաղձության: Այդ այն զարհուրելի մելամաղձությունն էր, որի ժամանակ մարդու հոգին կաշկանդվում է, միտքը թմրում, զգացմունքները բթանում, աշխարհը մութն է թվում, կյանքն՝ անտանելի, մահը՝ ցանկալի:

Շահյանի համար նոր չէր հոգեկան այդ դրությունը. համարյա պատանեկան հասակից նա շատ հաճախ ենթարկվում էր այդ դրության, որը մի տեսակ հոգեկան պարբերական հիվանդություն էր դարձել նրա համար և միշտ երևան էր գալիս այն ժամանակ, երբ կյանքի մի որևէ նոր երևույթ, նոր ծանոթություն առիթ էր տալիս նրան անձնաքննության: Երբեմն

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ամբողջ օրեր շարունակ այդ դրության մեջ էր լինում, այնպես որ սարսափում էր, թե միգուցե խելագարվի: Իսկ նա ոչ մի բանից այնքան չէր սարսափում, որքան խելագարությունից:

Աշխարհից հեռացած ճգնավորի պես Շահյանը փակվեց իր սենյակի չորս պատերի մեջ, փակվեց այնպես, որ, կարծես, մտադիր չէր այլևս դուրս գալ այնտեղից: Անձնատուր եղած ծանր և ճնշող մտածմունքների, գրեթե ամբողջ օրը նստած էր մնում լուսամուտի առաջ և ապակու միջից մռայլ հայացքով նայում էր դուրս: Եվ դուրսը ուրախ առիթ ոչինչ չէր գտնում:

Դաժան ձմռան գուժաբեր աշունն օր-օրի վրա խստանում էր: Արևը, զրկված իր կենարար ջերմությունից, չէր համարձակվում դուրս նայել պղտոր ամպերի ետևից, որոնց ցուրտ քամին, պատառ-պատառ անելով, ցան ու ցիր էր անում, սակայն երբեք թույլ չտալով, որ նրանք բաց անեն երկնքի կապուտակը: Երբեմն քամին տեղի էր տալիս հանդարտ եղանակի. բայց այդ հանդարտ եղանակն ավելի ևս մռայլ էր լինում, արճճագույն մառախուղը թանձր գոլորշու նման վաղ առավոտից ծանրությամբ իջնում էր ներքև, ծածկում էր ամբողջ տարածությունն երկնքի և երկրի միջև, շարժվում էր անախորժ սառնությամբ և իր թանձր խոնավությունից փոշենման անձրև էր կտրվում տեղն ու տեղը: Բնությունն էլ, կարծես անիծելով իր կյանքը, ողբում էր իր գոյությունը, ինչպես իր անմիտ գոյությունը ողբում էր Շահյանը: Շահյանին թվում էր, թե մի չար ձեռքով իր հետ ստեղծված բնությունն էլ տանջվում է իր ոչնչության գիտակցությունից և երջանիկ կլիներ, եթե զրկվեր իր մեջ ապրող և իրեն ապրեցնող կենսական ուժից և սառեր, անհետ կորչեր տիեզերքի և ժամանակի անվերջ տարածության մեջ: Շահյանը հիշեց իր սիրած հոռետես փիլիսոփաներին, որոնց առժամանակ մի կողմն էր դրել և կարդում էր գլխավորապես այն ժամանակ, երբ իր անշարժ, միակերպ կյանքն արդեն չափից դուրս տաղտկալի էր թվում նրան: Իր դատարկ հոգու մխիթարությունը դրանց գրվածքների մեջն էր գտնում: Համաշխարհային թշվառության և բացարձակ բացասության այդ ողբերգակներն իսկ և իսկ նրա սրտիցն էին ջուր խմում, և նա ագահությամբ լափում էր դրանց մռայլ ուղեղի մռայլ արտադրությունները, չնայելով, որ դրանք շատ տեղ այնքան խորիմաստ էին, որ նրա սահմանափակ և դժվարաշարժ ուղեղը միայն անորոշ ու մութ հասկացողություններ էր դուրս բերում:

Մի գիշեր, երբ, անկողնում պառկած, կարդում էր Շոպենհաուերի վարդապետությունը բացատրող ռուսերեն մի գրվածք, հանկարծ խելքին փչեց, որ թարգմանի այդ գրվածքը: Այդ միտքը կամաց-կամաց այնպես պաշարեց նրան, որ վերջ ի վերջո վեր կացավ անկողնից, լամպը տեղափոխեց գրասեղանի վրա և նստեց, որ գործն սկսի: Այդ գիշեր մեծ տանջանքով և անդադար բառարանների նայելով թարգմանեց մոտ երկու երես, մինչև որ նրա սաստիկ լարված միտքը բթացավ և աչքերի կոպերը ծանրացան: Ժամը երեքն էր, որ ճրագը հանգցրեց և պառկեց քնելու իր կատարած գործից գոհ մարդու խաղաղ երջանկությամբ: Առավոտյան սովորականից վաղ վեր կացավ և թարգմանությունը շարունակեց:

Գրվածքը վերաբերում էր մահվան և անմահության փիլիսոփայական բացատրության: Շահյանը կարծում էր, որ իր գործն առաջ է գնում անսպասելի հաջող կերպով, գոնե մի առանձին դժվարություն չէր կրում այն տեղերում, ուր հեղինակն առաջ էր բերում խնդրի էմպիրիկական տեսակետը, որովհետև այդ տեղերում շոպենհաուերյան փիլիսոփայությունը հիմնվում էր ամեն մարդու հասկանալի բնական առօրյա երևույթների վրա. իսկ այն տեղերում, ուր խնդիրը քննվում էր մետաֆիզիկայի, հոգեփոխության, զանազան կրոնների և այլ դժվարամարս տեսակետներից, Շահյանը պարզապես բան չէր հասկանում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Այսպես, թե այնպես, Շահյանն այժմ հոգու կայտառություն էր զգում: Առաջին անգամն էր, որ ճաշակում էր սեփական աշխատանքի քաղցրությունը: Իր անընդունակության գիտակցությունն այլևս չէր հալածում նրան. նա տեսնում էր, որ կարող է գործ կատարել և կատարում էր, և զարմանում էր, թե ինչպես կարողացել էր մինչև այժմ սպանել իր ժամանակը պարապ:

Նա այժմ դուրս էր գնում փողոց բաց ճակատով, անցնում էր մարդկանց առաջով հպարտորեն, անցնում էր առանց շտապելու, որովհետև այժմ ամենևին երկյուղ չուներ, թե մարդիկ նրա դանդաղ քայլերից կարող էին եզրակացնել, թե պարապ է. ինքը համոզված էր, որ գործ է կատարում, իսկ թե մարդիկ ի՛նչ կկարծեին, — այդ նրա հոգը չէր այժմ: Նա միայն մի բանի մասին էր հոգում, այն է՝ որքան կարելի է շուտ վերջացնել թարգմանությունը և տպագրության տալ: Գրականության մեջ անուն վաստակելու անմեղ փառասիրությունը պաշարել էր նրա բոլոր ուշքն ու միտքը և սկսնակ գրողներին հատուկ անհամբերություն էր ներշնչել նրան:

Նրա աչքն այժմ նորից քաղցրացել էր հոր և մոր վրա, որոնք, այդ բանից ուրախանալով հանդերձ, զարմացել էին, թե ամբողջ օրն իր սենյակում նստած՝ ի՞նչ է գրում նա: Մի անգամ հայրն այդ մասին հարցրեց նրան, և Շահյանը սկսեց բացատրել նրան Շոպենհաուերի վարդապետությունը, իհարկե, այնպես, ինչպես ինքն էր հասկացել թեև շատ բան չէր հասկացել: Հայրը լսեց նրան, լսեց և գրեթե ոչինչ չհասկացավ:

Մի երեկո, համարյա ամբողջ օրը թարգմանության վրա տանջվելուց հետո, Շահյանը դուրս գնաց փոքր-ինչ թարմանալու: Նա խիստ գոհ էր իրենից, իր կատարած գործից, ուստի հանգիստ խղճով կարող էր զբոսնել, ինչքան քեֆը տար: Եղանակը ցուրտ էր և չոր: Քայլերը դանդաղ շարժելով, մտքումը կրկնում էր թարգմանության իր հավանած այս ու այն պարբերությունը, այս ու այն պարադոքսը, երբ հանկարծ լսեց, որ մեկը կանչում է իրեն: Նա ետ նայեց և տեսավ, որ մեկը արագ քայլերով մոտենում է իրեն:

Դա մոտ երեսուն տարեկան ցածրահասակ, փոքր-ինչ գեր երիտասարդ էր շատ թուխ դեմքով և նկատելի մեծ քթով. հագուստը նոր էր, բայց խիստ անճաշակ, սև կաստորի գլխարկն էր միայն, որ խունացած և սաստիկ ճխլտված էր, իսկ կրկնակոշիկները վաղուց արդեն կորցրել էին իրենց փայլը և ցեխի գույն էին ստացել:

Շահյանն այն ժամանակ միայն ճանաչեց նրան, երբ նա ժպտալով մոտեցավ:

— Մինասյա՞ն... — Մեծ մարդ ես դառել, չես լսում, — ասաց Մինասյանը, սեղմելով նրա ձեռքը, և նրա թևից բռնած՝ առաջ անցավ: — Քանի անգամ կանչեցի լուսամուտից, չիմացար:

— Ի՞նչ լուսամուտից, ո՞րտեղից, — զարմացավ Շահյանը:

— Ա՛յ, այնտեղ հյուրանոցումն եմ իջած:

— Ես ի՞նչ գիտեի, թե դու այստեղ ես:

— Այսօր առավոտյան եմ եկել: Ուզում էի գամ քեզ մոտ — չկարողացա. խիստ խառնված եմ: Ուսումնարանի գործն էլ գլուխ բերի, վերջապես եկել եմ մի վարժուհի տանեմ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ուսումնարա՞ն ես բաց արել գյուղում:

— Վա՛հ, բաս նոր ես իմանո՞ւմ: Չորս տարի է աշխատում եմ դրա համար: Բայց ասա տեսնենք՝ ո՞նց ես. ի՞նչ ես անում, ի՞նչ չես անում:

— Ոչինչ. օրերս սպանում եմ առաջվա պես:

— Այդ լավ է: Իսկ ինձ օրերն են սպանում: Եվ ի՞նչ շուտ են թռչում այս անիծված օրերը: Երևակայիր. հոկտեմբերն արդեն վերջանում է, և ես դեռ նոր պիտի վազվզեմ վարժուհու ետևից: Ասենք, բան չկա, ուշ լինի ու նուշ լինի: Չէ՞: Գիտե՞ս, հոգիս դուրս եկավ, մինչև որ մեր պնդագլուխ գյուղացիներին հասկացրի ուսումնարանի օգուտը և կարողացա մի քանի կոպեկ կորզել մեր հարուստներից: Այս էլ ասեմ, որ գործին քիչ արգելք չէին լինում բնական պատահարները, անցյալ երկու տարիները մորեխն իրար վրա ահագին վնասներ տվեց մեր կողմերում, իսկ այս տարվա կարկուտը շատ բերք փչացրեց: Գյուղացու դրությունը, հիրավի, շատ վատ է: Բայց ե՞րբ է մեր գյուղացու դրությունը լավ եղել: Եթե գյուղացու տնտեսական դրությանը նայելու լինենք, առմիշտ պիտի թողնենք նրա կրթության մասին մտածելը:

Մինասյանը երկար և տաք-տաք խոսում էր այդ մասին, այն միտքը պաշտպանելով, թե կրթությունն առհասարակ եթե միակ միջոցը չէ գյուղացու տնտեսական դրության բարվոքման համար, գոնե գլխավոր միջոցներից գլխավորագույնն է:

Շահյանն ամենևին գաղափար չուներ ոչ գյուղացու և ոչ նրա տնտեսական կամ այլ դրության մասին և ամենևին չէր էլ հետաքրքրվում այդպիսի խնդիրներով, ուստի Մինասյանին կատարյալ ազատություն էր տվել իր ուզածին չափ խոսելու և դատելու. իսկ ինքը Շոպենհաուերի փիլիսոփայության թարմ տպավորության տակ մտածում էր, թե ի՞նչ նպատակ կար, որ այդ երիտասարդն այդպես եռանդով խոսում և կաշուց դուրս էր գալիս գյուղացու համար: Ընդունենք, թե այդպիսի Մինասյաններ գյուղերում ուսումնարաններ էլ բաց արին, գյուղացու տնտեսական դրությանն էլ բարելավեցին, — դրանով վերացա՞վ մարդկության թշվառությունը, ա՛յն թշվառությունը, որին դատապարտված է նա ծնվելու օրից և հավիտյանս հավիտենից...

— Վա՛հ, բաս նոր ես իմանո՞ւմ: Չորս տարի է աշխատում եմ դրա համար: Բայց ասա տեսնենք՝ ո՞նց ես. ի՞նչ ես անում, ի՞նչ չես անում:

— Ոչինչ. օրերս սպանում եմ առաջվա պես:

— Այդ լավ է: Իսկ ինձ օրերն են սպանում: Եվ ի՞նչ շուտ են թռչում այս անիծված օրերը: Երևակայիր. հոկտեմբերն արդեն վերջանում է, և ես դեռ նոր պիտի վազվզեմ վարժուհու ետևից: Ասենք, բան չկա, ուշ լինի ու նուշ լինի: Չէ՞: Գիտե՞ս, հոգիս դուրս եկավ, մինչև որ մեր պնդագլուխ գյուղացիներին հասկացրի ուսումնարանի օգուտը և կարողացա մի քանի կոպեկ կորզել մեր հարուստներից: Այս էլ ասեմ, որ գործին քիչ արգելք չէին լինում բնական պատահարները, անցյալ երկու տարիները մորեխն իրար վրա ահագին վնասներ տվեց մեր կողմերում, իսկ այս տարվա կարկուտը շատ բերք փչացրեց: Գյուղացու դրությունը, հիրավի, շատ վատ է: Բայց ե՞րբ է մեր գյուղացու դրությունը լավ եղել: Եթե գյուղացու տնտեսական դրությանը նայելու լինենք, առմիշտ պիտի թողնենք նրա կրթության մասին մտածելը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մինասյանը երկար և տաք-տաք խոսում էր այդ մասին, այն միտքը պաշտպանելով, թե կրթությունն առհասարակ եթե միակ միջոցը չէ գյուղացու տնտեսական դրության բարվոքման համար, գոնե գլխավոր միջոցներից գլխավորագույնն է:

Շահյանն ամենևին գաղափար չուներ ոչ գյուղացու և ոչ նրա տնտեսական կամ այլ դրության մասին և ամենևին չէր էլ հետաքրքրվում այդպիսի խնդիրներով, ուստի Մինասյանին կատարյալ ազատություն էր տվել իր ուզածին չափ խոսելու և դատելու. իսկ ինքը Շոպենհաուերի փիլիսոփայության թարմ տպավորության տակ մտածում էր, թե ի՞նչ նպատակ կար, որ այդ երիտասարդն այդպես եռանդով խոսում և կաշուց դուրս էր գալիս գյուղացու համար: Ընդունենք, թե այդպիսի Մինասյաններ գյուղերում ուսումնարաններ էլ բաց արին, գյուղացու տնտեսական դրությանն էլ բարելավեցին, — դրանով վերացա՞վ մարդկության թշվառությունը, ա՛յն թշվառությունը, որին դատապարտված է նա ծնվելու օրից և հավիտյանս հավիտենից...

Մինասյանը բաժանվեց Շահյանից, ասելով, որ գնում է իր ծանոթ մի վարժուհու մոտ՝ նրանից իր բաց արած ուսումնարանի համար վարժուհու տեղ հարցնելու: Շահյանը խնդրեց, որ նա անցնի իր կողմը և մինչև անգամ առաջարկեց, որ հյուրանոցից տեղափոխվի իրենց տուն:

— Այդ մեկը լավ ասացիր, — ասաց Մինասյանն առանց նազ ու տուզ ծախելու: — Փողի քյասատություն է, իսկ այդ սնիծված հյուրանոցներում փառավորապես կողոպտում են: Եթե այս գիշեր ուշանամ, վաղը կգամ քեզ մոտ: Գործերս որ շուտ վերջացնեմ, մի քանի օրից հետո կգնամ: Առայժմ ցտեսություն և շնորհակալություն առաջարկությանդ համար:

11

Մի ընդարձակ բակի մեջ չորս կարգ, քառանկյունի ձևով, շարված էին վարձու տրված երկհարկ բնակարաններ, որոնց լուսամուտների մեծ մասն արդեն լուսավորված էր, երբ Մինասյանը ներս մտավ բակի դռնից: Նրա քայլերի ձայնի վրա վերին հարկի պատշգամբից մի փոքրիկ շուն հաչեց: Այդ շան հաչոցին ձայնակցեց մի ուրիշ շուն՝ բակի հայտնի չէ, որ անկյունից: Մինասյանը մոտեցավ ներքին հարկի սենյակներից մեկի դռան և ծեծեց:

Դուռը բացվեց, և շեմքում երևաց մի պառավ կին կարճահասակ, գեր մարմնով:

— Ո՞վ է, — հարցրեց նա:

— Ես եմ, մայրիկ, չե՞ս ճանաչում:

— Մինասյա՞ն... այդ դո՞ւ ես, — ճանաչեց պառավը, նրա դեմքը լավ տնտղելուց հետո:

— Հենց ես եմ, որ կամ:

Պառավն ուրախացած ներս հրավիրեց նրան:

— Այս ինչպե՞ս եղավ, որ հանկարծ լույս ընկար: Քանի՞ տարի է, որ չես եկել մեզ մոտ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Չեմ հիշում, մայրիկ: Կարծեմ չորս տարի: Եվ չեմ եկել, որովհետև այստեղ չեմ եղել, իսկ այժմ եկել եմ, որովհետև այստեղ եմ: Լավ է, որ դարձյալ այս տանն եք ապրում, թե չէ վախենում էի, որ դուռն անծանոթ մարդ բաց անի:

— Է՛հ, որդի, այնքան երկար ապրել ենք այս տանը, որ կարծում ենք մեր սեփական տունն է:

— Բարև ձեզ, երեխայք, — կանչեց Մինասյանը, դառնալով տասը-տասնմեկ տարեկան մի տղայի և մի աղջկա, որոնք դաս էին պատրաստում նստած թեյի սեղանի մոտ, որի վրա քլքլթում էր մի փոքրիկ մաքուր սամովար, պլպլալով առաստաղից կախված լամպի պայծառ լույսի տակ: — Պո՛, ինչքան մեծացել եք: Աչքով չտամ:

Երեխաները, որոնք արդեն ոտի էին կանգնել, ամոթխածությամբ ժպտացին:

Մինասյանը մատով խփեց նրանց կզակին և նորից դարձավ պառավին.

— Ուրի՞շ, մայրիկ. ինչպե՞ս եք, ինչպե՞ս չեք: Օրիորդը տա՞նն է:

— Տանն է, տանը, — լսեց Մինասյանը մի ուրախ ձայն և, շուռ գալով, հարևան սենյակի դռան շեմքի վրա տեսավ օր. Սահակյանին, որը սաստիկ հարուստ կրծքով, ճաշակով հագնված, առողջ, գեր, ոչ-գեղեցիկ և տարիքն արդեն անցրած մի աղջիկ էր — պառավի աղջիկը:

Մինասյանն արագ մոտեցավ նրան:

Օր. Սահակյանն իր ուժեղ բազկով թափահարեց նրա ձեռքը:

— Ոչ թե չորս, այլ հինգ տարին լրանում է, որ դուք այլևս լայեղ չեք անում մեր հին բարեկամությունը մտաբերելու, — ասաց նա:

— Լայեղ բառը չի սազում գյուղացուն, — նկատեց Մինասյանը: — Ուրիշ բան ասացեք:

— Ես ձեզ բան ունեմ ասելու: Նախ եկեք այստեղ: Մայրիկ, թեյ պատրաստիր:

Մինասյանը գլխարկն ու վերարկուն ձգեց աթոռի վրա և օր. Սահակյանի ետևից ներս մտավ հարևան սենյակը:

Այնտեղ կլոր սեղանի մոտ, գահավորակի վրա, նստած էր Աշխենը, որ իր խաղաղ հայացքով հետաքրքրությամբ նայեց իրեն անծանոթ հյուրին:

— Աշխեն ջան, խնդրեմ, ծանոթացիր: Սա այն Մինասյանն է, որի ժողովրդական բանահյուսությունների ժողովածուն անցյալ օրը կարդում էինք միասին: Հա՛, լավ միտս եկավ, պարոն Մինասյան. ինչո՞ւ ձեր վերջին հրատարակությունից մի գիրք չուղարկեցիք ինձ:

— Չեմ ուղարկել, որովհետև ինձ միայն մի օրինակ է ուղարկվել գյուղը, իսկ մնացածը բաժանված է այստեղ գրավաճառողներին: Հենց վաղն ևեթ մի օրինակ կվերցնեմ և կբերեմ ձեզ համար:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ա՛յ, չլինի՞ թե դրա համար եք եկել Թիֆլիս:

— Ոչ, դրա համար չեմ եկել, բայց ինչի համար որ եկել եմ, էլի ձեզ հետ կապ ունի:

— Հա-ա՞: Ախր գիտեի, է, որ ուրիշ կերպ չէիք հիշիլ ինձ: Դեհ, նստեցեք տեսնենք, այդ ի՞նչ բանի համար եք եկել, որ կապ ունի ինձ հետ:

Մինասյանն առավ օր. Սահակյանի առաջարկած աթոռը և նստեց սեղանի մոտ: Օր. Սահակյանը մի ուրիշ աթոռ առավ և նստեց նրա մոտ:

— Ես եկել եմ, օրիորդ, ահա թե ինչ բանի համար: Չգիտեմ ձեզ հայտնի է, թե ոչ, մի քանի տարի է, աշխատում եմ մեր գյուղում ուսումնարան բանալ:

— Այս հինգ տարում ձեր երեսը տեսել ե՞մ, որ իմանայի, թե ինչ եք անում այնտեղ: Հետո՞:

— Հազար ու մի դժվարություններ հաղթելուց հետո այս տարի գործը, վերջապես, գլուխ բերի: Ուսումնարանը լինելու է երկսեռ:

— Հիանալի: Այդ պատիվ է բերում ձեր եռանդին: Հետո՞:

— Հիմա եկել եմ խնդրելու ձեզ, որ ինձ համար մի լավ վարժուհի ճարեք:

— Ոչ, պարոն, ես ձեզ խորհուրդ կտամ, որ վերադառնաք գյուղ և մի քիչ էլ քնեք: Լավ վարժուհիները բողկ չեն, որ հոկտեմբերի վերջին էլ կարելի լինի քաղել: Ո՛ւֆ, այս հայկական դանդաղկոտությունը... Ի՞նչ էիք շինում մինչև հիմա, որ նոր եք հակալ-հակալ ընկեք վարժուհու համար:

— Այ ինչ էի շինում, օրիորդ: Բոլոր հանգամանքները, որ իմանաք, կտեսնեք, որ ավելի վաղ չէի կարող գալ ձեզ նեղություն պատճառելու: Ամենից առաջ պետք է ասեմ...

— Ի՞նչ, դուք ուզում եք ինձ երկար պատմությո՞ւն անել: Ազատեցեք ինձ այդ բանից, ի սեր աստծո: Ես երկար պատմություններ չեմ սիրում լսել: Հաշտվենք դրության հետ և, որքան էլ ուշ լինի, կաշխատենք մի բան անել, իհարկե: Առայժմ գիտե՞ք՝ ինչ եմ ուզում ասել: Դուք գիտեք, որ ես կեղծել և, մանավանդ, կեղծավորել չգիտեմ: Մեր երկարամյա բարեկամության միջոցին դառն ճշմարտություններ շատ եմ ասել ձեր երեսին, բայց քաղցր ճշմարտություններն էլ իրավունք չունեմ ծածկելու: Ես ուզում եմ ասել, որ ձեր եռանդն ինձ ուղղակի հիացնում է: Մեր ներկա երիտասարդների մասին ես չափից դուրս աննպաստ գաղափար ունիմ, որպեսզի ձեր եռանդն ինձ հրճվանք չպատճառի: Հենց նոր էր, որ օրիորդի հետ (օր. Սահակյանը մատնանիշ արավ Աշխենի վրա) խոսում էինք մեր երիտասարդների մասին: Օրիորդը պատմում էր իր նոր ծանոթ մի երիտասարդի մասին, որը գործելու տեղ զբաղված է աշխարհի և մարդու ստեղծագործության խորհուրդը քննելով և այն եզրակացության է եկել, թե որովհետև աշխարհս ունայն է և ամեն բանի վախճանը — ոչնչություն, ուստի ոչ եռանդն է բանի պետք, ոչ ձգտումը, ոչ գործը, ոչ իդեալը — ոչինչ, այլ հարկավոր է միայն ուտել, խմել, քնել և... դարձյալ ուտել, խմել, քնել, մինչև որ մի օր ոտները կձգի իբրև մի անպետք անասուն, որի կաշին անգամ չի կարելի քերթել բանի պետք ածելու համար:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ո՞վ է այդ երիտասարդը:

— Ես չեմ ճանաչում: Ազգն ինչպե՞ս ասացիր, Աշխեն:

— Շահյան:

— Շահյա՞ն, — զարմացավ Մինասյանը: — Լևո՞ն Շահյան:

— Կարծեմ Լևոն է, — ասաց Աշխենը:

— Դա խո իմ ընկերն է, իմ հին և ամենալավ ընկերներից մեկը, — բացականչեց Մինասյանը ծիծաղելով: — Այս բոպեիս պատահեցի նրան փողոցում:

— Պարո՛ն Մինասյան, դուք ուզում եք ինձ զայրացնե՞լ: Ինչպե՞ս չեք ամաչում այդպիսի դատարկ և ծույլ արարածներին ձեր ընկերն անվանելու:

— Իզուր եք զայրանում, օրիորդ, նա իսկապես իմ ընկերն է: Ես նրան ճանաչում եմ դեռևս աշակերտական նստարանից: Ճիշտ է, վերջին չորս-հինգ տարին ես նրան չեմ տեսել և չգիտեմ, թե ինչպես է եղել, որ նա հանկարծ հոռետես է դարձել, բայց նախկին ծանոթությանս վրա հիմնված կարող եմ ասել, որ նրա պես լավատես մարդ հազիվ թե գտնեք:

— Ուրեմն դու սուտ ես ասել, Աշխեն... պարոնը հերքում է քո ասածները:

— Ամենևին մտքովս էլ չի անցել հերքելու օրիորդի ասածները: Ասացի խո, որ վերջին չորս-հինգ տարում չեմ տեսել նրան և չգիտեմ, թե ինչպես է եղել, որ նա հանկարծ հոռետես է դարձել: Եթե այդպիսի մի փոփոխության կատարվել է նրա մեջ, ապա ես դրա համար ուրիշ բացատրություն չունեմ, բացի այն, որ նա մի քիչ հիվանդոտ է, մի քիչ ծույլ, գործի էլ անընդունակ, աշխարհից հեռու ապրող, թույլ կամքի տեր, երբեք չի փորձել, թե ինչ է նշանակում քաղցած փոր, բայց վերին աստիճանի բարի, բարեխիղճ ու մտածող և հիվանդության չափ ինքնասեր: Այդպիսի բնավորության տեր մարդիկ առհասարակ տրամադիր են լինում մելամաղձության և հոռետեսության, և եթե խորը քննենք, կտեսնենք, որ այդ մելամաղձությունն ու հոռետեսությունն արդյունք են լինում ոչ թե այն բանի, որ նրանք կյանքն ունայն են համարում, այլ այն գիտակցության, որ իրենց կյանքն ունայն է անցնում, հակառակ իրենց կամքի և ցանկության:

— Խոսք չկա, դուք լավ փաստաբան կլինիք:

— Փաստաբան լինելու հարկ չկա. պետք է միայն ճանաչել մարդու: Ինչևիցե: Այս թողնենք և գանք իմ գործին:

Մինասյանը հայտնեց, թե վարժուհին ինչ առարկաներ պիտի ավանդե, քանի դաս պիտի ունենա և, բնակարան, վառելիք ու լուսավորություն ունենալով հանդերձ, որքան ռոճիկ պիտի ստանա:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Օր. Սահակյանը գտավ, որ ռոճիկը շատ քիչ է, որ այդքան ռոճիկով ոչ մի վարժուհի չի համաձայնի գյուղ գնալ:

Մինասյանը պատասխանեց, որ ինքն էլ այդ շատ լավ գիտե, բայց ճար չկա. ժողովուրդը աղքատ է:

— Լավ, վարժուհի՞ն ինչ մեղավոր է, — բացականչեց օր. Սահակյանը: — Վարժուհի որ ուզում եք, այն էլ լավ վարժուհի, հապա ապրուստի միջոց չպիտի՞ տաք: Ես զարմանում եմ ձեզ վրա, որ դուք գործի վրա նայում եք ոչ թե ուսուցչի, այլ հոգաբարձվի աչքով:

— Իսկ ես զարմանում եմ ձեզ վրա, օրիորդ որ դուք շահադիտական տեսակետից եք նայում գործի վրա: Վարժուհին այնքան կստանա, որ բոլորովին բավական կլինի իր ապրուստի համար և, եթե ուզենա, դեռ մի բան էլ կարող է ետ ձգել: Էլ ի՞նչ եք ուզում: Գյուղ է, քաղաք խո չէ՞, որ մեծ ծախսեր ունենա: Ես, ահա, բոլորովին ձրի պիտի ծառայեմ: Բայց բանն այդ չէ: Մի՞թե չի կարելի մի փոքրիկ զոհաբերություն անել գործի սիրույն:

— Զարմանալի է. դուք այնպես եք խոսում, որ կարծես թե ինձ հետ եք պայմանավորվում: Բայց ես հասկանում եմ ձեզ. դուք իդեալական վարժուհի եք ուզում: Այդպիսի դեպքում սխալվել եք. ինձ մոտ գալու տեղ պիտի գնայիք ոգիների աշխարհը:

— Դժբախտաբար, ճանապարհը չգիտեմ, — ծիծաղեց Մինասյանը:

— Ի՞նչ գործի սեր, ի՞նչ զոհաբերություն, ի՞նչ եք ասում, որտե՞ղ եք ապրում, — շարունակեց օր. Սահակյանը տաքացած: — Դուք կարծում եք, թե ամենքը ձեզ պե՞ս են: Մոտակա վիրախոս հայ գյուղերից մեկում մասամբ իմ և մասամբ ուրիշների ջանքով աղջկանց ուսումնարան է բացված. ուզում եմ մի ներկայացում սարքել այդ ուսումնարանի օգտին, և ի՞նչ եք կարծում, ո՛ւմ դիմում եմ, որ մասնակցեն ներկայացմանը, համարյա ամենքն էլ մերժում են: Այստեղ խո, իսկապես, զոհաբերություն էլ չկա, բայց չեն ուզում մասնակցել: Ի՞նչ կարող ես անել: Մերժողներից մեկն էլ, ահա, մեր այս օրիորդն է:

Աշխենը թեթև կարմրեց:

— Վարո, ինչո՞ւ ես այդպես, — հանդիմանությամբ նկատեց նա կամաց: — Ասացի քեզ, որ ընդունակություն չունեմ, չեմ կարող բեմ դուրս գալ:

— Լավ, լավ, լավ, կատակ եմ անում, — բացականչեց օր. Սահակյանը ծիծաղելով: — Գիտեմ, որ դու փախչում ես հասարակության աչքին երևալուց, գիտեմ, որ դու չես կարող բեմ դուրս գալ: Բայց ես խոսում եմ նրա՛նց մասին, որոնք կարո՛ղ են, բայց սրտերում համակրության կայծ չունին և չեն ուզում ունենալ դեպի գործը, նպատակը: Իրենք, փառք աստծո, լավ ապրում են, իրենց ոչինչ պակաս չէ. է՛հ, շա՞տ են հոգում, թե մի որևէ վիրախոս հայ գյուղի ուսումնարան աղքատ է և, եթե չօգնես, կփակվի: Ինչևիցե, այս թողնենք և գանք դարձյալ մեր գործին: Ուրեմն այդպես, պարոն Մինասյան. թեև առաջուց ձեզ ասում եմ, որ ձեր առաջարկած պայմաններով չեմ կարող վարժուհի ճարել, բայց և այնպես վաղն ևեթ կխոսեմ մեկի հետ, որին առայժմ ի նկատի ունիմ: Պատասխանն էլ, հույս ունիմ, վաղն ևեթ տամ ձեզ: Առայժմ... Մայրի՛կ, թեյն ի՞նչ եղավ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Իսկույն բերում եմ, — լսվեց հարևան սենյակից փոքրիկ աղջկա ձայնը:

— Առայժմ մենք կսկսենք թեյ վայելել, պարոն Մինասյան, և դուք կպատմեք մեզ ձեր գիտցած նորություններից: Չէ՛, ավելի լավ է պատմեցեք ձեր գյուղական գործերից: Թեև ասացի, որ երկար պատմություններ չեմ սիրում, բայց և այնպես, երբ դուք խոսում եք գյուղի մասին, ես միշտ հաճույքով եմ լսում ձեզ:

Մինասյանն սկսեց պատմել այն դժվարությունները, որոնց հանդիպել էր ուսումնարանը հիմնելու գործում: Եթե մի բան կա, որի պատճառով գյուղացին անտարբեր է դեպի կրթությունն առհասարակ, այդ նրա տնտեսական ծանր դրությունն է միայն: Հացի խնդիրը կլանել է գյուղացուն ամբողջապես. նա ուրիշ բաների մասին ժամանակ չունի մտածելու: Մինասյանը մանրամասնորեն պատճառաբանեց, որ գյուղացու տնտեսական նեղ դրությանը որքան բնական պատահարներ են նպաստում, պակաս չեն նպաստում նաև վաշխառուները, գյուղական բանկերի բացակայությունը, երկրագործության և գյուղատնտեսության հին մեթոդը և այլն: Նա ասաց, որ մի տարուց ի վեր ինքն իր տնտեսության մեջ մտցրել է եվրոպական գործիքներ, որոնք, մեր լեռնոտ երկրի առանձնահատկությունների համար մի քանի հարմարություններ չունենալով, թեև սպասված արդյունքը չեն տալիս, բայց և այնպես, իհարկե, մեծ առավելություններ ունին ասիական գործիքների դեմ, այնպես որ գյուղացիներից քիչ-շատ ունևորները ցանկություն են հայտնել, որ իրենք էլ բերել տան եվրոպական գործիքներ:
Մինասյանը խոսում էր ազատ և բարձր. նրա ձայնը ձգողական ուժ ուներ: Գյուղացու մասին խոսելիս գրական լեզուն համեմում էր գեղջկական բառերով ու դարձվածքներով, այդ պատճառով նրա ոճը պարզության ու ինքնուրույնության առանձին կնիք էր կրում: Նա զարմանալի ընդունակություն ուներ իր պատմությունը հետաքրքրական դարձնելու մինչև անգամ այնպիսի բաների մասին խոսելիս, որոնք հազար անգամ ծամված-ծամծմված են. օրինակ՝ վաշխառության և պանդխտության մասին խոսում էր այնպես, որ կարծես բոլորովին անծանոթ բան էր պատմում: Իսկույն երևում էր, որ նա հոգով գյուղացի է և սիրում է գյուղն ու գյուղացուն, թեև վերջինս հասարակական-բարոյական բարքերը շատ բաներում նկարագրում է վերին աստիճանի տգեղ գույներով:

Օր. Սահակյանն էր միայն, որ մասնակցում էր նրա խոսակցությանը, մինչդեռ Աշխենը գրեթե բոլոր ժամանակ լուռ էր: Իր սովորական հանդարտ հայացքով նայում էր Մինասյանի համակրելի թուխ դեմքին և լսում էր նրան առանձին հետաքրքրությամբ: Նրա խաղաղ հայացքի մեջ տխուր մտահոգություն էր նշմարվում: Մինասյանի պատմությունը վերարտադրել էր նրա մեջ մերձակա անցյալից մի հիշատակ, որ նա միշտ աշխատում էր հանել իր մտքից, սրտից, հոգուց և իսպառ մոռանալ, որպեսզի վերջնականապես մարեր իր ամբողջ էությունը լափող մի սաստիկ հուր, որը երբեմն կատարյալ հուսահատության էր հասցնում նրան... Մինասյանը, այդ եռանդուն, գործունյա երիտասարդը, գյուղացու թշվառ կյանքը պատմելիս, նրան հիշեցնում էր մի այլ երիտասարդ նույնպես եռանդուն, նույնպես գործունյա, վեհ ձգտումներով, որոշ իդեալի տենչով լցված, որը կամովին ձգել էր իրեն դեպի հեռավոր երկիր, բայց դարձյալ հայրենակիցների, համարյուն եղբայրների մեջ՝ նրանց ծանր լուծն յուրովսանն թեթևացնելու... Որքան որ քաղցր և անձնական ազնիվ հպարտության համար հաճելի էր, որ նա իր միտքը, սիրտն ու հոգին նվիրել էր մի այդպիսի երիտասարդի, այնքան ավելի հուսահատական էր նրա համար, որ չէր կարող պատկանել այդ երիտասարդին, նրա հետ միատեղ օդ շնչել, նրա հետ ձեռք ձեռքի տված գործել և մեռնել միասին... Հերոսական կամք և ասպետական համբերություն էր հարկավոր այդ դրությանը

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

դիմանալու համար. բայց նա դիմանում էր և այնքա՛ն անտրտունջ, որպիսի՜ խոհեմությամբ, որպիսի՜ անձնազոհությամբ...

Խոսակցությունն անցավ Թրքա-Հայաստանում նոր երևան եկած շարժումներին ընդհանրապես, և Կում-Կափուի դեպքին մասնավորապես: Օր. Սահակյանն սկսեց սաստիկ հարձակում գործել պատրիարքի վրա, որ գործն այդպիսի խայտառակ դրության էր հասցրել, թեև, մյուս կողմից, նա չէր պաշտպանում ցուցարարներին, որոնց վարմունքն անխոհեմ էր համարում: Աշխենը նկատեց, որ վերջին դեպքերին թեթև աչքով չպետք է նայել, որովհետև այդպիսի ծանր դեպքերն առանց արդարացուցիչ պատճառների չէ՛ որ երևան են գալիս: Մինասյանն ասաց, որ գործին լավ ծանոթ չլինելով, ինքը դժվարանում է որևէ կարծիք հայտնել:

Բավական ուշ էր, որ Աշխենը վեր կացավ տուն գնալու. ուշագրավ և կենդանի խոսակցության մեջ նա չէր նկատել, թե ինչպես անցել էր ժամանակը:

12

Մինասյանն այդ գիշեր անհարմար համարեց Շահյանի մոտ տեղափոխվել: Հետևյալ առավոտ վերցրեց իր ջարդված ճամպրուկն ու հնացած յափնջին և գնաց ընկերոջ տուն: Այդ միջոցին Շահյանը զբաղված էր իր թարգմանությամբ: Իմանալով, որ եկողը Մինասյանն է, մի րոպե իր սովորական մտավախությամբ ուզեց թղթերը հավաքել և պահել, բայց մեկ էլ մտածեց, որ հիմարություն կլինի այդ, քանի որ ինքը լոկ թարգմանություն էր անում և, իր համոզումով, այնքան էլ անհաջող չէր թարգմանում, որ երկյուղ ունենար ընկերոջ կողմից նկատողություններ ստանալու: Նա շտապեց միայն բառարանները հեռացնելու գրասեղանի վրայից:

— Վա՛հ, գրականությա՞մբ ես զբաղվում, — կանչեց Մինասյանն իր բամբ ձայնով, գրասեղանի վրա թափթփված թղթերը տեսնելով:

Շահյանն ամոթխածությամբ ժպտաց:

— Այո, թարգմանում եմ պարապ չմնալու համար:

— Ի՞նչ ես թարգմանում:

Այս ասելով, Մինասյանը բաց արեց տետրակի առաջին երեսը և կարդաց.

— «Շոպենհաուերը մահվան և անմահության մասին»: Բո՛, զոռբա բան ես թարգմանում, — ասաց նա և, թերթը շրջելով, կարդաց թարգմանության առաջին տողերը:

— «Մահն է, իսկապես, ոգևորիչ հանճար, փիլիսոփայության մուսան»: Ի՞նչ: Բան չհասկացա: Ռուսերենի՞ց ես թարգմանում: Տեսնեմ:

Նա բաց արեց բնագիրը և կարդաց.

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— «Смерть есть, собственно, вдохновительный гений, муза философии»: Հիմա հասկացա: Քոնը բառացի թարգմանություն է, դրա համար անճոռնի է դուրս եկել:

Մինասյանը շարունակեց կարդալ Շահյանի թարգմանության հետևյալ տողերը, առանց նկատելու, որ իր ամեն մի նկատողությունը այլայլում է ընկերոջը:

— «Չլիներ մահը, դժվար թե կարելի լիներ մինչև անգամ փիլիսոփայություն անել»: Խոր և խելացի միտք: Մինչև անգամ կարելի էր ասել, որ եթե մարդը մահկանացու չլիներ, հազիվ թե նա ընդունակ լիներ նույնիսկ մտածելու... Հա , լավ հիշեցի: Ինչպես երևում է, դու չես բավականանում այս մեծ հոռետեսի թարգմանությամբ միայն, այլև բերանացի քարոզում ես սրա մտքերը:

— Քարոզո՞ւմ — զարմացավ Շահյանը: — Որտե՞ղ եմ քարոզել:

— Օր.Սահակյան կա, նա էր ասում:

— Օր. Սահակյա՞ն...

— Դա այն վարժուհին է, որի մոտ գնացի երեկ երեկո, քեզանից բաժանվելուց հետո: Նրա մոտ մի ուրիշ օրիորդ կար. նրան ես ուզել քարոզել:

Շահյանը զգաց, որ կարմրում է, և իսկույն գլխի ընկավ, որ այդ ուրիշ օրիորդը կամ Եվան պիտի լիներ, կամ Աշխենը, բայց հարկ համարեց այնպես ցույց տալ, թե այդ բանից ամենևին տեղեկություն չունի:

— Ի՞նչ օրիորդ, — հարցրեց նա:

— Ազգը չեմ հիշում, բայց անունը, կարծեմ, Աշխեն է:

— Հա՛, — կեղծ անտարբերությամբ երկարացրեց Շահյանը:

— Նա այնքան էլ հիմար աղջիկ չէր երևում, և, երևի, ջախջախել է քեզ: Հը՞, — ծիծաղեց Մինասյանը մտերմական բարեսրտությամբ:

Շահյանը վիրավորվեց, նրա անձնասիրության համար անտանելի էր ընկերոջ ծաղրը:

— Ինչի՞ց գիտես, թե ինձ ջախջախել է, որ այնքան հիմար աղջիկ չէ՞ր երևում... Կամ, գուցե նա ի՞նքը քեզ այդպես ասաց:

— Չէ՛, ամենևին չէ: Իզուր ես բարկանում: Ես նրա համար եմ այդպես կարծում, որովհետև քո այդ Շոպենհաուերը հենց ինքն էր առաջինը, որ ծաղրում էր իր քարոզած մտքերը: Նա կյանքն անտանելի թշվառություն էր համարում, բայց ինքը փառավորապես օգտվեց այդ կյանքից ամբողջ յոթանասուն տարի: Մարդկությանը նա դեպի մահ էր հրավիրում, բայց ինքը շարունակ ատրճանակ էր ման ածում հետը անձնա... չկարծես անձնասպանության, ոչ — անձնապաշտպանության համար: Մարդկության թշվառության աղբյուրը նա կանանց էր

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

համարում, բայց ինքը շարունակ կանանց գրկումն էր երջանիկ ժամեր գտնում և վերջը, կարծեմ, ապօրինի զավակներ թողեց:

— Զարմանալի է. ինչ ես դու նրա կյանքն օրինակ բերում իր մտքերի դեմ:

— Նրանը չլինի, իմը լինի, քոնը լինի: Եթե գտնում ես, որ կյանքն անտանելի է, և մեռած ժամանակ միայն մարդ կարող է երջանիկ լինել, — էլ ինչո՞ւ ես ապրում, մեռիր, էլի՛: Փառք աստծո, շատ բան հարկավոր չէ, մի գնդակ և մի վայրկյան, ուրիշ ոչինչ: Կամ, եթե գնդակից վախենում ես — ջուր կա. եթե ջրից վախենում ես — թոկ կա, եթե թոկից էլ վախենում ես — թույն կա: Կամ թե չէ, ուզո՞ւմ ես, Բուդդայի պես նստիր ծառի տակ և շարունակ նայիր քթիդ ծայրին, մինչև որ սպանես քո մեջ ա՛յն, որ քո այդ սիրելի Շոպենհաուերը «ապրելու անգիտակից կամք» է անվանում:

Շահյանն ակամա ծիծաղեց:

— Ի՞նչ ես ծիծաղում. ես կատակ չեմ անում: Ինքդ մտածիր, եղբայր, հենց միայն այն հանգամանքը, որ մարդ իր ակներև մահվան ամենավերջին րոպեում անգամ ամեն ջանք գործ է դնում, որ մի քիչ էլ ապրի, — այդ արդեն պարզ ապացույց չէ , որ կյանքը շատ էլ վատ բան չէ, և իզուր է քո այդ Շոպենհաուերը ստիպում, որ մարդ ուրիշ կերպ նայի կյանքի վրա: Ի՞նչ ես կարծում, այդպես չէ՞:

— Ուրեմն, քո կարծիքով, ավելո՞րդ է թարգմանությունս, — առանց նրա հարցին պատասխանելու, հարցրեց Շահյանը կարճ մտահոգությունից հետո:

— Բոլորովին ավելորդ է: Մեզ համար, ես կարծում եմ, դեռ շատ վաղ է այդպիսի բաներով զբաղվելը: Մեր առաջ մեծ գործ կա կատարելու. նախ մտածենք այ՛ն բանի մասին, թե ինչպես անենք, որ նպաստած լինենք այդ մեծ գործի կատարմանը, նախ հոգանք մեր ժողովրդի թշվառության մասին, աշխատենք նրան փոքրիշատե բարօր վիճակի հասցնել. այնուհետև արդեն պարապ ժամանակ շատ կունենանք ընդհանուր մարդկային թշվառության մասին մտածելու... Մի բան էլ ասեմ. Շոպենհաուերին հասկանալը, ախր, հեշտ չէ, իսկ թարգմանելը — առավել ևս:

Եվ Մինասյանը, խորհրդավոր կերպով նայելով ընկերոջ ակնոցներին, մեղմորեն ժպտաց:

Շահյանը ոչինչ չպատասխանեց: Նա ամաչում էր նայել Մինասյանի դեմքին, բնազդմամբ զգալով, որ ընկերն իր մտերմական բարեսրտությամբ կարող է շատ դառն հաբեր կլլեցնել իրեն:

Կես ժամից հետո երկու ընկերները աղա Կարապետի և Թամարի հետ սեղանատանը նստած՝ խմում էին առավոտյան թեյը: Աղա Կարապետը գովում էր Մինասյանի եռանդը, բայց գտնում էր, որ ավելի նպատակահարմար կլիներ ծխական դպրոցի տեղ բանալ գյուղատնտեսական դպրոց: Մինասյանն ասաց, որ այդ բանը իր իդեալն է, որ ծխական դպրոցը լինելու է ապագա գյուղատնտեսական դպրոցի մի էտապը, իսկ այդ պակասը առայժմ լրացնում է իր սեփական փորձադաշտով, որտեղ գյուղացիները քիչ բան չեն սովորում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Թեյից հետո Մինասյանը շտապեց գնալ գրավաճառանոց, ուր դասագրքեր և դասական ուրիշ պիտույքներ գնեց նոր ուսումնարանի համար, առավ իր վերջին հրատարակությունից երկու օրինակ — մեկը օր. Սահակյանին, մյուսը Շահյանին նվիրելու, հետո գնաց սրբազան առաջնորդի և թեմական տեսչի մոտ ուսումնարանին վերաբերող մի քանի կարևոր գործերի համար, ժամը 3-ին ճաշեց Շահյանենց տանը և երեկոյան գնաց օր. Սահակյանի մոտ վարժուհու մասին պատասխան ստանալու:

Աշխենն այս անգամն էլ ընկերուհու մոտ էր: Երբ Մինասյանը ներս մտավ, օր. Սահակյանը տաք-տաք խոսում էր Աշխենի հետ:

— Ես ձեզ չասացի՞, որ ձեր առաջարկած ռոճիկով անկարելի է վարժուհի ճարել, — բարկացած կանչեց նա:

— Ի՞նչ է, չհաջողվե՞ց:

— Իհարկե, չհաջողվեց: Զարմանալի է, որ դուք այդքան խամություն եք անում: Ոչ թե մեկի, այլ երեք հոգու մոտ եմ գնացել, ոչ ոք չհամաձայնեց ձեր առաջարկած ռոճիկով գյուղ գնալ: Դեռ ծիծաղեցին էլ: Մեր տանն, ասացին, ավելի լավ կարող ենք ապրել:

— Բաս ի՞նչ պետք է անենք:

— Ինչ ուզում եք՝ արեք: Դեռ ձեր պատճառով կռվեցի էլ:

— Իմ պատճառո՞վ:

— Ես զայրացած խփեցի նրանց երեսին, որ նրանք ուզում են միայն լավ ապրել, որ նրանք ուրիշ նպատակ չունին, բացի լավ ապրելուց, որ նրանք անարժան են իրենց կոչմանը, որ եթե այսօր մի հարուստ պառավ մարդ խնդրի նրանց ձեռքը, նրանք ամեն բան կմոռանան և ուրախությամբ կվազեն այդ հարուստ պառավի տանը լավ ապրելու:

— Լավ, ես մեղավո՛ր եմ, որ այդ խոսքերը շպրտել եք նրանց երեսին:

— Բաս ե՞ս եմ մեղավոր, — աղաղակեց օր. Սահակյանը: — Եթե չհանձնարարեիք ինձ, որ վարժուհի ճարեմ ձեզ համար, կկռվեի նրանց հետ:

— Ես ձեզ խնդրեցի, որ վարժուհի ճարեք, խո չխնդրեցի, որ կռվեք:

— Պարոն Մինասյան, շատ մի բարկացնեք, թե չէ, աստված է վկա, ձեզ հետ կկռվեմ:

— Տեսնում եք, որ մեղավորը ես չեմ, այլ ձեր բնավորությունը: Բայց կատակը մի կողմ մնա, օրիորդ, ինձ, ախր, վարժուհի է հարկավոր: Ես չեմ կարող այստեղ երկար մնալ: Թեմական տեսուչը չի ուզում խառնվել այս գործին, որովհետև մեր մեջ անձնական հաշիվներ կան: Հայտարարություն տամ, գիտեմ, բան չի դուրս գալ: Մի ճար պետք է անե՞ք, թե չէ:

Օր. Սահակյանը մտահոգության մեջ ընկավ: Նրա դեմքը մինչև անգամ տխուր արտահայտություն ստացավ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ինչո՞ւ ինձ առաջուց իմաց չտվիք, որ ուսումնարան եք բաց անում և վարժուհու պետք կունենաք, — ասաց նա կարճ լռությունից հետո: — Այն ժամանակ ես կգայի:

— Դո՞ւք:

— Զարմանո՞ւմ եք: Այո, է՛ս: Այստեղ, ճիշտը ձեզ ասեմ, ձանձրացել եմ. կուզեի օդը, միջավայրը փոխել: Հիմա էլ կարող եմ հրաժարական տալ և ձեզ հետ գյուղ գալ, բայց...

— Ի՜նչ եք ասում... Ես երբեք չէի ցանկանալ, որ դուք այդպիսի զոհաբերություն անեիք:

Օր. Սահակյանը տխրորեն ժպտաց:

— Դուք այնպես եք խոսում, որ այդ զոհաբերությունը կարծես ձեզ համար պիտի անեի, — նկատեց նա:

— Գիտեմ, որ այդ զոհաբերությունը գործի համար պիտի անեիք, բայց... գյուղում և այն չնչին վարձատրությամբ ծառայելն անկարելի պիտի լինի ձեզ համար, որովհետև... ի՞նչ պիտի անեք ձեր պառավ մորը, ձեր եղբոր երկու փոքրիկ որբերին, որոնց պահողն ու կերակրողը դուք եք միայն: Անհարմարություններ շատ կան, օրիորդ:

— Եվ կարծում եք, թե այդ անհարմարությունները գոյություն չունի՞ն ուրիշների համար, որոնցից երեկ դուք զոհաբերություն էիք պահանջում: Մենք մեզ հակասում ենք, պարոն Մինասյան, և անաչառ չենք: Բայց բանն այդ չէ: Գործողն ա՛յն ժամանակ է միայն գործող, երբ նա անհարմարությունների և դժվարությունների մեջ է գործում: Բայց դուք գործող ասացեք, գործող: Մեր վարժուհիները... Ի՞նչ են մեր վարժուհիները. — դատարկագլուխ, ծույլ ու բթամիտ արարածներ, որոնք իրենք էլ չեն իմանում, թե ինչպես է պատահել, որ վարժուհի են դարձել: Չես կարող փոքրիշատե լուրջ բանի մասին վիճաբանել հետները: Իրենց խոսքերը քալփաթինով պիտի հանես բերաններից, իսկ քոնը մուրճով պիտի ցցես նրանց գլուխը, որ մտնի: Ժողովներում նստում են փայտի պես, բայց որ իրենք իրենց մեջ են մնում, տեսնեք, թե ինչպիսի կչկչան կաչաղակներ են դառնում. — ամենքը սկսում են խոսել միանգամից, կատակներ են անում, բամբասում են, սրան են ծաղրում, նրան են ծաղրում, մեկին մի անուն են կպցնում, մյուսին՝ ուրիշ անուն, բութ սրամտություններ են անում, ծիծաղում են, հռհռում, իրար կողք են բզում, ծկլթում... մի խոսքով՝ այնպիսի հիմարություններ, որ երեխաներն էլ չեն անիլ: Եվ սրանք են կազմում հայ ինտելիգենտ կանանց այն դասը, որ գործում է հասարակական ասպարեզի վրա, մանուկ սերունդ է կրթում: Ասելս այն է, որ այսպիսի մտավոր և բարոյական սնանկներից ի՞նչ գործ, առավել ևս — հանուն այդ գործի ի՞նչ զոհաբերություն կարող ենք պահանջել: Այս այնպիսի մի ցավալի դրություն է, որ լավ մտածում եմ, ինքս ինձնից, իմ վարժուհի լինելուցս իսկ ամաչում եմ:

— Ներեցեք, օրիորդ, — նկատեց Մինասյանը ժպտալով. — ինձ թվում է, թե դուք մի քիչ չափազանցնում եք:

— Ի՞նչ, դուք չե՞ք հավատում: Ապացույցի համար, որ ես չեմ չափազանցնում, կիրավիրեմ այստեղ մի յոթ-ութ հոգի վարժուհի, ձեզ էլ կբերեմ կնստեցնեմ այստեղ, կսկսենք խոսել հասարակական կամ նույնիսկ մանկավարժական որևէ խնդրի մասին, և ինքներդ կտեսնեք,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

թե քանի՞սն է նրանցից փայտի պես նստած, քանի՞սն է կարծիք հայտնում և ինչպիսի՞ կարծիք: Այնուհետև դուք վեր կկենաք, իբր թե գնում եք, ես ձեզ թաք կկացնեմ հարևան սենյակում, և այնտեղից ականջ կդնեք, թե ձեր դուրս գնալուց հետո ինչի՛ մասին կսկսեն խոսել. — նրանք ձեր քթի մասին կխոսեն, պարոն Մինասյան:

Մինասյանը պինդ ծիծաղեց:

Աշխենը նայեց նրա մեծ քթին և ակամա ժպտաց:

— Ի սեր աստծո, օրիորդ, — բացականչեց Մինասյանը, — ինչպիսի վարժուհի ուզում եք ճարեցեք, միայն թե ինձ ազատ պահեցեք քթի մասին դասախոսող վարժուհիներից:

Օր. Սահակյանի ծիծաղը սաստիկ բռնեց:

— Ձեր պայմաններում, ասենք, դժվար թե ազատ մնաք... նրանք մշտապատրաստ նյութ կունենան իրենց աչքի առաջ, — սաստիկ ծիծաղի միջից հազիվ կարողացավ արտասանել նա: — Բայց ես վախենում եմ, որ դուք ինձ էլ քթի մասին դասախոսող վարժուհիների կարգը դասեք, ուստի թողնենք այս մասին խոսելը:

Եվ օր. Սահակյանը, արագությամբ զսպելով իր ծիծաղը, նորից լուրջ դեմք ընդունեց:

— Դուք իմ անձնական անհարմարությունների մասին մի մտածեք, պարոն Մինասյան, — ասաց նա, դառնալով առաջվա խոսակցությանը: — Ես գիտեմ, թե ինչպես կշտկեմ այդ անհարմարությունները: Բայց այս տարի չէ, եկող տարի, ձեզ խոսք եմ տալիս, առաջուց, ինքս կգամ գյուղը: Ուրիշ բան է, թե դուք չէիք ցանկանա ինձ վարժուհի ունենալ ձեր ուսումնարանում, — ավելացրեց նա կատակով, բայց դարձյալ առաջվա մեղմ-տխուր ժպիտով:

— Դուք կատակ եք անում, օրիորդ, բայց հավատացնում եմ ձեզ, անչափ գոհ կլինեի, եթե ինձ պատահեր մի այնպիսի վարժուհի, որ եթե ձեզ պես անձնվեր չլիներ, գոնե մի քիչ սիրեր գործը, որովհետև գիտեք, թե մանավանդ ուսուցչական ասպարեզում որքա՛ն մեծ նշանակություն ունի գործի սերը: Ձեր առաջարկությունը ես ընդունում եմ, իհարկե, ամենայն սիրով, բայց այս տարվա համար պիտի օգնեք — առանց վարժուհու չպետք է թողնեք: Ճարներս ի՞նչ: Միանգամից խո չե՞նք կարող նոր դրություն ստեղծել, պետք է բավականանանք եղածով: Հույսս ձեզ վրա է: Երևակայեցեք, որ հազար ու մի դժվարություններով հիմնված ուսումնարանը վարժուհու պատճառով միայն կարող է փակ մնալ, իսկ այդ բանը կարող է ժողովրդին սառեցնել:

— Գիտե՞ք ինչ կա, պարոն Մինասյան, — ասաց օր. Սահակյանը: — Վաղն ես կխոսեմ մի ուրիշի հետ. եթե համաձայնեց խո լավ, իսկ եթե ոչ, այն ժամանակ, ճար չկա, պետք է մի կերպ ավելացնեք ռոճիկը, թե ինչպես, այդ արդեն ձեր գործն է: Ես իմս արած կլինեմ, և դուք ինձնից դժգոհ լինելու իրավունք չեք ունենալ:

Օր. Սահակյանի ծիծաղը սաստիկ բռնեց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ձեր պայմաններում, ասենք, դժվար թե ազատ մնաք... նրանք մշտապատրաստ նյութ կունենան իրենց աչքի առաջ, — սաստիկ ծիծաղի միջից հազիվ կարողացավ արտասանել նա: — Բայց ես վախենում եմ, որ դուք ինձ էլ քթի մասին դասախոսող վարժուհիների կարգը դասեք, ուստի թողնենք այս մասին խոսելը:

Եվ օր. Սահակյանը, արագությամբ զսպելով իր ծիծաղը, նորից լուրջ դեմք ընդունեց:

— Դուք իմ անձնական անհարմարությունների մասին մի մտածեք, պարոն Մինասյան, — ասաց նա, դառնալով առաջվա խոսակցությանը: — Ես գիտեմ, թե ինչպես կշտկեմ այդ անհարմարությունները: Բայց այս տարի չէ, եկող տարի, ձեզ խոսք եմ տալիս, առաջուց, ինքս կգամ գյուղը: Ուրիշ բան է, թե դուք չէիք ցանկանա ինձ վարժուհի ունենալ ձեր ուսումնարանում, — ավելացրեց նա կատակով, բայց դարձյալ առաջվա մեղմ-տխուր ժպիտով:

— Դուք կատակ եք անում, օրիորդ, բայց հավատացնում եմ ձեզ, անչափ գոհ կլինեի, եթե ինձ պատահեր մի այնպիսի վարժուհի, որ եթե ձեզ պես անձնվեր չլիներ, գոնե մի քիչ սիրեր գործը, որովհետև գիտեք, թե մանավանդ ուսուցչական ասպարեզում որքա՛ն մեծ նշանակություն ունի գործի սերը: Ձեր առաջարկությունը ես ընդունում եմ, իհարկե, ամենայն սիրով, բայց այս տարվա համար պիտի օգնեք — առանց վարժուհու չպետք է թողնեք: Ճարներս ի՞նչ: Միանգամից խո չե՞նք կարող նոր դրություն ստեղծել, պետք է բավականանանք եղածով: Հույսս ձեզ վրա է: Երևակայեցեք, որ հազար ու մի դժվարություններով հիմնված ուսումնարանը վարժուհու պատճառով միայն կարող է փակ մնալ, իսկ այդ բանը կարող է ժողովրդին սառեցնել:

— Գիտե՞ք ինչ կա, պարոն Մինասյան, — ասաց օր. Սահակյանը: — Վաղն ես կխոսեմ մի ուրիշի հետ. եթե համաձայնեց խո լավ, իսկ եթե ոչ, այն ժամանակ, ճար չկա, պետք է մի կերպ ավելացնեք ռոճիկը, թե ինչպես, այդ արդեն ձեր գործն է: Ես իմս արած կլինեմ, և դուք ինձնից դժգոհ լինելու իրավունք չեք ունենալ:

— Լավ, — ասաց Մինասյանը և մտքումը վճռեց, որ եթե բանը չհաջողվի, երեսը պնդի և դիմի Շահյանին կամ ուղղակի նրա հորը օգնություն խնդրելու:

Մինչ այդ խոսակցությունը տեղի էր ունենում օր. Սահակյանի և Մինասյանի միջև, Աշխենը, իր սովորության համեմատ, նստած էր բոլորովին լուռ: Նկատելի էր, որ նա խորասուզված է ինչ-որ մտածմունքի մեջ: Այդ մտածմունքից նրան հանեց օր. Սահակյանը:

— Աշխեն, ի՞նչ ես մտածում, — հարցրեց նա: Աշխենը նայեց նրան և սթափվեց:

— Ե՞ս, ոչինչ:

— Հա՛, պարոն Մինասյան, գիտե՞ք, որ մեր այս օրիորդն էլ վարժուհի է, բայց կամավոր վարժուհի, ինչպես որ կամավոր զինվորներ են լինում. չքավոր մարդկանց երեխաներին ձրի դասեր է տալիս տնավարի: Դուք այսպիսի իդեալական վարժուհի եք ուզում, բայց աստված տա:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Աշխենը չկամեցավ, որ ընկերուհին երկար խոսի այդ մասին. ուստի, դիմելով Մինասյանին, խոսք բաց արեց նրա ժողովրդական նյութերի ժողովածուի մասին:

— Հա՛, պարոն Մինասյան, բերի՞ք ձեր գիրքը, — հարցրեց օր.Սահակյանը:

Մինասյանը վեր կացավ և վերարկուի գրպանից հանելով օր. Սահակյանի համար այդ օրը գրավաճառանոցից վերցրած իր վերջին հրատարակությունը, հանձնեց նրան, Աշխենին էլ խոստացավ, որ մի գիրք էլ վաղը նրա համար կվերցնի:

— Ինչպես երևում է, պարոն Մինասյան, — ծիծաղելով նկատեց օր. Սահակյանը, — հայ հեղինակներդ, ավելի շատ նվիրում եք ձեր գրքերը, քան թե վաճառում:

13

Աշխենն, այդ երեկո օր. Սահակյանի մոտից վերադառնալով տուն, ուղղակի մտավ իր սենյակը, նստեց գրասեղանի մոտ, վերցրեց մի գիրք, որ կիսատ թողած ընթերցանությունը շարունակի, բայց թողեց և մտածության մեջ ընկավ:

Անցավ համարյա մի ժամ, որ նա գլուխը ձեռքին հենած՝ անթարթ նայում էր մի կետի: Նրա ուղեղը զբաղված էր մի խնդրով, որ վճռելու համար խիստ տատանվում էր: Այդ խնդիրը նրա գլխում ծագել էր դեռ նախորդ օրվանից, և նա շարունակ մտածում էր այդ մասին, և որքան շատ էր մտածում, այնքան ավելի տատանվում էր: Դուռը կամաց բացվեց: Աշխենը ցնցվեց և նայեց դռան կողմը:

Հանդարտ քայլերով ներս մտավ Եվան.վերցրեց մի աթոռ և նստեց նրա մոտ:

— Աշխեն, այս երեկո խիստ տխուր եմ, — ասաց նա մելամաղձոտ ձայնով:

Աշխենը զարմացած նայեց նրա դեմքին: Հիրավի, երբեք այդ սիրուն, այդ չարաճճի դեմքն այդպես տխուր, հանդարտ և մելամաղձոտ չէր ներկայացել նրան:

— Ինչո՞ւ, — հարցրեց նա:

— Մտածում եմ եղբորս մասին:

— Արմենակի՞ մասին:

— Այո:

Աշխենը նկատելի կերպով գունատվեց:

— Ի՞նչ է պատահել... նոր նամա՞կ կա նրանից, — անհանգստությամբ հարցրեց նա:

Եվան նայեց նրան զարմացած:

— Ինչո՞ւ այդպես վախեցած ես հարցնում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Որովհետև դու այնպես ես խոսում, որ կարծես նրան բան է պատահել... Հա՞:

— Նրան ոչինչ չի պատահել:

— Հապա ի՞նչ ես ասում:

— Զարմանալի է. Ես կարծեմ ոչինչ չասացի: Ասացի միայն, որ տխուր եմ և մտածում եմ նրա մասին:

Աշխենը հանգստացավ և ձեռքը մտախոհ կերպով շփեց ճակատին:

— Ի՞նչ ես մտածում նրա մասին, — հարցրեց նա կամաց, կարճ լռությունից հետո: Նա այլևս չէր նայում Եվային:

— Ուզում եմ, որ նա այստեղ լինի:

— Դու այդ միշտ էլ ուզել ես:

— Բայց ոչ այնպես, ինչպես այժմ: Այնպե՛ս կարոտել եմ, այնպե՛ս կարոտել... Զարմանալի է. կարծես երբե՛ք այնպես չեմ սիրել նրան, ինչպես այժմ, այս րոպեիս: Պատկերը ձեռքիս էր. նայեցի, նայեցի և... լաց եղա, — ինքս էլ չգիտեմ ինչու: Այսպիսի բան երբեք չէր պատահել ինձ: Այս ի՞նչ նախազգացում է, չեմ հասկանում... Ո՛ւֆ, պետք է նամակ գրեմ, որ գա: Դու էլ գրիր: Դու էլ խո սիրում ես նրան:

Աշխենը վեր կացավ և պինդ փակեց լուսամուտի վրա փակած փեղկը, որ քամին շարժում էր:

— Հետո գո՞րծը, — հարցրեց նա, նստելով Եվայից հեռու, — մի ուրիշ աթոռի վրա, այնպես, որ նրա դեմքը լույսի հակառակ կողմն էր:

— Ա՜խ, ա՛յդ է, որ ինձ հուսահատեցնում է, — բացականչեց Եվան: — Ես գիտեմ, որ ա՛յն գործը, որի համար գնացել է նա, ավելի է սիրում, քան թե ինձ, քեզ, հայրիկին, մայրիկին, Սուրենին... Հիշո՞ւմ ես, ինչպե՛ս ոգևորված խոսում էր նա այդ մասին...

— Եվ մի՞թե դրա համար դատապարտում ես նրան:

— Ա՜խ, ո՞վ է ասում, — նեղսրտությամբ արտասանեց Եվան: — Ես այս ասում եմ, որովհետև կարոտել եմ նրան, սաստի՜կ կարոտել, հասկանո՞ւմ ես թե ոչ: Երևակայիր, որ նա այնտեղ մենակ է, բոլորովին մենակ. ո՛չ մի, ո՛չ մի սրտակից չունի մոտը: Չէ՞ որ հազար ու մի ձախորդություններ կան, հիվանդություն կա... Վերջապես, այնտեղ, ինչպես երևում է, ծանր խառնակություններ են տիրում... Մի՞թե այս բոլորի մասին կարող եմ հանգիստ մտածել:

Աշխենը, ինքն էլ չիմացավ թե ինչպես, վեր կացավ, մոտեցավ նրան, պինդ գրկեց նրա գլուխը և քիչ մնաց, որ լաց լինի: Նա անհուն սիրով ու քնքշորեն համբուրեց Եվայի շրթունքները և նորից նստեց իր առաջվա տեղը, Եվայի մոտ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Երբե՛ք, երբե՛ք քեզ այնպես չեմ սիրել, ինչպես այս րոպեիս, — կամաց, շատ կամաց արտասանեց նա, առնելով Եվայի ձեռքերը և պահելով իր ձեռքերի մեջ: — Չես կարող երևակայել, թե որքա՛ն զգացված եմ այս րոպեիս, որ եղբորդ համար այդպես հոգում, այդքան մտածում ես: Հոգա՛, մտածի՛ր, սիրելիս, որովհետև եղբայրդ այնքա՛ն...անգին եղբայր է, որպիսին... ոչ ո՛ք չունի: Ինքս հոգովս չափ... հարգել եմ նրան և երկյուղածությամբ խոնարհել նրա հաստատուն կամքի և ա՛յն գաղափարների առաջ, որ նա այնպես ջերմ կերպով պաշտպանում, այնպես ոգևորությամբ քարոզում էր: Անձնուրացություն թշվառի բարօրության օգտին, անձնազոհություն հայրենիքի համար — այս էր նրա քարոզը: Եվ այդ ո՛չ թե լոկ խոսքով, այլև գործով, որ նա այժմ ապացուցանում է: Խոսքը գործով ապացուցել — այդ այնպիսի մի հերոսություն է, որպիսին ո՞ւր էր, թե ամենքն ունենային: Այս րոպեիս ինչ որ գիտեմ, ինչ որ սովորել եմ և ինչ որ ուզում եմ անել, այդ բոլորի համար մեծապես պարտական եմ նրան: Եվ եթե գիտենաս, սիրելիս, որքա՛ն հպարտանում եմ, որ նա իմ մոտիկ ազգականն է, իմ հարազատը, իմ...

Աշխենը լռեց, և Եվայի փոքրիկ ձեռքերը ցնցողաբար սեղմելով իր երկայն մատների մեջ, տխրորեն ժպտաց:

— Տեսնո՞ւմ ես, սիրելիս, ինչքան ոգևորվեցի, — արտասանեց նա:

— Երևում է, որ դու ինձնից ավելի ես սիրում եղբորս, — ասաց Եվան, որ մինչև այդ ժամանակ անմեղ լրջությամբ նայում էր Աշխենի վառված աչքերին, լայն, պարզ ճակատին:

— Մի՞թե այդ հանցանք է... չէ՞ որ նա և ի՛մ եղբայրն է:

— Իհարկե: Նա էլ քեզ շատ էր սիրում:

— Գուցե նախանձո՞ւմ ես:

— Նախանձո՞ւմ: Իհարկե, չէի կամենալ, որ եղբայրս ինձնից պակաս սիրվեր, քան թե քեզնից կամ մի ուրիշից, չնայելով, որ ես... Ա՜խ, ես նրան շատ եմ սիրում, Աշխեն, չափից դուրս շատ եմ սիրում... Որ գիտենաս՝ ինչքա՛ն վատ մտքեր էին պաշարում ինձ այս գիշեր, Ինչքա՛ն վատ նախազգացումներ... Ո՛ւֆ, այլևս չպետք է կարդամ այդ անիծված հեռագրերը...

Երկյուղի նման մի մռայլ բան անցավ Աշխենի դեմքի վրայով, և նա կաշկանդված՝ մի րոպե անթարթ նայեց Եվայի տխրած աչքերին: Հետո հազիվ նկատելի կերպով ցնցվեց և կամաց վեր կացավ տեղից:

— Դատարկ բան է, — արտասանեց նա, կարծես ինքն իրեն սրտապնդելու համար, և սկսեց անցուդարձ անել սենյակում: — Ճշմարիտ է, հեռագրերն այնքան էլ խաղաղ չեն ներկայացնում այնտեղի դրությունը, բայց... ոչ մի լուրջ առիթ չկա երկյուղ կրելու... Վերջապես, մի՞թե պիտի հուսահատվենք և մեզ հետ նրան էլ հուսահատեցնենք: Ինչի՞ նման կլինի այդ: Եվ այդ ա՛յն ժամանակ, երբ դեռ ոչինչ չի արված իսկապես, երբ գործը նոր է սկսվում... Այդ վախկոտություն և հանցանք կլինի մեր կողմից, մեծ հանցանք, աններելի հանցանք... Ընդհակառակը, սիրտ պետք է տալ նրան, պետք է խրախուսել, ամեն կերպ խրախուսել: Եվ այդ պարտքն ամենից առաջ մեզ վրա է ընկնում: Մենք հպարտանում ենք, որ նրա պես մի եղբայր ունինք: Ինչու այնպես չանենք, որ նա էլ մեզնով հպարտանա: Լինինք

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

նրան արժանավոր քույրեր, և այդ էլ բավական է, որ նա սիրտ առնի, ոգևորվի:

Աշխենը խոսում էր կարծես ինքն իր հետ, և նրա ձայնի մեջ լսվում էր ինչ-որ արտասովոր ջղայնոտություն: Թեթև քայլերով նա անցուդարձ էր անում սենյակում և ամենևին չէր նայում Եվային:

Եվան աչքերով հետևում էր նրան սենյակի մի անկյունից մյուսը՝ զարմացած:

— Մի՞թե մենք նրա արժանավոր քույրերը չենք, — հարցրեց նա:

— Ո՛չ, մենք արժանի չենք նրա քույրը կոչվելու: Ինչո՞վ ենք արժանի: Նրանո՞վ, որ նստած ենք անգործ, նրանո՞վ, որ պարազիտի դեր ենք կատարում, ուտում, պճնվում, պարում, զբոսնում ու սպասում, թե ե՞րբ պետք է գա մեկը, որ մեզ հավանի ծախու ձիու պես և մեր սանձից բռնած՝ տանի իր ախոռում կապելու: Սրանո՞վ արդյոք, այս ամոթալի՞ կյանքով... Իսկ նա այնտեղ անձնական ամեն հանգստություն, ամեն վայելք մոռացած, իր հարազատներից, իր սիրելիներից կտրված, ձգել է իրեն կյանքի ահարկու հորձանքի մեջ, ապրում է ո՞վ գիտե ի՛նչ պայմաններում, լուսացնում է ո՞վ գիտե որ ձորում, որ անտառում, օտար երկնքի տակ, ահը միշտ սրտում, մահը միշտ աչքի առաջ, բայց արհամարհելով այդ ահն էլ, այդ մահն էլ...

Աշխենի ջղայնոտությունը սաստկացել էր: Նա խոսում էր զսպված, բայց խոսքերը նրա բերանից դուրս էին թռչում հատու և ուժեղ շեշտերով: Նրա դժգույն դեմքի մկանունքները ձգձգվում էին: Նա արագացրել էր քայլերը և առաջվա նման չէր նայում Եվային:

Իսկ Եվան վեր էր կացել և մնացել էր արձանացած: Նա պարզապես ապշել էր, որովհետև երբեք Աշխենին չէր տեսել այդպես տաքացած: Երբ Աշխենը լռեց, նա դեռ երկար ժամանակ կանգնած էր նույն դրության մեջ, կարծես սպասելով, որ հորեղբոր աղջիկը դեռ պիտի շարունակի իր ասելիքը:

— Աշխեն, լսիր ինչ եմ ասում, — վերջապես ասաց նա, տեսնելով, որ Աշխենն այլևս ոչինչ չի ասում և ջղային քայլերով շարունակում է անցուդարձ անել սենյակի մի անկյունից մյուսը: — Տեսնում եմ, որ մի բան ուզում ես ասել, բայց չես ասում: Միտքդ ի՞նչ է. պարզ և ուղղակի ասա: Դու գիտես, որ ես միշտ հետևում եմ քո խորհուրդներին: Եթե գտնում ես, որ ես պարազիտից և ծախու ձիուց ավելի մի բան չեմ և անարժան քույր եմ եղբորս համար, սովորեցներու, թե ինչով կարող եմ արժանի լինել նրան:

— Միայն դու չես. ես է՛լ անարժան եմ նրան... ե՛ս առավելապես...

— Լավ, ինչո՞վ կարող ենք արժանի լինել նրան:

— Նրանով, որ մենք էլ գնանք նրա ընտրած ճանապարհով:

— Այսի՞նքն:

— Չգիտեմ... Միայն թե այսպես ապրել այլևս անկարելի է: Պետք է ամենից առաջ վերջ տալ այս ձրիակերությանը, պետք է թողնել այս անօգուտ, այս վատ կյանքը, որի մեջ փտում ենք

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

անգործությունից: Պետք է բան անել, պետք է գործ շինել, օգուտ պետք է տալ հենց թեկուզ մեր խղճի հանգստության համար...

— Ես ամեն բանի պատրաստ եմ: Բայց ասա, ի՞նչ անենք, ի՞նչ կարող ենք անել:

Աշխենը հանկարծ կանգ առավ և նայեց Եվային տարօրինակ հայացքով, հետո մոտեցավ և առավ նրա ձեռքերը:

— Ներիր, սիրելիս, եթե մի քիչ խիստ խոսեցի: Բայց ես խոսում էի գլխավորապես իմ մասին: Ինչ վերաբերում է այն բանին, թե ինչ պետք է անենք և ինչ կարող ենք անել, — այդ մասին այս րոպեիս ոչինչ չեմ կարող ասել:
Դեռ չեմ որոշել, դեռ պիտի մտածեմ: Մի բան կա, որ վաղը կվճռվի: Համբերություն ունեցիր մինչև վաղը: Կհամբերե՞ս, հա՞:

Եվան ապշած նայում էր Աշխենի աչքերին, որոնց մեջ ինչ-որ խորհրդավոր բան էր կարդացվում:

— Դու գրգռում ես հետաքրքրությունս, — ասաց նա: — Այս երեկո ուրիշ, շատ ուրիշ տեսակ ես երևում... Շատ լավ, կսպասեմ մինչև վաղը:

Աշխենը ժպտաց և Եվայի փոքրիկ ձեռքերը քնքշությամբ սեղմեց իր կրծքին, կարծես շնորհակալ լինելով, որ համբերություն էր հայտնում մինչև վաղը սպասելու:

14

Հետևյալ օրը, վաղ առավոտյան, Աշխենը մի քանի տող նամակ գրեց և տվեց ծառային, որ շտապով տանի օր. Սահակյանին տա, քանի դեռ նա ուսումնարան գնացած չէր լինիլ: Նամակը հետևյալն էր:

«Սիրելի Վարո.

Ամբողջ գիշեր մտածելով եմ անցկացրել և ահա գրում եմ հետևանքը: Արդյոք հարմար չե՞ս գտնիլ պ. Մինասյանին առաջարկել, որ վարժուհու պաշտոնն ինձ հանձնի իր բացած ուսումնարանում: Շտապով հայտնում եմ քեզ այս մասին, որպեսզի թերևս ավելորդ գտնես ուրիշի հետ պայմանավորվես: Կուզեի, առանց մեր սովորական երեկոյան տեսակցությանը սպասելու, այսօր այս մասին խոսել քեզ հետ ուսումնարանում: Միայն չգիտեմ, այսօր ազատ դաս ունի՞ս, թե ոչ և եթե ունիս՝ ո՞ր ժամին: Գրիր:

Քո Աշխեն»:

Կես ժամիս ծառան վերադարձավ և օր. Սահակյանից բերեց հետևյալ պատասխանը, որ նա շտապով գրել էր Աշխենի նամակի մյուս երեսի վրա.

«Եթե նամակիդ հենց սկզբումը գրած չլինեիր, թե ամբողջ գիշերը մտածելով ես անցկացրել, կկարծեի, թե փառավորապես քնած ես եղել և փառավոր էլ երազ ես տեսել: Բայց և այնպես, արի տեսնենք այդ ի՞նչ սիրուն քամի է փչել գլխիդ: Այսօր ազատ եմ ժամը 11 1/2-ից և 12 1/2-ի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

միջև»: Ժամը 11 1/2 -ից մի քանի րոպե անց Աշխենը բարձրանում էր ուսումնարանի սանդուղքով: Դասարաններից լսվում էր դասամիջոցից հետո հենց նոր ներս մտած աշակերտուհիների սովորական ճիչն ու ծկլթոցը. ուսուցիչներն ու ուսուցչուհիները՝ ցուցակները ձեռքներին, շտապում էին իրենց դասարանները: Ուսուցչուհիներից մի քանիսի հետ ծանոթ լինելով, Աշխենը բարևեց նրանց և նրանցից իմանալով, որ օր. Սահակյանն ուսուցչական սենյակումն է, գնաց նրա մոտ:

Օր. Սահակյանը մենակ էր: Նա նստած էր կապույտ մահուդով ծածկված երկայն սեղանի առաջ, և կաթով սուրճ էր խմում ու լրագիր կարդում:

— Ա՛, եկա՞ր, գյուղական վարժուհի, — բացականչեց նա Աշխենին տեսնելուն պես: — Նստիր տեսնենք ամբողջ գիշերն ինչպես ես մտածել:

Աշխենը ժպտաց և նստեց նրա մոտ:

— Ուրեմն դու վճռել ես ինձ այսօր ազատել կռվելուց:

— Ո՞ւմ հետ:

— Այն վարժուհու, որի հետ պետք է խոսեի այսօր: Աշխենը ծիծաղեց:

— Դե՛հ, խոսի՛ր, խոսի՛ր, — անհամբերությամբ վրա տվեց օր. Սահակյանը, լրագիրը ձգելով սեղանի վրա: — Սուրճ ուզո՞ւմ ես:

— Չէ, շնորհակալ եմ:

— Ես, իհարկե, հասկանում եմ, սիրելիս, թե որտեղից է ծագել վճիռդ, և այդ պատճառով այնքան էլ չեմ զարմանում: Բայց հետաքրքրական է, թե այժմ ի՞նչ պիտի ասես ինձ:

— Առանձին ոչինչ չունեմ ասելու: Միայն այս էի ուզում հարցնել, թե ի՞նչ պետք է անեմ, որ ուսուցչության իրավունք չունեմ:

— Այսինքն, ուզում ես ասել ցանկի մեջ չկա՞ս:

— Այո:

— Այդ դատարկ բան է. մի օրում կարելի է թեմական առաջնորդից իրավունք ձեռք բերել, բայց մի տարվա համար միայն, որովհետև նա մի տարուց ավելի իրավունք տալու իրավունք չունի. իսկ այնուհետև վկայականներդ կուղարկենք Էջմիածին և այնտեղ ցանկի մեջ կմտցնեն:

— Բայց չի՞ ուշանալ առաջնորդից իրավունք ձեռք բերելը:

— Ասացի, որ մի օրում կարելի է: Այդ կողմից անհոգ կաց: Թեմական տեսուչն այստեղ է. ես ինքս կխնդրեմ, որ միջնորդի: Նա ինձ հետ լավ է: Դու ուրիշ բան ասա:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Հետո այս էի ուզում հարցնել: Վարո: Ի՞նչ ես կարծում, ես... կարո՞ղ եմ արդյոք... ծառայել այն գործին, որին վճռել եմ ինձ նվիրել:

— Այդ դու ինձանից ավելի լավ պետք է գիտենաս, սիրելիս, էլ ինձ հարցնելդ ավելորդ չէ՞:

— Չէ: Քեզ հարցնում եմ, որովհետև դու փորձված ես և ճանաչում ես ինձ: Գուցե իմ մեջ կա այնպիսի մի պակասություն, որ ես չեմ տեսնում, բայց դու կարող ես նկատած լինել իբրև դիտող: Ուսուցչությունն առհասարակ ինձ չափից դուրս դժվար և պատասխանատու պաշտոն է ներկայանում, որին չեմ կարող թեթևությամբ վերաբերվել: Այդ պատճառով խիստ անվստահ եմ... վախենում եմ, որ ոչինչ չկարողանամ շինել և ամոթահար մնամ Մինասյանի առաջ: Այդ բանը պարզապես անտանելի կլինի ինձ համար, որովհետև ես հիվանդության չափ ինքնասեր եմ... Ահա այս մասին է, որ Մինասյանին խոսք տալուց առաջ ուզում եմ իմանալ քո կարծիքը:

— Իմ կարծի՞քը: Իսկույն կասեմ, — ասաց օր. Սահակյանը, դատարկելով սուրճի մնացորդը: — Փորձառությունից, իհարկե, շատ բան է կախված, բայց ո՞ր ուսուցիչը կամ ուսուցչուհին կրթական ասպարեզ է մտել հենց սկզբից փորձված: Ոչ ոք: Մեկն էլ դու այդպիսիներից, չնայելով որ ուսուցչական ասպարեզում կարելի է քեզ մասամբ փորձված համարել, քանի որ դու ահա քանի ժամանակ է, որ մասնավոր դասերով ես պարապում, իսկ չէ՞ որ այդ էլ այսպես թե այնպես նշանակություն ունի ապագա գործունեությանդ համար: Այդպե՞ս է, թե ոչ:

— Ճշմարիտ է: Այս րոպեիս հինգ աշակերտուհի ունիմ, որոնց հետ ամեն օր պարապում եմ: Հենց սկզբից ուշադրությունս դարձած է եղել այն բանին, որ նրանց տարբեր ընդունակությունների մեջ մի ընդհանուր գիծ գտնեմ, որպեսզի դրա վրա հիմնված՝ կարելի լինի դասավանդումը բոլորի համար միատեսակ դյուրամատչելի դարձնել: Թեև այդ դեռ չի հաջողվել ինձ, բայց թվում է, թե անկարելի չէ:

— Օ՜, երբ որ այդպես է, դա մեծ նշանակություն ունի, սիրելիս: Հենց այդ ուշադրությունդ միայն, որ մեր, եթե կարելի է այսպես ասել, պաշտոնական վարժուհիների մեջ ճրագով պետք է է որոնենք, ցույց է տալիս, որ դու օրինակելի վարժուհի կարող ես լինել: Վերջապես ուսուցչական պաշտոնին այդպես պատկառանքով և երկյուղածությամբ վերաբերվելդ մի՞թե գրավական չէ, որ պիտի առաջադիմես, որ դու իսկապես գործ պիտի կատարես: Ինքնասիրությունդ էլ, որ ասում ես, դա պակասություն չէ, դա առավելություն է: Ո՞ւր էր, թե մեր վարժուհիներն այնքան ինքնասիրություն ունենային, որ գեթ կարմրեին, երբ տեսուչը նկատում է նրանց. «Օրիորդ, դուք բան չեք շինում», «օրիորդ, դուք միշտ ուշանում եք», «օրիորդ, դուք շուտ — շուտ եք հիվանդանում»: Կրկնում եմ. գիտեմ որտեղից է ծագել վճիռդ և պետք է ասեմ, որ ավելի խելացի կերպով չէիր կարող վարվել: Ինչպիսի՜ եռանդ և ավելի մեծ տոկունություն պիտի ստանա նա, երբ իմանա, որ դու անմիտ և հուսահատ անգործության մեջ չես սպանում ժամանակդ...

Աշխենի աչքերի կոպերը դողդողացին. նա պինդ սեղմեց շրթունքները և դեմքը դարձրեց օր. Սահակյանից:

Օր. Սահակյանը տեսավ այդ և հասկացավ, որ ավելորդ էր հին հիշատակները նորոգել, ուստի շտապեց խոսքը փոխել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ուրեմն այս երեկո կհայտնեմ Մինասյանին քո առաջարկը: Նա, իհա՛րկե, կընդունի ամենայն ուրախությամբ, և՛ վաղվանից կանենք ամեն բան, ինչ որ հարկավոր է:

— Բայց, իհարկե, ռոճիկի մասին ոչինչ չես ասիլ, — ասաց Աշխենը: — Ինչ որ որոշված է, ես նրանով էլ գոհ կլինեմ:

— Գիտեմ, գիտեմ, որ դու «լավ ապրելու» նպատակով չպետք է ծառայես, այս գիտեմ: Բայց դու ինձ այս ասա, սիրելիս. ձերոնց հայտնե՞լ ես վճիռդ:

— Դեռ ոչ:

— Եվ նրանք արգելք չե՞ն լինիլ:

— Չեմ կարծում: Գիտես, որ տանն ինձ բավական հարգում են:

— Գիտեմ, բայց ինչ ուզում է լինի, էլի քիչ ու միչ խորթ կթվա: Հորեղբայրդ — ոչինչ. նա հիվանդ մարդ չէ և շատ էլ բարի է. բայց նրա կինը...

— Նա էլ է ինձ հագում, թեև բծախնդիր է և, կարծեմ... շատ էլ... չի սիրում ինձ: Ասենք նա սահմանափակ և նախապաշարված հասկացողությունների տեր կին է և եթե անհամ խոսքեր ասի, չեմ նեղանալ: Ես վախենում եմ միայն Եվայից. նա ինձ շատ է սիրում և կարող է հիմարություններ անել: Երեկ երեկո մի քիչ նախապատրաստեցի նրան, բայց նա, երևի, մտքովն անգամ չի անցկացնում, որ ես կարող եմ հեռանալ իրենից: Ինչևիցե: հույս ունեմ մերոնց հետ բանը վերջացնելու առանց խոշոր անհարմարությունների և ուրախ եմ, որ վերջապես կարող եմ անկախ դիրք ստեղծել ինձ համար և ինքս իմ աշխատանքով ապրել, որովհետև վաղուց ի վեր ճնշվում եմ այն գիտակցությունից, որ ես մի տեսակ բեռ եմ հորեղբորս համար:

— Մեղք է, Աշխեն, այդ մի ասիր: Հորեղբայրդ...

— Գիտեմ, գիտեմ, որ նա շատ բարի է և իմ կերած մի կտոր հացը նրա համար ոչ մի նշանակություն չունի, բայց ես խոսում եմ իմ հոգեկան դրության մասին: Ես չեմ կարող ուրիշի բարությունը շահագործել, թեկուզ այդ ուրիշը լինի իմ հարազատը: Դա դեմ է իմ խղճին:

— Ինչքա՜ն գոռոզ ես, չնեղանաս, — նկատեց օր. Սահակյանը ծիծաղելով:

— Խո ասացի, որ ես հիվանդության չափ ինքնասեր եմ, էլ դու այդ պակասություն չհամարեցիր, այլ առավելություն, — պատասխանեց Աշխենը ժպտալով և վեր կացավ: — Դե, հիմա ի՞նչ ենք անում:

Օր. Սահակյանը նույնպես վեր կացավ:

— Մեր անելիքը ահա թե ինչ կլինի, — ասաց նա: — Երեկոյան կգաս ինձ մոտ, Մինասյանի հետ երես առ երես կխոսենք ինչ որ հարկավոր է, նրա հետ բանը կվերջացնենք, հետո վաղը կամ ես, կամ նա քեզ հետ միասին կգնանք թեմական տեսչի և առաջնորդի մոտ,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

վկայականներդ կներկայացնենք, ուսուցչության իրավունք կստանանք քեզ համար, հետո մյուս օրը կամ չորրորդ օրը, — այդ քեզնից և Մինասյանից կլինի կախված, — կնստեք երկաթուղի և ճանապարհ կընկնեք: Այս է:

— Խոսքով ի՛նչ հեշտ է շինվում ամեն բան, — ծիծաղեց Աշխենը:

— Անվստահներն են միայն, որ գործով էլ ոչինչ չեն կարողանում շինել: Օր. Սահակյանը մինչև ուսումնարանի բակի դուռը ճանապարհ ձգեց Աշխենին, բակում էլի երկար խոսելով նրա հետ:

15

Այդ գիշեր բավական ուշ էր, որ Աշխենն օր. Սահակյանի տնից վերադարձավ իրենց տուն: Նա մտավ իր սենյակը, շտապով մոտեցավ Եվայի սենյակի դռան, բաց արեց և ներս նայեց:

— Դեռ քնած չե՞ս, Եվա, — հարցրեց ուրախ ձայնով: Եվան նստած էր սեղանի մոտ և լամպի լույսի տակ գլխագրեր էր կարում թաշկինակի վրա:

— Մի քիչ էլ, որ ուշ գայիր, ավելի լավ կանեիր, — ասաց նա չոր — չոր, առանց գլուխը կարի վրայից բարձրացնելու:

— Ի՞նչ անեմ, սիրելիս, ուզում էի վաղ գալ, բայց Վարոն զոռով պահեց ընթրիքի:

Այս ասելով, Աշխենը գլխարկը վերցրեց, վերարկուն հանեց, մտավ Եվայի սենյակը և նստեց նրա մոտ ժպտուն աչքերով: Պարզ երևում էր, որ նա արտասովոր ուրախ տրամադրության մեջ է:

— Ի՞նչ ջանասեր աղջիկ ես. ամենքը քնած են, իսկ դու դեռ նստած կարում ես: Երևի ինձ էիր սպասում, հա՞:

Եվան չպատասխանեց, նա գլուխն ավելի կախեց կարի վրա. նրա կենտրոնացած հայացքից և սառն դեմքից երևում էր, որ նեղացած է Աշխենից:

— Եվ դու չվախեցար այս կեսգիշերին մենակ գալ, — նկատեց նա հանգիստ:

— Ո՞վ ասաց, թե մենակ եմ եղել: Ես ուղեկից ունեի, սիրելիս:

— Չի՞ կարելի իմանալ ով էր ուղեկիցդ:

— Ինչո՞ւ չէ. նա մի գյուղատնտես է, որի հետ այս երկու օրս եմ ծանոթացել Վարոյենց տանը: Դու ճանաչում ես նրան, թեև ամենևին չես տեսել նրան:

Եվան գլուխը բարձրացրեց, զարմացած նայեց Աշխենի ժպտացող աչքերին և նորից գլուխը կախեց կարի վրա, առանց մի խոսք ասելու:

Աշխենը կամաց ծիծաղեց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Սպասիր, այս վաղն էլ կարող ես կարել, — ասաց նա և Եվայի ձեռքից առնելով թաշկինակն ու ասեղը՝ դրեց սեղանի վրա: — Նայիր աչքերիս: Այդպես: Ինչո՞ւ չես հարցնում, թե ով է այդ գյուղատնտեսը:

— Ինչ հարցնեմ, քանի որ ինձնից թաքուն ինչ — որ բաներ ես բռնում այնտեղ, — առաջվա պես չոր — չոր պատասխանեց Եվան և ուզեց վեր կենալ, բայց Աշխենը բռնեց նրա ձեռքերից և պահեց իր տեղում:

— Կաց, մի փախչիր.... և դարձյալ նայիր աչքերիս: Այդպես: Ի՞նչ թաքուն բաներ:

— Ես ի՞նչ գիտեմ: Երեկվա տարօրինակ խոսակցությունդ, այսօր առավոտյան վաղ գնալդ չգիտեմ ուր, այժմ այսպես ուշ վերադառնալդ...

— Եվ դրա համար է, որ այդպես փքվել ես, հա՞:

Եվան հանկարծ մի խիստ շարժում գործեց, և նրա աչքերը փայլեցին զայրագին:

— Լսիր, Աշխեն, եթե դու կշարունակես ինձ դարձյալ չարչարել և այս ոռպեիս չես ասի ամեն բան, աստված է վկա, այնպե՛ս կխռովեմ, այնպե՛ս կխռովեմ, որ այլևս երբեք չեմ խոսիլ քեզ հետ: Լսո՞ւմ ես:

— Աշխենը խոնարհվեց նրա դեմքի վրա, ձեռքերն անցկացրեց նրա թևերի տակով և գրկեց նրա մեջքը:

— Լսում եմ, հոգյակս, լսում եմ: Բայց վախենում եմ, որ եթե բանը հայտնեմ, ավելի պինդ կխռովես:

— Ո՛ւֆ, արդեն անտանելի է.... Չեմ ուզում, էլ ոչինչ մի ասիր:

Եվ Եվան, վերին աստիճանի զայրացած, աշխատեց ազատվել հորեղբոր աղջկա ձեռքերիս, բայց Աշխենը մատները հյուսեց իրար մեջ և թույլ չտվեց, որ վեր կենա:

— Եվա ջան, լսիր, ա՛յ, ասում եմ. լսիր: Ես վճռել եմ գյուղական վարժուհի լինել և մի քանի օրից հետո գնալու եմ գյուղ:

Եվան մի ակնթարթում սառեց նստած տեղը: Նրա աչքերը սաստիկ մեծացան և հառած մնացին Աշխենի շարունակ ժպտող աչքերի վրա:

— Տեսնո՞ւմ ես, ապշեցիր: Այդ սկիզբն է, — ծիծաղեց Աշխենը: — Այժմ լսիր մանրամասնությունները:

Եվ Աշխենը սկսեց մանրամասնորեն պատմել, թե ինչպես ծանոթացավ Մինասյանի հետ, որին ինչպես ինքը, նույնպես և Եվան, արդեն ճանաչում էին նրա գրական երկերից, պատմեց, որ իրենց գյուղում նոր ուսումնարան հիմնելով, Մինասյանը եկել էր օր. Սահակյանի միջոցով վարժուհի ճարելու. թե ինչպես օր. Սահակյանն անհաջողություն էր կրել իր միջնորդության

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

մեջ և թե ինչպես, վերջ ի վերջո, ինքը՝ Աշխենը, վճռել էր հանձն առնել հիշյալ ուսումնարանի վարժուհու պաշտոնը և այնուհետև ընդմիշտ նվիրվել այդ պաշտոնին: Պատմեց նույնպես այդ օր առավոտյան օր. Սահակյանի հետ ունեցած տեսակցությունը, և այն, որ այդ երեկո օր. Սահակյանի տանը խոսակցություն էր ունեցել Մինասյանի հետ. Մինասյանը նրա առաջարկն ընդունել է ջերմ համակրանքով և շնորհակալությամբ խոստացել է վաղն ևեթ աշխատել նրա համար ուսուցչության իրավունք ձեռք բերելու:

— Այդպես ուրեմն, Եվա ջան, երկու կամ, շատ — շատ, երեք օրից հետո մնաս բարյավ կասեմ քեզ և կգնամ այնտեղ, ուր հույս ունիմ գեթ փոքր — ինչ օգտակար լինելու: Վարոն այսօր ինձ խիստ խրախուսեց: Այժմ սպասում եմ քո դատավճռին: Ինչ կասես:

— Ես քեզ ա՛յն կասեմ, որ դու... խելագարվել ես, — ծանր ու հաստատ ձայնով արտասանեց Եվան, առանձնապես շեշտելով վերջին բառը, և աշխատեց իրանն ազատել նրա ձեռքերից:

Բայց Աշխենն ավելի պինդ գրկեց նրա մեջքը և ժպտուն դեմքն այնքան մոտեցրեց նրա դեմքին, որ նրանք զգում էին իրար շնչառությունը:

— Շատ կարելի է, իմ անգին, իմ աննման Եվա, — շշնջաց նա. — բայց մի՞թե այդպիսի խելագարությունն արժանի չէ խրախուսանքի:

— Խելագարությունն առհասարակ կարեկցության է արժանի, — վրա բերեց Եվան, — բայց քո խելագարությունը... Դու չպե՛տք է գնաս, հասկանո՞ւմ ես, թե ոչ, — հանկարծ կանչեց նա բարկությամբ և ոտը պինդ խփեց հատակին: Նրա աչքերի մեջ արտասուքի կաթիլներ ցոլացին:

Աշխենն այս անգամ թողեց նրա իրանը. ժպիտը չքացավ դեմքից:

— Մի՞թե կատակ չես անում, Եվա, — հարցրեց նա զարմացած:

— Ամենևին միտք էլ չունեմ կատակ անելու, քանի որ ինքդ կատակ չես անում:

— Հապա երեկ գիշերվա մեր խոսակցությո՞ւնը...

— Այո՛, երեկ գիշերվա մեր խոսակցությունն այն մասին էր, որ դու փախչես այստեղից, որ ինձ... մենակ թողնես: Դու... դու անգութ ես: Դու ինձ երբեք չես սիրել... այժմ էլ չես սիրում: Այո՛, չես սիրում:

Եվան այլևս չկարողացավ զսպել իրեն, նա դարձավ աթոռի վրա, գրպանից հանեց թաշկինակը, սեղմեց աչքերին և հեկեկաց:

Որքան էլ որ անակնկալ չէր Աշխենի համար Եվայի այդ վարմունքը, այնուամենայնիվ սկզբում նա սառած մնաց:

— Դու ինձ խիստ զարմացնում ես, Եվա: Բոլորովին չեմ հասկանում, թե այդ ի՞նչ բացատրություն ես տալիս վճռիս և ... լաց ես լինում: Դա արդեն երեխայություն է:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Իհարկե, երեխայություն կլինի, քանի որ դու ինձ միշտ երեխա ես համարել: Ուզում ես ինձ հավատացնել, թե սիրում ես ինձ, մինչդեռ, ընդհակառակը, միշտ սառն ես վարվում ինձ հետ... Եվ ոչ միայն ինձ, այլև... հայրիկի հետ... մայրիկի հետ: Կարծես թե օտար լինես մեր տանը, կարծես թե մենք քեզ...

Եվան խոսքը չվերջացրեց և, թաշկինակն ավելի պինդ սեղմելով աչքերին, աշխատեց զսպել սաստկացող հեկեկանքը: Աշխենը դառնությամբ ժպտալով, գլուխը շարժեց:

— Տեսնո՞ւմ ես, Եվա, — ասաց նա իրեն հատուկ հանդարտ ձայնով. — դու ինձ այնպիսի բաներ ես ասում և այնպիսի բաներ ես ուզում ասել, որ... չեմ կարող չվիրավորվել: Հարկ չկա, իհարկե, որ ինքս ինձ պաշտպանեմ, այդ կնշանակեր քեզ իրավունք տալ այդպես բաներ ասելու ինձ: Ես միայն զարմանում եմ, թե ինչպես դու թույլ ես տալիս քեզ այդպիսի մեղադրանքներ բարձելու ինձ վրա:

— Հապա ինչո՞ւ ես փախչում:

— Դե, բավական է կրկնես այդ հիմար խոսքը, — բացականչեց Աշխենը հանկարծական բռնկումով: — Եվ թո՛ղ այդ երեխայական լացն, ի սեր աստծո: Երեկ գիշեր ինչպե՛ս էինք խոսում, այժմ — ինչպե՛ս: Ուրախ — ուրախ եկա քեզ մոտ կատարելապես հավատացած, թե պիտի քաջալերես ինձ, իսկ դու... դու միայն աշխատում ես ինձ վիրավորել:

Եվ Աշխենը սառնությամբ վեր կացավ նրա մոտից: Նույն վայրկյանին վեր թռավ տեղից նաև Եվան:

— Ես քեզ չե՛մ վիրավորում, հասկանո՞ւմ ես, թե ոչ, — զայրացած կանչեց նա: — Այդ դո՛ւ ես, որ այդպիսի բացատրություն ես տալիս խոսքերիս: Դու, իհարկե, ազատ ես. ինչ ուզում ես, կարող ես անել. ուր ուզում ես, կարող ես գնալ: Իսկ ես, իսկ ես... Այսքան տարի միասին ապրելուց հետո հանկարծ թողնում հեռանում ես. Եվ հե՞շտ ես կարծում, ինչ է, ինձ համար քեզնից բաժանվելը: Եղբայրս գնացել է, դու էլ ես գնում, իսկ ես... իսկ ե՞ս ինչ անեմ մենակ: Բուի պես նստեմ գլուխս վա՞յ տամ: Կամ ինձ էլ տար հետդ, կամ այստեղ ճարիր՝ ինչ գործ, որ ուզում ես, միայն թե ես քեզ մոտ լինեմ, դու ինձ մոտ լինես, որովհետև առանց քեզ ես չեմ կարող դիմանալ: Ես ա՛յդ եմ ուզում ասել, և ոչ թե նպատակս է, որ քեզ վիրավորեմ: Եվ մի՞թե իրավունք չունիմ զարմանալու, որ դու, ինչպես տեսնում եմ, միայն քո մասին ես մտածում, իսկ իմ մասին, — ամենևին: Մինչդեռ երեկ գիշեր ի՞նչ էիք խոսում... Հա՛, ժպտա, ժպտա, չէ՞ որ ես երեխա եմ:

Աշխենը ժպտալով մոտեցավ նրան:

— Այո՛, սիրուն, խելացի, մեծ երեխա, որի աչիկները կուզեի այս րոպեիս համբուրել:

— Խնդրեմ, թո՛ղ այդ փաղաքշական խոսքերը, — զայրացած կանչեց Եվան:

— Մի նեղանար, սիրելիս, նեղանալով ու զայրանալով բան չենք հասկացնի իրար: Ավելի լավ է նստենք և հանգիստ խոսենք: Նստիր:

Աշխենը համարյա բռնի կերպով նստեցրեց Եվային և ինքը նստեց նրա մոտ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ամենից առաջ քեզ մի բան ասեմ, Եվա ջան, չնեղանաս: Դու եսասիրության նշաններ ես ցույց տալիս. ուզում ես, որ փեշս փեշիդ կարեմ և չբաժանվեմ քեզնից միմիայն նրա՛ համար, որ առանց ինձ չես կարող դիմանալ: Այդ նշանակում է, որ ես պետք է քեզ համար զոհաբերեմ ոչ թե միայն ինձ, իմ ձգտումները, իմ կամքը, այլև այն գործը, որին հույս ունիմ գեթ մազի չափ օգուտ տալու: Կուզե՞ս, որ այդպիսի բան անեմ: Իհարկե, ոչ: Բացի դրանից մարդուն արդեն խոսք եմ տվել, այժմ մերժե՞մ, և կուզե՞ս, որ մերժեմ: Իհարկե, ոչ: Ասում ես, թե քեզ չեմ սիրում: Կարո՞ղ ես կրկնել այդ խոսքերը ձեռքդ խղճիդ վրա դրած:

Եվան նստած էր լուռ և աչքերը խոնարհած. նա պարզապես ճնշված էր Աշխենի կտրուկ խոսքերի ազդեցության տակ:

— Ինչ վերաբերում է այն բանին, թե ես միայն իմ մասին եմ մտածել և քեզ մոռացել, այդ բանումն էլ սխալվում ես, Եվա ջան: Ինչպե՛ս կարող էի քեզ մոռանալ երեկ գիշերվա խոսակցությունից հետո: Միայն այժմ չթողեցիր, որ քո անելիքի մասին էլ խոսեմ: Դու էլ ես գործ ուզում: Շատ բարի: Ահա՛, թե դու էլ ինչ կարող ես անել: Իմ գնալուց հետո վերցրու իմ աշակերտուհիներին և իմ տեղ դու դաս տուր նրանց: Դու այդ կարող ես, որովհետև թեև փորձված չես, բայց շատ շուտ կարող ես փորձվել, եթե գործին սիրով կպչես, որի մասին տարակույս չունիմ: Նրանք բոլորն էլ, ինչպես գիտես, շատ աղքատ ծնողների զավակներ են, և ես նրանցից ոչ թե միայն ոչինչ չէի առնում, այլև չէի խնայում ունեցածս նրանց տալու: Արա դու նույնը, ինչ որ ես էի անում, և կտեսնես, որ մի բարի գործ կատարած կլինես: Բայց եթե այդ բանը քեզ չնչին է երևում, կարող ես մի ուրիշ շատ օգտակար գործ էլ կատարել: Մենք շատ ծանոթ ընտանիքներ ունենք, որոնց աղջիկները, որոնք քո մոտիկ ընկերուհիներն են, ոչ թե միայն զուրկ են հայկական կրթությունից, այլև հազիվ հայերեն խոսել ու կարդալ գիտեն: Հավաքիր հայությունից խորթացած այդ հարուստ աղջիկներին, շաբաթը մի կամ երկու անգամ գրական երեկույթի պես մի բան սարքիր, կարդա նրանց մոտ հայերեն գրքեր, տուր այդ գրքերից, որ իրենք էլ կարդան, ծանոթացրու նրանց մեզ հուզող ազգային — հասարակական խնդիրների հետ, խոսեցեք, վիճեցեք... մի խոսքով՝ արա ինչ որ կարող ես, որպեսզի օտար ոգով կրթված այդ ապագա հայ մայրերի մեծ հայության, ազգային ինքնաճանաչության կայծ վառվի: Մի սերմ, մի հատիկ սերմ էլ բավական է, որ ձգես նրանց մեջ, և այնուհետև հավատացած եղիր, որ այդ սերմն երբեք ապարդյուն չի անցնիլ: Ինչքան էլ փոքր, աննշան լինի: Դա շատ էլ փոքր գործ չէ, եթե կարողանաս գլուխ բերել: Բայց ես համոզված եմ, որ կարող ես, որովհետև նրանք ամենքն էլ սիրում են քեզ և սիրով էլ կընդունեն քո առաջարկը: Քեզ բավական կնպաստի այն հանգամանքը, որ նրանք տգետ չեն, և վերջին ժամանակներս մեր կյանքում երևան եկած շարժումներն անշուշտ փոքրիշատե հետաքրքրություն են զարթեցրել նրանց մեջ: Այս է իմ կազմած ծրագիրը քեզ համար: Հավանո՞ւմ ես:

Եվան իսկույն չպատասխանեց: Նրա դեմքը խիստ լուրջ արտահայտություն էր ստացել:

— Այդ բոլորը լավ ես մտածել, — ասաց նա: — Միայն... այսպես հանկարծ, այսպես անպատրաստ... Ես ի՞նչ գիտեմ, որ ինչ սովորեցնեմ:

— Ուրեմն դու ինձ չհասկացար, Եվա ջան: Ես խո չեմ ասում, որ կանոնավոր դասընթացներ սարքիր, դասախոսություններ արա: Իհարկե, դու այդ չես կարող անել: Եվ թույլ էլ չեն տալ: Բայց խո կարո՞ղ ես հայերեն պարզ գրել — կարդալ սովորեցնել, խոսել նրանց հետ հայերեն,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

օգնել նրանց իրենց չհասկացածը հասկանալու, ծանոթացնել նրանց մեր գրականության, մեր մամուլի, մեր գործիչների հետ: Վերջապես, գործն ինքը ցույց կտա, թե ինչ կարող ես անել և ինչ պետք է անել: Փառք աստծո, խոսել գիտես և սիրում ես, ինքդ խիստ հետաքրքիր ես և բնատուր ընդունակություն ունիս գրավելու: Սրանք այնպիսի առավելություններ են, որոնցով դու հրաշք կարող ես գործել քո շրջանում: Այժմ հասկացա՞ր ինձ, Եվա ջան:

Եվան նստած էր լուռ: Նրա կենտրոնացած հայացքից երևում էր, որ նրա մտավոր աչքերի առաջ հանկարծ բացվել է մի հորիզոն այնքան ընդարձակ, այնքան նոր ու գրավիչ, որ վախենում է մինչև անգամ հեռու նայել չշշմելու համար: Եվ երբ Աշխենը կրկնեց իր վերջին հարցը, նա ասաց կարծես ինքն իրեն.

— Զարմանալի է, ինչո՞ւ այդ բանն իմ գլխովս չի անցկացել մինչև այժմ: Ես խո այդ կարո՛ղ էի անել:

16

Չնայելով օր. Սահակյանի և Մինասյանի աշխատանքին, այնուամենայնիվ համարյա մի շաբաթ տևեց, մինչև որ Աշխենը ստացավ ուսուցչության իրավունք:

Եվան հորն ու մորը հայտնել էր Աշխենի որոշումը, առանց սպասելու, որ Աշխենն ինքը հայտնե նրանց:

Մարությանը, որ շատ լավ էր ճանաչում եղբոր աղջկա բնավորությունն ու գաղափարները, այնքան էլ չզարմացավ: Բայց Թեկլեն սկզբում ապշեց, հետո խիստ զայրացավ:

— Ինչպե՞ս, — բացականչեց նա. — նա վճռել է ուսուցչուհություն անել և այն էլ գյուղո՛ւմ... Գժվե՞լ է, ի՛նչ է, թե մեզ է ուզում խայտառակել Ով լսի, ի՞նչ կասի: Հացի ու ջրի կարո՞տ է մնացել, որ այդպիսի միջոցների է դիմում: Տուն չունի՞, տեղ չունի՞, չենք պահո՞ւմ, դուրս ենք անո՞ւմ, որ ուզում է վարձկան վարժուհի դառնալ: Տե՛ր աստված, այդ աղջիկը խելքը կորցրել է բոլորովին:

— Բարկանալդ ավելորդ է, Թեկլե, — նկատեց ամուսինը հանգիստ: — Ավելի լավ է...

— Դո՞ւ ինչ ես ասում, չեմ հասկանում, — նրա վրա էլ բարկացավ Թեկլեն: — Օրը ցերեկով ուզում են մեր անունը խաղք ու խայտառակ անել և դու ուզում ես, որ չբարկանամ էլ: Ի՞նչ կասեն, որ էգուց էլօր ամենքը վեր կենան ու ասեն, թե՝ ա՛յ, տեսա՞ք, մի որբ ունեին, չպահեցին, դուրս արին, որ այսօր ստիպված է գյուղերն ընկնել ապրուստի միջոց ճարելու համար: Ես զարմանում եմ, որ դու այդ մասին իսկի չես մտածում:

— Չեն ասիլ, չէ, մի վախենար:

— Չե՛ն ասիլ, չէ՛... որ ասե՞ն:

— Չեն ասիլ, որովհետև ամենքը գիտեն, որ մենք նրան մեր հարազատ որդու պես ենք պահել, և այնքան ճանաչում են նրան, որ կհասկանան, թե ինչու է նա գյուղը գնում վարժուհու պաշտոնով:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ես չեմ հասկանամ, ուրիշը որտեղի՞ց կարող է հասկանալ:

— Ա՛յ, ես քեզ իսկույն կբացատրեմ:

— Հա՛, հիմա դու գնա ուրիշներին էլ բացատրիր, թե բանն այդպես չէ, այլ այսպես է:

Մարությանն այլևս չկարողացավ զսպել իրեն. նա էլ իր հերթին բարկացավ կնոջ վրա:

— Դե, երբ որ այդպես է, — բացականչեց նա, — մեր որդու համար էլ պետք է ասեն է՛լի, թե չկարողացան պահել, դուրս արին, որ գլուխն առավ կորավ:

— Ասում են, բաս չե՞ն ասում:

— Գլուխները քարերով են տալիս, որ ասում են: Այստեղ գործ կա, ձգտում կա, նպատակ կա. ա՞յդ ինչու չեն ասում: Ամենքի ասեկոսեին որ ականջ դնենք, այդ ո՞ւր կգնա:

— Դու այդպես ես ասում, բայց հենց այդ ասեկոսեն է, որ մարդու տուն է քանդում:

— Իսկի էլ չի քանդում: Քեզպեսներն են, որ ասեկոսեներին նշանակություն տալով, կարծում են, թե այս է՝ տունները քանդվեց գնաց: Փոխանակ ուրախանալու և պարծենալու, որ Աշխենի պես լավ ձգտումների տեր մի որբ աղջիկ ես պահել մեծացրել, դու ինչ — որ հիմար ասեկոսեների մասին ես մտածում և ուզում ես արգելք լինել նրա ամենալավ ձգտումներին: Նա մեր անունը բարձրացնում է, և ոչ թե խաղք ու խայտառակ անում:

— Դե, դու որ այդպես ես խոսում, ես էլ ի՞նչ ասեմ, — նկատեց Թեկլեն և, սաստիկ ջզրած, դուրս գնաց, դուռը պինդ շրխկացնելով ետևից:

Եվան, որ մի կողմ քաշված՝ ամենայն ուշադրությամբ լսում էր հոր ու մոր միջև տեղի ունեցող այդ խոսակցությունը, մոր դուրս գնալուց հետո մոտեցավ հորը և լուռ համբուրեց նրան:

Հոր ու մոր միջև տեղի ունեցած այդ խոսակցությունը Եվան պատմեց Աշխենին: Աշխենն ուրախացավ, որ նա իրեն ազատել էր հորեղբորն ու նրա կնոջը իր տալիք ծանր բացատրությունից: Նա տեսավ, որ ամեն ինչ կատարվում էր այնպես, ինչպես կանխատեսել էր ինքը. հորեղբայրը համակրում էր իրեն. նրա կինը հակառակ էր, իսկ Եվայի հետ արդեն վերջացրել էր բանը: Այժմ մնում էր միայն ձևական թույլտվությունը խնդրել Մարության ամուսիններից և Մինասյանի հետ ճանապարհ ընկնել: Բայց այդ ձևական թույլտվությունը խնդրելուց էլ նա ազատ մնաց, որովհետև նույն օրն ևեթ Մարությանը նրա մենակ եղած ժամանակ մտավ նրա սենյակը և ասաց իրեն ոչ — հատուկ լրջությամբ.

— Եվան ասաց, որ վճռել ես վարժուհի լինել և այդ նպատակով գյուղ ես գնում, ճի՞շտ է:

— Այո, հորեղբայր, — պատասխանեց Աշխենն անհամարձակությամբ, մի բան, որ երբեք չէր պատահել Մարությանի հետ խոսելիս: Նա նայեց հորեղբոր լուրջ, մինչև անգամ սառը դեմքին և զգաց, թե հանցավոր է նրա առաջ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Լավ, երբ որ այդպիսի մի բան մտադրում և վճռում էիր, ինչո՞ւ մի անգամ, գեթ ձևի համար, խորհուրդ չհարցրիր մեզնից, — նկատեց Մարությանը, աշխատելով կարելույն չափ մեղմ արտահայտություն տալ իր խոսքերին: — Փառք աստծո, օտար չենք, մեր խորհուրդը եթե օգտակար չլիներ, կարծում եմ, վնասակար էլ չէր լինիլ: Համաձայնիր, որ դա վիրավորական է մեզ համար: Դու վարվել ես այնպես, որ ուզենք, չուզենք, պետք է կարծենք, թե մեզ... բանի տեղ չես դրել:

Աշխենը նկատելի կերպով կարմրեց: — Ներեցեք ինձ, հորեղբայր, — ասաց նա, աչքերը վայր թողած, բայց հանգիստ և հաստատ ձայնով: — Ես կատարելապես զգում եմ, որ այնպես չեմ վարվել, ինչպես հարկն էր, բայց բանի տեղ չդնել... Դուք այդ խոսքերը չպետք է արտասանեիք, հորեղբայր... Այդ շատ ծանր մեղադրանք է ինձ համար...

— Լավ, լավ, մի հուզվիր այդպես: Ես ներողություն եմ խնդրում և ետ եմ վերցնում իմ խոսքերը:

— Ախ, ո՛չ, ինչպե՞ս կարելի է... ես խո այդ չէի՞ ուզում ասել: Ես ուզում էի խնդրել միայն, որ ինձ խնայեք և իզուր չդատապարտեք: Ես, իհարկե, պարտավոր էի մտադրությունս հայտնել ամենից առաջ ձեզ: Բայց եթե մինչև այժմ այդ չեմ արել և խորհուրդ չեմ հարցրել ձեզնից, այդ, — աստվա՛ծ է վկա, հորեղբայր, հավատո՞ւմ եք խոսքիս, — այդ նրա՛ համար է եղել միայն, որ... քաշվում էի ձեզնից, հետաձգում էի, որովհետև ինքս իմ որոշմանս վրա վստահ չէի: Սակայն, իհարկե, վերջ ի վերջո, պետք է հայտնեի, խո չէի կարող գնալ առանց ձեր խորհրդի, առանց ձեր օրհնությունը ստանալու.. չէ՞ որ այս բոպեիս դուք եք իմ ծնողը և անչափ երախտիք ունիք ինձ վրա:

— Ինչևիցե, այդ թողնենք: Այժմ, երբ խոսք է ընկել գնալուդ մասին, կարծում եմ, կարող ես պատմել, ինչ որ հարկավոր է:
Աշխենը հանգստացավ և համառոտ կերպով պատմեց եղելությունը:

Մարությանը մինչև վերջը լսեց նրան լուռ և ուշադիր և, երբ Աշխենը վերջացրեց իր պատմությունը, կարճ ժամանակ մտահոգության մեջ ընկավ, ապա վեր կացավ:

— Ե՞րբ ես գնում, — հարցրեց նա:

— Վաղը:

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես. դու ամեն բան արդեն վերջացրել ես և գնալու ես վաղը, իսկ ես մինչև օրս ոչինչ չգիտեի: Այդպիսի բան կարելի՞ է, քեզ եմ հարցնում: Եվ իրավունք չես տալիս ինձ, որ նեղանամ: Ինչևիցե, այս էլ թողնենք: Երկաթուղով եք գնալու, չէ՞:

— Այո:

— Գիշերվա՞ գնացքով:

— Այո:

— Հետո... ի՞նչ ես տանում հետդ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Դե, ինչ որ ունիմ: Ինձ շատ բան հարկավոր չէ:

Մարությանն այլևս ոչինչ չհարցրեց և ազդվեց դեպի դուռը:

Աշխենը նայեց նրա ետևից, մեքենայաբար մի քանի քայլ առաջ դրեց և կանգ առավ:

— Հորեղբայր, — շշնջաց նա անհամարձակությամբ:

Մարությանն արագ դարձավ դեպի նա:

— Ի՞նչ է. բա՞ն ունիս ասելու:

Աշխենն աչքերը վայր թողեց: Նրա ականջների ծայրերը կարմիր վարդ էին կտրվել:

— Ինձ թվում է, թե... չհաջողվեց ինձ արդարանալ ձեր առաջ:

— Ա՛յ քեզ բան, — բացականչեց Մարությանը զարմացած: — Եթե գիտենայի, որ դու այդ աստիճան կասկածամիտ ես, գի՛ժ էի, ինչ է, որ արտասանեի այն խոսքերը: Ի՛նչ մի մեծ հանցանք ես գործել, որ դեռ արդարանալու էլ կարիք ես զգում. Կնշանակի ինձ դեռ լավ չես ճանաչում, աղջիկս, — ավելացրեց Մարությանը, մոտենալով նրան: — Դու գիտես, որ ես քեզ իմ Եվայից ոչնչով չեմ զանազանել և, բացի դրանից, հարգել եմ քեզ, հարգել եմ քո կամքը, քո ազատությունը, որովհետև գիտեմ, որ դու երեխա չես, որ դու խելոք աղջիկ ես և գիտես, թե ինչ ես անում: Այժմ էլ ամենայն հարգանքով եմ վերաբերվում քո կամքին, քո ազատությանը: Եթե հենց սկզբից ներշնչած չլինեիր ինձ այս հարգանքը, որ տածում եմ դեպի քեզ, և այն համոզումը, որ դու առանց լուրջ կերպով կշռադատելու ոչինչ չես անիլ, — ճիշտը քեզ ասեմ, երբեք թույլ չէի տալ, որ հեռանաս իմ տնից, որովհետև թույլ տուր նկատեմ, որ ծնողների վերահսկողությունն ինչքան էլ որ ծանր թվա որդիներին, այնուամենայնիվ հարկավոր է, շատ անգամ ուղղակի անհրաժեշտ է նույնիսկ իրենց, որդիների համար: Բայց քանի որ այդ հարգանքն ու համոզումը դու մի անգամ ընդմիշտ ներշնչել ես ինձ, ես ավելորդ եմ համարում խառնվել քո գործերին, դու կատարելապես ազատ ես ցանկացածդ անելու: Եթե սկզբում մի քանի ավելորդ խոսքեր ասացի, այդ պետք է վերագրես իմ բարությանը և այն բանին, որ վճիռդ ինձ մի տեսակ հանկարծակիի էր բերել: Այս դեպքում, որ դու վարժուհու պաշտոնով գյուղ ես գնում, ես կարող եմ միայն իմ անկեղծ համակրությունը հայտնել, խրախուսել քեզ, օրհնել ճանապարհդ իբրև հայր և ի սրտե հաջողություն մաղթել գործիդ: Գնա՛, որդիս, գնա՛ այն ճանապարհով, ինչ ճանապարհով, որ գնացել է որդիս, և թող աստված անբաժան լինի քեզնից:

Աշխենը կամաց խոնարհվեց, առավ հորեղբոր ձեռքը և սեղմեց շրթունքներին: Մարությանը զգաց, որ արտասուքի երկու տաք կաթիլ ընկավ իր ձեռքի վրա: Նա թեթև կերպով ցնցվեց, խոնարհվեց, համբուրեց Աշխենի մազերը գագաթի վրա, ձեռքը դուրս քաշեց նրա ձեռքի միջից և շտապով դուրս գնաց, մի տարօրինակ փսփսոց արձակելով քթից:

17

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Գիշերվա ժամը երկուսից անց էր: Մարությանների տանը վաղուց արդեն ամենքը քնած էին: Այդ ժամին Աշխենն էր միայն արթուն: Նա նստած էր իր սենյակում և նամակ էր գրում: Կնոջ գրին հատուկ, բարակ, փոքրիկ, իրարից բաժան — բաժան գրերն արագ — արագ շարվում էին իրար ետևից, լցնելով փոստի թղթի ամբողջ երեսներ: Նա գրում էր համարյա առանց կանգ առնելու, կարծես գրելիքն առաջուց անգիր էր արել: Մազերից մի երկայն, բարակ փունջ կախ էր ընկել թղթի վրա, և ստվերը խաղում էր ձախ ձեռքի վրա, որով պահում էր թուղթը: Նամակը վերջացնելուց հետո ստորագրության տեղը խաչ դրեց, հետո կարդաց սկզբից մինչև վերջը, մի քանի տեղ շտապ գրելուց բառեր էր բաց թողել՝ ավելացրեց, մի քանի տեղ էլ բառեր էր կրկնել՝ ջնջեց, փակեց ծրարի մեջ, հասցեն դրեց և պահեց սեղանի վրա դրված գրքերից մեկի մեջ:

Անկողին մտնելով, իսկույն չկարողացավ քնել, չնայելով որ գիշերից արդեն բավական անցել էր և ինքն էլ այդ օրը շատ հոգնած էր զգում իրեն: Նա գտնվում էր այն սովորական անհանգիստ դրության մեջ, որի մեջ լինում է նա՛, որին կյանքի նոր եղանակ, նոր ասպարեզ է սպասում, որը շուտով պիտի թողնի իր ծննդավայրը, տունը, տեղը, ծանոթ ու սրտակից անձերը և առաջին անգամ պիտի գնա ուրիշ անծանոթ տեղ, ուր մարդիկ և իրեր ներկայանում են երևակայության ստեղծած ուրույն կերպարանքով: Ինչ — որ թախիծ էր զգում սրտի մեջ, անորոշ, ծանր թախիծ, ինչպես ա՛յն մարդը, որ իր ամբողջ էությամբ ձգտում է ինչ — որ անհասկանալի և անորակելի երջանկության, բայց միևնույն ժամանակ համոզված է, որ այդ երջանկությունը անհասանելի ցնորք է միայն: Նա դեմքը թաղեց բարձի մեջ, և նրա մտքերը կենտրոնացան այն անձի վրա, որի ձեռքը պիտի հասներ նամակը: Երբեք այդ անձի պատկերը չէր ներկայացել նրա աչքերի առաջ այնպես վառ ու կենդանի, ինչպես այժմ: Նա մտքում կրկնում էր նամակի այն կտորները, որոնք անմիջական զեղումն էին այն վառ զգացմունքի, որ նա այնքան ժամանակ զսպում էր հուսահատական տանջանքով:

Լուսադեմին հազիվ կարողացավ քնել: Քունը շատ անհանգիստ էր: Ուղեղը դեռևս շարունակում էր գործել, ինչպես ձգված լար, որը, մի անգամ ուժգին շարժվելուց հետո, դեռ երկար ժամանակ ցնցվում, դողդողում է, չկարողանալով միանգամից հանգստանալ: Նամակի բառերը շարվում էին նրա ուղեղի մեջ անկապ, անորոշ, տանջող կերպով:

Չնայելով որ ուշ քնեց, բայց և այնպես վեր կացավ սովորականից վաղ. պետք է գնար օր. Սահակյանի մոտ իր ուղևորության մասին մի քանի կարևոր բան հարցնելու. շտապում էր, որպեսզի օր. Սահակյանին տանը գտնի, այլապես հազիվ թե այդ օրը այլևս ժամանակ ունենար նրան առանձին տեսնելու, որովհետև ճանապարհի պատրաստություններ պիտի տեսներ:

Տանը դեռևս ամենքը քնած էին: Աշխենը շտապով լվացվեց, հագնվեց, առավ գիշերը գրած նամակը, որպեսզի օր. Սահակյանի մոտից վերադառնալիս ձեռքով փոստ ձգի և դուրս գնաց:

Նրա գնալուց մի քառորդ ժամ հետո ցավագար աչքերով ծառան, երբ երկար խոզանակը ձեռքին ավլում էր նախասենյակի սանդուղքը, փողոցի դռան մոտ նամակի մի ծրար գտավ: Վերցրեց ծրարը, դես շուռ տվեց, դեն շուռ տվեց, նայեց վրան գրված հասցեին և, որովհետև կարդալ չգիտեր, բան չհասկացավ: Նա զարմացավ միայն, թե ինչու փոստային ցրիչը ծրարը չէր ձգել նամակների և լրագրերի համար դռան վրա շինված արկղիկը, ինչպես անում էր միշտ, այլ ներս էր ձգել դռան ճեղքից: Սակայն դուռը դիտելով տեսավ, որ չկար այնպիսի մի ճեղք, որտեղից կարելի լիներ ներս ձգել այնքան հաստ ծրարը, ուստի այդ բանի վրա էլ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

զարմացավ: Նորից մանրամասնորեն զննեց դռան չորս բոլորքը և, վերջապես, այն եզրակացության եկավ, որ ծրարը կարող էր ներս ձգված լինել դռան տակից, որովհետև այդտեղ կես մատնաչափ բացվածք էր մնում: Զարմանքը փարատելուց հետո ծրարը ծոցը դրեց և շարունակեց սանդուղքն ավլել:

Որովհետև այդ օրը, ըստ սովորականին, հորից ու մորից վաղ վեր էր կացել Եվան, ուստի ծառան գտած նամակը նրան հանձնեց, հայտնելով, թե որտեղ էր գտել:

Եվան նայեց հասցեին և իսկույն ճանաչեց Աշխենի գիրը: Նամակն ուղղված էր իր եղբորը՝ Արմենակին: Ծառայից իմանալով, որ Աշխենը դուրս է գնացել վաղ առավոտյան, իսկույն գլխի ընկավ, որ ծրարը պատահմամբ ընկել է նրա գրպանից:

Այս դեպքը չափազանց զարմացրեց Եվային: Նա գիտեր, որ Աշխենը երբեք իր կողմից առանձնապես նամակ չէր գրել Արմենակին: Մարությանների կողմից հեռացած որդուն հաճախակի գնացող նամակները սովորաբար գրում էր կամ ինքը՝ Մարությանը, կամ Եվան, — առավելապես վերջինս, — իսկ ընտանիքի մյուս անդամներն իրենց կողմից մի քանի խոսքով բարևներ էին ավելացնում իրենց ստորագրությամբ, այնպես որ այդ նամակներն ընդհանուր բնավորություն ունենալով հանդերձ, բովանդակությունն էլ հայտնի էր լինում ամենքին: Այս հանգամանքն ի նկատի ունենալով, Եվային խիստ անախորժ թվաց Աշխենի ծածկամտությունը, որը նա պարզ կերպով տեսնում էր թե գտնված նամակի փակ ծրարից և թե այն բանից, որ Աշխենը չէր հայտնել, թե ինքը նամակ է գրելու կամ արդեն գրել է Արմենակին և, ինչպես երևում է, ամենևին չպետք է էլ հայտներ, որովհետև պարզ է, որ նամակը գրել է ծածուկ և վերցրել է հետը, որ փոստը ձգի, հատկապես դրա համար դուրս գալով տնից այն ժամանակ, երբ ամենքը քնած են եղել: Բայց ի՞նչ է գրել նամակի մեջ, որ կամեցել է ծածուկ պահել: Այս հարցն ահագին հետաքրքրություն զարթեցրեց Եվայի մեջ այն աստիճան, որ քիչ մնաց ծրարը պատռեր և նամակը կարդար: Հազար ու մի կասկածներ անցան նրա գլխով, մեկը մյուսի ետևից վատ, հուզող և գրգռող:

18

Լսվեց զանգակի և ապա զգուշավոր քայլերի ձայն: Եվան իմացավ, որ Աշխենն է: Այդ միջոցին նա սանրում էր մազերը: Էլ չսպասեց, որ վերջացնի, անհամբերությամբ դեն շպրտեց սանրը, շտապով առավ նամակի ծրարը և դուրս գնաց հորեղբոր աղջկա սենյակը:

Երբ նա մտավ, Աշխենը շտապով և նկատելի անհանգստությամբ ինչ — որ բան էր որոնում գրասեղանի վրա դարսված գրքերի մեջ: Եվային տեսնելուն պես ցնցվեց և իր շտապ ու անհանգիստ որոնումը դանդաղեցրեց:

Եվան տեսավ այդ և առաջ չգնաց: Կարճ ժամանակ լուռ ու փորձող հայացքով նայեց Աշխենին, հետո հարցրեց ծանր ու հանգիստ ձայնով,

— Այդպես վաղ ո՞ւր էիր գնացել:

— Ուզում էի գնալ Վարոյի մոտ:

— Ուզո՞ւմ էիր գնալ... Չգնացի՞ր:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ո՛չ: Կես — ճանապարհից ետ դարձա: — Ինչո՞ւ:

— Որովհետև... նա ինձ մոտ մի գիրք ունի, մոռացել էի, որ հետո վերցնեմ իրեն տալու... չգիտեմ որտեղ եմ դրել...

Եվան ոչինչ չասաց: Նրա վրա վատ տպավորություն գործեց այն հանգամանքը, որ Աշխենը սուտ էր խոսում, որ Վարոն նրա մոտ ոչ մի գիրք չուներ և նա ամենևին գրքի համար չէր եկել:

Ինքն՝ Աշխենը, առանց նրան նայելու, միմիայն նրա լռությունից զգաց, որ նա հասկացավ իր սուտը, և կարմրեց:

— Ես քեզ այսո՛ր, ա՛յս առավոտ միայն ճանաչեցի, Աշխեն, — վերջապես ասաց Եվան զսպված ձայնով: — Դու ծածկամիտ և... ստախոս ես:

Աշխենի շառագունած դեմքը մի ակնթարթում դժգունեց և նորից, բայց առաջվանից ավելի շառագունեց:

— Ե՞ս, — շշնջաց նա և մինչև անգամ աշխատեց ցույց տալ, թե խիստ զարմացած է:

— Այո՛, դո՛ւ, — շեշտեց Եվան և համարձակ հայացքը ձգեց նրա վրա: — Ինչո՞ւ ուղիղ չես ասում, որ ա՛յս նամակն ես կորցրել և սրա՛ համար է, որ կես — ճանապարհից ետ ես դարձել:

Եվ, գրպանից հանելով ծրարը, ձգեց սեղանի վրա:

Աշխենը մեքենայաբար վրա ընկավ նամակին: Մի ակնթարթում նրա դեմքը մեռելի գույն ստացավ: Նայեց ծրարին և տեսնելով, որ փակ է, ազատ շունչ քաշեց:

— Ճիշտ չէ՞. այդ նամակի համար չէ՞, որ ետ ես եկել, — հարցրեց Եվան ուշի — ուշով հետևելով նրա դեմքի փոփոխություններին:

— Այո:

— Ուրեմն սուտ չէի՞ր խոսում, թե գրքի համար ես ետ եկել:

— Սուտ էի ասում:

— Ինչո՞ւ:

Աշխենը չպատասխանեց: Նա չէր նայում Եվային:

— Որովհետև չէիր ուզում, որ իմանայի, թե այդպիսի նամակ ես գրել եղբորս, չկարծելով, որ այդ նամակն իմ ձեռքին է, այնպե՞ս չէ: — Ուրեմն բա՞ց ես արել, — հազիվ լսելի ձայնով շշնջաց Աշխենը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Տեսնում ես, որ փակ է: Ինչպես որ ծառան դռան մոտ գտել և հանձնել է ինձ, այնպես էլ քեզ եմ դարձնում:

— Հապա ինչո՞ւ ես ասում այդպիսի նամակ:

— Հապա ինչո՞ւ դու այդպես այլայլվում ես:

Աշխենը նկատելի տանջանքով դեմքը շրջեց Եվային:

— Եվա, ասա միանգամից, ինչ որ ասելու ես. տեսնում ես՝ տանջվում եմ:

— Իսկ ինչո՞ւ ես տանջվում: Որովհետև զգում ես, որ մեղավոր ես, չէ՞. որովհետև ինքդ էլ հասկանում ես, որ գրածդ... զրպարտություն է, չէ՞:

Աշխենը տարակուսանքով նայեց Եվայի զայրացկոտությունից վառվող աչքերին:

— Զրպարտությո՞ւն:

— Այո՛, զրպարտություն, — շեշտեց Եվան, ձայնը բարձրացնելով: — Ի՞նչ է. չլինի՞թե ուզում ես ուրանալ, որ զրպարտություն չես գրում այդ նամակի մեջ:

— Ի՞նչ զրպարտություն, Եվա... ո՞ւմ մասին:

— Մե՛ր մասին:

— Ձեր մասի՞ն...

— Այո՛, մե՛ր մասին՝ հայրիկի մասին, մայրիկի մասին, վերջապես ի՛մ մասին:

Աշխենն ապշությունից մինչև անգամ ժպտաց:

— Ի՞նչ ես ասում, Եվա...

— Ի՞նչ է, սուտ է՞, որ այդ նամակի մեջ չես զանգատվում, թե մենք ճնշում, նեղում ենք քեզ, թե ամեն րոպե երեսովդ ենք տալիս մեր բարերարությունը, և դրանից է, որ փախչում ես...

— Աստված է վկա, Եվա, դու գժվել ես այսօր:

— Ես չեմ գժվել, այլ ճշմարտությունն եմ ասում: Եթե դու լավ աղջիկ ես, եթե որևէ բանի համար նեղացած ես մեզնից, ուղղակի մեզ կհայտնեիր դժգոհությունդ, և ոչ թե զրպարտություններ գրելով կաշխատեիր Արմենակին կռվեցնել մեզ հետ:

— Եվա, այդ դո՞ւ ես... այդ հիմարությունները դո՞ւ ես ասում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Մենք քեզ ոչինչ չենք արել: Մենք մինչև անգամ ամեն կերպ աշխատել ենք քեզ հետ վարվել այնպես, որ դու ամենևին չզգաս, թե մեր տանն ապրում ես իբրև բարերարված մի որբ, իսկ դու... Դու վատ աղջիկ ես... Դու... դու ապերախտ ես...

— Դե, բավական է, Եվա, — աղաղակեց Աշխենը ծանր վիրավորանքի հանկարծական բռնկումով, և նրա աչքերը փայլեցին կատաղի զայրացկոտությամբ: — Ինչպե՞ս ես համարձակվում ինձ այդպիսի բաներ ասել.. Հիմա՛ր, կոպի՛տ, անտա՛շ: Ի՞նչ է նշանակում բարերարված որբ... Ի՞նչ է նշանակում ապերախտ... Հասկանո՞ւմ ես այդ բառերի իմաստը... մտածո՞ւմ ես, թե որքան վիրավորական է այդ ինձ համար... Այդ բառերը, որ մտքովդ անցնում են, ինչպե՞ս լեզուդ զոռում է արտասանել... Ես խո կմորթեի ինձ, եթե առաջուց իմանայի, որ ինձ վրա այդպիսի աչքով եք նայում... Ես կգնայի՝ մուրացկանություն կանեի փողոցում և, եթե քաղցած մեռնելիս լինեի, ձեր հացը կուտեի միմիայն նրա՛ համար, որ խեղդվեի... Ա՛խ, Եվա, Եվա, այս ինչե՛ր ես ասեցնել տալիս ինձ, այս ինչե՛ր ես ասեցնել տալիս, — հառաչեց Աշխենը և, նստելով սեղանի մոտ, գլուխը սեղմեց ձեռքերի մեջ անտանելի տանջանքով:

Եվան տեղնուտեղը ցամաքել էր: Պարզ երևում էր, որ ամենևին չէր սպասում, թե իր խոսքերը կարող են այդպիսի փոթորիկ առաջ բերել: Նա ուզեց խոսել, արդարացնել իրեն, բայց խոսելու տեղը հանկարծ լաց եղավ:

Աշխենը նայեց նրան տարակուսանքով, ուսերը վեր քաշեց և գլուխը նորից սեղմեց ձեռքերի մեջ:

— Հապա ինչո՞ւ նամակդ ծածուկ էիր պահում, — ասաց Եվան հեծկլտալով, թաշկինակն աչքերին սեղմած:

— Որ գաղտնի էի պահում, նշանակում է, թե զրպարտություննե՞ր եմ գրել ձեր մասին, և դու իրավո՞ւնք ունիս ինձ վիրավորելու, — նկատեց Աշխենն այս անգամ հանգիստ ձայնով:

— Մեղավո՞ր եմ, որ ծածկամտությանդ համար այդ ենթադրությունն եմ արել:

— Շատ վա՛տ ես արել: Մեծ հիմարություն ես արել: Ինչո՞ւ հակառակ ենթադրություն չէիր անում. չէ՞ որ ձեզնից շնորհակալ լինելուս և ձեզ գովելու դեպքումն էլ համեստությունս չէր թույլ տալ ինձ, որ նամակս ցույց տայի ձեզ: Ինչ որ հաստատ հայտնի չէ, անպատճառ պետք է վատ մտքո՞վ բացատրել:

Աշխենը խոսում էր հանգիստ, բայց վերին աստիճանի դառնացած: Եվան դադարել էր հեծկլտալուց և մնացել էր արձանացած: Նա լիովին զգում էր իր հանցանքը, ամաչում էր և չէր իմանում ինչպես անի, որ ուղղի իր սխալը:

Աշխենը հանկարծ վեր կացավ, ուղղեց գլխարկը, նամակը գրպանը կոխեց և դիմեց դեպի դուռը, առանց մի խոսք անգամ արտասանելու:

Եվան անհամարձակորեն նայեց նրա ետևից:

— Դու գնո՞ւմ ես, — հարցրեց կամաց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Այո:

— Ո՞ւր:

— Վարոյի մոտ:

— Սպասիր մի րոպե:

Աշխենը կանգ առավ դռան մոտ:

— Բա՞ն ունիս ասելու:

— Այո:

— Ի՞նչ:

Եվան իսկույն չպատասխանեց: Նայում էր հատակին և թաշկինակը ճմռում էր ձեռքին:

— Խի՞ստ վիրավորվեցիր ինձնից, — հարցրեց վերջապես: Աշխենը զարմացած դարձավ դեպի նա:

— Դեռ հարցնո՞ւմ ես: Կյանքիս մեջ ոչ ոք չի վիրավորել ինձ այնպես, ինչպես դու:

— Եթե ներողություն խնդրեմ...

— Ի՞նչ օգուտ, երբ որ արդեն փշրեցիր սիրտս:

— Ուրեմն... ուրեմն այս գիշեր խռովա՞ծ պիտի բաժանվես ինձնից:

— Ինչո՞ւ խռոված, երեխա՞ եմ, ինչ է: Բայց քեզ հետ այսուհետև շատ խիստ կվարվեմ, որպեսզի ինձ հարգես:

Եվան հանկարծ զայրացած ոտը պինդ խփեց հատակին: Արձակ մազերից մի երկայն փունջ թռավ ուսի վրայից և ընկավ կրծքի վրա:

— Ես քեզ չե՞մ հարգում, որ այդպես ես խոսում, — բացականչեց արտասուքն աչքերին: — Խո հասկանում ես, որ վիրավորեցի անգիտակցաբար. վիրավորեցի իմ հիմարությունից և զղջում եմ: Ուրիշ ի՞նչ ես ուզում:

— Ես ուզում եմ, որ սովորես նախ լավ մտածել և ապա ասել այն, ինչ որ ուզում ես ասել:

— Այսուհետև այդպես կանեմ, հիմա՞:

— Վախենում եմ, որ այդպես չանես, եթե խիստ չվարվեմ քեզ հետ:

Եվան զսպած զայրացկոտությամբ դեմքը դարձրեց նրանից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Գնա՛, լավ. այլևս հարկավոր չէ քո ներումը, քանի որ, ինչպես երևում է, ընդունակություն չունիս անկեղծությունը հասկանալու, — ասաց՝ կրծքի վրա ընկած մազերի փունջը բարկացած ետ ձգելով: — Դու պեդանտ ես, և ես զարմանում եմ ինձ վրա, թե ինչպե՞ս կարողացել եմ քեզ այսքան սիրել, քանի որ մեր բնավորություններն այսքան հակառակ են իրար, և դու կարծես զոռով աշխատում ես, որ քեզ ոչ ոք չսիրի: Մի՞թե չես հասկանում, որ քո մի հասարակ, քաղցր խոսքն այս րոպեիս ավելի ազդու և խրատական կարող էր լինել ինձ համար, քան թե այդ սառն, հպարտ վարմունքը: Եվ այդպիսի չորացած սրտով ուզում ես նվիրել քեզ մի գործի, որին ծառայելու համար ջերմ զգացում, վառ սեր, փափուկ սիրտ է հարկավոր...

Նա լռեց վիրավորված հպարտությամբ, հեռացավ դեպի լուսամուտը և, նայելով դեպի դուրս, սկսեց հյուսել արձակ մազերն արագ — արագ և մեքենայաբար: Երկար ժամանակ լռություն տիրեց:

Եվան սպասում էր, թե Աշխենը կխոսի, բայց Աշխենի ձայնը չէր լսվում: Ոչ միայն այդ, այլև ոչ մի բանից չէր երևում, թե նա ներկա է սենյակում: Եվային թվաց, թե նա գնացել է, բայց, ետ նայելով, զարմանքով տեսավ, որ նա կանգնած է դռան մոտ, արձանի նման և նայում է իրեն խիստ օտարոտի հայացքով: Այդ հայացքն այլևս առաջվա սառն, հպարտ հայացքը չէր, այլ ինչ — որ անակնկալ հայտնություն գտած և այդ հայտնագործությունից ապշած մի հայացք, որ ուղղված է դեպի ներս, դեպի սեփական հոգու խորքը:

— Գնա, էլի՛, ի՞նչ ես կանգնել, — նկատեց Եվան, ավելի ու ավելի զարմանալով:

Աշխենը դարձյալ մի րոպե նայեց նրան նույն հայացքով, հետո մեքենայաբար նստեց հենց այնտեղ, դռան մոտ դրված աթոռի վրա և տեղնուտեղը սառեց: Այս անգամ նա թույլ կերպով վայր թողած ձեռքերով, հատակին հառած մտախոհ հայացքով և անշարժ դրությամբ նմանում էր անմխիթար մի սգավորի:

Եվան կատարելապես ապշել էր: Նա չէր հասկանում, թե հանկարծ ինչ մի հեղաշրջում էր կատարվել հորեղբոր աղջկա մեջ, որ նրան այդպես կերպարանափոխել էր: Նա այլևս չէր համարձակվում ձայն հանել և լռած աչքերով նայում էր Աշխենին սպասողական դրության մեջ:

— Չորացած սրտով... չորացած սրտով, — վերջապես արտասանեց Աշխենը շատ կամաց, մտքով ինքն իր մեջ կենտրոնացած: — Դու իրավունք ունիս... Սրտիս ըմբռնողությունը չորացել, բթացել, անզգա է դարձել... Այո՛, իրավունք ունիս ինձ հանդիմանելու, որ քեզ իսկույն չհասկացա...

Նա ձեռքը ձգեց աթոռի միջովը և աչքերը պինդ սեղմեց կռան վրա:

— Բայց մեղավորը ես չեմ, այլ... այն դժբախտ հանգամանքը, որ այսպես ավերել, ծերացրել է սիրտս...

Նրա ձայնն արագորեն խլացավ և հանկարծ կտրվեց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվային թվաց, թե արտասուքը խեղդում է նրան, և նա մեծ ջանք է գործ դնում, որ չհեկեկա: Նա մեքենայաբար մի քանի քայլ առաջ գնաց, բայց հանկարծ կանգ առավ փշաքաղվելով. Աշխենի նիհարած ուսերը և մեջքը ցնցվում էին ջղաձգաբար: Եվ նորից առաջ վազեց:

— Աշխեն ջա՛ն... դու լալիս ես, — արտասանեց, չոքելով հորեղբոր աղջկա առաջ և քնքշությամբ գրկելով նրա ծնկները: Այս անգամ Աշխենի ամբողջ մարմինը ցնցվեց: Նա աչքերն ավելի պինդ սեղմեց կռան վրա, բայց և այնպես զսպած հեկեկանքը, կարծես կուրծքը պատռելով, դուրս ժայթքեց նրա սեղմած բերանից:

Եվան այս անգամ ուղղակի կպավ նրա ծնկներին, և նրա աչքերը լցվեցին խոշոր արցունքով:

— Աշխեն ջան, մի՞թե քեզ դարձյալ վիրավորեցի... Հա՞, վիրավորեցի՞: Բայց չէ՞ որ ես հիմար եմ, և մի՞թե արժե նեղանալ ինձնից: Աղաչում եմ, մի՛ լար... Բավական է... Աստված է վկա, ես երբե՛ք, երբեք չեմ վիրավորել քեզ... Դե, բավական է, ասում եմ... Աշխեն ջան, լսո՞ւմ ես:

Աշխենը նստեց ուղիղ, երկու ձեռքով պինդ փաթաթվեց Եվայի վզովը, և գլուխը կպցրեց նրա գլխին:

— Ինչո՞ւ ես կարծում, թե ես նրա համար եմ լալիս, որ դու վիրավորել ես ինձ, — խեղդող հեկեկանքի միջից արտասանեց նա: — Ո՛չ, ո՛չ: Եվա ջան: Ես լալիս եմ, որովհետև այլևս չեմ կարող չլալ... լալիս եմ, որովհետև այս արցունքը վաղուց է, որ ծանրացել է սրտիս վրա. դու միայն առիթ եղար, որ այլևս չկարողացա զսպել ինձ... Որ գիտենաս, թե ինքս իմ մեջ կենտրոնացած, ամենքից, այո՛, ամենքից, նույնիսկ քեզնից ծածուկ հոգեկան ինչպիսի տանջանքներ եմ կրել ես... Ինչպիսի՛ դառն, ինչպիսի՛ սպանիչ թախիծ շարունակ կրծել է սիրտս... Ամեն րոպե, ամեն վայրկյան ստիպված եմ եղել ճնշել, մեռցնել մանուկ սրտիս բաղձանքները, վառ երևակայությանս թռիչքը... Գիտակցությունս անողոք դահիճի պես շարունակ ջախջախել է իմ մեջ ա՛յն, ինչ որ կյանքի հետ մի անգամ է միայն տրվում մարդու... Այդ է պատճառը, որ ես հոգով ու սրտով այդպես չորացել, այդպիսի անհյութ ու անալի արարած եմ դարձել... Քո մանուկ սիրտն է միայն, որ կարողացել է այդպիսի սիրով կապված մնալ ինձ հետ... Աշխենը դադարեց հեկեկալուց, արագ շարժումով թողեց Եվայի վիզը և բռնեց նրա ձեռքերից: Արտասուքից կարմրած աչքերը ներքին հուր և միևնույն ժամանակ սաստիկ տանջանք էին արտահայտում: Նա, կարծես, տենդի մեջ էր: — Լսի՛ր, Եվա, — շարունակեց նա ձայնն այնպես ցածրացնելով, որ համարյա շշնջում էր: — Լսիր. քեզնից այլևս չեմ կարող թաքցնել: Ես սիրում եմ քո եղբորը... սիրում եմ ոչ այնպես, ինչպես որ դու մինչև այժմ կարծել ես... Նա էլ ինձ է սիրում... Մենք բաժանվեցինք իրարից, որովհետև մեր միացումն անկարելի էր... Նա հեռացավ... Ես էլ հեռանում եմ... Մի ամբողջ տարի, տարուց էլ ավելի է, որ մենք իրար հետ առանձնապես ո՛չ մի հաղորդակցություն չենք ունեցել, որովհետև խոսք ենք տվել իրար մոռանալ... Բայց այդ հեշտ չէ, այդ անկարելի է... Գոնե ես չեմ կարողացել մոռանալ նրան և չեմ կարող... Գիշեր — ցերեկ, ամեն ժամ, ամեն րոպե, չնայելով ինքս ինձ զսպելուն, ամբողջ սրտովս, ամբողջ էությամբս դեպի նա եմ ձգտել... Կարոտը, սաստիկ կարոտն անասելի տանջանք է պատճառել ինձ... Իսկ երեկ գիշեր այդ կարոտն այն աստիճան հասավ, որ չկարողացա խոստումնազանց չլինել և գրեցի այդ նամակը, որ այսօր քո ձեռքն է ընկել... Ճշմարիտ է, այդ նամակն ուզում էի ինչպես ամենքից, այնպես և քեզնից ծածուկ պահել, որովհետև... ա՛խ, Եվա, իմ անգի՛ն Եվա, մի՞թե կուզեի քեզ կորցնել, մի՞թե կուզեի, որ սառեիր ինձնից, մի՞թե կուզեի, որ ուրիշ աչքով նայեիր ինձ, չէ՞ որ այդ մահ կլիներ ինձ համար, թեև, երդվում եմ արևով, այն՝ ինչ որ տածում եմ դեպի քո եղբայրը, սուրբ է, սրբությունից էլ բարձր

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

և այդպես էլ կմեռնի, եթե միայն կմեռնի... հանցավո՞ր եմ արդյոք այդ սիրո մեջ և այն բանում, որ աշխատել եմ այդ սերը ծածուկ պահել քեզնից, չգիտեմ, քո դատաստանին եմ ապավինում, բայց... Նա խոսքը չվերջացրեց և դեմքը ծածկեց ձեռքերով: Եվան՝ ինչպես որ չորած էր նրա առաջ, այնպես էլ մնացել էր արձանացած: Աշխենի խոստովանությունն այնքան անակնկալ, այնքան հեռու էր նրա մտքից, որ նրան թվում է, թե երազումն է: Նրա դեմքը սառել, աչքերը չռած էին մնացել անմիտ արտահայտությամբ:

— Նամակի մեջ գրում եմ այն, ինչ որ այժմ հայտնեցի քեզ, — շշնջաց Աշխենը, ձեռքերը դեմքից չհեռացնելով: — Հայտնում եմ, որ գնում եմ գյուղը և խորհրդածություններ են առհասարակ կնոջ և մասնավորապես իմ ապագայի գործունեության մասին: Ուզում ես, տամ կարդա:

Եվան վեր կացավ նրա առջևից և մեքենայաբար թափ տվեց փեշերը:

— Ոչ, ի՞նչ հարկավոր է, — ասաց սառած ձայնով:

— Որպեսզի չկասկածես:

— Ոչ, հարկավոր չէ, — կրկնեց Եվան և հանգիստ քայլերով դիմեց դեպի իր սենյակի դուռը:

Աշխենը արագությամբ վեր կացավ, ուզեց բան ասել, բայց նորից ընկավ աթոռի վրա և դեմքը նորից ծածկեց ձեռքերով:

Եվան, առանց ետ նայելու, նույն հանգիստ քայլերով դուրս գնաց և դուռը կամաց ետ դրեց իր ետևից:

19

Եվայի առաջ իր խոստովանությունն անելով, Աշխենը կարծում էր, թե պիտի թեթևանա երկար ժամանակից ի վեր իր սրտի վրա ծանրացած գաղտնիքը, բայց ընդհակառակը — նրա տանջանքների վրա նոր տանջանք ավելացավ: Տեսնելով, առավելապես զգալով անկարեկից սառնությունը, որով Եվան ընդունեց իր խոստովանությունը, նրան թվաց, թե անդառնալի կերպով կորցրեց մի թանկագին բան. կորցրեց իր հեղինակությանը Եվայի առաջ, կորցրեց նրա սիրտը, կորցրեց նույնիսկ նրա հետ ունեցած ազգակցական բարոյական կապը: Այժմ նա լիովին զգաց, որ վերին աստիճանի կեղծ պիտի լինի իր դրությունն այդ տան մեջ և ապրել այնտեղ այլևս անհնարին կլինի իր համար: Նրան մխիթարում էր այն հանգամանքը միայն, որ այդ գիշեր պետք է հեռանար:

Աղախինը մտավ և ասաց, որ նրան սպասում են թեյ խմելու:

Ոչ թեյի ախորժակ ուներ, ոչ էլ ցանկություն Մարությանների մոտ գնալու: Երկյուղի և ամոթի նման մի անդիմադրելի զգացում ստիպում էր նրան խույս տալ Մարությանների աչքին երևալուց: Թեև ամենևին չէր կարծում, թե Եվան այնքան հիմար կլինի գտնված, որ իր խոստովանությունը հայտնած կլինի ծնողներին, այնուամենայնիվ նրան թվում էր, թե ամբողջ տունն արդեն իմացել է իր գաղտնիքը, և ամենքը խիստ թշնամական աչքով պիտի նայեն իրեն: Այդ ծանր տեսակցությունից գեթ առժամանակ ազատ մնալու համար ուրախությամբ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

կգնար օր.Սահակյանի մոտ, եթե արդեն ուշ չլիներ: Բայց սենյակում փակվելն էլ միտք չուներ, դրանով կարող էր կասկածի առիթ տալ: Ուստի գլխարկը վերցրեց, վերարկուն հանեց և դուրս գնաց դեպի սեղանատուն, աշխատելով ընդունել իր սովորական անտարբերությունը, որը, սակայն, այս անգամ հուսահատական համարձակության էր նմանում:

Սեղանի վրա քլթքլթում էր փոքրիկ մաքուր հեշտաեռը: Թեկլեն արդեն լցրել էր թեյի բաժակները և ջուր էր ավելացնում թեյնոցի մեջ: Նրա մոտ նստած էր փոքրիկ Սուրենը և մեղր ու կարագով հաց էր ուտում: Եվան նստած էր սեղանի ծայրին և այդ օրվա լրագիրը սեղանի վրա փռած ամբողջ մարմնով խոնարհվել էր նրա վրա: Մարությանը խալաթը հագին, նստած էր հեռու լուսամուտի մոտ և նույն օրվա մի ուրիշ լրագիր էր կարդում:

Ներս մտնելով, Աշխենը սովորական բարևը տվեց Մարության ամուսիններին և նստեց Եվայի դիմաց, սեղանի հակառակ ծայրին, ուր նստում էր միշտ: Եվան մինչև անգամ գլուխը չբարձրացրեց լրագրի վրայից: Նրա դեմքը դժգույն էր և վերին աստիճանի խաղաղ: Աշխենը նայեց նրան և այն կենտրոնացած հայացքից, որ նա հառել էր լրագրի վրա մի կետի, հասկացավ, որ նա ոչ միայն չի կարդում, այլև չի տեսնում իր առաջ փռած լրագիրը:

Մարությանը ձեռքին բռնած լրագիրը ծալեց, դրեց լուսամուտի տախտակի վրա և, աթոռը հետը վերցնելով, գնաց նստեց սեղանի մոտ, կնոջ դիմաց: Նա անմիջապես խոսք բաց արեց Աշխենի ուղևորության մասին և ավելորդ չհամարեց մի քանի խորհուրդ տալ նրան մի առանձին լրջությամբ, ինչպես առհասարակ խոսում էր եղբոր աղջկա հետ: Նա ցավ հայտնեց, որ գործերի խառն դրության պատճառով չի կարող ուղեկցել Աշխենին, թեև շատ է հոգում նրա ապահով կերպով տեղ հասնելու համար:

Աշխենը շնորհակալություն հայտնեց և հանգստացրեց նրան, ասելով, որ նրա ուղեկցությունն ավելորդ է, քանի որ ինքը մենակ չի գնում:

Այնինչ Թեկլեն զսպած դժգոհությամբ մի քանի նկատողություններ արեց Աշխենին և ուզում էր շարունակել, բայց ամուսինը մեղմությամբ սաստեց նրան, և Թեկլեն այլևս ոչինչ չասաց և մինչև վերջը, իբրև բողոքի ցույց, լռություն պահպանեց համառորեն և վիրավորված:

Իսկ Եվան ամենևին ձայն չէր հանում: Լրագիրը շպրտել էր հարևան աթոռի վրա և մեջքից խոնարհված, գլուխը կախ՝ խպշտում էր թեյը, առանց բաժակը բարձրացնելու: Աշխենն ամբողջ ժամանակ երկյուղով դիտում էր նրան և չտեսավ, որ նա գեթ մի անգամ նայեր իրեն:

Հազիվ թեյը վերջացնելով, Աշխենը քաշվեց իր սենյակը: Երկար ժամանակ անցուդարձ էր անում ծանր մտատանջության մեջ, հետո արագ մոտեցավ վառարանին, որ հենց նոր վառել էր ծառան, գրպանից հանեց նամակը և շպրտեց բոցերի մեջ:

Նույն րոպեին դուռը կամաց բացվեց:

Նա դողաց և արագ դարձավ դռան կողմը:

Շեմքում կանգնած էր Եվան և անշարժ, համարյա անզգա հայացքով նայում էր ծրարին, որը կրակի բոցերի մեջ ծանր կերպով կարմրեց, սևացավ, ծայրերից ոլորվեց և ապա բոցավառվեց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Այն նամակն էր, — ասաց Աշխենը, կարծես պաշտպանելով իրեն մի բանի դեմ:

Եվան հայացքը նրա վրա դարձրեց:

— Ինչո՞ւ այրեցիր:

— Այրեցի, որովհետև... այդ նամակը եղավ պատճառը, որ իմ ու քո միջև բացվեց այս... անդունդը:

— Ի՞նչ անդունդ:

— Չգիտեմ, բայց ինձ թվում է, ես զգում եմ, որ մեր միջև արդեն ինչ — որ անդունդ է բացվել... թվում է, թե ես արդեն օտար և ատելի եմ քեզ համար: Չէ՞ որ դու արդեն գիտես, որ եղբորդ հեռանալու, իր ընտանիքից, իր հարազատներից անջատվելու գլխավոր պատճառն ես եմ, է՛ս, որ այդ բանից հետո դեռ երես եմ ունեցել ձեր խնամքը վայելելու...
Աշխենի ձայնը հնչում էր խաղաղ. նա այդպես խոսում էր, ամենևին միտք չունենալով, թե ուզում է իրեն վիրավորված ցույց տալ կամ վիրավորել:

Եվան ոտը ներս դրեց շեմքից, դուռը փակեց և, արագ քայլերով մոտենալով Աշխենին, կանգ առավ ուղղակի նրա առաջ:

— Լռիր, Աշխեն, — համարյա շնչասպառ շշնջաց նա: — Այդ դո՞ւ ես այդպես մտածում, թե քեզ թվում է, թե՞ դու համոզված ես, որ է՛ս եմ այդպես մտածում:

Աշխենը դեմքը դարձրեց նրանից:

— Դու ես այդպես մտածում... Եվ կատարյալ իրավունք ունիս...

— Իրա՞վ, իրա՞վ. դու այդպե՞ս ես համոզված: Աշխենն իսկույն չպատասխանեց:

Եվան սպասում էր անհամբեր:

Հապա ինչո՞ւ, որ խոստովանեցի, այնպես սառեցիր, — վերջապես արտասանեց Աշխենը, և նրա ձայնը դողաց: — Ինչո՞ւ մի խոսք, կարեկցության, սփոփանքի մի խոսք անգամ չասացիր...

— Չասացի, որովհետև... ի՞նչ կարող էի ասել, — արագ վրա բերեց Եվան: — Չասացի, որովհետև... հիմա էլ, մինչև այժմ էլ ինձ թվում է, թե երազումս եմ... մի՞թե ինքդ չես հասկանում, որ խոստովանությունդ ուրիշ կերպ չէր կարող ազդել ինձ: Չէ՞ որ այդ նորություն էր ինձ համար, անսպասելի, աներևակայելի, անկարելի նորություն... Եղբայրս և դո՞ւ... Ինչպե՞ս, ե՞րբ, մի՞թե... Բայց ինքդ ասացիր, որ այդ իրողություն է... Ի՞նչ կարող եմ ասել... Իրավո՞ւնք ունեիմ խառնվելու... Ո՛չ, այդ չեմ թույլ տալ ինձ և չեմ էլ կարող... և չեմ էլ ուզում.... Տեսնում ես, բացատրություն, մանրամասնություն էլ չեմ պահանջում, որովհետև... չեմ ուզում, որովհետև գիտեմ, որ այդ ծանր պետք է լինի քեզ համար և... ինձ համար... Բայց այդ դեռ իրավունք չի տալիս քեզ մեր միջև անդունդ տեսնելու: Այո՛, դու իրավունք չունիս, լսո՞ւմ ես, իրավունք չունիս, իմ տեղ վատ-վատ բաներ մտածելու քո մասին: Հենց այս առավոտ, փոքր-

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ինչ առաջ էր, որ դու սաստիկ նեղացար ինձնից, թե ինչո՞ւ թույլ էի տվել ինձ քո տեղ վատ բաներ մտածելու մեր մասին: Այժմ խո ես է՞լ իրավունք ունիմ նեղանալու քեզնից: Ասա, ունի՞մ, թե ոչ:

— Ունիս, ունիս, — շշնջաց Աշխենը, տեսնելով, որ զգացումների և կասկածների տարօրինակ խառնաշփոթությունից կորցրել է իր առաջվա սառնասրտությունը, լոգիկան, բոլոր քաջությունը:

Եվան առավ նրա ձեռքերը:

— Ա՜խ, Աշխե՛ն, քույրի՛կս, — ասաց զգացված, — իզուր ես կարծում, թե ես այլևս առաջվա Եվան չեմ, քո՛ Եվան, և իզուր ես կարծում, թե այսուհետև օտար ես ինձ համար, և ես ատում եմ քեզ: Ատե՞լ... Ես մինչև անգամ չեմ կարող հասկանալ, թե ինչպե՛ս և ի՛նչ բանի համար կարելի է ատել: Ես սիրել միայն կարող եմ, չափից դուրս սիրել և դրանից է, որ քեզ այսօր այնքան տհաճություն պատճառեցի: Զգացողությունս այնքան նուրբ է, որ ամեն մի արտասովոր երևույթ ցնցում է ամբողջ էությունս: Նույնը պատահեց և այսօր: Բայց երբե՛ք, երբե՛ք մի կարծիր, թե խոստովանությունդ վատ տպավորություն է թողել ինձ վրա: Ընդհակառակը. ես հետզհետե զգում եմ, որ դու և եղբայրս սաստիկ բարձրանում եք իմ աչքում, այնքա՛ն բարձրանում, որ մինչև անգամ նախանձում եմ ձեր հոգու քաջությանը: Զգում եմ, որ եթե ուրիշը լիներ ձեր տեղը, դյուրությամբ կարող էր հանցանք գործել: Բայց դուք այդպիսի բան չեք արել, որովհետև վատ կլիներ, որ անեիք, որովհետև սաստիկ կդժբախտացնեիք հայրիկին, մայրիկին, ինձ և վերջը կզգայիք, որ դուք էլ դժբախտ եք: Դու ճանաչում ես ինձ, Աշխեն. գիտես, որ եթե ես մի բան ասում եմ, ուղղակի սրտիցս, հոգուցս եմ ասում, մի բան, որ ասում եմ, ասում եմ ո՛չ թե նրա համար, որ այդպես եմ մտածում, այլ նրա համար, որ այդպես եմ զգում: Առավելությո՞ւն է այս, թե՞ թերություն, — չգիտեմ. միայն գիտեմ, որ լոկ չոր ուղեղով մարդը կարող է միևնույն բանին հազար ու մի իրար հակառակ բացատրություններ տալ. մինչդեռ զգացմունքը — սիրտը մի բան միայն կարող է թելադրել, մի անկեղծ բան — միակ ճշմարտությունը: Չոր ուղեղով որքա՛ն բացատրություններ կարելի է տալ այն հանգամանքին, որ դու և եղբայրս ձեր դժբախտ սերը զոհել եք ժողովրդի բարօրությանը: Չոր ուղեղով, օրինակ, կարելի է ձեզ և հերոս ներկայացնել ձեր առաքինության համար, և ստրուկ նախապաշարումների: Չոր ուղեղով կարելի է և գրոշի արժեք չտալ ձեր զոհաբերությանը, որովհետև այդպես դատողը կասի, որ ձեր զոհաբերությունն ինքնաբուխ չէ, այլ կեղծ, բռնի, ճարահատյալ, հետևաբար և ապարդյուն: Այո՛, չոր ուղեղով ամեն կերպ կարելի է դատել, բայց ես... օ՜, աստված չանե, որ երբևիցե չոր ուղեղն իշխե իմ մեջ: Ամենամեծ դժբախտությունն ինձ համար այն օրը կլինի, երբ ես դադարեմ սրտով մտածելուց: Այժմ, որ գիտեմ, թե ինչու միշտ այնպես տխուր, միշտ այնպես մտախոհ էիր լինում. թե ինչու միշտ այնպես զսպված էիր պահում քեզ, միշտ քաշված և երբեք սրտանց չէիր ուրախանում. այս առավոտ, որ աչքովս տեսա, թե ինչպիսի հուսահատություն էր տիրել քեզ, — այդ բոլորը տեսնելուց և հասկանալուց հետո ինչպե՞ս կարող եմ ամբողջ հոգովս չմիանալ քեզ հետ և չզգալ միևնույնը, ինչ որ դու ես զգացել և զգում...

Աշխենի աչքերը լցվել էին արցունքով: Նա ուզում էր խոսել, բայց բուկը կարծես հուպ էին տալիս:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Որ գիտենաս, — արտասանեց արտասուքը կուլ տալով, — որ գիտենաս, Եվա... որքա՜ն մխիթարեցին ինձ խոսքերդ... Չեմ կարող բառերով արտահայտել... Ես հիացած եմ... ես երջանիկ եմ...

Եվան քնքշորեն գրկեց նրա նիհար իրանը:

— Եղբայրս վաղուց է գնացել, դու էլ այս գիշեր ես գնում, — անհուն սիրով և տխրությամբ շշնջաց նա: — Մինչև այժմ աղոթում էի միայն եղբորս համար, այսուհետև կաղոթեմ և քե՛զ համար: Իսկ երբ վերադառնաս, այն ժամանակ... ա՜խ, ինչպիսի՜ կարոտով կսեղմեմ քեզ կրծքիս...

Եվ Եվան դեմքը սեղմեց Աշխենի կրծքին:

Աշխենը պինդ գրկեց նրա գլուխը:

Սենյակում խուլ հեկեկանքի ձայներ լսվեցին:

20

Չնայելով որ Շահյանն ինքն էր Մինասյանին հրավիրել հյուրանոցից իր մոտ տեղափոխվելու, բայց և այնպես ընկերոջ ներկայությունն իրենց տանը շատ էլ հաճելի չէր նրա համար: Նա սովոր էր միայնակեցության, իսկ ընկերոջ ներկայությունը ճնշող դրության մեջ էր դրել նրան, թեև Մինասյանը իր գործերի ետևից ընկած, գրեթե ամբողջ օրը դուրսն էր անցկացնում և գալիս էր միայն գիշերները՝ քնելու: Շահյանը չէր սիրում Մինասյանին, թեև նրա մեջ ատելի ոչինչ չէր գտնում: Թերևս դրա պատճառն այն էր, որ այդ եռանդուն, այդ գործունյա երիտասարդի մեջ կենդանի նախատինք էր տեսնում իր անշարժության, իր անպետքության համար, մանավանդ որ Մինասյանը, տեղն ընկած ժամանակ, չէր քաշվում նրա ինքնասիրությունը վիրավորող կծու-հեգնական խոսքեր ասել նրան բարեկամորեն: Ի ներքուստ Շահյանը սաստիկ վիրավորվում էր այդ կշտամբանքներից, բայց, զգալով իր թոլությունը, լռությամբ համաձայնում էր ընկերոջ նկատողություններին և այդ պատճառով ավելի ևս նվաստանում էր ինքն իր աչքում:

Մինասյանից իմանալով, որ նրա գտած վարժուհին Աշխենն է, Շահյանը սկզբում խիստ զարմացավ, հետո ինչ-որ օտարոտի մի թախիծ պաշարեց նրան: Արդեն ծանոթ լինելով Աշխենի հայացքներին, նա հասկանում էր, որ այդ օտարոտի աղջիկն իր ամեն կերպ ապահովված ու հանգիստ կյանքը զոհում էր գյուղական վարժուհու չարքաշ կյանքին նրա համար, որ իր ուժերին չափ ծառայած լինի ուրիշի բարօրության օգտին: Դա նոր առիթ էր Շահյանի համար նորից իր սեփական ապիկար անձի դառն քննությանը դառնալու և այնքան ավելի զորեղ առիթ, որքան պատճառը մի աղջիկ էր հանդիսանում: Նա իրեն շրջապատված էր տեսնում վեհ նպատակների համար անձնական թանկ զոհողություններ անող անձերով, մինչդեռ ինքը փտում էր սենյակի չորս պատերի մեջ, ժամանակը սպանելով Շոպենհաուերի փիլիսոփայության վերաբերյալ շատ տեղ չհասկացած մի գրվածքի թարգմանության վրա: Շահյանի թախիծն ավելի ևս սաստկանում էր, իր աչքում նա ավելի ևս չնչին, անպետք և ողորմելի արարած էր ներկայանում, երբ Մինասյանը սկսում էր խոսել Աշխենի մասին հիացմունքով:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մինասյանի և Աշխենի ուղևորության օրը Շահյանն ընկերոջը ճանապարհ դնելու համար ամենևին ցանկություն չուներ երկաթուղու կայարան գնալու, որովհետև առաջուց զգում էր, որ այդ գիշերվա հրաժեշտի ողջույնները մի անջնջելի դառնություն պիտի թողնեին իր առանց այն էլ դառն սրտի վրա: Եվ, որպեսզի պատրվակ ունենար ընկերական այդ սովորական պարտականության անկատար թողնելն արդարացնելու, ուզեց պատճառ բերել հոր հիվանդությունը, որը վերջին օրերը, հիրավի, վտանգավոր բնավորություն էր ստացել, բայց, աստված գիտե ինչ բանից, ամաչեց և գնաց:

Գնացքը մեկնելուց մի ժամ առաջ Մինասյանն ու Շահյանն արդեն կայարանումն էին: Կայարանի դահլիճներում փոքր առ փոքր սկսում էր խռնվել ուղևոր, ճանապարհ դնող և ճանապարհորդներ սպասող սովորական բազմալեզու և բազմատարազ հասարակությունը: Դասական բոլոր պիտույքները մի արկղի մեջ մեխած՝ Մինասյանը հանձնել էր ապրանքների մասը և, ընկերոջը թողած, ինչ-որ հին բարեկամ էր գտել, որի հետ սկսել էր մի երկար ու բարակ խոսակցություն: Շահյանը կանգնած էր մենակ և նախանձով դիտում էր Մինասյանին, որ իր պարզ վարվեցողությամբ, իր հասարակ, մինչև անգամ անճոռնի հագուստի մեջ ակամա համակրանք գրավող ինչ-որ ինքնուրույն բան էր ներկայացնում:

Շատ չանցավ, երևաց Մարությանը, մի փոքրիկ բարձ կռան տակն առած: Նա ներս մտավ շտապով մի բեռնակրի հետ, որ շալակած էր Աշխենի իրերը: Նրա ետևից մտան Թեկլեն, Եվան, Աշխենը և օր. Սահակյանը:

Շահյանը թեև տեսավ նրանց, բայց ցույց տվեց, թե չտեսավ և կամաց հեռու քաշվեց: Մինչդեռ Մինասյանը, Աշխենին և օր.Սահակյանին տեսնելուն պես (մյուսներին դեռ չէր ճանաչում), շտապով սեղմեց բարեկամի ձեռքը, որի հետ խոսում էր, և ընդառաջ գնաց նրանց:

— Դուք արդեն այստե՞ղ եք, — բացականչեց օր.Սահակյանը:

Այդ բացականչության վրա Մարությանը հանկարծ կանգ առավ և հետաքրքրությամբ նայեց Մինասյանին:

— Պարոն Մարության, ահա՛ պարոն Մինասյանը, խնդրեմ, ծանոթացեք:

Մինասյանը շտապով մոտեցավ Մարությանին և հարգանքով սեղմեց նրա ձեռքը:

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, — մեքենայաբար արտասանեց Մարությանը, հետաքրքիր հայացքը չհեռացնելով Մինասյանի թուխ դեմքից:

Այնուհետև օր.Սահակյանը Մինասյանին ներկայացրեց Թեկլեին և Եվային:

Թեկլեն խիստ թթված դեմքով, կարծես բարկացած, նայեց Մինասյանին և չկամենալով ձեռքը մեկնեց նրան:

Իսկ Եվան, ապուշ կտրածի պես անշարժ հայացքով, ձեռքը դրեց նրա ձեռքի մեջ, թույլ տալով, որ նա սեղմի: Նրա աչքերը կարմրել և ուռել էին.երևում էր, որ նա լաց էր եղել և շատ էր լաց եղել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, — կրկնեց Մարությանը բարձը մյուս կռան տակն առնելով և շարունակելով դիտել Մինասյանի դեմքը: — Ուրեմն դուք եք պարոն Մինասյանը: Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, որ ծանոթանում ենք: Ես կարդացել եմ ձեր գրվածքները: Շատ գեղեցիկ են, հիանալի են:

Այդ միջոցին Շահյանը մոտեցավ նրանց:

— Ա՛, մեր հին բարեկամն էլ այստեղ է: — բացականչեց Մարությանը: — Ի՞նչ եք շինում այստեղ:

— Եկել եմ ընկերոջս ճանապարհ դնելու, — ասաց Շահյանը ժպտալով և ընդհանուր բարև տվեց ամենքին:

— Այդ ի՞նչ ընկեր է:

— Այս պարոնը, — ասաց Շահյանը, ցույց տալով Մինասյանին:

Մարությանը արագ նայեց Մինասյանին, հետո՝ դարձյալ Շահյանին:

— Մի՞թե դուք ընկեր եք իրար, — հարցրեց նա զարմացած:

— Եվ հին ընկերներ, — նկատեց Մինասյանը ժպտալով:

— Ա՛յ քեզ նորություն: Լավ, երբ որ այդպես էր, ինչո՞ւ մի անգամ միասին չեկաք մեզ մոտ: Քան թե այստեղ ենք ծանոթանում, հազիր մեր տանը կծանոթանայինք և ժամանակ էլ կունենայինք խոսելու: Բայց մեղքը ձերը չէ, իհարկե, մեղքը նախ օր. Սահակյանինն է, որ հարկ է համարել այս բանը սարքելու առանց մեր գիտության, այս մասին մենք արդեն բավական կռվել ենք իրար հետ. — հետո մեղավոր է պարոն Շահյանը, որը չեմ իմանում ինչու խռովել է մեզնից և այլևս չի գալիս մեր տուն:

Շահյանը փորձեց իրեն պաշտպանել:

— Ինչևիցե. այդ մասին ես ուրիշ ժամանակ կկռվեմ ձեզ հետ, — վրա բերեց Մարությանը: — Իսկ այժմ գնամ տեսնեմ ինչ արին մեր նոր վարժուհու իրեղենները:

Եվ Մարությանը շտապեց դեպի բազաժի բաժանմունքը:

Նրա բացակայության ժամանակ Մինասյանը օր. Սահակյանին ծանոթացրեց Շահյանի հետ: Օր. Սահակյանն իր նոր ծանոթի ակնոցներին նայեց այնպիսի համառ հետաքրքրությամբ, որ Շահյանը հասկացավ, թե նա առաջուց արդեն լսել է և շատ էլ լավ գաղափար չի կազմել իր մասին:

Մի քառորդ ժամից ամենքը նստած հին դահլիճում, մի սեղանի շուրջ բոլորած, և Մարությանը երիտասարդական աշխույժով հյուրասիրում էր սեղանակիցներին արտասահմանի գարեջրով:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Խմեցեք, խմեցեք, այս մեր ճանապարհորդների կենացն է, — ասում էր նա: — Պարոն Մինասյան, ձեր կենացը: Ափսոս, հազար ափսոս, որ նոր ենք ծանոթանում: Ցանկանում եմ ձեր սկսած գործին կատարյալ աջողություն և հարատևություն: Ապրիք, լավ գործ եք սկսել: Աշխեն, քո կենացը: Բարի ճանապարհ և բարի վերադարձ: Ցանկանում եմ, որ մեզ նամակի կարոտ չթողնես: Ի նկատի ունեցիր, որ մեր ուշքն ու միտքը միշտ քո կողմը կլինի: Եվա ջան, վերցրու բաժակդ:

Եվան վերցրեց բաժակը, հազիվ կպցրեց շրթունքներին և վայր դրեց:

Նույնն արեցին և մյուսները, բացի Մինասյանից, որը, շնորհակալություն հայտնելով, դատարկեց բաժակը: Բայց ամենքը լուռ էին:

— Այս ի՞նչ է, միայն ե՞ս էի պարտավոր բարի ճանապարհ մաղթելու, — նկատեց Մարությանը զարմացած և դարձավ օր. Սահակյանին: — Օրիորդ, որտե՞ղ է ձեր լեզուն:

— Ես ցույց կտայի ձեզ լեզուս, եթե անքաղաքավարություն չլիներ այդ, — ծիծաղեց օր. Սահակյանը:

— Օհո՛, այդ լավ բան ասացիք: Ինձ վրա լեզու հանել հարկավոր չէ. ես ուզում եմ, որ դուք խոսեք:

— Այդ բանը պահանջեցեք ձեր աղջկանից: Տեսեք ինչպես է նստած:

— Եվայի՞ց... Եվայից ես միայն մի բան կարող եմ պահանջել, որը, ասենք, առանց իմ պահանջելու էլ կանի — մի քիչ էլ լաց լինել:

Եվան, առանց կատակի, հոնքերը կիտեց և դեմքը բարկացած շրջեց հորից:

— Լավ, էլ ինչո՞ւ ես ինձ վրա բարկանում, — նկատեց հայրը, — բարկացիր Աշխենի վրա:

Աշխենը, որ նստած էր Եվայի մոտ, թեքվեց դեպի նա և շշնջաց նրա ականջին:

— Եվա, ինչո՞ւ ես ինձ այսպիսի անհարմար դրության մեջ դնում:

Եվան ոչինչ չասաց, թաշկինակը հանեց և ծայրով սրբեց աչքերից դուրս ցայտած արտասուքը:

— Չասացի՞, չասացի՞, — բացականչեց Մարությանը և ծիծաղեց: — Մի բան ասեմ, պարոններ. կա՞ արդյոք աշխարհիս երեսին մի ուրիշ տեղ, ուր այնքան շատ արտասուքներ լինին թափվում, որքան երկաթուղիների կայարաններում, նավամատույցներում և առհասարակ այն տեղերում, ուր մարդիկ բաժանվում են իրարից: Եվ ի՞նչ բան է հրաժեշտի ժամը, որ այսքան ծանր տպավորություն է թողնում մարդու վրա: Ինչևիցե, փիլիսոփայություններ անելու ժամանակ չէ: Խմենք մի բաժակ էլ: Գիտե՞ք՝ ում կենացն եմ ուզում խմել, պարոն Մինասյան: Ուզում եմ խմել իմ մեծ որդուս կենացը, որը...

— Ի դեպ, — վրա բերեց Մինասյանը: — Օր. Սահակյանից այսօր միայն իմացա, որ Արմենակ Մարությանը ձեր որդին է եղել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Դուք ճանաչո՞ւմ եք նրան:

— Ես նրա հետ ծանոթացել եմ Լայպցիգում, ուսանողական մի ժողովում:

— Սպասեցեք: Մի՞թե դուք եղել եք Գերմանիայում, — հարցրեց Մարությանը զարմացած:

— Ես գյուղատնտեսությունը սովորել եմ Ֆրանսիայում, բայց Գերմանիայումն էլ եմ եղել:

— Ա՛յ քեզ բան, — բացականչեց Մարությանը կատարելապես ապշած, դիտելով Մինասյանի արտաքինը: — Իսկ ես կարծում էի, թե դուք ձեր գյուղից դուրս աշխարհ չեք տեսել, որովհետև մեզանում տեսնված բա՞ն է միթե գնալ Եվրոպա և վերադառնալ առանց ցիլինդրի և ձեռնոցների:

— Ես կարծում եմ, որ այդ բանում ձեզ ինձնից առաջ պիտի համոզեր ձեր որդին, — նկատեց Մինասյանը ժպտալով:

Մարությանը լրջորեն բռնեց նրա թևից, արմունկից բարձր, և, մտքով նրա կողմը, հայացքը կենտրոնացրեց Աշխենի վրա:

— Բանն այն է, բարեկամ, — ասաց նա, — որ որդուս մինչև այժմ բացառություն էի համարում, իսկ այժմ տեսնում եմ, որ այդ բացառությունն իր երկվորյակն ունի և այդ երկվորակը ճարել է իր երրորդյակը, — եթե կարելի է այսպես ասել, — թեև բոլորովին ուրիշ, բայց նույնքան հանրօգուտ ասպարեզում... Ասում եք՝ Գերմանիա յում էլ եք եղել: Ես ինքս եղել եմ Գերմանիայում, երբ որդիս ուսանող ժամանակ հիվանդացել էր: Իմ որդին... Գիտե՞ք դուք այժմ որտեղ է նա:

— Օր. Սահակյանը պատմեց:

— Լա՞վ է արել, թե ոչ:

— Նրա արածը պատիվ է բերում նրան և ձեզ:

— Ես կարծում եմ: Գոնե ես, իբրև հայր, պարծենում եմ նրանով: Հա՛յ գիդի հա՛, որ հիշում եմ նրա հետ ունեցած վիճաբանություններս... Նրա՛ կենացը, պարոն Մինասյան: Նրա կենացի հետ միասին խմում եմ և ձեր կենացը: Գուցե ձեր և որդուս արածը չնչին բան է, բայց եթե մեր բոլոր կարող երիտասարդներից ամեն մեկը մի-մի այդպիսի չնչին բան աներ, որպիսի՛ հսկայական գործ դուրս կգար վերջը... բաժակները խփենք իրար: Ա՛խ, ինչքան նեղանում եմ, որ այստեղ ենք միայն ծանոթանում...

21

Դուրսը, ընդարձակ պլատֆորմի ծածկոցի տակ, խուլ արձագանք տալով, լսվեց զանգի զրնգզրնգոցը: Դա նշան էր, թե գնացքը դուրս է եկել մերձակա կայարանից:

Եվան ցնցվեց և անզգա հայացքով նայեց շուրջը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Դահլիճում իրարանցում ընկավ:

Մինասյանը շտապով վեր կացավ:

— Ներեցեք, — ասաց, — պետք է տոմսակ վերցնել:

— Սպասեցեք, ի՞նչ եք շտապում, դեռ ժամանակ շատ կա, — պահեց նրան Մարությանը և նստեցրեց իր տեղում, իսկ ինքը վեր կացավ: — Նստեցեք, ես իսկույն գալիս եմ: Օրիորդ, — դիմեց նա օր. Սահակյանին, — խնդրում եմ, մի թողնեք, որ Եվան այդպես նորահարսի պես նստած մնա:

Եվ նա շտապով հեռացավ:

Եվան բարկացկոտ հայացքով նայեց նրա ետևից:

Օր. Սահակյանը նայեց նրա դեմքին և ծիծաղեց:

— Լսեցի՞ր, ինչ ասաց հայրդ, ուրեմն խոսիր, — ասաց նա: Եվան այս անգամ հանգիստ հայացքով նայեց օր. Սահակյանին և դարձյալ լուռ մնաց:

— Լավ, ինչո՞ւ չես խոսում:

— Ի՞նչ խոսեմ, — վերջապես արտասանեց Եվան խաղաղ ձայնով:

— Ես ի՞նչ գիտեմ. լռությունը քեզ չի սազում:

— Զարմանալի է, — նկատեց Թեկլեն դժգոհությամբ, ըստ երևույթին անկարող լինելով այլևս զսպել իրեն. — այ, միշտ այդպես է, ինչպես որ կա. չխոսկան հարս է դառել գլխիս, իսկ առաջ զահլաս էր տանում, այնքան խոսում ու ծիծաղում էր:

— Պատճառն, ասենք, հասկանալի է. չէ՞ որ քույրը հեռանում է, — նկատեց օր. Սահակյանը՝ ժպտալով նայելով Եվայի մեծ-մեծ աչքերին, որ նա մտախոհությամբ ուղղել էր դեպի դահլիճի խորքը:

— Թող այդպես ասի, — վրա բերեց Թեկլեն. — թող գոնե մի անգամ խնդրած լինի, որ չգնա:

Եվան նեղսրտությամբ շարժվեց իր տեղում:

— Մայրիկ, ի՞նչ հարկ կա այդ մասին խոսելու: Մեծ ցավ չէ, որ այլևս չեմ խոսում ու ծիծաղում:

— Մեծ ցավն այն է, որ քեզ այդպես մաշում ես: Տես, այս երկու օրվա մեջ ինչ ես դառել:

— Է՛հ, — զսպած զայրացկոտությամբ արտասանեց Եվան և մինչև անգամ դեմքը շրջեց մորից: Թեկլեն նայեց աղջկան խիստ ջգրած, ուզեց բան ասել, բայց զսպեց իրեն և լռեց: Նա զգում էր,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

որ Աշխենի դեմ իր մեջ մի քանի օրվա ընթացքում հավաքված բարկությունը պատրաստ է պայթելու, բայց տեղն անհարմար էր:

Մոր և աղջկա մեջ տեղի ունեցած այդ ընդհարման ժամանակ Աշխենը վերին աստիճանի անհարմար դրության մեջ էր զգում իրեն: Նա ավելի քան հասկանում էր, որ հորեղբոր կինը կատաղած է իր դեմ. տեսնում էր, որ այդ ընդհարման պատճառն ինքն է, ուստի ինչքան ուզում էր միջամտել իրեն ճնշող այդ խոսակցությանը վերջ դնելու համար, ոչինչ չէր կարողանում ասել: Առհասարակ նա զարմանալի վախկոտ էր դարձել Եվային արած խոստովանությունից հետո:

Կարճ ժամանակ խիստ ճնշող լռություն տիրեց: Մայր ու աղջիկ, կարծես իրարից խռոված, նայում էին իրար հակառակ կողմը: Աշխենն անհանգստությամբ շուռումուռ էր գալիս աթոռի վրա, մեքենայաբար նայելով դահլիճում իրար անցնող հասարակությանը: Իսկ մնացածներն՝ անախորժ, անորոշ տպավորության տակ՝ չէին իմանում ինչ ասեն: Այդ միջոցին վրա հասավ Մարությանը:

— Է՛ռի-հա՛, մի բոպե հեռացա, և դուք ոչինչ չեք գտնում խոսելու, — բացականչեց նա: — Ասենք, Եվան երդվել է այլևս չխոսել, դո՛ւք ինչ եք, մանավանդ դո՛ւք, օրիորդ, — դիմեց նա օր. Սահակյանին: — Ինչպես տեսնում եմ, որքան Եվայի քույրն է հեռանում, նույնքան և ձերը: Ես ձեզ այդքան թուլասիրտ չէի կարծում: Համենայն դեպս, դուք ամենքդ էլ անշնորհք եք. ձեզ հետ ոչ կարելի է քեֆ անել, ոչ ճանապարհորդել. դուք կքնեցնեք մարդու: Պարոն Մինասյան, համեցեք, այս ձեզ, այս էլ քեզ, Աշխեն ջան: Այդ ասելով, նա երկու տոմսակ դրեց մեկը Մինասյանի, մյուսը Աշխենի առաջ: Տոմսակներն երկրորդ կարգի էին:

— Նստեցեք ձեզ համար փափուկ նստարանների վրա ու հայդա, — ավելացրեց նա, շտապով նստելով իր տեղը:

Մինասյանը զարմացած վերցրեց տոմսակը, նայեց և բերանը բաց արեց, որ բան ասի, բայց Մարությանը բռնեց նրա թևից և դրանով հասկացրեց, որ ավելորդ է այդ մասին խոսելը:

— Դե՛հ, խմենք վերջին բաժակը, — կանչեց նա: — Աշխեն ջան, դարձյալ և առանձնապես քո կենացը: Հավատացիր, ես էլ Եվայի նման... ներողություն, երեխայի նման լաց կլինեի և չէի թողնիլ, որ գնաս, եթե համոզված չլինեի, որ ապարդյուն զործի համար չես գնում: Այսօրվանից ազատ ես, թռիր ուր ուզում ես: Այն աստիճան վստահ եմ քեզ վրա, որ խիղճս երբեք չպիտի տանջի ինձ, թե վատ բան եմ արել, որ քեզ, եթե կարելի է այսպես ասել, քե՛զ եմ հանձնել: Ինձ տանջել միայն կարող է կարոտը, և հա՞րկ կա ասելու, թե ի՛նչպիսի ուրախության օր կլինի ինձ համար ա՛յն օրը, երբ նորից կտեսնեմ քեզ ողջ, առողջ, անհուսաբեկ: Բայց հույսս մե՛ծ է: Մինչև այժմ իմ ամենամեծ բաղձանքն այն է եղել, որ արժանանամ իմ Արմենակի տեսությանը. այսօրվանից նույնպիսի մի բաղձանքի առիթ տալիս է և ի՛մ Աշխենը: Բարով գնաս... սիրելիս, զավակս: Հայրական սրտով օրհնում եմ ճանապարհդ: Աստված տա, որ դու էլ, իմ Արմենակի նման, մեր ընտանիքի պարծանքը դառնաս: Խփենք բաժակները: Այդպե՛ս: Կեցցե՛ս: Կրկին և միլիոն անգամ բարի ճանապարհ և բարի վերադարձ:

Եվ Մարությանը մի շնչում դատարկեց բաժակը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մինասյանը, որը հիացած էր մնացել այդ վերին աստիճանի շարժուն ու կենդանի մարդուց, վերջին խոսքերի ժամանակ արտասուքի կաթիլներ նկատեց նրա աչքերի մեջ: Նա նայեց Աշխենի լուրջ, գունատ դեմքին և տեսավ, որ նրա վայր թողած աչքերն էլ թաց են եղել:

— Ե՛վա, վերջապես, դա բանի նման չէ, — ասաց հայրը, — դատարկ բաժակը փոքր-ինչ սաստկությամբ դնելով սեղանի վրա: — Հավատացիր, կատակ չեմ անում, ականջս այն աստիճան սովորել է ձայնիդ, որ ուղղակի անտանելի է ինձ համար, երբ չես խոսում:

Եվայի աչքերի կոպերը դողդողացին:

— Հայրիկ, դու ինձ նեղացնում ես, — արտասանեց նա լացակումած ձայնով և շուռ եկավ աթոռի վրա:

Մարությանը լռեց և տխուր մտահոգությամբ մնաց նայելիս աղջկա դեմքին:

Թեկլեն վիրավորված հանգստությամբ նայում էր այս ու այն կողմ և երբեմն-երբեմն անհաշտ հայացքներ էր նետում Աշխենի վրա:

Օր. Սահակյանը կարեկցությամբ նայում էր Եվային և, հակառակ իր սովորության, թե տխուր էր և թե հենց սկզբից տրամադրություն չուներ խոսելու:

Մինասյանը, իբրև օտար, նույնպես նայում էր Եվային, և նրան հիացնում էր այդ աղջկա անբիծ գեղեցկությունը, որ այս անգամ, տխրության մեջ, ինչ-որ տրագիկական-մելամաղձիկ դրոշմ էր կրում:

Իսկ Շահյանի թախիծն այն աստիճան սաստկացել էր, որ նա մինչև անգամ կորցրել էր զգալու ընդունակությունը:

Այնինչ, Աշխենը, հորեղբոր խոսքերի զորեղ ազդեցության տակ, չէր իմանում, թե ինչ է կատարվում շուրջը:

— Կարծեմ, գնացքն արդեն եկել է, — ասաց Մինասյանը: Մարությանը հանկարծ սթափվեց իր մտախոհ դրությունից:

— Ա՛, արդե՞ն, — արտասանեց նա և մեքենայաբար վեր կացավ տեղից:

Նրա հետ վեր կացան և մյուսները:

Դահլիճում իրարանցումը սաստկացել էր: Դեպի պլատֆորմ տանող դուռն անդադար բաց ու խուփ էր լինում, և ներս էին մտնում ամեն տեսակ մարդիկ, ձմեռվա վերարկուների մեջ կոլոլված, ճամպրուկներով և բազմազան փաթեթներով: Դահլիճում գտնված մարդիկ իրենց հերթին, վերցնելով իրենց ճանապարհորդական իրերը, շտապում էին դեպի դուրս, դռան մոտ ամբոխվելով և իրար բոթբթելով: Այդ միջոցին Շահյանի աչքովն ընկավ և իսկույն էլ կորավ բազմության մեջ մի ծանոթ դեմք: «Բազենյանը չէ՞ր արդյոք», — մտածեց նա:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Դեռ երկրորդ զանգը չէին տվել, որ Մարությանները, օր. Սահակյանը, Մինասյանն ու Շահյանն արդեն վագոնումն էին: Այստեղ արդեն ամենքն էլ հրաժեշտի վերջին րոպեի ծանր ազդեցության տակ էին: Թեկլեի սիրտը կակղել էր, նրա աչքերի մեջ մինչև անգամ արցունքներ էին նկատվում. նա խորհուրդ էր տալիս Աշխենին, որ լավ պահի իրեն, չմրսի, չհիվանդանա: Մարությանը խնդրում էր, որ Աշխենը որքան կարելի է՝ հաճախ նամակ գրի իրենց: Օր. Սահակյանը նույնն էր խնդրում ընկերուհուց: Մինասյանը սովոր ձեռքով տեղավորում էր իր և Աշխենի իրեղենները: Եվան լուռ էր և սառն հանգստությամբ դիտում էր Մինասյանի արագ շարժումները, Իսկ Շահյանը, ինքն իր մեջ կենտրոնացած, քաշվել էր մի կողմ և ապուշի նման նայում էր մերթ մեկին, մերթ մյուսին, նայելով, թե ով էր խոսում, և զգում էր, որ հենց սկզբից մի ավելորդ մարդ է Մարությանների, Մինասյանի և օր.Սահակյանի ընկերության մեջ, իսկ այժմ վագոնի այդ նեղ պատերի մեջ արդեն խանգարում է նրանց ազատ շարժվելուն: Սրտի անպատմելի դառնությամբ նա տեսնում էր, որ ոչ ոք ուշք չի դարձնում իր վրա, կարծես ինքն այնտեղ չլիներ, կարծես մի երեխա, մի ծառա լիներ կանգնած այնտեղ: Լսվեց երկրորդ զանգի զրնգզրնգոցը:

Եվան, առաջվա նման, դարձյալ ցնցվեց, բայց անշարժ մնաց տեղը: Մինչդեռ մյուսները շտապեցին իրենց հրաժեշտը տալ ուղևորներին:

Թեկլեն մի քանի անգամ համբուրեց Աշխենին և հազիվ զսպեց արտասուքը: «Լավ պահիր քեզ, որդիս, լավ պահիր», — վերջին անգամ կրկնեց նա:

Օր. Սահակյանը, արցունքն աչքերին, գրկվեց և համբուրվեց հեռացող ընկերուհու հետ և պինդ սեղմեց Մինասյանի ձեռքը:

Մարությանը ոչ մի կերպ չէր ուզում ընկճվել հրաժեշտի ծանր րոպեի ազդեցության տակ. կարծես իրեն և մյուսներին սիրտ տալու համար բռնի աշխուժով սեղմեց եղբոր աղջկա և Մինասյանի ձեռքը, չմոռանալով մի անգամ ևս կրկնել, որ Աշխենը շուտ-շուտ նամակ գրի իրենց: Բայց և այնպես նրա աչքերը լիքն էին արտասուքով:

Հետո մոտեցավ Շահյանը և, հազիվ սեղմելով Աշխենի և ընկերոջ ձեռքը, շտապեց ամենից առաջ դուրս գնալ վագոնից:

Ամենից վերջը Եվան տվեց իր հրաժեշտը հեռացողներին: Նա ոչ մի խոսք չարտասանեց, միայն կամաց փաթաթվեց Աշխենի վզովը և դեմքը սեղմեց նրա կրծքին: Մի վայրկյան նրա ուսերը սաստիկ ցնցվեցին:

Աշխենի աչքերը վաղուց արդեն լցված էին արցունքով: Նա նույնպես ոչ մի խոսք չկարողացավ արտասանել. միայն դողդողացող շրթունքները երկար ժամանակ սեղմած պահեց Եվայի դեմքի վրա, ականջի մոտ:

— Բավական է, բավական է, — կանչեց Մարությանը, տեսնելով, որ նրանք չեն ուզում բաց թողնել իրար: — Շուտով երրորդ զանգը կտա:

Եվան հանկարծ թողեց Աշխենին և, առանց նայելու նրան, դուրս վազեց վագոնից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մարությաններն ու օր. Սահակյանը դուրսը խմբվեցին վագոնի լուսամուտի տակ: Շահյանը չքացել էր. նրա բացակայությունը ոչ ոք չնկատեց էլ: Աշխենը գլուխը դուրս էր հանել լուսամուտից: Նրա ետևից երևում էր Մինասյանի գլուխը: Աշխենի և Եվայի աչքերը սաստիկ կարմրել էին: Երկու կողմից էլ կցկտուր խոսքեր էին փոխանակվում:

Զանգն երրորդ անգամ զրնգզրնգաց: Մի կոնդուկտոր, վառ լապտերը ձեռքին, շտապ քայլերով անցավ վագոնների լուսամուտների տակով: Վագոնների դռներն սկսեցին չրխկոցով փակվել: Լսվեց ավագ կոնդուկտորի սուլիչի դողդոջուն սուր ձայնը: Շոգեմեքենան սուլեց և տնքաց: Վագոնների երկայն շարքը հանկարծ ցնցվեց, մի վայրկյան մնաց անշարժ, հետո սահուն կերպով սկսեց առաջ շարժվել:

— Գնա՛ք բարյավ, բարի՛ ճանապարհ, — վերջին անգամ կանչեց Մարությանը, գլխարկը շարժելով:

Ամենքը մեխված մնացին իրենց տեղում, մինչև որ վագոնների մութ շարքը միախառնվեց գիշերային մթության հետ, հեռվից ուղարկելով միայն անիվների հետգհետե խլացող գոգոնցն ու շոգեմեքենայի արագ հնքը:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1

Օրերն օրերի, շաբաթները շաբաթների ետևից անցնում էին: Շահյանի համար դանդաղ, միակերպ, տաղտկալի: Իսկապես ոչ մի պատկեր չունեցող իր կյանքը նա պատկերավորում էր այնպես, որ կարծես ինքը խրված լիներ անշարժ, կպչուն ճահճի մեջ և քանի գնում, այնքան խորն էր խրվում, մինչև որ բոլորովին կանհետանար, և ճահճի մակերեսը կհավասարվեր, ոչ մի նշան չթողնելով, թե այնտեղ, խորքում, մարդ կա թաղված: Իր անպետքության և ապիկարության մասին ունեցած գիտակցությունն այժմ այլևս առաջվա ուժով չէր հալածում նրան: Այդ գիտակցությունը կամաց-կամաց բթանում և փոխվում էր մի տեսակ ապատիայի, որի մեջ բանավոր արարածի կյանքը ստորանում է մինչև անբան կենդանու կյանքի աստիճանը, որի մեջ մարդը դառնում է զուտ կենդանական մի մարմին՝ առանց մտածումների, առանց հույզերի, առանց նպատակների:

Այն գիշերը, երբ Շահյանը, Մինասյանին և Աշխենին ճանապարհ ձգելուց հետո, երկաթուղու կայարանից տուն դարձավ, հորը մեռած գտավ կաթվածից:

Կես ժամ առաջ աղա Կարապետի սառած դիակը բարձրացրել և դրել էին մահճակալի վրա: Խալաթը դեռևս հագին էր. թրքական կարմիր ֆեսն ընկած էր հատակի վրա. ձախ ձեռքը բռունցք կազմած կախ էր ընկել մահճակալից. դեմքը սառած էր ջղաձգական կծկումների մեջ: Գլուխը բարձի վրա չէր, այլ ներքև և կուրծքն ու փորը սարի նման բարձրացել էին դեմքի և ոտների մակերեսից:

Շահյանը նայեց և ետ քաշվեց սարսափահար: «Ահա մահը», — մտածեց նա և, ազատվելով վշտահար հեծկլտող մոր գրկից, քաշվեց իր ննջարանը: Ամբողջ գիշեր չկարողացավ քնել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Զարմանալի համառությամբ նրա մտքից չէր հեռանում մի բան — հոր՝ մահճակալից կախ ընկած ձեռքը: Նա մտածում էր, թե բռունցքը սեղմած այդ ձեռքն այնքան ծանր պիտի լիներ, որ եթե մեկը փորձեր բարձրացնել. չպիտի կարողանար:

Հոր մահը նրան խիստ ազդել էր իբրև շարժվող, մտածող, զգացող արարածից մնացած անշունչ, սառած մի մարմին, որը գերանի կտորից ոչնչով չէր տարբերվում: Մարդը մոտ վաթսուն տարի ապրում, հուզվում, չարչարվում, մերթ ուրախանում, մերթ տխրում էր, անդադար ինչ-որ ծրագրեր էր կազմում, հետամուտ էր լինում ինչ-որ նպատակների, հանկարծ այդ բոլորից հետո ոչինչ չկա այլևս. կա միայն գերանի կտորից ոչնչով չտարբերվող, մսից և ոսկորներից բաղկացած անկենդան մի մարմին, որը թեկուզ մաս-մաս արա և ձգիր կրակի բոցերի մեջ, — ո՛չ մի ձայն, ո՛չ մի շշուկ չի հանիլ: Մինչդեռ որպիսի՜ սոսկալի աղաղակ կբարձրացներ այդ մարդը կենդանի ժամանակ, եթե կտրեիր նրա տասն մատներից մի ճկույթը... Ահա ուրեմն ինչ է մահը. — ո՛չ մի զգացողություն, հետևաբար՝ ո՛չ մի տանջանք, ո՛չ մի բողոք. կատարյալ հաշտություն և անդորրություն...
Հորն այնպես թաղեցին, որ Շահյանը մի կաթիլ արտասուք անգամ չթափեց: Նրան հուզում էր միայն մոր ծանր վիշտը, սակայն այդ վիշտն էլ չտեսնելու համար փակվում էր իր սենյակում:

Այժմ նա բոլորովին կտրել էր իրեն արտաքին աշխարհից: Հորից ժառանգություն մնացած կալվածների կառավարությունը հանձնել էր իրենց հեռավոր ազգական Ստեփան անունով մի մարդու, որը փառավորապես խաբում էր նրան և եկամտի մի մասն իր գրպանը կոխում: Շահյանը գիտեր այդ, բայց ամենևին չէր հուզվում: Նա միանգամայն գոհ էր, որ ոչ ոք և ոչինչ չէր խանգարում իր հանգիստը: Իսկ նրա հանգիստը այն էր, որ ամբողջ օրը կամ չափում էր տաք սենյակի մի ծայրից մյուսը, կամ կարդում էր մաղձով լի հոռետես փիլիսոփաների երկերը, կամ պառկում ու քնում էր օրվա որ ժամին էլ պատահեր:

Մինչդեռ այդ ժամանակներումն էր, որ Թուրքա-Հայաստանում հանկարծ երևան եկած շարժումները խլրտումն էին ձգել հասարակության մեջ և զբաղեցնում էին մտքերն ավելի ու ավելի: Երբեմն լրագրերի մեջ սպրդած մի չնչին լուր ձեռքից ձեռք էր խլվում. մասնավոր տեղեկությունները շրջում էին բերնե-բերան. ամեն տեղ խոսում, դատում, վիճում էին. մեկը տասն էին շինում, տասը — հարյուր: Ինչ-որ քնած հսկայական մի բան շարժվել էր հանկարծ և իր հուժկու հոսանքի հետ քշում էր ամենքին ուր-որ... Մեռած հայության մեռած հույսերը կենդանացել էին, թեև ապագան ծածկված էր անթափանցելի մռայլ քողով...

Մի անգամ, կեսօրին մոտ, երբ Շահյանը, իր սովորության համաձայն, չափում էր սենյակի երկարությունը, հաճելի խտղտանք զգալով ոտներին թույլ կերպով հագած փափուկ մաշիկների շլպ-շլպոցից, ծառան մտավ և հայտնեց, որ մի պարոն ուզում է տեսնել նրան: Նա պատվիրեց, որ այդ պարոնին ներս հրավիրե հյուրասենյակ, իսկ ինքը, զարմանալով, թե ո՞վ կարող է իրեն տեսնել ուզենալ, քանի որ ոչ ոքի հետ հարաբերություն չուներ, դեն ձգեց մաշիկները, հագավ կոշիկները, շտապով հանեց խալաթը, որ հոր մահից հետո սովորություն էր արել հագնելու, հագնվեց, մի քիչ կոկվեց և դուրս գնաց հյուրին ընդունելու:

Հյուրասենյակում նրան դիմավորեց Բազենյանը, որին նա բոլորովին մոռացել էր:

— Այս էլ ես, իմ սիրելի վաղեմի բարեկամ, — մտերմական շինծու քաղաքավարությամբ ասաց Բազենյանը, երկու ձեռքով սեղմելով Շահյանի ձեռքը: Նա հագնված էր վերջին մոդով, մաքուր, գեղեցիկ և հոտավետ օծանելիքով սրսկված: — Հավատարիմ մնացի խոստմանս և,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

երկար տարիների բացակայությունից հետո, վերադառնալով այս օրհնյալ քաղաքը, նորից բախտ ունեցա քաղցր տեսությանդ արժանանալու: Եվ ի նկատի ունեցիր, սիրելիդ իմ Լևոն, որ այստեղի հին բարեկամներիցս դու ես առաջինը, որին այցելում եմ, չնայելով որ այս կողմերի գավառական մի քանի քաղաքներն արած էքսկուրսիայիցս մի ամսից ավելի է, որ վերադարձել եմ:

— Երկաթուղու կայարանում, կարծեմ, քեզ տեսա:

— «Միխայլովո» կայարանում:

— Ոչ, Թիֆլիս մտած օրդ:

— Չեմ կարող ասել՝ տեսա՞ր, թե ոչ, որովհետև ես քեզ չեմ տեսել: Է՛հ, ուրիշ ինչ բարիդ հարցնենք: Ծնողներդ ո՞ղջ են, առո՞ղջ են:

Շահյանը հիշեց, որ հայրը մեռել է, և դեմքին տխուր արտահայտություն տվեց:

— Հայրս մեռավ, — ասաց նա:

Բազենյանն աչքերը չռեց անակնկալ լուր լսողի պես:

— Մեռա՞վ... ե՞րբ, ի՞նչ ես ասում: Նստիր տեսնենք:

Եվ, վերին աստիճանի նուրբ կեղծ ցավակցության հետաքրքրություն ցույց տալով, Բազենյանը վարվեց այնպես, որ կարծես ինքը չէր հյուրը, այլ — Շահյանը: Շահյանի ձեռքից բռնած նստեցրեց նրան և ինքը նստեց նրա մոտ: Շահյանը համառոտ կերպով պատմեց հոր մահը:

— Շատ, շատ ցավում եմ, — լրջությամբ լսելուց հետո ասաց Բազենյանը, պինդ սեղմելով նրա ձեռքը: — Ափսոս, չեմ իմացել, որ կատարեի ընկերական պարտքս և ներկա լինեի թաղմանը: Խնդրում եմ, ներիր: Այդ օրերին ես նոր էի եկել և այնքան խառնված էի, որ ժամանակ չունեի մինչև անգամ լրագիր առնելու ձեռքս: Համենայն դեպս, դու էլի բախտավոր ես, Լևոն, — ավելացրեց նա հառաչելով: — Գոնե տուն ունիս, տեղ ունիս, վերջապես, մայր ունիս: Իսկ ե՞ս... Մանկությունից արդեն դատապարտված էի որբության և անտերության, և զարմանալի չէ, որ այնքան փչացած էի: Նրանից հետո ավելի փչացա: Երկու անգամ բանտ եմ նստել գողության համար: Մի անգամ էլ մարդ սպանեցի և փախա արդարադատության ձեռքիդ, և այդ բանը փրկեց ինձ վերջնական անկումից: Բացի դրանից, ես ընկա այնպիսի շրջաններ, որ ինձ կատարելապես կերպարանափոխեցին, այո՛, կատարելապես, այնպես որ շատ անգամ, երբ համեմատում եմ անցյալս ներկայիս հետ, ինքս էլ ապշած եմ մնում, թե ինչպես կարող էի այսպես փոխվել: Լինում են մարդիկ, որոնք բնավորության մի ծայրահեղությունից ընկնում եմ մյուս ծայրահեղության մեջ: Այդպիսիններից մեկն ես եմ, երևի: Գիտես, թե ինչ էի առաջ, բայց այժմ... Է՛հ, ես իմ մասին սկսեցի խոսել: Չեմ սիրում, — կանչեց Բազենյանը և, վեր կենալով, մի ծխախոտ վառեց: — Ավելի լավ է քո մասին պատմես: Ի՞նչ ես անում, ի՞նչ չես անում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Իմ մասին խոսելն ամենևին հետաքրքրական չէ, — ասաց Շահյանը շփոթվելով: — Ես, այ, այսպես անգործ և անպետք ընկած եմ տանը: Դու քո՛ մասին պատմիր: Ո՞րտեղ էիր այսքան ժամանակ, ի՞նչ էիր անում, այդ ի՞նչ փոփոխություն է, որ կատարվել է քո մեջ:

— Է՛, այդ մասին, որ խոսեմ, օրերով պետք է նստեմ քեզ մոտ. դա ձեռաց պատմելու բան չէ: Բայց այժմ...

Բազենյանը զգուշորեն նայեց հարևան սենյակի դռանը և հարցրեց ձայնը ցածրացնելով.

— Այնտեղ խո մեզ ոչ ոք չի՞ լսում:

Շահյանը զարմացած նայեց նրա խորհրդավոր դեմքին:

— Չէ: Ի՞նչ է որ: Բազենյանը, շարունակելով նայել հարևան սենյակի

դռան կողմը, նստեց Շահյանին մոտիկ և ձայնն ավելի ևս ցածրացրեց.

— Ես քեզ, իբրև վաղեմի մտերիմ ընկերոջս, մի բան պիտի հայտնեմ, որը հույս ունիմ մեր մեջ կմնա:

Եվ Բազենյանը խորհրդավոր եղանակով ու մութ ակնարկներով սկսեց պատմել արտասահմանում կազմակերպված հայկական մի ինչ-որ կոմիտեի մասին, որի նպատակն է հեղափոխություն առաջ բերել Թուրքիայի հայկական գավառներում: Հայտնեց, որ ինքն այդ կոմիտեի գործոն անդամներից մեկն է և եկել էր Կովկաս հատուկ այն նպատակով, որ տեղական մասնաճյուղեր կազմե, դրամ հավաքե և զենք ուղարկե: Ասաց, որ գործն արդեն սկսված է, ապացույց բերեց վերջին անցքերը, բացատրեց այդ անցքերի նշանակությունն ապագայի համար, մտավ նույնիսկ պետությունների դիվանագիտության նրբությունների մեջ և, վերջ ի վերջո, ազատ և անկախ հայրենիքի մի սիրուն պատկեր դրեց ապշած Շահյանի առաջ:

Բազենյանը ճարպիկ լեզու ուներ. խոսում էր կենդանի և ազդու կերպով, գիտեր իր պատմածներին խորհրդավոր գույն տալ: Ընդսմին իր շարժումները, արտասանությունը, հետաքրքրություն զարթեցնելու և լսողին գրավելու բոլոր ձևերն արտիստական կատարելության էր հասցրել:

Շահյանը սկզբում սկսել էր վախենալ նրանից: Բազենյանի պատմածները վերին աստիճանի համարձակ բաներ էին թվում նրան, և իր նախկին ընկերն ամեն մի խոսքի վրա աճում, բարձրանում էր նրա աչքում: Բայց հետո կամաց-կամաց գրավվեց, իսկ վերջը լսում էր նրան ամենայն հաճությամբ, նույնիսկ ագահորեն: Նրա ինքնասիրության համար խիստ հաճելի էր, որ այդպիսի մեծ գործի նվիրված մի երիտասարդ հավատ էր ընծայում իրեն և իր տան մեջ բոլորովին մտերմորեն պատմում էր իրեն իրենց գաղտնիքները:

Նա խնդրեց, որ Բազենյանը ճաշի մնա իր մոտ: Բազենյանը սկզբում հրաժարվեց, բայց վերջը զիջելով Շահյանի թախանձանքին, մնաց: Ճաշին հեղափոխականի գլուխը բավական տաքացավ և լեզուն ավելի բացվեց: Շահյանն էլ այդ օր սովորականից շատ ավելի խմեց: Կախեթի ընտիր գինուց: Երբեք այդ օրվա պես լավ տրամադրության մեջ չէր զգացել իրեն:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Նրան թվում էր, թե այդ օր, ճաշի ժամանակ, երբ գինին արդեն գլուխն էր ընկել, վերածնության մի օր էր իր համար: Մի առանձին եռանդ, երակների մեջ մի առանձին տաքություն էր զգում, որոնք առաջ բոլորովին անծանոթ էին նրան, և նա էլ սկսել էր խոսել: Բանն այնտեղ հասավ, որ երբ Բազենյանը բաժակը կրկին բարձրացրեց «սուրբ գործի» կենացը, Շահյանը բաժակի ձեռքին վեր թռավ տեղից և համբուրեց ընկերոջ փոքրիկ ձիգ բեղերը:

— Այդ գործի օգտին հինգ հարյուր ռուբլի ես եմ նվիրում, — բացականչեց նա:

Այստեղ արդեն Շահյանն այն աստիճան զգացվեց, որ սկսեց ամենայն անկեղծությամբ խոստովանել իր ոչնչությունը — մի բան, որ դեռ ոչ ոքի առաջ չէր արել: Էլ ցեխ ու մուր չմնաց, որ չթափեր իր վրա:

— Ասա, խնդրեմ, ինչացո՞ւ եմ ես, — ասում էր նա տաքացած, ռուսերեն լեզվով, որպեսզի մայրը, որ ներկա էր ճաշին, չհասկանա իրենց խոսակցությունը: — Հը՞ , քեզ եմ հարցնում, ինչացո՞ւ եմ ես կամ ինչացո՞ւ են ինձ նմանները, եթե միայն ուրիշներն էլ կան ինձ նման: Ես չեմ ընդունում, թե ինձ նման մեկ ուրիշն էլ լինի, որովհետև չգիտես, ախր, թե ինչ եմ ես: Ես... ինչպե՞ս ասեմ... ես հասարակության, ազգի համար մի մինուս եմ, մի զրո, որն իր մեջ պարունակում է տորիչելյան դատարկությունից էլ մեծ դատարկություն: Ողորմածիկ հայրս թեև, — ի՞նչ ծածկեմ մեղքս, — վախենում էր ինձնից, որովհետև իմ բոլոր մաղձը նրա վրա էի թափում, բայց երբեմն էլի ուղղակի կամ անուղղակի երեսովս էր տալիս իմ անպետքությունը: Այդ ինձ կատաղեցնում էր: Ինչո՞ւ: Որովհետև ճշմարտություն էր ասում, և ես օգուտ էի քաղում այն հանգամանքից, որ իր միակ զավակն էի, և նա սիրում էր ինձ: Մի անգամ էլ երկու օրիորդի, երկու զարմանալի օրիորդի հետ խոսակցություն ունեցա կյանքի և մարդու գոյության նպատակի մասին: Թե ինչպես նրանք ցամաք-ցամաք ցեխը կոխեցին ինձ ու հանեցին իմ հոռետեսական հայացքներիս համար, — չեմ կարող ասել: Նրանք պարզապես հասկացրին ինձ, որ ես հոռետես եմ ձևանում նրա համար միայն, որ ծածկեմ իմ ոչնչությունը: Երբ նրանցից հեռացա, ինձ թվաց, թե փողոց եմ դուրս եկել կաշիս մաշկած, անատոմիական ծանոթ նկարի պես: Մինչև հիմա էլ, որ մտաբերում եմ, ուզում եմ գետինը մտնել ամոթից: Հիմա համեմատենք ինձ ու քեզ: Ի՞նչ ես դու և ի՞նչ եմ ես: Դու կրակ ես, ես — սառույց, դու հեղեղ ես, ես — ճահիճ, մինչդեռ դու տարին տասներկու ամիս հանգստությունդ, անձնական վայելքներդ մոռացած թափառում ես երկրից երկիր անմահ գործի համար և մութ բանտը, տաժանելի կապանքներն ամեն րոպե աչքիդ առաջն են, ես ի՞նչ եմ անում. ես, ա՛յ, այս չորս պատերի մեջ առանձնացած, քնում եմ երբ ուզում եմ, քնում եմ՝ երբ ձանձրանում եմ արթուն մնալուց, ապահով միանգամայն այն բանից, որ փողոցի մուրացիկն անգամ չի հալածում ինձ իր աղիողորմ աղերսներով: Այս ի՞նչ կյանք է: Այսպես վերջին մրջյունն անգամ չի ապրում: Հավատա, Բազենյան, եթե մայրս չլիներ, ես վաղուց արդեն անձնասպանություն կլինեի գործած, որովհետև չգիտես, ախր, թե ի՛նչ զարհուրելի, ի՛նչ անտանելի կյանք է այս, որ ես եմ վարում: Գիտակցություն ունիմ, գուցե, ավելի, քան պետք է ունենան ինձ նման ողորմելի արարածները, բայց կամք չունիմ, բնավորություն չունիմ, մի խոսքով՝ փալաս եմ, ամոթ է ասել, նույնիսկ աղտոտությունը սրբելու անարժան մի փալաս...

Բազենյանը սկսեց հանգստացնել նրան, լրջորեն համոզելով, որ իզուր է այդպես վատաբանում իրեն, որ նրա պես ազնիվ հոգու և ձգտումների տեր երիտասարդներն, ընդհակառակը, շատ պիտանի են ազգին, իսկ այդպիսի երիտասարդներ շատ չես գտնիլ: Նա ասաց, որ Թիֆլիսում, փոքրիշատե ուսնոր դասակարգի մեջ, միայն Շահյանին է հանդիպում,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

որ խոշոր նվիրաբերություն է անում «սուրբ գործի» օգտին — մի բան, որի համար հայրենիքի թշվառ զավակները երախտապարտ պիտի մնան նրան: Ինքը, Բազենյանը, փող չունի՝ գործով է օգնում, Շահյանը փող ունի՝ փողով է ուզում օգտակար լինել, մի՞թե այդ միևնույն չէ. օգնությունը օգնություն է՝ փողով թե գործով, մեկը մյուսից ավելի է և մեկը մյուսին լրացնում է: Այստեղ Բազենյանն երկար ու բարակ փիլիսոփայության մեջ մտավ, բացատրելով փողի և գործի փոխադարձ ուժն ու նշանակությունը:

Չնայելով որ գինին արդեն բավական կպել էր երկսին էլ, խոսակցությունն ամենևին թեթև բնավորություն չէր ստանում, ընդհակառակը, նրանք ավելի ու ավելի խոր փիլիսոփայությունների մեջ էին մտնում, մանավանդ Շահյանը, որի հիվանդությունն էր վերացական դատողություններով զբաղվելը:

Խոսակցությունը զուտ նեղ, մտերմական բնույթ ստացավ ճաշից հետո, երբ նրանք, փափուկ բազկաթոռների վրա իրար դեմուդեմ նստած, թանկագին սիգարների ծուխը դեպի առաստաղն էին բարձրացնում : Շահյանն ամենայն անկեղծությամբ ասում էր այն բոլորը ինչ որ սրտում ուներ, և համոզված էր, թե Բազենյանն էլ ինչ որ ասում էր, իր սրտինն էր ասում: Մինչև անգամ ամենևին կասկած չտարավ այն մասին, որ երբ նորից հարցրեց, թե ինչպես է եղել, որ նա այդպես փոխվել և իրեն «սուրբ գործին» է նվիրել, — Բազենյանը հառաչելով պատասխանեց, թե պատճառը գլխավորապես էլզասցի մի աղջիկ էր, զարմանալի, նմանը չունեցող մի աղջիկ, որը գրեթե խելագարված էր «ոըվանշի» վրա:

— Նա կարող էր երկրորդ Ժանն դ՛Արք լինել, եթե հիվանդ չլիներ, — շարունակեց Բազենյանը: — Նրա հետ ծանոթացա Ցուրիխում: Ասում էր, թե փախել է Ստրասբուրգից պարզապես նրա՛ համար, որ այլևս չտեսնե «գարեջրի հոտած տակառների» երեսը: Այդպես էր անվանում գերմանացիներին, որոնք, հիրավի, հոտած ազգ են և սարսափելի բռնակալ: Ինքը հասարակ ծնողների զավակ էր, բայց բավական զարգացած: Եղբայրը ծառայում էր գերմանական զորքի մեջ, և դու տես բախտի խաղը — թունդ գերմանոֆիլ էր: Դրա համար եղբորն ավելի էր ատում, քան թե իրեն՝ երկաթե կանցլերին: Եղբոր անունն անգամ չէր ուզում լսել, իսկ երբ խոսակցություն էր բացվում նրա մասին, ուղղակի դավաճան էր անվանում նրան և դառնությամբ գանգատվում էր, որ իր պես թշվառ քույր չկա աշխարհիս երեսին: Ես չեմ պատմիլ, թե ինչպես ծանոթացա նրա հետ, ինչպես մոտեցանք իրար, — դա մի ամբողջ ռոմանի նյութ կարող է լինել, — այսքանս միայն կասեմ, որ... գժվածի պես սիրահարվեցի նրա վրա: Այո, գժվածի պես, Լևոն... Ի դեպ. դու երբևիցե սիրահարվե՞լ ես:

Այդ հարցի վրա Շահյանի աչքի առաջ իսկույն պատկերացավ Եվան և նրա սիրտը լցվեց դառն անձկությամբ:

— Ոչ, — պատասխանեց նա երկար տատանումից հետո:

— Ուրեմն երջանիկ ես: Այո՛, երջանիկ ես, Լևոն, որովհետև սիրո պատճառած դառնությունն ավելի է, քան քաղցրությունը: Գոնե իմ սերն ինձ մեծ տանջանք պատճառեց: Նա մեռավ, Լևոն, մեռավ՝ ինչպես մեռնում է ազատություն սիրող թռչունը վանդակի մեջ, մեռավ, ինչպես մեռնում է մայր հողից կտրված ծաղիկն օտար հողի մեջ... Հարկավո՞ր է արդյոք պատմեմ, թե նրա մահն ի՛նչ ազդեցություն ունեցավ ինձ վրա: Այսքանս բավական է ասեմ, որ մի անգամ նույնիսկ փորձեցի անձնասպանություն գործել, բայց դարձյալ նրա հիշատակն եղավ, որ ինձ փրկեց: Մի անգամ, մի հրաշալի գիշեր, — ա՛խ, այդ սիրո գիշերները, երբ լուսնի ծիծաղկոտ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

լույսը չես իմանում տանջո՞ւմ է քեզ, թե փաղաքշում, — այդպիսի մի գիշեր դուրս եկանք զբոսանքի: Նա ասաց, որ իր հայրենիքի վիճակն երբեք չի տանջում իրեն այնպես, ինչպես այդպիսի հրաշալի գիշերներին, և հանկարծ հարցրեց իմ հայրենիքի մասին: Ինձ թվաց, թե հանկարծ ինքս էլ համակվեցի նույն վշտով, ինչ որ նա: Սկսեցի պատմել մեր հայրենիքի աղետալի վիճակը և ասացի, որ երկուսս էլ միևնույն վիճակի մեջ ենք: «Ա՜խ, դուք երջանիկ եք ինձնից, — բացականչեց նա, — որովհետև դուք տղամարդ եք»: Այդ խոսքերն այնպիսի զորեղ տպավորություն գործեցին ինձ վրա. Լևոն, որ հետո, անձնասպանության միտքը հղանալիս, երբ հանկարծ միտս ընկան, ինքս ինձնից ամաչեցի: Հիրավի, մի՞թե ամոթալի բան չէ անձնասպանություն գործելը, — մտածեցի ինքս ինձ: — Մի՞թե տղամարդուն վայել բան է անձնասպանությունը: Չէ՞ որ նա ինձ երջանիկ էր համարում հենց նրա համար, որ ես տղամարդ էի, այսինքն՝ մի ուժ, որ ավելի, քան կինը, միջոցներ ունի հայրենիքին օգտակար լինելու: Մահը մահ է. «Մարդ մի անգամ պիտի մեռնի». բայց ավելի լավ չէ՞ ազնիվ, խելացի, օգտակար մահը, այնպիսի մի մահ, որով կարելի է կյանք տալ ուրիշներին — ավետարանական ցորենի այն հատիկի նման, որ «եթե մեռանիցե, բազում արդյունս առնե»: Եվ, ահա, այդ օրվանից ուխտեցի և գլխովին նվիրեցի ինձ սուրբ գործին, այսինքն այնպիսի մի գործի, որի համար, թեև ապարդյուն, բայց ինքն իր մեջ տանջվելով մեռավ նա: Նրա մահից անցել է մոտ հինգ տարի, և ես... է՛հ, ինչ հարկավոր է հին խոցերը փորփրել:

Բազենյանը զորեղ շեշտով թափ տվեց ձեռքը, վեր կացավ և սկսեց մտազբաղ ու տխուր անցուդարձ անել հյուրասենյակի փափուկ գորգի վրա:

Նրա պատմությունը խիստ ազդել էր Շահյանին: Շահյանին թվում էր, թե Բազենյանի վիշտն այնքան մեծ է, որ մեղք է նրան իր դժբախտ սիրո մասին երկար հարցուփորձ անել: Բազենյանի սիրած աղջկան, ինքն էլ չէր իմանում ինչու, համեմատում էր Եվայի հետ, և նրան թվում էր, թե էլզասցի այդ աղջիկը ճիշտ Եվայի հասակն ու գեղեցկությունը պիտի ունենար և պետք է որ Եվայի պես վառվռուն մի աղջիկ լիներ:

Եվ Եվայի, ըստ երևույթին մոռացված, պատկերը նորից կենդանություն առավ նրա գրգռված երևակայության մեջ, տանջող անձկություն ու տխրություն պատճառելով նրան:

2

Շահյանն անկեղծորեն սիրեց Բազենյանին, որին, հիրավի, բոլորովին փոխված էր տեսնում: Հենց առաջին օրվանից մտերմական այնպիսի մի սերտ կապ հաստատվեց նրանց միջև, որ Բազենյանին ամեն օր իր տան մեջ տեսնելը կատարյալ մի պահանջ դարձավ Շահյանի համար: Նա վաղուց ի վեր ձգտում էր ունենալ այդպիսի մի մտերիմ ընկեր, որի առաջ կարող լիներ վստահորեն թափել իր սրտի բոլոր դառնությունը, անկեղծորեն դատափետել իրեն, իր վարած կյանքը և երկյուղ չունենալ, թե ինքը կնվաստանա այդպես անելով: Եվ նա աներկյուղ այդ բանն անում էր Բազենյանի առաջ: Իսկ Բազենյանը կարճ ժամանակում արդեն ուսումնասիրել էր նրա բնավորությունը, գտել էր նրա թույլ երակը և մեծ ճարպկությամբ շոյում էր անդադար նրա ինքնասիրությունը:

Ամեն անգամ, Բազենյանին ճանապարհ դնելիս, Շահյանն անկեղծ շնորհակալություն էր հայտնում նրան, որ ջերմություն էր տալիս իր սառած կյանքին, և խնդրում էր, որ ամեն օր գա իր մոտ. խնդրեց նույնիսկ, որ հյուրանոցից տեղափոխվի իր տունը: Բազենյանը վերջին հյուրասիրությունից վճռապես հրաժարվեց, բայց ամեն օր գալիս էր Շահյանի մոտ, փառավոր

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ճաշ էր վայելում նրա տանը, շարժում էր իր ճարպիկ լեզուն, ծխում էր նրա թանկագին սիգարները և վերջը, այդ բոլորի համար շնորհակալություն ստանալով, հեռանում էր, որ հետևյալ օրը դարձյալ գա նույն պաշտոնը կատարելու:

Մի անգամ երկու օր շարունակ չերևաց Բազենյանը: Այդ երկու օրը Շահյանի համար անցավ շատ տխուր: Երրորդ օրն առավոտյան պատրաստվում էր գնալու Բազենյանի մոտ, երբ ստացավ նրա այցետոմսը, որի վրա խիստ անճոռնի տառերով գրված էր մատիտով հետևյալը.

«Սիրելի Լևոն, անշուշտ չգիտես, որ անցյալ օր ինձ մի փոքրիկ դժբախտություն պատահեց, որի շնորհիվ այժմ չեմ կարողանում սենյակից դուրս գալ: Արի, մենակությունից սիրտս ճաքում է: Էլի հին տեղումն եմ — «Լոնդոն»: Գրում եմ ձախ ձեռքով»:

Շահյանը շտապեց:

Երբ նա «Լոնդոն» հյուրանոցում բաց արեց Բազենյանի սենյակի դուռը և ներս մտավ, Բազենյանը պառկած էր մահճակալի վրա, անկողնի մեջ, և լրագիր էր կարդում ձախ ձեռքին բռնած: Նրա գեղեցիկ դեմքը դժգույն էր և թվում էր, թե բավական նիհարել է, Շահյանին տեսնելով, ժպտաց և լրագիրը կամաց դրեց կողքին:

— Ա՞յս ինչ է, դու պառկա՞ծ ես, — զարմացած բացականչեց Շահյանը:

— Էլ ասում ե՞ս, — ասաց Բազենյանը թույլ ձայնով և ձախ ձեռքը պառկած տեղից մեկնեց նրան: — Աթոռը մոտ բեր՝ նստիր:

Շահյանն անհամբերությամբ մի աթոռ առավ և նստեց նրա մահճակալի վրա:

— Հենց նոր պատրաստվում էի քեզ մոտ գալու, որ նամակդ բերեցին: Ի՞նչ է պատահել:

— Ա՛յ, կարդա, — ասաց Բազենյանը ժպտալով և լրագիրը տվեց նրան: — Կարդա ահա այս լուրը, — ձախ ձեռքի ցուցամատով ցույց տվեց նա: Շահյանը կարդաց.

«Կիրակի օր, ժամը 12-ին մոտ, Գոլովինսկի պրոսպեկտի վրա մի կառքի ձիերը հայտնի չէ ինչ բանից խրտնեցին և գլուխներն առան թռան դեպի Բարյաթինսկայա զառիվայր փողոցը: Կառապանը չկարողացավ զսպել ձիերը և ցած ընկավ կառքի ուժգին ցնցումից, մի կողմ շպրտվեց նաև կառքի մեջ նստած մի պարոն, սակայն, բարեբախտաբար, երկուսն էլ թեթև խեղումներ միայն ստացան: Այնինչ ձիերը, բոլորովին ազատ զգալով իրենց, ցած էին վազում ավելի ևս կատաղած: Այդ միջոցին մի օրիորդ չորս-հինգ տարեկան մի երեխայի հետ, մի մայթից մյուսն էր անցնում: Օրիորդը կարողացավ ազատվել, բայց երեխան անշուշտ պիտի ճխլվեր կատաղած ձիերի ոտների և կառքի անիվների տակ, եթե մի պարոն, որ այդ րոպեին անցնում էր այդ կողմով, իսկույն օգնության չհասներ. նա վազեց, խստեց երեխային և ետ էր վազում, որ մոտեցող կատաղած ձիերից ազատվի, բայց, դժբախտաբար, կառքը վրա հասավ, շուռ եկավ և մի կողքով դիպչելով պարոնին՝ մի կողմ շպրտեց նրան երեխայի հետ միասին: Երեխան ոչ մի վնաս չստացավ, մինչդեռ անձնազոհության այսպիսի գեղեցիկ օրինակ ցույց տվող պարոնը ծանր վերք ստացավ, և նրան ուշագնաց տարան հիվանդանոց: Նրա կյանքը

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

վտանգի մեջ է: Նրա ազգը Բազենյան է»: Շահյանը կարդաց վերջացրեց և զարմացած նայեց Բազենյանի ժպտացող աչքերին:

— Այդ դո՞ւ ես:

— Ինչպես տեսնում ես: Բոլորը ճիշտ է նկարագրված, միայն մի տեղ գլուխը քարովն է տվել լրատուն. կրծքիս վրա ոչ մի վերք չեմ ստացել, այլապես հարվածն այնքան սաստիկ էր, որ տեղնուտեղը բան-հոգի կլինեի: Թևս է միայն վնասվել, ահա, — Բազենյանը վերմակը կամաց ետ քաշեց ցույց տվեց աջ թևը, որ ուսից սկսած մինչև արմունկը պինդ փաթաթված էր սպիտակ շորով, շապիկի թևն ուսին հավաքված: — Կյանքիս էլ, ինչպես տեսնում ես, ոչ մի վտանգ չի սպառնում:

— Փառք աստծո, որ այդպես թեթև ես պրծել: Ես էլ ասում եմ՝ ինչու այս երկու օրս չես երևում: Հետո՞, պատմիր տեսնեմ:

— Հետո ինչ: Հետո երբ ուշքի եկա, տեսա, որ փառավորապես պառկած եմ հիվանդանոցում և ձեռքս պատում ու փաթաթում են ինչ-որ տաշեղներով: Զարմանալի է. ուրիշ մի տեղ վերք չեմ ստացել և չեմ հասկանում ինչու պետք ուշագնաց լինեի: Բայց ո՞վ գիտե, գուցե լրատուի ասելով, կառքն իսկապես կրծքիս կամ մի ուրիշ վտանգավոր տեղիս է դիպել, թե չէ՝ ձեռքից չեմ կարծում թե մարդ ուշաթափվի: Այս էլ կա, որ ոչ մի տեղս ցավ չեմ զգում: Ձեռքս էր միայն, որ սկզբում սաստիկ ցավում էր, իսկ այժմ ցավը բավական մեղմացել է:

— Բաս ինչո՞ւ ես պառկած:

— Չեմ կարողանում շորս հագնել: Եվ վեր կենամ, ինչ անեմ: Բժիշկն ասաց, որ մի քանի օր սենյակիս դուրս չգամ, ցուրտ է, ասաց, կարող ես ձեռքդ մրսեցնել:

— Ա՛յ թե օյին է եկել գլխիդ:

— Օյին ասիր ու պրծա՞ր: Նոր էի դուրս եկել հյուրանոցից և բարձրանում էի դեպի Գոլովինսկի պրոսպեկտ, որ տեսա, թե ինչպես ձիերը սարսափելի կատաղությամբ վերևից ներքև էին վազում: Այն էլ տեսա, թե ինչպես կառքի մեջ նստած պարոնը և կառապանը գնդակի պես շպրտվեցին մեկն այս, մյուսն այն կողմ: Խեղճ երեխան այնպես շշկլվել էր փողոցի մեջտեղ վերևից մարդկանց բարձրացրած աղաղակների վրա, մյուս կողմից էլ քույրն այնպիսի հուսահատական ճիչեր էր արձակում, որ ես չէ՝ ով ուզում է լիներ, անկարելի էր, որ օգնության չհասներ: Չէ՛, լավ պրծա: Բայց ինձ խիստ ուրախացնում է այն հանգամանքը, որ երեխան անվնաս մնաց: Նույն օրն երեխայի հայրն այցելեց ինձ հիվանդանոցում: Ինչպիսի՛ շնորհակալություններ, երախտագիտական զգացման ինչպիսի արտահայտումներ... Բայց ճիշտ ասեմ, ես ինքս չափազանց շնորհակալ կլինեի նրանից, եթե ամենևին նեղություն չկրեր ինձ այցելելու, որովհետև ձեռքիս կսկծից չգիտեի ինչ անեմ, իսկ նա կատարելապես զահլա տարավ իր շնորհակալություններով:

— Ո՞վ էր, ի՞նչ մարդ էր:

— Ազգանունն ասաց, տան հասցեն էլ հայտնեց, բայց գլխումս խելք կա՞ր, որ միտս մնար: Թաթուլյան ասաց, Թումանյան ասաց, չեմ հիշում, ճշմարիտ: Աշնանային ճանճն տեսել ես՞,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

որ ականջիցդ քշում ես՝ ճակատիդ է նստում, ճակատիցդ քշում՝ քթիդ է նստում: Այդպիսի մի ճանճի տպավորություն թողեց ինձ վրա:

Միջանցքից շտապ քայլերի մի ձայն և կնոջ հագուստի շխշխոց լսվեց: Դուռն ուժգնորեն բացվեց, և շտապ ներս մտավ մի հաղթանդամ կին՝ մոխրագույն ծանր մուշտակով, որ իջնում էր մինչև ոտների ծայրերը, և նույն գույնի մորթե գլխարկով, որ չափազանց փոքր էր թվում ծոծրակի վրա շքեղորեն հավաքված սաստիկ հարուստ մազերի հետ համեմատած: Ըստ երևույթին, նա բուռն անհանգստությամբ ուզում էր վազել դեպի Բազենյանը, բայց տեսնելով, որ նա մենակ չէ, հանկարծ կանգ առավ և շփոթվեց կարծես:

Շահյանը իսկույն ճանաչեց նրան. դա այն կինն էր, որին տեսել էր «Միխայլովո» կայարանում Բազենյանին ուղեկցելիս: Նա բոլորովին մոռացել էր այդ կնոջը, և դրա՝ այդ սենյակում այդպես անակնկալ հայտնվելը խիստ շփոթեց նրան: Նա մեքենայաբար վեր կացավ տեղից և չտեսավ ոչ այդ կնոջ շփոթմունքը, ոչ ինչ-որ անհաճո զգացումից առաջացած այն այլայլումը, որ արտահայտեց Բազենյանի դեմքը այդ կնոջ հայտնվելուն պես: Սակայն այդ բոլորը մի քանի վայրկյան միայն տևեց:

— Պանի Զդանևիչ... դուք այստե՞ղ, — կանչեց Բազենյանը ռուսերեն, շտապով վեր կենալով և նստելով անկողնի մեջ:

— Պարոն, ես առանց իմաց տալու մտա, — ասաց պանի Զդանևիչը ախորժալուր, կրծքային ձայնով և արագ մոտեցավ նրան: — Բայց ես այնքա՛ն անհանգիստ էի...

— Ներեցեք... ես... — արտասանեց Բազենյանը, ըստ երևույթին, ամոթխածորեն ծածկելով շապկի կուրծքը ձախ ձեռքով:

— Ա՛խ, խնդրում եմ, խնդրում եմ մի նեղանաք: Այդ ի՞նչ դժբախտություն է պատահել ձեզ. ես այսօր կարդացի լրագրերում:

— Դատարկ բան է. պանի Զդանևիչ: Կուռս միայն փոքր-ինչ վնասվել է, ուրիշ ոչինչ չկա: Խնդրում եմ դարձյալ, որ ներեք ինձ: Արդյոք չէի՞ք հաճիլ նստել:

Պանի Զդանևիչը արագորեն նստեց այն աթոռի վրա, որի վրա առաջ Շահյանն էր նստել, և մուշտակը ձգեց աթոռի մեջքին, երևան հանելով սև ատլասի հագուստի մեջ պինդ սեղմված երկայն շքեղ իրանն իր փարթամ կրծքով:

— Ե՞րբ եք եկել, — հարցրեց Բազենյանը:

— Մի շաբաթ է, որ Թիֆլիսումն եմ:

— Մենա՞կ եք եկել:

— Ոչ... ամուսինս էլ հետս է... և, երևի... շուտով կվերադառնանք, — պատասխանեց պանի Զդանևիչը տարօրինակ հապաղումով և Շահյանի կողմը անհանգիստ մի հայացք ձգելով: — Բայց դուք ձե՛րը պատմեցեք: Ա՛հ, ինչքա՛ն ցավեցի և վախեցաշ.. մանավանդ որ գրված էր, թե ձեր կյանքին վտանգ է սպառնում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Լրագրերի մեջ չափազանցրել են, պանի Զդաննիչ:

— Այո, տեսնում եմ, որ դուք լավ եք: Եվ փառք աստծո: Բայց դուք իսկապես որ օրինակելի անձնազոհություն եք ցույց տվել: Չեք կարող երևակայել, որքա՛ն հիացած եմ... Պարոն, — հանկարծ դարձավ պանի Զդաննիչը Շահյանին, — ես ձեր տեղն եմ նստել, կարծեմ, և դուք կանգնած եք մնացել:

— Խնդրեմ, խնդրեմ, — արագ վրա բերեց Շահյանը, մինչև ականջները կարմրելով, ու մեքենայաբար նստեց մի ուրիշ աթոռի վրա:

Բազենյանը շտապեց Շահյանին ներկայացնելու պանի Զդաննիչին:

— Այնպես չէ՞, ձեր ընկերն անօրինակ անձնազոհություն է ցույց տվել, — ասաց պանի Զդաննիչը, դառնալով Շահյանին: — Երևակայեցեք, որ եթե պարոն Բազենյանը օգնության չհասներ, այն խեղճ, այն փոքրիկ երեխան պիտի ջարդվեր մեռներ, և ի՞նչ սոսկալի թշվառության մեջ պիտի ընկնեին նրա ծնողները... Ա՛խ, պարոն Բազենյան, չգիտեմ, ճշմարիտ, ինչպես արտահայտեմ իմ հիացմունքը:

— Պանի Զդաննիչ...

— Լավ, լավ, դուք համեստ եք, ես այդ հասկանում եմ. բայց և այնպես, կարծում եմ, այդ բանն արգելք չպիտի լինի ձեզ մանրամասնությունները պատմելու: Ես չափից դուրս հետաքրքրվում եմ: Ա՛խ, ինչքան նիհարել եք: Այստեղ, կարծեմ, ցուրտ պիտի լինի ձեզ համար: Մի՞թե վառարան չեն վառում: Խնդրում եմ, լավ ծածկվեցեք: Սպասեցեք...

Պանի Զդաննիչը շտապով վեր կացավ, առավ Բազենյանի ոտների մոտ, մահճակալի վրա ձգված պլետը և ծածկեց նրա ուսերը:

— Ահա այսպես: Ներեցեք, որ ես այսպես տնավարի եմ վարվում, — ասաց նա նորից նստելով իր տեղը, — բայց որովհետև այն երեխային փրկելով ապացուցել եք, որ ուրիշի կյանքն ավելի թանկ եք գնահատում, քան թե ձերը, ուստի ուրիշներն էլ պարտավոր են հարգել ձեր առողջության համար: Այնպես չէ՞, — հրաշալի ժպիտով դիմեց նա Շահյանին:

— Անշուշտ, — վրա բերեց Շահյանը՝ հափշտակված այդ գեղեցիկ կնոջ անսեթևեթ վարմունքից, և դարձյալ կարմրեց:

— Դուք շատ բարի եք, պանի Զդաննիչ, — արտասանեց Բազենյանը:

— Իմ բարությունը մի կողմ թողեք և պատմեցեք մանրամասնությունները:

Բազենյանը սկսեց պատմելը: Նրա պատմությունը չոր էր: Շահյանը արդեն փոքր-ինչ ընտելացել էր պանի Զդաննիչի ներկայությանը և, լուռ նստած, հետաքրքրությամբ դիտում էր նրան իր պարզ ակնոցների միջից, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ այդ կնոջ ամբողջ ուշադրությունը Բազենյանի կողմն էր: Չափից դուրս գեղեցիկ էր թվում նրան այդ հսկա կինը, ավելի գեղեցիկ, քան այն ժամանակ, երբ առաջին անգամ տեսավ նրան «Միխայլովո»

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

կայարանում: Սև ատլասի մեջ ամուր սեղմված այդ շքեղ իրանը, այդ բարձր կուրծքը, այդ փարթամ ուսերը և հպարտորեն բարձրացած այդ գլուխն իր չափազանց հարուստ մազերով, իր ազնիվ, պլաստիկական դիմագծերով, որոնց մեջ, չնայելով տարիքին, դեռևս նկատելի էր խնամքով պահպանված երիտասարդական թարմությունը, — այդ բոլորը երկյուղ ազդելու չափ վեհություն և, միևնույն ժամանակ, անդիմադրելի հմայքի ուժ էին տալիս նրան: «Սա կարող է թագուհի լինել», — մտածում էր Շահյանը և զարմանում էր, թե ինչպես այդպիսի մի կին մինչև անգամ լայեղ էր արել մտնել այդ սենյակը:

Բազենյանի պատմությունը լսելիս պանի Զդանևիչը ջերմ հետաքրքրություն էր ցույց տալիս: Այնտեղ, ուր կարեկցություն էր հարկավոր, նրա դեմքն արտահայտում էր ավելի, քան կարեկցություն, և այդ բանից Շահյանը եզրակացնում էր, որ նա խիստ բարի կին է:

Մինչդեռ Բազենյանը պատմում էր, կարծես, ակամա և ամենևին չէր նայում պանի Զդանևիչին: Առհասարակ ինչ-որ օտարոտի ինքնազսպումն, նույնիսկ սառնություն էր նկատվում նրա վարվեցողության մեջ պանի Զդանևիչի վերաբերմամբ: Շահյանը տեսնում էր այդ, և ընկերոջ այդ վարմունքն ավելի քան կոպիտ էր երևում նրան: Ճնշված այդ բանից, նա նայում էր պանի Զդանևիչին և զարմանքով տեսնում էր, որ այդ կինը կամ չի նկատում Բազենյանի այդ կոպիտ վարմունքը, կամ այնքան կրթված կին է, որ չտեսնելուն է տալիս:
Պանի Զդանևիչի մոտ մի ժամ մնաց Բազենյանի մոտ. կարծես չէր ուզում հեռանալ այդ սենյակից: Ի միջի այլոց, ասաց Շահյանին, որ ինքն առհասարակ համակրում է հայերին, որոնց մեջ կան այնպիսի երիտասարդներ, ինչպիսին Բազենյանն է, որի հայրենասիրական նպատակներին ու գործունեությանն առիթ է ունեցել մասամբ ծանոթ լինելու: Հետո նուրբ հետաքրքրությամբ սկսեց հարցուփորձ անել իրեն՝ Շահյանին, առաջուց ներողություն խնդրելով իր հետաքրքրության համար: Եվ Շահյանը, զարմանալի է, ամենայն անկեղծությամբ սկսեց պատմել ինչ որ հարկավոր էր, ինչ որ ճիշտ էր: Այդ կինը, որի գեղեցկությունը սկզբում գրեթե սարսափեցնում էր նրան, այնքան բարի, կարեկից ու բարեկիրթ կին էր երևում և իր պարզ ու փոքր-ինչ հովանավորող վարվեցողությամբ այնպիսի մի պատկառանք էր ներշնչում նրան, որ նա ամաչում էր դիմել իր սովորական զենքին — ստախոսության: Եվ պանի Զդանևիչը լսում էր նրան այնպիսի հետաքրքրությամբ, որ կարծես մինչև անգամ շնորհակալ էր, որ խոսում էր այդքան անկեղծորեն:

— Եթե համեստությունից չէ, որ դուք այդքան դատափետում եք ձեզ, — ասաց նա ժպտալով, — ապա ես ձեզ կասեմ հետևյալը. նա, ով զգում է իր պակասությունները, կորած չէ, պետք է միայն կամքի ուժ ունենալ զգացած պակասություններն ուղղելու: Համենայն դեպս, դուք այնքան բարի եք, որ այսպիսի դեպքերում չեք մոռանում ձեր ընկերոջը: Ես շատ ուրախ եմ, որ ծանոթացա ձեզ հետ: Հույս ունիմ, մենք էլի առիթ կունենանք իրար տեսնելու: Իսկ այժմ, — նա վեր կացավ տեղից, — ներեցեք: Պարոն Բազենյան, թո՞ւյլ կտաք, որ դարձյալ այցելեմ ձեզ:

— Պանի Զդանևիչ... չգիտեմ, ճշմարիտ, ինչո՞վ եմ արժանացել ձեր...

— Դուք թույլ եք տալիս, ուրեմն դարձյալ կգամ, — ծիծաղելով ընդհատեց պանի Զդանևիչը, արագորեն առնելով մուշտակը, ծածկեց, որի ժամանակ Շահյանը մինչև անգամ համարձակություն ունեցավ նրան օգնելու: — Մերսի, — հրաշալի ժպիտով շնորհակալություն հայտնեց նա Շահյանին և ամուր սեղմեց նրա ձեռքը: — Ցտեսություն, պարոն Բազենյան: Զգույշ կացեք, չմրսեք: Ցտեսություն, — նույն հրաշալի ժպիտով վերջին անգամ դիմեց նա Շահյանին և դուրս գնաց արագ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

3

Կարճ ժամանակ խիստ անհարմար լռություն տիրեց երկու ընկերների մեջ:

— Կարծեմ, մի քիչ... սառն ընդունեցիր, — նկատեց Շահյանը:

Բազենյանը նայեց ընկերոջը, հայտնի չէ՝ զարմացա՞ծ, թե փորձող հայացքով:

— Սառը՞... Մի՞թե... Հավատացնում եմ քեզ, երբեք այնպես անհարմար դրության մեջ չէի զգացած ինձ, ինչպես այժմ... Ո՛րտեղից որտեղ... Ամենևին չէի սպասում... այնքա՛ն պատվական կին է...

Շահյանը ժպտաց, բայց իսկույն էլ զսպեց ժպիտը:

— Այո՛, պատվական կին է, — ասաց նա լրջությամբ և, կարճ լռությունից հետո, ավելացրեց: — Գիտե՞ս ինչ: «Միխայլովո» կայարանում քեզ որ տեսա նրա հետ, ճիշտ քեզ ասեմ, կասկած տարա ձեր հարաբերությունների մասին: Բայց այժմ իմ այդ կասկածն, արդարացնող ոչ մի նշան չտեսա, գոնե քո կողմից: Դու մինչև անգամ կոպիտ լինելու չափ սառն էիր դեպի նա:

Բազենյանը տխրությամբ հառաչեց:

— Է՛, բարեկամ, դեռ չգիտես, թե որքան խորտակված է սիրտս: Նրա մահից հետո, որին առաջին անգամ սիրեցի և որին աչքիս առաջ գերեզման դրին, աստված է վկա, Լևոն, այլևս ոչ մի կին չի գալիս: Իմ տեղ, որ ուրիշը լիներ, առանց ի չարը գործ դնելու չէր թողնիլ այս կնոջ բարեկամությունը, բայց ես... Քեզնից ծածկելու ոչինչ չունիմ, Լևոն: Պանի Զդանևիչի հետ ծանոթացել եմ Ղրիմում և ամբողջ ճանապարհը միասին ենք եկել: Ճանապարհին հետզհետե տեսնում էի, որ նրա համակրանքն ավելի է, քան մի պարզ համակրանք, և գրեթե ոչ մի դժվարություն չպիտի հանդիպեմ նրան տիրանալու: Բայց ո՛չ, ասացի. վերածնությունը պետք է կատարյալ լինի, այլապես նորից նախկին ցեխի մեջ խրվելու վտանգի մեջ կգտնվեմ: Բացի դրանից, ես չէի կարող անարգել իմ առաջին մաքուր սիրո հիշատակը և, որ գլխավորն է, ես ինձ արդեն սուրբ երդումով նվիրել էի այնպիսի մի վեհ գործի, որի առաջ անձնական վայելքը, այսպես ասած, մի պրոֆանացիա պիտի լիներ: Եվ զսպեցի ինձ, և մինչև այժմ, էլ զսպում եմ: Եվ այդ է պատճառը, որ քեզ թվացել է, թե ես կոպիտ լինելու չափ սառն վարվեցի նրա հետ:

Դուռը դրսից կամաց ծեծեցին:

— Ո՞վ է, — կանչեց Բազենյանը:

— Կարելի՞ է մտնել, — լսվեց դրսից:

— Լևոն, խնդրեմ՝ մի տես ով է:

Շահյանը դեռ դռանը չհասած, դուռը կամաց բացվեց, և երևաց Մարությանի գլուխը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Պարոն Շահյա՞ն, — բացականչեց Մարությանը և շտապով ներս մտավ: — Այստեղ ի՞նչ եք շինում: Այստեղ չէ՞ ապրում Բազենյանը:

— Ահա Բազենյանը, — ցույց տվեց Շահյանը, զարմանալով, թե ի՞նչ գործ ունի նա Բազենյանի հետ:

Մարությանն արագ դարձավ դեպի Բազենյանի մահճակալը:

— Ա՛հ, պարոն Բազենյան... Դուք այստեղ ե՞ք պառկած: Ես գնացի հիվանդանոց, ասացին, որ դուրս եք եկել: Կարծեցի, թե բոլորովին առողջացել եք և շատ ուրախացա, մինչդեռ եկել այստեղ եք պառկել: Ինչպե՞ս եք, մի՞թե հիմա լավ չեք:

— Փառք աստծո, հիմա բավական լավ եմ:

— Ի սեր աստծո, շուտով առողջացեք, թե չէ՝ այդ բանի նման չէ: Պարոն Շահյա՛ն... դո՞ւք այստեղ ինչ եք շինում:

— Ընկերս է, եկել եմ տեսության:

— Հա-հա՞, մի՞թե... Դուք այդպիսի պատվական ընկերներ եք ունեցել, — մեկը Մինասյանը, մյուսը սա, — և ես այդ պատահմունքո՞վ պիտի իմանամ: Դուք գիտե՞ք, որ պարոն Բազենյանն իմ երեխիս է փրկել:

Շահյանը զարմացավ: Այդ հայտնությունը բոլորովին անակնկալ էր նրա համար: — Հապա՛, իմ Սուրենին:

— Ճի՞շտ:

— Բաս ի՞նչ ունիմ հիմա այստեղ: Չէ՞ որ երախտապարտ եմ, անչափ երախտապարտ եմ պարոնին, որի հետ այդ ցավալի դեպքն է ինձ առիթ տվել ծանոթանալու: Պարոն Բազենյան, դարձյալ և բյուր անգամ շնորհակալ եմ ձեզնից, և չեք կարող երևակայել, թե ինչքա՛ն ցավում եմ, որ ա՛յդ գնով եք որդուս կյանքը փրկել: Որ իմանաք ինչ կպատահեր մերոնց, եթե... ո՛չ, ես սարսափում եմ անգամ այդ մասին մտածելուց: Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ եմ:

Եվ Մարությանն ամուր-ամուր սեղմեց Բազենյանի ձախ ձեռքը:

Բազենյանը ժպտաց և ասաց, որ չարժե շնորհակալ լինել, որովհետև յուրաքանչյուր մարդու բարոյական պարտականությունն է վտանգ եղած դեպքերում օգնության հասնել ուրիշներին, մանավանդ անզոր երեխաներին: Հետո խնդրեց, որ նստի, և հարցրեց, թե երեխան իսկապես բոլորովին անվտանգ է մնացել:

— Մի մազի չափ անգամ չի վնասվել, — ասաց Մարությանը: — Այդ կատարյալ հրաշք է: Աղջիկս միայն փոքր-ինչ վախեցել է, բայց այդ դատարկ բան է: Հիմա գիտե՞ք ինչու եմ եկել, պարոն Բազենյան: Եկել եմ, որ նախ տեղեկանամ ձեր թանկագին առողջության մասին և հետո՝ խնդրեմ, որ շնորհ բերեք մեր տուն: Մերոնք այնպե՛ս ցանկանում են ծանոթանալ ձեզ հետ...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ամենայն ուրախությամբ կգամ, իհարկե, երբ առողջանամ:

— Մի՞թե հիմա առողջ չեք:

— Առողջ եմ, իհարկե, բայց բժիշկն արգելել է, որ սենյակից դուրս չգամ. ձեռքս կմրսեցնեմ: Բացի դրանից, չեմ կարողանում առայժմս շորս հագնել: Եվ դրա համար է, որ պառկած եմ:

— Հա՛, երբ որ այդպես է, իհարկե, լավ է, որ զգույշ մնաք: Բայց որ վտանգն անցնի բոլորովին, խո կգա՞ք:

— Շատ եմ ուզում և կաշխատեմ:

— Չէ, ի սեր աստծո: Կիսաբերան խոսքեր չեմ սիրում: Վճռական պատասխան տվեք՝ կգա՞ք, թե ոչ: Թե չէ, միևնույն է, ձեզ հանգիստ չեմ թողնիլ:

— Կգամ: Անպատճառ կգամ, — ասաց Բազենյանը ժպտալով:

— Այդպես: Ա՛յ, պարոն Շահյանը գիտե մեր տունը. միասին վեր կկենաք կգաք: Հա՛, պարոն Շահյան. դուք շարունակում եք մեզնից շատ հեռու ման գալ: Լավ չեք անում: Է՛հ, ի՞նչ անենք. աստծո կամքն էր, որ ձեր ողորմածիկ հայրը վախճանվեց, բայց խո չի՞ կարելի այդքան երկար սուգ պահել:

— Չէ, ի՞նչ սուգի բան կա, — ասաց Շահյանը փոքր-ինչ շփոթվելով և ուզեց արդարացնել իրեն, բայց չիմացավ ինչ ասի:

— Դե, երբ որ սուգի բան չկա, եկեք, էլի, առաջվա պես: Երիտասարդ եք, պետք է գնաք, գաք, խոսեք: Տանը նստելով բան չի դառնալ: Մինասյանից նամակ ունի՞ք:

— Մինասյանի՞ց: Չէ: Առհասարակ մեր միջև նամակագրություն չկա: Վերջերս միայն ցավակցական մի նամակ էր գրել հորս մահվան առթիվ: Իսկ դուք նամակ ստանո՞ւմ եք ձեր օրիորդից:

— Աշխենի՞ց: Ինչպե՛ս չէ, համարյա ամեն շաբաթ: Թեև ինքը, իհարկե, համեստությունից աշխատում է իր գործունեությունն իր համար աննպաստ գույներով նկարագրել, բայց ես համոզված եմ, որ նա արդեն ամբողջ գյուղի սիրելին է դարձել: Օ՛, ես գիտեմ ի՛նչ աղջիկ է: Նա...

Մարությանը ձեռքով մի բազմախորհուրդ նշան արավ և թեթև հառաչեց:

— Մի բան միայն ինձ անհանգստացնում է. աղջիկս շատ է դարդ անում նրա համար: Բայց վնաս չունի, կսովորի: Եղբոր համար էլ սկզբում շատ էր դարդ անում, բայց հետո սովորեց: Այդպես ուրեմն, պարոն Բազենյան, դուք խոստանում եք, որ պետք է գաք մեր տուն:

— Խոստանում եմ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ե՞րբ կգաք:

— Հենց առաջին օրը, երբ հնարավորություն ունենամ սենյակից դուրս գալու:

— Լավ: — Մարությանը վեր կացավ: — Հույս ունիմ այդ առաջին օրը շատ չի ուշանալ: Ուզեք-չուզեք, մենք այսուհետև բարեկամներ պետք է լինենք: Եվ, հավատացնում եմ ձեզ, չեք զղջալ մեր բարեկամությունից: Պարոն Շահյանը կարող է վկայել այդ մասին: Առայժմ ցտեսություն: Ցանկանում եմ ձեզ շուտափույթ առողջություն, — այսինքն՝ ձեզ չէ, ձեր ձեռքին, որովհետև դուք հիվանդ չեք և — փառք աստծո: Կգաք պարոն Շահյանի հետ: Պարոն Շահյան, խնդրում եմ մի մերժեք խնդիրքս, բերեք ձեր ընկերոջը և, առհասարակ, ինքներդ էլ եկեք, գնացեք, առանց քաշվելու: Ձմեռ է, գիշերները երկար են, կնստենք, կասենք, կխոսենք: Ցտեսություն: Անհամբեր կսպասեմ երկուսիդ էլ: Ցտեսություն:

Երբ Մարությանը դուրս գնաց, Բազենյանը նայեց Շահյանին, ժպտաց և կամաց ետ պառկեց բարձի վրա:

— Տեսնում ես, մարդը գրեթե ծերունի, և ինչքան կենդանություն կա մեջը: Այժմ համակրեցի, և արժե մոտիկ ծանոթանալ:

Շահյանը լուռ էր. ինչ-որ օտարոտի սառնություն էր տիրել նրան:

— Այսօր բժիշկս գալու է. եթե իրավունք տվավ և կարողացա, վաղը կգնանք: Հը՞, ի՞նչ ես կարծում:

— Ինչպես ուզում ես, — պատասխանեց Շահյանը:

— Հա, վաղը կգնանք: Զգում եմ, որ վաղը շատ լավ կլինեմ: Ձեռքիս ցավը կարծես թե արդեն անցել է: Համենայն դեպս, վաղը անցիր իմ կողմը: Չէ, ավելի լավ է, ես կգամ քեզ մոտ և միասին կգնանք: Ի դեպ մորդ էլ կտեսնեմ. կարոտել եմ: Դու չգիտես գնահատել մորդ, բայց ես խիստ սիրեցի նրան: Այնքա՜ն բարի պառավ է...

Շահյանը շարունակ լուռ էր և ինքն էլ էր զարմանում, թե ինչ է պատահում իրեն: Նա երկար չմնաց ընկերոջ մոտ: Ճանապարհին ավելի ու ավելի զգում էր, որ իր հոգու խաղաղ տրամադրությունը սաստիկ խանգարվել է: Դեպի Բազենյանը տածած նրա զգացումը ենթարկվել էր հանկարծական մի հեղաշրջման, ընկերական նախկին անկեղծ սիրո տեղ նրա մեջ սկսել էր գլուխ բարձրացնել մի նոր, անծանոթ և ճնշող զգացում: Նախա՞նձ էր այդ, չկամությո՞ւն, թե՞ մի ուրիշ բան, — աստված գիտե. բայց կարծես, այնքան էլ նրա սրտովը չէր, որ Բազենյանի ձեռքով ազատված երեխան Մարությանի որդին էր: Եվ, զարմանալի է, ամենևին չէր ուզում, որ Բազենյանը գնա Մարությանների տուն...

— Բարև ձեզ, պարոն Շահյան, — հանկարծ ինչ-որ կանացի ձայն դիպավ նրա ականջին, և նա մեքենայաբար կանգ առավ:

Նրա առաջ կանգնած էր օր. Սահակյանը աշակերտական մի կույտ տետրակներ կռան տակին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Չճանաչեցի՞ք, — հարցրեց օր. Սահակյանը՝ ժպտալով իր համարձակ ժպիտով:

Շահյանը շփոթվեց:

— Ինչպես չէ... ներողություն...

— Հիշո՞ւմ եք, մենք ծանոթացել ենք երկաթուղու կայարանում, երբ ճանապարհ էինք ձգում մեր բարեկամներին՝ Աշխենին և Մինասյանին:

— Այո, այո... Ներողություն... Ես... ինչպես չէ, ինչպես չէ...

Եվ Շահյանը սաստկացած շփոթմունքից մինչև անգամ կարմրեց:

— Ասենք ներելի է, որ ինձ իսկույն չհիշեիք, որովհետև մենք ծանոթացել ենք այնպիսի պարագաներում, երբ մեր ամբողջ ուշադրությունը կենտրոնացած էր մեր ամենալավ բարեկամների վրա, — ասաց օր. Սահակյանը շարունակելով ժպտալ: — Ինչևիցե: Ես այժմ, — ներողություն, որ ձեզ անհանգստացնում եմ, — ես այժմ ուզում եմ մի տոմսակ սաղացնել ձեզ վրա:

— Ի՞նչ տոմսակ:

— Կիրակի օր, այս կիրակի, մի աղքատիկ գյուղի ուսումնարանի օգտին պարահանդես ունինք, պետք է գաք:

— Պարահանդե՞ս...

Օր. Սահակյանը նայեց Շահյանի՝ մի քիչ ապուշի տպավորություն գործող դեմքին և ծիծաղեց:

— Կարող եք չպարել, բայց տոմսակ, կարծում եմ, կարող եք վերցնել: Հա, տա՞մ:

— Տոմսա՞կ... Ինչու չէ: Խնդրեմ:

Օր. Սահակյանը տետրակների կույտն արագորեն մյուս թևի տակն առավ, շտապով հանեց հուշատետրը և սկսեց թերթել, որ մի տոմսակ հանի:

— Գիտեք, ուզում էինք ներկայացում տալ, չհաջողվեց: Ներկայացումն, ասենք ղալմաղալ բան էլ է և ծախսեր շատ է պահանջում: Ավելի լավ համարեցինք բանը պարահանդեսով վերջացնել: Համեցեք, երկու ռուբլի արժե:

Շահյանն առավ տոմսակը և գինը վճարեց:

— Շնորհակալություն: Տեսնո՞ւմ եք, մինչև անգամ շնորհակալություն ենք հայտնում տոմսակ գնողներին, — ասաց օր. Սահակյանը ծիծաղելով: — Ի՞նչ արած, բանն այդտեղ է հասել: Երևակայեցեք, քսան հատ տոմսակ են տվել ինձ վաճառելու, և այդ ութերորդն է միայն, որ վաճառում եմ, չնայելով, որ էլ ծանոթ ու բարեկամ չեմ թողել, որին առաջարկած չլինեմ: Հայերիս մեջ բանը այդպես է առաջ գնում: Բայց, երևի, մի երկու-երեք հատ էլ կվաճառեմ: Դեռ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մարությաններին չեմ տեսել. չեմ շտապում, որովհետև նրանք ամեն բանում նաղդ են: Հա՜, իմացա՞ք, ինչ է պատահել Մարությանի որդուն ու աղջկան:

— Որ կառքի տակ ընկնելուց ազատվե՞լ են:

— Այո:

— Ինչպես չէ:

Եվ Շահյանն ուզեց ավելացնել, թե ով է ազատողը, բայց ոչինչ չասաց, ինքն էլ չիմացավ՝ ինչու:

— Չգիտեմ, ով է այդ երիտասարդը, — ասաց օր. Սահակյանը, — բայց ասում են, որ շատ հետաքրքրական մի անձնավորություն է և նոր է եկել արտասահմանից իբր թե ինչ-որ խորհրդավոր հանձնարարությամբ:

Շահյանը դարձյալ լռություն պահեց: Այժմ նա զգում էր, որ չէր ուզում խոսել Բազենյանի մասին պարզապես նախանձից:

Դարձյալ մի քանի խոսք փոխանակելուց հետո նրանք սեղմեցին իրար ձեռք և բաժանվեցին իրարից:

4

Հետևյալ օրը Շահյանը չհանդիպեց Բազենյանին: Նա սպասում էր, որ Բազենյանն ինքը կգա միասին Մարությանների տուն գնալու համար, և առաջուց վճռել էր հրաժարվել այդ բանից: Բայց այդ օրը Բազենյանը չերևաց: Նա եկավ երկրորդ օրը, երեկոյան դեմ:

— Զարմանալի մարդ ես, — ասաց նա, — խնդրեցի, որ հանդիպես ինձ, չեկար ոչ երեկ, ոչ այսօր: Բժիշկս միայն իրավունք տվեց սենյակիցս դուրս գալու: Ինչո՞ւ չեկար:

— Ճշմարիտ ասած, ինքս մի քիչ տկար էի, — դիմեց Շահյանն իր սովորական ստախոսության:

— Է՜հ, դու էլ... Ճիշտ որ քնքուշ մեծացած աղջիկ ես եղել:

Այն միջոցին, երբ Բազենյանը Թամարին պատմում էր Մարությանի որդուն ազատելու դեպքը, Շահյանը դիտում էր ընկերոջը: Նրան թվում էր, թե Բազենյանի մեջ մի նոր բան է տեսնում, որ առաջ չէր նկատել, և այդ «նոր բանը» չափից դուրս գեղեցիկ ու գրավիչ էր, բայց և, միևնույն ժամանակ, հակակրելի: Աչք ծակելու չափ աչքի էր ընկնում Բազենյանի վնասված ձեռքը, որը խնամքով փաթաթված՝ պահում էր շքանշանի ժապավենի պես վզից կախ արած սև շորի մեջ: Նրա արտաքինին առանձին գրավչություն էր տալիս ազնիվ մահուդից մեծ ճաշակով կարված հագուստը, որի սև ֆոնի մեջ ձյունի մաքրությամբ պլպլում էր փղոսկրի պես օսլայած նոր շապիկը չափազանց բարձր օձիքով: Փոքր-ինչ նիհարած դեմքը դեռևս դժգույն էր, իսկ աչքերի նախկին համարձակ հայացքը մեղմացել և ժպտում էր նոր առողջացած մարդու կենսուրախ քնքշությամբ: Շահյանը մի րոպե շունչը պահեց, որ չզգա նրանից սուր կերպով բուրող օծանելիքի հոտը — այնքան այդ հոտը գարշելի թվաց նրան:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Սակայն Շահյանին ոչինչ այնքան ատելի չէր թվում, որքան սև շորի մեջ լիրբ համեստությամբ հանգչող այդ ձեռքը, որ կարծես աղաղակում էր՝ «Գիտե՞ք ինչու եմ վնասված...»:

— Դե, Լևոն, ի՞նչ ես նստել, — դիմեց նրան Բազենյանը: — Ես ախր եկել եմ, որ գնանք Մարությանի տուն: Վեր կաց հագնվիր:

— Ես որ չգամ, լավ կլինի, — ասաց Շահյանն անվճռականությամբ:

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ, ճշմարիտ... Ինչ-որ վատ տրամադրության մեջ եմ:

— Ավելի լավ, կգնանք, տրամադրությունդ կբացվի: Վեր կաց: Ամոթ է, մարդը սպասում է: Վերջապես, տունը չգիտեմ, ախր:

Մի ժամից երկու ընկերները բարձրանում էին: Մարությանների տան սանդուղքով: Նախասենյակը լուսավորված էր առաստաղից կախված կապույտ լապտերով: Հեռավոր սենյակներից աղջկանց տաք խոսակցության և բարձրաձայն ծիծաղի ձայներ էին լսվում: Աղախինը ներս հրավիրեց հյուրերին հյուրասենյակ: Այնտեղ ոչ ոք չկար: Սեղանի վրա վառվում էր բրոնզյա ջլուտ մարդու ուսին դրած հսկայական լամպը: Մի բոպե չանցած, բացվեց հյուրասենյակի խորքում դռներից մեկը, և արագ քայլերով ներս մտավ Մարությանը:

— Ա՜, վերջապես, — ուրախ բացականչեց նա և երկար ու պինդ սկսեց սեղմել իր երկու ձեռքով Բազենյանի ձեռքը: — Ինչքա՜ն ցավում եմ, որ ստիպված եմ ձեր ձախ ձեռքը սեղմել: Ինչպե՞ս եք հիմա, լա՞վ եք:

— Փառք աստծո:

— Օ՜, որ գիտենաք օրական քանի անգամ եմ փառք տալիս աստծուն, որ այդպես հեշտ եք պրծել: Համեցեք, համեցեք այստեղ: Չեք կարող երևակայել, թե ինչքան ուրախացրիք ինձ ձեր այցելությամբ: Պարոն Շահյան, բարև ձեզ: Դուք էլ վերջապես եկաք: Դուք էլ այստեղ համեցեք: Սակայն ազատ եք, պարոններ, ուր կամենում եք՝ նստեցեք: Սուրե՜ն, Սուրեն, արի այստեղ, տես ով է եկել, — կանչեց Մարությանը, վազելով դեպի այն դուռը, որտեղից ինքը ներս մտավ:

Սակայն այդ դռնից, Սուրենի տեղ, դուրս եկավ Թեկլեն: — Արի, արի, դու արի, — կնոջ առաջն ընկավ Մարությանը: — Ահա ներկայացնում եմ քեզ մեր Սուրենի ազատչին, որին այնքան ցանկանում էիր տեսնել: Իմ կինս է, — դարձավ նա Բազենյանին:

Բազենյանն այդ աղմկալի ընդունելությունից չգիտեր ինչ աներ և շարունակ ժպտում էր ինքնավստահ համեստությամբ:

— Ներեցեք, տիկին, ես ստիպված եմ ձեզ իմ ձախ ձեռքը տալ, — ասաց նա, թեթև խոնարհվելով:

— Ա՜խ, ձեր ա՞ջ ձեռքն է վնասվել, — մեղմորեն և ցավագին բացականչեց Թեկլեն: — Ինչքա՜ն ցավում եմ, ինչքա՜ն ցավում եմ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Բան չկա, — նկատեց Մարությանը, — շուտով բախտ կունենանք աջ ձեռքը սեղմելու: Ա՜, արի՛ այստեղ, չարաճճի, — հանկարծ կանչեց նա և վազեց դեպի Սուրենը, որ կանգնել էր դռան շեմքում և երեխայական մտառու հետաքրքրությամբ նայում էր հյուրերին: Հայրը բռնեց երեխայի ձեռքից և առաջ բերեց: — Տես ով է եկել: Ճանաչո՞ւմ ես այս պարոնին:

Երեխան լուրջ հայացքով և փոքր-ինչ քաշվելով դիտում էր Բազենյանի ժպտող դեմքը:

— Չե՞ս ճանաչում: Նա ա՛յն պարոնն է, չարաճճի, որ քեզ ազատեց կառքի տակ ընկնելուց: Դե, շնորհակալություն հայտնիր:

Սուրենն այս անգամ նայեց Բազենյանին հոնքերի տակից. ժպտաց մանկական ամոթխածությամբ և սիրուն աչքերը վայր թողեց:

— Մնոլակալ եմ, — շշնջաց նա, հագուստի փեշը մատի վրա փաթաթելով:

— Է՜, լավ ասա, է՜: Ասա, շատ շնորհակալ եմ, պարոն, որ ինձ ազատեցիք:

— Սատ սնոլակալ եմ, պարոն, որ ինձ ազատեցիք, — կրկնեց Սուրենը:

— Այ այդպես, ապրիս, — բացականչեց Մարությանը և կամաց կմշտեց որդու թուշը:

— Ես քեզ ազատեցի, որովհետև այդքան խելոք տղա ես, — շոյեց երեխային Բազենյանը: — Եկ ինձ մոտ. մենք այսուհետև բարեկամներ ենք: Իմ անունն էլ Սուրեն է:

Ամենքը նստեցին: Բազենյանը երեխային առավ իր ծնկների մեջ և սկսեց ձեռքով փաղաքշել նրա բուկը:

— Շուտով աղջիկս էլ բախտ կունենա ծանոթանալու ձեզ հետ, — ասաց Մարությանը:

— Հա՛, ինչպե՞ս է օրիորդը, — վրա բերեց Բազենյանը: — Վախն անցե՞լ է:

— Է՛հ, դատարկ բան է, ի՛նչ վախ:

— Չէ, այդպես մի ասիր, — նկատեց կինն ամուսնուն: — Նա բավական վախեցել է. չե՞ս նկատում ինչպես ամեն մի հասարակ բանից հանկարծ ցնցվում է: — Բան չկա. վախը չափել կտանք՝ կանցնի, — ասաց ամուսինը ծիծաղելով: — Տե՛ս ինչ աղմուկ է սարքել այնտեղ:

Մարությանն այդ նկատողությունն արեց այդ րոպեին հանկարծ բռնկած ուրախ քրքջոցի ձայների վրա, որոնք լսվեցին հեռավոր սենյակներից: Այնուհետև քրքջոցի և խառնաշփոթ խոսակցության հետ նախասենյակում լսվեցին ոտների ձայներ:

Բազենյանն ու Շահյանը հետաքրքրությամբ ականջ դրին, մինչև որ ձայները, հետզհետե խլանալով, լռեցին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Գնացին, — ասաց Մարությանը, — Այս գիշեր շուտ է վերջացել դասախոսությունները: Գիտե՞ք ինչ կա, պարոն Բազենյան: Այդ աղջիկս է: Այդպես շաբաթը մի երկու անգամ հավաքում է ընկերուհիներին և հայերեն խոսել-կարդալ է սովորեցնում: Պետք է իմանաք, որ այդ ընկերուհիները բոլորն էլ հայ են, բայց ամեն լեզու գիտեն, բացի հայերենից: Գիտեք, էլի՛, մեր այսպես կոչված բարձր դասակարգի աղջիկներն ինչ կլինին...

Դուռն ուժգնորեն բացվեց, և աղմկալի քայլերով ներս մտավ Եվան: Իրանին պինդ սեղմված մոխրագույն շրջազգեստը, որի ծանր փեշերը հազիվ էին ծածկում ոտների ծայրերը, շատ շնորհալի կերպարանք էր տալիս նրա համարձակ հասակին: Նա մի քանի քայլ առաջ շտապեց իր փութկոտ քայլերով, բայց հանկարծ կանգ առավ և զարմացած նայեց Բազենյանին:

Շահյանի սիրտը սաստիկ թրթռաց և հանկարծ, կարծես, դադարեց այլևս բաբախելուց:

Բազենյանը երեխային կամաց հեռացրեց իրենից և վեր կացավ:

— Ի՞նչ կանգնեցիր, առաջ արի, — ասաց Մարությանն աղջկան: — Արի ծանոթացիր պարոն Բազենյանի հետ, որին դու էլ ես պարտական:

— Ա՛խ, եղբորս փրկի՛չը, — բացականչեց Եվան սաստիկ ուրախացած և վազեց դեպի Բազենյանը, թույլ չտալով, որ նա մոտենա իրեն: — Չգիտեմ ինչպես պիտի արտահայտեմ ձեզ իմ շնորհակալությունը, պարոն Բազենյան: Դուք որ օգնության չհասնեիք, եղբայրս խո հիմա չպետք է լիներ: Երևակայեցեք, սասափից այն աստիճան կորցրել էի ինձ, որ բոլորովին չեմ հիշում ձեր դեմքը: Մինչև անգամ չեմ հիշում, թե ինչպես եղավ, որ եղբայրս անվտանգ մնաց, իսկ դուք... Ա՛խ, ի՛նչ դժբախտություն... Ահա ձեր ձեռքը դեռ կապած ունիք:

— Ի՞նչ վնաս, օրիորդ. թող մի-երկու ամիս կապած մնա:

— Մի-երկու ամի՛ս...

— Գոնե բժիշկն այդպես է ասում:

— Չէ՛, չէ՛, դա չափազանց շատ է: Ինչպե՞ս կարելի է... չեմ ուզում:

— Տեսնում եք, պարոն Բազենյան, չի ուզում, — լուրջ կատակով ասաց Մարությանը, — ուրեմն ձեր ձեռքն իրավունք չունի մի-երկու ամիս կապած մնալու: Շատ-շատ՝ մի-երկու շաբաթ:

— Իհարկե, — պնդեց Եվան:

— Ավելի լավ չէ՞ մի-երկու օր, — իր հերթին նկատեց Թեկլեն:

— Ո՛ւռ, մայրիկս ավելի լավ ասաց. շատ-շատ՝ մի-երկու օր, այսինքն դարձյալ մի-երկու օր, որովհետև մի շաբաթ է արդեն, որ կապած ունիք ձեր ձեռքը... Ա՛խ, պարոն Շահյան, — հանկարծ բացականչեց Եվան, նոր տեսնելով Շահյանին, և արագ մոտեցավ նրան: — Դուք

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

այնքան հեռու եք նստել, որ ձեզ չնկատեցի: Բարև ձեզ: Ինչո՞ւ մեզ մոռացել եք: Համեցեք, մոտիկ նստեցեք, խնդրում եմ:

Շահյանը հենց սկզբից այնպիսի դրության մեջ էր զգում իրեն, որ կարծես ինքն առանձնապես ոչ մի նշանակություն չունի այդ տան մեջ կամ եթե ունի, այդ էլ նրա՛ համար միայն, որ Բազենյանի ընկերն է: Նրա ինքնասիրությունը սաստիկ վիրավորվեց մանավանդ այն բանից, որ Եվան, Բազենյանով ոգևորված, չնկատեց իրեն սկզբում: Եվ չար, անզոր նախանձը, որ երկու օրից ի վեր ծագել էր նրա մեջ դեպի ընկերը, այժմ արդեն զգալի արագությամբ պաշարում էր նրա ամբողջ էությունը: Չէ՞ որ վնասված ձեռքը փաթաթանի մեջ դրած, արտիստական ճաշակով հագնված այդ վայելչահասակ, գեղեցիկ երիտասարդն արդեն կուռք էր դարձած Մարությանների համար, որոնց երեխային փրկել էր մահից անօրինակ անձնազոհությամբ: Մինչդեռ Եվան այնքա՛ն շնորհալի, այնքա՛ն գեղեցիկ, այնքա՛ն հրապուրիչ էր և այնպիսի՛ եռանդուն ուշադրություն էր ընծայում Բազենյանին...

Շահյանի դրությունը հետզհետե ծանրանում էր: Նա բոլորովին չէր խոսում, և ըստ երևույթին ուշադրություն դարձնող չկար նրան: Երբ Մարությաններն երբեմնակի մի-մի խոսք էին ուղղում նրան, այդ էլ, Շահյանը կարծում էր, քաղաքավարության համար միայն:

Ամենքի ուշադրությունը կենտրոնացած էր Բազենյանի վրա: Հարցեր էին, որ այս ու այն կողմից տալիս էին նրան, և նա ամենքին էլ գոհացում էր տալիս պարզ, ազատ և ինքնավստահորեն:

Խոսակցությունն ինքնաբերաբար անցավ Կ. Պոլսի անցքերին և՝ առհասարակ Թրքական-Հայաստանում սկսված գործին: Այստեղ Բազենյանը, ինչպես ասում են, մտավ իր դերի մեջ, և «սուրբ գործն» սկսեց հոլովվել նրա բերանում ամեն կերպ:

Շահյանին թվում էր, թե նա բառ առ բառ կրկնում է նույնը, ինչ որ իր մոտ էր ասել, կարծես բերան էր արել այդ բոլորը, ինչպես մի լավ դերասան իր բազմիցս խաղացած դերը:

Մարությանները լսում էին նրան առանձին հետաքրքրությամբ: Այդ բանը ոգևորում էր Բազենյանին ավելի խորը գնալու: Արդեն այն հանգամանքը, որ մինչև անգամ շատախոս Մարությանը լռել էր, պարզ ապացույց էր Շահյանի համար, որ Բազենյանը կատարելապես տիրել էր ունկնդիրներին:

Շահյանը գաղտագողի դիտում էր Եվային: Եվան կռթնել էր բազկաթոռի թիկունքին և, հայացքը Բազենյանի աչքերին հառած, լսում էր նրան ամենայն մտառությամբ: Նրա հոնքերի միջև գոյացել էր մի կնճիռ, որ վերին աստիճանի խելացի արտահայտություն էր տալիս նրա խոշոր աչքերին:

Եվ որքան Շահյանը շատ էր դիտում Եվային, այնքան ավելի թվում էր նրան, թե Բազենյանի ճառախոսությունը սուտ է, խաբեբայություն է, անամոթ լրբություն է: Մի ինչ-որ քննադատական և թերահավատության ոգի էր զարթել նրա մեջ. նրան խիստ հակասական էին թվում Բազենյանի վառվռուն խոսքերը նրա շիկ հագուստին և հոտավետ օծանելիքին: Եվ Շահյանի սիրտն առաջին անգամ կասկած մտավ նրան տված իր գումարի նպատակի մասին: Այդ կասկածն առանձին ուժ ստացավ այն միջոցին, որ երբ Մարությանը խոսք բաց արեց իր

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

հեռացած որդու մասին և ասաց, որ նա ևս ծառայում է նույն նպատակին, ինչ որ Բազենյանը, վերջինս հանկարծ զսպեց իրեն և այնուհետև սկսեց խոսել զգուշորեն...

5

Այդ երեկո Մարությանները մի ուրիշ հյուր էլ ունեցան: Դա օր. Սահակյանն էր: Ըստ երևույթին, նա բոլորովին չէր սպասում, որ Բազենյանը, որի հետ մտնելուն պես ծանոթացրին նրան, այդքան ֆրանտ երիտասարդ կարող էր լինել: Կողմնակի կերպով նա շատ խորհրդավոր բաներ էր լսել Բազենյանի մասին, ասել էին, թե Բազենյանը հայրենիքի ազատության գործին նվիրված մի երիտասարդ է, թե նա եկել է արտասահմանից այդ գործի հետ կապ ունեցող նվիրական նպատակներով և այլն, և այլն, և այդ ամենը նրա մեջ բոլորովին ուրիշ և ուրույն մտապատկեր էր ստեղծել Բազենյանի արտաքինի մասին: Հուժկու մարմին, հսկայական հասակ, տոնական կերպարանք, անճոռնի, աղքատ հագուստ — ահա այդ մտապատկերը: Բայց այժմ այդ մտապատկերի բոլորովին հակապատկերն էր տեսնում իր աչքի առաջ: Այդ պատճառով հենց սկզբից փոքր-ինչ կասկածանքով և բավական սառն վերաբերվեց դեպի Բազենյանը: Քաղաքավարության համար միայն թեթև կերպով գովաբանեց նրա քաջությունը, որով ազատել էր երեխային և նստեց Մարությանի բազկաթոռի վրա, որ տանտերն իր սովորական աղմկալի ընդունելությամբ առաջարկել էր նոր հյուրին:

— Ներեցեք, — որ այս կեսգիշերին անհանգստացնում եմ ձեզ, — ասաց օր. Սահակյանը: — Բայց դուք գիտեք, որ ցերեկն ես ամենևին ժամանակ չունիմ: Ես եկել եմ երկու բանի համար:

— Նա՞խ, — հարցրեց Մարությանը, շտապով նետելով նրան մոտիկ:

— Եկել եմ նախ՝ բողոքելու, որ Աշխենից միայն այսօր եմ նամակ ստանում:

— Միայն այսո՞ր, — զարմացավ Մարությանը:

— Միայն այսօր: Երկու ամսից ավելի է, որ գնացել է և այժմ է միայն բարեհաճում մտաբերել ինձ: Սա վարմո՞ւնք է, սա արդարությո՞ւն է, ձեզ եմ հարցնում, հատկապես ձե՛զ, պարոն Մարության:

— Ինչո՞ւ հատկապես ինձ:

— Որովհետև ձեր եղբոր աղջիկն է:

— Ա՛յ քեզ բան:

— Ասացեք, խնդրեմ, ձե՞զ էլ այդպես ուշ է գրել, թե՞ ամեն շաբաթ հեղեղում է ձեզ նամակներով, ինչպես պատվիրեցիք մեկնելու գիշերը:

— Ամեն շաբաթ չէ, բայց մինչև այժմ վեց-յոթ նամակ կլինենք ստացած նրանից:

— Վեց-յոթ նամա՛կ... Դե, միևնույն է, էլի, թե ամեն շաբաթ ստացել եք: Ուրեմն իրավո՞ւնք ունիմ բողոքելու, թե ոչ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Կատարելապես: Բայց ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ հատկապես ինձ եք բողոքում: Ա՛յ, բողոքեցեք:

Եվ Մարությանը ծիծաղելով մատնանիշ արավ աղջկան:

— Եվայի՞ն: Օր. Սահակյանն ամբողջ մարմնով արագորեն դարձավ դեպի Եվան, ժպտաց և ցուցամատով կամաց խփեց նրա կզակին: — Հա-ա՞, Եվա, քեզ բողոքե՞մ:

Եվան գլուխը փոքր-ինչ ետ գցեց, որ ազատվի նրա անտեղի փաղաքշանքից, բայց ծիծաղեց:

— Ում ուզում ես բողոքիր, — նկատեց նա, — բայց ավելի լավ չի՞ լինի ասես՝ ինչ է գրում:

— Կուզե՞ք կարդամ նամակը:

— Եթե մասնավոր ոչինչ չկա, — նկատեց Մարությանը:

— Ներողություն, կուզեք, որ մասնավորն է՞լ կարդայի: Տեսեք ինչ է գրում:

Օր. Սահակյանը շտապով հանեց Աշխենի նամակը, բաց արեց, պատրաստվեց կարդալու, բայց հանկարծ նայեց Բազենյանին ու Շահյանին, որոնք նրա գալուց հետո նստած էին բոլորովին լուռ, նամակը նորից ծալեց և պահեց:

— Ներողություն, պարոններ, — ասաց նա. — ես լավ չհասկացա տանտիրոջ այս ոոպեին արած նկատողության իմաստը և այնքան անքաղաքավարի գտնվեցա, որ ուզում էի մասնավոր գործերով զբաղեցնել ձեզ:

— Խնդրում եմ, օրիորդ, — եռանդով վրա բերեց Բազենյանը: — Մեր ներկայությունը թող ամենևին արգելք չլինի ձեզ նամակը կարդալու:

«Իմ տեղ էլ սա է խոսում: Սա, երևելի նշան է», — մտածեց Շահյանը:

— Դուք թու՞յլ եք տալիս:

— Խնդրում եմ, օրիորդ: Դա ի՞նչ խոսք է:

— Իսկ դո՞ւք, պարոն Շահյան:

— Է՛, թողեք, թե աստված կսիրեք, այդ անտեղի քաղաքավարությունները, — նկատեց Մարությանը: — Ինչի՞ց եզրակացրիք, չեմ հասկանում, թե նկատողությունս արի նրա համար, որ պատվական հյուրերիս չզբաղեցնեք մասնավոր բաներով: Եթե չճանաչեի իմ Աշխենին, ուղղակի կարգելեի ձեզ նրա գրածը կարդալ: Բայց գիտեմ, թե ինչ է նա և ինչ կլինի գրած, ուստի ամենևին երկյուղ չունեմ, թե հյուրերս պիտի ձանձրանան նրա նամակը լսելով: Խնդրում եմ, կարդացեք:

Օր. Սահակյանը նորից հանեց նամակը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Պարոն Մարությանը ճիշտ է ասում, պարոններ, այն, ինչ որ այժմ պիտի կարդամ, անհետաքրքրական չէ և կարող է ընդհանուր խոսակցության նյութ դառնալ: Պարոն Շահյանը ճանաչում է Աշխենին, բայց չգիտեմ՝ դուք լսե՞լ եք նրա մասին, պարոն...

— Բազենյան, — վրա գցեց օր. Սահակյանին Մարությանը:

— Պարոն Բազենյան: Չգիտեմ՝ դուք լսե՞լ եք օր. Աշխենի մասին:

— Եթե չեմ սխալվում, նա ձեր... — դիմեց Բազենյանը Մարությանին:

— Եղբորս աղջիկն է:

— Որը վարժուհու համեստ պաշտոնով գյուղն է գնացել. — վրա բերեց օր. Սահակյանը: — Տեսնո՞ւմ եք այս տունը. նա ապրել է այս տան մեջ երկար տարիներ, — նա որբ է, — խաղաղ, հանգիստ կյանք է վարել իր հարգելի հորեղբոր և նրա հարգելի ամուսնու խնամքի տակ, որոնք իրենց հարազատ աղջկանից ոչնչով չեն զանազանել նրան: Բայդ և այնպես թողել է իր ամենայնիվ ապահովված կյանքը և զրկանքներով լի գյուղն է գնացել խավար ժողովրդի մեջ լույս տարածելու համար: Նա սիրված և մանավանդ հարգված է եղել ամենքից: Հարգված բառը շեշտում եմ նրա համար, որ, իմ կարծիքով, հարգանքի զգացում թելադրելու համար ավելի մեծ ուժ է հարկավոր, քան թե սիրո զգացում. որովհետև հարգանքն ավելի ճշմարիտ, ավելի դիմացկուն և ավելի ազնիվ զգացում է, քան թե սերը, որը միշտ պատահական և անցողակի է լինում և հազիվ թե առաջանում է մարդու ներքին արժանիքի գնահատումից: Սիրվում են հարյուրից իննսունուինն, բայց հարյուրից մեկը հազիվ է հարգվում: Ասելս այն է, թե, ուրեմն, որպիսի անսովոր աղջիկ է Աշխենը, որ կարողացել է հարգել տալ իրեն ամենքին: Կարող եմ ձեզ հավատացնել, պարոններ, որ ես չափազանց թերահավատ և, մանավանդ մարդկային արժանիքները գնահատելու գործում, խիստ հոռետես եմ. ուստի կարծում եմ, այս բանն արդեն բավական պիտի լինի համոզելու ձեզ, թե ի՛նչ է օր. Աշխենը, որի մասին այդպես ոգևորված եմ խոսում:
— Ես կատարելապես հավատում եմ ձեզ, օրիորդ, — ասաց Բազենյանը: — Մի օրիորդ, որ դաստիարակվել է պարոն Մարությանի և նրա հարգելի ամուսնու ձեռքի տակ, իհարկե, ուրիշ կերպ չէր կարող լինել:

— Ինչո՞ւ «իհարկե», — նկատեց Մարությանը ծիծաղելով: — Կամ ես ու իմ ամուսինս ի՞նչ գործ ունինք այստեղ, որ մեզ խառնում եք մեջը: Եղբորս աղջիկը, ճիշտ է, մեր ձեռքի տակ է մեծացել, — ավելացրեց նա լրջությամբ, — բայց իրեն դաստիարակողն, այսպես ասած, ինքն է եղել:

— Թողեք, որ այդ մենք գիտենանք, պարոն Մարության, — ընդհատեց նրան Բազենյանը: — Ես շատ լավ ծանոթ եմ մեր ընտանիքներին և այդ ընտանիքների մեջ մեծացած աղջիկներին, և եթե ձեր ընտանիքն էլ նման լիներ իմ ճանաչած ընտանիքներին, ապա շատ պիտի զարմանայի հարգելի օրիորդի՝ ձեր եղբոր աղջկա մասին ասած խոսքերի վրա: — Ինչո՞ւ:

— Որովհետև հայ աղջկանց և մի որևէ վեհ իդեալի միջև, որպես իդեալի ծառայում է ձեր եղբոր աղջիկը, այնքան նմանություն կա, որքան դատարկ տակառների և ցորենով լի հասկերի միջև:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվան, որ առանձին հետաքրքրությամբ լսում էր Բազենյանին, ուզեց բան ասել, բայց լռեց:

— Հայ աղջիկները, — շարունակեց Բազենյանը, — ընդհանրապես առած, անգույն, չնչին, դատարկ արարածներ են, հեռու ամեն իդեալից:

Օր. Սահակյանը հոնքերը սաստիկ բարձրացրեց և նայեց կողքին նստած Եվային կոմիկական տարակուսանքով: Հետո շատ նուրբ ժպիտով և վերին աստիճանի մեղմորեն դիմեց Բազենյանին.

— Ներողություն, հարգելի պարոն, ինձ թվում է, թե ձեր նկատողությունը փոքր-ինչ... Ինչպե՞ս ասեմ, որ անքաղաքավարի չնկատվեմ... փոքր-ինչ, այսպես ասած, քաղաքավարի չէր, եթե ոչ իմ, գոնե այս օրիորդի վերաբերմամբ, որ նույնպես հայ աղջիկ է և նստած է ձեր առաջ:

Բազենյանն ամենևին չշփոթվեց օր. Սահակյանի այդ նկատողության վրա և առանձին եռանդով դարձավ Եվային.

— Խնդրում եմ, ներեցեք ինձ, օրիորդ: Ես այնպես եմ ընդունում, որ մեր խոսակցությունը բոլորովին լուրջ բանի մասին է և, բացի դրանից, — ավելացրեց Բազենյանը ժպտալով, — ձեզ անշուշտ հայտնի պետք է լինի այն կանոնը, որ ներկա եղողները միշտ բացառություն են կազմում: Իմ նկատողությունը վերաբերում էր...

Եվան արագությամբ ընդհատեց նրան.

— Խնդրում եմ, պարոն Բազենյան, բոլորովին ապահով եղեք. ես այնքան բծախնդիր չեմ: Օր. Սահակյանը կատակ է անում:

Օր. Սահակյանը կոմիկական ապշությամբ նայեց նախ Եվայի լուրջ դեմքին, հետո՝ Մարությանին և նրա կնոջը:

— Դե արի ու սրատեսների պատիվը պաշտպանիր, — ասաց նա: — Շատ լավ: Երբ որ ես կատակ եմ անում, այժմ լուրջ կերպով կխոսեմ, մանավանդ որ պարոն Բազենյանն ասում է, թե խոսակցությունը բոլորովին լուրջ բանի մասին է: Շատ բարի, պարոն Բազենյան: Երբ որ դուք կարծում եք, թե լուրջ բաների մասին խոսելիս շատ էլ բծախնդիր չպետք է լինինք քաղաքավարական կանոնները պահպանելու համար, ուստի ես էլ ծալում մի կողմ եմ դնում քաղաքավարական կանոնները և ասում եմ. եթե, ձեր ասելով, հայ աղջիկներն անգույն, չնչին, դատարկ արարածներ են ընդհանրապես, երիտասարդներդ էլ մի բանի նման չեք: Խնդրում եմ, մի՛ նեղանաք, մենք բոլորովին լուրջ բանի մասին ենք խոսում:

— Ես չեմ նեղանում:

— Ճի՞շտ:

— Ամենևին:

— Ուրեմն ճի՞շտ եմ ասում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Բոլորովին ճիշտ չեք ասում:

Բազենյանը իր պատասխանները տալիս էր շատ հանգիստ, ամենևին ուշադրություն չդարձնելով օր. Սահակյանի հեգնական տոնին: Այդ բանը գրգռեց օր. Սահակյանին:

— Զարմանալի է, — ասաց նա, — և դուք կարողանում եք այդքան հանգիստ մնալ, երբ անարդարությո՞ւն եք լսում:

— Ես հանգիստ եմ մնում հենց նրա՛ համար, որ անարդարություն եմ լսում:

— Ուրեմն ես չարախոսում եմ:

— Ես այդպիսի բան չասացի: Եվ, կարծեմ, հաշիվ էլ չպետք է ունենաք չարախոսելու մեր երիտասարդների վրա, — ավելացրեց Բազենյանը իր հանգիստ-հանդուգն հայացքով դիտելով օր. Սահակյանի տգեղ արտաքինը:

Այդ երկմիտ խոսքերը և մանավանդ այդ հանդուգն հայացքը ավելի ևս վառեցին օր. Սահակյանին, բայց և այնպես նա չկորցրեց իրեն:

— Ես շատ եմ հավանում, պարոն, ձեր այդ սիրուն պատասխանները, — ասաց նա իր նախկին հեգնական տոնով: — Բայց կարելի չէ՞ արդյոք իմանալ, թե ի՞նչ ունիք դուք երիտասարդներիդ պաշտպանելու համար:

— Ես ոչինչ չունիմ, օրիորդ, մեր երիտասարդներին պաշտպանելու համար, որովհետև նրանք կարոտ չեն իմ պաշտպանությանը: Նրանց կատարած մեծ գործերը հրապարակի վրա են. պետք է միայն ընդունակություն ունենալ տեսնելու:

— Խոստովանում եմ ձեզ, որ ես այդ ընդունակությունը չունիմ և դրա համար խնդրում եմ, որ գեթ մի օրինակ ցույց տայիք:

— Օրինակ՝ հենց մեր վերջին շարժումները:

— Ես գիտեի, որ այդ պիտի ասեք, որովհետև ուրիշ օրինակ չեք կարող բերել:

— Մի՞թե այդ քիչ է:

— Մինչև անգամ չափազանց շատ է, ո՞վ է ասում: Բայց դուք ասացիք կատարած գործերը, իսկ ձեր ասած շարժումները նոր են սկսված, և դեռ չգիտենք՝ երկունքի մեջ եղած լեռն ի՛նչ կծնի — փի՞ղ, թե մուկ:

— Իհարկե, փիղ:

— Ինչո՞ւ անպատճառ իհարկե և ինչո՞ւ անպատճառ փիղ:

— Շատ պարզ պատճառով. որովհետև այդ մասին կասկած չի կարող լինել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Բայց տեսնում եք, որ ես կասկածում եմ: Ինչո՞վ կարող եք երաշխավորել, որ լեռն անպատճառ փիղ կծնի և ոչ մուկ: Ուզում եմ իմանալ՝ ինչո՞վ են մեծ երիտասարդներիդ հարուցած այդ շարժումները: Բազենյանը զարմանքով նայեց իր շրջապատողներին, հետո նույն զարմանքով դարձավ օր. Սահակյանին:

— Օրիորդ, մի՞թե այդ մասին դեռևս կարիք կա խոսելու:

— Փոքր-ինչ առաջ գայիք, պարոնը հենց այդ մասին էր

խոսում, — միամտաբար մեջ ընկավ Թեկլեն, դառնալով օր. Սահակյանին:

— Ահա՛, տեսնո՞ւմ եք, — վրա բերեց օր. Սահակյանը, — ուրեմն կարիք եղել է, որ փոքր-ինչ առաջ խոսելիս եք եղել այդ մասին:

Ամենքի դեմքի վրայով մի թեթև ժպիտ անցավ ակամա:

Ժպտաց և Բազենյանը: Նա տեսավ, որ այդ մարմնեղ աղջիկը բավական ճարպիկ լեզու ունի և շատ բանում կարող է այդպես հանկարծակիի բերել իրեն, ուստի վճռեց զգույշ լինել: Ժպտալով նա փոքր-ինչ առաջ խոնարհվեց դեպի օր. Սահակյանը և ասաց վերին աստիճանի քաղաքավարությամբ.

— Ներեցեք, օրիորդ, չե՞ք նեղանալ, եթե մի բան ասեմ:

— Նայելով թե ինչ կասեք:

— Ինչպես երևում է, դուք սիրում եք կատակ անել: Օր. Սահակյանը բարձրաձայն ծիծաղեց:

— Ես էլ ասացի, թե ինչ եք ուզում ասել: Իհարկե, ես շատ եմ սիրում կատակ անել, այնպես որ դուք կարող էիք համարձակ ձեր նկատողությունն անել: Բայց այսպիսի խնդիրներում, — ավելացրեց նա լրջորեն, — ներեցեք, ես սիրում եմ լուրջ կերպով խոսել: Ես, ախր, բոլորովին ուրիշ կարծիք ունիմ ձեր ասած շարժումների մասին:

— Շատ հետաքրքրական է իմանալ, օրիորդ, ձեր կարծիքը, — այս անգամ արդեն հեգնանքի հասցրած ծայրահեղ քաղաքավարությամբ նկատեց Բազենյանը:

— Անշուշտ հետաքրքրական է և շա՛տ հետաքրքրական, պարո՛ն, — նրա հեգնական տոնից առնվելով առանձին շեշտ տվեց իր ձայնին օր. Սահակյանը: — Բայց մի մոռանաք, որ խոսքը նախ ձե՛զ է պատկանում, դեռ դուք ապացուցեցեք ինձ, թե ինչո՞ւ լեռն անպատճառ փիղ պիտի ծնի և ոչ մուկ, այնուհետև ես իմը կասեմ: Ես, տեսնում եք, չեմ փախչում:

Բազենյանը ծիծաղեց:

— Ուզում եք ասել՝ ես փախչո՞ւմ եմ:

Օր. Սահակյանն արագությամբ դարձավ Մարությանին.

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Պարոն Մարության, դուք ասացեք, ես մեղավ՞ր եմ, որ պարոնն այդ եզրակացությունը հանեց իմ խոսքերից:

— Լավ, լավ, — մեջ ընկավ Մարությանը, տեսնելով, որ բանը շատ հեռու է գնում: — Դա այնպիսի խմոր է, որ շատ ջուր կվերցնի, ուստի խնդրում եմ, վերջ դնեք ձեր վիճաբանությանը և կարդաք այս նամակը:

Այդ միջամտությունը դուր չեկավ Բազենյանին. Մարությանը դրանով կարծես թե ստիպում էր նրան խոստովանել իր հակառակորդի գերակշիռ ուժը վիճաբանության մեջ և փախուստ տալ օր. Սահակյանի առաջ: Դա վիրավորական էր նրա ինքնասիրության համար, մանավանդ այդ ընտանիքի մեջ, ուր կարճ միջոցում ահագին հեղինակություն էր ձեռք բերել: Վախկոտությամբ փախուստ տալ ո՛ւմ առաջ ուզում է լիներ, մանավանդ այդ գեր, այդ անճոռնի աղջկանից, որին պարզապես արհամարհում էր, — այդ բանը չէր հարմարում նրա բնավորությանը: Բացի դրանից, փախուստ տալ, նշանակում էր ընկնել այն բարձրությունից, ուր ելել էր նա այդ սիրելի ընտանիքի աչքում: Եվ Բազենյանը հավաքեց իր բնածին բոլոր հանդուգն համարձակությունը, պատրաստվեց դիմադրելու, բայց օր. Սահակյանը ժամանակ չտվեց նրան:

— Ձեր ասած հայ աղջիկներին ես էլ լավ եմ ճանաչում, պարոն Բազենյան, և, իհարկե, շատ ավելի լավ, քան թե դուք. բայց իմ ասած հայ երիտասարդներին էլ ճանաչում եմ՝ ինչպես հարկն է: Ուրեմն, ավելի լավ է, լռենք այս մասին և կարդանք այս նամակը, որի գրողը...

— Ոչ, ինչո՞ւ լռենք, օրիորդ, — ընդհատեց նրան Բազենյանը: — Լռությունը միշտ կասկած է հարուցանում... Մենք կարող ենք խոսել բացարձակ, եթե ոչ հիմա, գոնե ուրիշ ժամանակ. հույս ունիմ, առիթ կունենանք:

— Անշո՛ւշտ. ես միշտ պատրաստ եմ: Բայց առաջուց պիտի ասեմ ձեզ, որ իմ համոզմունքը ոչ մի պայմանով չեք կարող փոխել:

— Ուրեմն ավելորդ կլինի մեր վիճաբանությունը:

— Ո՛չ, ինչո՞ւ. գուցե ես եմ փոխում ձեր համոզմունքը, — բացականչեց օր. Սահակյանը և բարձրաձայն ծիծաղեց:

Բազենյանը շատ սառն, պարզապես ատելությամբ լի հայացքով նայեց նրա կախ ընկած չաղ կզակին, որ դողդողում էր ծիծաղից, և նկատեց առանց մի մազի չափ անգամ շփոթվելու.

— Ինչո՞ւ եք կարծում, թե իմ համոզմունքը նույնքան, եթե ոչ ավելի հաստատ չէ, որքան ձերը:

— Իսկ դուք ինչի՞ց եք կարծում, թե ես այդպես եմ կարծում:

— Ձեր խոսքերից:

— Թեև ես այդպիսի բան չեմ ասել, բայց համեցեք, ընդունում եմ, որ ձեր համոզմունքն ավելի հաստատ է, քան թե իմը: Համենայն դեպս, այդ չի արգելում, կարծեմ, որ մենք դիսպուտի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

դուրս գանք — ես իմ փաստերով, դուք ձեր փաստերով: Իսկ այժմ, որպեսզի ավելորդ ժամավաճառությամբ չզբաղվենք, պարոն Բազենյան, կարդանք այս նամակը:

Եվ որպեսզի Բազենյանը շատ չվիրավորվի, օր. Սահակյանը ժպտաց հաղթանակը տարած մեծահոգի մարդու մեղմությամբ:

Բազենյանը կծեց ներքին շրթունքը և այդպես էլ մնաց — լուռ, մռայլ:

Երկու հյուրերի միջև տեղի ունեցած այդ ընդհարումը շատ ճնշող տպավորություն էր գործել տանտերերի վրա: Մարությանն ու կինն անհանգստությամբ շարժվում էին անդադար իրեն տեղերում, գրեթե հուսահատված՝ չիմանալով ինչպես վերջ տան այդ անախորժ վիճաբանությանը, որ նկատելի չլինի, թե այդ բանն անում են նրա համար միայն, որ Բազենյանին ազատեն նեղ դրությունից, ուստի ավելի լավ էին համարում լռել:

Բոլորովին լուռ էր և Եվան: Շատ լավ ծանոթ լինելով օր. Սահակյանի բնավորությանը, գիտեր, որ նա կոպիտ լինելու չափ համարձակ էր և վիճաբանության ժամանակ ոչ տեղին էր նայում և ոչ նրան, ում հետ որ վիճաբանում էր: Այս անգամ Բազենյանի վերաբերմամբ նրա ցույց տված հակառակությունը կոպտության, անքաղաքավարության և դիմացինին զոռով գրգռելու և վիրավորելու տգեղ ցանկության վերին ծայրն էր թվում Եվային, և նա մի քանի անգամ ուզեց միջամտել, բայց վախեցավ, թե միգուցե օր. Սահակյանն ավելի ևս կոպտաբար վարվի:

Այնինչ Շահյանը չարախնդությամբ դիտում էր ընկերոջ անզոր այլայլումը և մտքումը «բռավո» էր ասում օր. Սահակյանին, որ միանգամից կարողացել էր կոտրել Բազենյանի անամոթ անձնապաստանությունը:

6

«Հենց առաջին օրից, երբ ոտք կոխեցի այս գյուղը, հուսահատվելու չափ հիասթափեցի, — սկսեց կարդալ օր. Սահակյանն Աշխենի բավական երկար նամակի այն տողերից, որտեղից հարմար էր համարել կարդալ: — Մարդիկ տեսա, որոնք ապրում են նրա՛ համար միայն, որ ստիպված են ապրել: Մարդիկ տեսա, որոնց անասուններից զանազանել կարելի է նրանով միայն, որ խոսում են: Անծա՛յր չքավորություն՝ միացած մտքի խուլ խավարի հետ... Անսովոր մարդը զարհուրում, վիրավորվում է անգամ իրեն նման արարածների այս պատկերը տեսնելով: Ա՛խ, այդ աղքատությունը... Դու սովոր ես աշակերտուհիներիդ մազերը միշտ կարգին սանրած, մաքուր հագնված տեսնել, և եթե մեկը մի օր մաքուր թաշկինակ չի ունենում, առանց ճաշի ես թողնում: Բայց իմ աշակերտուհիները շոր անգամ չունին իրենց խեղճ մարմինը ցրտից պատսպարելու համար: Ամեն տեղ կան վաշխառուներ, բայց այդ ցեցերի ավերածությունը գյուղերում արդեն չափից դուրս զգալի է: Սակայն, եթե ընդհանուրի աղքատության պատճառները որոնելու լինենք միմիայն վաշխառուների գործունեության մեջ, դրությունն էլի այնքան ցավալի չէր լինիլ: Այդ պատճառները, որքան ես կարողացա նկատել, բազմաթիվ են և բազմադիմի և գտնվում են գյուղական-հասարակական ամբողջ կազմակերպության մեջ: Մի և ամենազորավոր պատճառն էլ այն է, որ գյուղացու վիճակը բարելավելու համար արտաքին կողմից ամենևին փորձ չկա: Ընդհակառակը՝ արտաքին կողմից եղած միջոցները, կարծես, ձգտում են էլ ավելի ծանրացնելու նրա կացությունը: Գյուղացին ձգված է երեսի վրա: Նա թողնված է, որ ինքն իր ուժերին ապավինե: Բայց նա տգետ է, կրթություն չունի, ուրեմն և անընդունակ է իր ուժերը մշակելու, որպեսզի կարողանա

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ինքն իրեն օգնել, չճնշվել տիրապետող կարգերի տակ: Ժամանակն արագորեն առաջ է գնում, կարգերն, ավելի ու ավելի ծանրանալով, փոխվում են անդադար, բայց գյուղացին կանգնած է միևնույն տեղը, ուր որ գտնվում էր տասնյակ, հարյուր տարիներ առաջ: Հարկավոր է նրան էլ առաջ մղել, որպեսզի կարողանա հարմարվել ժամանակի անողոք պահանջներին: Դրա համար հարկավոր է լո՛ւյս, լո՛ւյս, լո՛ւյս: Պ. Մինասյանը...»:

— Դուք ճանաչո՞ւմ եք Մինասյանին, պարոն Բազենյան, — հանկարծ հարցրեց օր. Սահակյանը, նամակի ընթերցումը ընդհատելով:

— Մինասյանի՞ն... ոչ: Ո՞վ է:

— Մեր սակավաթիվ մասնագետ գյուղատնտեսներից մեկը և ժողովրդական բանահավաք: Դուք նրան գոնե մեր գրականությունից պիտի ծանոթ լինեիք:

— Մինասյա՞ն... Այդպիսի գրող չեմ ճանաչում:

— Ուրեմն չեք հետևում գրականությանը, — նկատեց օր. Սահակյանը և պատրաստվեց նամակի ընթերցումը շարունակելու:

Բազենյանը զգաց, որ կարմրում է դեպի իր հակառակորդը տածած չարությունից:

— Ներեցեք, գուցե նա մի անհայտ...

— Ո՛չ, մեր ժողովրդական գրականության մեջ նա բավական հայտնի է, և հայտնիներ էլ շատ չունինք, — կտրեց նրա խոսքն օր. Սահակյանը և շարունակեց նամակի ընթերցումը:

«Պ. Մինասյանը կրթության մեջ ոչ թե միայն ընդհանրապես մարդկային առաջադիմության միջոց է տեսնում, այլև — ամենակարճ ճանապարհը, որով գյուղացին կարող է տնտեսական փոքրիշատե բարվոք վիճակի հասնել: Տուր գյուղացուն հող էլ, փող էլ, կարճ ժամանակից հետո նա նույն հացակարոտ աղքատը կմնա, եթե կրթություն չես տալ նրան, որ այդ հողն ու փողը կառավարել կարողանա: Ահա այս հիմնական միտքն իրեն առաջնորդ ունենալով, պ. Մինասյանը նվիրվել է ուսումնարանի գործին արտասովոր եռանդով: Այս կատարյալ հերոսություն է, եթե ի նկատի առնենք այն ահագին դժվարությունները, որոնց դեմ ստիպված է նա մաքառել: Այս երիտասարդն իր հաստատուն բնավորությամբ, իր անհանգիստ աշխատասիրությամբ, նպատակին ձգտող իր համառ գործունեությամբ կատարելապես զարմացնում է ինձ: Աշխատում է գիշեր-ցերեկ, անում է ամեն բան, չեղած տեղը գործ է ստեղծում, որ պարապ չմնա: Գյուղատնտեսության մեջ մանավանդ նրա կատարած գործերն ահագին են: Գյուղացիները կատարյալ հավատ են ընծայում նրան, որովհետև գիտե նրանց բան հասկացնելու կերպը. իսկ գյուղացիներին բան հասկացնելու համար ուղղակի տաղանդ է հարկավոր ինտելիգենտ մարդուն: Ասենք, Մինասյանին այս գործում մեծապես նպաստում է այն հանգամանքը, որ նա, շատերի պես, երբեք չի կտրել իր կապը գյուղի հետ: Անցած ամսին այստեղ էր եկել, քսան տարվա բացակայությունից հետո, գյուղիս ճամփա բնակիչներից մեկի ինժեներ որդին ժառանգական-կալվածական մի վեճի համար: Երբ ինձ ասացին, թե այսինչ տան զավակն է, ուղղակի ապշեցի, — այն աստիճան օտար էր նա գյուղին իր լեզվով, սովորություններով, նիստուկացով, էլ չեմ ասում տարազով: Ես ու Մինասյանը ներկա էինք համագյուղացիների հետ նրա ունեցած վեճին: Մարդն ինձ վրա շատ լավ տպավորություն

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

թողեց իր խելացի հայացքներով, բարի զգացումներով և հակառակորդներին ըստ ամենայնի զիջում անելու ցանկություններով, բայց արի տես, որ ամբողջ երկու ժամ խոսում էր գյուղացիների հետ և ոչինչ չէր կարողանում հասկացնել նրանց: Գյուղացիները բան հասկացան միայն այն ժամանակ, երբ միջամտեց Մինասյանը և մի քանի խոսքով բացատրեց նրանց բանի էությունը նրանց լեզվով և զարմանալի պարզ օրինակներով: Եթե ասեմ, որ Մինասյանը գյուղի կուռքն է և ամբողջ գավառում մեծ հեղինակություն է վայելում, չափազանցություն արած չեմ լինիլ: Բայց նա ունի և զորեղ թշնամիներ: Դրանք, գլխավորապես, վաշխառուներն են, որոնցից մեկն այս օրերս գանգատ է տվել նրա դեմ նահանգական դատարանին՝ լրագրի մեջ իր մասին նրա արած մի մերկացման համար:

Ես գրում եմ իմ առաջին տպավորությունները, սիրելի Վարո: Չգիտեմ, գյուղն ու գյուղական կյանքն ինձ համար նորություն է — դրա՞ համար է ինձ այստեղ ամեն բան մռայլ թվում, թե՞ այդ իսկապես այդպես է: Գոնե մխիթարական ես ոչինչ չեմ գտնում այստեղ: Միակ մխիթարականը և հուսատուն, որ լուսատու մենավոր աստղի պես պայծառ փայլում է այս թխպոտ հորիզոնի վրա, դա պ. Մինասյանն է: Բայց մի ծաղկով գարո՞ւն կգա...»:

— Դու էլ մեկ — երկու, երկուսով խո կգա, — ասաց օր. Սահակյանն Աշխենի հասցեին և նամակը ծալեց: — Ահա, այս էր, պարոններ, ինչ որ կարող էի կարդալ այս նամակից: Մի քանի կտորներ էլ կարելի էր կարդալ, բայց վախենում եմ, որ պարոն Բազենյանը կարծի, թե նա ինքնագովությամբ է պարապում:

Եվ օր. Սահակյանը, նայելով Բազենյանին, ժպտաց:

— Ես պարոն Բազենյանի տեղ բողոքում եմ ձեր դեմ, օրիորդ, — բացականչեց Մարությանը: — Եթե պարոնը հայ աղջիկների մասին աննպաստ կարծիք ունի, այդ չի նշանակում, թե նա բացառություններ չի ճանաչում: Այդպես չէ՞, պարոն Բազենյան:

— Չեմ հասկանում, — խիստ հանգիստ արտասանեց, ուսերը վեր քաշելով: Նա արդեն ատում էր օր. Սահակյանին:

— Ես համաձայն եմ ձեզ հետ, պարոն Մարության, որ պարոն Բազենյանը չի կարող չճանաչել բացառությունները. բայց մի՞թե այսպիսի բացառություններն ավելի քիչ են արժանի ուշադրության, քան ընդհանրությունը: Ի՞նչ եք կարծում, տիկին, — դարձավ օր. Սահակյանը Թեկլեին. — Աշխենը դատա՞րկ աղջիկ է:

— Ո՞վ է ասում... Երանի չէր լինիլ, որ բոլոր աղջիկները նրա պես խելոք լինեին, — ասաց Թեկլեն տխուր մտախոհությամբ:

— Տեսնո՞ւմ եք: Իսկ դուք, պարոն Շահյան. ձե՞ր կարծիքն ինչ է. դուք ճանաչում եք նրան:

— Ես համաձայն եմ ձեզ հետ, — ասաց Շահյանը, առանց մտածելու, թե ինչ է ասում և, ինքն էլ չհասկացավ ինչու ժպտաց:

Օր. Սահակյանն արագորեն դարձավ դեպի Եվան, որ նստած էր իր կողքին.

— Իսկ դո՞ւ, Եվա:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվան իսկույն չպատասխանեց: Նրա անսովոր-լուրջ հայացքը մտքի ինչ-որ տխուր, խորհրդավոր կենտրոնացում էր արտահայտում:

— Այդպիսի մի նամակ էլ մեզ է գրել, — ասաց նա, առանց պատասխանելու օր. Սահակյանի հարցմունքին:

— Հա-ա՞:

— Բաս ի՞նչ էիք կարծում, — ասաց Մարությանը:

— Դե որ այդպես է, ինչո՞ւ առաջուց չէիք ասում, որ իզուր ժամավաճառ չլինեի կարդալով... Ասենք, վնաս չունի. այդ հարկավոր էր պարոն Բազենյանի համար, որպեսզի պարոնը համոզվի, որ հայ աղջիկների մեջ ևս կան այնպիսիները, որոնց մոտ հայ երիտասարդները զրո են:

Բազենյանը ետ էր ընկել բազկաթոռի մեջքին և աշխատում էր կատարյալ լռությամբ արտահայտել իր արհամարհանքը:

— Ներեցեք, պարոն Բազենյան, որ ձեր հայտնած կարծիքի մասին այսքան շատ եմ խոսում, — ավելացրեց օր. Սահակյանն այս անգամ զիջողաբար ժպտալով: — Ես ինքս համաձայն եմ ձեզ հետ, որ հայ աղջիկները, խիստ մեծամասնությամբ, դատարկ և չնչին արարածներ են, ինչպես դուք ասացիք. բայց դուք մի դատապարտեք այդ աղջիկներին, այլ դատապարտեցեք ընտանեկան, թեկուզև հասարակական այն պայմանները, որոնց մեջ մեծանում են նրանք, որովհետև, ամեն երևույթ իր պատճառներն ունենալով, այս տխուր երևույթի մեջ էլ քննության առարկան և դատապարտելին ոչ թե ինքն՝ երևույթը պիտի լինի, այլ պատճառը: Բայց, մյուս կողմից, թույլ տվեք նկատեմ, որ հայ երիտասարդներն արդեն իրենք են դատապարտելին, որովհետև նրանք անհամեմատ թե՛ ավելի ազատ են մեծանում և թե՛ ավելի լավ կրթություն են ստանում, քան հայ աղջիկները. մինչդեռ նրանք ի՞նչ են անում. — կամ քնում են, կամ իրենց փորի համար միայն աշխատում են: Ասացեք խնդրեմ, ո՞ր երիտասարդը, քաղաքում հանգիստ ու ապահով կյանք վարող երիտասարդն եմ ասում, սիրտ կանե կորած տեղեր գնալ աչքից ընկած, մտքից մոռացված ժողովրդի բարօրության գործին ծառայելու համար: Ասացեք, կա՞ այդպիսի երիտասարդ:

— Իմ եղբա՛յրը, — դուրս թռավ Եվայի բերնից, և նրա մտախոհ հայացքի մեջ հանկարծ ինչ-որ կայծ վառվեց, բայց իսկույն էլ հանգավ:

Այն աստիճան ազդու էր նրա ձայնը, որ ամենքն էլ ակամա նայեցին նրան:

Եվան վեր կացավ տեղից, և կայծը նորից վառվեց նրա գեղեցիկ աչքերի մեջ:

— Իմ եղբա՛յրը, — կրկնեց նա: — Ես կերդվեմ, որ ոչ ոք չի կարող նրան հասնել... Ա՛խ, ինչպես ուզում եմ, որ այս բոպեիս այստեղ լինի նա...

Օր. Սահակյանը սիրով ու կարեկցությամբ նայեց նրան և այլևս չշարունակեց վիճաբանությունը: Թեկլեի աչքերը լցվեցին մայրական սիրո կարոտակեզ արտասուքներով:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Իսկ Մարությանը, որի հայրական սիրտը նույնպես սաստիկ շարժվել էր դեպի իր հեռացած որդին, իրեն սրտապնդելու համար սկսեց բարձրաձայն հազալ:

— Ի դեպ, պարոն Բազենյան, դուք չե՞ք ճանաչում օրիորդի եղբորը՝ Արմենակին:

— Ոչ:

— Զարմանալի է: Որքան իմացել եմ, դուք ևս ծառայում եք միևնույն գործին, ինչ որ նա, և ինչպե՞ս է , որ չեք ճանաչում նրան...

— Ուրիշ ի՞նչ է գրում, — շտապով դարձավ Մարությանն օր. Սահակյանին, վախենալով, թե միգուցե նա մի նոր հարձակում սկսի Բազենյանի դեմ: Չի՞ տխրում, գո՞հ է իր վիճակից: Մեզ գրած նամակների մեջ իր կյանքի մասին ընդհանրապես ոչ մի դժգոհություն չի հայտնում. բայց ես հասկանում եմ, որ մեզ ուրիշ կերպ չի գրիլ, իսկ ձեզ, կարծում եմ, ճշմարտությունը պիտի լինի հայտնելիս:

— Ահա, ուզո՞ւմ եք, այդ կտորն էլ կարդամ:

— Խնդրում եմ:

Եվան, մի-երկու անգամ սենյակում անցուդարձ անելուց հետո, կամաց նստեց իր առաջվա տեղը, օր. Սահակյանի մոտ:

7

«Գյուղն ինձ վրա, ինչպես ասացի, խիստ ճնշող տպավորություն գործեց, — կարդաց օր. Սահակյանը: — Աղքատությանը զուգակից է տգեղությունը, և այդ տգեղությունն արդեն չափից դուրս աչքի է ընկնում այստեղ: Հենց միմիայն գյուղի արտաքին տեսքը — նրա ծուռումուռ, անասունների մշտական աղբով ծածկված, ցեխոտ փողոցները, անճոռնի, շատ տեղ գետնափոր տները, վտիտ անասունները, ճռճռան ծանրաշարժ սայլերը, ահագին փափախների տակ ճնշված մարդիկ, բերանն ու քթները կալած կանայք, կեղտոտ ու զզզված երեխաները, անհամար քոսոտ շները, — ամեն, ամեն բան ինձ վերին աստիճանի տգեղ ու հակակրելի էր թվում: Կարծում էի, թե հանկարծ ընկել եմ վայրենի մի աշխարհ, ուր ամեն ինչ խորթ ու անծանոթ էր ինձ: Ինձ վրա նայում էին զարմանքով և կասկածով: Կանայք մանավանդ ավելի էին խրտնում ինձնից, — չեմ հասկանում ինչու: Շատ անգամ, երբ հարևանի կովը ցեխոտ պոչը տատանելով անցնում էր առաջովս, ինձ թվում էր, թե այդ անասունն անգամ իր հիմար աչքերով ուրիշ կերպ էր նայում ինձ, — ոչ այնպես, ինչպես սովորական գյուղացիներին:

Առաջին իսկ օրից դառնությամբ, գրեթե տանջվելով զգացի, որ ոչինչ չպիտի կարողանամ շինել այստեղ: Իմ և ինձ շրջապատող մարդկանց միջև ոչ մի առնչություն չէի տեսնում: Ոչ ես էի հասկանում սրանց, ոչ սրանք էին հասկանում ինձ: Այդ քիչ է. ինձ թվում էր, թե երբեք չպիտի կարողանամ անկեղծորեն համակրել և սիրել այս բիրտ, կասկածոտ և տգեղ մարդկանց, որոնց բարօրության գործին վճռել էի նվիրել ինձ այդտեղ իմ մաքուր սենյակում նստած: Այս կետը մանավանդ մեծ մտահոգություն էր պատճառում ինձ և երևան էր հանում իմ մեջ այնպիսի անծանոթ գծեր, որ ուղղակի ապշած էի մնում և չէի ճանաչում ինքս ինձ: Ի՞նչ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

էր նշանակում այս խորթությունը, այս օտարությունը, այս զզվանքը, վերջապես: Ես արիստոկրատ չէի ծնվել. ընդհակառակը՝ պատկանում էի ժողովրդի նույն ստորին խավին, ինչ որ սրանք, այս կոշտ ու կոպիտ, այս անմաքուր ու տգեղ գյուղացիները, և մեր ծագման միջև եթե մի տարբերություն կար, այդ էլ զուտ աշխարհագրական էր. ես ծնվել էի քաղաքում, սրանք — գյուղում: Ուրեմն ո՞րտեղից էր այս «արիստոկրատիզմը», որի գոյությունն իմ մեջ մինչև այստեղ գալս երևակայել անգամ չէի կարող... Այս ու այսպիսի հազարավոր մտքերի ճնշման տակ, հանկարծ հիմարություն և, որ ավելի վատ է, կեղծիք թվաց ինձ իմ «անձնուրացությունը»: Այս էր ամենաանտանելին, որովհետև այս միտքն ինձ նվաստացրեց իմ աչքում վերին աստիճանի, ինքս ինձնից ամաչելու չափ...

Այսպիսով առաջին օրերն ու շաբաթներն անցան հուզող կասկածների, ծանր անձնաքննության և վերին աստիճանի տաղտկության մեջ, որի ժամանակ խենթանալու չափ սկսեցի կարոտել քաղաքի կյանքը, ինձ ծանոթ սիրելի դեմքերը, մանավանդ քեզ և մանավանդ Եվային, իմ սիրուն, իմ քնքուշ, իմ պաշտելի Եվային...»:

Այստեղ ամենքի հայացքը մեքենայաբար դարձավ դեպի Եվան, որի աչքերի մեջ հանկարծ արտասուքի կաթիլներ ցոլացին: Նա գլուխը խոնարհեց և մատներով պինդ ծածկեց աչքերը: Մինչդեռ օր. Սահակյանը, ըստ երևույթին ոգևորված նամակից, ուշադրություն չդարձրեց այդ բանին և շարունակեց կարդալ.

«Բայց ոչինչ չշինած՝ վերադառնալ, այդ միևնույնը կլիներ, թե զինվորը փախչում է պատերազմի դաշտից՝ մի գնդակ անգամ չարձակած: Այդպիսի դեպքում ավելի լավ չէ՞ր լինիլ, որ ուղղակի գետն ընկնեի խեղդվեի, քան թե վերադառնայի հարազատներիս մոտ այդպիսի խայտառակությամբ: Այդ միտքն էր, որ պահպանեց ինձ անկումից և միևնույն ժամանակ քաջություն տվեց: Մյուս կողմից, գիտեի, որ ժամանակն ամենալավ հաշտեցնողն է: Հարկավոր էր միայն համբերություն և բարոյական ուժ: Այդ համբերությունն ու բարոյական ուժը...»:

Օր. Սահակյանը հանկարծ դադարեցրեց ընթերցումը, և նամակը շտապով ծալեց:

— Ներեցեք, այլևս չեմ շարունակիլ, — ասաց նա:

Եվան մատները հեռացրեց աչքերից և հետաքրքրությամբ նայեց նրա դեմքին:

— Ինչո՞ւ, — հարցրեց Մարությանը զարմացած:

— Որովհետև... — օր. Սահակյանը հազիվ նկատելի կերպով շփոթվեց, — որովհետև... շարունակությունն արդեն ինքնագովություն է, որ... Բազենյանը կարող է խիստ կրիտիկայի ենթարկել, — շփոթմունքը զսպելով վրա բերեց նա և ժպտալով նայեց Բազենյանին:

Բազենյանը ոչինչ չասաց, միայն հանգիստ զարմանքով նայեց Մարությանին, կարծես հարցնում լիներ, ի՞նչ է պատահել սրան:

— Է՛էհ, — կարդացեք, — ասաց Մարությանը, դժգոհելով, որ օր. Սահակյանն այդպես հաճախ ընդհատում է նամակի ընթերցումը և ամեն անգամ անտեղի կերպով ուզում է խայթել Բազենյանին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Բացի ինքնագովությունից, — վրա բերեց օր. Սահակյանը հեգնորեն, — շարունակությունն այսպես ասած՝ աշակերտական բարոյախոսություն է, որը կարող է ձանձրալի լինել, ինչպես ամեն մի բարոյախոսություն:

— Տե՛ր իմ աստվա՛ծ... ձեր ի՞նչ գործն է. դուք կարդացեք:

Օր. Սահակյանը ծիծաղեց Մարությանի զայրացկոտության վրա և դարձավ Եվային.

— Կարդա՞մ, Եվա:

— Ինչո՞ւ չպետք է կարդաս, — ասաց Եվան կամաց: Նրա դեմքը սառնություն էր արտահայտում:

Օր. Սահակյանը նորից բաց արեց նամակը:

«Այդ համբերությունն ու բարոյական ուժն ես արդեն առիթ եմ ունեցել զարգացնելու իմ մեջ» — կարդաց նա կիսատ թողած նախադասությունը և լռեց:

Ամենքն էլ տեսան, որ նա շարունակությունը մտքումն է կարդում: Եվան կամաց թեքվեց դեպի նա, սկսեց նայել նամակին և տեսավ, որ նա մի շարք տողեր բաց թողեց:

Օր. Սահակյանը շտապով դարձրեց թերթը և շարունակեց.

«Ահա հենց այդ համբերությամբն ու բարոյական ուժովս էր, որ կարողացա դիմանալ սկզբնական դժվարություններին, որոնք գուցե շատ չնչին բաներ էին, բայց ինձ, որովհետև խամ է, ծանր էին թվում: Ծանր էն թվում մանավանդ այն պատճառով, որ կարծում էի, թե բավական է որ մարդ որգևորված լինի այս կամ այն գաղափարով, մնացածը հեշտ է: Մինչդեռ փորձն ինձ ցույց էր տալիս, որ գեղեցիկ գաղափարների իրագործումը շրջապատված է տգեղ պայմաններով, այնքան ավելի տգեղ, որքան մարդ շատ է լինում ոգևորված: Կրկնում եմ. այդ ես փորձով տեսնում ու զգում էի, ուրեմն և հասկանում, որ այդ այդպես էլ պետք է լինի և ուրիշ կերպ չի կարող լինել: Մյուս կողմից, ինչպես ասացի, ինձ ուժ էր տալիս այն գիտակցությունը, թե դժվարություններից փախչելն առհասարակ ամոթալի բան է, երբ այդ դժվարություններն ինքդ ես կամովին հանձն առել կրելու: Բացի այդ, ինձ ուսուցել և օրինակ էին տվել անձնականը զոհելու ընդհանրությանը, ապրելու ուրիշների համար, և ես չէի կարող, չպետք է դավաճանեի այդ գաղափարին, մանավանդ այն ժամանակ, երբ ոտք էի կոխել այդ գաղափարին գործով ծառայելու ճանապարհի վրա: Այժմ, երբ սկսել եմ ընտելանալ գյուղական մռայլ կյանքին, այդ գաղափարն ավելի ևս ոգևորում է ինձ, և ես կարողանում եմ զսպել մարդկային թուլություններս: Նույնիսկ պատահում են ոգևորության օրեր, երբ ամեն բան մոռանում եմ և բուռն ձգտումով անձնատուր եմ լինում այս թշվառ մանուկների կրթության գործին — մանուկների, որոնց լոկ տեսքն անգամ անհուն կարեկցություն է շարժում: Սարսափում եմ, որ մտածում եմ, թե ապագա այս գեղջուկներն ու գեղջկուհիներն էլ առանց կրթության կարող են, նույն խավարով շրջապատված, փտել անասնական նույն կյանքի մեջ, ինչպես փտել ու փտում են սրանց պապերն ու տատերը, սրանց հայրերն ու մայրերը: Չէ՞ որ սրանք էլ մեզ պես մարդիկ են. չէ՞ որ սրանք մեր քույրերն ու եղբայրներն են: Ի՞նչ խղճով պետք է տեսնենք սրանց այս ողբալի դրությունը և օգնության ձեռք չկարկառենք,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

երբ կարող ենք և քանի որ կարող ենք ամոթալի և վիրավորական չէ՞ միթե մեզ համար, որ մեզ նման աստծո պատկերը կրող այս արարածները զրկված են աստվածային լույսից: Խավարի այս սոսկալի թագավորությունը տեսնելով, մի՞թե այլևս հնարավոր պիտի լինի անհատի համար եսական կյանքը:

Ես չեմ ուրանում, որ մարդիկ իրար չեն օգնում: Մարդկային կյանքն իր բոլոր ասպարեզներում փոխադարձ օգնության վրա է հիմնված: Բայց, ավա՜ղ, այդ օգնությունը դեռ լոկ բնազդական, անգիտակցական և անուղղակի է, որպեսզի ցանկալի պտուղներ տար: Ես կուզեի, որ մարդիկ իրար օգնեին գիտակցաբար: Այդ քիչ է. կուզեի, որ մարդիկ ուրիշին օգնելու գործում դնեին իրենց սիրտը, հոգին, ամբողջ էությունը: Անպայման անձնուրացություն և անձնազոհություն եմ պահանջում ես, որովհետև մարդու գոյության բուն նպատակը, հետևաբար և նրա իսկական երջանկության գրավականն, ուրիշ ո՛չ մի բանի մեջ չեմ տեսնում, բացի միայն սեփական եսն ուրիշի բարիքին զոհաբերելու մեջ: Այդպես է քարոզում բոլոր խելոք գրքերից ամենախելոք գիրքը — Ավետարանը, և դրանով միայն մարդը կարող է, աստվածանալ, որին ճգնում է նա հասնել: Քանի՜ դար է ահա, որ քարոզվում է այդ գաղափարը, որը, սակայն, դեռևս լոկ մեռած տառն է հանդիսանում և եթե անցել է գործադրության, անցել է չափից դուրս սահմանափակ և չոր մտքով: Ինչո՞ւ: Այդ նրանից չ՞է արդյոք, որ մարդիկ հողին համաչափ կերպով չեն զարգացնում մտքի հետ: Պատճառն այն չէ՞ արդյոք, որ միտքն առաջ է սլացել, հողին ետ է մնացել: Միտքը հսկայական թռիչքներ է գործում երկրի անդունդներից մինչև երկնքի անհունությունը, իսկ հոգին դեռևս խարխափում է խավարի մեջ և շարժվում է կրիայի քայլերով: Ես հավատում եմ մտքի հաղթանակին: Բայց ավելի ևս հավատում եմ հոգու հաղթանակին: Ցանկալի եդեմն այն ժամանակ կգտնվի, երբ հոգին ու միտքն առաջ կընթանան ձեռք ձեռքի տված...»:
— Ես վերջացրի, — ասաց օր. Սահակյանը և դանդաղորեն ծալեց նամակը:

Սենյակում կարճ ժամանակ խոր լռություն տիրեց: Այդպես է լինում միշտ, երբ որևէ գրվածքի ընթերցումը գրողի համար կամ աննպաստ, կամ խիստ նպաստավոր տպավորություն է թողնում ունկնդիրների վրա:

8

— Բռա՜վո, — հանկարծ բացականչեց Մարությանը խիստ ոգևորված: — Բռա՜վո, Աշխե՜ն, բռա՜վո: Ամեն մի բառը մի ոսկի արժե: Օ՜, խելոք է, շատ խելոք: Գիտե մտածել: Այդպիսի մտքեր... Հիանալի՜ է, հիանալի՜: Զարմանալի է. դուք հենց ամենահետաքրքրական կտորը չէիք ուզում կարդալ:

— Է՜հ, թողեք, թե աստված կսիրեք: Ի՜նչ հետաքրքրական, ձանձրալի ասացեք, — հեգնորեն նկատեց օր. Սահակյանը և հարևանցի նայեց Բազենյանին: — Խելքին զոռ է տվել, էլի: Փոխանակ բան գրելու, ինչ-որ անգիր արած ճռճռան ֆրազներ է շարել իրար ետևից:

— Բա՜ն ասացիք: Իմ ի՞նչ գործն է, թե խելքին զոռ է տվել: Դուք հայտնած մտքերն ասացեք: Հետո, ինչպե՞ս թե անգիր արած: Ներողություն: Այդպե՞ս եք ճանաչում ձեր ընկերուհուն: «Ցանկալի եդեմն այն ժամանակ կգտնվի, երբ հոգին ու միտքն առաջ կընթանան ձեռք ձեռքի տված»: Հրաշալի չէ՞ միթե: Ճիշտ չէ՞ արդյոք, որ մարդիկ մտքի կրթության վրա ավելի են ուշք դարձնում, քան թե հոգու: Ճիշտ չէ՞ արդյոք, պարոն Բազենյան, ճիշտ չէ՞ արդյոք, պարոն Շահյան, ձեզ եմ հարցնում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Բոլորովին իրավացի է, — ասաց Բազենյանը և նույնը մեքենաբար կրկնեց Շահյանը:

— Ոչ թե բոլորովին, այլ դեռ մի բան էլ ավելի է, — բացականչեց Մարությանն ավելի ու ավելի ոգևորվելով: — Ասում են, մեծ մարդիկ մեծ էլ պակասություններ են ունենում: Ինչո՞ւ: Ինչո՞ւ այնպես չպետք է լինի, որ մեծ մարդիկ ոչ թե միայն մեծ, այլև առհասարակ ոչ մի պակասություն չունենան: Ինչո՞ւ այդպես է, հարցնում եմ ձեզ: Որովհետև մեծ մարդկանց, ինչպես և ամեն մի սովորական փոքր մարդու հոգին, այսինքն բարոյական ընդունակությունները համաչափ կերպով չեն զարգացվում մտավոր ընդունակությունների հետ: Ասացեք, խնդրեմ. եթե մենք կարողանում ենք մեր միտքն այնպես զարգացնել, որ կարող ենք հնարել երկաթուղի, հեռագիր, հեռախոս-ձայնախոս, մահաբեր հրացան ու թնդանոթ, մի՞թե չենք կարող մեր հոգին էլ այնպես զարգացնել, որ թշվառների արտասուքը տեսնելիս անտարբեր չմնանք, նեղացածներին օգնենք, տնանկին պատսպարենք, քաղցածին հաց տանք: Մի՞թե հոգին ավելի պակաս ընդունակ է կրթվելու և զարգանալու, քան թե միտքը: Չեմ կարծում: Սիստեմը, այժմյան կրթության ամբողջ սիստեմն է մեղավոր այս ափաշքարա հակասության մեջ: Ես հավատացած եմ, որ մեծ մարդիկ կրկին չափով մեծ գործեր կլինեին կատարած, եթե նրանց հոգին զայրացած լիներ ուղեղի հետ համաչափ կերպով: Այդպիսով մենք մի տասնևինն դար էլ առաջ կլինեինք գնացած, որովհետև շատ անգամ մի բան, որ անկարելի է լոկ ուղեղով, մտքով ըմբռնել, կարելի է հասկանալ հոգու աջակցությամբ: Հոգին մտքի ամենալավ խորհրդատուն է. միտքն առանց հոգու — զրո, բայց միտքն ու հոգին միասին — ամեն բան: «Ցանկալի եդեմն այն ժամանակ կգտնվի, երբ հոգին ու միտքը առաջ կընթանան ձեռք ձեռքի տված, մի հավասար գծով»: Պարոններ, մի՞թե սա ճիշտ չէ, մի՞թե սրանք կլասիկական խոսքեր չեն:

— Եվ ասողն ո՞վ, ա՛յդ ասացեք. — մի հայ աղջիկ, — նորից հեգնեց օր. Սահակյանը և դարձյալ նայեց Բազենյանին:

Բազենյանն այլևս չկարողացավ համբերել:

— Օրիորդ, իզուր դուք հեգնում եք, — ասաց նա շատ սառը կերպով: — Ես կարող եմ հիանալ այդ նամակի մեջ հայտնված մտքերից և զարմանալ այն օրիորդի ընդունակության վրա, որ կարողացել է գրել այդպիսի մի նամակ, բայց և այնպես այդ չի խանգարում ինձ դարձյալ պնդելու, որ հայ աղջիկներն ընդհանրապես — ուսում առած, թե չառած — շատ չնչին և դատարկ արարածներ են, որ նրանք...

— Զարմանում եմ ձեզ վրա...

— Ներողություն, թողեք խոսքս վերջացնեմ... Որ նրանք ոչ թե չեն կարող այդպիսի նամակներ գրել, այլև երկու տող հասարակ բարովագիր գրելն անգամ մեծ դժվարություն է պատճառում նրանց: Բացառությունները...

— Պարոն Բա...

— Ներողություն: Բացառությունները շատ ուրախալի են այդպիսի դեպքերում, բայց հենց նրա համար, որ բացառություններ են, կորցնում են իրենց նշանակությունը: Ընդհանրությունն է, որ իշխում է, ուրեմն և մեծ ցավ պիտի պատճառե:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Օր. Սահակյանը ծիծաղեց:

— Ախր, ո՞վ է հակառակը պնդում, պարոն Բազենյան, որ դուք առանց ներողությունների չեք շարունակում ձեր խոսքը: Եթե մեր միջև մի թյուրիմացություն կա, այդ, կարծեմ, ոչ թե աղջիկների մասին է, այլ — երիտասարդների:

— Գիտեմ: Բայց ձեր կարծիքը մեր երիտասարդների մասին հերքվում է ամենից առաջ այդ նամակով:

— Ինչպե՞ս:

— Խնդրեմ նորից կարդացեք Մինասյանի մասին գրված տողերը...

— Ա՜, հասկանում եմ ինչ եք ուզում ասել:

— Հետո պարոն Մարությանի որդին, որի մասին...

— Հետո, երևի դուք... հետո, երևի, պարոն Շահյանը, — վրա բերեց օր. Սահակյանը և սկսեց կուշտ-կուշտ ծիծաղել: Բայց, երևի ինքն էլ զգալով, որ չափն անցավ, հանկարծ զսպեց ծիծաղը և ուզեց ինչ-որ ասել, սակայն Եվան թույլ չտվեց:

Եվայի համբերությունն արդեն հատել էր: Նա խիստ անհանգիստ մի շարժում գործեց և դժգոհությունից հոնքերը կիտած, առանց նայելու օր. Սահակյանին, ակամա ձեռքով արեց նրան, կարծես հասկացնելու համար, թե բավական էր, վերջապես, որ նա այդքան հեգնորեն և կոպտությամբ խոսեց իրենց հյուրի հետ. ապա դարձավ Բազենյանին և շատ լուրջ կերպով նկատեց.

— Իմ կարծիքով, սխալվում եք, պարոն Բազենյան, որ ասում եք, թե բացառություններն ընդհանրության մեջ կորցնում են իրենց նշանակությունը: Ընդհակառակը, ես կարծում եմ, որ լավ բացառություններն են հենց, որ առանձին նշանակություն են ստանում, այլապես ումի՞ց պիտի օրինակ առնեինք: Երկնքի վրա աստղեր շատ կան, բայց լուսինն է միայն, որ պայծառ լուսավորում է:

— Ներեցեք, օրիորդ, երևի չկարողացա միտքս պարզ արտահայտել: Եթե ասացի, որ բացառությունները կորցնում են իրենց նշանակությունը, այդ ասացի ա՛յն մտքով, որ ընդհանուրի իշխանության մեջ ոչնչանում է բացառությունների կատարած դերը: Դուք օրինակ բերիք լուսինն աստղերի մեջ, ես էլ օրինակ կարող եմ բերել մոմի ճրագը գիշերվա խավարի մեջ:

— Թո՛ղ հենց մոմի, թեկուզ մեղրամոմի ճրագը լինի, — վրա բերեց օր. Սահակյանը. — չէ՞ որ մոմի ճրագն էլ լույս է տարածում իր շուրջը:

Եվան դեմքը ջղային տհաճությամբ դարձրեց օր. Սահակյանից: «Տե՛ր իմ աստված, ինչքա՜ն անտանելի արարած է եղել», — մտածեց նա:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ինչի՞ վրա եք վիճում, — բացականչեց Մարությանը: — Մի հատ լավ խնձորը տասը փտած խնձորի մեջ փտում է, տասը լավ խնձորի մեջ մի հատ փտած խնձորը բոլորին էլ փտեցնում է:

— Հա՛ հա՛-հա՛-հա՛, ի՜նչ օրինակ բերիք, — կանչեց օր. Սահակյանը ծիծաղելով և շտապով վեր կացավ տեղից:

— Եվա, դե հիմա պաշտպանվիր հորդ դեմ: Եվան արագությամբ դարձավ դեպի հայրը:

— Այդ օրինակ չի՛ կարող լինել, հայրիկ, որ դու բերիր, — գրեթե աղաղակեց նա զայրագին: Օր. Սահակյանի դեմ զգացած բոլոր բարկությունը, կարծես, հոր վրա էր ուզում թափել:

— Զարմանալի է. դուք լուսինն ու ճրագը օրինակ բերիք, ես էլ փտած խնձորներն եմ բերում, ինչո՞ւ չի կարելի:

— Չի կարելի, որովհետև... մենք լուրջ բանի մասին ենք խոսում, իսկ դու... կատակ ես անում:

— Կարելի է, կարելի է, պարոն Մարության, դուք սրան մի նայեք, — ասաց օր. Սահակյանը, շարունակելով ծիծաղել, և, միևնույն ժամանակ, աչքով արեց դեպի Եվան: — Մեր ժամանակում օրինակների մեջ խտրություն չեն դնում, — ավելացրեց նա բազմախորհուրդ կերպով:

— Բայց չէ՜, պարոններ, — ասաց Մարությանն այս անգամ լրջորեն: — Աղջիկս թեև մի քիչ բարկանում է, բայց ճիշտ է նկատում. այսպիսի բաների մասին պետք է լուրջ կերպով խոսել: Ես այն համոզմունքն ունիմ, որ լավն առհասարակ անպտուղ չի անցնում, ինչքան էլ որ շրջապատը վատ լինի, որովհետև մարդիկ միշտ դեպի լավն են ձգտում: Լավի գաղափարը...

— Ներեցեք, պարոն Մարության, ես ձեզ ընդհատում եմ, — ասաց օր. Սահակյանը, տեսնելով, որ նա տրամադիր է նորից ոգևորվել: — Այժմ ինչքան ուզում եք՝ փիլիսոփայություններ արեք, բայց իմ և պարոն Բազենյանի միջև ծագած թյուրիմացությունը չպարզվեց. իսկ ես գնում եմ:

— Գնում ե՞ք: Է՛, ի՞նչ եք ասում: Նստեցեք, թե աստված կսիրեք:

— Նստեցեք, ի՞նչ եք շտապում, — իր կողմից ասաց Թեկլեն:

— Չէ, չեմ կարող, արդեն ուշ է, իսկ տանն ահագին քանակությամբ տետրակներ ունիմ ուղղելու: Ես, ախր, երկու բանի համար էի եկել. մեկը վերջացրի, մնաց մյուսը: Իսկ այդ մյուսը — ահա՛, պարոն Մարության:

Եվ օր. Սահակյանն երեք տոմսակ դրեց Մարությանի առաջ:

— Կարծեմ, մի տոմսակ էլ որ ձեզ տամ, չեք մերժիլ, չէ՞, պարոն Բազենյան: Բարեգործական նպատակով պարահանդես ունինք: Պարոն Շահյանի վրա արդեն մի տոմսակ սաղացրել եմ երեկ չէ մեկել օրը:

Մարությանն ու Բազենյանն ընդունեցին տոմսակները, որից հետո օր. Սահակյանը ոտի վրա, դարձյալ մի թեթև վիճաբանության բռնվելով, իրեն հատուկ համարձակությամբ կատակով էլի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

մի քանի բաներ ուտեցրեց Բազենյանին և, բարի գիշեր մաղթելով, դուրս գնաց հյուրասենյակից:

Նրա դուրս գնալուց հետո Եվան մեծ թեթևություն զգաց: Բայց հանկարծ նրան թվաց, թե իր վերջին զայրացկոտությամբ ինքն իրեն մատնել է մի բանի մեջ, որը չէր ուզում, օր. Սահակյանն իմանար, իսկ թե ի՛նչ բանի մեջ էր մատնել իրեն — ինքն էլ չգիտեր... Նա արագ վեր կացավ և դուրս գնաց օր. Սահակյանի ետևից:

Օր. Սահակյանը նախասենյակում շտապով և տնքտնքալով հագնում էր վերարկուն:

— Ինչո՞ւ էիր այդպես հարձակվում նրա վրա, — ասաց Եվան բոլորովին հանգիստ կերպով և շտապեց օգնել նրան վերարկուն հագնելու:

— Ո՞ւմ վրա: Բազենյանի՞ վրա: Որովհետև, սիրելիս, նա չափից դուրս մեծ բան է երևակայում իրեն, իսկ պարծենկոտներին ես չեմ սիրում:

Եվան ոչինչ չասաց: Նա տեսավ, որ օր. Սահակյանը ամենևին ոչինչ չի կասկածել իր զայրացկոտության մասին, այլապես անկարելի էր, որ այդ մասին չխոսեր:

— Բայց զարմանալի է, — ասաց նա կարճ լռությունից հետո, երբ օր. Սահակյանը հագնում էր կրկնակոշիկները, հատակն իր ծանր ոտների տակ դրմբդրմբացնելով. — նրա մեջ մի գիծ կա, որ երբեմն զարմանալի կերպով հիշեցնում էր եղբորս...

— Հա՛, լավ միտս բերիր, եղբորիցդ նամակ չունի՞ք այս մոտիկ ժամանակներս:

— Անցած շաբաթ ստացանք մի նամակ, բայց շատ վաղ է գրված, մոտավորապես ամիս ու կես առաջ: Ի՞նչ է որ:

— Աշխենն է խնդրել, որ եղբորդ մասին մանրամասն տեղեկություններ գրես իրեն: Ներսն այդ մասին չասացի քեզ, որովհետև... հասկանում ես է՛լի... Շատ է գանգատվում, որ Արմենակի մասին ոչինչ չեք գրում: Կգրես, չէ՞:

— Կգրեմ:

— Ուրեմն, բարի գիշեր, սիրելիս: Աշակերտուհիներդ ինչպե՞ս են, լա՞վ են սովորում:

— Վատ չեն. գոնե առայժմ սիրով են կպած գործին: Ինչո՞ւ մեկ-մեկ անգամ չես գալիս տեսնելու ինչ ենք անում, ինչ չենք անում:

— Սպասիր, մեկ այս պարահանդեսի գլխացավանքից պրծնեմ: Աշխատիր, աշխատիր, սիրելիս, թե չէ ձեր այդ նոր բարեկամը դարձյալ մի օրինակով առիթ կունենա պնդելու, թե հայ աղջիկները դատարկ և չնչին արարածներ են: Ասենք, սուտ չէր ասում... բայց, ի սեր աստծո, շատ էլ երես մի տաք նրան: Նրա մասին շատ գովասանքներ եմ լսել, բայց ես իմ սեփական մեթոդն ունիմ — միշտ կրիտիկաբար վերաբերվել նրանց, ում մասին, որ շատ են խոսում: Ինչևիցե: Դարձյալ բարի գիշեր: Չմոռանաս եղբորդ մասին տեղեկություններ հաղորդել Աշխենին. անհամբեր սպասում է, մեղք է:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվ օր. Սահակյանը ներքև վազեց սանդուղքներով, իսկ Եվան վերադարձավ հյուրասենյակ:

9

Գիշերը պարզ էր: Երկինքը ծածկված էր ձյունաբեր մոխրագույն ամպերով: Առատ ձյունի խոշոր կաթիլները ցած էին թափվում անշարժ օդի մեջ անձայն ու հանգիստ և ծածկում էին գետինը մաքուր սպիտակով: Ամեն մի ձայն, առանց ցրվելու, կենտրոնանում, խլանում էր փափուկ ձյունով ծածկված շրջապատի մեջ: Ամպով սքողված լուսնի լույսը, միախառնվելով ձյունի միապաղաղ սպիտակության հետ, գիշերվա մթությունը լուսավորում էր կաթնագույն փափուկ լուսով:

Երբ երկու ընկերները դուրս եկան Մարությանների տնից և դուռը փակվեց նրանց ետևից, Բազենյանը կանգ առավ ակամա, նայեց վերև և բացականչեց հիացած.

— Ի՜նչ հրաշալի գիշեր...

— Այո, լավ գիշեր է, — արձագանք տվեց Շահյանը, սակայն շատ մեռած ձայնով, և ինչ-որ անհասկանալի դառն անձկությամբ ճմլվեց նրա սիրտը:

— Ի սեր աստծո, Լևոն, սպասիր: Մեկ այսպես վերև նայիր. տես ինչպիսի ախորժելի սառնությամբ ձյունի փաթիլները նստում են երեսիդ...

Շահյանը, վերև նայելու տեղ, միայն վերարկուի օձիքը բարձրացրեց և առաջ քայլեց:

— Գրո՛ղը տանի, այս բոպեիս պատրաստ եմ տասը բանաստեղծություն գրելու, — բացականչեց Բազենյանը և հետևեց ընկերոջը: — Սիրում եմ մեկ գարնանային խաղաղ լուսնկա, մեկ էլ ձմեռային այսպիսի սպիտակ գիշերները:

Շահյանը գնում էր գլուխը մինչև ականջները ներս կոխած վերարկուի օձիքի մեջ, և նրա մարմինը մերթ ընդ մերթ սարսռում էր օդի ցրտությունից: Մինչդեռ Բազենյանը քայլում էր մորթե գլխարկը ճակատից ետ ձգած և մուշտակի ձախ թևը միայն հագած: Օր. Սահակյանի հեռանալուց հետո Մարություններն երկու ընկերներին պահել էին ընթրիքի, որի ժամանակ Բազենյանի տրամադրությունը խիստ բացվել էր օր. Սահակյանի հետ ունեցած անախորժությունից հետո: Այժմ նա քայլում էր ուրախ և երջանիկ, քայլում էր շուտ-շուտ վերև նայելով և լեզվով որսում էր երեսին թափվող ձյունի փաթիլները: Փողոցում արդեն բավական բարձրացած ձյունը կպչում էր նրա կոշիկներին, որից նա ախորժելի խոնավ սառնություն էր զգում տաքացած ոտների մեջ:

— Ո՞վ է այդ ... օր. Սահակյա՞ն է, ինչ է, — հարցրեց նա իր կողքին մռայլ լռությամբ քայլող Շահյանին:

— Վարժուհի է, — պատասխանեց Շահյանը և կարճ լռությունից հետո հարցրեց. — Ի՞նչ է որ:

— Ինչ-որ հոպոպներ ունի: Եվ Բազենյանն սկսեց ինչ-որ օպերայից մի կտոր շվշվացնել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանն անձայն քմծիծաղ տվեց և ոչինչ չասաց:

— Չգիտեմ, նկատե՞լ ես, Լևոն. տգեղ աղջիկները միշտ ավելի համարձակ են լինում:

— Ո՞ւմ համար ես ասում այդ:

— Այդ հոպոպավոր օրիորդի համար: Անունն էլ «օրիորդ» է դրել... Երևի, առնվազն քառասուն տարեկան կլինի: Մի քանի անգամ քիչ մնաց «տիկին» անվանեի: Մեր ամբողջ վիճաբանության ժամանակ ես միայն մի եզրակացության եկա. — նա, երևի, շատ է ուզեցել ամուսնանալ, բայց ոչ ոք, գռեհկական լեզվով ասենք, ըռխին մտիկ չի տվել: Եվ ահա խեղճին ուրիշ բան չի մնացել, բացի միայն քացախելուց իր օրիորդության մեջ և ատամները սրելուց մեր երիտասարդության դեմ: Հը՞, դու ինչ ես կարծում, Լևոն:

— Ես կարծում եմ, որ դու... միայն քո ոխն ես ուզում հանել նրանից:

— Ի՞նչ... Ո՞խը... Հա՛, հա՛, հա՛, հա՛... Ա՛յ թե հիանալի հոգեբան ես եղել և լավ ես ճանաչում ինձ... Ես ոխ հանեմ մի պառավ օրիորդից իր անատամ հարձակումների համար և այն էլ նրա բացակայության ժամանակ... Չէ՛, Լևոն, այդ չեղավ. ուրիշ բան ասա, թե չէ՝ կպայթեմ ծիծաղելուց:

Բազենյանը ծիծաղում էր այնքան սրտանց և անկեղծ, որ Շահյանին թվաց, թե իր ասածը պետք է որ իսկապես հիմարություն լիներ:

— Ասա, խնդրեմ, ուրիշ ինչպե՞ս բացատրեմ քո այդ նազելի օրիորդի այն տխմար ծայրահեղությունը, որ ուրանում էր մինչև անգամ շարժումների նշանակությունը, այն շարժումների, որոնք բացառապես մեր երիտասարդների գործն են: Նկատիր, սիրելիդ իմ Լևոն, որ նա հայ աղջիկներին էլ չէր պաշտպանում իմ կարծիքի դեմ, որովհետև մյուս աղջիկները, գոնե իրեն շրջապատողները, ինչպես, օրինակ. Մարությանի աղջիկը, ջահել և գեղեցիկ են իրենից, Բայց ի՛նչ եմ ասում. ես ուղղակի սրբապղծություն եմ գործում, որ Մարությանի աղջկան համեմատում եմ նրա հետ:

— Հապա ինչո՞ւ այնպես եռանդով գովաբանում էր Աշխենին: — Նրան, որի նամակը կարդո՞ւմ էր:

— Հենց նրան:

— Երևի նա էլ իր պես պառավ և տգեղ է:

— Ընդհակառակը, նա շատ ջահել է և բավական էլ գեղեցիկ:

— Կամ գովաբանում է նրա՛ համար, որ իր մտերիմն է: Բայց այդ նշանակություն չունի: Նա համաձայն էր ինձ հետ, որ հայ աղջիկներն ընդհանրապես դատարկ և չնչին արարածներ են: Իսկ այն գյուղ գնացած աղջիկն էլ իր ճռճռան նամակով, ճիշտը քեզ ասեմ, ուրիշ տեսակ տպավորություն թողեց ինձ վրա:

— Ի՞նչ տպավորություն:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Չգիտեմ, ճշմարիտ, ինչպես ասեմ, որ կարողանամ ճիշտ արտահայտել... Նա, երևի, բանաստեղծություններ էլ է գրում թաքուն... Խոսք չունիմ. գրիչը լավ, մինչև անգամ շատ լավ է շարժում, եթե միայն, իհարկե, չի արտագրում որևէ գրքից. բայց — գո՛րծ, գո՛րծ: Ճռճռան ֆրազներով խելքահան կարելի է անել միայն Մարությանի պես միամիտներին, իսկ ինձ հարկավոր է, որ տեսնեմ, թե ինչ է շինել նա, կամ ինչ է շինում... Բայց մի ուրիշ բան եմ ուզում ասել քեզ, Լևոն: Այդ ի՜նչ հրաշալի աղջիկ է եղել Մարությանի աղջիկը...

Շահյանն ինքն էլ չնկատեց, թե ինչպես մի քանի քայլ առաջ ընկավ ընկերոջից:

Բազենյանը հասավ նրան և առավ նրա թևը իր միակ առողջ, ձախ ձեռքով:

— Զարմանալի է, Լևոն, — շարունակեց նա մտերմաբար, — հայ աղջիկներն առհասարակ շատ անճոռնի արտաքին են ունենում, մեջքները ծռած, գլուխները առաջ ձգած, — կարծես վզակոթներին տվել են, — դիմագծերն անկանոն, կոպիտ ու բութ, շարժումները տգեղ ու ստրկական, իսկ հագուստներն այնքան անճոռնի ու անճաշակ, որ չես ուզում նայել: Բայց Մարությանի աղջիկը... Ես մինչև այժմ էլ ապշած եմ մնացել և հարցնում եմ ինքս ինձ՝ մի՞թե դա հայ ընտանիքի ծնունդ է: Այդպիսի աղջիկներ ես տեսել եմ միայն Եվրոպայում: Հայ աղջիկ և այդպիսի՜ գեղեցկություն, այդքա՜ն գրացիա... Իսկ դատողությունը, անբռնազբոսիկ վարվեցողությունը, հյուրին զբաղեցնելու ընդունակությունը, այսինքն ա՛յն բաները, որոնք ամենից ավելի պակասում են հայ աղջիկներին...

Եվ Բազենյանը որքան շատ էր խոսում Եվայի մասին, այնքան ավելի Շահյանը զգում էր , որ երկյուղի և ատելության նման մի բան էր շարժվում իր սրտի մեջ դեպի ընկերը: Մի տարօրինակ եսական զգացում թելադրում էր նրան, թե Բազենյանն իրավունք չունի խոսելու Եվայի մասին այդպիսի հիացմունքով: Եվ նա կարեվեր ջանք էր գործ դնում, որ զսպի այդ զգացումը, անտարբեր ձևանա և մի բան ասի իրեն չմատնելու համար, բայց չէր կարողանում:

— Այսքան ժամանակ ծանոթ ես այդ ընտանիքի հետ և ինչպե՞ս է եղել, որ չես սիրահարվել այդ հրաշալի աղջկա վրա, — նկատեց Բազենյանը և ծիծաղեց: — Քո տեղ որ ես լինեի, աստված է վկա, Լևոն, անպատճառ կսիրահարվեի:

Շահյանը քիչ մնաց, որ ետ դառնար և ապտակ տար նրա երեսին — այն աստիճան լիրբ և հանդուգն թվաց նրան Բազենյանի մեղմ, խորհրդավոր ծիծաղը: Նա միայն այնքան քաջություն ունեցավ, որ թևը խլեց ընկերոջ ձեռքից: Հենց սկզբից անդիմադրելի մի նողկանք էր զգում Բազենյանի ձեռքի շոշափումից:

— Հիմարություններ որ դուրս չտաս, ավելի լավ կլինի, — ասաց և քայլերն արագացրեց: Այդպիսի բառերով դեռ երբեք չէր խոսել Բազենյանի հետ:

Բազենյանը շարունակեց ծիծաղել:

— Լևո՛ն, դու մատնեցիր քեզ, — բացականչեց նա: Շահյանը զգաց, որ հանկարծ զգացած բարկությունից արդեն խիստ ջղային է դառնում, բայց զսպեց իրեն և ոչինչ չասաց:

— Լավ, էլ ի՞նչ ես վազում, — կանչեց Բազենյանը: — Այս ձյունի մեջ դեռ մի լավ էլ կդրմփաս:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանը նոր նկատեց, որ բավական առաջ է ընկել և իրավ որ կամա-ակամա մատնում էր իրեն: Նա կանգ առավ, մինչև որ ընկերը հավասարվեց իրեն:

— Այսօր ինչ-որ ուրիշ տեսակ ես երևում, Լևոն, — նկատեց Բազենյանն այս անգամ լրջորեն: — Մարությանների տանն էլ ամբողջ ժամանակ նստած էիր այնպես լուռ ու մռայլ, որ կարծես աշխարհիս բոլոր դարդերը քեզ են տվել:

Շահյանը մեքենայաբար թափ տվեց վերարկուի կրծքին և փեշին սպիտակ շերտով նստած ձյունը:

— Խո դեռ տանն ասացի քեզ, որ տրամադրությունս այսօր վատ է, — ասաց նա հանգիստ եղանակով, — այս անտեր մելամաղձությունից չկարողացա ազատվել:

— Այդ նրանից է, որ ճգնավորի կյանք ես վարում, — նկատեց Բազենյանը, նորից մտերմորեն առնելով նրա թևը և նրա հետ առաջ քայլելով: — Իմացիր, որ բնությանը հակառակ գնալը, մանավանդ երիտասարդական կյանքում, առաքինություն չէ և վտանգավոր բան է... Ես կատակ չեմ անում, Լևոն: Ուզո՞ւմ ես բժշկեմ քեզ:

— Ինչպե՞ս, — դեռևս լավ չհասկանալով նրա միտքը, հարցրեց Շահյանը:

— Այնպես որ ցույց կտամ քեզ, թե ի՛նչն է երիտասարդական մելամաղձության իսկական դեղը: Թող այդ բանում քո մենտորը լինիմ, և դու շատ շնորհակալ կլինիս ինձնից: Ուզում ես հենց այս գիշեր սկսենք, հենց այս րոպեիս...

Այլևս հարկավոր չէր, որ Բազենյանն ավելի պարզ խոսեր: Շահյանը հասկացավ նրա միտքը և խիստ վախեցավ: Վախեցավ և, միևնույն ժամանակ, զգաց, որ Բազենյանը հասկացավ իր վախը:

— Ոչ, այդպիսի բան երբեք չեմ արել, հիմա էլ չեմ անիլ, — ասաց նա կամաց և ամաչեց իր խոսքերից:

— Այդպիսի դեպքում խորհուրդ կտամ, որ շուտ ամուսնանաս: Միակ փրկությունն այդ է, ուրիշ ելք չկա: Հավատացնում եմ, Լևոն, ես շատ լուրջ կերպով եմ խոսում: Քո տեղ որ ես լինիմ, ուղղակի կխնդրեմ Մարությանի աղջկա ձեռքը: Նա հրաշալի բան է, ախր...

Այս անգամ Շահյանը վերին աստիճանի զզվանք զգաց դեպի ընկերը: Այն հայացքը, որով Բազենյանը նայում էր Եվայի հետ ամուսնանալա վրա, սրբապղծության պես մի բան թվաց նրան: Ճիշտ է, որքան նա իրեն հեռու էր պահում կանանցից, այնքան ավելի ցանկությամբ և շատ անգամ ուղղակի անասնական կրքով էր նայում նրանց վրա, բայց Եվայի վրա միշտ նայել և մտածել էր իբրև սրբության վրա, որին պիտի սիրել և պաշտել միայն ամենամաքուր զգացումներով: Նա մեկ ուզեց, որ իր այդ զգացումը հայտնի ընկերոջը, բայց Բազենյանն արդեն այն աստիճան ատելի էր նրան և այնքան ուզում էր, որ ընկերն այլևս չխոսի Եվայի մասին, որ ավելի լավ համարեց բոլորովին լռել, քան թե այդ մասին խոսելով նոր նյութ տալ Բազենյանին իրեն գրգռելու:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Բայց և այնպես, երբ նա, հազիվհազ ազատվելով Բազենյանի ձեռքից, տուն գնաց, չկարողացավ հանգիստ քնել: Բազենյանի խոսքերը սաստիկ շփոթել, սաստիկ տանջում էին նրան...

10

Պարահանդեսի գիշերը, ժամը տասին մոտ, Շահյանը սյուրտուկը վերևից մինչև ներքև կոճկած, դեմքին կեղծ-անտարբեր արտահայտություն տված, բարձրանում էր ժողովարանի սանդուղքներով: Ահագին հայելու մեջ տեսավ իր պատկերը, ուզեց կանգ առնել, բայց ամաչեց, թե միգուցե տեսնող լինի, որ նայում է հայելու մեջ, և շարունակեց բարձրանալ:

Արդեն բավական թվով հասարակություն էր հավաքված, և դեռ գալիս էին: Տղամարդկանց թիվն ավելի էր երևում, քան կանանց: Բուն Թիֆլիսը բացակա էր, ինչպես լինում է հայկական ամեն մի հանդեսի ժամանակ: Ներկա էր գավառը: Մեծ մասով աչքի էին ընկնում դարաբաղցիք և զոկեր — առաջիններն իրենց խոշոր արտաքինով և ծիծեռնակի թևերի պես ահագին բեղերով, վերջիններն իրենց պստիկ, նիհար մարմնով և ճմշկած դեմքերով: Շքեղորեն լուսավորված դահլիճի խորքում, այս ու այնտեղ, կենտ ու կունտ մարդիկ էին երևում: Մեծ մասը հավաքված էր դուրսը, սրահում: Դահլիճի դռան մոտ, սեղանի առաջ, նստած էր օր. Սահակյանը երկու կանանց հետ և տոմսակ էր վաճառում: Շահյանը մոտեցավ նրան, ուզեց բարևել, բայց օր. Սահակյանն այնքան զբաղված էր, որ չնկատեց նրան: Նա անցավ: Սյան տակ տեսավ Մարությանին, որ հաստափոր մի պարոնի հետ դեմ առ դեմ կանգնած՝ խոսում էր ձեռքերի և հոնքերի արտահայտիչ շարժումներով: Մարությանը նույնպես չնկատեց նրան: Շահյանը մի շրջան արեց սրահում, մտավ դահլիճ, նայեց բազմաթիվ մոմերով հուրհրատին տվող ջահերին, դուրս եկավ այնտեղից, քաշվեց մի անկյուն, սկսեց նայել առջևը խռնվող բազմությանը, և արդեն տաղտկալի թվաց նրան այդ ժողովը:

Արդեն մտածում էր, որ տուն գնա, երբ հանկարծ նրա աչքովն ընկան Մարությանի կինն ու աղջիկը, որոնք առաջանում էին դեպի նա: Մի բան, որ հենց սկզբից զարմացրեց Շահյանին, այդ՝ Եվայի շատ պարզ, ոչ-պարահանդեսի հագուստն էր, որ գրեթե աննկատելի էր դարձնում նրան աչք ծակելու չափ պճնված-զարդարված շրջապատող տիկինների և օրիորդների մեջ: Կարծես հենց այդ էր պատճառը, որ Եվան այդտեղ այնքան գեղեցիկ ու գրավիչ չերևաց Շահյանին, ինչպես տանը: Հասակով նա, կարծես, փոքրացել էլ էր: Բայց և այնպես, նրան տեսնելուն պես Շահյանի սիրտը թրթռաց վերին աստիճանի քաղցր ու քնքուշ մի զգացումով: Այդ զգացումը նոր չէր Շահյանի համար: Եվայի հանդիպումը միշտ միևնույն զգացումն էր հարուցել նրա մեջ: Սակայն այս անգամ այդ զգացումը մի առանձին ուժ ուներ, անդիմադրելի մի ուժ, որ քաղցրության հետ միասին ինչ-որ անորակելի մի դառնություն պատճառեց նրան: Նա լուռ բարևեց Թեկլեին ու Եվային և զգաց, որ այժմ դեպի նրանց ունեցած իր բարեկամությունն այնպես ազատ ու ինքնաբուխ չէ, ինչպես առաջ, երբ նոր էր ծանոթացել նրանց հետ:

— Դուք մենա՞կ եք եկել, — հարցրեց Թեկլեն:

— Այո:

— Հապա պարոն Բազենյա՞նը: Չի՞ գալու:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանն առաջուց արդեն զգում էր, որ առաջին խոսքը Բազենյանի մասին պիտի լինի, և հանկարծ մի տարօրինակ սառնություն տիրեց նրան:

— Չգիտեմ, — պատասխանեց նա չոր-չոր:

— Ինչպե՞ս է այժմ նրա ձեռքը: Հույս ունիմ, շատ լավ է:

— Չգիտեմ, չեմ տեսել նրան:

— Մի՞թե կարելի է, նրա ընկերն եք և չեք հետաքրքրվում նրա առողջությամբ: Ա՜խ, որ իմանաք, պարոն Շահյան, որքա՜ն երախտապարտ ենք նրան... Ուղղակի որդուս պես սիրեցի: Ինչքա՜ն բարի, ինչքա՜ն ազնիվ երիտասարդ է:

Շահյանը թույլ կերպով ժպտաց, բայց իսկույն, կարծես մի սուր ցավից, կծեց ներքին շրթունքը և նայեց Եվային:

— Ասացեք, պարոն Շահյան, վաղուց է, որ բարեկամ եք նրա հետ, — հարցրեց Եվան, նայելով նրան իր խոշոր աչքերով, տարօրինակ լրջությամբ:

— Վաղուց է:

— Չե՞ք կարող ասել, ի՞նչ գործի է նա իսկապես:

— Ո՛չ մի գործի, — դուրս թռավ Շահյանի բերանից, և նա թե՛ վախեցավ և թե՛ զարմացավ այն առանձին շեշտի վրա, որ տվեց այդ բառերին:

— Բայց անցած գիշեր, մեր տանը, նա պատմում էր... — նկատեց Եվան անմեղ տարակուսանքով: — Ես ա՛յդ գործի մասին եմ հարցնում:

— Հա՜, — երկարացրեց Շահյանը երկդիմի ու խորհրդավոր եղանակով և լռեց:

Եվան նայեց նրան ավելի մեծ տարակուսանքով:

— Ներեցեք հետաքրքրությանս, — արտասանեց նա իր մեղավորությունը զգացող մարդու ամոթխած անվստահությամբ: — Գուցե նրա գործերը գաղտնիք են, որոնք...

— Այո, նա այդպես է ասել, — ասաց Շահյանը մեքենայաբար և իսկույն էլ զղջաց, որ այդպես պատասխանեց, որովհետև զգաց, որ այդ պատասխանով, հակառակ իր ցանկության, ավելի ևս ուժ տվեց Բազենյանի անձի այն խորհրդավորությանը, որով, ինչպես երևում էր, առանձնապես հետաքրքրվում էր Եվան:

Եվան այլևս ոչինչ չհարցրեց: Նրանք երեքով սկսեցին անցուդարձ անել սրահում: Թեկլեն ինչ-որ բան էր պատմում Շահյանին, բայց Շահյանը չէր լսում. նրա ուշադրությունը Եվայի կողմն էր, թեև արտաքուստ ցույց էր տալիս, թե անտարբեր է դեպի նա: Եվան ամենևին չէր խոսում: Վերջին ժամանակները զարմանալի փոփոխություն էր կատարվել նրա մեջ. առաջվա

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

շատախոսությունը մոռացել էր. թե շարժումների և թե խոսակցության մեջ զսպած էր պահում իրեն. դեմքի ծիծաղկոտությունը չքացել էր. այդ դեմքի և մանավանդ աչքերի մեջ երևացող առաջվա չարաճճի աշխույժի տեղ այժմ պարզ նկատվում էր մտքի մի առանձին լարումն և ինչ-որ անհանգիստ մի տխրություն:

Մարությանը թողեց հաստափոր պարոնին, որի հետ խոսում էր սյունի տակ, և մոտեցավ նրանց: Շահյանին նա էլ իսկույն հարցրեց, թե մենա՞կ է եկել, որտե՞ղ է Բազենյանը: «Ի՞նչ դառավ այդ Բազենյանը սրանց համար», — մտածեց Շահյանը նեղսիրտ վիրավորանքով, տեսնելով, որ այդ ընտանիքի բոլոր ուշքն ու միտքը Բազենյանով է զբաղված: Նա զգում էր, որ եթե այդ ռոպեին Բազենյանը լիներ իր տեղ և ի՛նքը լիներ չեկողը, նրան, Բազենյանին, այդպիսի հարցումներ չէին տալ իր մասին, թերևս ամենևին չհիշեին էլ, թե աշխարհիս երեսին գոյություն ունի Շահյան անունով մի երիտասարդ:

— Ահա՛ պարոն Բազենյանը, — հանկարծ բացականչեց Եվան, և նրա փոքր-ինչ անհանգստություն արտահայտող դեմքի վրա մի ուրախ ժպիտ փայլեց:

Շահյանը գունատվեց:

Սրահի մեջ խռնվող հասարակության միջից, ոտները զգուշորեն հատակին քսմսելով, որպեսզի կոխ չտա կանանց շրջազգեստի փեշերը, ձեռքը դեռևս շորի մեջ կախ արած՝ առաջ եկավ Բազենյանը իր չափազանց գեղեցիկ կրակոտ աչքերով: Ժպիտը դեմքին, ազատ քաղաքավարությամբ բարևեց ամենքին, առանց մեկին կամ մյուսին նախապատվություն տալու:

— Այս ի՞նչ է, — ասաց նա ուրախ. — ես կարծում էի, թե ուշացել եմ, բայց, ինչպես երևում է, պարերը դեռ չեն էլ սկսել:

— Ի՞նչ է, ուզում եք պարե՞լ, — հարցրեց Մարությանը:

— Այո, եթե միայն կարելի է մի ձեռքով պարել:

— Մի՞թե ձեռքերով են պարում. ես կարծում էի ոտներով, — բացականչեց Մարությանը և, շատ սրամիտ համարելով իր այդ կատակը, բարձրաձայն ծիծաղեց:

— Ի դեպ. ինչպե՞ս է այժմ ձեր ձեռքը, պարոն Բազենյան, — հարցրեց Թեկլեն:

— Փառք աստծո, տիկին, լավանում է կամաց-կամաց:

— Է՛հ, ի՞նչ կասի, որ չի լավանա, — նկատեց Մարությանը: — Մեր օրիորդն էլ դժբախտություն ունի այս գիշեր չպարելու:

Բազենյանը հետաքրքրված նայեց Եվային:

— Ինչո՞ւ:

Եվան թեթևակի շփոթվեց նրա թափանցող հայացքից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Սրտի թրթռոց է ստացել, — պատասխանեց Թեկլեն:

— Երևի ա՞յն օրվանից:

— Այո, այն չարաբաստիկ դեպքից հետո, որից ամենքից շատ տուժողը դուք եղաք, — ասաց Մարությանը: — Եվ օրիորդիս դժբախտությունը դուք լիովին կհասկանաք, երբ ձեզ ասեմ, ասեմ, որ չափազանց շատ է սիրում պարել:

— Ուրեմն կարող եմ երևակայել, թե որքան տխուր պիտի անցնի այս հանդեսը ձեզ համար, օրիորդ, — դիմեց Բազենյանը Եվային կես-կատակով, կես-լրջությամբ:

Եվան նայեց նրան, հետո հորը և կամաց ծիծաղեց:

— Դու միշտ չափազանցում ես, հայրիկ, ճշմարիտ է, պարոն Բազենյան, պարելիս ես բավական հաճույք եմ զգում, բայց ոչ չափազանց, ինչպես հայրս է ասում:

— Այ, հիմա կուրանա, — նկատեց Մարությանը:

— Հայրիկ, շատ որ պնդես, կպարեմ:

Մարությանը վեր թռավ կոմիկական անհանգստությամբ:

— Օ՛հ, չլինեմ-չիմանամ... Բժիշկը մինչև անգամ արգելել է, որ արագ ման գա, իսկ սա ասում է՝ պարեմ: Ո՛չ, սիրելիս, պարն առայժմ պաս է քեզ համար, — ավելացրեց Մարությանը և, կամաց առնելով աղջկա ձեռքը, սկսեց շփել հայրական քնքշանքով:

Երաժշտությունը նվագեց: Սրահն արագորեն դատարկվեց: Ամենքը հավաքվեցին դահլիճում, ուր արդեն սկսվել էին պարերը:

Մարությանները Բազենյանի և Շահյանի հետ մտել էին այնտեղ և, դռան մոտ կանգնած, նայում էին նոր սկսված պարերին, որոնք դեռևս շատ սակավամարդ էին: Վիզն երկարացրած, պարզ ակնոցների միջից Շահյանը մի քանի գլուխների արանքով մեքենայաբար նայում էր պարողներին, բայց նրա բոլոր ուշադրությունը լարված էր դեպի Եվան ու Բազենյանը, որոնք կանգնած էին նրա մոտ, մի քիչ ետև, և երաժշտության աղմկալի ձայների միջից հազիվ կարողանում էր լսել նրանց խոսակցությունը: Անցավ մի քանի րոպե, և նա այլևս չլսեց Եվայի ու Բազենյանի ձայնը: Ետ նայեց, տեսավ, որ նրանք չկան: Տեսավ միայն Մարությանին ու նրա կնոջը, որոնք, պատի տակ քաշված, խոսում էին ինչ-որ մի պարոնի և մի տիկնոջ հետ:
Շահյանը դուրս գնաց դահլիճից: Սրահում նրա աչքովն ընկան Եվան ու Բազենյանը բազմոցի վրա նստած իրար հետ զրույց անելիս: Շահյանը ցույց տվեց, թե չտեսավ նրանց և անցավ օր. Սահակյանի կողմը, որ այս անգամ նստած էր մենակ և մատիտով ինչ-որ թվանշաններ էր գրում թղթի վրա:

— Բարև ձեզ, օրիորդ, — արտասանեց նա սովորականից ավելի բարձր ձայնով:

Օր. Սահակյանը արագ բարձրացրեց գլուխը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ա՛խ, բարև ձեզ, պարոն Շահյան: Ի սեր աստծո, մի նեղություն տամ ձեզ, հանձն առեք:

— Հրամայեցեք:

— Տեսնո՞ւմ եք այս թվերը, խնդրում եմ, գումարեցեք և տեսեք՝ իմ դուրս բերած այս վերջին գումարի հետ ճի՞շտ է, թե ոչ: Գլուխս այնքան խառնվել է, որ մի քանի անգամ գումարեցի և ամեն անգամ տարբեր գումարներ ստացա: Համեցեք, խնդրեմ, նստեցեք:

Շահյանը նստեց սեղանի մոտ, և, աշխատելով բոլոր ուշադրությունը կենտրոնացնել թվերի վրա, սկսեց գումարել: Գումարը ճիշտ դուրս չեկավ օր. Սահակյանի ստացած վերջին գումարի հետ: Կրկին գումարեց, և այս անգամ ուրիշ գումար ստացվեց: Խնդիրը լուծել չկարողացող աշակերտի պես քրտինքը վրա տվեց նրան: Որքան բռնի կերպով աշխատում էր ուշքն ու միտքը կենտրոնացնել թվանշանների վրա, այնքան շփոթվում էր և թղթի վրա, թվանշանների տեղ, տեսնում էր Եվային ու Բազենյանին՝ կողք կողքի նստած, իրար հետ քաղցր զրույց անելիս, ինչպես ահա այս 53 թիվը, որի 5-ը և 3-ը կտուց կտուցի տված՝ կարծես քչփչում են իրար հետ: «Ի՞նչ են խոսում արդյոք», — մտածում էր նա և միևնույն ժամանակ նրա շրթունքները կրկնում էին մեքենայաբար «53 և 6...»:

— Չվերջացրի՞ք, — հարցրեց օր. Սահակյանը, գլուխը բարձրացնելով իր գործի վրայից:

— Չէ, դուրս չի գալիս, թվանշանները շատ են, համարիչով հեշտ կլինի... Հետո, այստեղ այնպիսի աղմուկ է տիրում, որ...

— Ինչևիցե. թողեք, սա վաղվա գործ է:

Շահյանը հանեց թաշկինակը և սկսեց սրբել ճակատի քրտինքը:

— Ինչպես երևում է, եկամուտը լավ պետք է լինի, — ասաց նա:

— Վատ չէ: Բայց այնպե՛ս հոգնած եմ... Երևակայեցեք, առավոտից մինչև այժմ ամենևին հանգստություն չեմ ունեցել: Էգուց էլ ժամը ութին դասի պետք է գնամ: Ամեն բան իմ վզին են գցել ու հեռացել: Այնպե՛ս զայրանում եմ...

— Միշտ այդպես է լինում, օրիորդ, երբ ընկերներից մեկը եռանդով է կպչում գործին, մյուսները ամեն բան նրա վրա են թողնում, — նկատեց Շահյանը չլռելու համար, բայց ինքը խիստ հավանեց իր այդ նկատողությունը:

— Դրա համար էլ գործին եռանդով կպչողները շատ շուտ են սառում, — վրա բերեց օր. Սահակյանը: — Հիմա աստված ուժ տա մեր պարողների ոտներին. մինչև լուսադեմ պետք է մաշեն հատակը: Դուք չե՞ք պարում:

Շահյանը ժպտաց:

— Ես պարել չգիտեմ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Մի՞թե: Զարմանալի է:

Թև թևի տված, բարձրաձայն խոսելով ու ծիծաղելով, մոտեցան օր. Սահակյանին ծանոթ երկու օրիորդներ: Օր. Սահակյանը զբաղվեց նրանցով, իսկ Շահյանը անմիջապես վեր կացավ և հեռացավ: Եվան ու Բազենյանը նստած էին առաջվա տեղը: Շահյանը դարձյալ ցույց տվեց, թե չտեսավ նրանց և, շեղակի անցնելով, մտավ սեղանատուն:

11

Եվան թեթևակի նայեց Շահյանի ետևից և դարձավ Բազենյանին ժպտալով.

— Գիտե՞ք ինչ կա, պարոն Բազենյան: Փոքր-ինչ առաջ, երբ դուք դեռ չէիք եկել, ես այնքան անզգույշ եղա, որ ուզեցի իմանալ Շահյանից, թե դուք ինչ գործի եք: Երևակայեցեք, նա ինձ այնպիսի չոր պատասխան տվեց, որ սաստիկ զղջացի անզգույշ հետաքրքրությանս համար: Ինձ թվում է, թե Շահյանը իրավունք ուներ ինձ ոչինչ չասելու, որովհետև... — Եվան, գլուխը թեթևակի ետ ու առաջ տանելով, մեքենայաբար սկսեց ուղղել շրջազգեստը ծնկների վրա, — որովհետև լավ չէ առհասարակ, որ մարդ անտեղի հետաքրքրվում է ուրիշի գործերով... Այնպես չէ՞, — հարցրեց նա և հանկարծ նայեց Բազենյանին համարձակ, մտերմական ժպիտով:

— Չէ, ինչո՞ւ: Վատ բան ես այդտեղ ոչինչ չեմ գտնում: Ընդհակառակը, շատ լավ է, նույնիսկ անպատճառ հարկավոր է, որ մարդ իմանա, թե ո՛ւմ հետ գործ ունի:

Եվան բավական կոտրվեց Բազենյանի այդ լուրջ պատասխանից:

— Այդ, իհարկե, այդպես է, բայց... ձեր վերաբերմամբ... — Հա՛, իմ վերաբերմամբ , — երկարացրեց Բազենյանը:

Նրա ձայնը խիստ խորհրդավոր կերպով հնչեց Եվայի ականջին: Եվան տեսավ, թե ինչպես իր հետ մինչև այդ ժամանակ ուրախ ու մտերմաբար խոսող այդ երիտասարդը հանկարծ սառեց, թե ինչպես մինչև այդ րոպեին նրա շարունակ ժպտող, անհոգ հայացքը վերին աստիճանի խորհրդավոր, նույնիսկ խիստ արտահայտություն ստացավ: Եվ այդ առաջին անգամն էր, որ Եվան իրեն ճնշված դրության մեջ զգաց Բազենյանի առաջ, իսկ վերջն այդ դրությունը երկյուղի նման մի տեսակ զգացման փոխվեց, երբ տեսավ, որ Բազենյանը երկար ժամանակ, ինքն իր մեջ կենտրոնացած, լռություն է պահպանում, մեքենայաբար ուղղելով ձեռքի փաթաթանը:

— Ես կարծում եմ, օրիորդ, — վերջապես շատ լուրջ ձայնով և հատընդհատ խոսեց Բազենյանը, առանց նայելու Եվային և շարունակելով ուղղել ձեռքի և շարունակելով ուղղել ձեռքի փաթաթանը, — ես կարծում եմ, որ դուք պիտի ներեք ինձ, եթե ասեմ, որ Շահյանն իրավունք ուներ կամ, ավելի ճիշտը, պարտավոր էր գաղտնի պահելու իր պաշտոնն ինչպես ամենքից առհասարակ, նույնպես և ձեզնից, որովհետև... կան բաներ, որոնք խիստ գաղտնի պիտի պահվեն, և եթե ասվում են մեկին, կնշանակի ամենքին են ասվում: Իմ պաշտոնի գաղտնիքն ես միայն Շահյանին եմ հայտնել, իբրև շատ մտերիմ և շատ հավատարիմ ընկերոջս, և վստահ եմ եղել, որ նա այդ գաղտնիքն ուրիշներին պատմելու անխոհեմությունը չի ունենալ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Տեսնո՞ւմ եք, ես էլ հենդ ա՛յդ էի ուզում ասել, այսինքն... որ ձեր պաշտոնը... լավ չէ, որ ամեն մարդ իմանա:

— Ո՛չ, ամեն մարդ, օրիորդ, բայց ո՛չ ամեն մարդ: Եվան մտառությամբ նայեց Բազենյանի աչքերին: Ինչպես միշտ, երբ աշխատում էր ըմբռնել լսած մութ խոսքերի իմաստը, այս անգամ էլ նրա աչքերը մեծացել, կենտրոնացել և խիստ գեղեցկացել էին:

— Ներողություն, չկարողացա հասկանալ, թե ինչ եք ուզում ասել:

— Ես ուզում եմ ասել, օրիորդ, որ մեր գործերը լավ կլինի, որ ամեն մարդ իմանա, եթե միայն իմացողը մարդ է իսկապես, ազնիվ, գործի սիրով վառվող մարդ: Բայց որովհետև աշխարհքս լիքն է վատ, մութ մարդկանցով, որոնք անկաշառ գործչին մոտենում են Հուդայի համբույրով, ուստի մեր գաղտնիքը պետք է իմանա ո՛չ ամեն մարդ: Մենք առհասարակ խիստ զգույշ ենք, որովհետև գործ ինքը չափազանց մեծ զգուշություն է պահանջում...

— Հասկացա... Այժմ հասկացա: Հա, իհարկե, դուք իրավացի եք: Բայց ես կարծում եմ, որ դուք միևնույն հայացքով չպետք է նայեք ամենքի վրա:

— Ես պարտավոր եմ, օրիորդ, թերահավատությամբ նայելու ամենքին, որովհետև կրկնում եմ, գործն ինքն է պահանջում այդ. այլապես՝ մի՞թե չեք հասկանում, որ ես վաղուց արդեն հրաժեշտ պիտի լինեի տված ազատությանս և գործին էլ մեծապես վնասած:

Եվան անմեղ հանդիմանությամբ նայեց Բազենյանի աչքերին:

— Մի՞թե կարծում եք, որ ինձ վրա էլ պետք է կասկածանքով նայել...

Բազենյանն իր հերթին նայեց Եվայի աչքերին և ակամա այնպիսի մի շարժում գործեց, որ կարծես թե ուզում էր բուռն ձգտումով առնել նրա ձեռքերը և ամուր-ամուր սեղմել: Բայց նա զսպեց իրեն և նորից սկսեց ուղղել ձեռքի փաթաթանը:

— Քանի որ իմ խոսքերը ձեզ վրա ընդունեցիք, օրիորդ, — խոսեց նա մտախոհ հանգստությամբ, — ես արդեն ստիպված եմ համոզել ձեզ, որ դուք չարաչար սխալվում եք, կարծելով թե ձեզ վրա էլ կասկածանքով եմ նայում: Պետք է ասեմ ձեզ, որ ես...

Բազենյանը հանկարծ թողեց ձեռքի փաթաթանը և արագ շատ լուրջ հայացքով նայեց Եվային:

— Լսեցեք, օրիորդ, — շարունակեց նա արագախոսությամբ: — Ես չեմ ուզում, որ մենք այդպիսի ոլորապտույտ ճանապարհներով մոտենանք բուն խնդրին: Քանի որ մենք հասկանում ենք իրար, ուստի զուր ժամավաճառություն է այսպիսի խոսակցություններով զբաղվելը: Գանք ուղղակի գործին: Դուք հանդիմանությամբ նկատեցիք ինձ, թե ինչո՞ւ ձեզ վրա էլ, ձեր կարծիքով, թերահավատությամբ եմ նայում: Կրկնում եմ, դուք շատ սխալվում եք: Ես ավելի քան տեսնում եմ, որ ձեր հետաքրքրությունը բխում է բոլորովին ազնիվ, մաքուր աղբյուրից: Տեսնում եմ, որ դուք լոկ հետաքրքրության համար չէ, որ հետաքրքրվում եք: Ուստի ավելորդ է, որ ուրիշներից եք ուզում իմ մասին տեղեկություններ ստանալ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Հրամայեցեք ուղղակի ինձ: Ես ինքս անձամբ պատրաստ եմ ամենայն ուրախությամբ լի ու լի գոհացում տալ ձեր հետաքրքրությանը:

Եվան թեթևակի շառագունեց:

— Շնորհակալ եմ, որ վստահում եք ինձ, — շշնջաց նա:

— Չի կարելի վստահել միայն նրան, ով այդպիսի գործերով հետաքրքրվում է չար դիտավորությամբ:

Եվան նայեց նրան և ժպտաց: Նույնն արեց և Բազենյանը: Այդ փոխադարձ հայացքից դրդված, ինչ-որ անմեղ չարաճճի մի զգացում հանկարծ թելադրեց նրանց, թե քաղաքավարական այդ խոսակցությունն արդեն չափից դուրս անհամ ու անհոտ է, որ իրենց համար ավելի լավ, ավելի հաճելի կլինի, եթե բոլորովին մտերմաբար խոսեն իրար հետ, և նույնիսկ վատ չի լինիլ, եթե մի քիչ էլ կատակ անեն:

— Ի՞նչ գիտեք, թե ես այդպիսի հետաքրքրվողներց չեմ, — առաջինն ինքը Եվան կատակի ձև տվեց խոսակցությանը:

— Որովհետև այդ միևնույնը կլիներ, թե մեղուն ծաղկից հյութ է քաղում, որ թույն է շինում, — վրա բերեց Բազենյանը և նույնպես կատակով:

— Ինչո՞ւ մեղուն վերցրիք և ոչ թե օձը, որ ծաղկի հյութից իսկապես թույն է շինում, — ասաց Եվան ծիծաղելով: — Դա ավելի հարմար կլիներ, քանի որ ձեր համեմատությունն ինձ է վերաբերում, իսկ օձ անունը հենց կանանց համար են

գործածում:

— Այո, բայց հրեշտակ անունն էլ են գործածում, — նկատեց Բազենյանը նույնպես ծիծաղելով: — Օձը հակառակ ծայրն է:

— Ինչպես և հրեշտակը:

— Ուրեմն դարձյալ մեղուն է հարմարը, որ ես գործածեցի:

— Բայց դուք մեղր շինելու կողմից վերցրիք. մեղուն, ախր, սարսափելի խայթում էլ է:

— Այդ վնաս չունի, մեղուի խայթելը չի խանգարում նրա քաղցր մեղրը վայելելու:

Այդ այլաբանական խոսակցությունը բխում էր ինքնաբերաբար և մեծ հաճույք էր պատճառում երկուսին էլ: Նրանք անկեղծ, ուրախ կերպով խնդում էին անդադար:

— Մենք, կարծեմ... շեղվեցինք, — առաջինը զսպելով իրեն, ասաց Եվան և լուրջ կերպարանք ընդունեց: — Ուրեմն դուք վստահում եք ինձ...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Մինչև անգամ ավելի, քան դուք կարող եք երևակայել, — վրա բերեց Բազենյանը եռանդով: — Որովհետև... Թո՞ւյլ կտաք ինձ, օրիորդ, անկեղծ լինեմ ձեզ հետ:

Եվան զարմանքով նայեց նրա աչքերին:

— Մի՞թե անկեղծությունն ամենամեծ առաքինությունը չէ, — հարցրեց նա:

— Նայելով թե ով ինչպես է նայում, — հավատո՞վ, թե թերահավատությամբ:

Եվան այս անգամ ժպտաց:

— Մեր դերերը կարծես թե փոխվում են, — նկատեց նա, — այժմ դուք եք սկսել կասկածել, թե ես թերահավատությամբ պիտի նայեմ ձեզ վրա... Առհասարակ պիտի ասեմ ձեզ, պարոն Բազենյան, — լրջորեն ավելացրեց Եվան, — որ ես մեծ դժվարությամբ եմ ընդունում, թե մարդիկ կարող են անկեղծ չլինել, որովհետև չէ որ այդ լավ չէ... լավ չէ ամենից առաջ հենց իրենց համար: Չէ՞:

— Շատ իրավացի է ձեր նկատողությունը, օրիորդ, և այդ միանգամայն պատիվ է բերում ձեր սրտի մաքրությանը:

Դրանով դուք ավելի ևս խրախուսում եք ինձ, որ ձեզ հետ անկեղծ լինիմ: Ձեզ վրա ունեցած վստահությունս այնքան մեծ է, որ ես ամենևին երկյուղ չունիմ ձեր առաջ բանալու մեր գործի այսպես ասած՝ սրբության սրբոցը: Ճիշտ է, անցած գիշեր ձեր տանն արդեն շատ բան պարզեցի, բայց ոչ այն, ինչ որ մեր գործի իսկական գաղտնիքն է կազմում: Ես ավելին կասեմ, մինչև անգամ Շահյանին չեմ վստահացել հայտնել այն, ինչ որ ձեզ պիտի հայտնեմ: Այսքան ժամանակ ես թափառում եմ երկրից երկիր, քաղաքից քաղաք, անցել եմ համարյա բոլոր հայաբնակ վայրերը, շատ կանանց, շատ օրիորդների հետ եմ ծանոթացել, բայց ոչ ոք այնպիսի վստահություն և համակրանք չի ներշնչել ինձ, ինչպես դուք... Եվան ամեն կերպ աշխատեց, որ հանգիստ մնա, բայց և այնպես նկատելի կերպով շփոթվեց, — շփոթվեց ոչ այնքան Բազենյանի խոսքերից, որքան այն տարօրինակ վառվող հայացքից, որ Բազենյանը հառել էր իր վրա:

Բազենյանը տեսավ նրա շփոթմունքը և իսկույն զսպեց իրեն:

— Ներեցեք, օրիորդ, ես, կարծեմ, արդեն չափից դուրս անկեղծ եղա, — ասաց նա ժպտալով: — Այս դեպքում անկեղծությունն արդեն առաքինություն չէ: Ես խիստ տպավորվող եմ, և բնավորությանս այս գիծն ինձ միշտ վնասել է: Խնդրում եմ, ներեցեք:

Եվան բոլորովին շփոթվեց: Այդ րոպեին նա սաստիկ ցանկանում էր, որ հայրը կամ մայրը, կամ որևէ ծանոթ մարդ գար և խանգարեր այդ խոսակցությունը:

Սակայն Բազենյանը ինքը տվեց այդ խոսակցությանը:

— Մենք պետք է խոսեինք ուղղակի գործի մասին, մինչդեռ ավելի հեռացանք գործից, — ասաց նա և շուրջը մի զգուշավոր հայացք ձգելուց հետո շարունակեց: — Ես չեմ կարող և չպետք է ծածկեմ ձեզնից մեր գործի գաղտնիքները և հենց թեկուզ նրա համար, որ դուք,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ինչպես տեսնում եմ, ի սրտե համակրում եք այդ գործը, և համոզված եմ, որ լոկ համակրելով չեք բավականանալ, եթե ամեն բան բոլորովին պարզ լինի ձեզ համար: Ի դեպ պետք է ասեմ, որ հասարակության մեջ, դժբախտաբար, կանխակալ կարծիքներ շատ կան տարածված մեր մասին: Այդ կարծիքները շատ անգամ ուղղակի հրեշավոր գույներով են ներկայացնում մեզ: Մարդիկ կան, որոնք նույնիսկ ուրանում և վնասակար են համարում մեր կատարած գործը: Ձեր բարեկամ օր. Սահակյանն օրինակ: Ինքներդ տեսաք, թե անցյալ օր ինչ աչքով էր նայում նա գործի վրա...

— Օ՛, նա շատ բարի է. դուք նրա լեզվին մի նայեք, — բացականչեց Եվան:

— Նրա բարության մասին ես տարակույս չունիմ, օրիորդ. բայց ես նրա աննպաստ հայացքն եմ ասում, որով նայում էր վերջին շարժումների վրա: Դժբախտությունն այն է, որ մենք չենք կարող գործը հրապարակի վրա դնել, որպեսզի ամենքի համար պարզ լինի, որպեսզի ոչ ոք չկասկածի, թյուր կարծիքներ տանելու տեղիք չունենա: Այդ, իհարկե, շատ ցավալի է և շատ է վնասում մեզ: Բայց ո՞ւր կգնար, եթե այդպիսի բաներից հուսահատվեինք: Մենք հավատում ենք մեր գործի սրբությանը և հանուն այդ գործի պատրաստ ենք ամեն հալածանք տանելու: Զրպարտությունը մեզ համար ոչ մի նշանակություն չունի. դա մի ժանգոտ զենք է, որ կեղտոտում է միայն, բայց ոչ սպանում: Ե՞րբ և որտե՞ղ չեն հալածել հասարակական գործչին: Եվ հալածանքն այնքան սաստիկ է լինում, որքան հասարակական գործիչը բարձր է լինում կանգնած ամբոխի հոգու և մտքի ըմբռնողությունից: Մեզ էլ հալածում են: Է՛հ, թող հալածեն: Մենք խո մեր անձնական շահերի համար չենք գործում, որ վախենանք: Մենք միայն ցավում ենք, որ մեզ հալածելով ազգի շահերն են հալածում, այսինքն այն շահերը, որոնց օգտին աշխատում ենք մենք, որոնց պաշտպանությանը նվիրել ենք մեր կյանքը: Ո՞ւմ համար խաչվեց Քրիստոսը. — հենց այն ամբոխի համար չխաչվե՞ց, որը խաչեց նրան: Մեզ համար առանձնապես գործի դժվարությունն ա՛յն է, որ հալածանքը մեր դեմ երկու կողմից է — ներքին և արտաքին: Մենք աշխատում ենք խուսափել արտաքին հալածանքներից, բայց արի տես, որ ստիպված ենք ներքին հալածանքների դեմ էլ կռվելու: Այս իսկապես խիստ տրագիկական դրություն է: Այսպիսի դրության մեջ, իհարկե, մեծ ուրախություն և խրախուսանք է մեզ համար, որ մեր ներքին հալածողների դեմ գտնվում են անհատներ, որոնք համակրում են մեր վարած դատը և այդպիսով մի տեսակ գործակից են հանդիսանում մեզ այդ դատի պաշտպանության համար: Մեր նպատակներից մեկն էլ այն է, որ հասարակության մեջ որ

քան կարելի է շատ գտնենք այդպիսի անհատներ, ինչպես օրինակ, գտնվեցաք դուք: Կանանց համակրությունը մեզ համար առանձնապես մեծ նշանակություն ունի, որովհետև նրանց սիրտը մաքուր է, հետևաբար ավելի ընդունակ գործը բուռն սիրով սիրելու: Ես ավելին կասեմ. — կանանցից մենք

հերոսներ ենք սպասում: Մի Ժանն դ՛Արք մի ամբողջ հայրենիք փրկեց: Հինգերորդ դարը... Ինչո՞ւ ամեն անգամ հրճվանքով ենք հիշում հինգերորդ դարը: Նրա համար չէ՞ արդյոք, որ այդ դարում հայ կինը, թերևս ավելի քան տղամարդը, ցույց տվեց իր բուռն հայրենասիրությունը, իր հերոսական անզուգական անվեհերությունը....

Եվան անզգայաբար առավ Բազենյանի ձեռքը: — Սպասեցեք, պարոն Բազենյան: Այս աղմուկն անտանելի է: Գնանք... այնտեղ... առանձին սենյակներ կան:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվ Եվան արագ վեր կացավ տեղից: Նրա գեղեցիկ աչքերը վառվում էին մի տեսակ ինքնամոռացության կրակով: Բազենյանը հետևեց նրան:

— Ներեցեք, օրիորդ, դուք եկել էիք այստեղ զվարճանալու, իսկ ես ձեզ զբաղեցնում եմ այսպիսի...

— Ո՛ւֆ, չէ՛... եկե՛ք:

12

Շահյանը շատ շուտ թողեց պարահանդեսը և դիմեց դեպի տուն: Այդ պարող երկսեռ հասարակությունը, երաժշտության այդ խլացուցիչ ձայները, շուրջը տիրող ուրախ խոսակցությունն ու քրքիջները, ժողովարանի պայծառ լուսավորությունը — ամեն ինչ ատելի էր թվում նրան, և նա այդ ամենի մեջ ճնշված, մենակ և տխուր էր զգում իրեն: Առաջվա ծանոթ մելամաղձությունն իր ամբողջ ծանրությամբ նորից պաշարել էր նրան: Նա շատ անգամ փորձել էր, որ հոգեկան այդ դրությունն առանձին ուժգնության էր հասնում միշտ այն ժամանակ, երբ ներկա էր լինում այդպիսի ուրախ հանդեսների:

Միքայելյան կամրջով անցնելիս նա մի-երկու րոպե կանգ առավ և նայեց ներքև: Ձյունածածկ ափերի սպիտակին տվող զուգահեռական գծերի մեջ պարզորոշ աչքի էր ընկնում գետն՝ իր սևին տվող ժապավենով: Հանդարտ ու դանդաղ շարժվում էր այդ ժապավենը: Խուլ ու միահավասար լսվում էր գետի հոսանքի հետ առաջ ընթացող սառցաշերտերի ֆշշոցը:

Շահյանի աչքերը մխված էին մնացել դեպի հոսանքի մի կետի վրա, ուր կամրջի բարձրությունից լապտերներից մեկի լույսը խավար կերպով անդրադառնում էր ջրի մեջ: Գետի հոսանքն այդտեղ արագ, խորհրդավոր և սարսափելի էր թվում: Շահյանի աչքերը կարծես մագնիսացել էին այդ տեղում: Նա բռնել էր կամրջի վանդակապատից, և մատները ջղային ուժգնությամբ սեղմում էին սառը երկաթը: Հանկարծ նրան թվաց, թե ոտներն իրենք իրենց բարձրանում, անցնում են վանդակապատի այն կողմը, մատներն ուղղակի ցցվում են երկաթի մեջ և... Նա ետ քաշվեց և աշխատեց կարելույն չափ շուտով անցնել կամուրջը:

Մայրը զարմացավ, որ որդին այդպես շուտ էր վերադարձել:

— Ինչո՞ւ այսպես վաղ եկար, — հարցրեց պառավը: Շահյանը չպատասխանեց և ուղղակի անցավ իր ննջարանը:

Մայրը վախեցած հետևեց նրան:

— Լևոն ջա՞ն... ասա, է՛:

Շահյանը ուզեց պինդ գոռալ մոր վրա, բայց պատասխանեց հանգիստ ձայնով.

— Որովհետև ձանձրացա:

— Թե՞ հիվանդ ես, — չհավատալով հարցրեց մայրն անհանգստացած:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանը դարձյալ զսպեց իրեն, որ չգոռա: Լուռ ու դանդաղորեն սկսեց շորերը հանել:

— Լևոն ջա՞ն... դու վախեցնում ես ինձ:

Շահյանը կատաղորեն սյուրտուկը հանկարծ շպրտեց աթոռի վրա:

— Հիմա շա՞տ պետք է զահլա տանես, — բռնկեց նա: — Հազար անգամ ասել եմ, որ, երբ վատ տրամադրության մեջ եմ լինում, մի՛ խոսիր ինձ հետ, հարցուփորձ մի՛ անիր, հանգիստ թող ինձ: Երանի չէ՞ր լինի, որ միանգամից հիվանդանայի ու սատկեի, որ վերջապես պրծնեի քո ձեռքից...

— Աստված ոչ անի, որդի ջան, ինչե՞ր ես ասում, ես ի՞նչ եմ անում, որ...

— Ա՛յ, հիմա կշարունակի, — աչքերը ոլորելով մոր վրա, արտասանեց Շահյանը զսպած կատաղությամբ:

Այն աստիճան սարսափելի էր նրա հայացքը, որ խեղճ մայրը, կուչ գալով, լռեց:

Շահյանը երեսն ի վեր ընկավ մահճակալի վրա, ձեռքերը դրեց գլխի տակ և մնաց անշարժ: Երկար ժամանակ ծանր լռություն տիրեց: Մոր վրա այդպիսի խստությամբ հարձակվելով նա մի տեսակ վայրենի զվարճություն էր զգում: Այդպիսի դեպքերում իրեն առհասարակ այնքան չէր կորցնում, որ շարունակ դիտում էր իրեն և, երբ տեսնում էր, որ լավ է բարկանում, հավանում էր: Այս անգամ էլ հավանեց իր խիստ վարմունքը, որովհետև, տեսավ, որ լավ բարկացավ: Նա ուզում և սպասում էր, որ մայրը դարձյալ մի քանի խոսք ասի, որպեսզի ավելի լավ, այսինքն ավելի խիստ բառերով ու ձևերով արտահայտի իր բարկությունը:

Հիրավի, մայրը խոսեց, բայց ոչ այնպիսի բան, որ որդին պատճառ ունենար իր բարկությունը ցանկացած կերպով արտահայտելու:

— Լևոն ջան, — ասաց նա անհամարձակորեն: — Այս գիշեր Ստեփանն եկավ. ասաց, որ փակ խանութներից մեկի կտուրը փուլ է եկել ձյունից:

— Ջհաննամը, — արտասանեց Շահյանը:

— Էգուց գնա տես:

— Այդ ես գիտեմ, իսկ դու... գնա քնիր:

Մայրն այլևս ոչ մի խոսք չարտասանեց և սուս ու փուս դուրս գնաց: Նույն րոպեին դռան ետևից ինչ-որ խուլ հեկեկանքի ձայներ լսվեցին: Շահյանը փշաքաղվեց: Գլուխը բարձրացրեց և շունչը իրեն քաշելով ականջ դրեց: Մայրն էր լաց լինում: Քիչ մնաց վեր թռչեր մոր մոտ ծնկաչոք ներողություն խնդրելու, բայց միայն ձեռքը ջղաձգաբար բռունցք սեղմեց և պինդ խփեց բարձին:

«Ո՛չ, հարկավոր չէ, այսպես ավելի լավ է», — մտածեց նա և նորից պառկեց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Հետևյալ օրն ավելի ևս վատ տրամադրության մեջ էր: Կարծես մեկը մահու չափ վիրավորել էր նրան, և նա երբեք չպետք է մոռանար այդ վիրավորանքը:

Թեյի ժամանակ եկավ կալվածների կառավարիչը — Ստեփանը: Դա միջահասակ մի մարդ էր խիստ մազակալած երեսով. արխալուղի վրա հագած էր հնամաշ մի սյուրտուկ, որի օձիքը պլպլում էր քրտինքի կեղտից: Բացի Շահյանի կալվածներին վերահսկելուց, նա դալալի բազմազան արհեստով էլ էր պարապում: Վերջին հանգամանքը նրան վերին աստիճանի լեզվանի, խորամանկ և հաճոյախոս էր դարձրել իր գրպանի օգտին: Ում հետ էլ որ գործ ունենար, անկարելի էր, որ չխաբեր նրան. իսկ Շահյանին խո խաբում էր ամեն մի քայլափոխում:

Նա պատմեց փակ խանութներից մեկի կտրան փուլ գալը և ասաց, որ քաղաքային վարչության և ոստիկանության կողմից մարդիկ էին եկել, որոնք, բոլոր խանութները դիտելուց հետո, գտել էին, որ ամբողջ շենքը պետք է հիմքից քանդվի, այլապես, խիստ խարխուլ լինելով, վտանգ է սպառնում անցուդարձ անողներին տակովն անելու:

Շահյանին խիստ անհաճո թվաց այդ պատմությունը, տեսավ, որ այդ խանութների գործը պետք է բավական անհանգստություն պատճառի իրեն, ուստի առաջարկեց Ստեփանին, որ ծախի:

Ստեփանն ընդդիմացավ, ասաց, որ խանութները թեև շատ էլ բանուկ տեղ չեն, բայց նոր որ շինվեն, լավ եկամուտ կբերեն: — Չէ, ծախիր, չեմ ուզում, — կարճ կտրեց Շահյանը: Ստեփանը, հակառակ իր ցանկության, ստիպված էր հնազանդվել:

Նա նոր էր դուրս գնացել, որ Շահյանի մոտ մտավ Բազենյանը խիստ ուրախ տրամադրությամբ:

Այդ անսպասելի այցը վերին աստիճանի անհաճո թվաց Շահյանին: Ընկերոջ անհոգ, ուրախ դեմքն ու գեղեցիկ արտաքինն երբեք այնպես ատելի չէին թվացել նրան, ինչպես այժմ: Բայց նրան ամենից ավելի ատելի թվաց Բազենյանի՝ սև շորի մեջ կախ արած ձեռքը Շահյանը աշխատեց սառն ընդունելություն ցույց տալ Բազենյանին և մինչև անգամ այնպես անել, որ նա հասկանա, թե այժմ այլևս ամենևին հաճելի չեն իրեն նրա այցելությունները, բայց իր թույլ բնավորության շնորհիվ այդ բոլորն արտահայտեց այնքան անշնորհք կերպով, որ Բազենյանն ամենևին չնկատեց էլ, թե նրա տրամադրության մեջ որևէ փոփոխություն է կատարվել դեպի ինքը:

Շահյանը կարծեց, թե Բազենյանի առաջին խոսքը լինելու է այն մասին, թե ինչո՞ւ ինքը, Շահյանը, երեկ գիշեր այնպես շուտ էր հեռացել պարահանդեսից, բայց խիստ վիրավորվեց, որ Բազենյանը հարցրեց.

— Ինչո՞ւ երեկ գիշեր պարահանդես չէիր եկել:

— Երևի արդեն շատ մեծ մարդ ես դարձել, որ ինձ չես նկատել, — ասաց Շահյանը հանգիստ ձայնով:

Բազենյանը մի րոպե անկեղծ զարմացած նայեց Շահյանի դեմքին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ա՛խ, իրավ, — հանկարծ բացականչեց նա. — դու խո Մարությանների հետ էիր, որ եկա: Ինչպե՞ս մոռացել եմ: Բայց մեղավորը Մարությանի աղջիկն է, բռնեց և այլևս բաց չթողեց: Նա հարցրել է քեզ իմ պարապմունքի մասին, և դու ոչինչ չես ասել: Շնորհակալ եմ գաղտնապահությանդ համար, բայց ես ինքս ամեն բան պատմեցի նրան: Նա պարզապես գերեց ինձ: Որ ասեմ չիմացանք, թե ինչպես անցավ պարահանդեսը, չես հավատալ: Ինքը մագնիսացել և ինձ էլ մագնիսացրել էր իր կողքին: Պետք է տեսնեիր, թե ինչպիսի՛ ոգևորությամբ, ինչպիսի՛ համակրությամբ էր լսում... Խոստացավ հորը խնդրել, որ մի որևէ գումարով նպաստի գործին: Մինչև անգամ հասկացրեց, որ ինքն էլ իր կողմից պատրաստ է զոհաբերելու, ինչ որ կարող է... Մի խոսքով՝ գանձ, կատարյալ մի գանձ, որ ես ամենևին հույս չունեի տեսնելու մեր ներկա հայ աղջիկների մեջ: Հը՞, ի՞նչ կասես, Լևոն:

Շահյանը կամաց, կարծես ուժասպառ, երեսն ի վեր պառկեց փափուկ օթոցի վրա և ձեռքերը դրեց գլխի տակ: Նա կարեվեր ջանք էր գործ դնում, որ կարելույն չափ հանգիստ ու անտարբեր մնա: Նա ոչինչ չպատասխանեց:

— Լսի՛ր, Լևոն, քեզ եմ հարցնում. գանձ չէ՞ այսպիսի մի աղջիկ: Ի՞նչ անտարբեր և անքաղաքավարի մարդ ես, — բացականչեց Բազենյանը ծիծաղելով և, նրա ոտներից հանելով ծաղկանկար մաշիկներից մեկը, ձգեց հատակի վրա:

Այդ բանը խիստ գրգռեց Շահյանին, և նա այլևս չկարողացավ զսպել իրեն: — Դե որ գանձ է, թող որ գանձ լինի, էլ ի՞նչ ես ինձ հարցնում, — շատ կոպիտ կերպով ասաց նա, նստեց և կռացավ, որ մաշիկը հագնի:

Բազենյանը նայեց նրա կարմրատակած ու ձգձգվող դեմքին և շարունակեց ծիծաղել:

— Լավ, էլ ինչո՞ւ ես բարկանում:

— Բարկանում եմ, որովհետև... ի՞նչ գործ ունիս մաշիկներիս հետ:

Եվ Շահյանը նորից պառկեց, բայց դեմքն այս անգամ պատի կողմն արեց:

Բազենյանը մատը կծեց:

Շահյանը, դեմքը պատի կողմն արած, թեև չէր տեսնում նրան, բայց իսկույն զգաց, որ նա հասկացավ, թե ինչ էր կատարվում իր ներսը, և շատ զղջաց, նույնիսկ ամաչեց, որ ակամա արտահայտեց իր ներքինը: «Մաշիկները... ի՛նչ հիմար, ի՛նչ երեխայական պատճառաբանություն», — մտածեց նա:

Բազենյանը կարճ ժամանակ լռեց և բեղի ծայրը ոլորելով, անթարթ նայում էր ընկերոջ ծոծրակին:

Շահյանը վախեցավ այդ խորհրդավոր լռությունից: Այժմ նա բոլորովին համոզվեց, որ Բազենյանը լիովին հասկանում է իրեն: Նա գրեթե սարսափով սպասում էր, թե Բազենյանն այդ մասին հարցումներ պիտի անի իրեն, և զգում էր, որ ինքը ոչ մի կերպով չպիտի կարողանա ծածկել նրանից, որ նախանձից ատում է նրան:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Սակայն Բազենյանը նստեց նրա մոտ, աթոռի վրա, և մեծ ճարպկությամբ փոխեց խոսակցությունը, առանց այլևս ոչ մի խոսք արտասանելու Եվայի մասին:

Բայց դրանով Շահյանի դրությունը չթեթևացավ: Նա ավելի ուրախ կլիներ, եթե Բազենյանը շարունակեր խոսել Եվայի մասին, քան թե խույս տալով Մարությանի աղջկա մասին խոսելուց, դրանով զգացնել տար, որ խղճում է իրեն:

Բազենյանն այժմ խոսում էր ոչ առաջվա մտերմական անկեղծությամբ: Նոր մտած ժամանակ այնքան ուրախ և ոգևորված լինելով, այժմ խիստ զսպած, նույնիսկ սառն էր պահում իրեն: Բայց նրա ձայնի մեջ հետզհետե և ավելի ու ավելի տիրապետում էր լսողին գերող այն տխուր լարը, որ հնչում է ուրիշի թշվառության համար անկեղծորեն ցավող մարդու ձայնի մեջ: Նա խոսում էր ազգի թշվառության մասին:

Շահյանը պառկած էր, դեմքը շարունակ պատի կողմն արած: Նա ուշի-ուշով լսում էր Բազենյանին և մտածում էր ոչ թե այն մասին, թե ինչ էր խոսում ընկերը, այլ այն մասին, թե ինչպես էր խոսում նա, թե ինչպես էր հնչում նրա ձայնը: Եվ Բազենյանն այդ կողմից կատարյալ կախարդ էր թվում նրան: Նա զգում էր, որ այդ գեղեցիկ երիտասարդը եթե ամենքի հետ էլ այդպես է խոսում, անկարելի է, որ չգերե նրանց, մանավանդ Եվային, այդ անկեղծ բուռն զգացմունքներով ապրող անփորձ աղջկան: «Եվ ես ուզում եմ սրա հետ մրցե՞լ», — մտածեց նա խորին դառնությամբ:

Երբ Բազենյանը գնաց, Շահյանը դեռ երկար ժամանակ պառկած էր նույն դրության մեջ: Նա ընկել էր խորը մտածմունքները մեջ: Հետո կամաց վեր կացավ, նստեց գրասեղանի մոտ և մի նամակ գրեց: Գրելուց հետո կարդաց, բայց չհավանեց, պատռեց և մի ուրիշը գրեց: Այդ էլ չհավանեց: Այդպիսով մի քանի թուղթ գրելուց հետո վերջ ի վերջո գրելիքը խմբագրեց հետևյալ կերպով. « Սիրելի ընկեր. Իհարկե. հասկացար, թե իսկապես ինչու այնպես հանկարծ զրգռվեցի այսօր... Եվ թերևս ինձ խղճալուդ համար էր, որ չհարցրիր պատճառը: Բայց և այնպես, անկեղծորեն պիտի խոստովանեմ քեզ այդ պատճառը. միտք էլ չունի, որ ծածկեմ: — Ես սիրում եմ Եվային, սիրում եմ անհույս, անպատմելի տանջանքով, որովհետև զգում եմ և հավատացած եմ, որ նա երբեք չպիտի կարողանա սիրել ինձ նման մի ողորմելի արարածի...

Տեսնում ես, ես խոսում եմ անկեղծորեն: Եկ դու էլ ոչինչ մի ծածկիր ինձնից. ասա ուղղակի, որ արդեն սիրում ես նրան: Ես համոզված եմ, որ նա էլ անտարբեր չէ դեպի քեզ, որովհետև ձեր ծանոթանալու առաջին իսկ րոպեից տեսա, որ դու զորեղ տպավորություն ես գործել նրա վրա: Ուրիշ կերպ անկարելի էր: Նա այնքա՛ն զգայուն աղջիկ է... Թերևս ոչ ոք նրա հոգին այնպես չհասկանա, ինչպես ես: Մի զարմանալ, որքան արտաքուստ մեռած եմ երևում, այնքան նուրբ է հոգուս ըմբռնողությունը:

Լսիր, Բազենյան: Այն օրից, որ իմ մեջ գիտակցություն է զարթել, ես միշտ թշվառ եմ զգացել ինձ: Բայց այժմ իմ այդ թշվառությունը հասել է իր գագաթնակետին: Ես տանջվում եմ, անասելի կերպով տանջվում: Անհնար է, որ այլևս դիմանամ այդ տանջանքին: Ի՞նչ արած, բնությունը զրկել է ինձ այդ քաջությունից: Այս տանջանքին վերջ տալու համար մնում է երկու բան, — կամ անձնասպանություն գործել, կամ վերջ դնել իմ ու քո միջև եղած բարեկամությանը: Քեզ եմ թողնում — ընտրիր՝ որն ուզում ես... Այս մասին չեմ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

երկարացնում: Հույս ունիմ, ինձ հասկանում ես... Ա՜խ, տուր ինձ հոգու անդորրություն, հոգու անդորրություն միայն, մնացածը, — աստված քեզ հետ, — մնացածը թող քեզ լինի. ես կհաշտվեմ դրությանս հետ...

Մնաս բարյավ, երջանիկ ընկեր, կրկին անգամ մնաս բարյավ:

Քո դժբախտ Լևոն Շահյան»

Շահյանը խիստ հավանեց իր այդ նամակը, այնքան հավանեց, որ չծուլացավ մաքուր արտագրելու և արտագրածը մի քանի անգամ կարդալու: Նամակը սպասածից ավելի հաջող էր դուրս եկել. թեև բոլորովին ուրիշ բնավորություն ուներ, քան մտադիր էր տալ սկզբում: Ինչ-որ սրտաշարժ բան էր նկատում իր գրածի մեջ և հենց այդ սրտաշարժ բանն էր, որ հավանում էր:
Նամակը փակելով ծրարի մեջ, տվեց ծառային, որ տանի հանձնի Բազենյանին «Լոնդոն» հյուրանոցում:

13

Ծառան վերադարձավ և հայտնեց, թե Բազենյանը տանը չէր, ուստի նամակը տվել է հյուրանոցի դռնապանին, որ նրան հանձնի: Շահյանը համոզված էր, որ եթե ոչ այդ օրը, գոնե հետևյալ օրն անպատճառ պատասխան կստանա: Բայց ոչ այդ և ոչ հետևյալ օրը ոչ պատասխան եկավ Բազենյանից և ոչ ինքն երևաց: Շահյանը վախկոտ մտահոգության մեջ ընկավ: Կարդաց նամակի սևագրությունը, թեև բառ առ բառ անգիր գիտեր, և այս անգամ խիստ դժգոհեց այն բանից, ինչ որ գրել էր: Տեսավ, որ շատ բան կեղծել է և շատ բան չափազանցրել: Գլխավորը, որ նա բոլորովին չհավանեց այս անգամ, այդ այն էր, որ նամակը սկզբից մինչև վերջը վիպական ինչ-որ ծիծաղելի սենտիմենտալ բնավորություն ուներ, այսինքն ա՛յն, ինչ որ նամակը գրած ժամանակ խիստ հավանել էր: Եվ շատ զղջաց, որ այդպիսի նամակ էր գրել Բազենյանին: Այդ նամակի մեջ նա ներկայանում էր իբրև վերին աստիճանի խղճալի արարած՝ զուրկ արժանապատվության զգացումից, սենտիմենտալ իր սիրո մեջ, վախկոտ իր ատելության մեջ:

Բայց նամակն արդեն գրված ուղարկված էր, և նա այս անգամ պատասխանին սպասում էր գրեթե սարսափով: Պատասխանը ստացվեց երրորդ օրը քաղաքային փոստով: Բազենյանը գրում էր. «Անգին իմ Լևոն.

Թերևս զարմացած ես, թե ինչո՞ւ այսպես ուշ եմ պատասխանում նամակիդ: Զարմանքդ կփարատվի, եթե գեթ հարևանցի երևակայես դրությունս: Նամակդ այնպես ցնցել է ինձ, որ մինչև այս րոպեիս էլ խելքս, կարծես, գլխիս չէ: Հավատո՞ւմ ես, ոչ երեկ և ոչ այս գիշեր չեմ քնել կամ, ավելի ճիշտը, չեմ կարողացել քնել, որովհետև շարունակ մտածում էի, թե ինչ պատասխանեմ: Հիրավի, ի՞նչ պատասխանեմ...

Սակայն փորձեմ պատասխանել: Թերևս շատ էլ դժգոհ չմնաս իմ պատասխանից:

Դու ինձ անկեղծորեն խոստովանում ես բոլորը: Դա ինձ համար մեծ գին ունի: Եվ ուզում ես, որ ես էլ ոչինչ չծածկեմ քեզնից: Թույլ տուր միջանկյալ նկատեմ քեզ, սիրելիս, որ իզուր ես

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

կարծում, թե ես որևէ բանում կարող եմ անկեղծ չլինել: Եվ կեղծեմ ո՞ւմ առաջ: Քո՞: Ինչո՞ւ համար: Եվ ի՞նչ միտք ունի կեղծիքն այս դեպքում:

Եթե դու այնքան սկեպտիկ չես, Լևոն, և խոսքերս որևէ նշանակություն ունին քեզ համար, ապա կարող եմ քեզ հավատացնել, որ ընկերներիցս ոչ ոքի, այո՛, ո՛չ ոքի, այնպես չեմ սիրել, ինչպես քեզ...

Սակայն այս մասին կարճ եմ կտրում, որովհետև ո՞վ գիտե ինչ բացատրություններ տաս խոսքերիս...

Գանք ուղղակի գործին:

Ինչպես տեսնում ես, սիրելիս, ես աշխատում եմ կարելույն չափ հանգիստ հոգով գրել:

Քո նամակովդ, Լևոն, իսկապես մեծ ծառայություն մատուցեցիր ինձ, — այնպիսի մի անգնահատելի ծառայություն, որի համար երբեք չպիտի դադարեմ քո անունն երախտագիտությամբ հիշելու, քանի շունչս բերանումս կլինի: Ասեմ ինչու: Դ՛ու չես սխալվում. ես անտարբեր չեմ դեպի Մարությանի աղջիկը: Կարծեմ իմ այցելության առաջին գիշերն իսկ ասացի քեզ, որ այդ աղջիկը խիստ դուր է եկել ինձ: — Տեսնո՞ւմ ես, առանց քո ասելու էլ ես անկեղծ եմ եղել դեպի քեզ: — Ճշմարիտը խոստովանելով, պիտի ասեմ քեզ, որ Եվայի ինձ վրա թողած տպավորությունը եթե արդեն սեր չէ, գոնե շատ շուտով կարող է սիրո փոխվել: Ես այդ ավելի քան նախազգում եմ: Գիտեմ, թե ինչ է այն զգացումը, որ «սեր» է կոչվում: Այդ մասին ես քեզ մի պատմություն արդեն արել եմ իմ կյանքից: Այժմ կարող եմ ավելացնել հետևյալը:

Եթե այն ժամանակ այն էլզասցի աղջկան սիրել եմ, որքան ընդունակ է մարդ արարածը սիրելու, այնուամենայնիվ զգացել եմ, որ այդ աղջիկն օտար է ինձ համար, այնքան օտար, որքան օտար կարող են լինել թեև միևնույն գաղափարով համակված, բայց տարբեր ազգությունների պատկանող և յուրաքանչյուրն իր հայրենիքի թշվառության մասին մտածող երկու սիրող սիրտ: Բայց այժմ զգում եմ, որ եթե հազարավոր այդպիսի օտարուհիներ պատահեն ինձ, ես դրանց բոլորին էլ չեմ փոխիլ մի, — այո՛, մի, — հայ Եվայի հետ: Մի հարազատն ավելի սիրելի է, քան հազարավոր օտարներ միասին առած: Դա բնական օրենք է:

Ներիր, սիրելիս, ինձ թվում է, թե տրամադիր եմ գործից հեռանալու: Կարճ կտրեմ, ավելի լավ է:

Քանի որ ասում ես, թե սիրում ես Եվային, իսկ Եվան դեպի ինձ է հակված (այդ ես էլ եմ նկատում, պարզ խոսելը լավ է), և հոգիդ անդորր պահելու համար անհրաժեշտ ես գտնում, որ վերջ տրվի իմ ու քո միջև եղած բարեկամությանը, — համաձայն եմ, տուր ինձ ձեռքդ: Հարկավ, դա շատ ծանր է ինձ համար, բայց ավելի լավ ՝ հեռու մնանք իրարից իբրև բարեկամ, քան մոտիկ լինենք իբրև թշնամի: Անձնասպանության մասին ավելորդ եմ համարում խոսել, որովհետև այդ, իհարկե, շատ հիմար մի միտք է, որ ծագել է գլխումդ: Ե՛ս միայն զարմանում եմ, թե այդ ի՛նչ հրեշավոր գաղափար ունիս իմ մասին, որ բավական չէ այդ մասին գրում ես ինձ, այլև իմ ընտրությանս ես թողնում...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Ինչևիցե, այս թողնենք: Ես քեզ ուրիշ բան եմ ուզում ասել, — և նամակովդ ինձ մատաղած մեծ ծառայությունն այդ բանը համարիր:

Քո և իմ միջև եղած բարեկամությանը վերջ դնելով, ես միևնույն ժամանակ այսօրվանից վերջ եմ դնում իմ և Եվայի միջև եղած բարեկամությանը, համակրությանը, սիրույն, — ինչպես ուզում ես՝ անվանիր:

Այս բանը թերևս անսպասելի լինի քեզ համար: Բայց մի զարմանար, Լևոն: Քեզ հայտնի է, որ իմ անձը սուրբ երդումով նվիրել եմ իմ թշվառ հայրենիքին, հետևաբար այդ անձը չի կարող, իրավունք չունի պատկանելու մի որևէ անհատի, թեկուզ այդ անհատը լիներ Եվայի պես մի աղջիկ, որի համար, — օ՜, սիրո հանցավոր պաշտելի աստված, — արժե մոռանալ հայրենիքն էլ, ամեն բան էլ... Մյուս կողմից, ի՞նչ խղճով ես կարող եմ վայելել մի սեր, երբ ինձ համար պարզ է, եթե ես չլինեի, կարող էր պատկանել իմ ընկերոջը: Ո՛չ, այդպիսի սերն երջանկություն չէր բերիլ ինձ համար, այլ սոսկալի թշվառություն, որովհետև գիտակցությունս աչքիս առաջ շարունակ պիտի ներկայացներ այդ սիրո պատճառով թշվառացած թանկագին ընկերոջս տանջանքները...

Այդպես ուրեմն, անգին բարեկամ և ազնիվ ընկեր, այս օրվանից ամեն բան արդեն վճռված է: Հավաքում եմ սրտիս բոլոր քաջությունը, մտքիս բոլոր խոհականությունը և հրաժեշտ եմ տալիս քեզ և քեզ հետ միասին — Եվային: Եթե մի քանի կարևոր գործերս չլինեին, որոնց, սակայն, հույս ունիմ շուտով վերջացնելու, — կհեռանայի հենց այսօր նեթ: Սակայն այդ միևնույն է. այսօրվանից այլևս երբեք չեմ տեսնիլ Եվային և կաշխատեմ մտքիցս ու սրտիցս հանել նրա պատկերը:

Ի վերջո պարտավորությունս եմ համարում հատուկ շնորհակալությունս հայտնել քեզ, որ իր ժամանակին հանեցիր ինձ ինքնամոռացությունիցս և, թեև անուղղակի, հիշեցրիր ինձ վեհ նպատակը: Ուրեմն մնաս բարյավ, իմ անգին ընկեր: Մնաս բարյավ և դո՛ւ, Եվա: Ես գնում եմ այնտեղ, ուր պարտավոր եմ գնալ... Թեև հույս չունիմ, թե կենդանի կմնամ այնտեղ, բայց այս անակնկալ դեպքից հետո մահն ավելի ևս քաղցր կլինի ինձ համար:

Կրկին անգամ մնաս բարյավ, իմ անգին, իմ ազնիվ, իմ անկեղծ ընկեր:

Ընդմիշտ քո Սուրեն Բազենյան»:

Շահյանը չկարողացավ միանգամից ըմբռնել այդ նամակի միտքը: Կարդաց երկրորդ անգամ, երրորդ անգամ... և հետզհետե ազդվելով, ընկղմվեց ծանր մտատանջության մեջ:

Մի՞թե, հիրավի, Բազենյանն այդ աստիճան վեհանձն, անձնազոհ և հայրենիքին այդպես նվիրված երիտասարդ էր: Մինչդեռ ինքը, Շահյանը, իր համար անհաջող և անհույս սիրո մեջ նրա ախոյանը հանդիսանալով, լցվել է դեպի նա չար նախանձով ու ատելությամբ, — Բազենյանն, ընդհակառակը, քրիստոնեական ամենամեծ պատվերի հետևող էր հանդիսանում, իր բախտը, իր երջանկությունը զոհում էր ընկերոջ օգտին:

Այդ այնքան պարզ էր Բազենյանի նամակից, որ Շահյանը մինչև անգամ զզվանքով ամաչեց դեպի նա տածած իր փոքրոգի և նախանձոտ ատելությունից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Սակայն այդ ատելությունն այժմ չքացավ միանգամից: Շահյանը զգում էր այժմ, որ պատրաստ է առաջվանից է՛լ ավելի բուռն զգացումով սիրելու և հարգելու Բազենյանին, եթե նրա հոգին չդառնանար այն գիտակցությունից, թե՝ միևնույն է, Եվան Բազենյանի հեռանալով խո չի փոխիլ իր համակրությունը. ընդհակառակը, իբրև չափից դուրս զգայուն աղջիկ ավելի ևս կսիրե անձնազոհ և հայրենիքի ազատության գործին նվիրված Բազենյանին, իսկ իրեն, Շահյանին, ատելով կատի, երբ իմանա, որ իր սիրած երիտասարդին իրենից անջատողը այդ չնչին, ողորմելի Շահյանն է:

Վերջին միտքը խելագարեցնելու չափ անտանելի թվաց Շահյանին: Նա ապշեց: Ի՞նչ միտք ուներ, որ խառնում էր Եվայի և Բազենյանի միջև սկսված հարաբերություններին, քանի որ հենց սկզբից համոզված էր, որ նրանց սրտերն արդեն կապված են իրար հետ, և Եվան ոչ մի կերպ չի կարող սիրել իրեն: Ճիշտ է, Բազենյանին իր նամակը գրեց այն մտադրությամբ միայն, որ նա հեռու մնա իրենից, որպեսզի ինքը կարողանար հոգու անդորրություն գտնել, բայց ինչպե՞ս չէր հասկանում, որ իր նամակն իսկապես օտար նախանձով լցված սրտի խուլ ու ապօրինի մի բողոք էր այն երջանկության մեջ, որ պիտի ունենային Եվան ու Բազենյանն իրար սիրելով: Մեղավո՞ր էր Եվան, որ համակրում էր Բազենյանին. մեղավո՞ր էր Բազենյանը, որ համակրում էր Եվային: Ինչո՞ւ նրանց թշվառության պատճառ է դառնում: Ի՞նչ իրավունքով: Եսասեր մարդու ստոր նախանձի արդյունք չէ՞ արդյոք իր վարմունքը:

Շահյանը քստմնեց իրենից: Այս անգամ զգաց, որ իր հոգին անդորր կարող էր լինել այն դեպքում միայն, երբ ամենևին չգրեր իր նամակը Բազենյանին և շարունակեր նրա հետ իր առաջվա բարեկամությունը: Այո՛, հազարապատիկ ավելի լավ է, որ մարդ ինքը տանջվի ուրիշի պատճառով, քան թե զգա, որ ինքն է պատճառն ուրիշի տանջանքի, — մտածում էր Շահյանը:

Շահյանի հանգիստը միանգամայն կորել էր, և նա որքան շատ էր մտածում իր վարմունքի մասին, այնքան ավելի ու ավելի զգում էր, որ արդարանալու ոչ մի կետ չունի: Նրան թվում էր, թե մարդ է սպանել և ոչ մի զղջում չպիտի կարողանա քավել այդ հանցանքը:

Բազենյանի դրությունը նրան պարզապես տրագիկական էր թվում: Եվ նա զգում էր, որ Բազենյանին ոչ թե միայն այլևս չի ատում և չի կասկածում նրա վեհ առաքելության մասին, այլ այդ երիտասարդը չափից դուրս բարձրացել է իր աչքում:

Չնայելով Բազենյանի պարզ ու հատու նամակին, Շահյանին թվում էր, թե իրենց հարաբերությունները չափազանց խճճվել են, թե այդ հարաբերությունները պարզելու համար անպատճառ հարկավոր է մի բան անել, բայց թե ինչ բան, — չգիտեր: Իհարկե, ամենից լավն այն կլիներ, որ անձամբ տեսնվեր ու խոսեր Բազենյանի հետ, բայց այժմ ավելի, քան երբեք, վստահություն չուներ այդ բանն անելու: Նա խիստ ամաչում էր իր նամակից հետո գնալ Բազենյանի մոտ և չգիտեր էլ, թե իսկապես ինչ պիտի խոսեր նրա հետ:

14

Անցավ մոտ մի ամիս: Շահյանը դեռևս մտատանջվում էր, թե ինչպես տեսնվի Բազենյանի հետ, երբ մի օր հանկարծ ուրախացած կանգ առավ այն մտքի վրա, թե Բազենյանն այդ մի ամսվա ընթացքում անշուշտ արդեն հեռացած կլինի Թիֆլիսից, ուրեմն, ուրեմն ավելորդ է այլևս այդքան մտատանջվել նրա հետ տեսնվելու և խոսելու մասին: Այս միտքն անասելի մի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

թեթևություն պատճառեց նրան, որպիսի թեթևություն զգում են առհասարակ անվճռական մարդիկ, երբ իրենց որևէ մի ծանր պարտականությունն անկատար թողնելու համար հանկարծ բանավոր պատճառ են գտնում:

Բայց սխալվեց:

Մի երեկո, երբ Շահյանը, զբոսանքի դուրս եկած ժամանակ, անցնում էր Միքայելյան կամրջով, հանկարծ նրա դեմն ելավ Բազենյանը մուշտակի մեջ կոլոլված և մոխրագույն մորթե գլխարկով, որը, ծուռ ծածկած, չափազանց սազում էր նրան: Այդ հանդիպումն այնքան անակնկալ էր Շահյանի համար, որ նա ակամա կանգ առավ, կարմրեց ու գունատվեց:

Բազենյանը նրան դիմավորեց բավական զսպված կերպով: Նրա դեմքը լուրջ էր, աչքերը նայում էին մտահոգ հանգստությամբ:

— Մի՞թե, հիրավի, մենք պիտի բաժանվեինք իրարից այնպե՛ս, որ գեթ վերջին անգամ չպիտի տեսնեինք իրար, — ասաց նա սառն, հավասար ձայնով և ձախ ձեռը մեկնեց Շահյանին: Աջ ձեռքը դեռևս կապած էր:

— Ես էլ այդ էի մտածում, — պատասխանեց Շահյանը, խիստ անհարմար դրության մեջ զգալով իրեն ընկերոջ սառն ընդունելությունից:

— Այդ մի փոքր տարօրինակ կլիներ, — ավելացրեց Բազենյանը: — Գոնե ինձ համար...

— Ինձ համար էլ, — մեքենայաբար վրա բերեց Շահյանը:

— Թողնենք մեր պատանեկությունը... այս վերջերս կարճ միջոցում այնքան մոտեցանք իրար, գոնե ես ինձ այնքան մոտ էի զգում քեզ, որ համոզված էի, թե ոչ մի բան չպիտի կարողանար արգելք լիներ մեզ անջատման ժամին եղբայրաբար սեղմելու իրար ձեռք և մնաս բայրավ ասել իրար վերջին անգամ:

Շահյանը զգացվեց: Առանց հանդիմանության և թախծորեն արտասանված այդ խոսքերն այնպիսի ազդեցություն ունեցան նրա վրա, որ նա անկարող եղավ զսպել իրեն և բացականչեց ամենայն անկեղծությամբ.

— Այո՛, այո՛, մենք դարձյալ ընկերներ ենք... Պետք է ներես, Սուրեն... Զգում եմ, որ մեղավոր եմ քո առաջ, չպետք է գրեի քեզ այն նամակը...

Բազենյանը փորձող հայացքով նայեց նրա շփոթված դեմքին և հանգիստ վեր քաշեց ուսերը:

— Տեսնո՞ւմ ես, դու ուրիշ բան հասկացար, — ասաց նա: — Իսկ ես այդ չէի ուզում ասել:

— Գիտեմ, գիտեմ, — արագ, ավելի ևս անկեղծորեն վրա բերեց Շահյանը: — Եվ իզուր ես կարծում, թե խոսքերդ ակնարկություն եմ ընդունում իմ այն չարաբաստիկ նամակի համար: Ընդհակառակը, Սուրեն. ես ավելի քան հավատում եմ քո ընկերական անկեղծությանը, և եթե ասացի, թե չպետք է գրեի քեզ այն նամակը, ասացի նրա համար, որ... խիղճս հանգիստ չէ: Կարծես մի ծանր հանցանք եմ գործել, որ ոչ ես և ոչ ուրիշն երբեք չպետք է ների ինձ...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Բազենյանը իր սուր հայացքով մի րոպե վերին աստիճանի լրջորեն նայեց Շահյանի խեղճ, միամիտ աչքերին:

— Խղճիդ մի հավատար, Լևոն, — ասաց նա հանգիստ: — Չափազանց զգայուն լինելուց խիղճդ ծայրահեղության մեջ է ընկնում: Երկար չեմ ուզում խոսել այս մասին, — ավելացրեց նա կտրուկ կերպով: — Այսքանս միայն կասեմ, որ վատ բան արած կլինեիր, եթե այն նամակը չգրեիր ինձ:

— Ինչպե՞ս, — զարմացավ Շահյանը:

— Այնպես որ... — Բազենյանը բռնեց Շահյանի թևից և քաշեց կամրջի վանդակապատի կողմը, որպեսզի ազատ ճանապարհ լինի տված անցուդարձ անողներին: — Լսիր, Լևոն, ինչ եմ ասում: Այնպիսի ընկերների մեջ, որպիսին ես ու դու ենք, գաղտնապահություն չպետք է լինի ամենևին: Պարզ կերպով, առանց հետին մտքի, իրարու ամեն բան խոստովանելը միակ միջոցն է ընկերական հարաբերությունները հաստատ հիմքերի վրա դնելու: Մինչև անգամ ես կարծում էի, որ երբ երկու ընկերների միջև ինչ-ինչ պատճառներով հակակրանք է ծագում, այդ դեպքումն էլ շատ լավ կլինի, որ նրանք իրենց այդ զգացումը չծածկեն իրարից: Սիրում ես ընկերոջդ, — այդ ինքնստինքյան կարտահայտվի. սկսել ես ատել, — այդ էլ մի աշխատիր ծածկել: Քաշվելն ավելի վատ է այդ դեպքում: Խոսքն ուղղակի տուր ճակատին ու հեռացիր: Այդ հանգստություն կտա քեզ, կամրացնե հոգիդ:

Շահյանը մնացել էր շփոթված և ապշած: Նրան թվում էր, թե Բազենյանը թափանցել էր իր հոգու խորքը և գիծ առ գիծ երևան է հանում հակակրանքի այն զգացումը, որ ինքը սկսել էր տածել դեպի ընկերը: Բայց այժմ այդ զգացումը ասես չկար նրա մեջ: Այս անգամ նա թե վախենում էր Բազենյանի թափանցողությունից և թե զգում էր, որ պատրաստ է առաջվանից ավելի սիրելու ընկերոջը, որի մեջ այժմ բոլորովին նոր ու սրտագրավ մի բան էր տեսնում:

— Ինչպես տեսնում եմ, Սուրեն, դու դարձյալ կասկածում ես դեպի քեզ տածած զգացումներիս վերաբերմամբ, — մեղմորեն կշտամբեց նա:

— Է՛էհ, ի՞նչ տեսակ մարդ ես, — նեղացավ Բազենյանը: — Ինչո՞ւ խոսքերս միշտ քեզ վրա ես ընդունում: Ես խոսում եմ ընդհանրապես: Դու ասացիր, թե մեղավոր ես իմ առաջ, թե չպետք է գրեիր ինձ այն նամակը, իսկ ես ուզում եմ ապացուցել, որ դրանով վատ բան արած կլինեիր: Եվ վատ բան արած կլինեիր նրանով, որ...

— Բայց, ախր, դու չհասկացար ինձ...

— Սպասիր: Վատ բան արած կլինեիր նրանով, որ...՝ Ինչպե՞ս չհասկացա քեզ: Ուզում եմ ասել, որ նամակովդ ակամա առիթ ես տվել ինձ հեռանալու Եվայից, որ դու ամենևին ի նկատի չես ունեցել, թե նամակդ ինձ համար, քո կարծիքով, այդպիսի ծանր հետևանք կունենա, որ հենց այդ բանի համար էլ խիղճդ տանջում է քեզ: Այդպես չէ՞:

— Այո:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Տեսնում ես, որ հասկացել եմ: Ա՛յ, դու չես հասկացել քեզ գրած պատասխանիս միտքը... Դժբախտաբար, ժամանակ չունիմ, Լևոն, երկար խոսելու, — մի շատ կարևոր

գործի համար շտապում եմ մի տեղ, — բայց որպեսզի քո գովելի բարեսրտությամբ շատ էլ չչափազանցնես դրությունս, ահա թե ինչ պետք է ասեմ քեզ: Իրավ է, Եվան ինձ վրա մեծ տպավորություն է թողել. ընդամենը մի քանի անգամ եմ տեսել նրան, և նրա մոտ լինելը, նրա հետ խոսելը միշտ մեծ հաճույք է պատճառել ինձ, բայց միայն այդքան: Այն զգացումը, որ ես տածում եմ դեպի նա, սեր չէ, ինչպես դու ես կարծում. հետևաբար այդ զգացումը մեռցնելու համար մի առանձին դժվարություն չկա: Բավական է, որ հեռու մնամ, և ամեն բան կվերջանա ինքնստինքյան: Առանց այդ էլ շուտով պետք է հեռանայի այստեղից, և եթե մինչև այժմ մնում եմ այստեղ, պատճառը մեր գործի հետ կապ ունեցող մի քանի անակնկալ հանգամանքներ են: Գուցե, քեզ գրած պատասխանիս մեջ, նամակիդ ազդեցության տակ, փոքր-ինչ չափազանցրել եմ դրությունս, բայց այժմ դեպի Եվան տածած զգացումս բոլորովին պարզ է ինձ համար: Ծանոթանալուս առաջին օրերն էին... Եվան շնորհալի, հետաքրքրվող, ինքնուրույն, գեղեցիկ աղջիկ է, որպիսին առաջին անգամն եմ պատահում հայ աղջիկների մեջ... Վերջապես, ինքս խիստ տպավորվող եմ... է՛հ, այդպիսի պայմաններում շատ հասկանալի է, որ փոքր-ինչ ինքնամոռացության մեջ ընկնեի: Բայց, փառք աստծո, այժմ բանը չի կարող հեռու գնալ, որովհետև... շնորհակալ եմ, քո և միայն քո նամակի շնորհիվ ես, բարեբախտաբար, խոհեմություն ունեցա իր ժամանակին զսպելու ինձ և ետ քաշվելու: Այն գործը, որին նվիրված եմ ես, պահանջում է ամենից առաջ անձնուրացություն, իսկ սիրո մեջ իր շրջանակից դուրս չկա այդպիսի անձնուրացություն: Ժողովրդական գործին նվիրված մարդը կատարելապես ազատ պիտի լինի անձնական զգացումներից, գոնե նա չպետք է թույլ տա, որ այդ զգացումները գերիշխող դեր կատարեն իր կյանքի մեջ. իսկ սիրո զգացումն այն առանձնահատկությունն ունի, որ մարդուն ամենանեղ եսասեր է դարձնում: Քիչ չի պատահել, որ մարդիկ հայրենիքի դավաճան են հանդիսացել նրա համար միայն, որ սիրել են: Այդ դավաճանությունն եղել է գիտակցաբար և անգիտակցաբար: Անգիտակցաբար դավաճաններից մեկն էլ ես կարող էի հանդիսանալ. անձնատուր կլինեի սիրո հրապույրներին և ... այդ հրապույրներից դուրս թեկուզ ամբողջ աշխարհը կործանվեր, այդ մասին ես ամենևին չէի հոգալ: Մինչդեռ ես ընկերներ ունիմ... նրանք գործում են... հավատում են, որ ես էլ ցմահ իրենց հետ եմ... ես ինքս եմ խոսք տվել... մենք ուխտել ենք միասին, և ինչպե՞ս կարող եմ դրժել իմ խոսքը, իմ ուխտը ... Ահա՛ թե ինչու համար եմ ասում, որ վատ բան արած կլինեիր, եթե չգրեիր ինձ այն նամակը, — մի նամակ, որը սթափեցուցիչ մի դեղ էր ինձ համար:

Բազենյանը խոսում էր հանգիստ և իր մտքերին անձնատուր եղած մարդու ոչինչ չտեսնող հայացքով նայում էր գետի խաղաղ ընթացքին: Այդ միջոցին նրա ամբողջ արտաքինն այն աստիճան ազդու կերպարանք էր առել. նրա հանգիստ ձայնի մեջ այնպիսի վշտաբեկ մի լար էր հնչում, որ Շահյանը զգաց, թե նրան երջանկացնելու համար պատրաստ է զոհել ամեն բան, ինչ կարող է:

— Լսիր, Բազենյան, — ասաց նա կամաց, բռնելով նրա թևից: — Իմ կարծիքով, սերն արգելք չպիտի լինի քեզ, որ շարունակես գործել հայրենիքի համար, մանավանդ Եվայի պես մի աղջկա սերը...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Բազենյանը չպատասխանեց: Նա շարունակ նայում էր գետի հոսանքին, բայց այս անգամ հոնքերը կիտեց, և նրա մտախոհ հայացքը փոքր-ինչ խիստ արտահայտություն ստացավ: Շահյանը կարճ լռությունից հետո ավելացրեց.

— Ինձ թվում է, թե այդ զոհաբերությունն անում ես... ինձ համար:

Բազենյանը դառնությամբ ժպտաց և թեթևակի նայեց նրան:

— Ուզում ես ասել, թե ավելորդ է, որ հայրենի՞քն եմ մեջ բերում...

— Ո՛չ, աստված վկա, ո՛չ, Սուրեն, — եռանդուն անկեղծությամբ վրա բերեց Շահյանը և մինչև անգամ նեղացավ, որ նա այդպիսի մի անակնկալ բացատրություն տվեց իր

խոսքերին: — Ասում եմ, զոհաբերությունդ ինձ համար ես անում, որովհետև... Եվան երբե՛ք չի կարող քեզ արգելք լինի, որ դու շարունակես գործել հայրենիքիդ համար: Ընդհակառակը, ես կարծում եմ, նույնիսկ համոզված եմ, որ նա քեզ սիրում է հենց ա՛յդ բանի համար... Չէ՞ որ ես ճանաչում եմ նրան:

Բազենյանը մի խիստ շարժում գործեց:

— Ինչևիցե, այս մասին այլևս չխոսենք, — ասաց նա, կարծես ինքն իր դեմ զայրացած: — Գործի վրա ես ուրիշ տեսակետից եմ նայում: Վճիռս անդարձ է:

Եվ նա պատրաստվեց, որ հեռանա:

— Այս մեր վերջի՞ն տեսակցությունն է, թե՞ էլի կտեսնվենք, — հարցրեց նա:

— Է՛լի, է՛լի, — արագ վրա բերեց Շահյանը: — Ե՞րբ ես գնում:

— Կարծեմ, դարձյալ մի շաբաթ կմնամ:

— Որ այդպես է, Սուրեն, վաղը ճաշին արի ինձ մոտ... առաջվա պես: Կգա՞ս:

— Տեսնեմ... չափազանց զբաղված եմ:

— Չէ, անպատճառ արի. այլապես՝ կկարծեմ, որ նեղացած ես ինձնից:

— Լավ, կգամ, — ժպտաց Բազենյանը և ձախ ձեռքը մեկնեց նրան:

— Զարմանալի է. ձեռքդ դեռևս չի՞ առողջացել:

— Ինչպես տեսնում ես, աջ ձեռքս դեռևս դատապարտված է անգործության:

Նրանք բաժանվեցին իրարից խիստ սրտագին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Հետևյալ օրը Շահյանն երկար ժամանակ սպասում էր Բազենյանին: Այդ օրը հատկապես փառավոր ճաշ էր պատրաստել տվել նրա համար: Բայց Բազենյանը չէր երևում: Վերջապես մի նամակ ստացավ նրանից հետևյալ բովանդակությամբ.

«Սիրելի ընկեր.

Ներիր, որ խոստմանս հակառակ, այսօր չեմ կարող գալ: Հենց այս րոպեիս մի խիստ կարևոր նամակ ստացա, անսպասելի նորություն են հայտնում. ամենաեռանդուն ընկերներիցս երկուսը սև մատնության զոհ են գնացել... Խիստ անհանգիստ դրության մեջ եմ: Անհապաղ օգնություն է պահանջվում: Մի խոշոր գումարի կարիք կա: Ինձ մոտ այդ գումարը պակասում է: Հարկավոր է դարձյալ հազար ռուբլի: Պահանջը ստիպողական է: Գնում եմ ճարելու: Նամակս այրիր:

Քո Ս. Բ.»:

«Հ. Գ. — Պակաս գումարը ճարելուս պես անմիջապես ուղևորվելու եմ: Թերևս այլևս չտեսնենք իրար: Մնաս բարյավ: Կրկնում եմ, նամակս այրիր»:

Կարդալուց հետո Շահյանը նամակը ձգեց վառարանը: Հետո արագ մոտեցավ գրասեղանին և դուրս քաշեց զզրոցներից մեկը: Այնտեղ հազար և մի քանի հարյուր ռուբլի կար: Այդ գումարից հազար ռուբլին ստացել էր նախորդ օրն իր կալվածների կառավարչից, որը ծախել էր փուլ եկած շենքը: Նա վերցրեց ջոկ դրած այդ հազար ռուբլին, դրեց մի ծրարի մեջ, ծոցը կոխեց և անմիջապես գնաց Բազենյանի մոտ:

Բազենյանը տանը չէր:

Շահյանը վերադարձավ տուն այն մտադրությամբ, որ երեկոյան դարձյալ գնա ընկերոջ մոտ: Բայց երեկոյան էլ նրան տանը չգտավ: Իր անելիք զոհաբերությունը Շահյանին ազնիվ անհամբերություն էր ներշնչել: Այդ օրը գիշերն էլ գնաց:

Դեռևս բավական վաղ էր: Հյուրանոցի դռնապանից իմացավ, որ Բազենյանն այս անգամ տանն է: Դռնապանն ավելացրեց, որ նա «մենակ չէ», սակայն Շահյանը չլսեց և արագ բարձրացավ վերև: Նա բռնեց Բազենյանի սենյակի դռան փականքից և առաջ մղեց: Դուռը փակ էր: Նա ծեծեց:

— Ո՞վ է, — լսվեց նորից Բազենյանի ձայնը:

— Ես եմ:

— Լևո՞ն:

— Ես եմ:

— Իսկույն: Մի րոպե Շահյանին թվաց, թե ներսից ինչ-որ քչփչոցի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ձայներ լսեց, հետո սեղան էր, թե աթոռ թրխկաց, և կարծես մեկը բոբիկ ոտներով վազեց սենյակի մի ծայրից մյուսը:

Դուռը բացվեց: Շեմքում երևաց Բազենյանը սյուրտուկն ու ժիլետը հանած: Նրա վնասված ձեռքը կապած չէր:

Շահյանը մտավ: Սանդուղքներով արագ վերև բարձրանալուց և այն գիտակցությունից, թե շուտով պետք է ուրախացնի ընկերոջը, նրա սիրտը թրթռում էր:

— Դու մենա՞կ ես, — հարցրեց նա կամաց, շնչասպառ, նայելով սենյակի չորս կողմը:

— Մենակ եմ: Ներիր, որ քեզ այսպես եմ ընդունում: Հենց նոր ուզում էի պառկել:

Շահյանը նոր նայեց ընկերոջ դեմքին:

— Այսպես վա՞ղ:

— Ի՞նչ անեմ, սիրելիս, սաստիկ հոգնած եմ. այսօր շան պես չարչարվել եմ... Ներողություն, այսօր երկու անգամ եկել ես, տանը չեմ եղել:

— Այո՛, ես... Նամակդ ստացա... Իզուր այդքան նեղություն ես կրել... Խնդրում եմ, ընդունիր այս իմ կողմից...

Եվ Շահյանը, ծոցից հանելով ծրարը, տվեց Բազենյանին: Նա աշխատում էր կարելույն չափ հանգիստ մնալ և ցույց տալ, թե բոլորովին հասարակ մի գործ է կատարում:

Բազենյանը մեքենայաբար առավ ծրարը և մի րոպե նայեց Շահյանին լուռ ու զարմացած:

— Այս ի՞նչ է, — հարցրեց նա:

— Այդ... այն գումարն է, որ... պահանջել են քեզնից:

— Ի»՞նչ գումար:

— Այսօր որ գրել էիր:

Բազենյանը ուրախությունից, կարծես հանկարծ, կորցրեց իրեն.

— Լևոն... Սպասիր... Չգիտեմ, ճշմարիտ, ինչ ասեմ... Դու այնպիսի բարի, այնպիսի ազնիվ գործ ես կատարում, որ... ո՛չ, այդ մասին չեմ ուզում խոսել. ավելորդ է. ինքդ արդեն զգում ես, թե ի՛նչ արժե այս զոհաբերությունդ... Եթե գեթ մի րոպե երևակայես, թե ինչ վիրավորանքներ եմ կրել, ինչքան ստորացրել են ինձ... Ամեն կողմից կասկածանք, ամեն կողմից երկդիմի հեգնություն... Բայց, որ ամենից ավելի սարսափելին է, վեհ զգացումների կատարյալ մեռելություն... Կարծես թե գործն իմ անձնական շահերին է վերաբերում, կարծես թե այդ գործը իրենցը չէ, ընդհանրությանը չէ... Կարծես թե ես մի եզվիտ, մի սրիկա, մի աֆերիստ եմ, որ ասպարեզ եմ եկել երեսիս դիմակ առած՝ մարդկանց խաբելու... Քիչ է մնում, որ այս բանն

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ուղղակի երեսիս ասեն: Այս սարսափելի է: Քար, անզգա քար պետք է լինել այս բոլորը տեսնելուն տանելու համար: Գործունեությանս ընթացքում ես այն համոզման եմ եկել, Լևոն, որ ամբողջ հայության, ամենաանշան բացառությամբ, մի բան, մի ահագին բան է պակասում. դա հոգու այն չարն է, վերածնող այն ուժը, որ հիմն ի վեր ցնցում է մարդու ամբողջ էությունը, վառում, ոգևորում է նրան սրբազան գործի համար: Ամեն տեղ անձնական նեղ սահմանափակումն, հեղափոխական գործի մեջ մկան վախկոտություն, քաղաքացիական զգացումների կատարյալ մեռելություն, նվիրաբերության մեջ չարչիական առևտուր, կոպեկի համար սատկում են, տալիս էլ կարծես թե իրենց մսից են կտրում: Այսպիսի պայմաններում կարելի՞ է չհուսահատվել... Մանավանդ Թիֆլիսը, այս այլասերված, ապազգայնացած Թիֆլիսը... Ճիշտը քեզ ասեմ, Լևոն, այն նամակը գրեցի քեզ, բայց շատ զղջացի: Մտածում էի, ո՞վ գիտե, գուցե կարծեիր, թե դա մի խաղ է իմ կողմից, թե դրանով ուզում եմ մի ավելորդ անգամ փող կորզել քեզնից...

Շահյանը խիստ անհանգիստ մի շարժում գործեց և նայեց նրան անկեղծ հանդիմանությամբ:

Բազենյանը նկատեց այդ և արագ առավ նրա ձեռքը:

— Խնդրում եմ, Լևոն, ներիր ինձ, — հուզված աղերսեց նա: — Կյանքի դառն փորձերն այն աստիճան հոռետես են դարձրել ինձ, որ ես տեսնո՞ւմ ես, թույլ եմ տալիս ինձ կասկածելու մինչև անգամ քո ազնիվ սրտի մաքրության վրա... Ա՜խ, իմ պատվակա՛ն ընկեր, որքա՛ն շնորհակալ եմ քեզնից...

Եվ Բազենյանն ամուր-ամուր սեղմեց Շահյանի ձեռքը: Շահյանը հազիվ ազատեց իր ձեռքը: Այն աստիճան շփոթված և վերացած էր, որ չլսեց, թե ինչպես այդ միջոցին ինչ-որ, ըստ երևույթին կնոջ, հագուստի խշխշոց եկավ, և ոչ էլ տեսավ, թե ինչպես սենյակի անկյունում դրված պատվարի չթե պատերը թեթևակի շարժվեցին: Մեքենայաբար բարի գիշեր մաղթեց Բազենյանին, ասաց, որ նա հոգնած է, չի ուզում անհանգստացնել նրան, դուրս եկավ, անցավ երկայն միջանցքով և սկսեց մանրիկ արագ քայլերով իջնել սանդուղքի ցածր աստիճաններով: Դռնապանը շտապեց հարգական պատրաստակամությամբ բանալ նրա առաջ դուռը: Շահյանը կանգ առավ, վերարկուի գրպանից հանեց արծաթ մի դրամ, կոխեց դռնապանի բուռը, առանց նայելու նրան, կարծես ամաչելով, որ փող է տալիս նրան և շտապով դուրս գնաց փողոց: Իր արած զոհաբերության գիտակցությունից, Բազենյանի խոստովանությունից և շնորհակալությունից շշմել էր նրա գլուխը: Նա քայլում էր արագ և վստահորեն և ոչինչ չէր մտածում. զգում էր միայն, որ չափից դուրս երջանիկ է: Դա հոգին ու միտքն ազնվացնող այն վեհ, այն հպարտ երջանկությունն էր, որ զգում է մարդ ինքնաբերաբար որևէ բարի գործ կատարած ժամանակ:

— Պարո՛ն Շահյան... պարո՛ն Շահյան, — լսեց նա իր ետևից:

Շահյանը կանգ առավ և արագ շուռ եկավ: Խանութների վառ ճրագների լույսի մեջ տեսավ Մարությանին ու Եվային, որոնք գալիս էին իր ետևից: Կանչողը Մարությանն էր: Շահյանը շտապեց դեպի նրանց:

— Դուք անցաք ուղղակի մեր կողքով և չբարևեցիք մեզ: Չլինի թե դարձյալ խռովել եք, — նկատեց Մարությանը ծիծաղելով:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանը սեղմեց հոր ու աղջկա ձեռքը, նա ժպտում էր:

Նրա դեմքը վառվում էր հոգեկան բերկրանքով: Եվայի հանդիպումն այդ րոպեին մի կատարյալ երջանկություն էր նրա համար:

— Ներեցեք, չնկատեցի, — պատասխանեց նա Մարությանի նկատողությանը, և իսկապես որ չէր նկատել նրանց:

Մի րոպե կանգ առնելով, նրանք երեքը միասին շարունակեցին ճանապարհը:

— Ներելի է, — ասաց Մարությանը, — որովհետև շտապում էիք, երևի ցրտից շուտով պատսպարվելու համար: Տեսնո՞ւմ եք, ի՛նչ փառավոր ցուրտ է: Բայց լազաթ ունի, որ սառած գետնի վրա ման ես գալիս այսպես կտկտալի: Ինձ որ հարցնեք, ձմեռն էլ ունի իր բանաստեղծական հրապույրները: Օրինակի համար մեկ նայեցեք երկնքին, ո՞ր մի գարնանային գիշեր երկնքի կապուտակն այնպես ամուր է լինում, այնպես հաստատ, ինչպես այժմ. ե՞րբ եք տեսել, որ աստղերն այնպես մեծ երևան, այնպես հուրհրատին տան, ինչպես այս գիշեր...

Մարությանն աչքերը հեռացրեց երկնքից, նայեց Շահյանին և ծիծաղեց:

— Երևակայում եմ, թե ինչքա՛ն ծիծաղում եք ինձ վրա մտքներումդ, — բացականչեց նա:
— Ընդհակառակը, ես նախանձում եմ ձեր ուղևորությանը:

Մարությանը առավ նրա թևը:

— Որ այդպես է, երիտասարդ բարեկամ, դուք դեռ շատ բանում պիտի նախանձեք ինձ... Աղջիկս է միայն, որ, — չգիտեմ, ճշմարիտ, այս ի՞նչ փոփոխություն է, — ոչ ոգևորվում է, ոչ խոսում: Ասացեք խնդրեմ, կարելի՞ է այսպիսի մի հրաշալի գիշեր ման գալ լուռ ու մունջ. իսկ մենք, ես ու աղջիկս, ահա մի ժամ է, որ դուրս ենք եկել մի քիչ սառն օդ կուլ տալու, և, բացի մի քանի կցկտուր խոսքերից ուրիշ ոչինչ չեմ լսել սրա բերանից: Մտածում է, ինչ-որ խորին խորհուրդներ է խորհում, բայց թե ինչ բանի մասին, — այդ բարձրյալին է հայտնի:

Եվ Մարությանը, դեմքին ծաղրական արտահայտություն տված, ուսի վրայից նայեց աղջկա դեմքին. կարծես, ուզում էր գրգռել նրան, որ զայրանա, խոսի:

Բայց Եվան, կարծես, չէր լսում, թե ինչ է ասում հայրը:

Ձեռքերը մուֆթի մեջ դրած, մերթ առաջ ընկնելով, մերթ ետ մնալով, նա քայլում էր հոր կողքից և մեքենայաբար նայում էր ցրտից կուչ եկած անցուդարձ անողներին: Նրա թե՛ քայլվածքի և թե՛ հայացքի մեջ նկատվում էր ինչ-որ զսպված անհանգստություն: Երբեմն անհանգիստ հայացքն ուղղում էր Շահյանին, ըստ երևույթին ուզում էր բան հարցնել, բայց ոչինչ չէր ասում և դարձյալ կամ առաջ էր ընկնում հորից, կամ ետ մնում նրանից:

— Ձեզ մի բան եմ ուզում հարցնել, պարոն Շահյան, — ասաց Մարությանը, կատակով խոսելու եղանակը թողնելով: — Ո՞ւր է այս ձեր պարոն Բազենյանը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվան առաջ ընկավ և շեշտակի նայեց Շահյանի աչքերին անհամբեր հայացքով:

Շահյանն իր կողմից նայեց նրան և զգաց, որ հանկարծ փոխվեց իր ուրախ տրամադրությունը:

— Բազենյա՞նը, — արտասանեց նա, հազիվ զսպելով իր մեջ հանկարծ բռնկած նախանձի կիրքը: — Բազենյանը... Այս րոպեիս նրա մոտ էի:

— Հա-ա՞: Այս ո՞րտեղ է, որ էլ չի երևում: Անցյալները, սրանից մոտ մի ամիս առաջ, ճաշին մեր տանն էր: Խոստացա մի գումար նվիրել գործի օգտին. բայց այն օրվանից չերևաց. չգիտեմ ինչն է պատճառը:

«Պատճառը», — մտածեց Շահյանը և դարձյալ նայեց Եվայի դեմքին: Տեր աստված, ինչպիսի՜ զայրացնող անհամբեր հետաքրքրություն էր արտահայտում այդ չքնաղ դեմքը...

— Ինչ-որ նամակ էր ստացել, — ասաց նա, աշխատելով կարելույն չափ անտարբեր ձևանալ: — Գրում էին, որ ընկերներից երկսին ինչ-որ դժբախտություն է պատահել և փող էին պահանջում նրանց համար: Երևի, այդ փողը գտնելու ետևից ընկնելով, ժամանակ չի ունեցել ձեզ այցելելու:

— Զարմանալի է: Ես ձեզ ասում եմ, որ նրան փող էի խոստացել, ուրեմն ամենից առաջ, կարծում եմ, ինձ մոտ պետք է գար, եթե այդպիսի կարիք ուներ:

Շահյանը հիշեց իր նամակին Բազենյանի պատասխանը, որի մեջ գրում էր, թե Եվայից հեռու մնալու համար վճռել է այդ օրվանից միանգամայն կտրեց իր հարաբերությունները Մարությանների հետ, և նրա համար հասկանալի դարձավ, թե ինչու Բազենյանը փողի համար չէր դիմել Մարությանին: Նա զարմացավ Բազենյանի այդ հաստատակամության վրա և զգաց, որ մի րոպե առաջ իր մեջ դեպի նա բռնկած նախանձի կիրքը չքացավ:

— Սպասեցեք: Ե՞րբ եք ստացել այդ նամակը, որի մեջ գրում են ընկերների դժբախտության մասին և փող են պահանջում, — հարցրեց Մարությանը:

— Այսօր:

— Այսօր: Ուրեմն կարծում եմ գոնե վաղը կգա մեզ մոտ:

— Չեմ կարծում: — Ինչո՞ւ:

— Որովհետև... փողն արդեն ճարել է (Շահյանն ուզեց ավելացնել՝ «ես տվի», բայց համեստությունից լռեց այդ մասին) և շուտով գնալու է:

— Հա-ա՞ , — բացականչեց Մարությանը և հանկարծ կանգ առավ: — Ա՜յ, այդ վատ բան ասացիք: Ես վախենում եմ, թե մի գուցե գնա առանց մեզ հանդիպելու: Հը՞, ի՞նչ եք կարծում:

— Չգիտեմ... շատ կարելի է, — ասաց Շահյանը վարանելով և թեպետ չէր նայում Եվային, բայց զգում էր, որ նա աչքերով ուտում է իրեն: «Կասկած չկա. սիրում է», — մտածում էր նա մի տեսակ բութ հուսահատությամբ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մարությանը հանկարծ մոտեցավ մերձակա խանութի լուսավորված լուսամուտներին, հանեց ժամացույցը և նայեց:

— Ժամը 8 1/2 է: Չի՞ լինիլ, որ այս րոպեիս ինքներս գնանք նրա մոտ: Հը՞, Եվա:

Եվան նայեց հորը: Շահյանը տեսավ, որ նրա աչքերը վառվում են տարօրինակ վճռականությամբ:

— Գնանք, — ասաց աղջիկը հաստատուն ձայնով:

— Շատ լավ: Գնանք: Իսկ դուք, պարոն Շահյան, կգա՞ք մեզ հետ: — Իզուր եք գնում, — ասաց Շահյանը. — նա այժմ քնած կլինի:

— Ի՞նչ եք ասում, այսպես վա՞ղ:

— Այո, ես, որ գնացի, արդեն պատրաստվում էր քնելու: Ասաց, որ շատ հոգնած է:

— Է՛, — հուսահատորեն թափահարեց ձեռքը Մարությանը: — Ես զարմանում եմ, ճշմարիտ, ինչո՞ւ էլ չեկավ մեզ մոտ: Ախր դուք չգիտեք, պարոն Շահյան, բանն ինչումն է: Երկար ժամանակ է, որ մենք նամակ չունենք մեր որդուց: Վերջին անգամ, որ Բազենյանը մեր տանն էր ճաշին, ասավ, որ գնալու է այն կողմերը: Հիմա մենք մտածել ենք, որ նրա ձեռքով մի նամակ ուղարկենք մեր որդուն և ուզում ենք խնդրել, որ եթե աստված մի արասցե, որևէ բան է պատահել նրան, տեղեկություն տա մեզ: Իսկ դուք ասում եք, թե շուտով գնալու է և հազիվ թե գա մեզ մոտ: Հիմա ինչպե՞ս անենք, որ տեսնենք նրան:

— Վաղն առավոտ անցիր նրա մոտ, ի՞նչ կա որ, — ասաց Եվան:

— Բանն ա՛յն է, թարսի պես, որ հենց վաղն առավոտ ես ժամանակ չունիմ: Ա՜խ, ինչ լավ կլիներ, որ հիմա գնայինք: Սպասիր, գիտե՞ս ինչպես կանենք: Պարոն Շահյան, դուք խո վաղը կտեսնե՞ք նրան:

— Չգիտեմ, ճշմարիտ...

— Չէ, անպատճառ տեսեք: Հատուկ խնդրում եմ, պարոն Շահյան: Եվ ասեք նրան, որ գնալուց առաջ անպատճառ հանդիպի մեզ: Խոստանո՞ւմ եք:

Թեև Շահյանը խոստացավ, որ այդպես կանի, բայց մտքումը վճռեց, որ այլևս երբեք չհանդիպի Բազենյանին: Ինչքան էլ որ նա հենց սկզբից համոզված էր, և շատ բնական էր համարում, որ Բազենյանի՝ իր խոստման հավատարիմ մնալը, այսինքն՝ Եվայից ընդմիշտ հեռանալը ոչ թե չի թուլացնիլ Եվայի մեջ դեպի նա ծագած սերը, այլ, ընդհակառակը, ավելի ուժ կտա այդ սիրույն, այնուամենայնիվ, այն ժամանակ նա գաղտնի, վախկոտ ուրախությամբ պարուրում էր իրեն այն հույսով, թե կարող է պատահել, որ Եվան, եթե ոչ շուտով, գոնե ժամանակի ընթացքում, բոլորովին մոռանա Բազենյանին, և այնուհետև ինքը, Շահյանը, եթե քաջություն ունենա խնդրելու նրա ձեռքը, գուցե նա չմերժի: Բայց այժմ, տեսնելով Եվայի տենդային դրությունը, միանգամից կորցրեց այդ հույսը: Նա զգաց առաջին անգամ, որ ինքը շատ կեղծ,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

նույնիսկ անպատվաբեր դրության մեջ է դրել իրեն Եվայի ու Բազենյանի միջև: Եվ մինչդեռ մի կես ժամ առաջ հավատացած էր, թե հազար ռուբլին Բազենյանին հանձնելով մաքուր սրտից բխած զոհաբերություն է անում մի շատ բարի գործի համար. այժմ իր սրտի խորքում զազրանքով զգաց, որ այդ զոհաբերությունն իսկապես վարձատրության պես մի բան է եղել այն բանի համար միայն, որ Բազենյանը Եվային զիջել է իրեն: Այդ միտքն այնքան ծանր եղավ նրան. որ նրան թվաց, թե ինքը վերին աստիճանի անբարոյական մի քայլ է արել, որի համար ամենքը, առավելապես Եվան, գարշանքով պետք է դեմքը շրջեն իրենից...

Շահյանն այլևս քաջություն չունեցավ մնալու Մարությանի և նրա աղջկա մոտ: Նա օգուտ քաղեց առաջին հարմար դեպքից և կանգ առավ, որ բաժանվի նրանցից:

— Ուրեմն դուք խոստանում եք, որ վաղն անպատճառ կտեսնեք նրան և կասեք, որ գնալուց առաջ անպատճառ հանդիպի մեզ: Հա՞, — հարցրեց Եվան, նայելով նրան այնպիսի հուսահատական-աղերսական հայացքով, որ Շահյանի բարի սիրտը ճմլվեց անհուն խղճահարությամբ:

Այս անգամ Շահյանը հաստատ խոսք տվեց, զգալով, որ անպատճառ պարտավոր է հոր ու աղջկա խնդիրը հայտնել Բազենյանին ոչ թե նրա համար, որ այդ կարևոր է նրանց, այլ նրա՛ համար, որ այդ անհրաժեշտ էր իրեն, որովհետև զգում էր, որ Եվայի ու Բազենյանի միջև նոր սկսված և իր պատճառով խզված սրտագին հարաբերությունները նորոգելով միայն կարելի է սրբել այն գարշելի կեղտը, որ սպառնում էր առ միշտ ծանրանալ իր խղճի վրա Բազենյանին տված հազար ռուբլու բուն շարժառիթի գիտակցությունից...

16

Հետևյալ օրը Շահյանը գնաց Բազենյանի մոտ: Այն միջոցին, երբ ուզում էր բանալ ընկերոջ սենյակի դուռը, ներսից ինչ-որ տաք խոսակցության ձայներ լսեց: Լսվում էր իրեն՝ Բազենյանի ձայնը և մի ինչ-որ կանացի ձայն. առաջինը խոսում էր բարկացած, երկրորդը՝ հանդիմանությամբ և լացագին: Շահյանն ականջ դրեց մի րոպե միայն և հեռացավ: Նա անցավ հյուրանոցի միջանցքի ծայրը և շուռ եկավ, որ ետ դառնա, երբ նույն րոպեին Բազենյանի սենյակից դուրս եկավ մի հաղթանդամ կին: Շահյանն իսկույն ճանաչեց նրան: Դա պանի Զդանևիչն էր: Շահյանը չկամեցավ, որ նա տեսնի իրեն, և ծռվեց անկյան միջանցքը: Պատի ետևից ծածուկ նայելով տեսավ, թե ինչպես պանի Զդանևիչը, գլուխը հպարտորեն բարձր բռնած, անցավ գլխավոր միջանցքով և իջավ սանդուղքներով դեպի դուրս: Շահյանը սպասում էր, որ Բազենյանն էլ դուրս կգա սենյակից, բայց Բազենյանը չերևաց:

Այդ դեպքը շատ տարօրինակ թվաց Շահյանին: Նա ամենևին չէր սպասում, թե Բազենյանի մոտ եղած կինը պանի Զդանևիչը կլինի և նա այդ կնոջ հետ կլինի այնպես բարկացած խոսելիս: Բայց ի՞նչ կապ կար նրանց միջև... Շահյանի մեջ նորից զարթնեց Բազենյանի և լեհացի կնոջ փոխադարձ հարաբերության վերաբերյալ այն կարծիքը, որ ծագել էր նրա մեջ դեռևս «Միխայլովո» կայարանում, ուր առաջին անգամ հանդիպել էր նրանց իրար հետ աշնան սկզբին, երբ ինքը Բաթումից վերադառնում էր Թիֆլիս:

Նա չէր իմանում, այդ դեպքից հետո հարմա՞ր էր արդյոք, որ մտնի Բազենյանի մոտ: Համենայն դեպս երկար ժամանակ սպասեց, հետո դուրս եկավ թաքստի տեղից և դիմեց դեպի ընկերոջ սենյակը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Երբ նա մտավ, Բազենյանը ջղային արագ քայլերով անցուդարձ էր անում սենյակում: Բարկությունից նրա դեմքը ձգձգվում էր. աչքերը չար արտահայտություն էին ստացել:

Շահյանը վճռել էր ցույց տալ, թե ոչինչ չգիտեր և ոչինչ չի տեսնում, բայց Բազենյանի դրությունն այն աստիճան արտասովոր երևաց նրան, որ չկարողացավ չհարցնել.

— Ի՞նչ է պատահել. դու բարկացած ես երևում:

— Դատարկ բան է: Անախորժ լուր ստացա դրանից է, -ասաց Բազենյանը, աշխատելով իրեն տիրապետել: — Նստիր, խնդրեմ: Լավ է, որ եկար: Այս րոպեիս ինքս էի ուզում գալ քեզ մոտ մի շատ կարևոր գործի համար:

— Ի՞նչ կա, — հարցրեց Շահյանը, զարմացած նայելով նրա արտասովոր դեմքին:

Բազենյանը պատասխանելու տեղ ծոցից մի նամակ հանեց և տվեց նրան, որ կարդա:

Շահյանը կարդաց լուռ: Նամակը Մարությանից էր, որը թախանձագին խնդրում էր Բազենյանին մեկնելուց առաջ հանդիպել իրենց և հիշեցնում էր իր խոստացած նվիրաբերությունը: Ներքևը Եվան ավելացնում էր՝ «Ես ևս աղաչում եմ: Չափազանց կպարտավորեցնեք»:

— Ես էլ հենց այս բանի համար եմ եկել, — ասաց Շահյանը, նամակը վերադարձնելով:

— Ինչպե՞ս թե այս բանի համար, — զարմացավ Բազենյանը:

— Երեկ գիշեր, որ քեզանից հեռացա, հայր ու աղջիկ հանդիպեցին ինձ փողոցում: Մարությանը խնդրեց քեզ ասելու, որ գնալուց առաջ անպատճառ հանդիպես իրենց, որովհետև ուզում են նամակ տալ քեզ, որ տանես իր որդուն: Եվան էլ շատ խնդրեց, — ավելացրեց Շահյանը միանգամայն անտարբեր եղանակով:

Բազենյանը ոչինչ չասաց: Նա հոնքերը կիտեց և սկսեց նորից անցուդարձ անել սենյակում մտախոհ և մռայլ: Հետո հանկարծ կանգ առավ Շահյանի առաջ և շատ լուրջ հայացքով նայեց ուղղակի նրա աչքերին:

— Լսիր, Լևոն: Ես, որ ուզում էի գալ քեզ մոտ, այդ բանի համար էի ուզում գալ, որ խոսեմ քեզ հետ: Լսիր, ինչ եմ ասում և պատասխանիր ինձ անկեղծ կերպով: Դու ինձ իրավունք տալի՞ս ես, որ գնամ Մարությանների մոտ:

Շահյանն ապշեց:

— Ինչպե՞ս թե՝ իրավունք...

— Ներողություն, այդ չէի ուզում ասել: Ուզում էի ասել, թե անախորժ չի՞ լինի քեզ համար, որ գնամ...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ի սեր աստծո, Սուրեն, այդ մասին ավելորդ է խոսելը, — ընդհատեց նրան Շահյանը փոքր-ինչ նեղացած: — Եթե Մարությանների մոտ գնալդ անախորժ լիներ ինձ համար, ես ինքս չէի գալ քեզ մոտ, որ նրանց խնդիրքը հայտնեմ քեզ: Դու ազատ ես. ինչ ուզում ես և ինչպես ուզում ես՝ արա: Ես ոչ իրավունք և ոչ ցանկություն ունիմ խառնվելու: Կարող եմ քեզ հավատացնել, որ ես վճռել եմ բոլորովին հեռու մնալ: Իմ մասին ամենևին մի մտածիր, խնդրեմ:

Բազենյանը մի րոպե տխուր նայեց Շահյանի աչքերին:

— Բայց և այնպես, դու նեղանում ես, Լևոն:

Շահյանն ուսերը վեր քաշեց և հանգիստ հեռացավ նրանից:

— Այսօր կամ վաղը ես գնում եմ, — կարճ լռությունից հետո ասաց Բազենյանը, — և գուցե այլևս երբեք չտեսնենք իրար: Ուզում եմ, որ ինչպես մտերմական անկեղծությամբ, եղբայրական սիրով մոտեցանք իրար, այնպես էլ բաժանվենք իրարից: Դրա՛ համար է, որ հարցնում եմ, թե անախորժ չի՞ լինիլ քեզ համար, որ գնամ Մարությանների մոտ: Եթե գիտենամ...

Շահյանն անհամբերությամբ մի խիստ շարժում գործեց: Այս անգամ ընկերոջ ամեն մի խոսքը կեղծավորություն և քսություն էր թվում նրան:

— Դու դարձյալ ստիպում ես ինձ կրկնելու, — ասաց նա հանգիստ ձայնով, բայց ամեն մի բառը շեշտելով, — որ՝ եթե Մարությանների մոտ գնալդ անախորժ լիներ ինձ համար, ես ինքս իմ ոտով չէի գալ քեզ մոտ, որ նրանց խնդիրը հայտնեմ քեզ... մանավանդ որ առանձնապես խնդրողը... Եվան էր:

— Ա՜խ, այդ բանն ես վերագրում եմ քո չափազանց ազնվությանը, և, — ներիր խնդրում եմ, — քո թույլ կամքին, Լևոն, — բացականչեց Բազենյանը: — Հայր ու աղջիկ քեզ մի հանձնարարություն են արել առանց հասկանալու, թե որքան ծանր պետք է լինի քեզ համար այդ հանձնարարության կատարումը, և դու քաջություն չես ունեցել մերժելու, և կատարել ես, բայց կատարել ես, — մի՞թե չեմ տեսնում, — սիրտդ սեղմելով... Լևո՛ն, ինձ գրած նամակիդ մեջ խնդրում էիր, որ անկեղծ լինեմ քեզ հետ: Այժմ ես նույնը պետք է խնդրեմ քեզ: Աղաչում եմ, ոչինչ մի ծածկիր ինձնից, ինչպես տեսնում ես, ինքս ոչինչ չեմ ծածկում քեզնից: Եթե առանց քաշվելու, անկեղծորեն ասես ինձ, որ Մարությանների մոտ գնալս սրտովդ չի լինի, հավատացնում եմ քեզ, մեր եղբայրությունը վկա, Լևոն, հենց այսօր, հենց այս րոպեիս ես կհեռանամ, կգնամ, ինչքան էլ որ ծանր լինի ինձ համար այն գիտակցությունը, թե Մարությանները շատ դժգոհ և զարմացած պիտի մնան իմ վարմունքից, որը, իհարկե, անհասկանալի կմնա նրանց համար: Տեսնում եմ, որ խոսքերս քեզ վրա բռնություն գործ դնելու տպավորություն են թողնում: Բայց այս էլ ի նկատի ունեցիր, Լևոն, որ այս գործն ինձ համար ավելի մեծ նշանակություն ունի, քան թե քեզ համար: Եթե ես այսպես, գրեթե բռնանալով, թախանձում եմ քեզ, որ անկեղծ լինես ինձ հետ, այդ անում եմ, — ինչո՞ւ ճիշտը չասեմ, — այդ անում եմ ոչ այնքան նրա համար, որ չեմ ուզում քեզ տհաճություն պատճառած լինել, որքան նրա՛ համար, որ... Լսիր, Լևոն, ինչ եմ ասում: Դու, անշուշտ, ուշադրության առար այն մի քանի խոսքը, որ ավելացրել է Եվան հոր նամակի տակ: Այդ մի քանի խոսքն ինձ համար մի ամբողջ պատմություն է, մի ամբողջ տրագեդիա: Նամակդ ստանալուց հետո, գրեթե մի ամիս, ես խուսափել եմ Մարությաններից, որպեսզի չտեսնեմ Եվային քեզ հայտնի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

պատճառով: Բայց այժմ նա ուղղակի ինքն է հրավիրում ինձ: Ի՞նչ անեմ: Գնա՞մ: Ուզում եմ գնալ, սիրտս ձգտում է գնալ, բայց չպետք է գնամ, որովհետև զգում եմ, որ այս այցը ճակատագրական նշանակություն պիտի ունենա ինձ համար. զգում եմ, որ եթե մի անգամ էլ տեսնեմ Եվային, կամքս սաստիկ պիտի թուլանա, և այն ժամանակ ես կորած եմ, կորած այն գործի համար, որին ուխտել եմ ծառայել անձնական ամեն երջանկություն մոռացած... Ահա սրա՛ համար եմ ուզում, որ գոնե դու պատրվակ դառնաս, որպեսզի չտեսնեմ Եվային և հեռանամ. գնամ այստեղից: Փրկիր ինձ այս գայթակղությունից, աղաչում եմ քեզ, Լևոն: Ուղղակի արգելիր ինձ Մարությանների մոտ գնալ: Արա այս բանը եթե ոչ նրա համար, որ դու ևս սիրում ես Եվային, գեթ ի սեր այն մեծ գործի, որին ես ծառայում եմ... Լսո՞ւմ ես, Լևոն, ի՛նչ եմ խնդրում քեզ:

Եվ Բազենյանը նայեց Շահյանին այնպիսի հուսահատական աղերսանքով, որ կարծես նրա պատասխանից էր կախված իր փրկությունը:

Սակայն Շահյանը կանգնած էր շատ սառն և անտարբեր և զարմանում էր, թե ինչպես նա չի նկատում, որ ինքը չի հավատում նրա խոսքերին և նրա վարմունքը համարում է պարզապես մի դերասանություն, որը ոչ մի նպատակ չունի, բացի միայն այն բանից, որ սիրաշահե իր սիրտն իրենից ստացած հազար ռուբլու փոխարեն: Շահյանն առանց այդ էլ գարշում էր, երբ մտածում էր, որ այդ գումարը տվել էր Բազենյանին այն բանի համար, որ նա Եվային զիջել էր իրեն. իսկ այժմ ավելի ևս գարշեց, տեսնելով, որ Բազենյանն էլ ուրիշ նպատակով չէր ընդունել այդ փողը և այժմ սոփեստություններով աշխատում էր ծածկել այդ նպատակը:

— Դու ինքդ էլ գիտես, որ... անմիտ բան ես խնդրում ինձնից, — ասաց նա, ուրիշ ավելի մեղմ բառ չգտնելով «անմիտ» բառի տեղ: — Ինչպե՞ս կարող եմ արգելել, որ Մարությանների տուն չգնաս: Ուզում ես՝ գնա, ուզում ես՝ չէ: Իսկ ինձ, խնդրում եմ, ազատ պահիր այս բանից:

Սառն եղանակով արտասանված այդ հատու խոսքերն, ըստ երևույթին, անսպասելի էին Բազենյանի համար, որովհետև նա շատ զարմացավ:

— Սպասիր, Լևոն: Այդ ինչպե՞ս ես խոսում: Չլինի՞ թե որևէ վիրավորական բան ասացի: Հա՞:

— Վիրավորական ոչինչ չես ասել ինձ, միայն թե... ես չեմ հասկանում քեզ, — ասաց Շահյանը, աշխատելով խուսափել Բազենյանի սրաթափանց հայացքից և զգալով, որ պատրաստ է ճշմարտությունը նետելու նրա երեսին:

— Այսինքն ի՞նչ չես հասկանում:

— Օրինակ... առաջ իրավունք էիր խնդրում ինձնից, որ գնաս Մարությանների մոտ, իսկ հիմա խնդրում ես, որ արգելեմ... Ես չեմ հասկանում, թե ո՞րտեղից հանկարծ այդպիսի մի իշխանություն ձեռք բերի քեզ համար...

— Ինչ ասացի՞ր... իշխանությո՞ւն, — արագորեն հարցրեց Բազենյանը, կարծես կայծակնահար եղած այն մտքից, որ հանկարծ ծագեց իր գլխում: — Ա՛, ուրեմն այն փողը, որ երեկ գիշեր...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Նա ձեռքը պինդ խփեց ճակատին, մատներով հուպ տվեց քունքերը և, կարծես ներքին մի սուր ցավի խայթոցից, աչքերը փակեց: Մի րոպե այդպես մնալուց հետո ձեռքը հանկարծ հեռացրեց ճակատից, շտապով ետ արեց սյուրտուկի կոճակները, ծոցի գրպանից հանեց նախորդ գիշերը Շահյանի տված ծրարը և հաստատուն ձեռքով դրեց նրա առաջ, սեղանի վրա:

— Որպեսզի չկարծես, թե այսպիսի մի իշխանություն տվել եմ քեզ այս հազար ռուբլու փոխարեն, խնդրեմ, ետ վերցրու, — ասաց նա Շահյանի համար սպանիչ հանգստությամբ:

Շահյանը տեղնուտեղը ցամաքեց:

— Սուրեն, — շշնջաց նա:

— Չէ՛, չէ՛, — խնդրում եմ, — եռանդով ընդհատեց նրան Բազենյանը և ծրարը քշեց նրա կողմը: — Ես կատակ անել չեմ սիրում:

— Ախր ես... այդպիսի բան չասացի...

— Ա՛խ, այդ միևնույն է: Ինձ համար մի բառն էլ, մի ամենաթեթև ակնարկն էլ բավական էր: Իմ մասին ամեն բան կարող ես կարծել. բայց, որ կարծել ես, թե հիմար եմ, սխալվել ես: Այս փողը, որ տվիր ինձ երեկ գիշեր, վերադարձնում եմ քեզ ամբողջությամբ: Ուրիշ հնար չկա, ուրիշ հնար չեմ տեսնում վարվելու քո կասկածը լսելուց հետո...

— Սուրեն, մի՞թե չես նկատում, որ մորթում ես ինձ քո խոսքերով, — հառաչեց Շահյանը:

— Բայց դու ավելի առաջ մորթեցիր ինձ, — նկատեց Բազենյանը անողոք խստությամբ: — Ինչպե՞ս, — սկսեց տաքանալ նա: — Ուրեմն ես օգուտ եմ քաղել այն բանից, որ դու անտարբեր չես դեպի Եվան, իսկ Եվան անտարբեր չէ դեպի ինձ: Ուրեմն ես կարողացել եմ շահագործել ձեր երկուսիդ զգացմունքներն էլ: Ուրեմն, ավելի պարզ ասած, Եվային ես կամեցել եմ ծախե՛լ քեզ փողով... Գեթ մի րոպե, մի վայրկյան մտածե՞լ ես, թե ի՞նչ հրեշավոր կասկած է այդ... Այս փողը պիտի ուղարկեի այսօր, և ի՞նչ լավ է, որ դեռ չեմ ուղարկեի թե չէ՝ խո կգժվեի... Եթե դու այդպիսի մի հրեշավոր կասկած տարել ես իմ մասին, ուրեմն ի՞նչ զարմանք, որ այն էլ կարծած լինիս, թե ես խաբել եմ, թե ընկերներիս սև մատնության զոհ գնալը հնարել եմ, թե այս փողը նրանց փրկության համար չէ, այլ շորթել եմ քեզնից իմ անձիս համար... Օ՛, ինչպես հոգիս չէր խաբում ինձ, ինչպե՛ս չէր խաբում...

Եվ Բազենյանը նստեց, ըստ երևույթին, զորեղապես հուզված և գլուխն առավ ձեռքերի մեջ:

Շահյանը կանգնած էր գունատ ու կարմրած և նայում էր Բազենյանին սարսափով:

— Սուրեն, — թոթովեց նա, — ինչո՞վ կարող եմ համոզել քեզ, որ սխալվում ես...

— Ո՛չ մի բանով, — աղաղակեց Բազենյանը և վեր թռավ տեղից, աչքերը փայլեցնելով: Նա վերցրեց սեղանի վրա դրված մի բաժակ, ուժգին թափով զարկեց հատակին և փշրեց: — Միացրու այս կտորտանքը, խնդրեմ, ամբողջացրու այս բաժակը, եթե կարող ես: Այսպես փշրեցիր դու իմ սիրտը: Ես քեզ այնքան սիրում, այնպիսի ջերմ փափագով ուզում էի վերադարձնել քեզ քո խնդրած հոգու անդորրությունը, որ պատրաստ էի զոհելու իմ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ամենալավ, իմ ամենաքնքուշ զգացումները. մինչդեռ ի՜նչ արիր դու ինձ, ի՜նչ բացատրություն կամեցար տալ իմ այդ անկաշառ ձգտումին... Եվ այդ բոլորն այս չարաբաստիկ, այս ատելի փողի պատճառով: Ե՛տ վերցրու, ե՛տ վերցրու, խնդրում եմ, այս փողը, և թող այլևս ո՛չ մի խոսք չլինի մեր միջև Եվայի մասին: Ես այժմ գիտեմ, թե ինչ կանեմ, և կապացուցեմ քեզ, որ ես, այնուամենայնիվ, գիտեմ կատարել իմ ընկերական պարտքը... Եվ, որովհետև Շահյանը մոտենալ անգամ չկամեցավ սեղանի վրա դրված փողի ծրարին, Բազենյանը վերցրեց այն և զոռով ուզեց դնել նրա ձեռքը: Շահյանը ձեռքերը ետևը տարավ և ետուետ քաշվեց: Ծրարն ընկավ հատակի վրա:

— Վերցրու, թե չէ՝ վառարանը կգցեմ, — սպառնաց Բազենյանը:

— Գցիր, բայց չեմ վերցնիլ:

— Որպեսզի ինձ միանգամա՞յն ստորացրած լինես, — հարցրեց Բազենյանը չարագուշակ հանգստությամբ, նայելով նրան հոնքերի տակից:

— Ո՛չ, որպեսզի ապացուցեմ, որ դու... անարդար ես, — եռանդով վրա բերեց Շահյանը:

Բազենյանն այլևս ոչինչ չասաց, նույն չարագուշակ հանգստությամբ կռացավ, վերցրեց փողի ծրարը և վճռական քայլերով դիմեց դեպի վառարանը, որի մեջ ճրթճրթում էր կրակը:

Նույն միջոցին Շահյանն առավ գլխարկը և դուրս փախավ սենյակից:

Երբ նա արդեն փողոցումն էր և քայլում էր սառած ձյունի վրա, նոր նկատեց, որ կրկնակոշիկները թողել է հյուրանոցում: Բայց ուշադրություն չդարձրեց այդ բանին և շշմած շարունակ կրկնում էր մեքենայաբար. Մի՞թե սխալվեցի, մի՞թե սխալվեցի... »: Այժմ չէր հիշում, թե ինչ ասաց իսկապես, որ Բազենյանն այնպիսի թափանցողությամբ հասկացավ իր ներքինը և ջախջախեց իրեն այնպիսի անողոք խստությամբ: «Անկարելի է, որ այդ էլ դերասանություն լիներ», — մտածում էր նա, մտապատկերելով փողի ծրարն այնպիսի համառությամբ վերադարձնելու տեսարանը:

17

Վերջին օրերը Եվան շատ անսիրտ և անկանոն կերպով էր պարապում ընկերուհիների հետ: Մի-երկու անգամ նույնիսկ հիվանդ ձևացավ և չընդունեց նրանց: Մինչդեռ գործին սկզբում կպել էր իր առաքինությանը հավատացող մոլեռանդ միսիոների եռանդով: Անընդհատ զրույց ու ծիծաղ սիրող, մշտատև շարժունության ու աղմուկի պետք զգացող այդ աշխույժ, այդ անհանգիստ աղջիկն այժմ դարձել էր լռակյաց, մենակյաց, անհամբեր և ջղային: Հոր սովորական կատակները նրան անտանելի էին թվում, իսկ երբ մայրը հոգացողությամբ հարցնում էր նրան, թե ինչ է պատահել, քիչ էր մնում լաց լիներ բարկությունից: Ինչ-որ տենդային անհանգստություն էր տիրել նրան: Տանը ոչ մի բանի վրա սիրտ չուներ. որևէ գործ կատարելիս ձգում էր կիսատ: Աշխենին գրելիք մի նամակ մի երես չգրած՝ պատռեց դեն ձգեց: Երեկոները նրա ականջը շարունակ դռան կողմն էր, և ամեն անգամ, երբ լսում էր դռան զանգի ձայնը, նրա սիրտը թրթռում էր ցնցողաբար: Նրա մտքերը, հակալ-հակալ ընկած հավերի նման, թռչում էին առարկայից առարկա և ոչ մի բանի վրա չէին կարողանում կանգ առնել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Չափից դուրս տպավորվող բնավորություն ունենալով, Եվայի վրա միշտ խոր ազդեցություն էր ունենում առհասարակ այն ամենը, ինչ որ այսպես թե այնպես, ավելի կամ պակաս հերոսության կնիք էր կրում: Իր հեռացած եղբորը պաշտում էր ոչ այնքան նրա համար, որ նրա քույրն էր, որքան նրա համար, որ Արմենակի մեջ հերոս էր տեսնում: Եթե այնքան սիրում էր հորեղբոր աղջկան, պատկառում էր նրանից, այդ միայն նրա՛ համար, որ Աշխենը կամքի այնպիսի ուժ, հոգու ամրություն և կատարյալ անձնուրացություն էր ցույց տալիս: Իր չափազանց վառ երևակայությամբ Եվան արտասովոր իրականին միշտ իդեալական գույն էր տալիս: Ամեն ինչ, որ վեհ էր, կրկնակի մեծություն էր ստանում նրա աչքում: Բավական էր մի չնչին տպավորություն, այնուհետև երևակայությունն իր գործն էր տեսնում. ինչպես սերմը պարարտ հողի մեջ, այդ տպավորությունն աճում, զարգանում էր նրա հոգու մեջ արագորեն և կլանում նրա ամբողջ էությունը:

Այդ պատճառով, ահա, նա զերծ չէր մնացել Բազենյանի զորեղ ազդեցությունից: Այդ ազդեցության սաղմն ընկել էր նրա հոգու մեջ, անշուշտ, այն օրից, երբ Բազենյանն ազատեց նրա փոքրիկ եղբորը կառքի կատաղած ձիերի ոտների տակ ջարդվելուց, և այնուհետև աճել, զարգացել էր այն օրից, երբ ծանոթացավ այդ անվեհեր երիտասարդի հետ: Առաջին անգամն էր, որ նրա կուսական սիրտն սկսել էր բաբախել սիրո քաղցրատենչ զգացումով: Եվ թեպետ, ինչպես առհասարակ լինում է անդրանիկ սիրո գիտակցության առաջին օրերին, նա մի կողմից բնազդական անհասկանալի վախկոտությամբ ուզում էր չճանաչել այդ նոր զգացումը, կարծես այդ մի հանցանք լիներ, — այնուամենայնիվ, մյուս կողմից, երջանիկ ինքնամոռացությամբ, գողունի քաղցրությամբ, շոյում, փայփայում էր իր հոգու խորքում այդ նոր զգացումը, կարծես անգին մի գյուտ լիներ այդ, որի կորուստն անտանելի վիշտ պիտի պատճառեր իրեն:

Եվ այդ վիշտը, ավելի՝ քան կարծում էր, զգաց նա, երբ Շահյանից անսպասելի կերպով տեղեկացավ, որ Բազենյանը շուտով մեկնելու է: Գրեթե մի ամիս էր, որ չէր տեսել Բազենյանին, և այդ բանը առանց այն էլ մեծ կարոտ էր հարուցել նրա մեջ. իսկ այժմ նրան թվաց, թե այլևս երբե՛ք տեսնելու չէ իր սիրած երիտասարդին:

Այդ գիշեր քնել չկարողացավ և իսկապես այդ օրվանից զգաց, թե ո՛ր աստիճան գերել է Բազենյանն իր սիրտը: Հետևյալ առավոտյան չկարողացավ զսպել իրեն և հոր կողմից Բազենյանին գրած հրավիրատոմսի տակ ավելացրեց այն մի քանի խոսքը, որ կարդաց Շահյանը Բազենյանի մոտ գնացած ժամանակ: Բայց որքան մեծ եղավ նրա հուսահատությունը, երբ այդ օրը ոչ Բազենյանն եկավ և ոչ որևէ պատասխան ստացվեց նրանից: Սակայն ճաշին տուն եկած ժամանակ հայրը լուր բերեց, թե փողոցում հանդիպել է Բազենյանին: Բազենյանը շատ ներողություն է խնդրել, ասել է, որ մի շաբաթ դարձյալ Թիֆլիսումն է, որ չափազանց զբաղված է և անպատճառ կայցելի, հենց որ ազատ ժամանակ գտնի:

Այնուհետև անցավ դարձյալ մի երկու օր Եվայի համար անտանելի սպասողական դրության մեջ:

Բազենյանն այցելեց չորրորդ օրը, կեսօրից առաջ: Մարության ամուսինները տանը չէին: Փոքրիկ Սուրենը մանկապարտեզումն էր: Եվան մնացել էր մենակ և փակված էր իր սենյակում: Այդ ժամին նա ամենևին չէր սպասում Բազենյանին, այնպես որ, երբ աղախինը

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

մտավ և հայտնեց հյուրի գալուստը, նա գունատվեց և սրտի հանկարծական ուժգին բաբախումից քիչ մնաց ուշագնաց լիներ:

Անցավ բավական երկար ժամանակ, մինչև որ կարողացավ տիրապետել իրեն: Նա վճռեց բոլորովին հանգիստ պահել իրեն և նախապես զգաց, որ անկարող է: Մինչև այժմ նրա բոլոր ցանկությունն այն էր, որ գեթ մի անգամ էլ տեսնի Բազենյանին, խոսի նրա հետ, այժմ գիտեր, որ այնտեղ, հյուրասենյակում, սպասում է իրեն իր ցանկալի երիտասարդը. սակայն ոչ մի ժամանակ այնպիսի անվստահություն, այնպիսի վախկոտություն չէր զգացել, ինչպես այժմ, երբ արդեն իր ցանկությունը կատարված տեսնելու համար մնում էր, որ մտնի հյուրասենյակ: Համ ուզում էր մտնել, համ չէ: Զգում էր, որ թե վախենում և թե ամաչում է Բազենյանից: Թվում էր նրան, թե Բազենյանն արդեն ամեն բան գիտե կամ իրեն տեսնելուն պես ամեն բան պիտի հասկանա, և այդ կասկածը կաշկանդում էր նրան: Նա փափագեց, որ հայրը կամ մայրը լինեին, որ ինքը մենակ չմնար Բազենյանի հետ: Նրան թվում էր, թե այնտեղ, հյուրասենյակում, սպասողն իր ծանոթ Բազենյանը չէ, այն Բազենյանը, որի հետ խոսել, վիճաբանել, նույնիսկ կատակներ է արել, այլ — միանգամայն անծանոթ մի մարդ, ահարկու մի իշխանավոր, որի մի հատիկ խոսքից է կախված իր բախտը, իր ապագան, իր ամբողջ կյանքը:

Նա ձեռքերով կամաց շփեց դեմքը, մազերը շտկեց, կամաց, կարծես չկամենալով, վեր կացավ և դուրս գնաց, զգալով, որ սիրտը նորից սկսել է բաբախել արագորեն:

18

Հյուրասենյակում Բազենյանը կանգնած էր լուսամուտի առաջ և մտազբաղ հայացքով նայում էր դեպի դուրս: Վնասված ձեռքը տրագիկական հանգստությամբ հանգչում էր վզովը կախ արած սև շորի մեջ: Դռան բացվելու վրա, կարծես, հանկարծ սթափվեց իր մտահոգությունից և, արագ շուռ գալով, առաջ շտապեց դեպի Եվան:

Եվան կանգ առավ և ձեռքը լուռ մեկնեց նրան: Բազենյանը սեղմեց ձախ ձեռքով:

— Ա՜խ, ինչ անհարմար է այսպես, — կամաց արտասանեց Եվան և թույլ կերպով ժպտաց. — ես աջ, դուք ձախ... Բազենյանը ոչինչ չասաց և գլուխը, հայտնի չէ ինչու, թեթև խոնարհեց: Լրջությունը չէր հեռանում նրա դեմքից:

Եվայի անձկալի հայացքն անվստահորեն թռավ նրա կարճ խուզած սևաթույր մազերի վրայով:

— Ներեցեք, գուցե ձեզ սպասեցնել տվի, — ասաց նա: — Բայց ես փոքր-ինչ տկար եմ...

— Այդ ես տեսնում եմ, — կամաց արտասանեց Բազենյանը, տխուր-մտախոհ հայացքով նայելով նրա դժգույն և բավական նիհարած դեմքին: — Եվ, ներեցեք, գուցե ես անհարմար ժամանակ եմ եկել, — ավելացրեց նա:

— Ո՜չ, ո՜չ: Ընդհակառակը: Խնդրեմ նստեցեք: Այսօր բոլորովին մենակ եմ մնացել տանը: Լավ է, որ եկել եք: Փոքր-ինչ կխոսենք, — իր համար անսպասելի ազատությամբ շարեց իրար ետևից Եվան և նստեց բազկաթոռի վրա:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Բազենյանը նույնպես նստեց, բայց նրանից բավական հեռու: Նրա բոլոր շարժումների մեջ տարօրինակ զգաստություն և լրջություն էր նկատվում:

— Քանի օր է, մենք ձեզ սպասում էինք. Ինչո՞ւ չէիք գալիս, — հարցրեց Եվան:

— Անցյալ օր պատճառը հայտնեցի ձեր հորը: Երկու ընկերներիս պատահած դժբախտությունն ինձ միանգամայն խառնել էր: Բանն այն է, որ ես էլ վտանգից ազատ չէի... Բայց այժմ, փառք աստծո, վտանգն անցած կարելի է համարել:

Եվան ուզում էր հարցնել, թե այդ ինչ վտանգ էր, բայց զարմանքով տեսնում էր, որ այլևս չի տիրապետում իրեն այնպես ազատ, ինչպես պարահանդեսի գիշերը ժողովարանի սրահում Բազենյանի հետ խոսելիս: Նրան շփոթում էր Բազենյանի աչքերի մեջ նկատվող տխուր մտահոգությունը և այն զգաստ-հանդարտ եղանակը, որով խոսում էր նա: Եվայի ուշադրությունից չէր վրիպել և այն հանգամանքը,, որ Բազենյանը նստել էր բավական հեռու:

— Դուք ուզում էիք նամակ տալ ինձ ձեր եղբորը տանելու, — ասաց Բազենյանը: — Այժմ եկել եմ դրա համար, որովհետև այս օրերս գնալու եմ:

— Գնալո՞ւ եք, — մեքենայաբար հարցրեց Եվան:

— Ինձ հրամայված է ճանապարհվել վաղը: Բայց եթե վաղը չկարողացա, — մի գործ կա, որ դեռ չեմ վերջացրել, — մյուս օրն անպատճառ կճանապարհվեմ: Նամակը պատրա՞ստ է:

— Նամա՞կ... Նամակը... — արտասանեց Եվան, զգալով, որ մտքերը խառնվում են գլխում, որ ինքն այդ միջոցին ամենևին չի հետաքրքրվում նամակով, որ ինքն ուրիշ բան ունի ասելու, որ այդ բանն ահագին կարևորություն ունի իր համար: Նա գիտեր, թե ինչ բան էր այդ, բայց չգիտեր, թե ինչպես պիտի արտահայտեր: Բազենյանի տարօրինակ լրջությունն ու վճռականությունը պարզապես շփոթել էին նրան: Նրա սիրտը պատռվում էր, որ Բազենյանն իր հեռանալու մասին խոսում էր այնքան անփույթ կերպով: Նրան թվում էր, թե Բազենյանը, իր առաջ նստած, հետզհետե հեռանում, անմատչելի է դառնում իրեն և շրջապատվում է ինչ-որ վեհ, ինչ-որ խորհրդավոր մշուշով, որի մեջ հանկարծ պիտի չքանա անհետ, իր տեղ թողնելով իր սիրելի, իր անձկալի և անշոշափելի ուրվականը միայն...

Եվան հուսահատական մի շարժում գործեց և ձեռքով սկսեց շփել ծնկները ջղաձգաբար: — Սպասեցեք, — ասաց նա, աշխատելով բռնի տիրապետել իրեն: — Մի՞թե դուք այլևս չեք հանդիպելու մեզ:

— Հազիվ թե կարողանամ, օրիորդ:

— Ուրեմն... Ուրեմն այս մեր վերջի՞ն տեսակցությունն է:

— Ես կարծում եմ: Եվան այլևս չհասկացավ, թե ինչ է պատահում իրեն: Նրա գլուխը կարծես պտտվում էր տենդով բռնվածի պես: Մի բան ալեկոծում էր նրա ներսն ուժգնորեն և, կարծես, ուզում էր հանկարծ դուրս ժայթքել: Սաստիկ անհանգիստ, վեր կացավ, նստեց մի ուրիշ աթոռի վրա, մեջքը լուսամուտի կողմն անելով, և սկսեց աջ ձեռքով պինդ շփել ծնկան վրա դրած ձախ ձեռքի երեսը: Նրա դեմքն այժմ գտնվում էր ետևից ներս թափանցող լույսի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

հակառակ կողմը, կիսախավարի մեջ: Մազերը սանրած էր դեպի վերև և հավաքած գագաթի վրա, որից արտաքուստ ավելի հասակավոր կնոջ էր նմանում, քան նորատի մի աղջկա: Հրաշալի անբիծ սպիտակությամբ փայլում էր նրա երկայն վիզը, որ լիքը նստվածքով բարձրանում էր մոխրագույն հագուստի օձիքի միջից և այնտեղ, ուր մտնում էր մազերի մեջ, թուխ թավշի գույն ուներ:

— Իսկ այնտեղից... Ե՞րբ եք վերադառնալու, — հարցրեց նա, ահագին ջանք գործ դնելով, որ խոսքի թելը չկորցնի:

Բազենյանը ժպտաց:

— Դեռևս հարց է, օրիորդ, թե այլևս կվերադառնա՞մ արդյոք, — ասաց նա մելամաղձորեն:

— Ինչպե՞ս...

— Կրակի մեջ նետվողը կարո՞ղ է ասել, թե դուրս կգա այնտեղից ողջ և անվնաս... Եվան ցնցվեց, և նրա հայացքը քարացավ Բազենյանի տխրորեն ժպտող աչքերի մեջ:

— Սպասեցեք... Ես ձեզ հասկանում եմ... Ուրեմն...

— Ուրեմն էլ ի՞նչ: Նա, ով իր անձը նվիրում է այսպիսի մի գործի, չի կարող երաշխավորել իր վաղվա կյանքի համար, — վրա բերեց Բազենյանը շատ անփույթ կերպով, հետո հանկարծ վեր կացավ և ջղուտ քայլերով սկսեց անցուդարձ անել փափուկ գորգերի վրա: — Բայց մի բան ինձ սաստիկ զարմացնում է, — ասաց նա իրենից դժգոհ մարդու եղանակով: — Վերջին օրերս զարմանալի մելամաղձություն է տիրել ինձ, հակառակ կամքիս: Ես նախապաշարումներ չեմ ճանաչում և առավել ևս հեռու եմ միստիկականությունից: Բայց, չգիտեմ ինչու, վերջին օրերս, կարծեմ, համ նախապաշարված եմ դարձել, համ միստիկ: Աջ աչքս շարունակ խաղում է. ասում են՝ դա մահվան նշան է... Երեկ էլ մի երազ տեսա. ինչ-որ սև ու տձև ոգիներ, ագռավների նման, իջել էին մի մարդու դիակի վրա և չգիտես՝ հոշոտո՞ւմ էին, թե զմռսում... Իսկ նրանց գլխին, վերևում, օդի մեջ սավառնում էին, միշտ միևնույն շրջանակի մեջ պտտվելով, ուրիշ ոգիներ փոքրիկ ձյունափայլ թևերով և երգում էին զարմանալի ներդաշնակ մի երգ, որից ես հիշում եմ այս խոսքերը միայն. «Արյունը կարմիր, արյունը կարմիր միշտ սրբանում է, երբ թափվում է»:

Բազենյանը նայեց Եվային և կամաց ծիծաղեց:

Եվան նայում էր Բազենյանին, և նրա հայացքը անմիտ սարսափ էր արտահայտում:

— Սրանք, իհարկե, գրգռված երևակայության արդյունք են, — շարունակեց Բազենյանը, — բայց զարմանալն այս է, որ մարդ որքան աշխատում է չհավատալ այդպիսի հիմար բաների, այնքան ավելի կաշկանդվում է դրանց ազդեցության տակ: Առաջ ես ամենևին չէի մտածում, թե պիտի մեռնեմ. բայց այժմ ինչ-որ նախազգացում, կարծես, շարունակ փսփսում է ականջիս, որ իմ մահը շատ շուտ պիտի լինի... Է՛հ, ի՞նչ անենք, — կարճ մտախոհ լռությունից հետո ավելացրեց նա անփութորեն և տխուր ժպիտով նայեց Եվային: — Ոչ հայր ունիմ, ոչ մայր, ոչ եղբայր, ոչ քույր, — ոչ ոք չունիմ, որ դարդ անի ինձ համար...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվան զգաց, որ մի բան հանկարծ վեր նետվեց սրտից դեպի կոկորդը և սկսեց խեղդել: Անհուն ցանկություն զգաց վեր թռչելու տեղից, ուղղակի փարվելու Բազենյանի վզին և աղաղակելու. «Անաստված, մի՞թե չես զգում, որ ես քո քույրն եմ. ավելի՝ քան քույրը... և չեմ թողնիլ, որ մեռնես...»: Բայց նա միայն մատներով ցնցողաբար սեղմեց աթոռի ծայրերը, կարծես աշխատելով պահել իրեն, որ այդպիսի խելացնոր բան չանի:

— Վերջին ժամանակս հանկարծ ինձ շրջապատված եմ տեսնում այնպիսի անակնկալ և ծանր հանգամանքներով, որ մահը պարզապես ցանկալի է դարձել ինձ համար, — նորից խոսեց Բազենյանը մելամաղձորեն, շարունակելով անցուդարձ սենյակում, Եվայի առաջ, — Բայց մարդը, զարմանալի եսասիրական մի զգացում ունի, ուզում է իր ետևից թողնել գեթ մեկը, գեթ մի մերձավոր, մի սրտակից, որին իր մահով վիշտ լինի պատճառած: Եթե ես ունենայի այդպիսի մեկը, որ արտասուքի գեթ մի քանի կաթիլ թափեր գերեզմանիս վրա...

Բազենյանը լռեց, անցավ դեպի լուսամուտներից մեկը և ճակատը սեղմեց ապակուն:

Եվան զգում էր, որ եթե նա դարձյալ այդպիսի մի քանի խոսք արտասանի, այլևս չի կարող զսպել իրեն և անպատճառ կանի այն խելացնոր բանը, որը չանելու համար այնպես պինդ պահում էր իրեն աթոռի վրա, մատների մեջ ցնցողաբար սեղմելով աթոռի ծայրերը: Նա վախենում էր շարժվել տեղից և նայել ետևը, ուր կանգնած էր Բազենյանը: Նրան թվում էր, թե այնտեղից դարան մտած, կամաց-կամաց մոտենում է իրեն ահարկու, մի բան, որ հանկարծ վրա պիտի ընկնի և պիտի խլի, փախցնի իրեն փոթորկի պես ուժգնորեն... — Աշխարհիս երեսին երկու բան կա հզոր և ամենակարող՝ սերը և մահը, -հնչեց Եվայի ականջին Բազենյանի ձայնը ետևից այնքան հանգիստ և տխրագին, որ կարծես գերեզմանից էր հնչում: — Մի ամբողջ ամիս չէի գալիս ձեր տուն... և այսօր էլ չէի գալ, եթե... դուք չստիպեիք... և եթե չհամոզվեի վերջ ի վերջո, որ սիրո դեմ մաքառելը նույնքան անկարելի է, որքան և մահի դեմ: Այժմ որ եկել եմ, այլևս չեմ կարող զսպել ինձ և պիտի ասեմ, որ... սիրում եմ ձեզ...

Եվան մեկ վեր կացավ, բայց նորից նստեց, կարծես ուժ չունենալով ոտքի վրա կանգնած մնալու: Նրա ամբողջ մարմինը թրթռաց հրաշալի, խելագարեցնելու չափ հրաշալի մի ցնցումով: Շունչն իրեն քաշելով, նա տեղն ու տեղը մարեց, կարծես, մի հրաշալի երազ էր այն, որ իր ամենափոքր շարժումից անգամ կարող էր չքանալ:

Բազենյանը կամաց դարձավ Եվայի կողմը, մի բոպե ինչ-որ օտարոտի հայացքով նայեց պերճ վզին, հետո մի քանի քայլ արավ դեպի նա, բայց հանկարծ ճանապարհը ծռեց և անցավ դռան կողմը:

— Ներեցեք, ես... ես գնում եմ, — ասաց նա:

Եվան վեր թռավ տեղից և ձեռքերը տարածեց դեպի նա:

— Կացե՛ք...

Բազենյանն արագ ետ դարձավ:

Եվայի ձեռքերն ու գլուխն ընկան նրա ուսերի վրա: Ահա՛, վերջապես, այն ահարկու բանը, որ եկավ և հափշտակեց նրան փոթորկի ուժգնությամբ... Հանկարծ նա ցնցվեց և դուրս խլվեց

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Բազենյանի գրկից: Կարծես տենդի մեջ առավ Բազենյանի ձեռքը և դեմքն այնքան մոտեցրեց նրա դեմքին, որ նա զգում էր Եվայի տաք շնչառությունը:

— Դու չես մեռնիլ, — շշնջաց Եվան, խիստ արագ շնչելով: Բազենյանը փորձեց նորից գրկել նրան, բայց նա թույլ չտվեց:

— Դու չես մեռնիլ... Ասա՝ չէ:

— Կմեռնեմ երջանկությունից...

— Չե՛մ ուզում... Ասա՝ չէ՛:

— Չէ:

— Ինձ էլ կտանես հետդ... — Եվա:

— Ասա՝ այո՛:

— Այո:

Եվան շուռ եկավ, մեջքով կպավ Բազենյանի կրծքին և վիզը ձգեց նրա ուսի վրա: Անհուն երջանկության հրաշալի մի ժպիտ հանվում էր նրա կիսաբաց շրթունքների վրա և կիսախուփ աչքերի մեջ, որոնք նայում էին Բազենյանի աչքերին:

Բազենյանը էլեկտրականացել էր: Նա ինքն էլ չիմացավ, թե ինչպես ետևից գրկեց Եվայի իրանն և, գլուխը կամաց-կամաց առաջ տանելով, շրթունքները պինդ սեղմեց նրա ծնոտի տակ...

... Հանկարծ Եվան ճչաց և դուրս պրծավ նրա գրկից այնպիսի սաստկությամբ, որ Բազենյանը մի երկու քայլ ետ մղվեց: Նա կանգ առավ դողալով և նայեց Բազենյանի աչքերին չռած աչքերով: Եվ նկատեց այնտեղ ինչ-որ անծանոթ, ինչ-որ սարսափելի մի բան, որ կարծես խլել էր նրանից այն ամենը, ինչ որ մարդկային է... Եվային թվաց, թե իր աչքերի առաջ մի բոպեի մեջ հրաշք կատարվեց, ահավոր մի հրաշք, որով կրթված մարդը հանկարծ իջել էր մինչև վայրենու աստիճանը, որով բնական արարածը գազան էր դարձել... Բնազդական սոսկումով նա ետուետ գնաց անգիտակցաբար և քիչ մնաց, որ նորից ճչա, որովհետև նրան թվաց, թե այդ գազանն ուզում է հարձակվել իր վրա և, եթե հարձակվի, այլևս փրկություն չկա...

Նա շուռ եկավ և խելագարի պես դուրս վազեց սենյակից:

Բազենյանն ուշքի եկավ և վախեցած նայեց չորս կողմը. կարծես մեկը դարան լիներ մտած սենյակում և, հանկարծ դուրս պրծնելով պիտի հարձակվեր իր վրա: Հետո հանգստությամբ ուղղեց փողկապը և դիմեց դեպի դուրս: «Շտապեցի... շատ շտապեցի...», — մտածում էր նա մեքենայաբար, նախասենյակում վերարկուն և կրկնակոշիկները հագնելիս:

Դուրսը, փողոցում, հենց դռան մոտ հանդիպեց Թեկլեն, որը տուն էր գալիս:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ա՛խ, դուք եկել եք, վերջապես, — բացականչեց նա ուրախացած:

— Ես գնում եմ, տիկին, — վրա բերեց Բազենյանը ժպտալով:

— Գնում ե՞ք... ի՞նչ եք ասում:

— Օրիորդը տկար է, չուզեցի անհանգստացնել և բացի դրանից, ժամը երկուսին անպատճառ պետք է լինիմ մի տեղ, իսկ այժմ (Բազենյանը նայեց ժամացույցին) երկուսից քառորդ պակաս է:

— Դե, ներս եկեք, լավ: Ամուսինս էլ շուտով կգա: Ճաշին կմնաք մեզ մոտ:

— Հավատացնում եմ, տիկին, չեմ կարող: Այժմ չեմ կարող, ոչ մի պայմանով: Կաշխատեմ գալ երեկոյան. իսկ եթե երեկոյան չկարողացա գալ, կգամ վաղն անպատճառ: Մի քանի օր դարձյալ այստեղ եմ:

Թեկլեն թախանձեց, որ անպատճառ գա, ասաց, որ իրենց որդուն տանելիք նամակն ահագին կարևորություն ունի իրենց համար, և մեծ անհանգստությամբ սկսեց գանգատվել, որ երկար ժամանակ է նրանից ոչ մի տեղեկություն չունին:

Բազենյանը նորից խոստացավ, որ անպատճառ կգա և, բաժանվելով տիկին Մարությանից, շտապով հեռացավ:

«Շտապեցի... շատ շտապեցի», — շարունակ կրկնում էր նա մտքումը Եվայի հետ ունեցած իր վարմունքի մասին:

19

Թեկլեն աղջկան գտավ իր սենյակում չափազանց տարօրինակ դրության մեջ: Եվան նստած էր աթոռի վրա և, կարծես, սառել էր նստած տեղը: Դեմքը սպիտակել էր քաթանի պես: Չռած աչքերի մեջ դեռևս նկատելի էին սարսափի հետքերը: Կուրծքը նկատելի կերպով բարձրանում ու ցածրանում էր, կարծես վազել էր երկար տեղ ու այժմ հազիվ էր շունչը ետ բերում: Դռան բացումը երկյուղի զորեղ ցնցում պատճառեց նրան:

— Ե՛վա, ի՞նչ է պատահել քեզ, — կանչեց մայրը վախեցած:

Եվան իր չռած աչքերով նայեց մորը, մի րոպե ոչինչ չկարողացավ արտասանել, հետո շատ հանգիստ ձայնով պատասխանեց.

— Մի վախենար, մայրիկ, ոչինչ չկա. հանկարծ վատ դառա:

Նրա խաղաղ ձայնը բավական հանգստացրեց մորը: Մայրը նկատեց սակայն, որ նրան առանց լուրջ բժշկության թողնել անկարելի է, որ այդ բոլորը կառքի կատաղած ձիերից վախեցած լինելու հետևանքն է և, վերջ ի վերջո, ստիպեց աղջկան, որ պառկի: Եվան անխոս հնազանդվեց մորը և պառկեց: Նա ուզում էր, որ մայրը շուտով հանգիստ թողնի իրեն,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

որպեսզի կարողանա կարգի դնել իր մտքերն ու զգացումները, որոնք մի կատարյալ քաոս էին կազմում նրա մեջ:

Բայց և այնպես, մոր դուրս գնալուց հետո էլ Եվան երկար, շատ երկար ժամանակ չէր կարողանում կատարելապես ուշքը գլուխը ժողովել: Այնտեղ՝ հյուրասենյակում կատարված իրողությունն իր վերջաբանով հիմն ի վեր ցնցել էր նրա հոգեկան աշխարհը: Այդ բոլորն այնքա՛ն անսպասելի էր նրա համար, նրա մտքից այնքա՛ն հեռու էր Բազենյանի հետ ունեցած խոսակցության վերջաբանը, որ նա կասկածում էր, թե չլինի՞ այդ բոլորը երազի պես մի բան էր միայն, այլ ոչ կատարված իրողություն: Այդ կասկածն այնքան ավելի բնական էր թվում նրան, որքան երազ համարած իրողությունը, անսպասելի լինելով հանդերձ, կատարվել էր արագ, գրեթե վայրենաբար: Մինչև այժմ էլ նա, կարծես, զգում էր Բազենյանի ծանր, սարսափ ազդող տաք շնչառությունն իր ծնոտի տակ... Նա ձեռքը քսեց ծնոտի տակ և նոր զգաց, որ ցավում է այդտեղ: Վեր կացավ, նայեց հայելու մեջ և տեսավ, որ ծնոտի տակ, Բազենյանի շրթունքների կպած տեղը կարմրել էր և նույնիսկ ատամների հետքեր է կրում: Սակայն Եվայի վրա ամենից ավելի սարսափ էին բերել Բազենյանի աչքերը, առաջվա այն գեղեցիկ, մտախոհ, թախծալի աչքերը... Եվային թվաց, որ երբ շները կատաղում են, նրանց աչքերն էլ այդպես են փոխվում ...

Սիրո, մանավանդ իր սիրո մասին Եվան չափից դուրս վեհ և անպայման մաքուր գաղափար ուներ, որպեսզի կարողանար հաշտվել Բազենյանի աչքերի մեջ նկատված փոփոխության հետ, — մի փոփոխություն, որ ամեն անգամ մտապատկերելիս բնազդական դող էր զգում մարմնի մեջ... Եթե նա սիրել էր Բազենյանին, եթե իր անարատ սիրտը նվիրել էր նրան, դրա պատճառն ա՛յն էր միայն, որ Բազենյանի մեջ մսից և արյունից կազմված մարդ չէր տեսել, այլ գերբնական մի արարած, մի իդեալ, որի մեջ տեղ չպիտի ունենար ախտաբանական մարդը... Եվան նոր էր մտածում, որ այդ թերևս շատ անհեթեթ մի պահանջ էր իր կողմից, թերևս այդպիսի մարդ չկա աշխարհիս երեսին, որովհետև չի կարող լինել, որովհետև մարդը, ինչքան էլ որ այս կամ այն կերպ իդեալ ներկայանա, էլի նույն մսից ու արյունից կազմված մարդն է, բայց սիրո սրբագործող աշխարհում, որ նույնքան անիմանալի է, որքան և աստվածային էությունը, մարդու մեջ, Եվայի կարծիքով, իսպառ պիտի ոչնչանար անասնականը և շնայինը, կամ գոնե այդ անասնականն ու շնայինը պիտի ստանար աստվածային պատկերը կրող արարածին վայել ամենաբարձր, խելացի արտահայտումն: Իր միամիտ անմեղությամբ Եվան հավատում էր սիրո սրբագործող այդ զորությանը, և որքան մեծ էր այդ հավատը, այնքան սարսափելի — հիասթափությունը: Նա տեսավ, որ ժամանակակից քաղաքակիրթ մարդը սիրո, թերևս ավելի՝ քան ուրիշ բանի մեջ նույնն է, ինչ որ նախատիպ մարդն իր ամենակոպիտ բնազդով... Եվան փշաքաղվում էր, արյունը սառում էր նրա երակների մեջ, երբ մտածում էր, թե որքան զզվելիև սոսկալի էր այդ նախատիպ մարդը: Նա ավելի շատ կհամաձայներ մեռնել, քան թույլ տալ, որ այդ գազանացած մարդը վիրավորեր ու անարգեր այն սրբությունը, որ կրում ու փայփայում էր իր սրտի մեջ սիրո անունով...

Սակայն դրանք ծանր տպավորության առաջին ծանր րոպեներն էին, — րոպեներ, երբ նրա ուղեղը գործում էր գրգռված ջղերի ազդեցության տակ, գործում էր ուժգնապես լարված մեքենայի նման և միշտ միևնույն ուղղությամբ: Այնուհետև, երբ նա կամաց-կամաց հանգստացավ և սկսեց մտածել սառն ուղեղով, տեսավ, որ իր վարմունքն իսկապես շատ օտարոտի, շատ զարմանալի էր: Բազենյանը իր սիրելին էր, իր անձկալին. ամբողջ օրերով միմիայն նրա մասին էր մտածում, միմիայն նրան էր ցանկանում. նույնիսկ պատրաստ էր

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

թողնել ծնողներին, թողնել տունը, ամենքին և ամեն բան և գնալ նրա հետ՝ ուր որ կտաներ, — և այդ բոլորից հետո հանկարծ...

Եվան դեմքը ծածկեց ձեռքերով, կարծես մեկը ներկա յիներ, որ կարող էր տեսնել իր ամոթը...

20

Բազենյանը, հակառակ Թեկլեին արած իր խոստմանը, չեկավ ոչ այդ օրն երեկոյան և ոչ հետևյալ օրը: Այսուհետև անցավ դարձյալ երկու օր, և նա դարձյալ չերևաց: Այդ բանը շատ տարօրինակ էր թվում Մարության ամուսիններին: Ուրիշ պատճառ չգտնելով իրենց բարեկամի այդ վարմունքը բացատրող, նրանց մնում էր ընդունել, որ Բազենյանն իսկապես ժամանակ չի գտնում իրենց այցելելու:

— Կամ, գուցե, արդեն գնացե՞լ է, — հարցրեց Մարությանն աղջկան: — Անցյալ օր որ եկավ, ի՞նչ ասաց, ե՞րբ էր գնալու:

— Ասաց, որ եթե հետևյալ օրը չէ, երրորդ օրն անպատճառ պետք է ճանապարհ ընկներ, — պատասխանեց Եվան բոլորովին հանգիստ կերպով:

— Իսկ ինձ ասաց, թե մի քանի օր դարձյալ մնալու է այստեղ, — ասաց Թեկլեն:

— Սպասիր: Երրորդ օրն երեկ էր, ուրեմն արդեն գնացել է, — բացականչեց Մարությանը: — Այս բանից ես ոչինչ չեմ հասկանում, ճշմարիտ: Ուրիշ ոչինչ չլինի, գոնե մեր խոստացած փողը պետք է ընդուներ. դրա համար էլ չեկավ: Ասենք, այդ կողմից ես անքաղաքավարի եղա. պետք է փողն անմիջապես ուղարկեի իրեն: Բայց ախր... Չէ՛, անկարելի է. դեռ գնացած չի լինիլ: Պետք է ինքս անձամբ գնամ նրա մոտ: Նամակն, երկու օր է, մնում է գրպանումս: Փողն էլ ինքս անձամբ կտանեմ կտամ:

— Ա՛խ, նամակը, — արտասանեց Թեկլեն հուսահատորեն: — Երանի գոնե այդ նամակը հասնի Արմենակիս, և մի պատասխան ստանանք նրանից...

— Ես իսկույն գնում եմ Բազենյանի մոտ, — ասաց Մարությանը, վճռապես վեր կենալով տեղից: — Եվա, ուզո՞ւմ ես, դու էլ արի:

— Ոչ, ես չեմ գալ:

— Զբոսնելով կգնանք, ի՞նչ կա որ: — Չէ, հայրիկ, չեմ կարող:

— Դե, գնա, է՛լի, — ասաց մայրն աղջկան: — Մի քիչ պարզ օդ կծծես: Քանի՛ օր է, տանից դուրս չես գնացել:

— Ի՞նչ անենք որ:

— Ա՛յն անես, որ տե՛ս ինչ ես դարձել, — զայրացած վրա բերեց Թեկլեն: — Չեմ հասկանում, այս վերջին օրերն ինչ է պատահել քեզ: Մեկ նայիր հայելում, տես ինչ ես դարձել: Եղբորդ հոգսը բավական չէ, մի հոգս էլ դու դարձիր գլխիս:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվան ոչինչ չպատասխանեց մոր այդ հանդիմանական խոսքերին:

Այն հանգամանքը, որ Բազենյանը վերջին տեսակցությունից հետո խոստացել էր գալ և չէր գալիս և, գուցե արդեն հեռացել էր Թիֆլիսից, սաստիկ մտատանջում էր Եվային: Նրա մեջ բոլորովին չքացել էր այն սարսափը, որ ազդել էր նրան Բազենյանի աչքերի մեջ նկատած փոփոխությունը. կարծես մի ծանր երազ լիներ այդ, որի ազդեցությունն անցել էր ժամանակի հետ: Այժմ Բազենյանը ներկայանում էր նրան դարձյալ առաջվա նման իր անդիմադրելի գրավչությամբ. այժմ այդ երիտասարդն ավելի ևս անձկալի էր, թերևս այն պատճառով, որ Եվան հույս չուներ, թե երբևիցե այլևս պիտի տեսնի նրան: Եվ այդ բանում Եվան մեղքը լիովին իր վրա էր առնում. իր անփորձության մեջ, լոկ բոպեի ազդեցության տակ դեն հրեց իրենից այն երիտասարդին, որին սիրում էր և որը նրան էր սիրում. իր օտարոտի վարմունքով սիրած երիտասարդին կորցրեց ընդմիշտ իր համար, միևնույն ժամանակ կորցնելով իրեն նրա համար: Եվան երևակայում էր, թե ինչքան զարմացած պիտի լիներ Բազենյանն իր վարմունքից, որ այժմ իր համար անհասկանալի էր մնում: Բազենյանն անշուշտ վիրավորվեց և հենց այդ պատճառով չեկավ, որ նրան գեթ իր վերջին հրաժեշտը տա:

Որքան շատ էր մտածում Եվան այս մասին, այնքան ավելի անկեղծ զղջմունքը կրծում էր նրա սիրտը: Այդ զղջմունքն երբեմն այն աստիճան էր հասնում, որ իրեն պատրաստ էր զգում ընկնելու Բազենյանի ոտները և ներողություն խնդրելու նրանից, եթե միայն Բազենյանին մի անգամ էլ տեսնելու լիներ:

Բայց ո՞րտեղ էր Բազենյանը: Եվան գրեթե համոզված էր, որ նա անպատճառ արդեն հեռացել էր: Եվ այժմ, երբ մերժում էր հոր հետ Բազենյանի մոտ գնալ, մերժում էր ոչ թե այն պատճառով, որ վերջին անցքից հետո ամաչում էր Բազենյանի աչքին երևալուց, այլ նրա՛ համար միայն, որ իր մեջ քաջություն չէր զգում անձամբ համոզվելու, որ նա իսկապես հեռացել է: Այդ արդեն խիստ մեծ հարված կլիներ նրա համար, դրանով իսպառ պիտի փշրվեր հուսո այն վերջին նշույլը, որ դեռևս առկայծում էր այնտեղ, սրտի խորքում թաքնված: Սակայն միևնույնը չէ՞ր, խո արդեն համոզված էր, որ Բազենյանն այլևս Թիֆլիսում չէ. սխալն արդեն գործված էր և այլևս ոչ մի կերպ չէր կարելի ուղղել. ավելի լավ չէ՞ր, որ միանգամից վերջ դներ իր անտանելի դրությանը: Եվ Եվան հանկարծ հուսահատական մի քաջություն զգաց իր մեջ, այնպես, որ երբ հայրը նորից առաջարկեց, որ միասին գնան Բազենյանի մոտ, նա համաձայնեց:

«Միանգամից, միանգամից... ինչի՞ց եմ վախենում...», — մտածում էր նա, երբ հոր հետ անցնում էր սառած ձյունով ծածկված փողոցներով:

Նոր երեկոյանում էր: Ձմեռային կարճատև օրվա անզոր արևը դժգույն երկնքի վրա արդեն բոլորովին թեքվել էր դեպի արևմուտք և անփայլ, թառամած ճառագայթներով ներկում էր բարձր շենքերի կտուրներն ու տերևաթափ ծառերի կատարները: Օդը շարժվում էր անախորժ սառնությամբ: Ցուրտը կրծում էր մարդու ականջներն ու քիթը:

— Ուզո՞ւմ ես սահնակ նստենք, Եվա, — հարցրեց հայրը: — Ոչ, ոտով ավելի լավ է, — ասաց Եվան, չնայելով, որ եղանակը սաստիկ անախորժ էր թվում նրան: Նրա ծնոտները թեթև դողդողում էին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Գրազ կգամ, որ Բազենյանը դեռ այստեղ է, — բացականչեց Մարությանը, երկար տեղ լուռ քայլելուց հետո: — Առանց ինձ տեսնելու անկարելի է, որ գնար:

Եվան ոչինչ չպատասխանեց: Հիրավի, եթե Բազենյանն իսկապես դեռ գնացած չլիներ և այդ րոպեին էլ տանը լիներ, ինչպե՞ս պիտի հանդիպեր նրան, ի՞նչ երեսով պիտի ներկայանար նրան: Եվան նոր մտածեց այդ մասին և զգաց, որ այդ հանդիպումը չափազանց ծանր պիտի լիներ իր համար: Մի րոպե նա կանգ առավ սաստիկ տատանման մեջ և ուզեց հորն ասել, որ ուզում է տուն դառնալ, բայց ոչինչ չասաց և հոր հետ շարունակեց ճանապարհը: «Ավելի լավ, — մտածեց նա. — կհասկանա, որ ես զղջացել եմ վարմունքիս համար, և այլևս նեղանալ ինձնից»:

Հիրավի, երբ հայր ու աղջիկ հասան «Լոնդոն» հյուրանոց, և Մարությանը դռնապանին հարցրեց, թե Բազենյանն արդեն հեռացե՞լ է Թիֆլիսից, դռնապանը պատասխանեց, որ Բազենյանը դեռևս բնակվում է հյուրանոցում, բայց այդ րոպեին տանը չէ:

— Չասացի՞, չասացի՞, — բացականչեց Մարությանն ուրախացած, դառնալով աղջկան: — Գիտեի, ախր, որ առանց ինձ տեսնելու չէր գնալ: Բայց այս լավ չէ, որ հիմա տանը չէ: Ի՞նչ անենք:

Այն միջոցին, երբ Մարությանը փոփոխակի նայում էր մերթ դռնապանին, մերթ աղջկան, մտածելով, թե ինչ անի, մի կառք դղրդալով մոտեցավ և կանգ առավ հյուրանոցի դռան առաջ:

Եվան դռան ապակու միջից դուրս նայեց և դողաց: Կառքի մեջ նստած էր Բազենյանը: Նա արագ իջավ կառքից և շտապ քայլերով դիմեց դեպի դուռը:

— Ահա՛ ինքը, — բացականչեց դռնապանը և շտապեց դուռը բանալ նրա առաջ:

Բազենյանը մտավ մուշտակի կոճակները բաց և մոխրագույն մորթե գլխարկը ճակատից փոքր-ինչ ետ գցած: Դռների մոտ տեսնելով Մարությանին ու Եվային, հանկարծ կանգ առավ, ըստ երևույթին, խիստ ապշած: Պարզ երևում էր, որ այդ հանդիպումը միանգամայն անսպասելի էր նրա համար:

— Ա՜, պարոն Բազենյան, — բացականչեց Մարությանը խիստ ուրախացած: — Տեսնում եք: Մենք եկել ենք ձեզ մոտ, իսկ դուք տանը չեք: Ի՜նչ լավ արիք, որ եկաք, թե չէ՝ մտածում էի, թե ինչպես անենք, որ ձեզ գտնենք:

— Մի՞թե ես արժանի եմ այդ պատվին, — արտասանեց Բազենյանը փոքր-ինչ խանձված ձայնով և սեղմեց Մարությանի ձեռքը վերին աստիճանի զսպած քաղաքավարությամբ: Այնուհետև առանձին հարգանքով դարձավ դեպի Եվան, առանց նայելու նրան, խոնարհ գլուխ իջեցրեց՝ գլխարկը ձեռքին:

Եվան անհամարձակությամբ նայեց նրա վայր թողած աչքերին մեքենայաբար ձեռքը մեկնեց նրան:

Բազենյանն արագ մի քայլ առաջ դրեց և նույն զսպած քաղաքավարությամբ սեղմեց նրա ձեռքն էր: Այդ միջոցին Եվան ակամա ուշադրություն դարձրեց այն բանի վրա, որ Բազենյանն

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

իր ձեռքը սեղմեց վնասված աջ ձեռքով, թեև սև շորը դեռևս կախված էր վզից: Այս անգամ Բազենյանն այնքան մոտ էր Եվային և գլուխն այն աստիճան խոնարհել էր ուղղակի նրա քթի տակ, որ Եվային թվաց, թե ինչ-որ քացախած հոտ առավ նրա բերանից:

Մարությանն սկզբից զարմացած էր մնացել նրա զսպած ընդունելության վրա և հետաքրքրությամբ դիտում էր նրան. հետո նրա ծանր շնչառությունից տեսավ, որ նա արբած է և աշխատում է այդ բանը ծածկել:

— Եղբայր, այս ի՞նչ եք անում, — ասաց նա ժպտալով — խոստանում եք, թե կգաք և չեք գալիս: Կարծում էինք, թե արդեն գնացել եք:

— Լիովին զգում եմ հանցանքս և հազար ներողություն եմ խնդրում, — ասաց Բազենյանը նույն խանձված ձայնով: — Պատճառ ունեի, իհարկե, մի շատ հարգելի պատճառ, որ խոստումս չկատարեցի... չկարողացա կատարել... և չէի կարող կատարել...

— Եվ ի՞նչ էր այդ պատճառը:

— Այդ պատճառը, — արտասանեց Բազենյանը և առաջին անգամ, բայց մի վայրկյան միայն, նայեց Եվային, որը իսկույն հասկացավ նրա միտքը և աչքերը վայր թողեց շփոթված: — Պատճառը... Շատ ցավում եմ, պարոն Մարության, որ պատճառը չպիտի կարողանամ հայտնել...

— Ուրեմն, ներողություն անտեղի հետաքրքրությանս համար, — արագ վրա բերեց Մարությանը: — Ես, իհարկե, այն մտքում չհարցրի պատճառը, որ ձեր գաղտնիքներն իմանամ, բայց... Մենք շատ սպասեցինք ձեզ: Երկու օր է, որ նամակը փտում է գրպանումս: Եվ եթե գիտենայիք, թե որքան երախտապարտ պիտի լինինք ձեզ, եթե այդ նամակը հասցնեք մեր որդուն:

— Ես միշտ պատրաստ եմ, պարոն Մարության, իմ ծառայությունը մատուցելու ձեզ: Անցյալ օր հենց այդ նամակի համար էլ եկա էլի ձեր տուն, բայց դուք, դժբախտաբար, տանը չէիք: Ես երեկ պիտի ճանապարհվեի, բայց մի քանի անակնկալ հանգամանքներ պահեցին ինձ այստեղ: Ամենայն հավանականությամբ, կմեկնեմ վաղը չէ մյուս օրը, և իմ պարտքս կլինի ամենից առաջ տեղ հասցնել ձեր նամակը: Բայց ի՞նչ ենք կանգնել այստեղ: Խնդրում եմ, պատվեցեք թափառաշրջիկիս ժամանակավոր օթևանը ձեր ներկայությամբ:

— Գնանք, Եվա, — ասաց Մարությանը դիմելով դեպի վեր:

Եվան մի վայրկյան տատանվեց և հետևեց հորը: Իսկ Բազենյանը ձեռաց հանեց կառքի փողը, տվեց դռնապանին, որ կառքը ճանապարհ ձգի, »և վազեց նրանց ետևից: Սանդուղքի առաջին աստիճանների վրա հասավ Եվային և սկսեց բարձրանալ նրա հետ կողք-կողքի: Երկուսն էլ ոչ մի խոսք չարտասանեցին: Եվան դարձյալ զգաց նրա բերնից փչող քացախած հոտը և այդ հոտն այս անգամ այնքան անախորժ թվաց նրան, որ նա մի քանի վայրկյան ակամա պահեց շնչառությունը:

Բազենյանը բաց արեց իր սենյակի դուռը և Մարությանին ու Եվային ներս հրավիրեց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ուրեմն վաղը չէ մյուս օրն եք գնում, — ասաց Մարությանը, կողք-կողքի նստելով աղջկա հետ:

— Այո: Վաղը չէ մյուս օրն անպատճառ, — արտասանեց Բազենյանը, ծանր շնչելով:

Նա հանեց մուշտակը և ձգեց աթոռի մեջքին: Մուշտակի ծոցի գրպանից դուրս պրծավ մի ինչ-որ լրագիր, նամակի ծրարի չափ ծալված և, բացվելով, ընկավ հատակի վրա: Եվան նստած տեղից կարդաց վերնագիրը և տեսավ, որ արտասահմանում հրատարակվող հեղափոխական թերթերից մեկն է:

— Դուք ստանո՞ւմ եք այդ թերթը, — հարցրեց նա, հարմար առիթ գտնելով խոսելու, որովհետև զգում էր, որ իր ակամա լռությունն արդեն չափից դուրս աչքի է ընկնում:

— Այո, օրիորդ: Ես էլ որ չստանամ, հապա էլ ո՞վ պիտի ստանա, — ասաց Բազենյանը և թերթը վերցրեց հատակից: — Եթե հետաքրքրվում եք, կարող եք վերցնել կարդալու: Վերջին համարն է, նոր ստացա:

— Եթե դուք արդեն կարդացեք եք...

— Ոչ, դեռևս ժամանակ չեմ ունեցել կարդալու: Բայց այդ միևնույն է. ինձ համար այստեղ հազիվ թե որևէ նորություն լինի, որովհետև բոլոր տեղեկություններն ես ստանում եմ, այսպես ասած, առաջին ձեռքից և ավելի մանրամասնորեն, խնդրում եմ, վերցրեք:

Եվան առավ թերթը, ծալեց և վերարկուի գրպանը դրեց:

— Հա՛, մոռացա. այդ համարից երկու օրինակ ունեի, — ասաց Բազենյանը և սկսեց քրքրել գրպանները: — Ո՞րտեղ դրի... Ահա գտա:

Նա հանեց նույնչափ ծալված մի ուրիշ թերթ, ձգեց սեղանի վրա և նստեց:

— Ուրեմն, առանց մեզ այցելելու էլ պիտի գնայիք, — դարձավ առաջվա խոսակցությանը Մարությանը:

— Մի՞թե այդ կարելի էր, երբ խոսք էի տվել, որ ձեր հանձնարարությունը պիտի կատարեմ ամենայն պատրաստակամությամբ, — ասաց Բազենյանը: — Ձեզ մոտ պիտի գայի այս երեկո, բայց դուք կանխել եք և ինքներդ եք եկել ինձ մոտ, որով մեծ պատիվ եք արել ինձ:

— Մենք, դժբախտաբար, ոչ ոքի պատվել չգիտենք, բացի նեղություն տալուց, — վրա բերեց Մարությանը բարեսիրտ կատակով: — Ահա այս այն նամակը, որ պիտի հանձնեի ձեզ: Այս էլ, ահա, այն գումարը, որ խոստացել էի նվիրաբերել ձեր և մեր ամենիս սիրած գործին...

Եվ Մարությանը նամակի ծրարի հետ սեղանի վրա դրեց մի ուրիշ հաստ ծրար:

Զարմանալի ներգործություն ունեցավ այդ հաստ ծրարը Բազենյանի վրա: Մինչև այժմ նա իրեն պահում էր բավական զգաստ և, եթե ծանր շնչառությունն ու բերնից փչող գինու անտանելի հոտը չլիներ, դժվար կարելի էր իմանալ, թե նա խմած է: Բայց այժմ, սեղանի վրա

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

տեսնելով փողի հաստ ծրարը, նրա աչքերը վառվեցին տարօրինակ կրակով, և այդ կրակը, կարծես, հանկարծ լուսավորեց նրա ներսը մի մութ աշխարհ...
Եվան նայեց նրա աչքերին և աթոռն ակամա մոտ քաշեց հորը: Նրան թվաց, թե իր առաջ նորից տեսնում է այն Բազենյանին, որին տեսավ իրենց վերջին տեսակցության վերջին րոպեին: Նա շրջեց դեմքը, որպեսզի չտեսնի Բազենյանի աչքերը: Այդ սևաթույր ու կրակոտ աչքերը, որոնք զարմանալի ընդունակություն ունեին վայրկենաբար ամենածայրահեղ հակադիր զգացումներ արտահայտելու, փոփոխակի, շատ օտարոտի տպավորություն էին թողնում Եվայի վրա. դրանք թե գրավում էին նրան վերին աստիճանի և թե սարսափեցնում: Այդ աչքերը պարզապես տանջում էին Եվային, մանավանդ այն ժամանակ, երբ Բազենյանը նայում էր նրան լուռ ու անթարթ, հիպնոսահարողի պես:

Փողի հաստ ծրարը տեսնելուց հետո Բազենյանն այլևս չկարողացավ զսպել իր մեջ գինու եռացող շոգու ուժը, և այդ ուժն այժմ, ազատ զգալով իրեն, սկսեց դուրս ժայթքել մի երկար շարք ճռճռան ֆրազների մեջ հայրենիքի աղետների մասին... Երբեք Բազենյանը չէր խոսել այնպես ազատ, համարձակ և ոգևորված, ինչպես այժմ, թեև նրա ձայնը հետզհետե ավելի ու ավելի խանձվում էր, այնպես որ երբեմն ինչ-որ անորոշ խռպոտ հնչյուններ էին լսվում միայն: Նրա դեմքը կարմրել էր, աչքերը պլպլում էին անմիտ, անախոժ փայլով և նրանց տակը ծածկել էին քրտինքի մանրիկ կաթիլներ: Այն հանգամանքից, որ իր երկար ճառախոսության ժամանակ Մարությանն ու Եվան լռել էին ակամա և լսում էին նրան, նա, ըստ երևույթին, կարծում էր, թե կատարելապես տիրել է նրանց ուշադրությանն ու զգացումներին, ուստի ավելի ևս ազատություն էր տալիս իր խոսքերին, թեև այլևս հաշիվ չէր տալիս իրեն, թե ինչ է ասում...

Այնինչ հայր ու աղջիկ, ապուշ-ապուշ նայելով նրա այլանդակված դեմքին, այդ ժամանակ ճնշվում էին միևնույն անախորժ զգացման տակ: Այդ այն զգացումն էր, որ պաշարում է լուրջ մարդկանց, երբ նրանք ստիպված են լինում լսել արբած մարդու անկապ, համառ շատախոսությունը, օդի մեջ շնչել նրա բերնից արտադրվող գինու անտանելի քացախած հոտը, և, շարունակ լռելով, ա՛յն են մտածում միայն, թե ինչպես անեն, որ հեռանան նրանից, հեռանան այնպես, որ նա չհասկանա (արբած մարդիկ խիստ կասկածոտ են լինում), թե իրենք փախչում են նրանից:

Երբ Բազենյանը, կարծես հոգնելով, փոքր-ինչ խաղաղեց, Մարությանը շտապեց վեր կենալ: Նրա հետ վեր կացավ և Եվան, որին հասկանալի և անդիմադրելի մի նոր զգացում թելադրում էր շուտով դուրս փախչել այդտեղից դեպի ազատ օդ:

— Շատ ցավում եմ, պարոն Բազենյան, որ մենք երկար չպիտի կարողանանք մնալ ձեզ մոտ, — ասաց Մարությանը և, որպեսզի նա չկարծի, թե իրենք փախչում են նրանից, որովհետև նա արբած է, շտապեց ավելացնել: — Մենք այս րոպեիս մի տեղ պիտի գնանք մի շատ հարկավոր գործի համար... Բայց հատկապես խնդրում ենք, որ մեկնելուց առաջ մի անգամ ևս հանդիպեք մեզ: Կգա՞ք:

— Կգամ, — արտասանեց Բազենյանը բոլորովին հոգնած ձայնով և կանգնած տեղը երերվեց: Նա ինքն արդեն զգում էր, որ այլևս չի կարող զբաղեցնել հյուրերին, ուստի գոնե քաղաքավարության համար ամենևին փորձ էլ չարեց նրանց երկար պահելու իր մոտ: Նա հավաքեց վերջին ուժերը և այցելուներին ճանապարհ դրեց մինչև հյուրանոցի սանդուղքի գլուխը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ուրեմն սպասե՞նք, — վերջին անգամ հարցրեց Մարությանը:

— Կգամ, կգամ, — արտասանեց Բազենյանը բոլորովին խանձված ձայնով և սպասեց սանդուղքի գլխին, մինչև որ հայր ու աղջիկ իջան և չքացան աչքից: Այնուհետև անհաստատ քայլերով վերադարձավ իր սենյակը, նստեց սեղանի մոտ, վերցրեց Մարությանի թողած փողի ծրարը, միջից հանեց չորս հատ հարյուր ռուբլիանոց թղթադրամ, նորից մեջը կոխեց և ծրարը դրեց ծոցի գրպանը դանդաղորեն և ժպտալով: Հետո կամաց ետ ընկավ աթոռի մեջքին, ձեռքերը դրեց սեղանի վրա և սկսեց թրխկթրխկացնել մատներով:

Սպասավորը ներս բերեց վառած լամպը, դրեց սեղանի վրա և հարցրեց՝ հեշտաեռ դնի՞:

Բազենյանը գլխով բացասական շարժում արավ: Հետո, երբ սպասավորը դուրս էր գնում, կանչեց հանկարծ.

— Կա՛ց:

Սպասավորը կանգ առավ և ետ նայեց:

— Մոտ արի:

Սպասավորը մոտեցավ և կանգնեց նրա ետևը:

Բազենյանը, առանց գիրքը փոխելու, երկու մատը կոխեց ժիլետի գրպանը, հանեց մի հատ արծաթ դրամ և տվեց նրան ուսի վրայից:

Սպասավորը փողն առավ և սպասում էր նրա պատվերին, բայց տեսնելով, որ ոչինչ չի ասում, հարցրեց.

— Ի՞նչ կհրամայեք բերեմ:

— Ի՞նչ պիտի բերես, հիմար, — ասաց Բազենյանը: — Քեզ եմ բաշխում:

Սպասավորը սկզբում նայեց նրան զարմացած, չհասկանալով, թե ինչ էր նշանակում այդ անառիթ վարձատրությունը, հետո շնորհակալություն հայտնեց, առանց քծնելու, և դուրս գնաց հանգիստ:

Բազենյանի աչքն ընկավ սեղանի վրա ընկած հեղափոխական լրագրի վրա: Լամպը մոտ քաշեց, կուրծքը հենեց սեղանի ծայրին և սկսեց թերթել լրագիրը: Նրա արբած աչքերի առաջ տողերն ու տառերը թվում էր, թե շարժվում ու խաղում են լամպի լույսի տակ, և նա կարդում էր անուշադիր ու հորանջելով: Մի տեղ նրա աչքովն ընկավ իր ազգանվան պես ինչ-որ մի բառ. լավ նայեց և տեսավ, որ այդ իսկապես իր ազգանունն է: Նրա արբածությունը կարծես միանգամից անցավ, և նա, զարմացած ու հետաքրքրված, սկսեց կարդալ այն տողերը, որոնց մեջ նկատեց իր ազգանունը: Կարդալիս նրա դեմքն արագապես փոխվեց, իսկ երբ վերջացրեց, հենց այնպես էլ խոնարհված մնաց կարդացած տողերի վրա լայն բացած աչքերով: Հանկարծ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

հիշեց, որ լրագրի մի օրինակը տվել էր Եվային, և վեր թռավ տեղից կարիճից խայթվածի պես: Աթոռը, որի վրա նստած էր, ետ թռավ և գլորվեց հատակի վրա:

— Ա՜, այս ի՜նչ հիմարություն եմ արել, — արտասանեց նա, ձեռքն ուժգին խփելով ճակատին, և մնաց քարացած:

21

Երբ հայր ու աղջիկ դուրս եկան հյուրանոցից, արևն արդեն մայր էր մտել: Երկնքի անփայլ կապուտակը մթնում էր արագորեն: Օդը, որ արև եղած ժամանակ շարժվում էր անախորժ սառնությամբ, այժմ ուղղակի խանձում էր մարդու դեմքը: Սառած գետինը քարի կարծրություն էր ստացել: Եվան վազում էր՝ հոր առաջն ընկած, կարծես փախչում էր մի բանից և, միևնույն ժամանակ, ուզում էր ցույց տալ, թե ոչ մի բանից չի փախչում: Հայրը հազիվ էր հասնում աղջկա ետևից, թեև նա էլ չէր հասկանում ինչու, քայլերը սովորականից ավելի արագացրել էր:

— Կամաց գնա, Եվա, ի՞նչ ես վազում, — կանչեց Մարությանը:

Եվան կանգ առավ, մինչև որ հայրը հասավ նրան: Նրանք չնայեցին իրար երեսի: Բայց նրանցից ամեն մեկը հասկացավ, որ երկուսն էլ ճնշված են Բազենյանի թողած անախորժ տպավորության տակ: Նրանք շարունակեցին ճանապարհն այս անգամ կողք — կողքի և հանդարտ քայլերով:

— Է՜, դա խմում է՞լ է, — խոսեց Մարությանը, կարծես ինքն իրեն: — Չհավանեցի... Թեև խմելն, իհարկե, սովորական բան է, — ավելացրեց նա կարճ, մտախոհ լռությունից հետո. — մարդը ուրախ տրամադրության մեջ մի քիչ խմել է. այդ բանը մեզնից ո՞վ չի անում, բայց չգիտեմ ինչո՞ւ, ինձ վրա անախորժ տպավորություն թողեց: Ափսո՜ս: Իլյուզիաս կորավ:

Եվան ցնցվեց և ակամա նայեց հոր մտախոհ դեմքին: Նա տեսավ, որ հայրը նույն հիասթափությունն է զգում, ինչ որ ինքը, թեև, իհարկե, ոչ այնքան զորեղ կերպով, ինչպես ինքը: Մարությանն այլևս ոչինչ չխոսեց Բազենյանի մասին: Իսկ Եվան ամենևին ձայն չէր հանում: Նա գնում էր և չէր իմանում՝ ուր. մտածում էր և չէր իմանում՝ ինչ: Երբեմն վայրկենաբար նրա դեռևս թարմ հիշողության մեջ վերակենդանանում էին այն օրերը, երբ ինքը տանջող կարոտով սպասում էր Բազենյանին. հիշում էր իրենց սիրային առաջին և վերջին տեսակցությունը, այդ տեսակցությունից հետո իր զգացած սարսափը, դարձյալ իր հուսահատական դրությունը, Բազենյանին տեսնելու տենչը... Հիշում էր այդ բոլորը և տեսնում էր, որ բոլորովին հանգիստ, անկարեկից է. կարծես թե այդ բոլորն երեկ-մեկել օրը չէր, որ կատարվել էր, այլ շատ տարիներ առաջ. կարծես թե այդ բոլորն ինքը չէր զգացողը, այլ մի ուրիշը, բոլորովին մի այլ աղջիկ, որին չէր ճանաչում և որի հետ ինքը ոչ մի առնչություն չուներ:

— Պարո՜ն Մարության, Եվա, — հանկարծ լսեցին հայր ու աղջիկ իրենց ետևից կանացի մի ձայն: Նրանք դարձան և տեսան օր. Սահակյանին, որ իր գեր մարմնով բադի պես օրորվելով՝ շտապում էր հասնել նրանց: Չնայելով սառնամանիքին, նրա լիք այտերն այրվում էին տաքացած: Նա հասավ Մարություններին և անցավ հոր ու աղջկա մեջտեղը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Բարև ձեզ, ինչպե՞ս եք, — ասաց նա իր աշխույժ, կայտառ ձայնով, և առնելով Եվայի թևը, առաջ անցավ նրա և Մարությանի հետ: — Այսօր դարձյալ նամակ ստացա Աշխենից: Այս երկրորդ նամակն է, որ գրում է: Այսպես շուտ-շուտ է հիշում ինձ: Բայց, փառք աստծո, այս անգամ գոհ է և ուրախ: Միայն խիստ գանգատվում է, Եվա, որ դու վերջերս կամ ոչինչ չես գրում իրեն, կամ միայն չոր ու ցամաք բարևներ ես գրում: Լավ չես անում: Մի մոռանար, որ կարոտը միայն քո նամակներից է առնում: Երևակայիր, որ մինչև անգամ կասկածում է, թե միգուցե հիվանդ ես, որ ոչինչ չես գրում, կգժվեմ, ասում է, եթե...

Օր. Սահակյանը հանկարծ լռեց և զարմացած նայեց նախ Եվայի, ապա Մարությանի դեմքին:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց նա անհանգստությամբ: — Ինչ-որ ... տխուր եք երևում:

Մարությանը, զարմանք կեղծելով, նայեց օր. Սահակյանի փորձող աչքերին:

— Տխո՞ւր ... Ինչի՞ց պիտի տխրեինք:

— Ես ի՞նչ գիտեմ: Ձեզ դեռ երբեք այդպես չեմ տեսել... Որտեղի՞ց եք գալիս:

Բազենյանի մոտից:

Օր. Սահակյանը հանկարծ կանգ առավ, թողեց Եվայի թևը և բերանը բաց, աչքերը չռած՝ մնաց նայելիս Մարությանի դեմքին:

Ակամա կանգ առան և հայր ու աղջիկ և գրեթե սարսափած միաժամանակ նայեցին նրան, կանխազգալով, որ նա ինչ-որ բան պիտի ասի, կայծակի պես շանթող անսպասելի մի բան, որը կուզեին և իմանալ, և չիմանալ:

— Բազենյանի մոտի՞ց, ասում եք... ի՞նչ ունեիք նրա մոտ:

— Նամակ հանձնեցինք, որ տանի Արմենակին: Վաղը չէ մյուս օրը նա գնամ է այն կողմերը, — ասաց Մարությանը:

Օր. Սահակյանը գլուխը ետ ձգեց և խիստ բարձրաձայն ծիծաղեց: Շատ տարօրինակ էր նրա ծիծաղը:

Հայր ու աղշիկ ապշած նայում էին, թե ինչպես ծիծաղից դողդողում էր նրա կախ ընկած կզակը:

Եվ միայն նամա՞կ հանձնեցիք, — հարցրեց օր. Սահակյանք:

Մարությանը այլևս քաջություն չունեցավ ծածկելու:

— Փող էլ, — ասաց նա:

— Այսինքն ի՞նչ փող. Արմենակին տանելո՞ւ, թե ...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ոչ, իբրե նվիրաբերություն...

— Սուրբ գործի օգտին, — լրացրեց օր. Սահակյանը, և նրա ծիծաղը սաստկացավ: Նա ծիծաղում էր երկար, և նրա ամբողջ մարմինն ուժգին ցնցվում էր այդ տարօրինակ ծիծաղից: Բայց հանկարծ զսպեց իրեն, իր ուժեղ ձեռքով արագորեն բռնեց Մարությանի թևից և անհանգիստ մի շարժում արեց, որով ուզում էր հասկացնել, որ նա իսկույն ետ դառնա:

— Այս րոպեիս գնացեք և ետ առեք նամակն էլ, փողն էլ — ասաց նա շատ լուրջ և հաստատուն ձայնով: — Շտապեցեք, մի նայեք ինձ այդպես զարմացած... Դե, գնացեք շուտով, ձեզ ասում եմ, — աղաղակեց ուղղակի հրամայողաբար, տեսնելով, որ Մարությանն ապուշ կտրված միայն նայում է իր դեմքին:

Մարությանը պարզապես վիրավորվեց նրա այդ վարմունքից:

— Սպասեցեք, — ասաց նա և թեը կամաց խլեց օր. Սահակյանի ձեռքից: — Ի՞նչ եք ասում, չեմ հասկանում:

— Այն եմ ասում, պարոն Մարության, որ դուք սրիկայի ձեռք եք ընկեք, և նա փառավորապես խաբել է ձեզ, ինչպես խաբել է ձեզ նման շատերին: Այժմ հասկացա՞ք: Դե, գնացեք շուտով, այս րոպեիս գնացեք, թե չէ ձեր փողերը կորած են... Տե՛ր աստված, ի՛նչ տեսակ մարդ եք: Մի՞թե չեք հավատում ինձ:

— Իհարկե, չեմ հավատում, — աղաղակեց Մարությանը գրեթե կոպտաբար: — Ինչպե՞ս թե սրիկա, ի՞նչ եք ասում: Նրա մասին բան գիտեք, այնպես եք խոսո՞ւմ, թե հենց այնպես, որովհետև ... Նրա քիթը դուր չի եկել ձեզ:

— Իհարկե, բան գիտեմ, որ այդպես եմ խոսում, թե չէ՝ ես ի՞նչ գործ ունիմ նրա քթի հետ:

— Ի՞նչ գիտեք:

— Այն գիտեմ, պարոն Մարության, որ նա Հայաստանի մասին այնքան է մտածում ու հոգում, որքան ես ու դուք — Չինաստանի մասին: Ձեր այդ պարոն Բազենյանը, որին քիչ է մնում աստվածացնեք, ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կատարյալ խաբեբա, որ հանգամանքներից օգուտ քաղելով, գեղեցիկ դիմակի տակ, պարապում է նվիրական զգացումներ շահագործելով: Այդ պարոնի իսկական անձնավորության հետ ինձ ծանոթացրեց շատ հարգեյի, շատ պատվական մի տիկին, որ հենց ինքը զոհ է գնացել այդ աֆերիստի ճարպիկ խաբեբայությանը: Այդ տիկինը Ղրիմից է: Նրա հետ ծանոթ եմ Ղրիմում եղած վարժուհությանս ժամանակից և շատ լավ ծանոթ եմ: Անձնական գործերի համար այս օրերս Թիֆլիսի է եկել և անցյալ օր մեր տանն էր: Հենց այդ օր փողոցում հանդիպել էր Բազենյանին, և տեսնեիք, թե ինչքան հուզված էր... Եվ, իսկապես, կարելի՞ է միթե խաղաղ հոգով տեսնել թե ինչպես, ամենասուրբ, ամենանվիրական զգացումներդ շահագործության առարկա են դարձած մի մութ անձնավորության ձեռքին, որին սկզբում հավատամ էիր կուրորեն և համոզված էիր, որ նա քո ամենալավ, ամենաբարձր բաղձանքների իրագործողն է... Հենց դուք. այս րոպեիս դուք միևնույնը չե՞ք զգում, ինչ-որ զգացեք է այն պատվական կինը, դուք նույնպես միևնույն ծանր հիասթափության տակ չե՞ք այս րոպեիս...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվ օր. Սահակյանը, լռելով, փոխեիխոխ նայեց Մարությանի և Եվայի դեմքին: Մարությանը վերին աստիճանի ապշած էր, ինչպես մի մարդ, որի մտքի առաք հանկարծ սարսափելի և անհավատալի մի գաղտնիք է բացվում: Իսկ Եվան կանգնած էր անշարժ և, հոնքերը կիտած, անթարթ նայում էր գետնին: Վերին աստիճանի խիստ հանգստություն էր արտահայտում նրա ամբողջ արտաքինը: Նրա անշարժացած դեմքը գունատվել էր և աչքերի վայր թողած կոպերը դողդողում էին իրենց երկայն թերթերունքներով:

— Օ՛, իսկապես որ սարսափելի է, սարսափելի, — հառաչեց Մարությանը ծանր երազից արթնացողի պես և առաջ անցավ:

Եվան և օր. Սահակյանը հետևեցին նրան:

— Ա՛, վերջապես հասկացաք և հավատացիք. — բացականչեց օր. Սահակյանը: Ես զարմանում եմ, պարոն Մարության, որ դուք երբեք չեք հարցրել ինքներդ ձեզ, թե՝ լավ, եթե մեր այս պարոն Բազենյանը, որ այսքան շատ է խոսում հայրենիքի թշվառության մասին, իսկապես գործիչ է, հապա այս ինչպե՞ս է հագնվում սա, այս ինչպե՞ս է ապրում սա: Հայրենիքի թշվառության համար մտածողն ու գործողն ով, առաջնակարգ հյուրանոցում ապրողն ով, վերջին մոդով հագնվո՞ղն ով, անդադար կառքով ու սահնակով զբոսնո՞ղն ով: Ախար այս բաներն ինչ-որ չեն բռնում իրար: Հենց առաջին օրը, հենց առաջին րոպեին, որ տեսա նրան ձեր տանը, մեծ թերահավատությամբ նայեցի նրա վրա: Նրա հագուստից այնպիսի հոտ էր բուրում, որ ամենակոկետ կնոջից անգամ չեմ առել: Ախար սրանք ուշադրության արժանի բաներ են, պարոն Մարության, իսկ դուք, ինչպես երևում է, ամենևին ուշադրություն չեք դարձրել:

— Էհ, ո՞վ էր հետևում այդ մանրամասնություններին, — նկատեց Մարությանը դառնությամբ: — Նա մեզ այնպես կաշկանդել էր...

— Ասացեք կաշառել էր:

— Ինչպե՞ս թե կաշառել:

— Չէ՞ որ փրկել էր ձեր Սուրենի կյանքը:

— Դուք էլ բան ասացիք. նա ի՞նչ էր իմանամ, թե ով ենք մենք, որ մեր երեխայի կյանքը փրկեքով կաշառեր մեզ:

— Որ այդպես է, դուք չեք հասկանում այդ պարոնների հոգեբանությունը: Ձեզ չկաշառեր, հասարակությանը խո կկաշառեր: Չէ՞ որ Բազենյանի պես մարդկանց ամենամեծ ջանքն այն է, որ հասարակության աչքերը որքան կարելի է պինդ կապեն, և Բազենյանը դրա համար ավելի լավ առիթ չէր կարող գտնել, քան մի փոքրիկ երեխայի՝ կառքի տակ չարաչար մեռնելուց ազատելը: Կարծում եք Բազենյանի համար քիչ բա՞ն է, որ լրագրության մեջ գրվում և հասարակության մեջ խոսվում է, թե այսինչ պարոնն այսինչ անձնազոհության օրինակ է ցույց տվել: Եվ ինչպե՞ս նա մինչև այժմ էլ ձեռքը կապած է պահում... Ես մեռնեմ, թե նրա ձեռքն իմ ձեռքից էլ առողջ չէ. բայց կապած է պահում, որովհետև չէ որ նրա անօրինակ անձնազոհության նշանն է այդ, և, վերջապես, դրանով նա, ախր, ավելի գրավիչ է երևում... է՛, պարոն Մարության, ինչպես տեսնում եմ, դուք դեռևս շատ միամիտ մարդ եք: Դուք չգիտեք,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

թե որոշ ժամանակներ լավ մարդկանց հետ ինչպես վատ մարդիկ էլ են ստեղծում: Մեր այժմյան ժամանակը ստեղծեք է ձեր որդուն — Արմենակին, բայց և ստեղծել է Բազենյանին: Գուցե, ժամանակն ու հանգամանքները շատ ժլատ են ձեր որդու նմաններին ստեղծում, բայց երևում է, որ շատ շռայլ են բազենյաններ արտադրելում: Մի րոպե թողեք տղամարդուն ոչ-վայել ձեր այդ պարզամտությունն ու դյուրահավատությունը, իրերի վրա նայեցեք առողջ, քննական հայացքով, և կտեսնք, թե ովքեր են բազենյանները. կտեսներ, որ այդ գարշելիները ոչ այլ ինչ են, եթե ոչ պարզապես մեր այժմյան կյանքի նշանավոր երևույթների զազրելի վիժմունքը: Դրանք ծույլ ու անբարոյական արարածներ են, որոնք լավ ապրել են ուզում: Ազնիվ գործը, չարքաշ աշխատանքն անմատչելի է դրանց: Դրանք վաղ աշխատելու դյուրին ասպարեզ են հոտոտում, և ահա պատրաստ է մեր ներկա ժամանակի հասարակական նվիրական զգացումների շահագործության ասպարեզը, — մի ասպարեզ, ուր, ինչպես ասում են, շունը տիրոջը չի ճանաչում: Խավարի ծնունդ լինելով, խավարի մեջ էլ գործում են դրանք: Զգացումներ և ձգտումներ կեղծելու բնատուր ճարպկությունը դրանց ամենամեծ զենքն է: Այդ զենքով զինված թափառում են քաղաքից քաղաք, երկրից երկիր և ձեզ նման միամիտ հավատացողների գրպանից փողեր են կորզում: Սուրբ գործի անունով հավաքած այդ փողերը ցրում են անձնական զազրելի կրքերի, ապականության ճանապարհի վրա: Հասարակական ամենանվիրական գործն այդպիսով պատվանդան են դարձրել ցոփության հաղթանակի համար: Սուրբ գործի այդ պարազիտները բախտավոր են նրանով, որ խառնաշփոթությունն ընդհանար է և այդ խառնաշփոթության մեջ ոչ իսկական գործիչն է երևում, ոչ իսկական կորզիչը: Այդ պատճառով էլ հաղթանակում են խավարի ծնունդները, իսկ մեծ գործը կործանվում է...

Մարությանի և Եվայի մեջտեղ ծանր քայլելով, օր. Սահակյանը խոսում էր ազնիվ բարկությամբ վառված:

— Շատ ճիշտ է, շատ ճիշտ է, — մեջ ընդ մեջ արտասանում էր Մարությանը դառն մտախոհությամբ:

— Ցավալին այն է, որ չարիքը ոչ կարող ես ծածկել, ոչ կարող ես հրապարակ հանել, — շարունակեց օր. Սահակյանը — Ծածկես — Բազենյանի պես մութ անձերի վնասակար գործունեությանը պիտի ազատ ասպարեզ տաս. հրապարակ հանես — ամենքը ետ պիտի փախչեն գործից հիասթափված և այլևս չպիտի հավատան ոչ ոքի: Ո՞րն անես — մնացել ես տարակուսած: Իմ կարծիքով պետք է չարիքը չծածկել, իսկ այդ չարիքը չափից դուրս մեծ է և անկարելի է անուշադիր թողնել: Պետք է բանալ հասարակության աչքերը, պետք է հասկացնել նրան, որ չհավատա ամեն մի բախտախնդրի...

— Հեշտ եք ասում: Համեցեք, խոսեցրեք Բազենյանին և կասկածեցեք, թե նա բախտախնդիր է: Նշանավորն այս է, որ նա ոչ թե միայն ուղղակի չի առաջարկել մեզ, որ նվիրաբերության անենք, այլև մի խոսք, մի ակնարկ անգամ չի արել այդ մասին: Նույնիսկ այն ժամանակ, երբ ես ասել էի նրան, որ գա ստանա իմ խոստացած գումարը և նամակով էլ հրավիրեցի, չեկավ, և ես իմ ձեռքովս տարա տուն, տվի ինքնաբերաբար:

— Ճարպկությունն էլ հենց այդ է, է: Կնշանակի՝ ցանցն այնպես լարել է, որ ինքներդ եք գնացել մեջն ընկել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Հենց այդ պատճառով էլ չեմ կարող գնալ և տված գումարս ետ պահանջել: Ետ տալով ետ կտա, — այդքան ազնվություն ու պատվասիրություն կունենա, ես կարծում եմ, — բայց... ի նչ փաստ կա ձեռիս, որ ես կարող լինեմ համարձակ ասել նրան, թև՝ պարո՛ն, իմ տված փողը ետ եմ պահանջում նրա համար, որ ձեզ չեմ հավատում այլևս, որովհետև դուք խաբեբա եք, աֆերիստ եք, սրիկա եք:

— Փաստը — իմ ասած տիկինը: Ուզում եք, իմ անունս էլ տվեք: Ես նրանից չեմ վախենում:

— Այդ է, ձեր ասած տիկնոջ և ձեր անունը որ տվի — փաստ դառավ, և Բազենյանը խոտ է կերել, ոչինչ չի գտնիլ ասելու:

— Ուզում եք, տիկնոջ երես առ երես կկանգնեցնեմ նրա հետ: Ուզո՞ւմ եք: Ասացեք, ուզո՞ւմ եք:

— Էհ, թողեք, թե աստված կսիրեք, — արտասանեց Մարությանը գրգռված — Լեզուն հեշտ է շարժվում: Մեկ էլ կտեսնեք, այնպիսի օյին կհանի ձեր տիկնոջ և իմ ու ձեր գլխին, որ մի բան էլ դեռ մենք պարտական կմնանք նրան. ինքներդ եք ասում, թե բազենյանները ճարպիկ են և միևնույն ժամանակ այդպես եք խոսում:

Նա հանկարծ կանգ առավ և գսպած զայրույթով նայեց օր. Սահակյանի դեմքին:

— Կուզե՞ք ուղիղն ասեմ, օրիորդ, — նկատեց նա սրտանց: — Մեղավորը դուք եք: Այո, դուք, որովհետև ձեզ վաղուց հայտնի է եղել թե ինչ մարդ է Բազենյանը, և մեզ այժմ եք հայտնում այդ, այն էլ պատահաբար:

Եվ Մարությանը նորից առաջ անցավ գրգռված:

— Դուք ճշմարիտ եք ասում, պարոն Մարրության, — կարճ լռությունից հետո ասաց օր. Սահակյանը Եվայի հետ քայլելով նրա ետևից: Ես կատարելապես արժանի եմ ձեր հանդիմանությանը և ցավում եմ, որ անմիջապես չեմ շտապել հայտնելու ձեզ, թե ինչ մարդ է ձեր այդ Բազենյան կոչվածը: Բայց այս էլ նկատի պիտի ունենաք, պարոն Մարության, որ ես երբեք չէի կարող կարծել, թե դուք, Արմենակի պես որդի ունենալով, կարող էիք ոգևորվել մի որևէ բախտախնդիր Բազենյանով:

Մարությանը ոչինչ չասավ, օր. Սահակյանի վերջին նկատողությունն, ըստ երևույթին, միանգամից զինաթափ արե՛ք նրան:

Կարճ ժամանակ երեքն էլ քայլում էին լուռ:

— Եվ դուք նամակ եք հանձնել նրան, որ ձեր որդու՞ն տանի, — նկատեց օր. Սահակյանը, գլուխը շարժելով դառնությամբ:

Եվայի դեմքը, օր. Սահակյանի այդ խոսքերի վրա, կարծես ներքին մի սուր կսկծից, ծամածռվեց, բայց նրա ամբողջ արտաքինը առաջվա պես պահպանում էր իր խրոխտ հանգստությունը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Արմենակ Մարության և Բազենյան... ինչպիսի հեգնություն, — ավելացրեց օր. Սահակյանը:

Մարությանը զայրագին պինդ թքեց մի կողմ և քայլերն արագացրեց:

— Այսպես թե այնպես, վերջապես, — ասաց օր. Սահակյանը, — Պարոն Մարության, ցտեսություն, ես այս կողմն եմ գնում: Հավատացնում եմ ձեզ, լավ կանեիք, որ ձեր փողերը ետ առնեիք, և ավելի լավ կանեիք, որ այդ փողերը ուղարկեիք Աշխենին իրենց աղքատ ուսումնարանի համար գործադրելու: Բայց այդ դուք գիտեք: Ցտեսության: Ցտեսություն, Եվա: Այդ ի՞նչ է, մրսու՞, — հարցրեց նա զարմանալով Եվայի դեմքի տարօրինակ գունատությունից:

Եվան հազիվ նկատելի կերպով շփոթվեց նրա թափանցող հայացքից:

— Այո, ցուրտ է, — կամաց արտասանեց նա և ավելացրեց — Այս քանի օրս մի քիչ տկար եմ զգում ինձ:

— Որ այդպես է, ինչո՞ւ էիր այս սառնամանիքին դուրս եկել տնից: Հիշո՞ւմ ես, Եվա, որ ձեր տանը Բազենյանի հետ վիճաբանության բռնվելուցս հետո, երբ գնում էի, նախասենյակում հարցրիր ինձ, թե ինչո՞ւ էի այնպես հարձակվում նրա վրա, և մինչև անգամ ասացիր, թե նրա մեջ մի գիծ կա, որ զարմանալի կերպով հիշեցնում է քեզ եղբորդ: Այժմ գնա տուն և լավ մտածիր, թե բնազդը խաբո՞ւմ էր ինձ, որ այնպես հարձակվում էի նրա վրա, և կա՞ արդյոք որևէ նման գիծ եղբորդ և այդ խաբեբայի միջև... Է՛, մարդիկ, մարդիկ, ինչպես հեշտ եք խաբվում: Բայց — այդպես, թե այնպես, վերջապես: Այս իմ սովորական երգն է, որ կրկնում եմ միշտ, երբ տեսնում եմ, որ բանը բանից անցած է արդեն: Դե՛հ, գնացեք, ցտեսություն:

22

Աղջկա հետ որ տուն գնաց, Մարությանը պատմեց կնոջը, թե ով է եղել Բազենյանը և թե ինչպիսի խաբեբայության զոհ են դարձել իրենք նրա ձեռքին: Այդ բանն այնքան անսպասելի էր Թեկլեի համար, այնքան ապշեց նա, որ երկար ժամանակ չէր կարողանում լավ ըմբռնել, թե ինչ է ասում ամուսինը: Դրան նպաստում էր այն հանգամանքը, որ ամուսինը, սաստիկ գրգռված, պատմում էր կցկտուր բառերով, կարծես աշխատում էր շուտ վերջացնել այդ ծանր բացատրությունը: Կինն իր չհասկանալովն այնքան չարչարեց ամուսնուն, որ Մարությանը, վերջապես, դուրս եկավ համբերությունից:

— Օհ, ի՞նչ բթամիտն ես եղել, — հանկարծ բռնկեց նա և, ավելի զայրացած այն բանից, որ այդպիսի կոպիս բառ թոցրեց բերանից, հեռացավ իր առանձնասենյակը: Թեկլեն այս անգամ ձեռքն առավ աղջկան և նրան էլ բավական կչարչարեր, եթե Եվան կատարյալ հանգստությամբ, թեև համառոտ, բայց շատ պարզ կերպով չպատմեր նրան այն բոլորը, ինչ որ իմացել էր օր. Սահակյանից Բազենյանի մասին:

— Մի՞թե այդ ճշմարիտ է, մի՞թե այդ ճշմարիտ է, — կրկնում էր Թեկլեն ապշած — Այնպես խոսողը — խաբեբա՞ ... Սուրենիս ազատողը — խաբեբա՞: Այդ անկարելի է, այո անհավատալի է: Ուրեմն մեր փողերը մի ավազակի ձեռք են ընկել, ուրեմն նամակն էլ իզուր ենք հանձնել նրան: Տեր աստված, մի՞թե այդ ճշմարիտ է, մի՞թե այդ կարելի է:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

«Մի՞թե այդ ճշմարիտ է, մի՞թե այդ կարելի է՞», — մտքում կրկնում էր Եվան մոր բացականչություններն այդ գիշեր անկողնում պառկած: Նրա դեմքի վրա հիվանդոտ, դառն մի ժպիտ էր խաղում շարունակ, և այդ ժպիտը, կարծես, ասում էր՝ մի՞թե այլևս տարակուսելու տեղիք կա. ամեն բան պարզ է հայելու նման. դիմակը վերևից մինչև ներքև պատռվել, և Բազենյանը կանգնած էր իր այլանդակ հոգու ամբողջ մերկությամբ: Եվ Բազենյանի այդ պատկերն այնքան ավելի գարշելի էր, որքան գրավիչ էր գաղտնիքը բացվելուց առաջ: Զարմանալի հանգստությամբ Եվան դիտում էր իր հոգու աչքերով այդ գարշելի պատկերը, և զգում էր, որ իրեն այնքան տանջող սիրո նշույլն անգամ չի մնացել իր սրտի մեջ: Նրան թվում էր այժմ, թե այդ սերը ոչ այլ ինչ է եղել եթե ոչ անտանելի մի կեղտ, որ բարերար մի ձեռքով հանկարծ ջնջվել, անհետացել է, անհուն թեթևություն պատճառելով իրեն: Այլևս չեն կարող լինել անհանգիստ սպասումներ, անքուն գիշերներ, հարատև լարված գրություն, սարսափ ու զղջում. վերջացավ, անցավ այդ բոլորն իբրև ծանր մի պատրանք: «Օ՛, որքան բախտավոր եմ, որքան շնորհակալ եմ օր. Աահակյանից, որ այսպես թեթևացրեց հոգիս», — շշնջամ էր նա:

Վերջին օրերից հետս այդ առաջին գիշերն էր, որ Եվան քմեց շատ հանգիստ, իսկ առավոտյան այնքան առողջ ու զվարթ էր զգում իրեն , որ նրա հոգին, կարծես, ոչ մի ծանր հուզման չէր ենթարկվել: Նա բորովին անտարբեր մնաց մինչև անգամ այն ժամանակ, երբ թեյ խմելու համար դուրս գալով սեղանատան, տեսավ, որ հայրն ու մայրը շատ վատ տրամադրության մեջ են: « Խեղճեր, — մտածեց նա անկարեկից կերպով, — ի՞նչ եք զգացել դուք՝ համեմատած իմ զգացումների հետ»: Եվ, մինչև անգամ ժպտալով, նստեց իր սովորական տեղը, հոր մոտ:

Մարությանը, չնայելով իր վատ տրամադրության, հավատարիմ էր մնացել իր ամենօրյա սովորությանը — թեյի ժամանակ լրագիր կարդալուն: Թեկլեն նորից սկսեց երկար ու բարակ բացականչությունները Բազենյակի մասին: Ամուսինը համառորեն լռում էր, աչքերը լրագրին տնկած, բայց վերջը, համբերությունից դուրս գալով, լրագիրը հանկարծ մի կողմ շպրտեց և այնպես պինդ գոռաց կնոջ վրա, որ Թեկլեի բերնից դուրս թռած բացականչություններից մեկը կիսատ մնաց, իսկ փոքրիկ Սուրենը, որ, մոր կողքին նստած, հանգիստ վայելում էր իր հացը մեղր ու կարագով, վախից վեր թռավ տեղից:

— Դարդդ այն փողի համա՞ր է, որ տվի նրան, — բացականչեց Մարությանը, — Ջհաննամը, թող այդ փողը մի վարձատրություն լինի նրան, որ մեր երեխայի կյանքը փրկեց վտանգից:

— Հայրիկ, ի՞նչ հարկավոր է, որ այդպես գրգռվում ես, — ասաց Եվան հանդարտ, հաշտեցնող եղանակով, — Ավելի լավ չէ, որ այդ մասին ամենևին չխոսենք:

— Այո, այլևս ոչ մի խոսք այդ ավազակի մասին: Վաղը նա գալու է, եթե միայն արդեն չի ծլկել այստեղից, և ես շան պես դուրս կանեմ նրան մեր տնից:

— Ինչո՞ւ այդպես խիստ, հայրիկ, ավելի լավ չէ՞ քաղաքավարի կերպով հասկացնես նրան, որ այլևս չի կարող տեղ ունենալ մեր տանը: Այդպես ավելի ազդու կլինի:

— Ոչ, շան պես, շան պես — կրկնեց Մարությանը — Ոչինչ ինձ այնքան չի զայրացնում, որքան նրա անամոթ լրբությունը, որ մեզնից առավ Արմենակին գրած նամակը՝ իբր թե նրան տանելու, մինչդեռ այդ նամակը պետք է պատռեր և դեն շպրտեր, ինչպես արդեն արել է, իհարկե:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ահա այդ է, որ իր ինձ այսպես այրում է, և ոչ թե քո՝ նրան տված փողը, — նկատեց Թեկլեն ամուսնուց սաստիկ նեղացած:

— Տեսնո՞ւմ եք, դուք դարձյալ սկսեցիք, — ասաց Եվան նույն հանդարտ, նույն հաշտեցնող եղանակով: — Ի՞նչ մեծ ցավ է այդ նամակը, ուրիշը կգրենք, ի՞նչ կա որ:

— Հարյուրը կգրես, բայց տանողն ո՞վ է, — բարկացած կանչեց մայրն աղջկա վրա:

— Միևնույն է, Բազենյանն էլ խո չպետք է տաներ:

— Բաս ինչո՞ւ էր առնում, որ չպետք է տաներ, այն անաստվածը, այն անխիղճը...

— Թիու, — թքեց Մարությանը զայրագին և նորից ձեռքն առավ լրագիրը:

Եվան տեսավ, որ իր միջամտությունը, հանգստացնելու փոխարեն, ավելի ևս գրգռում է հորն ու մորը, ուստի ավելի լավ համարեց լռել:

— Դուք ամենևին ուշադրության չեք առնում իմ դրությանը, — շարունակեց Թեկլեն լացակումած ձայնով, և նրա աչքերը լցվեցին առատ արցունքով: — Քանի ժամանակ է նամակ չունինք, իսկ այնտեղ այնպիսի բաներ են կատարվում... Գիշերները քուն չունիմ... Աստված գիտե, թե ինչեր եմ մտածում... Իսկ դուք ամենքդ էլ դեռ ինձ վրա եք հարձակվում:

Եվ Թեկլեն թաշկինակը պինդ սեղմեց աչքերին, հազիվ կարողանալով զսպել հեկեկանքը:

Եվան իր մեծ-մեծ աչքերով նայեց մորն անհուն կարեկցությամբ և ուզում էր քաջալերական խոսքեր ասել, բայց տեսավ, որ սաստիկ զգացվել է մոր սրտաճմլիկ խոսքերից և ինչ-որ մի բան, հակառակ իր կամքին, եկել դեմ է առել բկին:

Մարությանը դարձյալ լռում էր համառորեն, լրագիրը ոչ թե կարդում, այլ ուղղակի ճմռում էր ձեռքին, բայց ցույց էր տալիս, թե կարդում է:

Եվան արմունկներով հենվեց սեղանին և դեմքն առավ ձեռքերի մեջ: Բազենյանի հմայքից ազատվելուց հետո այս առաջին անգամ էր, որ նա սկսեց լրջորեն մտածել իր հեռացած եղբոր վիճակի մասին, մոր խոսքերի ազդեցության տակ: Հիրավի, ի՞նչ է պատահել Արմենակին. ինչո՞ւ այսքան ժամանակ մի տեղեկության չի տալիս իր մասին, ժամանակ չու՞նի նամակ գրելու թե հիվանդ է: Եվ, առհասարակ, ի՞նչ է կատարվում արդյոք այնտեղ: Եվան հանկարծ հիշեց Բազենյանից առած հեղափոխական թերթը և հիշելուն պես վեր կացավ, անցավ իր սենյակը և վերարկուի գրպանից հանեց թերթը: Ձեռքը թերթին կպչելուն պես նրան թվաց, թե քթին դիպավ ճիշտ միևնույն անտանելի քացախած հոտը, որ փչում էր Բազենյանի բերնից երեկ երեկո հյուրանոցում նրան այցելած ժամանակ: Այդ հոտի հետ միասին Եվայի մեջ մի ակնթարթում վերարտադրվեց Բազենյանի պատկերն իր բարոյական բոյոր տգեղությամբ, այնպես, ինչպես ներկայացրել էր նրան օր. Սահակյանը: Եվ Եվան, որ մինչև այժմ այնքան հանգիստ էր, հանկարծ գրգռվեց այնպիսի մի անզուսպ գարշանքով, որ քիչ մնաց թերթն ուղղակի շպրտի վառարանի մեջ ճրթճրթացող կրակը: Սակայն զսպեց իրեն, և հիվանդոտ, դառն ժպիտը նորից ծամածռեց նրա գեղեցիկ դեմքը: «Ինչո՞ւ, — մտածեց նա — Մեղավո՞ր է

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

այս խեղճ լրագիրը, որ նա իր բազմաթիվ զենքերից մեկն է շինել՝ միամիտներին խաբելու համար»: Առաջվա հանդարտությամբ վերադարձավ ծնողների մոտ, նստեց լուսամուտի առաջ և սկսեց թերթել լրագիրը:
Նախ կարդաց մանր լուրերը, ուր մի առ մի հիշատակվում էին զանազան տեղերից ստացված նվերները, հայտնվում էին տեռորի ենթարկված մի քանի մատնիչների անուններ, հաղորդվում էին հալածանքի և բռնության նորանոր դեպքեր: Այդ լուրերի շարքում Եվան սկզբում զարմացած, հետո անհուն զոհունակությամբ կարդաց մի լուր, ուր մերկացվում էր Բազենյանի իսկական անձնավորությունը: Կուսակցության օրգանը, բացեիբաց մերժելով Բազենյանի մասնակցությունն այն գործին, որի անունով փողեր է հավաքել, հասարակությանը զգուշացնում էր այդ «խաչագողից» և «սուրբ գործի պարազիտից»: Քիչ մնաց, որ Եվան վեր թռչեր ուրախությունից և այդ հայտարարությունը բարձրաձայն կարդար ծնողների առաջ, բայց խելացի համարեց առժամանակ պահել այդ բանը, մինչև որ հայրն ու մայրը բոլորովին կհանգստանան: Նա անցավ առաջնորդող հոդվածին, որի մեջ խմբագրությանը խիստ հարձակումներ էր գործում ազատ-կծու լեզվի ամենազորավոր արտահայտություններով: Այնուհետև Եվան աչքի անցկացրեց մի քանի ուրիշ հոդվածներ և թղթակցություններ: Թղթակցությունների մեջ նրա առանձին ուշադրությունը գրավեց մի նամակ, որ, ինչպես երևում էր, վերջին դեպքերի ընդհանուր մի տեսության էր պարզ ու հասու լեզվով գրված: Եվան ագահորեն սկսեց կարդալ այդ նամակը: Ընթերցման միջոցին նրա սիրտը հանկարծ սկսեց արագորեն բաբախել և դեմքը մի ակնթարթում մեռելի գույն ստացավ...

Մեկ էլ հայրն ու մայրը լսեցին սարսափելի մի ճիչ, այնքան սարսափելի, որ Թեկլեի ձեռքից վայր ընկավ թեյի բաժակը և շրխկալով փշրվեց հատակի վրա: Հայրն ու մայրն իսկույն վեր թռան տեղից և վազեցին դեպի աղջիկը:

Եվան քարացել էր աթոռի վրա և անմիտ չռած աչքերով նայում էր ձեռքին բռնած լրագրի տողերին, կարծես այդ տողերը զարհուրելի օձեր լինեին, որոնք շարժվում էին իրենց լպրծուն մարմնի ահաբեկող-ճկուն գալարումներով, և նա չէր կարողանում աչքերը հեռացնել դրանցից:

— Ի՞նչ պատահեց, Եվա, ի՞նչ պատահեց, — կանչեցին Մարությանն ու Թեկլեն սաստիկ վախեցած:

— Տեսեք, տեսեք... Արմենակը... — խելագարի նման արտասանեց Եվան, մատը դնելով կարդացած վերջին տողերի վրա: Նրա ձեռքը սաստիկ դողում էր:

Մարությանը լրագիրը խլեց նրա ձեռքից:

— Ի՞նչ կա այստեղ... ի՞նչ կարդացիր... Արմենա՞կն, ասում ես... Այս ի՞նչ թերթ է է ... Հա ... Որտե՞ղ կարդացիր Արմենակի մասին...

Եվան վեր կացավ տեղից:

— Տեսե՛ք, տեսե՛ք, — կրկնեց նա՛ — Արմենակը... Ա՛յ, այստեղ... Չէ՛, այստեղ չէ... Ա՛յ... Չէ, սպասեցեք, այդ էլ չէ... ո՞րտեղ է.. — Ա՛յ... Ո՛ւֆ, չէ: — նա աչքերը պինդ տրորեց ձեռքերով և

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

դողացող մատը նորից սկսեց շարժել լրագրի տողերի վրա: — Այ, այ, — ,սարսափելի շարժումներով արտասանեց նա, վերջապես գտնելով կարդացած վերջին տողերը:

Մարությանն ագահ աչքերով սկսեց լափել այդ տողերը: Ակզբում կարդամ էր ցածր, բայց հետո նրա ձայնն սկսեց հետզհետե բարձրանալ և վերջն արդեն կարծես խելագարի ճիչեր էին թռնում նրա բերանից:

Լրագիրը դուրս պրծավ Մարությանի ձեռքից, և բարակ, խշխշուն թերթիկները, բաժան-բաժան եղած, թրթռալով օդի մեջ, թեթև ցրիվ եկան հատակի վրա: Նրա ծնկները սաստիկ դողդողալով, թուլացան, և նա, ձեռքով հենվելով լուսամուտի տախտակին, կամաց, կարծես խիստ հոգնած, նստեց աթոռի վրա, զգալով, որ աչքերը մթնում են:

Նրան ուշքի բերեց ինչ-որ փափուկ և ահագին մարմնի ուժգին մի հարված, որ հանկարծ դիպավ նրա ծնկներին և վայր ընկավ: Նա բաց արեց աչքերը և կարծես երազի մեջ տեսավ կնոջն իր ոտների առաջ, հատակի վրա տարածված...

Լրագրի մեջ հիշատակվում էր Արմենակ Մարությանի չարաչար մահը թրքական ահարկու բանտի մեջ...

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

1

Շահյանը ճաշը նոր վերջացրել և, ըստ սովորականին, պառկել էր, որ քնի, մեկ էլ վերմակի տակից լսեց, որ դուռը բացվեց զգուշորեն:

— Լևոն, — լսեց նա մոր ձայնը:

Այդ ձայնը տարօրինակ շշնջյունով և խիստ խորհրդավոր հնչեց նրա ականջին: Վերմակը արագ ետ քաշեց դեմքից և հարցական հայացքով լուռ նայեց մոր աչքերին:

— Ինչ-որ կին է եկել, քեզ է ուզում տեսնել:

— Կի՞ն... ի՞նչ կին, — զարմացավ Շահյանը:

— Չգիտեմ:

Շահյանը դեն շպրտեց վերմակը և նստեց: Ինչքան էլ որ նա հետաքրքրությամբ հարցուփորձ արեց, այնուամենայնիվ մոր պատասխաններից չկարողացավ իմանալ, թե ով կարող էր լինել իրեն տեսնել կամեցող կինը: Շահյանի մայրն ինքն անձամբ չէր տեսել այդ կնոջը, այլ ասում էր այն, ինչ որ ասել էր իրեն նրան ներս հրավիրած ծառան: Շահյանի հետաքրքրությունը խիստ լարվեց մանավանդ այն ժամանակ, երբ իմացավ, որ այցելու կինը չափազանց կարևոր գործ ունի իր հետ և անպատճառ ուզում է տեսնել իրեն: Այդպիսի անծանոթ մի հյուրի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

այցելություն այնպիսի եզակի երևույթ էր նրա փակ կյանքի մեջ, որ մինչև անգամ իր ծուլությանը հատուկ դժգոհություն չզգաց նա, երբ տեսավ, որ ստիպված է խանգարել իր սովորական հանգիստը:

Իսկույն վեր կացավ, կարելույն չափ շտապով լվացվեց, հագնվեց, մազերը սանրեց, շտկվեց, թաշկինակով սրբեց ակնոցի ապակիները, դրեց աչքերին և սրտի թեթև դողոցով դիմեց դեպի հյուրասենյակ, ուր ծառան ներս էր հրավիրել այցելու կնոջը:

Հյուրասենյակում սպասող այցելուն պանի Զդաննիչն էր: Նախասենյակում նա չէր հանել իր երկայն ու լայն վերարկուն, որի սպիտակ մորթուց կարված օձիքի երկայն ու գանգուր մազերն օձապտույտ իջնում էին ուսերից: Գլխին փաթաթած էր նուրբ գործվածքի մետաքսյա սև շալ, որի տակ նրա խիստ հարուստ մազերը, ծոծրակի վրա հավաքված, սար էին կազմել: Շահյանին սպասելով ետ ու առաջ էր քայլում հյուրասենյակի երկարությամբ փռված գորգի վրա, և նրա երկայն վերարկուի փոքր-ինչ ցեխոտ փեշերը ետևից քարշ էին գալիս գետնին:

Այն հանգամանքք, որ այցելուն պանի Զդաննիչն էր, այնքան անակնկալ էր Շահյանի համար, որ հյուրասենյակը մտնելուն պես ապշած կանգ առավ ակամա, մոռանալով հյուրասիրության ամենատարրական պայմաններն անգամ:

— Տեսնում եմ, որ չէիք սպասում, թև ես կարող եմ լինեի — խոսեց պանի Զդաննիչն, արագ մոտենալով և մեկնելով նրան իր ձեռքը, որի վրա ձեռնոց չուներ: — Ներեցեք, խնդրում եմ. տեսնում եմ, որ ձեզ խիստ անժամանակ եմ անհանգստացրել:

Շահյանը խիստ շփոթված, բայց պինդ սեղմեց նրա տաք ձեռքը և արագ շարժումներով, անկապ բառերով խնդրեց, որ նստի:

Պանի Զդաննիչը նստեց Շահյանի առաջարկած բազկաթոռի վրա, նախապես վերցնելով վերարկուն ու գլխի ծածկոցը: Շահյանը ծառայություն մատուցանելու նախապատրաստ մարդու արագությամբ առավ նրա ձեռքից վերարկուն, որը զարմանալի թեթև թվաց, տարավ դրեց աթոռներից մեկի վրա և նույն արագությամբ մի աթոռ առնելով, մոտ բերեց, բայց չնստեց: Նոր զգաց, որ հյուրասենյակում բավական ցուրտ էր, որովհետև երկար ժամանակից ի վեր վառարան չէր վառվել այդտեղ, ուստի պանի Զդաննիչին հրավիրեց իր հյուրասենյակը, որտեղ վառարանն ամեն օր վառվում էր: Բավական կոկիկ կահավորված և զարդարված տաք առանձնասենյակում պանի Զդաննիչին բազմեցրեց մութաքաներով և ասեղնագործ թավշյա բարձիկներով զարդարված փոքրիկ բազմոցի վրա, իսկ ինքը դարձյալ մի աթոռ, մոտ բերեց, բայց դարձյալ չնստեց: Այժմ նա այնքան տիրապետում էր իրեն, որ կարողացավ, թեև անշնորհք կերպով, իր «անչափ ուրախությունը» հայտնել պանի Զդաննիչի անսպասելի այցելության համար:

— Անսպասելի ոչ թե միայն ձեզ, այլև ինձ համար,պարոն Շահյան, — վրա բերեց պանի Զդաննիչը և նայեց նրա ակնոցներին խիստ տխուր ժպիտով: — Այս իմ առաջին այցելությունն է, որ երևի և վերջինը լինի:

— Դուք գնո՞ւմ եք:

Պանի Զդաննիչը ծանր թառանչ արձակեց:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Այո՛, պարոն Շահյան, ես հեռանամ եմ, — ծանր հանդիսավոր ձայնով արտասանեց նա, իր հանգիստ դառնությամբ լի աչքերը չհեռացնել Շահյանի ակնոցից: Հեռանում եմ ամեն կերպ ստորացած, ամեն կերպ անարգված, ամեն կերպ... խատառակված:

Նրա լայն բացած աչքերի կոպերը և լիքր կզակը դողդողացին: Նա շրթուքները պինդ սեղմեց իրար այն մարդու նման, որի սիրտը հանկարծ լցվում է: Այնուհետև, առանա շտապելու, հանեց թաշկինակը և սկսեց ծայրով սրբել արտասվակալած աչքերը:

Շահյանը չափազանց հետաքրքրվեց, նա նոր էր տեսնում, որ պանի Զդաննիչի մեջ մեծ փոփոխության էր կատարվել: Արտաքինով այդ կինը նույնն էր, — նույն հսկա, «սարսափելի» գեղեցիկ ե վեհանձն կինը. — բայց նրա խորհրդավոր խոսքերը, նրա ճնշված ձայնը, հուսահատական հայացքը վերջապես այդ արտասուքը... ի՞նչ էին նշանակում դրանք ... Շահյանը կամաց նստեց աթոռի վրա և գրեթե շշնջալով, կարծես վախենալով, հարցրեց.

— Պանի Զդաննիչ, ի՞նչ է պատահել:

Պանի Զդաննիչը թաշկինակը հեռացրեց աչքերից:

— Մի՞թե, հիրավի, դուք ոչինչ չգիտեք, — հարցրեց նա արագախոսությամբ, — Մի՞թե գոնե չեք կասկածել ...

— Ի՞նչ:

Պանի Զդաննիչը կարճ ժամանակ զարմացած նայեց Շահյանի աչքերին: Մի տեսակ մանկական վախկոտ ապշություն արտահայտող այդ անալի աչքերն այնքան բարի, այնքան միամիտ էին և այնպիսի վստահություն ներշնչող, որ պանի Զդաննիչը նստած տեղում ակամա մի շարժում գործեց, որով կարծես ուզում էր մոտենալ նրան և առնել նրա ձեռքը:

— Լսեցեք, պարոն Շահյան, — շշնջաց նա նույն արագախոսությամբ և նրա ձայնը դողում էր կոկորդի մեջ: — Թեև իսկապես ոչ դուք եք ճանաչում ինձ, ոչ ես ձեզ, բայց և այնպես ինձ թվում է, թե սիրտս չի խաբում ինձ, որ եկել եմ ձեզ մոտ, իբրև եղբորս մոտ, որի առաջ կարող եմ թափել սրտիս բոլոր դառնությունը... Այո, դուք չգիտեք, թե ով եմ ես, և եթե իմանաք, պիտի ապշեք, թե ինչպես ես այժմ խոսում եմ ձեր մոտ այնպիսի հուսահատությամբ, այսպես լաց եմ լինում ձեր առաջ:

Եվ պանի Զդաննիչն այս անգամ հեկեկաց, թաշկինակը պինդ սեղմելով աչքերին:

Շահյանը փշաքաղվեց և չափազանց անհարմար դրության մեջ զգաց իրեն: Մինչև այժմ պանի Զդաննիչի վրա նայում էր այն աստիճան պատկառանքով, այդ կնոջ արտաքինն այն աստիճան ճնշում էր նրան իր սքանչելի վեհությամբ, իր տիպական գեղեցկությամբ, որ այժմ այդ հպարտ կնոջ հեծկլտանքը կատարյալ մի դիսոնանս էր առաջացնում նրա զգացումների և տպավորությունների միջե: Առաջվա վեհանձն, իշխող, ընկճող պանի Զդաննիչն ընկել էր իր բարձրությունից այն աստիճան, որ այժմ դարձել էր պարզապես ողորմելի, կարեկցություն շարժող հասարակ մի կին: Շահյանը հիշեց, որ պանի Զդաննիչին այդպիսի դրության մեջ, թեև ոչ պաբաբար և հեռվից, տեսել էր մեկ էլ «Լոնդոն» հյուրանոցի միջանցքում, երբ նա

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

լացակումած դուրս եկավ Բազենյանի սենյակից: Այդ հիշողությունը Շահյանի մտքի մեջ կայծակի արագությամբ վերարտադրեց պանի Զդաննիչի և Բազենյանի միջև եղած խորհրդավոր հարաբերությունների այն պարագաները, որոնց ինքն անձամբ ականատես էր եղել նախ «Միխայլովո» կայարանում, հետո «Լոնդոն» հյուլրանոցում հիվանդ Բազենյանին այցելած ժամանակ: Եվ նա, որ մինչև այժմ լոկ ենթադրություններով էր գոհացում տալիս իր ակամա հետաքրքրությանն այդ հարաբերությունների իսկական բնավորության մասին, այժմ միանգամից, թեև ոչ բոլորովին, կարծես գլխի ընկավ, թե ի՞նչ էին նշանակում պանի Զդաննիչի կցկտուր խոսքերը, նրա հուսահատական հեկեկանքը...

Մինչդեռ Շահյանն, այդ հայտնագործությունից ապշած խոսք չէր գտնում ասելու, պանի Զդաննիչը, թաշկինակն աչքերին սեղմած, շարունակում էր զսպած կերպով հեծկլտալ, որից նրա հսկայական մարմինը ցնցվում էր ամբողջապես:

Հանկարծ վերին աստիճանի անկեղծ և հարգական-կարեկցական մի զգացում շարժեց Շահյանի սիրտն այն աստիճան, որ նա մոռացավ իր բնածին ամոթխած անվստահությունը և, մեքենայաբար վեր կենալով, մոտեցավ պանի Զդաննիչին:

— Պանի Զդաննիչ, — շշնջաց նա: — Հանգստացեք, խնդրում եմ:

Պանի Զդաննիչը հանկարծ դադարեց հեծկլտալուց, արագ վեր կացավ տեղից և հուսահատական աղերսանքով առավ նրա ձեռքը:

— Պարոն Շահյան, սիրելի բարեկամ, — արտասանեց նա, արտասուքը կուլ տալով: — Աններելի անմտություն է, թե ճակատագիրս, ձգել է ինձ այս օտար, այս անծանոթ քաղաքը, ուր բացի ձեզնից, ոչ մի բարեկամ չեմ ճանաչում, չունիմ: Եվ ահա ես եկել եմ ձեզ մոտ, իբր մի մարդու մոտ, որը, հավատացած եմ, կհասկանա ինձ, կմտնի դրությունս. չի դատապարտիլ ինձ և... չի խնայիլ իր օգնությունը: Ինձ չափազանց հեռու կտանի, եթե պատմեմ ձեզ, թե ի՞նչն է ստիպել ինձ, որ եկել եմ ձեր դուռը: Բավական է ասեմ, որ ձեր ընկերոջ՝ Բազենյանի շնորհիվ ես այժմ զրկված եմ միանգամայն ոչ թե միայն իմ դիրքից, իմ անունից, իմ պատվից, այլև իմ ամբողջ կարողությունից... Նա բերեց ինձ այստեղ, ձգեց մենակ ու անօգնական և... փախավ: Փախավ ամենաանարգ կերպով, փախավ թաքուն, գողի նման ... Եվ, ահա, ստիպված եկել եմ ձեզ մոտ ... Ուզում եմ վերադառնալ... միջոց չունիմ, որովհետև կողոպտված եմ... Եթե դուք... Ես պատրաստ եմ մուրհակ... տոկոս տալ...

Շահյանը կամաց ազատեց իր ձեռքը ցնցողաբար սեղմող ձեռքի միջից:

— Որքա՞ն կկամենայիք, — հարցրեց նա հանգիստ, լուրջ ձայնով:

— Այսպես... մի երկու հարյուր... ավելի չէ: Ես պատրաստ եմ...

Շահյանը ձեռքի շարժումով հասկացրեց նրան, որ հարկավոր չէ այդ մասին խոսել, արագ մոտեցավ գրասեղանին, դուրս քաշեց զզրոցներից մեկը և միջից հանեց կույտ թղթադրամ: Այդ իր կալվածների ամսական վարձագնի մի մասն էր, որ Ստեփանը՝ կալվածների կառավարիչը, հավաքել և մի քանի օր առաջ հանձնել էր նրան: Նա համարեց քսան հատ տասըռուբլիանոց, սակայն առանց հաշիվ տալու իրեն՝ ճիշտ քսան հատ համարեց, թե ավել կամ պակաս, որովհետե խիստ հազված էր, և դրեց պանի Զդաննիչի առաջ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Պանի Զդանևիչը սաստիկ զգացված, արտասուքն աչքերին, մոտեցավ նրան, բայց նա ետ քաշվեց և արագախոսությամբ նկատեց.

— Եթե շնորհակալություն պիտի հայտնեք, ես դուրս կգնամ:

Պանի Զդանևիչը ձեռքերն աղերսագին մեկնեց դեպի նա:

— Ոչ, ես ոչինչ չեմ ասիլ. միայն թույլ ավեք սեղմեմ ձեր բարի ձեռը:

Շահյանը պարզեց ձեռքը:

Պանի Զդանևիչը առավ այդ ձեռքն իր տաք ձեռքերի մեջ և լուռ հիացմունքով, անհուն երախտագիտությամբ սեղմեց իր փափուկ կրծքին:

2

Շահյանը մինչև փողոցի դուռը ճանապարհ ձգեց պանի Զդանևիչին: Այստեղ նա վերին աստիճանի հարգանքով բաժանվեց պանի Զդանևիչից և չհեռացավ դռնից, մինչև որ պանի Զդանևիչը, վերարկուի երկայն փեշը սառած ձյունի վրա քարշ տալով ետևից, ծռվեց փողոցի անկյունը և չքացավ: Նա դուռը փակեց և վազեց վերև:

Սանդուղքի գլխին, նախասենյակում, նրա դեմն ելավ մայրը.

— Ո՞վ էր, — հարցրեց Թամարը հետաքրքրությամբ:

Շահյանը հանկարծ բոլորովին հակառակ իր բնավորության, կատակ անելու տրամադրություն զգաց:

— Իմ սիրուհին, մայրիկ, — բացականչեց նաև — Եվ գիտե՞ս ինչու էր եկել: Եկել էր փող խնդրելու: Ես էլ տվի:

— Ես էլ հավատացի, — հանգիստ նկատեց մայրը:

— Այդ ավելի լավ է, որ չես հավատամ, — նկատեց Շահյանը ծիծաղելով: — Բայց տեսա՞ր նրան:

— Տեսա:

— Հավանեցի՞ր: Սիրուն էր, չէ՞: Ես տգեղ սիրուհիներ չեմ պահիլ:

Մայրն այս անգամ պարզապես ապշած նայեց որդու անսովոր ուրախությունից փայլող աչքերին:

— Լևո ն, այդ ինչե՞ր ես ասում,,.

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ի՞նչ է, ամենքը սիրուհի են պահում, ես էլ որ պահեմ, ամոթ բա՞ն է:

— Իհ, գնա, քո գլուխը չունեմ, — քրթմնջաց բարի պառավը, — ներս գնա, ներս, մրսեցիր: Այս ցրտին գլխաբաց էլ գնում ես մինչև դուռը ճանապարհ դնելու... Նրա աչքն էլ կարեմ:

— Օ՛, մայրիկ, զգուշացիր. ես թույլ չեմ տալ, որ նրա հասցեին այդպիսի խոսքեր ասես:

— Հիմար-հիմար մի խոսիր, ներս գնա, ասում եմ, — հրամայեց նրան մայրը բարկացած:

Շահյանը բարձրաձայն ծիծաղեց և անցավ իր ննջարանը: Բայց այնքան ուրախ էր, սրտի մեջ այնպիսի մի թեթևության, երակների մեջ այնպիսի մի գրգիռ էր զգում, որ այլևս պառկել քսել չէր կարող: Մի բան, անհասկանալի մի զորություն մագնիսի պես քաշում էր նրան դեպի առանձնասենյակը — այնտեղ, ուր մի քանի րոպե առաջ պանի Զդաննիչի հետ էր: Եվ անցավ այդ սենյակը: Մտնելուն պես նրա քթովը դիպավ պանի Զդաննիչի հագուստին սրսկված հոտավետ օծանելիքի սուր բուրմունքը, որ դեռևս կանգնած էր այնտեղ: Նա կանգ առավ ակամա և առանձին ախորժակով ծծեց սենյակի անուշահոտությամբ հագեցած օդը: Գեղեցիկ կնոջ մարմնի ներկայությունը նա զգաց միայն այժմ, երբ այդ կինն այլևս այնտեղ չէր: Շահյանի համար այդպես էր եղել միշտ, այդպես էր և այժմ, կինը մոտիկից, կինն իրականության մեջ, շոշափելի կինը նրա համար այն տպավորությունը չէր գործում, ինչ որ կինը հեռվից, կինը երևակայության մեջ, անշոշափելի կինը: Կնոջ մտացածին կինը ավելի զորեղ ազդեցություն նրա վրա, քան թե իրական կինը: Իրականության մեջ կույսի պես ամոթխած լինելով, երևակայության մեջ համարձակ էր ցինիկի և էրոտիկի պես...

Շահյանը նստեց բազմոցի վրա, այնտեղ, ուր նստած էր պանի Զդաննիչը, և հավաքեց իր վավաշոտ երևակայության բոլոր ուժն՝ ավելի որոշ կերպով մտապատկերելու համար այդ հրաշալի կնոջ կնոջ, տիպական դեմքը, նրա հարուստ մազերը, հագուստի մեջ ամուր սեղմված լիքը, իրանը: Նա առանձին հեշտանքով կանգ առավ մանավանդ այն մտապատկերի վրա, երբ պանի Զդաննիչն առավ նրա ձեռքն իր երկու ձեռքերի մեջ և սեղմեց իր կրծքին: Ինչքան փափուկ, ինչքան տաք էին այդ ձեռքերը, այդ փափուկ կուրծքը... Եվ Շահյանը հանկարծ ցանկացավ գժի պես համբուրել այդ ձեռքերը, դեմքը թաղել այդ կրծքի մեջ և հալվեք, ինչպես հալվում է ձյունը արևի տաք ճառագայթների տակ:

Կարծես մոգական մի գավազանի զորությամբ չքացել էր Շահյանի սովորական քնածությունը, երիտասարդական արյունն սկսել էր եռալ նրա երակների մեջ անսովոր տաքությամբ: Օրն անցկացրեց տենդային տանջող դրության մեջ, մթագնած ուղեղով, խառնաշփոթ անմաքուր զգացումներով: Արյունը գլուխն էր ընկել և կատաղի ալիքներով զարկվում էր քունքերին: Նրա մեջ շարժվել էր արյունը, ախտաբանական արարածը, որից ավելի զորավոր ոչինչ չկա աշխարհիս երեսին, բացի մահից: Գիշերը նրա քունը նման էր պարզապես մի մղձավանջի, որի մեջ չէր իմանամ՝ քնած է, թե արթուն. զգում էր միայն, որ սարսափելի տանջվում է:

Առավոտյան վեր կացավ սաստիկ թուլացած մարմնով և շատ վատ տրամադրության մեջ: Անլվա երեսով, խալաթը հագին նստած էր լուսամատի առաջ, մռայլ կարմրատակած աչքերով նայում էր դուրս և մտածում էր պանի Զդաննիչի մասին, երբ ծառան մտավ և մի նամակ հանձնեց նրան: Նա պատռեց ծրարը, հանեց նամակը, և նրա քթին նորից դիպավ նույն անուշահոտ օծանելիքի սուր բուրմունքը: Նամակի մեջ խոշոր, փութկոտ, համարձակ գրերով գրված էր հետևյալը.

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

«Ազնիվ բարեկամս արդյոք կհաճի՞ այսօր. երեկոյան ժամը 7-ին, կամ երբ ինքը ցանկա, շնորհ բերել ինձ մոտ («Կավկազ» հյուրանոց, N 18), եթե պ. Շահյանը չի մերժիլ այս խնդիրքը, անչափ գոհ կլինի նրանից իր երախտապարտ և իրեն սպասող

պանի Զդաննիչը»:

Շահյանը կարդաց այդ նամակը, և նրա սիրտը դող ընկավ: Այն անհամեստ միտքը, որ տանջում, խելացնորություն էր պատճառում նրան ամբողջ գիշեր, այժմ մեխի պես ցցվեց նրա գլխում, և նա սարսափեց: Դա անփորձության սարսափն էր իրականության առաջ:

Պանի Զդաննիչի վրա, երեկվա այցելությանից հետո, նա արդեն որոշ գաղափար էր կազմել.— այդ կինը Բազենյանի սիրուհին է եղել, դա նշանակում է, որ նա ծախու կին է. թեև, շատ կարելի է, ոչ սովորական ծախու կանանցից: Համենայն դեպս, պանի Զդաննիչը խստապահանջ բարոյականության տեր կին չէր Շահյանի կարծիքով: Արդ՝ ի՞նչ միտք ուներ այդ կինը, որ, իր երեկվա այցից հետո, այժմ հրավիրում էր նրան իր մոտ: Իր խնդրած օգնությունը ստացավ, ուրիշ ի՞նչ էր կամենում: Արդյոք նորի՞ց փող խնդրել, թե՝ վարձահատույց լինել...

Շահյանը չէր կարծում, թե պանի Զդաննիչը դարձյալ փող խնդրելու համար լիներ իրեն հրավիրելիս. այդպիսի դեպքում դարձյալ ինքը կգար (և ո՞րտեղից գիտեր նա իր տան հասցեն): Մնում էր երկրորդ ենթադրությունը, այն է՝ պանի Զդաննիչն իրեն հրավիրում էր վարձահատույց լինելու համար այն բանով, ինչով որ վարձահատույց են լինում առհասարակ ծախու կանայք... Ահա այդ միտքն էր, որ սարսափեցրեց Շահյանին: Այն, ինչ որ նրա վավաշոտ երևակայության համար խաղ ու պար էր, այժմ մերկ իրականության առաջ փախուստ էր տալիս վախկոտ մկան պես:

Երբեք նա, իբրև տղամարդ, իրեն այնպես թույլ, երկչոտ ու ողորմելի չէր զգացել մի կնոջ վերաբերմամբ, ինչպես այժմ: Իր կատարյալ անփորձության, իր կուսության սարսափը չէր միայն, որ ստիպում էր նրան փախչելու պանի Զդաննիչից, այլ այն ամոթի զգացումը, որ ինքն անկարող պիտի լինի այդ կնոջ հետ վարվել ազատ, համարձակ, տղամարդի պես ինչպես վարվում է վերջին գիմնազիստը:

Ամբողջ օրը խիստ տարօրինակ անհանգստության մեջ էր Շահյանը: Նա, որ երբեք սովորության չուներ սենյակի մեջ քայլելու, այժմ արագ ետ ու առաջ էր շրջում և մտածում՝ գնա՞ր, թե չգնար պանի Զդաննիչի մոտ:

Քսան անգամ կարդաց նամակը, քսան անգամ նստեց, որ պատասխան գրի, թե՝ «դժբախտաբար, գործերի պատճառով» չի կարող գնալ, — ձեռքն առաջ չէր գնում, ամեն անգամ նրա առաջ պատկերանում էր պանի Զդանեիչը իր հաղթական հասակով, իր փարթամ իրանով, իր ամբողջ էության անդիմադրելի հմայքով: Իսկ նամակից բուրող այդ գրգռիչ անուշահոտությունը, խելագարեցնելու չափ հեշտանք էր աատճառում նրան... Նրան թվամ էր, թե արհեստական հոտ չէ այդ, այլ հենց ցանկալի կնոջ մարմնի բուրմունքը...

«Օհ, կգնամ, կգնամ, մեռնեմ էլ — կգնամ... վզակոթիս տալով կտանեմ ինձ», — բացականչեց նա ինքն իրեն, շարունակելով արագ քայլել սենյակում:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Ճաշին մայրը զարմանքով տեսավ, որ որդին գինին սովորականից ավելի է խմում և մերթ մտախոհության մեջ է ընկնում, մերթ խիստ ուրախանում: Նրանց ճաշը սովորաբար անցնում էր սուս ու փուս, բայց Շահյանն այս անգամ լեզու էր կտրվել: Այս անգամ մորը պատմեց, թե ով էր երեկվա այցելած կինը և ինչու էր եկել, բայց չասաց, թե այդ երեկո հրավիրված է նրա մոտ: Ճաշից որ վեր կացավ, ուղղակի հարբած էր և գինու ազդեցության տակ հաստատ վճռել էր, որ անպատճառ պիտի գնա պանի Զդաննիչի մոտ: Եվ արբել էր հենց այն նպատակով, որ գնա:

Այդ օրը, ճաշից հետո, քնելու մասին մտածել անգամ չէր կարող — այն աստիճան գերել էր նրան ժամը 7-ին պանի Զդաննիչի մոտ լինելու միտքը: Եվ նա սրտատրոփ սպասում էր, թե երբ պետք է օրը մթնի:

Սակայն ձմեռվա կարճատև օրը շատ շուտ մթնեց: Ժամը 7-ին, պանի Զդաննիչի նշանակած ժամանակից մի ժամ առաջ, Շահյանը հագնվեց առանձին խնամքով, և մորն ասելով, թե գնում է թատրոն, դիմեց դեպի «Կավկազ» հյուրանոց: Սկզբում քայլում էր կայտառ, համարձակ, բայց հետո, քանի մոտենում էր հյուրանոցին, այնքան նրա քայերը դանդաղում էին: Ձմեռվա ցուրտ օրր կամաց-կամաց սառեցնում էր նրա արհեստական կերպով տաքացած արյունը: Սկզբում չէր զգում, բայց հետո տեսավ, որ ատամները զարկվամ են իրար: Շրթունքները պինդ հուպ տվեց, որ զսպի ամբողջ մարմնի մեջ զգացած տարօրինակ դողը, բայց և այնպես բերանի մերթ այս, մերթ այն կապը ջղաձգաբար վերև էր թռչում, իր հետ վերև ձգելով նաև վզի մկանունքները: Եվ այդ բոլորը հետզհետե սաստկանում էր, քանի մոտենում էր հյուրանոցին: Նա պարզ հաշիվ չէր կարողանում տալ իրեն, թե ինչից էր այդ տարօրինակ դողը — ցրտի՞ց արդյոք, թե՞ այն բանից, ինչ որ սպասում էր գտնել պանի Զդաննիչի մոտ:

Դեռ «Կավկազ» հյուրանոցին չմոտեցած՝ կանգ առավ պայծառ լուսավորված խանութներից մեկի առաջ, ժամացույցը հանեց և նայեց, ժամը 6-ից անցած էր 25 րոպե: «Դեռ վաղ է, — մտածեց, — մի քիչ ման կգամ այստեղ, մինչև որ 7-ը լրանա ու ետ դարձավ:

Գինու ազդեցությունը դեռևս բոլորովին չէր անցել նրա գլխից, բայց ցուրտ, թարմ օդը հետզհետե ավելի զգաստացնում էր նրան: Եվ որքան զգաստացնում էր, այնքան ավելի ու ավելի զգում էր, որ խիստ բախտավոր պիտի լիներ, եթե ստացած չլիներ պանի Զդաննիչի նամակը: Ի՞նչ էր ուզում այդ կինն իրենից: Ինչո՞ւ եկավ և վրդովեց իր հանգիստը, որ հազիվհազ ձեռք էր բերել վերստին, Եվայի և Բազենյանի հետ ունեցած միջադեպից հետո: Ինչո՞ւ առիթ տվեց, որ նրա մեջ այժմ նորից շարժվել է իր կյանքն այնքա՛ն դառնացնող անձնաքննության թույնը: Ահա՛, նա նորից լցվել է ատելությամբ դեպի ինքը, — ինչո՞ւ համար...

Սակայն, իհարկե, Շահյանը շատ լավ հասկանամ էր, որ պանի Զդաննիչն այդ բոլորի մեջ ամենևին հանցանք չուներ. այդ կնոջ հանցանքն այն էր միայն, որ գեղեցիկ էր, եկել էր Շահյանից օգնություն խնդրելու և մյուս օրը հրավերի մի նամակ էր գրել: Ճշմարիտ է, այդ նամակը պարզ չէր. բայց մի՞թե հենց նրա համար, որ այդ նամակը պարզ չէր, պանի Զդաննիչի հրավերին նա անպատճառ այն բացատրությունը պիտի տար, որ այնքան ցանկալի էր նրա վավաշոտ երևակայության համար և որը միևնույն ժամանակ, այնքան սարսափեցնում էր նրա վախկոտ կամքը: Պանի Զդաննիչը կարող էր Բազենյանի սիրուհին լինել, բայց այդ չէր նշանակում, թե նա անպատճառ և ծախու կին պիտի լինի:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանն այս անգամ քստմնեց ինքն իրենից, քստմնեց այն վատ, անմաքուր մտքերից, որոնք այնքան հուզում, այնքան պղտորում էին իր զգացումները: Շատ լավ ճանաչում էր իրեն, գիտեր, որ կնոջ վերաբերմամբ որքան որ գործնականապես անարատ է ինքը կույսի նման, այնքան տեսականապես ապականված է, այլասերված է զգացումներով, բայց չէր կարծում, թե այդ ապականումն ու այլասերումն իր մեջ այն աստիճան զարգացած կարող է լինել, որ հասարակ մի նամակի մեջ, այդ նամակից բուրող անուշահոտության մեջ անգամ ուրիշ բան չի կարող տեսնել, քան եթե միայն կնոջ տաք գրկախառնություն, կնոջ մարմնի յուրահատուկ բուրմունք... Այդ սոսկալի է. այդ նշանակում է բարոյական կատարյալ անկումն և ավելի գարշելի ու կորստաբեր անկումն, քան օր ու գիշեր անառականոցներումն անցկացնող մարդու անկումը...

Եվ Շահյանը կատարյալ հուսահատությամբ նորից կանգ առավ Գոլովինսկի պրոսպեկտի պայծառ լուսավորված խանութներից մեկի առաջ:

Երեկոն շատ ցուրտ էր. ձյունի հատ-հատ փաթիլները, փողոցի լուսավորության մեջ սպիտակին տալով, դանդաղորեն ցած էին թափվում սառած, պլպլող գետնի վրա. լայն մայթը կամաց-կամաց ծածկվում էր սպիտակ սավանով: Անցուդարձը շատ քիչ էր. Շահյանի առաջով շտապ քայլերով անցնում էին կենտուկունտ մարդիկ, վերարկուների օձիքը բարձրացրած և ձեռքները գրպանների մեջ կոխած: Բավական լավ հագնված մի կին վարդագույն այտերով, տափակ քթով հանկարծ կանգ առավ նրա առաջ և նայեց նրան տարօրինակ պլպլող աչքերով:

— Ներեցեք, պարոն, ժամը քանի՞սն է, — հարցրեց նա:

Այդ անակնկալից շփոթված, Շահյանը մեքենայաբար հանեց ժամացույցը և նայեց ժամը 7-ից պակաս էր մի քառորդ:

— Օհ, ի՞նչ վաղ է դեռ, — բացականչեց կինը, մի բոպե աննպատակ կերպով նայեց այս ու այն կողմը, հետո նորի փայլեցնելով իր տարօրինակ պլպլան աչքերը Շահյանի վրա, անցավ և կանգնեց Շահյանից մի երկու քայլ հեռու:

Շահյանը շտապեց հեռանալ և, վախենալով, որ կինը կարող է հետամուտ լինել իրեն, քայլերն արագացրեց: Բավական երկար տեղ անցնելուց հետո ետ նայեց և, ոչ մի կին չտեսնելով, հանգստացավ: «Կավկազ» հյուրանոցի առաջ կանգ առավ և նայեց քաղաքային տան ժամացույցին, սլաքները ցույց էին տալիս 7-ից 10 բոպե պակաս: Ուրեմն դեռևս ժամանակ կար մտածելու — գնա՞ր պանի Զդանևիչի մոտ, թե ոչ: Եվ ետ դարձավ: Դառնալիս հանդիպեց ժամը հարցնող կնոջը մի սպայի հետ: Կինն անցավ ուղղակի Շահյանի կողքով առանց ուշադրություն դարձնելու նրա վրա. անցավ բարձրաձայն և ուրախ խոսելով սպայի հետ, որը նայում էր նրան արուի աչքերով և ձեռքով ոլորում բեղի մի ծայրը:

Շահյանը մի քանի անգամ անցավ ու դարձավ և այդ բոլոր ժամանակ իբր թե մտածում էր՝ գնա՞ր պանի Զդանևիչի մոտ, թե ոչ, բայց իսկապես այլևս ոչինչ չէր մտածում, այլ միայն դիտում էր իր օտարոտի վարմունքը, մտքումը ծիծաղում էր իր վրա, ծաղրում էր իր անհամարձակությունը, սրտանց հայհոյում էր իրեն, կարծես ինքը չէր իր այդ դիտողության, այդ ծիծաղի, ծաղրի և հայհոյանքի առարկան, այլ մի ուրիշը, որին արհամարհում և ատում էր հոգու բոլոր կարողությամբ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Երբ քաղաքային տան ժամացույցը խփեց յոթը և մի կես ժամ էլ անցավ, Շահյանը հանկարծ թքեց ինքն իր հասցեին և վճռեց տուն դառնալ: «Այսպես է լինում միշտ, երբ մարդ ինքն իր վզակոթին տալով է ուզում իրեն որևէ տեղ տանել», — մտածեց նա:

3

Բայց հազիվ նա մի քանի քայլ էր արել, որ գնա նստի հրապարակում կանգնած կառքերից մեկը, երբ հանկարծ կանգ առավ գրեթե սարսափած:

Նրա առաջ կանգնած էր ինքը՝ պանի Զդանևիչն իր պարթև հասակով, մազածածկ վերարկուի մեջ կոլոլված:

— Բարև ձեզ, պարոն Շահյան, — բացականչեց պանի Զդանևիչն ուրախացած և ամուր սեղմեց նրա ձեռքը: — Ստացա՞ք նամակս:

— Ստացա:

— Հետո՞: Չե՞ք ուզում գալ ինձ մոտ:

Շահյանը հազիվ կարողացավ տիրապետել իրեն:

— Ինչպես չէ... Հենց դրա համար էլ դուրս եմ եկել... Բայց ... այստեղ մի փոքրիկ գործ ունեի... ասացի մեկ անգամ վերջացնեմ, հետո...

— Այդ լավ է: Ուրեմն դուք դեռ չեք մտել ինձ մոտ: Ես մեկնելու եմ վաղն առավոտյան, դրա համար դուրս եկա մի քանի բաներ գնելու և դռնապանին պատվիրել էի, որ եթե գաք, խնդրե, որ սպասեք ինձ. սենյակիս դուռն էլ, համենայն դեպս, բաց էի թողել: Բայց, իսկապես, չէի կարծում, թե կգաք, որովհետև նամակիս չէիք պատասխանել: Ես այժմ ինչ որ հարկավոր էր, առել պրծել եմ և տուն եմ գնում: Ուրեմն ձեր գործը վերջացնելուց հետո կգաք, սպասեմ, հա՞:

— Այո, ես իսկույն...

Եվ Շահյանը, ցույց տալու համար, որ իբր թե գործ ունի, արագ քայլերով հեռացավ: Նա գնաց, գնաց և, երբ բավական հեռացավ, քայլերը դանդաղեցրեց և ծիծաղեց ինքն իր վարմունքի վրա: Անցավ Դվարցովայա փողոցը, ամբողջ Գոլովինսկի պրոսպեկտը և ետ դարձավ: Ինչպես գնալիս, այնպես էլ դառնալիս կանգ էր առնում այս ու այն խանութի պատուհանների առաջ, անուշադրությամբ դիտում էր ներսը դարսված իրերը, որոնք, սակայն, պարզ չէին երևում քրտնած ապակիների միջից, և այդ բանն անում էր միմիայն նրա համար, որ կարելույն չափ ուշանա և իր ուշանալովն ապացուցանի պանի Զդանևիչին, թե ինքն իսկապես գործի համար է եղել գնացած:

Կես ժամ անցնելուց հետո վերջապես վճռեց, որ այժմ կարելի է գնալ: Չգնալ այլևս չէր կարող, որովհետև խոսք էր տվել: Բայց կեղծիքը պետք էր շարունակել. ամեն բանով այժմ ցույց պիտի տար պանի Զդանևիչին, որ ինքը, հակառակ իր ցանկության, փոքր-ինչ ուշացել է. դրա համար խիստ արագացրեց քայլերը, չնայելով որ ամեն մի քայլափոխին ոտները սահում էին

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ձյունի վրա. նույնպիսի արագությամբ բարձրացավ հյուրանոցի սանդուղքով և միջանցքում պատահած առաջին սպասավորին դիտմամբ բարձրաձայն հարցրեց N 18 սենյակը, թեև առանց հարցնելու էլ կարող էր գտնել:
Նույն րոպեին նրանցից մի քանի քայլ հեռու մի դուռ արագորեն բացվեց, և շեմքում երևաց պանի Զդաննիչը ժպտադեմ:

— Համեցեք, այս է իմ սենյակը:

Շահյանը գործից վերադարձող մարդու բռնի կեղծ աշխույժով թափ տվեց վերարկուի կրծքին և ուսերին նստած ձյունը, ներս մտավ և դռան մոտ սկսեց հանել կրկնակոշիկներն ու վերարկուն:

— Ներեցեք, գուցե փոքր-ինչ ավելի սպասեցնել տվի ձեզ, — ասաց նա:

— Բան չկա, գիշերն երկար է: Բացի դրանից, վերջին ժամանակներս ես տանջվում եմ անքնությունից: Համեցեք այստեղ:

Շահյանն, անշնորհք երեխայի պես, հետևեց պանի Զդաննիչին և թաղվեց նրա առաջարկած գահավորակի վրա: Գահավորակն այնքան ցածր էր, որ նրան թվաց, թե գետնին նստեց:

— Դուք մրսել եք: Մի բաժակ թեյ չեք մերժիլ, չէ՞:

Շահյանը պատասխանելու տեղ ժպտաց:

— Ձեզ էի սպասում, որ միասին խմենք, և վառարանն էլ պատվիրեցի, որ նորից վառեն, — ասաց պանի Զդաննիչն և արագ թայլերով ինչ-որ բանի համար անցավ սենյակի անկյանը դրված պատվարի ետևը:

«Մահճակալն անշուշտ այնտեղ է դրված», — մտածեց Շահյանը և հայացքն ամոթխածությամբ ուղղեց դեպի պատի վառարանը, որի օդանցքները վառվում էին մի շարք հրափայլ աչքերի պես: Չէր իմանում, սենյա՞կն էր շատ տաք, թե այդ րոպեին իր զգացած վախկոտությունն էր, որ հանկարծ վառեց նրա ճակատն ու ականջները, բայց ձեռքերը սառն ու թաց էին շան դնչի պես և ամբողջ մարմինը մերթ տաքանում էր, մերթ հովանում: Նրան թվաց, թե այդ բոլորը նրանից է, որ շատ ցածր է նստած, այնքան ցածր, որ ծնկները գրեթե հավասարվում են կրծքին, ուստի վեր կացավ գահավորակից և նստեց աթոռի վրա:

— Երևակայում եմ, թե ինչքան զարմացած պիտի լինեիք երեկ, որ եկա ձեզմոտ, — լսեց նա պանի Զդաննիչի ձայնը պատվարի ետևից:

— Ի դեպ. որտեղի՞ց գիտեիք իմ տան հասցեն:

— Ձեր տան հասցե՞ն... Այդ հետո կպատմեմ:

Պանի Զդաննիչը դուրս եկավ պատվարի ետևից մաքուր մի անձեռոցիկ ձեռքին, մոտեցավ թեյի սեղանին և սկսեց թեյի պատրաստություն տեսնել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Այս գիշեր ես ձեզ ամեն բան կպատմեմ, ամեն բան... Հիշո՞ւմ եք, մենք ծանոթացանք Բազենյանի մոտ, երբ նա պառկած էր հիվանդ: Այն ժամանակ արդեն զգացի, հոգիս վկայեց, վաղ թե ուշ կարոտ կլինեմ ձեր օգնությանը և վստահ կերպով կարող եմ դիմել ձեզ, որովհետև առաջին իսկ հայացքից տեսա, որ չափազանց բարի եք և...

— Այդ թողնենք, պանի Զդաննիչ:

— Այս կթողնենք, իհարկե, որովհետև չեմ ուզում կարծեք, թե յուղում եմ ձեր գլուխը:

— Երբ որ այդպես է, պանի Զդաննիչ, խնդրում եմ, էլի այդ մասին խոսեցեք, — վրա բերեց Շահյանը ծիծաղելով:

Պանի Զդաննիչը, թեյի բաժակները սրբելով, նայեց նրան և նույնպես ծիծաղեց:

— Ոչ այդ մասին այլևս չեմ խոսիլ, պարոն Շահյան, բայց պիտի խոսեմ այն մասին, թե ինչու համար եմ այս ցուրտ գիշերին նեղության տվել ձեզ ինձ մոտ գալու: Պետք է ասեմ ձեզ, որ ես չափազանց ինքնասեր եմ, և չեմ ուզում, որ դուք ինձ ճանաչեք միայն իբրև ձեր պարտապանի: Ես ուզում եմ... Չգիտեմ թե ձեր և Բազենյանի միջև ինչպիսի բարեկամություն է եղել և նա որևէ բան պատմե՞լ է ձեզ իմ մասին, բայց ինձ թվում է, ես զգում եմ, որ դուք... (պանի Զդաննիչի դեմքը հոգեկան մի սուր ցավից ծամածռվեց, և նա մեծ դժվարությամբ ավարտեց ասելիքը) նպաստավոր գաղափար չունիք իմ մասին... Ա՛հ, — հառաչեց նա անզոր զայրույթով և բաժակը շրխկացնելով վայր դրեց բաժակակալի վրա: — Դուք կարծում եք, թե էժա՞ն է նստել ինձ ձեզ մոտ գալս, ձեզնից օգնություն խնդրելս: Դժոխքի տանջանքներ եմ կրել ես, մինչև որ վստահացել եմ ձեր դռան զանգակը քաշել: Ո՞ւր եմ գնում, — ասում էի ինքս ինձ: — Ի՞նչ պիտի ասեմ: Ինչպե՞ս պիտի հայտնեմ իմ վիճակը: Ի՞նչ պիտի մտածի նա իմ մասին: Ի՞նչ աչքով պիտի նայի ինձ վրա, երբ ինքս իմ բերանով խոստովանեմ, որ Բազենյանի սիրուհին եմ եղել, որ նա ձգել է ինձ, փախել... Եվ եթե չհավատա խոսքերիս ու քաղաքավարի ճանապարհ դնի ինձ դատարկաձեռն... Ինչքան էլ համոզված լինեի, որ դուք ջենտլմեն եք, ինչքան էլ զգացումս թելադրեր ինձ, որ լիովին կարող եմ վստահել ձեր բարության վրա, այնուամենայնիվ այսպիսի անսովոր վիճակի մեջ չէի կարող ազատ լինել կասկածներից և հոռետեսությունից: Փառք աստծո, կասկածներս ու հոռետեսությունս սխալ դուրս եկան ձեր վերաբերմամբ. դուք շատ բարի գտնվեցաք դեպի ինձ, որի համար չափազանց շնորհակալ եմ ձեզնից, բայց... ձեր այս բարությունն ինձ հոգեկան ավելի մեծ տանջանք պատճառեց, քան այն, եթե դուռն ուղղակի ետ դնեիք երեսիս: Երբեք ինձ այնքան նվաստացած չէի զգացել, ինչպես այն ժամանակ, երբ դուրս եկա ձեր տնից: Ես — մի օտար կին ձեզ համար, դուք — մի օտար մարդ ինձ համար, իսկապես ոչ ես եմ ճանաչում ձեզ. ոչ դուք ինձ: Եվ հանկարծ մտնում եմ ձեզ մոտ, լաց եմ լինում ձեր առաջ, փող եմ խնդրում ձեզնից... Դուք չեք մերժում, որովհետև բարի եք, ջենտլմեն եք: Բայց մի՞թե այդ գեղեցիկ հատկությունները կարող են արգելք լինել մարդու, որն իր հոգու խորքում չկասկածե այն անծանոթի մասին, որ դիմում է իր օգնությանը և որի ասածներին ստիպված է հավատալ բարեկրթությունից դրդված: Դուք ինձ օգնեցիք իսկույն, առանց խոսելու, առանց նույնիսկ կամենալով հետամուտ լինել իմ ասածների ճշմարտությանը, և չկամեցաք անգամ, որ շնորհակալություն հայտնեմ, բայց և այնպես ինչո՞վ կարող էի հանգստացնել ինձ, փարատել կասկածս, որ ձեր սրտի խորքում ընկած կին, խաբեբա, նույնիսկ Բազենյանի գաղտնի դաշնակիցը չեք համարում ինձ...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Պանի Զդաննիչ, — այլևս չկարողանալով համբերել բացականչեց Շահյանը՝ սաստիկ զգացված և վեր կացավ տեղից: — Այդ ի՞նչ եք ասում: Մի՞թե ինձ կանչել եք նրա համար, որ վիրավորեք:

Պանի Զդաննիչը, խիստ հուզված, արագորեն մոտեցավ նրան և առավ նրա ձեռքը:

— Ախ, ազնիվ բարեկամս, ներեցեք ինձ: Ես ձեզ վիրավորել ամենևին միտք չունիմ: Ես միայն իմ դրությունս եմ պատմում: Պատմում եմ բարոյական այն տանջանքները, որ կրել եմ այն ցած մարդու պատճառով: Ինձ համար ահագին թեթևության է, որ կասկածներս ձեր մասին սխալ են եղել: Ես ուզում եմ, որ դուք, եթե չեք ճանաչում ինձ, ճանաչեք, և լավ ճանաչեք, պարոն Շահյան: Այդ ուզում եմ ոչ թե ձեր. այլ ինձ համար, իմ հանգստությանս համար: Ահ... — Լսեցեք, պարոն Շահյան, իմ թանկագին բարեկամ... Ասացի, որ վաղն առավոտ հեռանում եմ. զոհեցեք ինձ այս երեկո և թույլ տվեք անկեղծորեն պատմեմ ձեզ այն ամենը ինչ որ պատահել է. թույլ տվեք սրտիս վրա ծանրացած դառնությունը թափեմ ձեր առաջ և այնպես հեռանամ: Ես ձեզ դատավոր չեմ կարգում, — ո չ. — իմ դատավորն ես ինքս եմ, և ամենախիստ դատավորը. — ես միայն ուզում եմ ձեր առաջ, իբրև խոստովանահորս առաջ, իբրև հարազատ եղբորս առաջ, իմ խոստովանանքս անել, որովհետև, չգիտեմ ինչու, ինձ թվում է, թե այդպիսով միանգամայն հանգստացած պիտի լինիմ: Այդ բանն ուզում էի անել երեկ, բայց երեկ այնքան ճնշված էի զգում ինձ, այնքան ամաչում էի ձեզնից... Իսկ այժմ ավելի ազատ եմ զգում ինձ, և այնքան սիրեցի ձեզ որ ամեն բան պիտի պատմեմ: Ոչինչ չեմ թաքցնել ձեզնից, ամեն բան կպատմեմ այնպես, ինչպես որ պատահել է, և դուք կտեսնեք, թե որպիսի խորամանկ, խաբեբա և անաստված արարածի հետ եմ ես գործ ունեցել: Խնդրում եմ, աղաչում եմ, նստեսեք:

Շահյանը նստեց: Բոլոր ժամանակ, երբ այդպես հուզված խոսում էր պանի Զդաննիչը, նա խիստ ճնշված դրության մեջ էր զգում իրեն այդ կնոջ հսկայական հասակի առաջ, որի մեջ հրաշալի ներդաշնակություն էին կազմում ֆիզիկական ուժն ա կանացի գեղեցկությունը: Եվ այդ ճնշված դրության մեջ Շահյանն այնքան շփոթվել էր, որ հազիվ թե լսում էր պանի Զդաննիչի ասածները, այլ միայն անդիմադրելի մի զորությունից ստիպված, նայում և դիտում էր նրա զարմանալի արտահայտիչ աչքերը, հուզումից դողդողացող լիք կզակը և կզակի վրա մի խալ ցանցառ մազերով, որ նոր էր նկատում:

Պանի Զդաննիչը նորից արագ քայլերով մոտեցավ թեյի սեղանին, երկու բաժակ թեյ ածեց և շաքարի, կտրտած կիտրոնի ու մի աման պաքսիմատի հետ միասին բերեց դրեց կլորիկ սեղանի վրա, որի առաջ նստած էր Շահյանը և սուս ու փուս, շփոթմունքից դեռևս լավ ուշքի չեկած, հետևում էր նրա ջղային շարժումներին:

— Ասացեք, խնդրեմ, պարոն Շահյան, — հարցրեց պանի Զդաննիչը, մի աթոռ առնելով և նստելով Շահյանի դիմացը, — վաղուց է, որ ընկեր եք նրա հետ:

— Բազենյանի՞ հետ:

— Այո:

— Վաղուց է ... Բայց ինչպե՞ս թե ընկեր: Ես նրա հետ երբեք ընկեր չեմ եղել և նույնիսկ չգիտեմ, թե որտեցացի է և ում զավակն է: Մենք միան փոքր հասակում դասակիցներ ենք եղել: Տասը-

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

տասներկու տարի կա, որ նա կորած էր, այնպես որ մինչև անգամ բոլորովին մոռացել էի նրան: Այս աշունքին միայն նա լույս ընկավ, և նորոգվեց մեր հին աշակերտական ծանոթությունը:

— Այդպես: Իսկ նա որևէ բան պատմե՞լ է ձեզ իմ մասին:

— Ձեր մասի՞ն, — հարցրեց Շահյանը, աշխատելով հիշել թե ինչ է պատմել Բազենյանը պանի Զդանևիչի մասին: — Պատմել է:

— Ի՞նչ,

Եվ պանի Զդանևիչը հետաքրքրությամբ նայեց Շահյանի ակնոցին, որի ապակիները շողշողում էին լամպի լույսի տակ:

— Նա առհասարակ... ձեր մասին... պետք է խոստովանած, շատ բան չի պատմել — հապաղելով, և ըստ երեույթին, ամեն մի խոսքը կշռադատելով, պատասխանեց Շահյանը: — Առաջին անդամ ձեզ նրա հետ տեսա «Միխայովո» կայարանում անցած ամառվա վերջին, որ Բաթումից Թիֆլիս էի վերադառնում:

— Ա՛խ, այն դո՞ւր էիք, որ վագոնի առաջ խոսում էիք նրա հետ:

— Ես էի:

— Հետո՞:

— Նա ինձ ասաց, որ ձեզ հետ ծանոթացել է ճանապարհին, որ դուք իբրև թե գնում եք ... չգիտեմ ուր ... հա, կարծեմ, ասաց Կարս, որ ձեր ամուսինը իրր թե ծառայում է:

Պանի Զդանևիչը ծիծաղեց ակամա, բայց իսկույն էլ զսպեց իրեն և, ձեռքերը դնելով սեղանի վրա, ավելի մեծ հետաքրքրությամբ նայեց Շահյանի ակնոցներին:

— Հետո՞, — հարցրեց նա:

— Ձեր մասին այս է միայն պատմել ինձ:

— Այո միայն և ուրիշ ոչինչ:

— Ինչ վերաբերում է ձեր անձնավորությանը, — ավելացրեց Շահյանը նայելով իր թեյի բաժակին, որովհետև պանի Զդանևիչը համառ հետաքրքրությամբ շարունակում էր նայել նրա ակնոցին, — ձեր անձնավորության մասին պատմել է, որ դուք... շատ պատվական կին եք... որ դուք... առհասարակ, — անկեղծ եմ ասում, պանի Զդանևիչ, ձեր մասին նա միշտ հարգանքով է խոսել և ոչ մի աննպաստ խոսք չի ասել ինձ ձեր մասին:

— Ա՛խ, երևի դուք կարծում եք, թե նրա համար եմ ձեզ հարցուփորձ անում, որ իմանամ, թե նա լավ կամ վատ է խոսել ձեզ մոտ իմ մասին, — բացականչեց պանի Զդանևիչը ժպտալով: —

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Ո՛չ, ազնիվ բարեկամս, ես ուզում եմ միայն իմանա, թե՝ եթե նա ձեզ որևէ բան պատմեք է իմ մասին, որքա՞ն ճիշտ է պատմել, ձեզ մոտ է՞լ սուտ է խոսել ինչպես միշտ սուտ էր խոսում ինձ մոտ: Բայց ինչևիցե, այս թողնենք: Ես մի ուրիշ բան եմ ուզում հարցնել ձեզ: Ասացեք, խնդրեմ, ի՞նչ գաղափար ունիք դուք նրա մասին:

— Ես... ինչպես ասեմ... ճիշտն ասած, նրան ճանաչել չկարողացա: Այն աստիճան ճարպիկ լեզու ունի և վարվում էր այնպիսի վարպետությամբ, որ իր մասին կազմած ամեն մի աննպաստ գաղափարս իսկույն ջրում էր: Մի բանի պատճառով ես սկսել էի նրան ատել, բայց նա այնպիսի ֆոկուս սարքեց, որ նորից սկսեցի սիրել: Բայց և այնպես, ես արդեն գլխի էր ընկել, որ նա ճարպիկ աֆերիստներից մեկն է: Ինձնից բավական գումարներ կորզեց, և այժմ ձեզնից եմ իմանում, որ ծլկել է այստեղից:

— Հա, հա՛, հա ... ձե՞զ էլ է կողոպտել, — ծիծաղեց պանի Զդանևիչի դառնությամբ:

— Հապա:

Պանի Զդանևիչը ծանր թառանչ քաշեց և կարճ ժամանակ դառն մտախոհության մեջ ընկավ: Հետո ջղային մի ցնցումով սթափվեց և նայեց Շահյանին շատ լուրջ հայացքով:

— Բայց գիտե՞ք, որ նա տաղանդ էր, մեծ տաղանդ...

— Միամիտներին խաբելո՞ւ մեջ, անշուշտ, — նկատեց Շահյանը:

— Իր ցանցերը լարում էր այնպիսի ճարպկությամբ, — շարունակեց պանի Զդանևիչը, — որ զոհն ինքն իր ոտով էր գնում մեջն ընկնելու և նույնիսկ մեծ հաճույք էր զգում, որ նրա ցանցի մեջ է, իսկ հետո, երբ ուզում էր դուրս գալ չէր կարողանում... Բայց լսեցեք պատմությանս և կտեսնեք, թե որքան ճիշտ եմ ասում:

4

Ինչպես անունս ցույց է տալիս, ես լեհացի եմ, ռուսական լեհերից: Սերվում եմ լեհական մի հին տոհմից, որը երկու քաջ զինվոր է տվել մեր Կոսցյուսկոյին, 1794 թվի ապստամբության ժամանակ: Հորս չեմ հիշում. որովհետև չորս տարեկան եմ եղել, որ վախճանվել է: Մայրս սրանից տասն տարի առաջ մեռավ: Շատ խելոք կին էր և չափազանց սիրում էր ինձ, թեև շատ էլ երես չէր տալիս: Նա ինքն էր կառավարում մեր պապական բավական մեծ և արդյունավետ կալվածները, որոնք հետո, իբրև օժիտ, անցան ամուսնուս ձեռքը: Ծնողներիս միակ զավակն էի ես: Կրթությանս ու դաստիարակությանս վրա ոչինչ չի խնայված, բայց ես բավական էքսցենտրիկ բնավորություն ունեի և ընկա առաջին պատահած մարդու գիրկը: Ամուսինս իսկապես վատ մարդ չէր, բայց շուտով տեսա, որ իմ ամուսնությունը նրա հետ մի խոշոր սխալ էր իմ կողմից: Մի պակասություն աներ, որ ամենից ավելի դուր չէր գալիս ինձ. այդ նրա անհագ շահասիրությունն էր և իր ուժերից վեր խոշոր ձեռնարկությունների մեջ մտնելու ձգտումը, որին և զոհ գնաց թե մեր կալվածների մեծ մասը, և թե ինքը: Քսաներկու տարեկան էի, որ այրիացա: Շատերն էին խնդրում ձեռս, բայց ես նորից ամուսնանալու մասին մտածել անգամ չէի ուզում: Միակ այն հանգամանքը, որ ամուսնուս շնորհիվ գրեթե աղքատացել էի, մի տեսակ հակակրանք էր զարթնեցրել իմ մեջ դեպի տղամարդիկ առհասարակ: Բացի դրանից, շատ երևույթներ դիտելով, այն համոզման էի եկել, որ տղամարդիկ կնոջ վրա նայում

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

են կամ շահախնդրական, կամ անասնական տեսակետից, տղամարդիկ ամուսնանում են կամ հարստանալու, կամ գեղեցիկ կին ունենալու համար, ուրիշ տեսակետ չկա: Իսկ ես նոր էի զգում, որ կարոտ եմ սիրո, այնպիսի բուռն, անկեղծ սիրո, որ ինքն է միայն իր նպատակը: Այդպիսի բան չէի տեսնում ձեռքս խնդրողների մեջ. ամեն տեղ մեծ ուշադրություն էին դարձնում ինձ, քծնում էին առաջս, սիրո երդումներ էին անում, նույնիսկ սպառնում էին անձնասպանություն գործելու, բայց սիրտս շարժելու տեղ արհամարհանքս էին շարժում:

— Ձեր թեյը սառեց, պարոն Շահյան, — նկատեց պանի Զդաննիչը, պատմությունն ընդհատելով:

Շահյանը վերցրեց իր թեյի բաժակը:

Իսկ պանի Զդաննիչն իր բաժակից մի քանի կում արեց և շարունակեց.

— Այս միջոցներին էր, որ ծանոթացա Բազենյանի հետ: Ծանոթացա ահա թե ինչպես: Մի օր անցնում էի փողոցով (այս բանը պատահեց Վարշավայում): Հանկարծ այնպիսի մի ուժգին քամի բարձրացավ, որ ուղղակի քշում էր մարդու: Նախքան ձեռքս կտանեի, որ գլխարկս բռնեմ, մեկ էլ տեսնեմ գլխարկս արդեն գլորվում է գետնին աչք կուրացնող փոշու հետ խառնված: Դիմացից եկող մի երիտասարդ իսկույն վազեց, բռնեց, բերեց տվեց ինձ և նախքան բերանս բաց կանեի, որ շնորհակալություն հայտնեմ, անցավ գնաց:

Այդ երիտասարդը Բազենյանն էր:

Մի քանի օր հետո նրան տեսա թատրոնում, խաղամիջոցի ժամանակ, ֆոյեում: Նայեց ինձ և, չգիտեմ, ճանաչե՞ց, թե ոչ, բայց անցավ գնաց: Դարձին, երբ ուղղակի պիտի անցներ մոտովս, կանգ առա կամա և ժպտալով նայեցի նրան: Նա նույնպես կանգ առավ:

— Ինձ չե՞ք ճանաչում, — հարցրի:

— Եթե չեմ սխալվում, — ասաց, — ես պատիվ եմ ունեցել անցած օր ձեր գլխարկն ազատելու քամու ճիրաններից:

Շատ դուր եկավ ինձ առանց որևէ շփոթմունքի և վերին աստիճանի նուրբ կոմիկությամբ արտասանած այդ պատասխանը:

Ես ձեռքս մեկնեցի նրան:

— Այն ժամանակ դուք ինձ միջոց չտվեցիք շնորհակալություն հայտնելու, ուրեմն այժմ ընդունեցեք շնորհակալությունս:

— Որ այդպես է, — ասաց, — շատ ցավում եմ, որ ձեր գլխարկս ազատելիս ոտս չկոտրեցի:

— Ինչո՞ւ, — հարցնում եմ զարմացած:

— Որպեսզի իսկապես արժանի լինեի ձեր շնորհակալոությանը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Ուրիշ այսպիսի կես-քաղաքավարական, կես-հեգնական մի քանի պատասխաններից հետո նա ինձ գրավեց միանգամայն, և ես հրավիրեցի նրան օթյակս: Արտաքինով շատ գեղեցիկ էր, հագնված էր մեծ ճաշակով, վարմունքի մեջ գռեհկականության նշան անգամ չկար: Ուստի երկյուղ չունեի նրա հետ միասին նստելու: Ասենք, այդ կողմից ես միշտ հեռու եմ եղել որոշ նախապաշարումներից: Թեև ծագումով արիստոկրատ, բայց հայացքներովս դեմոկրատ եմ եղել միշտ: Այս էլ ասեմ, որ նրան օթյակս հրավիրեցի գլխավորապես մի հուսար սպայի ջգրու, որը սաստիկ ձանձրացրել էր ինձ և որին այդ երեկո պարզապես արգելել էի օթյակս մտնելու: Ինձ հետ էր ծերունի, բայց իրեն միշտ երիտասարդ ձևացնող, մորեղբայրս — ինքնահավան և խելքից մի քիչ պակաս մի արիստոկրատ, որի համար ով պան չէր — մարդ չէր: Բազենյանի արտաքինը հավանեց, բայց երբ ծանոթացավ նրա հայացքների հետ, ականջիս փսփսաց, որ ոչ մի պայմանով գործ չունենամ այդ երիտասարդի հետ: Բանն այն է, որ, երբ մոր-եղբայրս սկսել էր արիստոկրատիայի գովքն անել — այդ նրա հիվանդությանն էր, — Բազենյանը շատ հանգիստ կերպով և շատ բանավոր պատճառաբանություններով նկատեց, որ արիստոկրատիզմը մի անախրոնիզմ է մեր ժամանակներում, որ արիստոկրատիան նույն դերն է կատարել և կատարում մարդկային կյանքի մեջ, ինչ-որ պարազիտները կենդանական աշխարհում: Հետո, երբ ես նրան հայտնեցի, որ մորեղբայրս անխառն արյան տեր արիստոկրատ է, բացականչեց:

— Ինչո՞ւ այդ վաղ չէիք ասում, ես խո ավելի խիստ լեզվով կխոսեի նրա հետ:

— Բայց դուք մոռանում եք, որ ես էլ արիստոկրատ եմ թե հորս թե մորս կողմից, — նկատեցի ես ծիծաղելով:

— Ափսոս, որ ես այդ չգիտեի այն ժամանակ, երբ ազատեցի ձեր գլխարկը, թե չէ...

— Թե չէ՞...

— Շատ պարզ է. չէի ազատիլ ձեր գլխարկը, — ասաց նա կոմիկական հանգստությամբ:

Մի բան, որ չափազանց դուր էր գալիս ինձ, այդ այն էր, որ նա խոսում էր անբռնազբոսիկ կերպով. խոսում էր պարզ, համարձակ, առանց շփոթվելու, շատ անգամ կատակով, երբեմն կծու հեգնությամբ, եթե դիմացինը ծաղրելի էր, և ամենևին չէր քաշվում ոչ հասակից, ոչ դիրքից, ոչ տիտղոսից, ոչ մի բանից:

Երկրորդ անգամ նրան հանդիպեցի մի հայի վաճառատան մեջ, ուր պատահմամբ մտել էի մի քանի մանր-մունր բաներ գնելու: Նա կանգնած էր վաճառատան տիրոջ մոտ և ինչ-որ լուրջ խոսակցության մեջ էր: Ինձ նկատեց ոչ-իսկույն և նկատելուն պես արագ մոտեցավ: Բարևեց իբրև հին ծանոթ:

— Մի՞թե չեք խորշում հայի խանութ մտնելուց, — ասաց իրեն հատուկ հումորով:

— Մի՞թե կարծում եք, որ պիտի խորշեմ, — պատասխանեցի ծիծաղելով:

— Որ այդպես է, — ասաց, — ուրախությամբ ողջունում եմ մի օտարուհու, որ իրեն հեռու է պահում հայերից, ուզում եմ ասել՝ հայ վաճառականներից շատ էլ նպաստավոր գույներով չներկայացնող մի ընդհանուր նախապաշարումից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Երևում է, որ ազգային հպարտություն ունիք, — նկատեցի ես: — Այդ իհարկե, գովելի է: Բայց իզուր եք կարծում, թե մենք՝ լեհացիներս էլ կարող ենք ուրիշների նման աննպաստ գաղափար ունենալ հայի վրա. բավական է հիշենք, թե հնումն ինչ ծառայություն են մատուցել հայերը Լեհաստանում:

— Եվ, երևի, այդ ծառայությունները վարձատրելու համար էր, որ ձեր երկրում խլեցիք նրանը կրոնը, — վրա բերեց նա:

— Այդ բանում մեղադրեցեք ձեր Նիկոլին:

— Նիկոլը մերը չէր, Նիկոլը ձերն էր:

Գնեցի, ինչ որ ուզում էի. և պատրաստվում էի, որ հեռանամ, մեկ էլ տեսնեմ գնածս իրերն առավ կռան տակը:

— Ի՞նչ եք ուզում անել, — հարցրի:

— Ուզում եմ ծառայություն մատուցանել ձեզ: Ես չպետք է մոռանամ, որ հայ եմ և գտնվում եմ Լեհաստանում:

— Հետո չե՞ք վախենում, որ ի վարձատրություն ձեր ծառայության՝ խլեմ ձեր կրոնը:

— Խլեցեք թեկուզ ինձ ամբողջովին, — ասաց նա, վաճառատան դուռը բանալով առաջս:

Այսպես խոսելով և կատակ անելով հասանք մինչե մեր տան դուռը: Այստեղ գնածս իրերը հանձնեց ինձ և բաժանվեց: Շատ խնդրեցի, որ տուն մտնի, չմտավ:

Հետևյալ օրը դարձյալ գնացի այն հայի վաճառատանը, թեև ամենևին կարիք չունեի որևէ բան գնելու: Երեխա չէի, իհարկե, շատ լավ հասկանամ էի, թե ինչն է դրդում ինձ այնտեղ մտնելու: Բայց այս անգամ չտեսա այնտեղ Բազենյանին:

Այնուհետև գրեթե ամեն օր մտնում էի այն հայի վաճառատունը և միշտ էլ... հուսահատվա՞ծ ասեմ, չէ, — բարկացած էի դուրս գալիս այնտեղից: Խիստ վիրավորական էր թվում ինձ այն բանը, թե ինչո՞ւ ես ուզում էի տեսնել Բազենյանին, խոսել նրա հետ, իսկ նա չէր երևում: Ես բարկանում, զայրանում էի ինձ վրա միայն, որ անփորձ աղջկա նման կորցրեք էի խելքս, մինչդեռ ամեն բանից երեում էր, որ նա չէր մտածում իմ մասին: Այլապես, եթե ես նույնպիսի մի զգացում լինեի ներշնչած նրան, որպիսին նա էր ներշնչել ինձ, չէ՞ որ չէր կարող ինձ տեսնել չցանկանալ, ինչպես ես էի ցանկանում նրան տեսնել, մանավանդ որ ինքս էի խնդրել, որ չմոռանա ինձ:

Ըստ երևույթին, այս այսպես էլ պետք է վերջանար, բայց բախտն երևի ուրիշ կերպ էր տնօրինել:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Պանի Զդաննիչն արագ խմեց իր սառած թեյը և, վերցրեց Շահյանի արդեն դատարկած բաժակը, վեր կացավ երկրորդ բաժակը ցնելու: Այդ մի քանի րոպեի գործ էր: Այնուհետև նորից նստեց իր տեղը և շարունակեց:

— Մի երեկո ինձ մոտ հավաքված էին չորս երիտասարդ, երեքը — մեր շլյախտիչներից, չորրորդն — իմ ասած հուսար սպան. չորսն էլ մեկը մյուսից ավելի դատարկագլուխ, կանանց շուրջը քծնող, ձիերի անունով երդվող, կանաչ սեղանի սիրահար և վերին աստիճանի մեծամիտ: Երբեմն ձանձրանում, երբեմն զայրանում, բայց շատ հաճախ զվարճանամ էի այդ հիմարների վրա: Սեղանի շուրջը բոլորած՝ թուղթ էինք խաղում: Բայց ավելի շատ զբաղված էինք մի ինչ-որ շատ հիմար խոսակցությամբ: Այդ միջոցին մտավ աղախինս և մի այցետոմս տվավ ինձ: Նայեցի՝ Բազենյանի այցետոմսն էր: Իսկույն հրամայեցի, որ ներս հրավիրի, և թղթերը խառնելով, վեր կացա սեղանի մոտից:

— Վեր կացեք, պարոններ, — ասացի. — ամենքդ էլ ոտի վրա պետք է ընդունեք նրան:

— Ո՞վ է: Մինի՞ստ է եկողը, — հարցրեց մեկը:

Ներս մտավ Բազենյանը: Տեսնելով, որ ինձ մոտ հյուրեր կան, սկզբում կանգնած մնաց դռան մոտ և մի թռուցիկ խոսք ձգեց ամենքի վրա. հետո արագ մոտեցավ ինձ և բարևեց: Ես կշտամբեցի նրան, որ ինձ մոռացել էր, և ներկայացրի հյուրերիս: Մոտեցավ յուրաքանչյուրին և հարգանքով սեղմեց նրանց ձեռքը: Այդ միջոցին ակամա դիտում էի հյուրերիս և տեսնում էի, որ նրանք մի քիչ զարմացած, մի քիչ հետաքրքրված, բայց ամենքն էլ նախանձով դիտում էին Բազենյանի արտաքինը: Իսկ ես, այդ բանը դիտելով, երբեք այնպիսի ինքնագոհ հաճույք չէի զգացել, ինչպես այդ րոպեին:

Բայց նախանձն ամենից ավելի վառել էր հուսարին:

— Այս այն պարոնը չէ՞ , — դարձավ նա կիսաձայն, թթված դեմքով և բեղի սուր ծայրը ոլորելով:

— Ո՞ր պարոնը:

— Այն, որին դուք թատրոնում ...

— Նա է, նա է, — վրա բերի ես, ջգրացնելով նրան, և բռնելով Բազենյանի ձեռքից, տարա նստեցրի կողքիս:

Հուսարս այնպես ձիգ տվեց, որ քիչ մնաց պոկի, և դարձավ ընկերներին.

— Պարոններ, կարծում եմ, մենք կարող ենք շարունակել մեր խաղը:

— Բայց, ի սեր աստծո, — բացականչեցի ես, — այդ սեղանը հեռացրեք մեր մոտից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Մեր մոտից, — ստորագծեց հուսարը և բռնեց սեղանի մի ծայրից: — Օգնեցեք, պարոններ, սեղանը հեռացնենք նրանց մոտից: Կամ, — հանկած դարձավ նա ինձ, — գուցե, կհրամայեիք, որ մենք հեռանա՞նք մյուս սենյակը, որպեսզի չխանգարենք ձեզ:

— Ոչ, ոչ խնդրեմ. մենք չենք քաշվիլ ձեր ներկայությունից, — նկատեցի ես ծիծաղելով:

Սեղանը հեռացրին, և հուսարը, երևի ցույց տալու համար, որ մեզ արհամարհում է, նստեց մեջքը մեր կողմն արած: Բայց և այնպես, նա չկարողացավ դիմանալ և աթոռի վրա հանկարծ դարձավ Բազենյանի կողմը:

— Ներեցեք, պարոն, — ասաց նա, — դուք, կարծեմ, ասացիք, որ ձեր ազգը Բազենյանց է: Ես եղել եմ Կովկասում, Թիֆլիսում, և, եթե չեմ սխալվում, այնտեղ բազազ անունը տայիս են ճոթավաճառներին: Դուք ճոթավաճա՞ռ եք:

Բազենյանն սկզբում այնպիսի արագ և խիստ ու սուր մի հայացք ձգեց նրա վրա, որ ճիշտն ասած, ես վախեցա. բայց հետո ժպտաց և խիստ կոմիկական հանգստությամբ պատասխանեց.

— Այո, ձերդ գերազանցություն, ես դժբախտություն ունեմ ճոթավաճառ լինելու, որովհետև ազգանունս Բազազյանց է: Ուրիշ ի՞նչ կհրամայեիք իմանալ:

— Ուրիշ ոչինչ: Հա՛, մեկ էլ այս էի ուզում իմանա. դուք Թիֆլիսի՞ց եք եկել:

— Ոչ, ձերդ գերազանցության. Թիֆլիսի մոտ մի գյուղ կա, — այնտեղից եմ եկել:

— Վարշավ եկել եք ինչո՞ւ համար, կոշիկնե՞ր գնելու:

— Ոչ, ձերդ գերազանցություն. դուք ասացիք, որ ես ճոթավաճառ եմ:

— Դե, այդ միևնույն է:

— Ոչ, ձերդ գերազանցության, ես կարծում եմ, ճոթավաճառը այստեղ որ գա, ճոթ կգնի, բայց ոչ կոշիկ:

— Դե, ձեր արհեստից արդեն ևս ոչինչ չեմ հասկանում, — ասաց հուսարը — և մեջքը նորից մեր կողմն արեց: — Այսքանս միայն իմացել եմ, որ ձեր Կովկասի վաճառականները մաշեննիկ են:

— Մեծ մաշեննիկ, ձերդ գերազանցություն, — վրա բերեց Բազենյանը նույն հեգնական խոնարհ տոնով:

— Գալիս են խաբում այստեղի միամիտ գործարանատերերեն, ապառիկ ապրանք տանում և հետո սնանկանամ, փողորը տակովն անում:

— Ձերդ գերազանցության, թույլ տվեք նկատեմ, — հապա ասացիք, որ բան չեք հասկանում մեր արհեստից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ես իմ լսածն եմ ասում:

— Հա:

— Ի՞նչ է, սխալվո՞ւմ եմ:

— Ի՞նչպես կարող է սխալվել ձերդ գերազանցությունը: Ձեր բերանով ինքը ճշմարտությունն է խոսում:

Այդ բոլոր խոսակցությունն այն աստիճան զվարճալի էր, որ կատարյալ հաճույք էր պատճառում ինձ, մանավանդ այն տոնը, նուրբ հեգնող, խայթող տոնը, որով խոսում էր Բազենյանը: Եվ ես անդադար ծիծաղում էի: Ինձ հետ զվարճանամ էին և մյուս երեք հյուրերս, որոնք մի քիչ ավելի խելք ունեին, քան թե Հուսարը, և որոնք հետո շատ բարեկամացան Բազենյանի հետ և իրենք էին ծաղրում հուսարին, յուրացնելով Բազենյանի հեգնական տոնը:

Մի ուրիշ անգամ դեպքն այնպես բերեց, որ հուսարն ու բազենյանը դարձյալ հանդիպեցին իմ տանը: Այս անգամ ինձ մոտ էին և ուրիշ բարեկամներ ու ծանոթներ, ի միջի այլոց, և մորեղբայրս: Հուսարը խիստ գրգռված էր, որ իմ ուշադրության գլխավոր առարկան Բազենյանն էր, և, ինչպես նկատում էի, առիթ էր որոնում մի սկանդալ սարքելու: Բայց ես կարևորություն չէի տալիս այդ բանին և միայն զվարճանում էի հուսարի անզոր կատաղության վրա: Սակայն սկանդալը պատահեց: Մորեղբորս ու Բազենյանի միջև վիճաբանություն էր ծագել սոցիալական խնդիրների մասին, Ամենքս շրջապատել էինք նրան և լսում հետաքրքրությամբ: Հուսարը քաշված էր մի կողմ և լսում էր բեղերը կատաղի կերպով ոլորելով և համառորեն նայելով իր կոշիկների ծայրերին: Բազենյանը պաշտպանում էր իր գաղափարներն այնպիսի եռանդով և պերճախոսությամբ, որ մորեղբայրս վերջ ի վերջո, չկարողացավ դիմանա և գրեթե սարսափահար բացականչեց. «Դուք պարզապես անիշխանական եք, պարոն. անպատճառ ռումբ էլ կունենար ձեր գրպանում»: Հուսարը մորեղբորս այս խոսքերի վրա հանկարծ բարձրացրեց գլուխը ե ծիծաղեց շատ բարձրաձայն և շատ անբնական կերպով:

— Հայ և ռումբ, — բացականչեց նա: — Դեռևս Պուշկինն է ասել խո՝ «ты раб, ты трус, ты армяшка...»

Նա դիտմամբ. «армянин» բառն «армяшка»-ի փոխեց, որ ավելի կծած լինի Բազենյանին:

Ես նայեցի Բազենյանին և սարսափեցի, — այն աստիճան հանկարծ գույնը նետեց: Չգիտեմ, ինչ էր ուզում անեի բայց հիշում եմ, որ ձեռքն ամուր բռնեցի: Նա նայեց ինձ, սարսափով և աղերսանքով լի աչքերիս, էլ չխոսեց, հետո շատ շուտով վեր կացավ և գանց:

Հետևյալ օրն ինձ լուր տվին, որ Բազենյանը ռեստորանում, մարդկանց ներկայությամբ, ապտակ է տվել հուսարին: Լուր տվողը մորեղբայրս էր, որը, չնայելով իր ծերության և արիստոկրատիզմին, սկանդալների սիրահար էր: «Այս բանն, իհարկե, առանց մենամարտի չի վերջանա», — ավելացրեց նա: Սակայն հետևյալ օրը նույն մորեղբայրս հաղորդեց ինձ.

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Քո այդ Բազենյանին սկսում եմ կամաց-կամաց սիրել, չնայելով իր անտանելի անիշխանական հայացքներին: Գիտե՞ս ինչ է պատասխանել հուսարի ուղարկած մարտավկաներին. «Ես իմ մենամարտը վերջացրած եմ համարում, — ասել է. — նա ինձ «армяшка» անվանեց, ես նրան ապտակ տվի, արիշ ի՞նչ է ուզում»: Արևելցու պարզ ու սիրելի լոգիկա: «Բայց որպեսզի չկարծի, պարոններ, թե ես «трус» և «раб» եմ, — ավելացրել է նա, — ես նրա սուրը կհանեմ պատյանից և կկոտրեմ ձեր և իր իսկ աչքի առաջ»:

Բայց և այնպես, ինչպես երկու օր հետո իմացա, Բազենյանը զիջել էր հուսարի սպառնալիքներին, թե ուղղակի փողոցում կբռնի կսպանի նրան, եթե վերջնականապես կհրաժարվի մենամարտից: Մորեղբայրս չէր դիմացել դեպի սկանդալներն ունեցած իր հիվանդությանը և բոլորովին մոռանալով իր արիստոկրատիզմը, համաձայնել էր Բազենյանի մարտավկան լինելու: Կատարելապես հիացած Բազենյանի սառնասրտության վրա, պատմեց ինձ, թե ինչպիսի հեգնական ժպիտով ատրճանակն արձակել էր օդում և թե ինչպես, այդ բանից կատաղած, հուսարը լարել էր բոլոր ուժերը, որ չվրիպի, բայց հեցն այդ պատճառով էլ վրիպել էր գնդակն արձակելիս:

Այս դեպքը վճռական նշանակություն ունեցավ դեպի Բազենյանը տածած զգացմանս համար: Քանի որ խոսք ու զրույց կար մենամարտի մասին, ես սարսափելի անհանգիստ դրության մեջ էի, իսկ երբ մորեղբայրս հայտնեց, որ Բազենյանը ողջ ու անվնաս է մնացել, լաց եղա ուրախությունից: Իր գեղեցկությամբ, հանդգնության աստիճանին հասցրած իր խիզախ աներկյուղ բնավորությամբ նա ինձ Համար դարձել էր արդեն այնպիսի մի արարած, որի վերաբերմամբ այլևս չէի կարող ստիպել ինձ անտարբեր մնալու և չմտածել այն մասին, թե ես արդյոք դու՞ր եմ գալիս նրան, — կնոջ սիրահարված լինելու ամենահաստատ նշան:

Բայց նա ինձ ուրիշ բանով էլ էր գերել — իր խոսքի ուժով: Արդեն գիտեի, որ ջերմ հայրենասեր է իբր թե և ինչ-որ գաղտնի առաքելություն ունի իբր թե: Սկզբում խույս էր տալիս: Այդ մասին խոսելուց, ինչ-որ խիստ խորհրդավոր կերպարանք էր առնում, բայց հետո կամաց-կամաց, կարծես թե, մոռանում էր իրեն, մոռանամ էր թե որտեղ է, ում հետ է խոսում, իր պատմած վայրերը, անձերը, անցքերը, կարծես թե, ուղղակի տեսնում էր իր աչքի առաջ, և այդ բոլորի մասին խոսում էր վարակիչ ոգևորությամբ, ներքին լափող կրակով, լսողի աչքերից արտասուք քամող պատկերավորությամբ, դառն կսկիծով, բայց երբեք հուսահատությամբ, — մի բան, որի նշույլն անգամ չէի տեսնում նրա մեջ, — ընդհակառակը, ամենավառ հույսեր էին, որ այդպես կրակում էին նրան: Երբ խոսում էր այդպես, ինձ թվում էր, թե նստած եմ նավակի մեջ և կատաղի մի հեղեղ քշում տանում է ինձ ուր-որ շշմեցնող արագությամբ: Սովորաբար, երբ ոգևորվում էր, նստած չէր մնում, ամբողջ մարմինը ցնցվում էր, շարժվում, աչքերը զարմանալի կերպով վառվում, մեծանում, այրվում էին, և խոսքերը բերանից դուրս էին թռչում կարճ պարբերություններով, արագ առոգանությամբ, ուժեղ, միշտ պատկերավոր արտահայտությամբ և առանց ընդհատումների, սուր, կտրուկ, հեղեղի նման: Շատ անգամ ինձ թվում էր, թե նստած եմ թատրոնում, թե առաջս կանգնած է մի հանճարեղ տրագիկ իր ամենապաթետիկ դերում, մի դերասան, որ իր հանճարեղ խաղով, իր խոսքի ուժով ընդունակ է մոռացնել տալու հանդիսականներին իրենց տեղը, իրենց ներկան, իրենց գոյությունը և իր հետ քշելու տանելու նրանց այն աշխարհն, ուր այդ միջոցին ապրում է ինքը...
Պետք է ասեմ, որ հաճախ չէր այցելում ինձ: Այցելած ժամանակ էլ թեև շատ ազատ էր պահում իրեն, բայց երբեք հարգանքի սահմանից չէր անցնում: Շատ անգամ ուղղակի տանջանքով զգում էի, որ եթե մի տասը տարով ջահել լինեի, նրա հարաբերությունը դեպի ինձ բոլորովին ուրիշ բնույթ կունենար, այսինքն այն բնույթը, որ ես էի ցանկանում... Խոստովանում եմ, մինչև

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

այդ ժամանակ երբեք չէի մտածել, որ ջահել չեմ, և միայն նրա հարաբերությունից զգացի, որ տարիքս արդեն ճնշում է ինձ, այնքան ճնշում, որ, մանավանդ նրա ներկայության ժամանակ, պարզապես ամաչում էի հասակիցս, ես տանջվում էի այն գիտակցությունից, որ նա ինձ վրա նայում է իբրև տարիքն անցած կնոջ վրա, մի կնոջ, որը, բացի հարգանքից, ուրիշ զգացում չի կարող ներշնչել: Մինչդեռ շուրջս քծնող ուրիշ երիտասարդների հետ վարվում էի իր հաղթանակող գեղեցկության վրա վստահ կնոջ նման, վարվում էի ազատ, արհամարհանքով, շատ անգամ իբրև բռնակալ, — նրա ներկայությամբ, ընդհակառակը, մի տեսակ կուչ էի գալիս, շփոթվում, և ինձ միշտ թվում էր, թե դեմքիս վրա կնճիռներ կան, և նա տեսնում է այդ կնճիռները... Կյանքիս մեջ դրանք միակ բոպեներն էին, որոնք հոգեկան անասելի տանջանք էին պատճառում ինձ:

Մի անգամ բոլորովին անակնկալ կերպով նա եկավ ինձ մոտ, ասաց, թե հետևյալ օրը հեռանում է և եկել է հրաժեշտ տալու: Մի բոպե ինձ թվաց, թե ինքս ինձ կորցնում եմ, թե պատրաստ եմ գժի պես փարելու նրա վզին, ստրկի պես թավալգլոր գալու նրա ոտների տակ, մի խոսքով — հուսահատական այնպիսի մի բան անելու, որ նա չգնա, որ նա մնա, իմը լինի ... Այնուհետև, երբ կարևոր ջանք գործ դնելով զսպեցի ինձ և նայեցի նրա աչքերին, — հարգանքով լի նրա աչքերին, — զգացի թե ատում եմ նրան, այնքա՛ն ատում, որքան ոչ ոքի չէի ատել դեռ: Այդ միջոցին կրկին անգամ և վերջնականապես համոզվեցի, որ միմիայն հարգանքի զգացում է թելադրել վերջին անգամ գալու ինձ մոտ, որ նա ամենայն հանգստությամբ կարող էր, առանց ինձ վերջին անգամ տեսնելու էլ, հեռանալ գնալ, առանց մտածելու, թե ես գոյություն ունիմ աշխարհիս երեսին ... Ոչ մի ժամանակ այնպես չէր վիրավորվել հպարտությունս, ինչպես այդ բոպեին: Այդ պատճառով, երբ վերջին անգամ առավ ձեռքս և համբուրեց, սառն էի վերին աստիճանի, կարծես արյանս շրջանառությունը հանկարծ կանգ էր առել երակներիս մեջ:

Այդ բանն աննկատելի չմնաց նրանից, գլուխն արագ բարձրացրեց, իր թափանցող հայացքով նայեց աչքերիս և հարցրեց անհանգստությամբ.

— Ի՞նչ է պատահել ձեզ. ձեր երեսին գույն չկա:

Քիչ մնաց սիրտս փուլ գար: Բայց անձնասիրության համառությամբ վճռեցի չընկճվել այդ կախարդի բոպեական քնքշանքի տակ և կրկնապատիկ սառնությամբ պատասխանեցի, թե այդ օրը վատ եմ զգում ինձ: Շատ լավ զգացի, որ չհավատաց, բայց և այնպես ոչինչ չասաց, դռան մոտ խորին հարգանքով գլուխ իջեցրեց և դուրս գնաց:

Դռան ետևը կանգնած, ուշի-ուշով ականջ էի դնում, թե ինչպես նախասենյակում հագնում էր վերարկուն, թե ինչպես սանդուղքով իջավ ներքև, թե ինչպես դուռը բացվեց և ապա փակվեց: Այնուհետև ոչ մի ձայն, ոչ մի շշուկ: Երբ ուշքի եկա, տեսա, որ, ճակատս դռանը սեղմած, ցնցվում եմ բոլոր ջղերովս և անզուսպ հեկեկանքի նման ինչ-որ վայրենի ձայներ դուրս են թռչում բերանիցս: Վերին աստիճանի կատաղի մի հուսահատություն էր տիրել ինձ: Զգում էի, որ եթե Բազենյանը վերադառնար և կանգներ առաջս, պատրաստ էի և՛ խեղդել նրան, և՛ փարվել նրա ոտներին: Շուտով չհանգստացա, բայց հետո կամաց-կամաց այնպիսի մի ամայություն զգացի շուրջս, որ կարծես թե ամբողջ աշխարհը հանկարծ քարացել, մթնել է և այդ սոսկալի ամայության մեջ ես եմ միայն կենդանի մնացել...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Պարոն Շահյան, մի բաժակ էլ, — խնդրեց պանի Զդանևիչը, նոր տեսնելով, որ նրա բաժակը դատարկ դրված էր, նրա առաջ:

— Չէ, շատ շնորհակալ եմ: Ձեր պատմությունն այնքան հետաքրքրական է, որ...

— Կարելի է և երրորդ բաժակը չխմել, — վրա բերեց պանի Զդանևիչը ժպտալով և ջրի պես խմեց իր սառած թեյը:

6

Նույն օրվա գիշերը, — ժամը, կարծեմ, տասնմեկն էր, — դեմքս ծածկեցի հաստ վուալով և դուրս եկա, — շարունակեց պանի Զդանևիչը: — Գիտեի որ հյուրանոցումն է իջած: Գնում էի, բայց չէի իմանամ ինչու: Այնպես էէ զգում, թե սաստիկ տենդի մեջ եմ: Հյուրանոցի դռնապանից իմացա, որ տանը չէ... դեռ չի վերադարձել: Չհուսահատվեցի: Գրեթե մի ժամ կանգնած էի հյուրանոցի դռանը, ամայացած փողոցում, խիստ քամի էր, և չէի վախենում ամենևին: Կարծես ժամանակավոր խելագարություն էր եկել վրաս: Սպասում էի: Երբեմն-երբեմն մարդիկ էին անցնում առջևովս, և տեսնում էի, որ օտարոտի հայացքներ են ձգում վրաս: Մեկը նույնիսկ մոտեցավ ինձ և ինչ-որ ասաց: Կարծեմ, ապտակ տվի, և նա սուս ու փուս հեռացավ: Քայլերի ձայները լսելիս, հեռու մթության մեջ մարդկային ստվեր տեսնելիս դողում էի ամբողջապես. միշտ թվում էր ինձ, թե նա է: Տե՛ր իմ աստված, այն ի՞նչ րոպեներ էին...

Վերջապես, դեռ շատ հեռվից, փողոցի լապտերի լուսավորության տակ, ճանաչեցի նրան ու վազեցի դեպի նա:

Սկզբում կանգ առավ շփոթված և, երևի խիստ զարմացած և չճանաչելով ինձ, նայեց վուալիս:

Արդեն բոլորովին կորցրել էի ինձ: Այդ րոպեին չկար ինձ համար ոչ ամոթ, ոչ պատկառանք, ոչ արժանապատվության զգացման նշույլ անգամ, այն խստագույն արժանապատվության, որը ստիպեց ինձ այնքան սառնությամբ ընդունել նրա հրաժեշտը և որի համար այնպիսի սոսկալի կերպով պատժվեցի: Վճռել էի ուղղակի բռնի կերպով նետվելու նրա գիրկը, եթե զզվանքով անգամ դեն հրելու էլ լիներ ինձ: Վերին աստիճանի հուսահատված էի, վճիռս էլ նույնքան հուսահատական էր:

Շատ լավ հիշում եմ, ոչինչ չկարողացա արտասանել, միայն որքան ուժ ունեի, ամուր բռնեցի ձեռքից և գրեթե քարշ տվեցի ետևիցս:

Նա վերջապես, ճանաչեց ինձ:

— Պանի Զդանևիչ, — շշնջաց նա, չգիտեմ՝ խիստ զարմացած, թե խիստ վախեցած:

— Եկ, — արտասանեցի ես ատամներս սեղմած և բոլոր ուժովս քարշ էի տալիս նրան:

Մտանք հյուրանոց: Ես վազում էի առաջ և ամբողջ մարմնովս դողում: Երբ մտանք նրա սենյակը, և նա ճրագը վառեց, ես վուալս, կարծեմ, պատռեցի ուղղակի և դեն շպրտեցի: :

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Տեսնո՞ւմ ես, — ասացի, — դու այնպիսի դրության մեջ ես դրել ինձ, որ ուղղակի իմ ոտովս եմ եկել քեզ մոտ:

Ճիշտը ձեզ ասեմ, այդ միջոցին արդեն այնքան կորցրել էի ինձ, որ այլեւս ոչ մի ընդունակություն չունեի դիտելու, թե իմ հանկարծակի երևույթը, իմ խոսքերը, իմ դրությունը ինչ տպավորություն են գործում նրա վրա: Պետք է, որ չափազանց զարմացած լիներ: Հետո միայն անհուն բերկրությամբ տեսա, որ նա չոքած է ոտներիս առաջ, քնքշանքով համբուրում է ձեռքերս և... լալիս: :

Այլևս ոչինչ չէի տեսնում, բաղի առաջս խոնարհված այն գեղեցիկ դլխից հրաշալի սևաթույր մազերով ծածկված, այլևս ոչինչ չէի զգում, բացի անհուն մի երանությունից, որի ժամանակ մեռնեի էլ, ամենաերջանիկը կլինեի...

Ա՛խ, կախարդ էր նա, — ավելի քան կախարդ...

Այդ գիշեր ամեն բան խոստովանեց: Ասաց, որ ինքն իբր թե տանջվում է եղել ինձ սիրելուց, բայց զսպելիս է եղել իրեն, որովհետև ինքը կնոջ սիրո համար չէ ծնված, այլ — իր թշվառ հայրենիքի համար: Առաջս չոքած, ձեռքերս բռնած, ներքևից նայում էր աչքերիս և վերին աստիճանի վառ-վառ, կարծես բերան արած խոսքերով նկարագրում էր իր հայրենիքի անտերությունը, այնտեղ տիրող սարսափները, իր հայրենակիցների անտանելի վիճակը: Նրա ձայնը մարդկային ձայն չէր, այլ հրաշալի մի մուզիկ, որ հնչում էր ականջիս ամբողջ էությունս տակնուվրա անելու: Մեջ ընդ մեջ մերթ ջերմ համբույրներ էր դրոշմում ձեռքերիս, մերթ հուսահատական աղերսանքով կրկին նայում աչքերիս և աղաչում ու պաղատում, որ արգելք չլինեմ իր սրբազան ուխտը կատարելու:

— Դուք էլ ունիք մի թշվառ հայրենիք, — ասում էր նա, — բայց ոչ այնքան թշվառ, որքան իմը: Աղաչում եմ, թույլ տվեք գնամ իմ պարտքը կատարելու...

Տե՛ր աստված, ինչքան գեղեցիկ, ինչքա՛ն հրաշալի էր նա այդ միջոցին. որքան ազդու, որքան գերող նրա հայացքը, ձայնը, ինքն ամբողջապես...

Ակամա խոնարհվեցի և ձեռքերովս առա նրա դեմքը:

— Անմիտ, անմիտ, — շշնջացի ուղղակի շրթունքների մոտ, — մի՞թե ես կարող եմ որևէ բանում արգելք լինել քեզ: Ես ուզում եմ նվիրվել քեզ, որպեսզի քեզ հետ միասին նվիրված լինեմ և քո հայրենիքին: Ուզում ես — առ ինձ և տար՝ ուր ուզում ես. չես ուզում — սպանի՛ր ինձ և ապա թե գնա ու ուղում ես...

Չգիտեմ՝ հոգեզմայլությունից, շնորհակալությունից, թե՞ նրանից, որ այլևս ուժ չէր զգում դիմադրելու, նրա աչքերը նորից լցվեցին արտասուքով: Եվ նա անձնատուր եղավ ինձ, առանց որևէ առարկության, լուռ ու հնազանդ և ողջագուրանքի առարկա եղող երեխայի քծնող քնքշությամբ...

Պանի Զդանևիչը, կարծես ինքնամոռացության մեջ, վեր կացավ դեպի լուսամուտը և ետ քաշեց լուսամատի ասվեգործ վարագույրը: Ձեռքով նա սրբեց քրտնած ապակին և այդ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ժամանակ լուռ ու մտախոհ նայում էր դեպի դուրս, որտեղ, գիշերային խավարի մեջ, հրապարակի վրա երևում էին խանութների և կառքերի անհամար ճրագներ:

Շահյանը, արձանի նման, լուռ, անշարժ, նայում էր նրա ետևից: Նրա կարճատես աչքերի առաջ, ակնոցի պլպլան ապակիների միջից, լուսամուտի վարագույրի արանքում երևվում էր պանի Զդաննիչի բարձր, ամուր, լի մեջքը՝ հագուստի մեջ պինդ սեղմված: Սկզբում նա անհարմար դրության մեջ էր զգում իրեն, որ պանի Զդաննիչն այնպիսի անկեղծությամբ իր անձնական գաղտնի պատմությունն էր անում. բայց հետո շատ շուտով ընտելացավ այդ կնոջ ազատ, մտերմական վարմունքին և լսում էր նրան ամենայն հետաքրքրությամբ, միանգամայն պատկերացնելով իր առաջ նրա պատմության բոլոր մանրամասնությունները:

Պանի Զդաննիչը խորը հառաչեց, դանդաղ քայլերով վերադարձավ նստեց առաջվա տեղը: Այժմ նրա դեմքը խիստ տխուր էր: Շահյանին մինչև անգամ թվաց, թե նրա աչքերը թաց են: «Մի՞թե դեռևս սիրում է», — մտածեց զարմացած:

— Երկու ամսից հետո ես արդեն ծախել-ծախծխել էի շարժական և անշարժ կայքերիս մեծ մասը և նրա հետ գնացի արտասահման, — առաջ տարավ իր պատմությունը պանի Զդաննիչը հոգնած ձայնով: — Նա զիջել էր իմ թախանձանքին, որ մի կարճ ժամանակ նվիրվի իմ սիրույն: Շրջեցինք եվրոպական գրեթե բոլոր նշանավոր վայրերը, գնացինք և Ամերիկա:

Ի դեպ: Միացյալ Նահանգներում ի մոտո ծանոթացա լեհ հայրենասիրական մի ընկերության հետ, որի մասին շատ բան էի լսել: Չգիտեմ, ձեզ հայտնի է, թե ոչ, — լեհական վերջին անհաջող ապստամբությունից հետո իմ հայրենակիցներից շատերը փախան օվկիանոսի այն կողմը և այնտեղ կազմեցին հայրենասիրական զորեղ մի գաղութ, որ մինչև օրս էլ գոյություն ունի և որի նպատակն է ազատ հասարակապետության ազատ հողի վրա նախապատրաստվել ապագայի համար: Այդ տարագիրները սպասում են միայն քաղաքական աջող դիպվածների, որոնցից օգտվել չեն հապաղիլ: Այս բոպեիս ամբողջ Հյուսիսային և Հարավային Ամերիկայում երկու միլիոնից ավելի լեհացի կա և այնտեղ նրանք կատարելապես պահպանում են իրենց ինքնուրույնությունը, ունեն իրենց ազգային դպրոցները, մայրենի լեզվով հրատարակվող բազմաթիվ լրագրեր, ունեն իրենց կաստյոլները, որոնց միաբանությունները ոչ այնքան կրոնական նպատակ ունեն, որքան քաղաքական-հայրենասիրական, այնպես որ միաբաններից շատերը լեհ զինվորի հագուստ ու զենք են կրում:

Բայց այս ի միջի այլոց:

Պետք է խոստովանեմ, որ Բազենյանը սկզբում չափազանց նվիրված էր ինձ. առանց ինձ ոչ մի տեղ չէր գնում, առանց իմ կարծիքս իմանալու ոչինչ չէր անում. այնպիսի մի քնքշանք ու հոգացողություն էր ցույց տալիս, որ երբեմն նույնիսկ վիրավորական էր թվում ինձ: Մի անգամ հիվանդացա. ամբողջ մի շաբաթ տանից դուրս չգնաց և շարունակ նստած էր մոտս, մի լավ հիվանդապահի պաշտոն կատարելով: Խորամանկ էր և մեծ հոգեբան: Հետո, շատ հետո իմացա, որ նրա ամեն մի քայլ չափված ու ձևված էր, որ անկաշառ զգացումից դրդված ոչինչ չէր անում և ինչ անում էր միշտ հետին նպատակ ուներ: Շատ լավ գիտեր, թե որքան սիրում էի իրեն: Ինքն ինձ հպատակվելով ուզում էր ինձ ստրկացնել իրեն: Ամեն կերպ ինձ պարտավորեցնելով ուզում էր, որ ինքն ազատ մնա որևէ պարտավորությունից: Այո, վերջը տեսա, որ չէր սխալվեր: Կամաց-կամաց այն աստիճան ստրկացրել էր ինձ, այնպիսի անլեզու

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

մի արարած էր դարձրել, որ երբ, ամիսներ անցնելուց հետո, տեսա, որ հետզհետե սառչում է դեպի ինձ, չէի համարձակվում բերան բանալ հանդիմանելու համար: Պարզապես տեսնում էի, թե որքան ձանձրացել էր ինձնից և ինձ հետ շարունակում է ապրել ճարահատված միայն: Ես տանջվում էի, նրա սառնությունը մահ էր ինձ համար, բայց տեսնում էի, որ իրավունք չունեի բողոքելու և չէի կարողանում ձայն հանել: Զարմանալին այն էր, որ որքան սառչում էր նա ինձնից, այնքան սերն ավելի բորբոքվում էր: Քանի որ ոչ մի կասկած չունեի նրա փոխադարձ սիրո և անձնվիրության վրա, ինձ մինչև անգամ թվում էր, թե իսկապես սիբահարված չեմ նրա վրա. բայց այժմ, երբ ոչ թե կասկածում, այլ ամենապարզ կերպով տեսնում էի, որ սոսկալի մի վիհ արդեն սկսել է բաժանել նրան ինձնից, զգում էի, թե որքան զորեղ ու խորն է այն զգացումը, որ կապում է ինձ նրա հետ: Սարսափով տեսնում էի, որ վերջ ի վերջո պիտի ձգի ինձ ու հեռանա: Եվ այդ բանն ինձ ավելի ևս ստիպում էր լուռ մնալ: Ցույց էի տալիս, թե չեմ տեսնում իր սառնությունը, թեև նա ամենևին չէր էլ փորձում գեթ արտաքուստ ծածկել իր մեջ կատարվող փոփոխությունն իմ վերաբերմամբ: Իմ այդ կամավոր կուրությունն, ըստ երևույթին, զարմացնում էր նրան, ինչպես նկատում էի, ուզում էր, որ տրտնջայի, հանդիմանեի, կռվեի հետը, որպեսզի առիթ ունենար ավելի հեշտ պրծնելու ինձնից: Դրա համար երբեմն ուղղակի կոպտաբար էր վարվում ինձ հետ, երբեմն էլ ամբողջ օրերով մենակ էր թողնում ինձ և վերադառնում ուշ գիշերին: Բայց և այնպես, ես էլի լուռ էի, ցույց էի տալիս, թե ոչինչ չեմ տեսնում և աղի արցունքներ էր, որ թափում էի մենակ ժամանակ:

Իհարկե, չէր կարող այսպես երկար շարունակվել, մանավանդ որ նա լռությունից խրախուսված, սկսել էր այլևս բանի տեղ չդնել ինձ: Դանակը ոսկորին էր հասել, և մի անգամ, այլևս չկարողանալով դիմանալ, սկսեցի հանդիմանել: Նա սաստիկ բորբոքվեց և ասաց, որ ես միանգամայն կործանում եմ իրեն, որ ես կապել եմ իր ձեռքերն ու ոտները, որ ես ստիպել եմ իրեն դավաճանել իր ընկերներին, դրժել սրբազան ուխտը և այլն, և այլն: Բանը վերջացավ նրանով, որ հանցավորն ես եղա և գլխովին պարտական մնացի նրան: Տեր աստված, ինչքան միամիտ էի, ինչպես սիրում ու հավատամ էի նրան...

Մի անգամ շատ զգուշորեն խոսք բաց արի այն մասին, թե ինչու մեր կապը չենք կնքում օրինավոր ամուսնությամ: Նա ծիծաղեց և նկատեց.

— Մի՞թե դու որևէ նշանակություն ես տալիս այդ հիմար ձևականությանը:

— Բայց ես շուտով մայր պետք է լինեմ, — հայտնեցի ես:

Այս բանն, ըստ երևույթին, այնքան անակնկալ էր նրա համար, որ նա վեր թռավ տեղից գրեթե սարսափած:

— Ճի՞շտ, — բացականչեց նա, հետո ինչ-որ մտախոհության մեջ ընկավ և ասաց շատ հանգիստ. — Հա , երբ որ այդպես է... պետք է օրինական անուն տանք մեր զավակին:

Ես խիստ արախ էի, որ գոնե օրինավոր ամուսնությամբ զավակի միջոցով կարող կլինեի նրան առմիշտ կապել ինձ հետ բայց շուտով այդ բանումն էլ հիասթափվեցի: Ամուսնությունը նա միշտ հետաձգում էր զանազան պատրվակներով, իսկ զավակս ծնվեց մեռած... Ես սոսկում եմ հիմա, որ մտածում եմ, թե ինչ պիտի անեի այժմ, եթե զավակս մեռած չծնվեր և ապրեր...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Գարնանը վերադարձանք Վարշավա: Այստեղ մորեղբորս մեռած գտա: Ամուրի էր և անզավակ, միակ ժառանգն ես էի, ուստի մեծ հույս ունեի, որ բավական մեծ կարողություն ինձ կլինի թողած, բայց կտակի մեջ մի կոպեկ անգամ չկար իմ օգտին, որովհետև նրա արիստոկրատիզմը սաստիկ վիրավորվեկ էր, որ իր քրոջ աղջիկը ստորին դասակարգի պատկանող մի որևէ կնոջ պես փախել էր առաջին պատահած արկածախնդիր մի մարդու, այն էլ ոչ-կաթոլիկի և այն էլ «անիշխանականի» հետ, արատավորելով իր ամբողջ տոհմի անունը: Մինչդեռ ես ավելի քան կարոտ էի նրա ժառանգության, որովհետև փողերս հատնելու վրա էին և Բազենյանին ես էի պահում, որովհետև նա գրոշ չուներ: Բազենյանն ինչ-որ վիճելի կետեր գտավ կտակի մեջ և ստիպում էր ինձ ժառանգական դատ բանալ, բայց ես բացեիբաց մերժեցի, որովհետև ես էլ ունեի իմ պատվասիրությունը: Դեռևս, փառք աստծո, այնքան ունեի, որ կարող էինք քաղցած չմեռնել:

Ամառն անցկացնելու համար գնացինք Յալթա, ուր մի քիչ կազդուրվելու պետք ունեի անհաջող որդեծնությունից հետո: Շուտով Յալթայում ինձ մենակ թողեց, ասաց, թե մի քանի կարևոր գործերի համար գնում է մոտակա քաղաքները և շուտով կվերադառնա: Լռությամբ հնազանդվեցի վիճակիս և սկսեցի սպասել: Հաշվում էի օրերը, ժամերը, րոպեները և կասկածներից քիչ էր մնում խելագարվեի: Ինձ թվում էր, թե արդեն ձգել է ինձ և փախել և չի վերադառնալ այլևս: Բայց բանից երևաց, որ կասկածներս հիմք չունեին, որովհետև մի ամսից վերադարձավ և այնքան ուրախ էր, այնպիսի կարոտով գրկեց ինձ, որ միանգամայն վարձատրեց ինձ պատճառած տանջանքների համար: Հետո, շատ հետո իմացա, որ այդ ուրախությունն ինձ համար չէր, այլ նրա համար, որ Ղրիմամ կատարած իր շրջագայության ժամանակ առատ հունձ էր ունեցել:

Ինձ թվում է, թե այն ժամանակ իսկ ես հասկանում էի արդեն, որ նրա անձնվեր հայրենասիրությանը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի դիմակ միայն, որի տակ ծածկված հետամուտ է լինում զուտ անձնական շահերի: Բայց այն աստիճան ճարպիկ էր նա, և սերն այնքան կուրացրել էր ինձ, որ այդ բանը չէի տեսնում կամ, ավելի ճիշտն ասած, չտեսնելու էի տալիս: Ինքս սրտովս ու զգացումներովս մաքուր լինելով, չէի ուզում որևէ արատ տեսնել ուրիշների, մանավանդ նրա մեջ, որին սիրում էի, որին նվիրվել էի առմիշտ: Ուրիշ ոչինչ որ չլիներ, խնդիրն այստեղ արդեն վերաբերում էր արդեն իմ պատվին: Ես ուզում էի խաբված լինել չհիասթափվելու համար, իսկ հիասթափումն այդ դեպքում մահ կլիներ ինձ համար:

Օգոստոսի վերջերին ասաց, թե վերևից հրաման է ստացել անհապաղ գնալ Անդրկովկաս մի քանի գործեր կարգադրելու համար և ապա անցնել Հայաստան, ուր արդեն սկսված է ապստամբական շարժումը: Ընդսմին ցույց տվեց հայերեն գրված ինչ-որ նամակներ, որ իբր թե ստացել էր արտասահմանից: Այս անգամ ուղղակի ասաց, թե այլևս հնարավորության չունի ինձ իր հետ ման ածելու և թե գործն արդեն ինքն է ստիպում, որ մենք բաժանվենք իրարից: Նա խոսում էր խիստ վճռական լեզվով: Երկար ժամանակ ընկած էի նրա ոտների առաջ և, հուսահատական արտասուք թափելով, աղաչում, պաղատում էի, որ չձգի ինձ, որ ես իր աղախինը կլինեմ, իր ստրու...

— Օ՛, — ֆիզիկական ցավ զգալու չափ հառաչեց պանի Զդաննիչը և դեմքը ծածկեց ձեռքերով: Անցավ բավական երկար ժամանակ, մինչև որ կարողացավ ճնշել իր ինքնավստահության սուր հիշողության խայթոցը և շարունակեց պատմությունն այս անգամ գրգռված և արագախոսությամբ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Նա համաձայնեց ինձ իր հետ առնելու, միայն հասկացրեց, թե փող չունի, — կարծես թե ինքն էր պահում ինձ, և ոչ թե ես իրեն: Իսկույն հեռագրեցի հավատարմատարիս, որ ծախի վերջին կալվածքս (այդ կալվածքը պահում էի սև օրվա համար) և փողն ուղարկի այնտեղ, որտեղից նամակ կամ հեռագիր կուղարկեմ իրեն: Ճանապարհ ընկանք դեպի Անդրկովկաս: Պետք է ասեմ, որ հենց սկզբից պատվիրեց ինձ, որ ոչ մի տեղ ցույց չտամ, թե որևէ մերձավոր կապ կա մեր միջև, այլ ես էլ, ինքն էլ պետք է ցույց տայինք միայն, թե մենք լոկ ուղեկիցներ ենք՝ ճանապարհին ծանոթացած, և ուր իջնում էինք, ես առանձին էի ապրում, նա առանձին, ինչպես այստեղ՝ Թիֆլիսում: Այսպիսով շրջեցինք այս կողմերի գավառական հայաբնակ քաղաքները և վերջն եկանք Թիֆլիս: Այստեղ ինձ թողեց և գնաց Բաքու: Բաքվից վերադարձավ շատ վատ տրամադրության մեջ: Երևի, սպասված հունձը չէր ունեցել: Թիֆլիսում մանավանդ խստիվ պատվիրեց, որ բոլորովին հեռու մնամ իրենից և եթե կարելի է, ամենևին տեսակցություն չունենամ իր հետ: Ստրուկի պես կատարում էի նրա պատվերները: Դու՞ք նկատեցի՞ք, թե սկզբում ինչքան զայրացավ, որ ես հանկարծ մտա իր սենյակը «Լոնդոն» հյուրանոցում, իր հիվանդ պառկած ժամանակ: Այն աստիճան սաստել էր ինձ, որ մինչև անգամ, եթե հաստատ գիտենայի էլ, թե այդ միջոցին նրա մոտ մարդ չի լինի , էլի չէի համարձակվի գնալ նրա մոտ. բայց լրագրի մեջ որ կարդացի այն լուրը, ինքս ինձ մոռացա և գլխապատառ վազեցի, որ տեսնեմ, թե ճի՞շտ է, որ նրա կյանքին վտանգ է սպառնում: Սակայն, չգիտեմ, իրեն պատահած դժբախտությունն էր պատճառը, թե այն, որ այդ օրերը հավատարմատարիցս ստացած վերջին փողերս իրեն էի տվել, — նա զարմանալի կերպով քնքշացեք էր դեպի ինձ: Այդ բավական էր, որ ես կատարելապես մոռանայի նրա պատճառած այնքան տանջանքները ու նորից առաջվա բուռն սիրով անձնատուր լինեի նրան:

Բայց այդ քնքշանքն էլ երկար չտևեց, շատ շուտով տեսա, որ նորից սառել է դեպի ինձ, և մի քանի անգամ էլ, մանավանդ վերջին օրերում, նկատեցի, որ իմ ներկայությունն իր մոտ պարզապես անտանելի է նրա համար: Նորից կծկվել, նորից ձայն չէի հանում, ուզում էի տանջանքս մեջս խեղդելով և խոնարհ լռությամբ ընկճել նրան, շարժել նրա գութը, — ոչինչ չէր օգնում — նա մռայլվում էր ավելի ու ավելի, վարվում էր ինձ հետ թեև զսպած, բայց արդեն խիստ աչքի ընկնող կոպտությամբ, նրա դեմքի վրա պարզապես ջղային ատելության նշաններ էի տեսնում: Ինչքան էլ որ հիվանդ սիրո այս ատելի, այս գարշելի զգացումը մեռցրած լիներ իմ մեջ ըմբոստության ոգին և բարոյապես փալաս լիներ դարձրած ինձ, այնուամենայնիվ ֆիզիկապես արդեն անկարելի էր կրել այդ հարատև տանջանքները, այս վիրավորանքները, այս նվաստացումը և ոչ մի անգամ բողոք չբարձրացնել: Եվ ես գնացի բողոքելու: Գնացի նրա մոտ: Այդ անցյալ շաբաթ էր: Բանը վերջացավ նրանով, որ ես, — դարձյալ ես, — սև օրս ողբալով դուրս եկա նրա սենյակից...

Այլևս ավելորդ է, որ երկարացնեմ: Դուք գիտեք, որ նա փախել է: Եվ փախել է ամենաանարգ կերպով, փախավ իբրև գող: Եվ իսկապես որ գող էր — ամենաճարպիկ կերպով գողացավ իմ ամենանվիրական զգացումները, իմ անունը, իմ պատիվը, գողացավ և իմ ամբողջ, — այո, ամբողջ, — կարողությունը: Նա քամեց, ճզմեց ինձ կիտրոնի պես և երբ տեսավ, որ ծծելու այլևս հյութ չունիմ, ձգեց ու փախավ:

— Բայց՛ — պանի Զդաննիչը հանկարծ վեր կացավ տեղից — ոչ, ոչ, ոչ, նա մեղավոր չէ ամենևին: Մեղավորը ես եմ միայն և ամենևին իրավունք չունիմ նրան դատապարտելու, ոչ, չունիմ, քանի որ նա գուցե արտաքուստ, հենց սկզբից կամենում էր հեռու մնալ ինձնից, և ե՛ս էի, որ զոռով փաթաթվեցի նրա վզին, ինչպես այդ բանը նա երեսովս տվեց մեր վերջին տեսակցության ժամանակ: Օհ, այս գիտակցությանը... սա ուղղակի խելագարեցնում է ինձ: Ես,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

որ այնքան անձնասեր էի, այնքան հպարտ և, առանց այլևայլության, մերժում էի ձեռքս խնդրողներին, որոնց մեջ կային անպայման ազնիվ և պատվավոր մարդիկ, — ինչպես թույլ տվի ինձ այս աստիճան կուրանալ և ընկնել անծանոթ, մի անհայտ, մի բախտախնդիր երիտասարդի գիրկը, որ կործանեց իմ անունս էլ, իմ պատիվս էլ, իմ կարողությունս էլ և շինեց ինձ պարզապես մի մուրացիկ: Նա իր արհեստն էր բանեցնում, իսկ ե՞ս ինչ էի մտածում, այս ահագին կինս: Եթե անփորձ մի աղջիկ լինեի, տղամարդկանց չճանաչող ու միամիտ, էլի հասկանալի կլիներ մոլորությունս և արդարանալի, բայց այս հասակում... տղամարդկանց այնպես լավ ուսումնասիրած լինելուց հետո... Օ՛, սարսափելի է, սարսափելի...

Շահյանը վեր կացավ, մի ուժգին բան ներսից դրդում էր նրան խոսել, քաջալերել:

— Մի հուսահատվեք, պանի Զդանևիչ, — ասաց նա անհամարձակորեն: — Թքեցեք և մոռացեք նրան:

— Ա՛խ. դուք կարծում եք, թե ես դարձյալ նրա համար եմ մտածում, — բացականչեց պանի Զդանևիչը և նրա աչքերը վառվեցին անհուն ատելության երակով: — Բավական չեղա՞վ, որքան այս գարշելի կիրքը կուրացրեց ինձ... Ոչ, պարոն Շահյան, դուք սխալվում եք. ես այժմ այնպես ատում եմ նրան, ինչպես դեռ ոչ ոքի չեմ ատել: Հուսահատությանս պատճառը, այո , այն չէ, որ ես դարձյալ սիրում եմ նրան, — այլ խոսքն արտասանելուց անգամ գարշում եմ այժմ, — այն այն, որ ինքս իմ աչքում կորցրել եմ իմ հարգը: Իմ տեղս պիտի լինիք, որ հասկանաք, թե ինչ է նշանակում, երբ մարդ դադարում է ինքն իրեն հարգելաց: Հասկացող մարդու համար դրանից ավելի մեծ տանջանք չի կարող լինել: Բացի դրանից, չէ՞ որ ես այժմ աղքատացած եմ, բոլորովին աղքատացած: Ի՞նչ պիտի անեմ, ո՞ւր պիտի գնամ, ինչո՞վ պիտի ապրեմ... Այսպիսի դրության մեջ խելագարվել միայն կարելի է...

Շահյանը, առանց որևէ հետին մտքի, ինքնաբերաբար և ամենայն անկեղծությամբ, ուզում էր ասել, որ ինքը միշտ պատրաստ է նրան օգնելու, բայց հանկարծ մտածեց, թե մի գուցե պանի Զդանևիչն իր խոսքերը վատ մտքով բացատրի, և ոչինչ չասաց, ուրիշ բան էլ չգտավ ասելու:

— Ես այժմ մի բան եմ մտածել, — շարունակեց պանի Զդանևիչը: — Այսպիսի խայտառակությամբ և ամոթով Վարշավ վերադառնալ, հարկավ, չեմ կարող: Ուզում եմ գնալ Ամերիկա իմ ասած լեհ հայրենասիրական գաղութի հետ միանալու: Եթե որևէ բանով պետքական եղա այնտեղ, խո — լավ, իսկ եթե ոչ, աշխարհս մե՛ծ, ման կգամ և կաշխատեմ որևէ վարձկան պաշտոն ճարել: Փառք աստծո, եվրոպական մի քանի լեզու գիտեմ և շատ էլ տգետ չեմ:

Շահյանը նայեց նրան անկեղծ ափսոսանքով և նորից ուզում էր իր օգնությունն առաջարկել, բայց էլի չհամարձակվեց. այժմ վախենում էր, որ դրանով կարող է վիրավորել պանի Զդանևիչի հպարտությունը:

Պանի Զդանևիչը չթողեց, որ Շահյանը շուտ գնա և մինչև անգամ մի թեթև ընթրիք պատվիրեց սպասավորին:

— Վաղը գնում եմ և չեմ ուզում, որ մեր բարեկամությունն անցողակի լինի, — ասաց նա: — Ուր էլ որ լինիմ, միշտ պիտի հիշեմ ձեզ երախտագիտությամբ, որովհետև... Հա , մոռացա ձեզ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ասեմ, նրա փախստի օրն, ախր, մի նամակ ստացա նրանից: Այդ նամակը պահեցի, որ կարդամ ձեզ մոտ: Տեսեք ինչ է գրում:

Պանի Զդանևիչն արագ մոտեցավ գրասեղանին, զզրոցը ետ քաշեց, հանեց մի նամակ, ոգաց նստեց Շահյանի կողքին և, նամակը բռնելով այնպես, որ Շահյանն էլ կարողանա կարդալ, կարդաց.

«Իմ քաղցրիկ Էլիզա:

Այս րոպեիս այնպիսի մի հսկայական հիմարություն գործեցի անզգուշաբար, որից ստիպված եմ անմիջապես հեռանալ: Կուզեի անձամբ տեսնել քեզ, բայց ժամանակը չի ներում, գնացքը մեկնելու է մի ժամից, հազիվ թե վրա հասնեմ: Այս րոպեիս ինքս էլ չգիտեմ, թե ուր եմ գնում, բայց պիտի գնամ, անպատճառ պիտի գնամ և ճանապարհից կհեռագրեմ քեզ, թե որտեղ կարող ես ինձ գտնել:

Նամակս գրում եմ, որպեսզի չկարծես, թե փախել եմ քեզնից: Վերջին ժամանակս դու այդ բառը շատ էիր կրկնում, որով շատ էիր զայրացնում ինձ: Վկա է աստված, որ ես քեզ սիրել եմ, սիրում եմ և պիտի սիրեմ, քանի շունչս բերնումս է: Վերջին սրիկան պիտի լինեմ, եթե գեթ մի րոպե մոռանամ այն անփոխարինելի զոհաբերությանը, որ դու արեք ես ինձ համար: Եթե որևէ տհաճություն եմ պատճառել քեզ, այդ պիտի վերագրես միայն իմ դժրախտ կրքոտ բնավորությանը, որից ինքս էլ գոհ չեմ:

Ցտեսություն, կյանքիս քաղցրիկ ընկերուհի:

Ցմահ քո Սուրեն»:

Հ.Գ. — Փողի կարիք որ զգաս, դիմիր Լևոն Շահյանին, որի հետ ծանոթացար ինձ մոտ, երբ ես պառկած էի հիվանդ: Նա, շատ ազնիվ, շատ պատվական երիտասարդ է, և կարող ես վստահիլ նրան առանց քաշվելու: Համենայն դեպս հայտնում եմ քեզ նրա հասցեն»:

— Հետևում է ձեր հասցեն, — միակ բանն ամբողջ նամակի մեջ, որ կարևորություն ունեցավ ինձ համար, մնացածը՝ գրոշ, — ասաց պանի Զդանևիչը և հանգիստ ա կամաց ճղեց նամակը վերևից մինչև ներքև, — Եվ այս խորամանկ թշվառականը կարծել է, թե այնքան բաներից հետո պիտի հավատամ իր այս ստության և կեղծավորության շեղևրին. — ավելացրեց նա, նամակը ճմռելով ափի մեջ և հանգիստ գարշանքով շպրտելով վառարանի կողմը: — Ինչու՞ չի գրում, թե այն ի՞նչ հսկայական հիմարություն է, որ գործել է և որից ստիպված է եղել այնպես շուտափույթ հեռանալ և իբր թե ժամանակ չի գտել ինձ էլ իր հետ առնելու: Այսօր ճիշտ տասը օր է, որ գնացել է, և ո՞ւր է այն հեռագիրը, որով ճանապարհից պիտի հայտներ ինձ, թե որտեղ կարող եմ գտնել իրեն: Աստծուն վկա է բերում, թե սիրել է ինձ, սիրում է և ... Է՛հ, բավակա՛ն է, բավական է: Նորից արյունս տակնուվրա է լինում...

Պանի Զդանևիչը սաստիկ գրգռված վեր կացավ, հատակից վերցրեց նամակը, վառարանի դուռը բաց արեց և ներս շպրտեց: Նա այլևս ոչ մի խոսքով չհիշեց Բազենյանին, ասելով, որ ուզում է իսպառ մոռանալ նրան և վերջին հուսահատական ուժերը հավաքած, մի նոր, խելացի, առողջ կյանք սկսել հիվանդ սիրուց հետո: Նա նորից հիշեց Ամերիկայամ իր տեսած լեհական գաղութը և մեծ ոգևորությամբ սկսեց խոսել այդ գաղութի նպատակների մասին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Նրա տրամադրությունը հետզհետե այն աստիճան բացվեց, որ ընթրիքի ժամանակ մինչև անգամ ուրախ էր:
Շահյանը նույնպես բացվել էր. պանի Զդաննիչի ցույց տված մտերմությունը չափազանց գրավել էր նրան, և նա չէր իմանում ինչպես անի, որ ցույց տա, թե ինքը գնահատում է այդ մտերմությունը և ամենայնիվ պատրաստ է թեթևացնելու նրա վիճակը: Երբ ընթրիքից հետո պատրաստվեց գնալու, այլևս չկարողացավ դիմանալ և ուղղակի ասաց.

— Պանի Զդաննիչ, եթե ուր էլ որ լինիք, օգնության կարիք զգաք, կարող եք, առանց այլևայլության, դարձյալ ինձ դիմել:

— Պանի Զդաննիչը առավ նրա ձեռքը և ջերմագին սեղմեց:

— Ոչ, ազնիվ, սիրելի բարեկամս, — ասաց նա քնքշորեն — ես անչափ գոհ եմ ձեր ինձ արդեն արած օգնությունից և հույս ունիմ, որ այլևս կարիք չեմ զգալ ձեզ նեղացնելու: Բայց մի բան կխնդրեի ձեզնից — այն, որ դուք շատ էլ դժգոհ չմնաք, եթե ձեր հասանելիքը շուտ չկարողանամ վերադարձնել:

Շահյանը նայեց նրան հանդիմանությամբ:

— Հավատացնում եմ, պանի Զդաննիչ, ես սաստիկ վիրավորվում եմ, երբ դուք խոսում եք այդ մասին:

— Հապա ինչպե՞ս անեմ:

— Ինչպես ուզում եք արեք, միայն թե այդ մասին ինձ ոչինչ մի ասեք, — ասաց Շահյանը և սկսեց հագնել կրկնակոշիկները: Հանկարծ նա ծիծաղեց:

— Ինչի՞ վրա եք ծիծաղում, — հարցրեց պանի Զդաննիչը հետաքրքրված:

— Կրկնակոշիկներիս վրա: Սրանք իրենց մի մազալու պատմություն ունին, որ հանկարծ հիշեցի:

Եվ Շահյանը համառոտակի պատմեց Բազենյանի հետ ունեցած իր վերջին տեսակցությունը, իր նրան տված հազար ռուբլու միջադեպը, թե ինչպես Բազենյանը կամեցավ այդ գումարը ետ տալ իրեն և երբ ինքը հրաժարվեց ետ ընդունել, նա վերցրեց ծրարը և մոտեցավ վառարանին, որ կրակը նետի, իսկ ինքն այդ միջոցին առավ գլխարկը և դուրս փախավ, կրկնակոշիկները մոռանալով հագնել: Շահյանը այս բանը պատմում էր այժմ իբրև մի կուրյոզ և անդադար ծիծաղում էր:

— Հետո՞, ե՞տ ստացաք ձեր կրկնակոշիկները, — հարցրեց պանի Զդաննիչը ժպտալով:

— Նույն օրն իսկ ուղարկել էր հյուրանոցի ծառայի ձեռքով:

— Իսկ փողը, կրա՞կն էր նետել, թե... գրպանը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Այդ արդեն մի հանելուկ է, որ դուք ինձնից ավելի լավ կարող եք լուծել, — ասաց Շահյանը, շարունակելով ծիծաղել և, բարի գիշեր մաղթելով, դուրս գնաց:

— Պարոն Շահյան, — Հանկարծ կանչեց պանի Զդաննիչը, դուրս գալով նրա ետևից:

Շահյանը կանգ առավ միջանցքում և արագ շուռ եկավ:

— Վաղը կգա՞ք ինձ ճանապարհ դնելու:

— Իհարկե, անպատճառ, — բացականչեց Շահյանն անսովոր եռանդով և, նորից շուռ գալով, վազեց դեպի սանդուղքները:

8

Շահյանը վերադարձավ տուն խիստ ուրախ տրամադրված: Հիշում էր. այդպիսի ուրախ տրամադրության մեջ մեկ էլ եղել էր Եվայի հետ ծանոթանալու առաջին գիշերը, երբ երկաթուղու կայարանից կառքով ճանապարհ էր դրել նրան մինչև նրանց տան դուռը: Այժմ նա զարմանամ էր, թե որքան հասարակ բան էր եղել պանի Զդաննիչի մոտ գնալը, որից այնքան սարսափում էր այդ օրը:

Գիշերը բավական ուշ էր, և Շահյանն անմիջապես պառկեց, որ քնի, բայց էլի, ըստ հին սովորության, ցնորքները թույլ չտվին, որ քունը շուտ մոտենա աչքերին, չնայելով որ նախորդ գիշերը վատ էր քնել և ամբողջ օրն անց էր կացրել անսովոր հուզման մեջ:

Նա մտածում էր պանի Զդաննիչի մասին:

Այժմ այլևս անասնական ցանկությունը չէր, որ զբաղեցնում էր նրա հիվանդոտ երևակայությունը պանի Զդաննիչի վերաբերմամբ, այլ մտածում էր այն մասին, որ ինքը մի մեծ բարիք էր մատուցել այդ դժբախտ կնոջը, հանելով նրան իր անել դրությունից: Եվ նրան առանձին ինքնագոհություն էր պատճառում նրա անձնասիրությունը փայփայող այն հանգամանքը, որ պանի Զդաննիչի պես մի կին իր վրա նայում էր անկեղծ երախտագիտությամբ, իրեն անվանում էր իր «ազնիվ», «սիրելի» բարեկամը, իր «եղբայրը» և այնքան մտերմություն էր ցույց տալիս, որ մինչև անգամ պատմում էր իր անձնական ամենանվիրական գաղտնիքը, բաց էր անում նրա առաջ իր վիրավոր սիրտը և այդ բանի մեջ էր որոնում իր սփոփանքը:

Չոր ուղեղով նա շատ ցածր էր համարում Բազենյանի վարմունքը, բայց զգացումով բոլորովին անտարբեր էր. ընդհակառակը, սրտի խորքում, կարծես ինքն իրենից ծածուկ, մինչև անգամ նախանձում էր Բազենյանին, որ կարողացել էր այնպես գերել պանի Զդաննիչի պես մի կնոջ: Ա՛խ, ինչ լավ կլիներ, եթե ինքն էլ ունենար այդպիսի գեթ չնչին մի շնորհք: Այն ժամանակ ոչ թե Բազենյանի պես անխիղճ կերպով կվարվեր այդպիսի հրաշալի մի կնոջ հետ, այլ կաստվածացներ նրան, մինչև վերջին շունչը կպաշտեր նրան, ուրախությամբ կմեռներ նրա համար:

Եվ Շահյանի սիրտը նորից համակվեց հուսահատական թախիծով: Թերևս երբեք նրա կուսական սիրտն այնպես ջերմ կերպով չէր փափագել սիրել ու սիրվել, ինչպես այժմ: Իր

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

անապատ-կյանքի մեջ հանդիպեց մի հրաշալի Եվա, որին ըստ երևույթին, սիրեց հենց առաջին անգամից, բայց հուսախաբությունը շուտով էլ մեռցրեց սիրո առաջին սաղմերը: Այժմ բախտը նրան դեմ-հանդիման էր բերել մի պանի Զդաննիչ, որը կանգնած էր իր կանացի գրավչության գագաթնակետին, հսկայի պես գեղեցիկ ու հոյակապ: Շահյանը մտքում համեմատություն էր անում Եվայի ու պանի Զդաննիչի միջև և տեսնում էր, որ Եվայի կուսական անմեղ, անարատ գեղեցկությունը կամաց-կամաց աղոտանում, ցնդում է օդի մեջ, իբրև անմարմին մի բան, իբրև հրաշալի մի երազ պանի Զդաննիչի հուժկու և մեղսակից փարթամ գեղեցկության առաջ: Եվ նա մտածում ու չէր կարողանում որոշել, թե ո՞րին արդյոք առավելություն կտար — Եվային, թե պանի Զդաննիչին, եթե միաժամանակ երկուսն էլ ցանկություն հայտնեին իրենը լինելու: Նա կփափագեր ունենալ երկուսին էլ, — Եվային՝ պաշտելու իբրև սրբություն, պանի Զդաննիչին՝ տիրապետելու իբրև ցանկալի կնոջ: Սակայն Շահյանը զգում էր, որ պատրաստ է իր իդեալական սերն էլ, կիրքն էլ հավասար չափով կենտրոնացնելու միմիայն պանի Զդաննիչի վրա, բայց և, միևնույն ժամանակ, զգում էր, որ ինքը, իբրև սիրահար և իբրև ամուսին, շատ չնչին արարած կլիներ այդ հոյակապ կնոջ առաջ: Նրան թվուր էր, թե պանի Զդաննիչի պես մի կին, եթե իրեն այնպիսի ուշադրության առարկա էր դարձրել, պատճառն այն էր միայն, որ կարիքն էր ստիպել, այլապես երբևիցե մտքովը անցկացնե՞ր արդյոք, թե աշխարհիս երեսին Շահյան էլ գոյություն ունի:

Եվ Շահյանը նորից եկավ կանգ առավ այն մտքի վրա, որ ինքը ջրի տարած մեկն է, անշնորհք, ողորմելի մի արարած, որը կարծես թե ապրում է նրա համար միայն, որ ամեն դեպքի առիթով շարունակ մտածի իր ոչնչության մասին և ավելի ու ավելի տանջվի այդ գիտակցությունից:

Շահյանը նորից ուժգին մի կատաղություն զգաց ինքն իր դեմ: — Ո՛չ, պետք է կամ ապրել այնպես ինչպես ուրիշները, ինչպես ամենքն են ապրում, կամ պետք է չապրել ամենևին... Այլապես դիմանալ չի կարելի այդ հարատև տանջանքներին, ամեն մի առիթից ծագող այդ տանջալի ինքնաքննության: Այս աշխարհում ապրելու և հոգեկան այդ սոսկալի տանջանքներից ազատ լինելու համար հարկավոր է լինել Բազենյանի պես համարձակ, հանդուգն, անխիղճ, խաբեբա, նույնիսկ անբարոյական, այո, անբարոյական: Այդ մի շնորհք է, որ բնությունը տվել է գրեթե ամենքին, որով և ամենքն ապրում են անհոգ ու երջանիկ. Շահյանն է միայն, որ զրկված է մնացել այդ շնորհքից և այդ պատճառով այնքան որբ ու օտար էր զգում իրեն կյանքի խնջույքի մեջ: Ուրեմն էլ ինչո՞ւ է ապրում: Ի՞նչ բան է կյանքը: Կյանքը կինն է, ցանկալի կինը: Խլիր աշխարհից կին ասված արարածը, և ասկետներն անգամ չեն կամենալ ապրել: Սխալվում են մորալիստները, որոնք անհատական երջանկության հիմքը համարում են ալտրուիզմը: Այդ շատ միակողմանի վարդապետություն է, որովհետև քաղցածի փորը չի կշտանալ, երբ նա ուրիշի համար հաց բրդի: Կինը, ցանկալի կինը — ահա միակ բանալին, որ բաց է անում ոչ թե ցնորական, այլ իրական երջանկության դուռը:

Կնոջ գաղափարը Շահյանի համար միշտ մութ ու անորոշ էր եղել, բայց երեկվանից դեսը այդ գաղափարը միանգամից պարզ ու որոշ ձևեր էր ստացել և մարմնացել էր պանի Զդաննիչի մեջ: Կին և պանի Զդաննիչ այժմ հոմանիշ էին նրա համար, և կին ասված արարածը նա ուրիշ կերպ էր կարողանամ երևակայել քան պանի Զդաննիչի պես խելագարեցնելու չափ ցանկալի:

Շահյանի հիվանդոտ երևակայությունը նորից գրգռվեց: Դեպի պանի Զդաննիչը փոքր-ինչ առաջ տածած ասպետական զգացումը նորից տեղի տվեց զուտ ախտական զղացման, և պանի Զդաննիչը նրա գրգռված երևակայության առաջ նորից կանգնած էր արուի մեջ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

անզուսպ անասնականը շարժող իբրև էգ միայն իր իգական բոլոր անդիմադրելի հրապուրանքով ...

Հանկարծ նա վեր թռավ և նստեց անկողնում կայծակնահար այն մտքից այն մտքից, որ պանի Զդանևիչն առավոտյան պիտի մեկներ: Առավոտյան... այդպես շուտ ... Իսկ ինքը... ի՞նչ պիտի անի ինքն այնուհետև իր մեջ վառվող և իր ամբողջ էությունը լարող զգացումով: Կարո՞ղ է դիմանալ ... չի՞ գժվիլ արդյոք... Չի՞ գժվիլ արդյոք այն մարդը, որ երկար ժամանակ ծարավից պապակվելով թափառում է անապատի մեջ, և հանկարծ մի աղբյուր գտնելով, վրա է ընկնում, որ ծարավը հագեցնի, բայց ջուրը հանկարծ ետ է քաշվում և երկրի ծոցը մտնում, առանց մի կաթիլ թողնելու... Ո՛չ, ո՛չ, անկարելի է: Պետք է մի բան անել ... պետք է այնպես անել, որ պանի Զդանևիչը չգնա, մնա, մնա անպատճառ և ...

Շահյանը խոնարհվեց ծնկների վրա և տաքացած գլուխն առավ ձեռքերի մեջ: Երկար ժամանակ նստած էր այդպես, մտածելով, թե ինչ պիտի անել և էլ ինչ կարող է անել: Քունքերին սեղմած ափերի վրա զգում էր գլխի երակների զարկն այնքան ծանր ու հատու, որ կարծես գլխի մեջ թաքնված մի բան տնքում էր տանջանքով:

Հանկարծ նստեց ուղիղ և չռած աչքերով նայեց օդի մեջ, իբրև մի մարդ, որի միտքը հանկարծ պարզվում է մի նշանավոր գյուտից: Կարճ ժամանակ այդպես մնալուց հետո կամաց իջավ մահճակալից, ոտները մեքենայաբար կոխեց մահճակալի առաջ դրված մաշիկների մեջ, նույն չռած աչքերով, լուսնոտի պես, մոտեցավ գրասեղանին, նստեց, առավ մի թուղթ, առավ գրիչը և կանգ առավ: Հետո կամաց ու զգուշորեն, կարծես վախենալով, որ այն, ինչ որ մտածել էր, կարող էր մոռանալ, սկսեց գրել.

«Շատ հարգելի պանի Զդանևիչ:

Մի չափազանց հանդուգն առաջարկություն եմ ուզում անել Ձեզ. — կկամենայի՞ք արդյոք իմ կինս լինել կինս — աստծո և մարդկանց առաջ: Եթե այո — պատասխանեցեք, եթե ոչ — նույնպես: Երկու դեպքումն էլ Ձեր պատասխանը, որին պիտի սպասեմ սրտատրոփ, կընդունեմ ամենայն շնորհակալությամբ: Համենայն դեպս, աղաչում եմ, առանց պատասխանի մի թողնեք:

Մշտապատրաստ Ձեր խոնարհ ծառա

Լևոն Շահյան»:

Հ. Գ. — Առաջարկությունս նամակով եմ անում, Ձեզ և ինձ ազատ պահելու համար այս մասին անձամբ խոսելու անխուսափելի ծանր դրությունից»:

Համենայն դեպս ներքևն ավելացրեց իր հասցեն, այնուհետև ամբողջ նամակը խնամքով արտադրեց ուրիշ թղթի վրա, փակեց ծրարի մեջ և կրկին ընկղմվեց խոր մտածմունքների մեջ: Այժմ դժվար լուծելու մի ուրիշ հարց կար — ինչպե՞ս պիտի հանձներ այդ նամակը պանի Զդանևիչին — անձա՞մբ արդյոք, թե ծառայի միջոցով: Վերջինս անհարմար էր և, բացի դրանից, այդ դեպքում ստիպված կլիներ առավոտյան գնալ պանի Զդանևիչի մոտ, մինչդեռ այս անգամ ուզում էր տեսնել նրան՝ դիտելու համար ոչ թե առաջ պանի Զդանևիչին, այլ իր ապագա կնոջը. և այդ բանն այնպիսի անդիմադրելի հետաքրքրության զրթնեցրեց նրա մեջ,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

որ վճռեց անպատճառ գնալ և իր ձեռքով հանձնել նամակը: Հանձնել — բայց ե՞րբ, ո՞րտեղ. հյուրանոցո՞ւմ, երկաթուղու կայարանո՞ւմ, թե՞ ամենավերջին րոպեին, վագոնում, հրաժեշտ տալու միջոցին: Վերջինը, իհարկե, ավելի հարմար էր, որովհետև առաջին երկու դեպքում նա ուղղակի գետինը կմտներ ամոթից, տեսնելով, թե ինչպես պանի Զդանևիչն իր աչքի առաջ բաց է անում նամակը, կարդում և ...

«Այդպես, ուրեմն, նամակս կհանձնեմ ամենավերջին րոպեին, երրորդ զանգը խփած ժամանակ, այնպես որ այնուհետև ստվերս անգամ չի տեսնիլ», — վճռեց Շահյանը և խիստ ուրախացած ու թեթևացած գնաց պառկեց: Բայց հանկարծ նորից վեր կացավ, ծրարը պատռեց և նամակի տակն ավելացրեց հետևյալը.

«Եթե Ձեր պատասխանը դրական լինի, հարկավ կվերադառնաք առաջին իսկ կայարանից և կարող եք իջնել ուղղակի իմ տանը, ուր կգտնեք ամեն հարմարություն և անհուն երջանկությամբ բաբախող մի սիրտ»:

Վերջին խոսքերը, որոնք գրվեցին ինքնաբերաբար, այնքան դուր եկան Շահյանին և այնպիսի վառ հույսով լցրին նրա սիրտը, որ այնուհետև, երբ նորից պառկեց, շարունակ կրկնում էր մտքումը, մինչև քունը կամաց-կամաց հաղթեց նրան:

Առավոտյան, երբ աչքերը բաց արեց, կարծեց, թե այդ օրն էլ իր սովորական պարապ օրերից մեկն է, որ կարող է դառնալ մյուս կողքի վրա և նորից քնել մի-երկու ժամ էլ, բայց հանկարծ միտն ընկավ, որ այդ առավոտ առավոտ պիտի գնա ճանապարհ ձգելու պանի Զդանևիչին, և օձից խայթվածի պես վեր տռավ անկողնուց:

Առաջին բանը, որ արավ, այդ այն էր, որ վրա ընկավ նամակին և կարդաց: Կարդաց և սարսափեց: Թեև նամակի բառերը գիշերն անկողնու մեջ շատ կրկնելուց անգիր գիտեր, բայց այժմ նույն այդ բառերը թղթի անցկացրած և ցերեկվա լույսի տակ բոլորովին նորություն հանդիսացան նրա համար: Գիշերը նա միայն ցնորում էր և այդ ցնորքների արտահայտությունն էր, որ անց էր կացրել թղթի, գիշերն անցել էր և իր հետ հոդս էր ցնդեցրել նրա ցնորքները, բայց այդ ցնորքների արտահայտությունը մնացել էր թղթի վրա: Եվ այդ թուղթը պիտի հանձներ պանի Զդանևիչին, և պանի Զդանևիչը պիտի կարդար այդ թուղթը... Ի՞նչ անենք, թե ինքը ներկա չի լինիլ կարդալիս, բայց խո գիտե, երևակայում է, թե ինչպիսի ապշությամբ պիտի կարդա պանի Զդանևիչն իր հանդուգն առաջարկությունը, և եթե նրա պատասխանը մերժողական լինի կամ թե ճիշտ որ առաջին իսկ կայարանից վերադառնա և ուղղակի գա իր տուն... Շահյանը չէր իմանում, թե ո՞րն ավելի սարսափելի կլիներ իր համար: Պանի Զդանևիչից մերժողական պատասխան ստանա՞լը, թե՞ նրան իր տան մեջ ընդունելը: Առաջին դեպքում մահացու հարված պիտի ստանար իր անձնասիրությունը, իսկ երկրորդ դեպքում... Սակայն այստեղ Շահյանը հրաժարվում էր երևակայել անգամ, թե ինչ կպատահեր իրեն, երբ պանի Զդանևիչն ուղղակի երկաթուղու կայարանից գար իր տուն և ասեր. «Ահա, ես վերադարձա և համաձայն եմ ձեր կինը լինելու»:

«Ոչ, ո՛չ, ո՛չ, անպատճառ խելագարված եմ եղել գիշերը, որ այսպիսի նամակ եմ գրել, — ասաց ինքն իրեն Շահյանը և նամակը շտապով շպրտեց վառարանի մեջ ճրթճրթացող կրակը:

Երբ Շահյանը մտավ պանի Զդանևիչի մոտ, վերջինս իր հաշիվներն էր տեսնում հյուրանոցի սպասավորի հետ: Սենյակի դռան մոտ դրված էին երկու մեծ ճամպրուկ: Ինքը պանի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Զդանևիչը ճանապարհորդական փոքր-ինչ հնացած, բայց կոկ և ճաշակով կարված հագուստի մեջ էր, ուսին սակվոյաժ ձգած: Շահյանին ընդունեց շատ սիրալիր և մտերմորեն, հետո ներողություն խնդրեց և նորից դարձավ սպասավորի ներկայացրած հաշիվներին:

Շահյանը նստեց հեռու և սպասում էր մի տեսակ բութ հանգստությամբ: Նա նմանում էր կյանքի հետ իր հաշիվները վերջացրած սառն ու անտարբեր մարդու: Այն կրակը, որ այնպիսի կատաղությամբ վառվել էր նրա մեջ պանի Զդանևիչի վերաբերմամբ, կարծես հանգել էր այժմ, և նրան թվու էր, թե այդ հանգած կրակն այժմ այնտեղ, հոգու խորքում, ծուխ էր արձակում այնքան թանձր ու ծանր և այնքան հեղձուցիչ, ինչպես վառված փայտի վրա ջուր թափելուց հետո:

Պանի Զդանևիչը շուտով արձակեց սպասավորին և, երբ սպասավորը դուրս գնաց, արագ դարձավ Շահ յանին:

— Երևակայեցեք, — բացականչեց նա մի տեսակ անհոգ ծիծաղով: — Եթե դուք չլինեիք, բոլոր ունեցած-չունեցածս պետք է թողնեի այստեղ: Բայց հիմա, փառք աստծո, բոլոր իրեղեններս փրկված են:

Նա շտապով հավաքեց այս ու այնտեղ թափթփված մի քանի մանր-մունր բաներ և սկսեց տեղավորել ճամպրուկներից մեկի մեջ, նույն անհոգությամբ գանգատվելով հյուրանոցում տիրող անկարգ կարգերից, անաստված թանկ գներից և զանազան հարմարությունների բացակայությունից: Իր անհոգ շատախոսության միջոցին հանկարծ խոսքը կիսատ թողեց բերանում, բնազդաբար ետ նայեց Շահյանի կողմը, մի րոպե ուշադրությամբ դիտեց նրա քարացած դեմքը, հետո կամաց բաց թողեց ձեռքին բռնած մի ինչ-որ իր և մոտեցավ նրան:

— Ի՞նչ է պատահել ձեզ, պարոն Շահյան, — հարցրեց նա մտահոգությամբ:

Շահյանը թեթև կերպով ցնցվեց: Մինչև այդ րոպե կարծես քնած էր և այդ րոպեին միայն սթափվեց:

— Ի՞նձ ... ոչինչ, — արտասանեց նա, մեքենայաբար վեր կենալով տեղից և զարմանալով, թե ի՞նչ էր նկատել իր մեջ պանի Զդանևիչը:

— Հապա ինչո՞ւ այդպես գունատ եք:

— Գունա՞տ... մի՞թե:

— Նայեցեք հայելուն... Դուք անպատճառ հիվանդ եք:

Շահյանը շփոթված, հեռվից մեքենայաբար նայեց պատի վրա կախված հայելուն և չտեսավ իր դեմքը:

— Այս երևի նրանից է, որ գիշերը սովորականից ուշ քնեցի և այս առավոտ վաղ վեր կացա, որ հասնեմ ձեզ, — ասաց նա և աշխատեց ժպտալ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Պանի Զդաննիչը լուրջ դեմքով և թերահավատությամբ շարժեց գլուխը, իր փորձող աչքերը չհեռացնելով Շահյանի ակնոցից:

— Մեղքն ուզում եք ինձ վրա ձգել, բայց ափսոս, որ չեմ կարողանում համոզվել թե մեղավորն իսկապես ես եմ: Համենայն դեպս, ույլ տվեք ձեզ նկատեմ, պարոն Շահյան, դուք շատ զարմանալի երիտասարդ եք երևում, այնքան սառն եք և անտարբեր, որ կարծես թե աշխարհս գոյություն չունի ձեզ համար:

Շահյանը շատ օտարոտի կերպով ծիծաղեց: Նրա ծիծաղի մեջ լսվում էին վիրավորված անձնասիրության շեշտեր:

— Երանի չէ՞ր լինի, որ այդպես լիներ, — ասաց նա կամաց և հետո ավելացրեց իրեն ոչ հատուկ զայրացկոտությամբ. — Աշխարհս ոչ թե միայն գոյություն ունի ինձ համար, այլև նրա գոյությունն այնքան ճնշում է ինձ, որ կյանքիս գնով կցանկանայի նրանից ազատվել:

Պանի Զդաննիչը ապուշ կտրվեց:

— Այդ դու՞ք եք ասում, պարոն Շահյան...

— Այո , ես եմ ասում:

— Այդպես երիտասարդ հասակու՞մ...

— Այդպես երիտասարդ հասակում:

— Եվ առա՞նց կատակի:

— Առանց կատակի:

Շահյանն իր պատասխանները տալիս էր իսկույն և համարձակ: Այդ բանում նրան քաջալերում էր պանի Զդաննիչի մտերմական-հովանավորող վերաբերմունքը: Նա տեսավ, որ խիստ հետաքրքրել է պանի Զդաննիչին, ուստի փքվում էր և չէր վախենում իր մտքերն ուղղակի հայտնելուց: Արագ քայլերով անցուդարձ էր անում սենյակի երկարությամբ, որի ժամանակ թեթև կերպով ճռճռամ էին նրա կոշիկները, և թեև չէր նայում պանի Զդաննիչին, բայց զգում էր, որ նա, զարմացած աչքերով հետևում էր իրեն: Այդ բանը խիստ հաճելի էր Շահյանի համար, և այդ միջոցին նա զգում էր, որ բարձրացել է ինքն իր աչքում:

— Լսեցեք, պարոն Շահյան, — խոսեց պանի Զդաննիչը կարճ լռությունից հետո: — Դուք, իհարկե, չափազանցնում եք, որովհետև, ինչպես տեսնում եմ, դեռևս շատ անփորձ եք: Երևի մի որևէ անախորժ դեպք է պատահել ձեզ, որ այդպես ...

— Այո, մի խիստ անախորժ դեպք, պանի Զդաննիչ, — վրա բերեց Շահյանը խիստ ու կտրուկ և ականջ դրեց կոշիկների ճռճռոցին:

— Ի՞նչ դեպք:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Այն, որ ես ծնվել եմ:

Շահյանն իսկապես շատ լուրջ կերպով ասաց այդ խոսքերը, բայց հետո, ինքն էլ չհասկացավ ինչու, նայեց պանի Զդաննիչին: Նրանց աչքերը հանդիպեցին իրար, և երկուսն էլ միաժամանակ ծիծաղեցին:

— Եվ դուք ասում եք, թե կատակ չեք անում, — նկատեց պանի Զդաննիչը:

— Ոչ, իզուր եք կարծում, թե՝ որ ծիծաղեցի, կատակ եմ անում: Ամենալուրջ կերպով կրկնում եմ, որ միակ և ամենամեծ անախորժ դեպքը, որ պատահել է ինձ, այդ այն է, որ ես ծնվել եմ:

— Բայց չէ՞ որ այդ վաղուցվա դեպք է, — բացականչեց պանի Զդաննիչը, շարունակելով ծիծաղել:

— Այո, բայց, դժբախտաբար, այնպիսի մի դեպք, որի ծանրությունը մարդ հետո է զգում:

— Դուք փիլիսոփա եք եղել, պարոն Շահյան:

— Այդ ավելի վատ է: Ես կկամենայի անասուն լինել:

— Ախ, դուք կրկնակի փիլիսոփա եք եղել, — բացա կանչեց պանի Զդաննիչը այս անգամ արդեն բարձրաձայն ծիծաղելով: — Դուք հոռետես եք, այդ իմացա. անշուշտ և աթեիստ եք: Չէ՞:

Շահյանը հոնքերը կիտեց և կանգ առավ:

— Դուք ինձ ծաղրում եք, պանի Զդաննիչ, — նկատեց նա վիրավորված:

— Իհարկե, ծաղրում եմ, հապա ի՞նչ էիք կարծում, — վրա բերեց պանի Զդաննիչը լուրջ, մտերմական հանդիմանությամբ — Քանի՞ տարեկան եք:

Շահյանը չպատասխանեց: Նա նայում էր պանի Զդաննիչի փեշերին:

— Հազիվ թե քսան-քսանհինգ տարեկան լինեք, չէ՞: Եվ այդ հասակում թույլ եք տալիս ձեզ այդպիսի պառավական հայա՞ցք ունենալու կյանքի վրա: Եվ ձեր այդ երիտասարդական հասակը, ձեր արյունը, ձեր ամբողջ էությունը չի՞ բողոքում այդ փտած հայացքի դեմ: Կարելի բա՞ն է միթե այդ: Ձեր հասակում մարդը մարմնացած մի ցանկություն պիտի լինի ապրելու, ապրելու և միմիայն ապրելու. կյանքին նվիրված օրհներգներ պիտի հորինի նա, պիտի վայելի ագահորեն կյանքի բոլոր բարիքները, շատ անգամ զոռով խլելով նրանից այդ բարիքները, և համենայն դեպս, կատաղի կռիվ պիտի մղի մահվան գաղափարի դեմ: Իսկ ...

Իսկ ես դատարկ և աննպատակ բան եմ համարում այդ բոլորը:

— Ախ, դուք նպատա՞կ եք ուզում:

— Անպայման:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Բայց այդ բոլորի նպատակը հենց այն է, ինչ որ ասեցի: Ուրիշ ի՞նչ եք ուզում:

— Դուք ինձ չեք հասկանում, պանի Զդաննիչ:

— Ես ձեզ շատ լավ եմ հասկանում, պարոն Շահյան: Դուք հետևում եք բոլոր հոռետեսներին հատուկ մի ընդհանուր պակասության, չեք տեսնում ձեր քթի տակ գտնված գանձը և ձգտում եք տեսնել անծանոթ մի գանձ, որը գտնվում է ձեր տեսողությունից դուրս և միանգամայն անմատչելի է ձեզ:

«Այս ի՞նչ է, այլաբանությո՞ւն», — մտածեց Շահյանը լավ չհասկանալով պանի Զդաննիչի խոսքերի իմաստը, և կամաց, վախեցած նայեց նրա մեղմորեն և փոքր-ինչ ծաղրաբար ժպտող աչքերին:

Պանի Զդաննիչը մոտեցավ նրան և այս անգամ խոսեց այնպես, ինչպես հասակավորը խոսում է երեխայի հետ:

— Ես ուզում մի քանի խրատ տալ ձեզ, պարոն Շահյան: Ամենից առաջ պիտի ասեմ ձեզ, որ դուք ձեր հոռետեսությամբ ինձ վրա այնպիսի տպավորություն եք թողնում, ինչպիսի տպավորության որ կթողնի ծխախոտ ծախող երեխան: Ես ներողություն չեմ խնդրում ձեզնից իմ այս համեմատության համար, որովհետև այնքան համակրեցի և սիրեցի ձեզ, իմ ազնիվ բարեկամ, որ անկեղծորեն կփափագեի ձեզ ազատված տեսնել այդ սարսափելի հիվանդությունից: Իսկ հոռետեսությունն իսկապես սարսափելի հիվանդություն է, որից ամեն կերպ պիտի աշխատեք ազատվել: Եվ այդ բանը դժվար չէ. հարկավոր է միայն կյանք մտնել. կյանքը ճաշակել և. — դեն շպրտել այն գրքերը, որ կարդում եք: Այո, այո, իմ սիրելի բարեկամ, ես տեսնամ եմ, որ դուք շատ անփորձ եք, կյանքը չեք ճանաչում, նրա համը չեք առել ամենևին և խոսում եք միմիայն գրքերից: Բայց եթե կյանքի գիրքն էլ կարդայիք, կտեսնեիք, որ նրա էջերը ձեր կարծածի չափ սև չեն: Ի նկատի ունեցեք, որ այս բանն ես ասում եմ կյանքի մեջ այնքան դառնություններ ճաշակելուց հետո: Կյանքը, ինչ էլ որ լինի նա, միշտ սիրելի է, համենայն դեպս, ավելի սիրելի ու ցանկալի, քան մահը, ճիշտ այն բնական օրենքի զորությամբ, որում մարդուս համար ավելի սիրելի ու ցանկալի է իր աշխարհագրական հայրենիքը, քան օտար, անծանոթ մի երկիր: Մեռնելը միշտ կարելի է, պարոն Շահյան, ով ցանկանամ է այդ, բայց նորից ապրել, ավաղ, այդ միայն Ղազարոսին է վիճակված: Մտածեցեք, ինչքան ուզում եք մտածեցեք և խորը գնացեք կյանքի վերջնական նպատակը գտնելու, մարդու գոյության հանելուկը լուծելու համար — ի՞նչ դուրս կգա դրանից: Ոչինչ: Մտածելով չեք կարող փոխել աշխարհիս օրենքները: Այդ օրենքներն եղել են, կան և կմնան նույնը, անկախ այն բանից, թե ինչ է մեկնություն եք տալիս դուք նրանց: Մտածելով ավելի ևս կենթարկեք ձեզ նրանց ճնշմանը, ավելի ևս կտանջվեք անորոշության մեջ և մի ծայր, որին վերջ ի վերուո կհասնեք, այդ այն կլինի, որ կվճռեք անձնասպանություն գործել: Բայց ինչու՞ համար, հարցնում եմ ձեզ, ի՞նչ նպատակով: Դուք կյանքի նպատակն եք փնտրում, բայց ինչո՞ւ մահվան նպատակի մասին ևս ոչինչ չեք մտածում:

Պանի Զդաննիչը լռեց և նայում էր Շահյանի դեմքին առաջվա նման հանդարտ, փոքր-ինչ ծաղրաբար ժպտող աչքերով, բայց համակրանքով:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանը սուս էր կացել: նա զգում էր, թե այժմ նույն դրության մեջ է, ինչ որ Աշխենի և Եվայի հետ միևնույն նյութի մասին ունեցած խոսակցության ժամանակ: Սակայն այդ երկու հարանման դրության միջև էական մի տարբերություն կար: Աշխենի և Եվայի հետ ունեցած խոսակցության ժամանակ նա պարզապես զգում էր, որ ինքն ակամա երեսն է հանել իր մտավոր ու բարոյական կատարյալ դատարկությանը և ծաղրի ու հիասթափության առարկա է դարձել — մի բան, որ մահ էր իր համար: Մինչդեռ այժմ այդպիսի բան ամենևին չէր զգում: Ճիշտ է, տեսնում էր, որ պանի Զդանևիչն էլ ծաղրում, նույնպես երեխա էլ է անվանում իրեն, բայց այդ ծաղրը սիրելի և հաճելի էր նրա համար և դրանով իրեն ավելի մոտեցած էր զգում պանի Զդանևիչին: Նա զգում էր, որ ինքն ամենևին հոռետես չէ, զայրանում էր, թե ինչո՞ւ կեղծում էր, ինչո՞ւ համարձակություն չուներ սիրտը բանալու պանի Զդանևիչի առաջ, որն իր մտերմական-հովանավորող վարմունքով այնքան վստահություն էր ներշնչում նրան: Եվ առաջին անգամ խիստ ափսոսաց, որ շտապեց նամակն այրել:

Այժմ նա կանգնած էր պանի Զդանևիչի առաջ պարզապես հուսահատված այն բանից, որ ինքը, չնայելով իր ներքին ուժեղ դրդման, վախկոտությամբ ետ էր նահանջում ճշմարտությունն ասելուց: Իսկ այդ ճշմարտությունն այն է, որ նա ցանկանում էր ապրել, ցանկանում էր ընկնել այդ սիրելի, այդ պաշտելի կնոջ առաջ, զրկել նրա ոտները և աղաղակել. «Ավելորդ են խրատներդ, քեզնից ավելի լավ եմ հասկանում, թե որքան սիրելի բան է կյանքը: Բայց կյանքը, իմ կյանքը դու ինքդ ես: Կաց, մի գնա: Կաց, իմս եղիր և կտեսնես թե ինչպիսի օրհներգներ կնիվիրեմ կյանքին, ինչպես կաստվածացնեմ, կպաշտեմ քեզ և քեզ հետ — կյանքը ...»

— Ինչպե՞ս է, ընդունո՞ւմ եք խրատներս, թե ոչ, — հարցրեց պանի Զդանևիչը ժպտալով:

— Այդ խրատները ես ինքս էլ շատ լավ եմ հասկանում, բայց ... հասկանալ բավական չէ, — ասաց Շահյանը, աշխատելով չկորցնե խոսակցության նախկին եղանակը: — Կյանքը սիրելու համար, հարկավոր է նրան տիրել:

— Տիրեցեք, ո՞վ է ձեզ արգելում:

— Ով է արգելում... Ես ինքս:

— Դուք ինքնե՞րդ:

— Ես կամք չունեմ... ես փալաս եմ, — արտասանեց Շահյանը, և նրա ձայնը դողաց: Նա նստեց և քիչ էր մնում լաց լինի:

Պանի Զդանևիչը նայեց նրան լրջորեն և զարմացած: Հետո հանկարծ ուսից հանեց սակվոյաժը և ձգեց մի կողմ:

— Ես այլևս չեմ գնում, մնում եմ, — ասաց նա:

Շահյանը վեր թռավ տեղից, և արտասուքը, որ խեղդում էր նրան, ցամաքեց կոկորդի մեջ:

— Մինչև որ չիմանամ ինչ է ձեր վիշտը և չհանգստացնեմ ձեզ, չեմ հեռանալ այստեղից, — ավելացրեց պանի Զդանևիչը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Շահյանը կարկամել էր և չէր իմանամ ինչ ասի, ապուշի պես նայում էր պանի Զդաննիչին իր պլպլան ակնոցի միջից, և նրան թվամ էր, թե խելքը կորցնում է: Նա սառում ու տաքանում էր այն կասկածից, թե միգուցե մատնել է իրեն, և պանի Զդաննիչն արդեն հասկացել է, թե ինչ է պատահում իրեն:

Պանի Զդաննիչը առավ նրա ձեռքը և համառ ու փորձող հայացքով նայում էր նրա աչքերին:

— Լսու՞մ եք, պարոն Շահյան, ես մնում եմ, չեմ գնում: Ձեր դրությունը, ձեր խոսքերն ինձ շատ տարօրինակ են թվամ, իսկ եա այնքան համակրում եմ ձեզ, որ չեմ կարող հանգիստ սրտով հեռանալ, մինչև որ չիմանամ, թե ինչ է պատահում ձեզ: Ես տեսնամ եմ, որ դուք մի վիշտ ունիք, որ դուք ուզում եք ինչ-որ ասել, բայց չեք վստահանում: Ասացեք, մի վախենաք. ինձնից ավելի լավ բարեկամ և խորհրդատու կարող ճարել: Ասացեք, ասացեք համարձակ:

— Ես... ես ոչինչ չունիմ ասելու, — շշնջաց Շահյանն այնպիսի ողորմելի ձայնով, որ կարծես թե իրեն մեղադրում էին ինչ-որ մահացու մի հանցանքի համար, որից ուզում էր հրաժարվել: Եվ նա, առանց զգալու, բնազդական վախկոտությամբ ձեռքը կամաց դուրս քաշեց պանի Զդաննիչի ձեռքից ու ետուետ քաշվեց, կարծես այդ կինը սպառնում էր ճխլել նրան իր հսկայական հասակի տակ, ոչնչացնել նրան իր հետաքրքիր աչքերով:

Պանի Զդաննիչը հենց այնպես էլ սառած մնաց իր տեղում: Մի րոպե կատարելապես ապշած նայում էր Շահյանի ճակնդեղի պես կարմրատակած դեմքին, հետո ուսերը վեր քաշեց, վերցրեց սակվոյաժը, ձգեց ուսին և մոտեցավ ճամպրուկներին:

— Չեմ հասկանամ, ոչինչ չեմ հասկանամ, — ասաց կարծես ինքն իրեն, և զբաղվեց մնացած իրերը ճամպրուկի մեջ տեղավորելով:

Շահյանը զգաստացավ և նոր զգաց, թե որպիսի թանկագին րոպե բաց թողեց ձեռքից: Ուզում էր սխալն ուղղել, բայց ուշ էր արդեն: Տեղնուտեղն արձանացած, այժմ քաթանի պես գունատվել էր: Այդպես է լինում, երբ ձեռքիդ բռնած չափազանց նուրբ ու թանկագին մի անոթ հանկարծ ընկնում կոտրվում է և կոտրածը ոչ կարելի է ամբողջացնել, ոչ նույնիսկ կոծկել: Շահյանն զգաց, որ եթե ինքը մի որևէ բանով գրավել էր պանի Զդաննիչին, այդ մի բանն էլ կորավ, չքացավ անդարձ, այժմ ինքը պարզապես ապուշի տպավորություն է թողնում այդ կնոջ վրա: Եթե ավելի մեծ խայտառակության երկյուղը չունենար, ուղղակի կառներ գլխարկը և դուրս կփախչեր, որպեսզի չտեսներ պանի Զդաննիչի հիասթափված, ապշած դեմքը ...

Նրանք կայարան հասան այն ժամանակ, երբ երկրորդ զանգն արդեն տվել էին: Պանի Զդաննիչը սպասում էր, որ Շահյանը կօգնի իրեն շուտով վագոններից մեկում տեղավորվելու, բայց տեսնելով, որ նա փայտի պես կանգնած է մնացել իր տեղում, ինքը վազեց տոմսակ գնելու և հետո ճամպրուկները շալակած բեռնակրին առաջ գցեց դեպի երկաթուղու կառախումբը: Շահյանը մեքենայաբար հետևեց նրան և պլատֆորմի վրա խռնվող բազմության քիչ մնաց, որ աչքից կորցներ նրան: Պանի Զդաննիչը հազիվ ժամանակ ունեցավ նրա ձեռքը սեղմելու:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Մնաք բարյավ, պարոն Շահյան, — ասաց նա: — Ես ոչ ձեզ կմոռանամ, ոչ իմ պարտքը: Իսկ դուք չմոռանաք, որ ինձ համար հանելուկ մնացիք, — ավելացրեց նա ժպտալով և, կրկին անգամ պինդ սեղմեց նրա ձեռքը: — Մնաք բարյավ:

Նա հավաքեց իր երկայն վերարկուի փեշերը և բարձրացավ վագոնն այն ժամանակ, երբ գնացքն արդեն սկսել էր շարժվել տեղից:
Շահյանն այլևս չտեսավ նրան:

10

Ննջարանի առաստաղից կախված գնդաձև լապտերն իր միապաղաղ կարմիր ապակու միջից մեղմ, անշարժ լույս էր տարածել սենյակում: Խուլ լռության մեջ թվում էր, թե այդ լույսը, սաստիկ տխրած, նիրհում է: Լուսամուտների ասվեգործ վարագույրների ծակոտիներից երևում էր, թե ինչպես ձմեռային օրվա սառած ու անփայլ վերջալույսը, արագորեն խավարելով, հանգչում էր դաժան հանգստությամբ, և թանձր մառախուղը գորշ ամպի նման ծանրությամբ նստում էր երկրի վրա:

Մահճակալի վրա պառկած էր Թեկլեն այնքան անշարժ, որ թվում էր, թե մեռած է: Լապտերի կարմիր լույսի մեջ նրա խոշոր դեմքն իր լի կզակով, կարծես, պատած էր կարմիր շղարշով, որի մեջ բնականից ավելի սևին էին տալիս նրա փակ աչքերի չափից դուրս լայն փռված թերթերունքները, ինչպես խավարած կիսալուսիններ: Դեմքն այնպես սառն էր և անշարժ, որ գլուխը կարծես կերտած լիներ մի կարծր քարից և այդ քարն իր ամբողջ ծանրությամբ թաղվել էր փափուկ բարձի մեջ:

Ննջարանի խորքում նստած էր Մարությանը և վշտահար խոնարհվել էր ծնկների վրա: Մոր մահճակալի մոտ նստած էր Եվան և անթարթ աչքերով նայում էր հիվանդի դեմքին: Լապտերի կարմիր լույսի տակ նրա դեմքը սրվել պլպլում էր, աչքերն անբնական կերպով մեծացել, սառել էին: Շուրջը տիրող քարացած լռությունը, լապտերի միապաղաղ աղոտ-կարմիր լույսը մահվան տպավորություն էին թողնում: Եվ մահվան այդ կաշկանդող տպավորության տակ Եվայի անշարժ հայացքը հառած էր մոր դեմքի վրա, մինչև որ նրան թվում էր, թե կարժիր լույսի թափանցիկ շղարշով պատած նրա դեմքը կամաց-կամավ շարժվում, երկարում ու լայնանում է, փակ աչքերի լայն փռված թերթերունքները բարձրանում են ծանրությամբ, բերանը սկսում է բացվել և ահա՛, որտեղ որ է, պիտի լսվի այն սարսափելի ճիչը, որ արձակեց մայրն այդ առավոտ որդու մահվան գույժը լսելով: Եվան ցնցվում էր, անթարթ նայելուց շաղվող հայացքը հեռացնում էր մոր դեմքից, գլուխը ետ էր ձգում աթոռի մեջքի վրա և աչքերը փակում: Լապտերի լույսը վերևից ուղղակի ընկնում էր նրա դեմքին, և այդ դեմքն այնքա՛ն անշարժ, այնքան անզգա էր

երևում:

Անշարժ շրջապատի կաշկանդող տպավորության տակ նրան թվում էր, թե ամբողջ ննջարանը լիքն է ուրվականներով, որոնք իրար են անցնում հանդիսավոր լռությամբ, և ինքն իր փակ աչքերով տեսնում է նրանց ու չի վախենում: Թողնելով, որ ուրվականներն իրենց հիմար պարը բռնեն, նա անձնատուր էր լինում անորոշ մտածմունքների և անմեղ զարմանքով հարցնում էր ինքն իրեն. «Այս ի՞նչ է կատարվում շուրջս»: Ծայրահեղ վիշտը բթացրել էր նրա զգացումները, այնպես՝ որ նա կարծում էր, թե ինքը վիշտ չի զգում ամենևին,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

այլ միայն ինչ-որ վերին աստիճանի օտարոտի մի բան կաշկանդել է իր ամբողջ էությունը, և ինքը ոչ մի կերպ չի կարողանամ դուրս գալ այդ կաշկանդված դրությունից: Նրան թվամ էր, թե հանկարծ ընկել է բոլորովին նոր ու անծանոթ մի աշխարհ, ուր ամեն ինչ մութն էր ու լուռ, ինչպես գերեզմանի մեջ: Այդ սոսկալի մթության և լռության մեջ մի լույս կար միայն, արյան նման կարմիր մի լույս, որի մեջ հանդիսավոր պար էին բռնել ինչ-որ անձև ա անմարմին ուրվականներ ... Նա աչքերը բաց էր անում, նայում էր առաստաղից կախված է լապտերին և կրկին անգամ հարցնում էր ինքն իրեն անմեղ զարմանքով. «Այս ի՞նչ է կատարվում շուրջս»:

Նրա ուղեղի մեջ ամուր կերպով, ինչպես ոստը փայտի մեջ, ցցված էր մի գիտակցություն միայն — եղբայրն այլևս չկար, նա այլևս չէր վերադառնալու, նրան այլևս չէր տեսնելու երբեք, երբեք ... Մնացածը ինչ-որ մտածում ու զգում էր — խառնում էր իրար, կուտակվում ու ցրվում, առանց որևէ հետք թողնելու: Երկար ժամեր մոր մահճակալի մոտ նստած չէր հասկանում, թե ինչ դեր է կատարում ինքը, ինչու մայրը շարունակ պառկած է անշարժ, ինչու հայրն այնպես խոնարհվել է ծնկների մրա, ինչու ամբողջ տան մեջ տիրում է այդ զարհուրելի լռությունը: Երբեմն, երբ դուրս էր գալիս այդ կաշկանդված դրությունից, նայում էր շուրջը և մտքումը դարձյալ կրկնում էր. «Այս ի՞նչ է կատարվում շուրջս»: Նրան թվում էր, թե խելագարվում է: Բայց այդ միտքն ամենևին չէր սարսափեցնում նրան: Եղբոր մահից հետո մահն անգամ սարսափ չէր նրա համար, ա՛յն մահը, որից այնքան վախենում էր առաջ: Եղբայրը չկա այլևս — վերջացավ, այլևս երբեք չպիտի տեսնի նրան, երբեք: Իսկ նրանից հետո թեկուզ ամբողջ աշխարհը կործանվի և ինքն էլ հետը միասին: Աշխենը, — ահա՛ թե ում համար պետք է ցավել... Սակայն Աշխենի համար միևնույնը չէ՞ — Արմենակն ապրո՞ւմ է, թե ոչ. չէ՞ որ նրանք երկուսն էլ վաղուց արդեն թաղել են իրենց իրար համար... Մի՞թե:

«Ոչ, ոչ, ոչ», — շշնջաց Եվան մտքում և խոնարհվեց ծնկների վրա:

Նրա առաջ պատկերացավ հորեղբոր աղջիկն այն դրության մեջ, երբ նա, իր վզին փարած, ծանր հեկեկանքով իր դժբախտ սիրո պատմությունն էր անում: Եվան այն ժամանակ վերին աստիճանի հիասթափված էր, ուստի սառն ու անկարեկից: Բայց այժմ միանգամից զգաց Աշխենի բոլոր տանջանքն ու հուսահատությունը: Եվ հոգով-մտքով թռավ այնտեղ, ուր հեռացել էր Աշխենը մեղմելու համար իր տանջանքներն անձնուրաց գործունեության մեջ: Ա՛խ, ինչպես կցանկանար, որ այդ րոպեին իսկապես այնտեղ լիներ, ի՛նչպիսի կարոտով ու տանջանքով կրծքին կսեղմեր իր սիրելի Աշխենին, որպեսզի մխիթարեր նրան, որպեսզի մխիթարվեր ինքը... Բայց արդյոք գիտե՞ Աշխենը, որ իր սիրած երիտասարդն այլևս չկա... Եվ, եթե չգիտե ու նոր անի, ի՞նչ կանի...

«Տեր աստված, տեր աստված, այս ի՞նչ է պատահում ինձ», — շշնջած Եվան անտանելի տանջանքով, խոնարհված ծնկների վրա և մատներով սեղմելով իր ուսերը ցնցողաբար: Նոր էր զգում իր վիշտը, նոր էր տեսնում, թե ի՛նչ սոսկալի թշվառություն էր պատահել իրենց ընտանիքի մեջ:

Եվան նստեց ուղիղ և նայեց չորս կողմը:

Լապտերի մեղմ լույսն իր կարմրությամբ, կարծես, գոլորշիանում էր: Խուլ լռության մեջ ականջները թշշում էին: Թեկլեի՝ բարձի մեջ ծանր քարի նման թաղված գլուխն իր դեմքի մեռելային անշարժությամբ զարհուրելի տպավորություն էր գործում: Մարությանն, առաջվա նման անշարժ խոնարհված էր ծնկների վրա. նրա ճաղատ ծոծրակը, կարմիր լուսով

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

լուսավորված, վշտահար ցնցվում էր կարծես: Թվում էր, թե միշտ ուրախ, միշտ զվարճախոս այդ մարդը, որ այժմ այդպես խղճալի կերպով կուչ էր եկել, լաց է լինում անձայն, և անմխիթար արտասուքները ողողում են նրա ծնկները: Անհուն խղճահարությամբ ու վշտով նայում էր Եվան նրա կախված գլխին, որ կարծես հարյուր տարեկան ծերունու գլուխ լիներ, և խելագարեցնելու չափ տանջում էր նրան այն միտքը, որ ինքը ոչ մի, ոչ մի բանով չպիտի կարողանա մխիթարել այդ թշվառ հորը:

«Օֆ, տեր աստված, — շշնջաց նա, անասնելի վշտից աչքերը փակելով, — ի՞նչ կլինի, որ այս բոլորն երազ լինի միայն, այն սարսափելի երազներից մեկը, որից մարդ զարթնում է սրտի անհուն թեթևությամբ և ուրախանում, որ իր բոլոր տեսածն ու զգացածը լոկ երազ է եղել ...»:

11

Թեկլեն առաջին օրը անցկացրեց խորին անզգայությանմեջ: Նա ուշքի եկավ հետևյալ օրը և նմանում էր լեթարգիական քնից արթնացողի: Այնուհետև սկսեցին որդեկորույս մոր ծանր վշտի ծանր օրերը: Նա լալիս էր մերթ մեղմորեն, առանց արտասուքի, երկար, աղեկտուր բառերով, մերթ ողբում էր կատաղի ջղայնոտությամբ, որի միջոցին խելագարի պես փետում էր մազերը, ճանկռոտում երեսը, կոծում էր ծնկները ինչ-որ վայրենի ճիչերով, որից հետո հանգստանում էր հանկարծ, գլուխը կախում էր կրծքին և մղկտում էր լուռ, առանց բառեր արտասանելու և աչքերից թափվում էին արտասուքներն առվի պես: Երբ կսկծի ուժգին թափն անցավ, նա այլևս չէր ողբում, նրա աչքերն այլևս թաց չէին լինում. նա ման էր գալիս ուրվականի պես, նայում էր շարունակ լայն բացած աչքերով, կարծես զարմացած ինչ-որ խիստ զարմանալի մի բանի վրա, և շատ քիչ էր խոսում, երբեմն էլ ամբողջ ժամերով նստած էր մնում մի տեղում անշարժ ու լառ և չէր իմանամ ինչ է մտածում: Շատ հաճախ որդու լուսանկարները դնում էր առաջը, նայում էր , նայում, հետո գլուխը դնում էր վրան և նրան թվում էր, թե հանգիստ ու քաղցր մի քուն է մտնում: Մի երկու անգամ ուշագնաց եղավ այդ դրության մեջ, և հազիվ կարողացան նրան ուշքի բերել:

Մարությանն այլևս այն Մարությանը չէր. թվում էր, թե առմիշտ կորցրել էր իր աշխույժը, դարձել էր լռակյաց և ջղային ու գրգռվում էր ամեն մի չնչին բանից: Նա միշտ էլ խույս էր տալիս թե կնոջից, թե աղջկանից և տանն եղած ժամանակ մեծ մասամբ փակված էր մնում առանձնասենյակում:

Եվան նույնպես բոլորովին փոխվել էր: Եղբոր չարաչար մահը և Բազենյանի վերաբերմամբ ունեցա՛ծ ծանր հիասթափությունը, փոխանակ ընկճելու, ինչ-որ վեհություն էին տվել նրա հրգուն: Այդ վեհությունն արտահայտվում էր նրա ամբողջ արտաքինի մեջ. հասակով կարծես ավելի ևս բարձրացել էր, ման էր գալիս առանց շտապելու, հաստատուն քայլերով, նայում էր վիրավորված մարդու հպարտ հայացքով: Խոսում էր վճռական ձայնով և թվում էր, թե հոր ու մոր վշտի վրա նայում էր առանց որևէ կարեկցության: Սակայն, շատ գիշերներ, երբ պառկում էր քնելու, քունը մոտ չէր գալիս նրա աչքերին, դեմքը թաղում էր բարձի մեջ և հեկեկում էր երեխայի պես: Նրա անբիծ հոգին խիստ վրդովված էր: Ամենևին չէր ուզում հաշտվել այն մտքի հետ, թե եղբայրն այլևս չկա, այլևս երբեք չպիտի տեսնի նրան: Մյուս կողմից նրան կատաղի վրդովմունք էր պատճառում այն հանգամանքը, որ մի ինչ-որ անծանոթ, բախտախնդիր երիտասարդ կարողացավ ամենաանարգ կերպով խաբել իրեն և գողանալ իր անարատ սիրտը: Շատ ժամանակ չէր անցել, դեռ երեկ էր, որ նա լի էր կենսուրախությամբ, վառվռուն զգացումներով, ոսկեվառ հույսերով. իսկ այժմ հանկարծ ամեն

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ինչ քարացել էր իր մեջ և իր ծանրության տակ անտանելի կերպով ճնշում էր նրա հոգին: Իր դուրսն ու ներսը տեսնում էր զարհուրելի դատարկություն ու խավար, ինչպես մի մարդ, որ կուրանամ էր հանկարծ: Մարդկանց և աշխարհի վրա ինչպիսի պայծառ հայացք ուներ և հանկարծ ինչ էր տեսնում: Իրենց տունը մանավանդ նրան ներկայանամ էր իբրև մի դրախտ, ուր թշվառությանը չպիտի համարձակվեր ներս մտնել: Մինչդեռ — ահա իր սիրասուն եղբայրն այլևս չկար, ահա մայրը գրեթե խելագարված, ահա հայրը, այդ՝ երիտասարդական աշխույժով լի, այդ բարի ու կենսուրախ հայրը, վշտից ծերացած և դաժանացած: Ահա և ինքը: Ու՞ր են, ու՞ր չքացանա իր անհանգիստ և պայծառ հոգու անզուսպ ձգտումները, որոնք թև էին տալիս թռչելու դեպի բարին, դեպի ճշմարիտը, դեպի սիրո և անձնազոհության գերագույն մի իդեալ, որը ներկայանում էր նրան միշտ արևի կենսատու շողերով լուսազարդված... մեռելություն, սոսկալի մեռելություն ... Նրա համար օրը լուսանում և մթնում էր իբրև բնության մեքենայական մի գործողություն, առանց հարցնելու մարդ արարածին, թե կամենո՞ւմ է նա որ այդ գործողությունը կատարվի: Ծայրահեղ հուսահատության մեջ կյանքը նրան ներկայանամ էր իբրև բոլորովին աննպատակ մի բան, այնպես որ, լավ որ մտածում էր, ապշած էր մնում, թե ուրեմն էլ ինչի համար էին այդ անտանելի տանջանքները, որ այժմ կրում էր ինքը, ինչպես և այն երջանիկ օրերը, որոնք անցան գնացին...

Նրա մեջ զարթել էր խորազնին միտքը — բոլոր տանջվողների մխիթարության այդ միակ աղբյուրը: Մի բան, որ նա սաստիկ փափագում էր, այդ այն էր, որ լիներ մեկը, որի առաջ կարողանար թափել իր բոլոր զգացածներն ու մտածածները: Մի անգամ այդ բանը փորձեց անել հոր մոտ. բայց հայրն այնպես բարկացավ նրա վրա, որ նա. իսկույն լռեց: Մի ուրիշ անգամ օր. Սահակյանի մոտ արեց նույն փորձը և նույն անհաջողությանւ հանդիպեց, օր. Սահակյանը պարզապես ծաղրեց նրան: Եղբայրս որ մեռավ, — ասաց նա, — կարծում էի, թե ես էլ հետը կմեռնեմ վշտից կամ եթե չմեռնեմ էլ, անպատճառ կգժվեմ, բայց ինչպես տեսնում ես, ոչ մեռա, ոչ էլ գժվեցի, և տե՛ս, դեռ ինչքան էլ չաղացել եմ նրա մահից հետո:

12

Մի օր աղախինը Եվային հանձնեց մի նամակ, որ փոստից հենց նոր էր ստացվել: Եվան իսկույն ճանաչեց Աշխենի գիրը: Սաստիկ ճնշող մի զգացումով բաց արեց նամակը և կարդաց.

«Եվա ջան:

Ուռա՛... տոներին քեզ մոտ եմ: Գժվում եմ, որ մտածում եմ, թե ինչպիսի երջանիկ ժամանակ պիտի անցկացնեմ քեզ մոտ ամբողջ երկու շաբաթ: Կարծես տասն տարի է, որ տեմ տեսել քեզ: Ինչքան խնդրեցի, որ լուսանկարդ ուղարկես — չուղարկեցիր, ծուլացար: Շատ բարի, երևի առիթ կունենամ փոխարենը հատուցանելու: Սենյակս արդյո՞ք պահպանել ես նույնությամբ: Մի վայրկյան անգամ չպիտի թողնեմ, որ հեռանաս ինձնից: Գիշերներն էլ պետք է միասին քնենք, իրար գրկած: Այլապես թվում է, թե չեմ կարող բոլոր կարոտս հանել երկու շաբաթվա ընթացքում: Հայրիկն ինչպե՞ս է, մայրիկը, Սուրենը, վերջապես՝ դո՞ւ ինչպես ես, դու, իմ ծլվլան ծիծեռնակ: Ա՛խ, ի՜նչ սիրուն համեմատություն. գրիչս թռավ ինքնաբերաբար: Հիրավի, որ հիշում եմ անհանգիստ սիրելի շատախոսությունդ, իսկույն աչքիս առաջ պատկերանում է ծիծեռնակը գարնանային հրաշալի առավոտյան ծլվլալիս: Բայց դու էլ, ամենքդ էլ անաստված մարդիկ եք. ինչո՞ւ վերջին ժամանակս շուտ-շուտ նամակ չեք գրում: Գրածներդ էլ ի՞նչ է: Նո՞ր եք սովորել այդպես չոր-չոր բաներ գրելը: Ավելի չավ է ոչինչ չգրեք կամ ուղղակի գրեցեք, էլի, ռամիկ մարդկանց պես. «նախ և առաջ կհարցնեմ ձեր առողջությունը, եթե մեզնից կհարցնեք,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

փառք աստծո, մենք էլ ողջ ու առողջ ենք և կցանկանանք ձեր առողջությունը»: Ու պրծավ: Իմացիր, որ առանձնապես բարկացած եմ քեզ վրա, Եվա: Ի՞նչ հիմարություններ էիր գրել վերջին նամակիդ մեջ: Ինչ-որ փիլիսոփա ես դարձել: Ասենք, առաջ էլ փիլիսոփա էիր, բայց այժմ փիլիսոփայությունդ այնքան «խուրը տկեմեն է», ինչպես կասի թիֆլիսեցին, որ գլուխս բան չի մտնում: Օրինակ. ի՞նչ է նշանակում՝ «թշվառ է նա, որ միշտ ուրախ և երջանիկ է»: Սրանք քո իսկական խոսքերն են, որ ես բառացի արտադրում եմ քո վերջին նամակից: Աստված վկա, անպես խիտի կռվեմ քեզ հետ այդ խոսքերի համար, որ ... Սպասիր մեկ անգամ: Այդ խոսքերի վրա ինչե՛ր, ինչե՛ր չեմ մտածել, բոլորը հիմարություններ, իհարկե... Ա՛խ, քույրիկ ջան, աստված ոչ անի, որ դու երբևիցե թշվառ լինես: Կմեռնեմ, որ քեզ թշվառ տեսնեմ: Բայց այդ անկարելի է. ծիծեռս մի՞թե կարող է բու դառնալ... Ո՛ւֆ, քիչ է մնում, որ նորից հիմար մտքեր ծագեն գլխումս այս ցնծագին տրամադրությանս միջոցին, երբ ուրիշ ոչ մի բանի մասին չեմ ուզում մտածել, բացի միայն այն բանի մասին, որ շուտով պիտի գամ, պիտի տեսնեմ քեզ, պիտի գրկեմ քեզ, պիտի համբուրեմ սիրունիկ աչքերդ... Ուֆ: Գիտե՞ս, այդ բացականչությունը, որ գրեցի, ո՞վ պատկերացավ իսկույն առաջս. — դու: Ճիշտ է, լուսանկարդ չուղարկեցիր, բայց ես ավելի զորեղ միջոց ունեմ քեզ տեսնելու, քան մեռած թուղթը կարող է ցույց տալ. ամեն անգամ, որ ուզում եմ քեզ պատ կերացնել դեմքս քեզ պես թթվեցնում եմ զայրացկոտությամբ, գլուխս ցնցում, ձեռքս խփում ծնկանս և ինքս ինձ արտասանում սրտանց «Ուֆ»: Այդ բավական է լինում, որ քեզ ոտով-գլխով տեսնեմ աչքիս առաջ: Հեշտ միջոց է, չէ՞: Դրանով եմ ապրել այս մեռելության մեջ այսքան ժամանակ: Զարմանալի է. այդտեղ եղած ժամանակս այնքան չէի սիրում քեզ, ինչքան հիմա, այստեղ: Բայց այս էլ ճիշտ է, որ դու կախարդ ես: Կախարդ, որ չլինեիր, քեզ տեսնելու կարոտն այսպես չէր սպանիլ ինձ: Ա՛խ, ե՞րբ պետք է անցնի այս երկու շաբաթը: Ահա թե երբ է հարկավոր, որ մարդիկ թևեր ունենային:

Այսօր թեմական տեսուչն եկավ մեր գյուղը (տեսնո՞ւմ ես, ես արդեն «մեր» եմ ասում), այցելեց մեր ուսումնարանը, ներկա եղավ դասերիս և շատ գոհ մնաց. այնքան գովեց, այնքան գովեց, որ... պատրաստ եմ տասն անգամ, հարյուր անգամ համբուրելու քեզ: Ինքս ինձ վրա զարմացած եմ մնացել. ե՞ս, այսքան փոխված. — Առաջ, որ կատարելապես անտարբեր էի, թեկուզ արժանիքներիս համար մի ամբողջ թագավորություն էլ տային ինձ, — այժմ ամենաչնչին գովասանքից անգամ ուրախանամ եմ երեխայի պես: Ինչո՞վ կբացատրես այս հանելուկն, իմ սիրուն փիլիսոփա:

Գիտե՞ս, երբ եմ գրում այս տողերը, — գիշերվա ժամի տասին: Այդ արդեն շատ ուշ է այստեղ: Դուրսն երեք վերշոկ ձյուն է նստած, շները խուլ ոռնում են: Առաջս, սեղանիս գլխին, պատի վրա, մեխից կախված ճկճկում է ծո՛ցիս ժամացույցը, բուխարումը փայտեր են ճրթճրթում, — միակ ձայները, որ լսում եմ գիշերային այս լռության մեջ: Այս երեկո (շաբաթ) Մինասյանի քույրը սենյակումս երկու մոմ վառեց և խունկ ծխեց: Մոմերը վաղուց են հանգել, իսկ խունկի ծուխն ու հոտը դեռես չեն անցել: Սիրում եմ մեղրամոմի դժգույն լույսն, խունկի հոտը, թեև դրանք մեռելի և մահվան գաղափար են հիշեցնում ինձ միշտ: Ականջումդ մի բան ասեմ, որ ոչ ոքի չասես, — առաջ ես սկեպտիկ աթեիստ էի: Դու այդ չգիտեիր: Իսկ այժմ... դարձյալ զարմանալի փոփոխություն. — մինչդեռ շուրջս այս տգետ ու գռեհիկ ամբոխի մարդկանց բերանից հայհոյանքներ եմ լսում նույնիսկ աստծո հասցեին, ես լի հավատով ու ակնկալությամբ պաշտում եմ այն խաչը, որի վրա չարչարեցին, մահացրին նրան: Երբեմն, կեսգիշերին, մենակությանս մեջ, այս խուլ անկյունում, որ կյանքը ներկայանում է իր ամենամռայլ գույներով, հոգիս լցվում է անտանելի թախծությամբ և այդ թախիծը կարողանում եմ փարատել միայն լուռ արտասվելով և աղոթելով: Ո՞ւմ համար եմ աղոթում,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ո՞ւ համար կարող եմ աղոթել — այդ դու գիտես... աղոթքի բոլոր զորությունը, բոլոր քաղցրությունը զգացի այն ժամանակ միայն, երբ գործնական կյանքի մեք համոզվեցի, թե հիրավի ի՛նչ սքանչելի բանէ անձնուրացությունն ուրիշի բարօրության օգտին: Մարդիկ անմիտ են, Եվա ջան. նրանք ազում են երջանիկ լինել, բայց չգիտեն, թե ո՛րն է երջանկության ուղիղ ճանապարհը: Երջանկությունը նրանք որոնամ են անձնական բարձրության, եսասիրության մեջ, մինչդեռ այդտեղից է, որ բխում է բոլոր թշվառությունների աղբյուրը: Մարմինը, մարմինը և միայն մարմինը, — ահա մեր մարմնի կուլտը: Մինչդեռ ի՞նչ է դա, այդ մարմինը, — մի բուռ հող, որ այսօր-էգուց պիտի միախառնվի հողի հետ: Այնինչ հոգին, այդ միակ բանը մարդու մեջ, որ անմահ է և որը միայն ուժ ունի անմահացնելու մարդու անունը, — ինչո՞ւ մոռանանք այդ հոգին: Քանի՞ գրոշ արժե մարմնական թեկուզ ամենամեծ վայելքը հոգեկան այն սքանչացման դեմ, որ զգում ես դու, երբ տեսնում ես, որ ուրիշի օգտին լավ բան ե սգործել, թեկուզ այդ ուրիշը լինի մի անասուն, այո, — պարզապես մի անասուն: Փորձիր դուրսը, փողոցի մեջ ցրտից կոնկոռնացող, քաղցած մի շուն ներս կանչել սենյակդ, տաքացնել, կերակրել և կտեսնես, թե որքան թեթևացնում է հոգիդ, որքան թեթևանում է հոգիդ, որքան նրբանում են զգացումներդ, որքան ուզում ես սիրել և բարիք գործել ...

Ցտեսություն, իմ աննման Եվա, ցտեսություն: Շուտով կտեսնեմ քեզ գրկիս մեջ, կարոտակեզ սրտիս սեղմած: Ախ թևեր, թևե՛ր... Բարևիր հայրիկին, մայրիկին, Սուրենին պաչեր իմ կողմից: Իսկ ես պաչպչում եմ սիրուն աչիկներդ:

Քո Աշխեն»:

Հ. Գ. — հենց որ դուրս գամ, առաջին իսկ կայարանից կհեռագրեմ: Արմենակից ի՞նչ տեղեկություն: Ինչ՞ւ ոչինչ չես գրում»:

13

Մարությանը հենց նոր վերադարձել էր ճաշի, երբ աղջկա սենյակից լսեց զսպված հեկեկանքի ձայներ: Նա ջղային զայրույթով դեն շպրտեց գլխարկը և անցավ աղջկա սենյակը:

— Է՞լ ինչ է պատահել, — հարցրեց սաստող, բայց վախեցած ձայնով:

Եվան, նամակը ձեռքին, վեր թռավ տեղից:

— Չե՛մ կարող, հայրի՛կ, չեմ կարող, — աղաղակեց հուսահատորեն: — Սպանի՛ր ինձ կամ տո՛ւր ինձ իմ եղբայրը... ի՞նչ պատասխանեմ ես սրան, ի՞նչ ասեմ...

Մարությանն արագ մոտեցավ նրան և առավ նրա ձեռքի նամակը: Մինչդեռ շտապով աչքի էր անցկացնում եղբոր աղջկա նամակը, Եվան շարունակում էր հեկեկալ հուսահատական տանջանքով: Ընթերցումը վերջացնելուց հետո Մարությանը նամակը վերադարձրեց աղջկան:

— Լավ, էլ ինչո՞ւ ես լաց լինում, — ասաց այս անգամ մեղմորեն:

— Ա՛խ, հայրիկ, եթե իմանաս, թե ինչ սարսափելի հարված պիտի լինի նրա համար, երբ գա և իմանա, որ Արմենակն այևս չկա... Դու, չգիտես, դու ոչինչ չգիտես, հայրիկ ... Մենք ենք, որ դիմանում ենք, բայց նա ... Մի՞թե չես երևակայում, թե թեկուզ հենց իմ այս սև հագուստը

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

միայն ի՞նչ հարված պիտի տա նրան... Նա լավ աղջիկ է, հայրիկ, առանց իր գրելու էլ գիտեմ, որ սաստիկ սիրում է ինձ, սիրում է ամենքիս, Արմենակին... Հիմա մտածիր. Արմենակի մահը, մեր վիշտը... այդ ախր մահ կլինի նրա համար, նա չի կարող դիմանալ, չի կարող... Ես գիտեմ, գիտեմ... Ո՛չ, ո՛չ, հայրիկ ջան, չեմ ուզում, չեմ կարող... Թող չգա, թող ոչինչ չիմանա...

— Դու դարձյալ սկսեցիր քո հիմարությունները, — նկատեց հայրը զայրացած — Միևնույն է, վաղ թե ուշ, պիտի իմանար, թե ինչ դժբախտություն է պատահել մեզ, բայց դու չթողիր, որ մինչև անգամ հայտարարություն տայինք, լրագրերին հոգեհանգստի մասին, չթողիր, որ ակնարկություններով, բաներով քիչ-քրչ նախապատրաստեինք նրան: Հիմա լա՞վ է, որ բոլորովին ոչինչ չի իմանում, և հարվածը հանկարծակի պիտի լինի:

Եվան վերին աստիճանի հուսահատությամբ ձեռքերը կոտրատեց:

— Ճիշտ ես ասում, հայրիկ: Բայց ինչո՞ւ էիր լսում ինձ: Հիմա ի՞նչ անենք: Ես չեմ կարող նրան երկաթուղու կայարանում դիմավորել, չեմ կարող, հայրիկ, աստված վկա, չեմ կարող...

— Լավ, մի գնա կայարան, քեզ ո՞վ է ասում, որ գնաս: Տեր աստված, այս աղջիկը գժվել է... Լավ, էլ ինչու՞ ես այդքան հուսահատվում: Հարվածը մեզ համար, կարծեմ, ավելի սաստիկ էր և անակնկալ, բայց տեսնում ես, որ մենք չմեռանք, ուրեմն նա էլ չի մեռնի, անհոգ կաց:

— Օ, կմեռնի՛, հայրիկ, կմեռնի՛, — աղաղակեց Եվան, և հեկեկանքը նորից խեղդեց նրան:

— Ասում եմ՝ գժվել ես և ճիշտ որ գժվել ես, — սաստիկ զայրացած բացականչեց հայրը, դուրս գնաց և դուռը պինդ շրխկացրեց իր ետևից: Սակայն նորից ներս մտավ իսկույն և արագ քայլերով մոտեցավ աղջկան:

— Ի սեր աստծո, Եվա, պահպանիր քեզ, — ասաց լուրջ աղերսանքով — Լսո՞ւմ ես, ինչ եմ ասում: Վիշտն առանց այն էլ սպանել է ինձ և, եթե դու էլ հիվանդանաս, էլ չգիտեմ, թե ինչ կպատահի ինձ...

Եվան պինդ փաթաթվեց հոր վզովը:

— Հայրիկ ջան, սովորեցրու, ասա, ինչո՞վ կարող եմ այս սարսափի վիշտը դուրս կորզեմ սրտիցս, ինչո՞վ կարող եմ հանգստանալ:

— Զսպիր քեզ, որդիս, միշտ զսպիր և մտածիր, որ հայր ունիս, մայր ունիս, եղբայր ունիս, վերջապես հորեղբոր աղջիկ ունիս, որոնք բոլորն էլ քեզնով են ապրում: Մտածիր և այն մասին, որ եղբայրդ անօգուտ չմեռավ: Թող նրա հիշատակը ոգևորի քեզ, և ոչ թե հուսահատեցնի: Բոլոր քույրերը պետք է երանի տան քեզ, որ այնպիսի մի պատվական եղբայր ես ունեցել: Մինչդեռ հարյուրավոր երիտասարդներ մեր ժամանակում, անձնատուր եղած անձնական վայելքների, շատ անգամ մեռնում են անառակ, ցոփ կյանքի մեջ խայտառակ մահով, քո եղբայրը բոլոր անձնականը մոռացած, գործեց և մեռավ իբրև հերոս իր հայրենակիցների համար:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մարությանն երկար ժամանակ այսպես մխիթարում էր աղջկան: Եվան այժմ նստած էր հոր առաջ բավական հանգստացած, բայց և այնպես արտասուքի կաթիլները դեռևս գլորվում էին նրա աչքերից:

Նույն օրն երեկոյան, երբ Եվան նստած էր իր սենյակում և զբաղված էր ընթերցանությամբ, դուռը բացվեց և ներս մտավ օր. Սահակյանը:

— Եվա ջան, եկել եմ քեզ ուրախացնելու. այսօր նամակ ստացա Աշխենից, տոներին գալիս է,

— Լավ ուրախություն է, — հանգիստ դառնությամբ նկատեց Եվան, առանց գլուխը բարձրացնելու գրքի վրայից:

Օր. Սահակյանը սկզբում զարմացավ. հետո խիստ կոտրվեց:

— Իրավ, այժմ նա ատելի պիտի լինի քեզ համար. նա ոչ չլիներ եղբայրդ այստեղ էր և կենդանի...

— Ուֆ, — բացականչեց Եվան հանկարծական զայրացկոտությամբ և առջևը դրած գիրքը շպրտեց հատակի վրա այնպիսի կատաղի ուժով, որ ահագին թրխկոց բարձրացավ: — Ինչե՞ր ես ասում, չեմ հասկանում...

Նրա աչքերը լցվեցին անզուսպ բարկության արտասուքներով:

— Դեռ լավ իմացիր, թե ինչ եմ ասում, հետո հանդիմանիր, եթե արժանի եմ, — ավելացրեց նա, դեմքը վիրավորական կերպով շարժելով օր. Սահակյանից:

Օր. Սահակյանը տեղն ու տեղը սառած մնաց:

— Լավ, էլ ինչու՞ ես բարկանում այդպես, — նկատեց նա մեղմորեն:

— Որովհետև վիրավորում ես:

— Ի՞նչ ասացի, որ վիրավորվեցիր:

— Այն ասացիր, որ... Լավ հասկացիր, ես այնքան հիմար չեմ, որ եղբորս հեռանալու պատճառը համարեմ Աշխենին: Դրանով ես վիրավորած կլինեի եղբորս զգացումները, ստորացրած կլինեի նրա համոզումները: Եղբայրս այն երիտասարդներից չէր, որոնք իրենց վեհ գործի են նվիրում և զոհ գնում այն ժամանակ միայն, երբ տեսնում են, որ իրենց անձնական կյանքի մեջ դժբախտ են: Այդպիսի ճարահատված անձնազոհություններն ինձ համար ոչ մի նշանակություն չունին: Անձնազոհությունը պետը է լինի ինքնաբերաբար, առանց որևէ կողմնակի դրդիչ պատճառի: Ինչպե՞ս կարող եմ ես գնահատել մի զոհված կյանք, երբ այդ կյանքն իր տիրոջ համար արդեն ոչ մի արժեք չի ունեցել. Աշխենը լիներ, չլիներ — եղբայրս դարձյալ կգնար այնտեղ, ուր գնաց և զոհվեց: Ես այդպես եմ համոզված: Եթե այդպես համոզված էլ չլինիմ, դու ինքդ պետք է աշխատես ինձ այդպես համոզել, եթե գեթ փոքր-ինչ հարգում ես եղբորս հիշատակը և չես ուզում, որ սիրտս կտրեմ նրանից: Մինչդեռ դու հակառակն ես անում: Մի անգամ ինքն Աշխենն ինձ նույնն ասաց, ինչ որ այս րոպեին դու

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ասեցիր և ես նրա վրա էլ բարկացա: Առհասարակ ես խիստ նեղանում եմ, երբ ինձ վերագրում են մի բան, որ մտքովս անգամ չի անցել:

Օր. Սահակյանն անցավ նրա ետևը և, խոնարհվելով նրա ուսի վրա, ժպտալով նայեց նրա դեմքին:

— Եվա, թույլ կտա՞ս համբուրեմ:

Եվան վիրավորված հանգստությամբ լռում էր:

Իզուր սպասելով նրա պատասխանին, օր. Սահակյանը երկու ձեռքով բարձրացրեց նրա գլուխը և համբուրեց շրթունքներից:

— Գիտե՞ս ինչ կա, Եվա ջան, — ասաց նա, արագորեն մի աթոռ առնելով և նստելով նրա մոտ: — Մինչև այժմ ում հետ էլ որ խոսել եմ, ամենքն էլ, ծանոթ-անծանոթ, վիրավորվել են ինձնից: Բայց, աստված է վկա, ես, երբեք ոչ ոքի վիրավորելու միտք չեմ ունեցել, ես միայն իմ կարծիքով, ճշմարտությունն եմ ասել, և ինձնից վիրավորվողներից ոչ ոք չի կարողացել ինձ համոզել, որ սխալվել եմ: Բայց այս անգամ, քո վերաբերմամբ, պետք է անկեղծ խոստովանեմ, մեղավոր եմ, որովհետև համոզվեցի, որ ճշմարտությունը չեմ ասել: Ուստի պետք է ներես ինձ: Ի նկատի ունեցիր, որ այս առաջին անգամն է, որ ինձնից վիրավորվողից ներողություն եմ խնդրում: Այդ նշանակում է, որ ես լիովին համոզված եմ, որ սխալվել եմ: Ես շատ ուրախ եմ, որ սխալվել եմ, որովհետև գիտե՞ս, թե ինչպիսի հարված պիտի լիներ քո ատելությունն Աշխենի համար, որը բառիս բուն նշանակությամբ պաշտում է քեզ: Ուզո՞ւմ ես, ցույց տամ նրա նամակը, տես ինչպիսի կարոտով է քեղ հիշում, ինչպիսի՛ ուրախություն է հայտնում, որ շուտով պիտի տեսնի քեզ:

— Գիտեմ. նույնն ինձ է գրում, — ասաց Եվան խռովածի պես ...

Օր. Սահակյանը կռացավ, հատակից վերցրեց գիրքը և դրեց նրա առաջ:

— Ոզու՞մ ես ուղիղն ասեմ Եվա: Ես իսկապես եկա քեղ մոտ այն նպատակով, որ իմանամ, թե ինչպես ես տրամադրված այժմ դեպի Աշխենը, և դիտմամբ այդ նպատակով էլ ասացի այն, ինչից որ վիրավորվեցիր և գիրքը գլխովս տվիր: Ես կասկածում էի և եթե տեսնեի, որ եղբորդ մահն այս կամ այն կերպ կապում ես իսկապես Ա՛շխենի հետ, պետք է հնար գործ դնեի հակառակը համոզելու քեզ: Եվ փառք աստծո, որ ինքդ ասացիր այն, ինչ-որ ես պետք է ասեի այդպիսի դեպքում: Այժմ ես հանգիստ եմ և միանգամայն շնորհակալ, որ ինձ ազատեցիր մի մեծ դժվարությունից: Ինչևիցե, այս վերջացավ: Այժմ մի բան եմ ուզում խնդրել քեզ: Աշխենը գրում է, որ իր գալու օրը կհեռագրի ձեզ. հեռագիրը որ ստանաս, կհայտնե՞ս ինձ, որ ես էլ գամ կայարան նրան դիմավորելու:

— Ես չեմ գնա կայարան:

— Ինչո՞ւ,

— Չեմ կարող:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Իսկ հա՞յրդ: Գիտեմ, որ մայրդ չի կարող, հիվանդ է:

Հորս էլ չեմ թողնիլ, որ գնա:

Օր. Սահակյանը կարճ Ժամանակ սիրով նայեց Եվայի հանգիստ և հաստատ վճռականություն արտահայտող դեմքին:

— Հասկանում եմ քեզ, Եվա ջան, — ասաց նա: — Բայց իզուր ես կարծում, թե նա այնքան թուլասիրտ կգտնվի, որ չի կարող դիմանալ հարվածին: Ճիշտ է, նա բոլորովին չի իմանամ, թե ինչ է պատահել, բայց որքան նրա սիրտն ընդունակ է սիրելու, այնքան և ամուր է հոգին: Բացի դրանից չէ՞ որ միևնույն հարվածը պետք է ստանա այստեղ, տանը, խո չե՞ք կարող նրանից թաքցնել...

— Ոչ, ոչ, ոչ, — արտասանեց Եվան անտանելի տանջանքով և գլուխը դրեց սեղանի վրա: — Նա գալիս է ուրախ և երջանիկ, կարծելով, թե պիտի գտնի իր թողած նախկին կենսուրախ տունը, մինչդեռ ...

Եվ Եվան լռեց լացակումած:

Օր. Սահակյանը նայեց նրան խորին կարեկցությամբ, ուզում էր շոյել նրա փափուկ մազերը, որոնք, մի գիսակի մեջ հյուսված, փայլում էին ճրագի լույսի տակ, ուզում էր մխիթարական խոսքեր ուսել բայց զգաց, որ դրանով միայն յուղ կարող է թափել կրակի վրա:

— Համենայն դեպս հեռագիրը որ ստանաք, իմաց տուր ինձ, — ասաց նա: — Իսկապես որ շատ լավ կլինի՝ ոչ դու գաս, ոչ հայրդ, որովհետև ո՞վ գիտե ինչ կպատահի, որ ձեզ այդպես տեսնի: Ավելի լավ է, մենակ ես կգնամ. մինչև տուն հասնելը կնախապատրաստեմ նրան, որպեսզի հարվածը հանկարծական չլինի:

Եվան գլուխը բարձրացրեց արագ, նրա աչքերը լիքն էին արտասուքով:
— Խնդրում եմ, Վարո ջան, այդպես արա, — բացականչեց նա: — Դու ինձ ազատած կլինիս մի անտանելի դժվարությունից:

14

Մի շաբաթ հետո գիշերը ստացվից Աշխենի հեռագիրը, որով հայտնում էր, թե առավոտվա գնացքով Թիֆլիսում կլինի: Եվան հեռագիրն անմիջապես ուղարկեց օր. Սահակյանին:

Առավոտյան օր. Սահակյանը գնաց երկաթուղու կայարան: Նա շատ անհանգիստ դրության մեջ էր, և այդ անհանգստությանն ավելանում էր բոպե առ բոպե, քանի մոտենում էր գնացքի ժամանման բոպեն: Դեռևս չէի որոշել, թե ինչպես պիտի նախապատրաստեր Աշխենին սարսափելի հարվածին դիմանալու համար: Երևակայում էր, թե ինչպիսի ուրախությամբ, ինչպիսի կարոտով Աշխենը պիտի ընկներ իր գիրկը, ինչպիսի անհամբերությամբ պիտի շտապեցներ իրեն շուտով տան հասնելու, Եվային, յուրայիններին տեսնելու համար: Եվ ինքը մի քանի կցկտուր խոսքերով միանգամայն պիտի ջախջախեր նրա ուրախությունը և նրա սիրած, անձկալի երիտասարդի չարաչար մահվան սարսափելի գույժը պիտի տար նրան: Օր.

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Սահակյանը սարսափում էր երևակայել, թե ինչ կպատահեր Աշխենին, և զգում էր, որ կորցնում է իր քաջությանը:

Հեռվից խուլ կերպով լսվեց շոգեմեքենայի սուլոցը: Օր. Սահակյանը կանգ առավ պլատֆորմի ծայրին և աչքը տնկեց այն կողմը, որտեղից պիտի երևար գնացքը: Մի-երկու րոպեից երկու բլրի խոր միջանցքում, պայծառ սպիտակին տվող ձյունի ֆոնի վրա, երևաց շոգեմեքենայի հուժկու սև կուրծքը և ապա վագոնների երկայն շղթան: Պլատֆորմին մոտենալիս շոգեմեքենան դանդաղեցրեց ընթացքը և համրընթաց առաջ սողաց դեպի պլատֆորմի մյուս ծայրը: Վագոնները մեկը մյուսի ետևից միակերպ խուլ գոռոցով անցնում էին օր. Սահակյանի առջևով: Օր. Սահակյանը նայում էր ամեն մի լուսամուտի: Բոլոր լուսամուտները փակ էին: Բայց ահա լուսամուտներից մեկի ապակին ցած ընկավ հանկարծ, և երևաց Աշխենի գլուխը:

— Վարո ջա՛ն, ողջո՛ւյն, ողջո՛ւյն, — աղաղակեց Աշխենը ձեռքը շարժելով դիպի նա:

Օր. Սահակյանն առաջ վազեց: Գնացքը դեռևս կանգ չէր առել, որ նա թռավ վագոնի սանդուղքի աստիճանը, շտապով բարձրացավ վերև և ներս մտավ:

Աշխենը կախվեց նրա վզից և սկսեց համբուրել նրան երկարատև և ամուր:

— Վերջապես դարձյալ տեսա քեզ... ինչքան կարոտել էի, տեր աստված, ինչքան կարոտել, — ասում էր նա: — Երևակայիր. գալիս էի ու մտածում, հանկարծ որ գնացքը շուռ գա ու տակովն անի, ի՞նչ կլինի... Ես խո չե՞մ տեսնիլ իմ Վարոյին, իմ...

Հանկարծ Աշխենը թողեց ընկերուհուն և նայեց չորս կողմը:

— Եվան ո՞ւր է, — հարցրեց նա: — Երևի նա, հայրիկը, մայրիկը դուրսն են: Հա՞:

Աշխենը վրա ընկավ լուսամուտին և տենդային անհամբեր հայացքով սկսեց որոնել յուրայիններին պլատֆորմի վրա խռնվող հասարակության մեջ:

— Ո՞ւր են... չկան... չեն երևում... Երևի դահլիճումն են: Հա՞, — դարձավ նա օր. Սահակյանին զարմացած:

— Նրանք չեն եկել:

— Չեն եկե՞լ ... ինչո՞ւ:

— Որովհետև... Եվան մի քիչ տկար է ... Ես ինքս խորհուրդ չտվի, որ այս սառնամանիքին դուրս գա տնից, թե չէ ինքը շատ էր ուզում գալ... Հայրն էլ, մայրն էլ չկամեցան նրան մենակ թողնե ... Դե՛հ, որոնք են քո իրեղենները, վերցնենք գնանք:

Աշխենը բռնեց օր. Սահակյանի ձեռքից և շատ լուրջ հայացքով նայեց նրա շփոթված աչքերին:

— Ապասիր, ի՞նչ տեսակ ես խոսում, — ասաց նա թերահավատությամբ և սաստիկ վախեցած: — Ինչպե՞ս թե տկար... Պառկա՞ծ է:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Չէ: Հարբուխ ունի և հազում է:

— Ճի՞շտ ես ասում, — շատ լուրջ կերպով հարցրեց Աշխենը փորձող հայացքը չհեռացնելով ընկերուհու աչքերից:

— Զարմանալի է, ի՞նչ ունիմ խաբելու, — բացականչեց Սահակյանն ինքն իր դեմ զայրացած, որ այդքան շփոթվում է սուտ խոսելուց և Աշխենի սուր հայացքից:

Աշխենը նույն փորձող սառն հայացքով մի րոպե դարձյալ նայեց նրա աչքերին, հետո, շուռ եկավ և սկսեց հավաքել իրեղենները:

— Զարմանալի է, շատ զարմանալի, — ասում էր նա կարծես ինքն իրեն:

— Սպասիր, այդքանը չես կարող տանել, մի բան ինձ տուր:

Աշխենն իր բարձը տվեց ընկերուհուն, մնացածն ինքն առավ և առաջ ընկավ:

Օր. Սահակյանն հետևեց նրան: Նա ամենևին չէր զարմանում Աշխենի հանկարծ տիրած սառնության վրա. մինչև իսկ, կարծես, ուրախ էր, որ Աշխենն արդեն նախազգում էր, որ իրենց տանն ինչ-որ դժբախտություն է պատահել:

Աշխենը վազում էր. կարծես մոռացել էր, որ օր. Սահակյանն իր հետ էր: Կայարանի հրապարակում շտապով բարձրացավ մի կառք: Օր. Սահակյանը նստեց նրա կողքին: Կառքն առաջ շարժվեց:

— Ուրի՞շ, ի՞նչ կա, ի՞նչ չկա ձեր գյուղում: Մինասյանն ինչպե՞ս է, — հարցրեց օր. Սահակյանը բռնի աշխույժով և ուզում էր նույն եղանակով էլ շարունակել, բայց լռեց, տեսնելով Աշխենի զարմանալի լուրջ, սառն հայացքը, որ նա հառել էր իր աչքերին:

— Ես զարմանում եմ քեզ վրա, Վարո, — ասաց Աշխենը: — Մի՞թե հիրավի դու ինձ երեխայի տեղ ես դնում և կարծում ես, որ կարելի է ինձ խաբել: Ասա՛ ճշմարիտը, ասա՛ միանգամից, — ի՞նչ է պատահել մեր տանը:

Աշխենի համառ հայացքից, նրա հրամայական ձայնից օր. Սահակյանն այն աստիճան շփոթվեց, որ դեմքն անգիտակցաբար շրջեց նրանից: Այնուհետև զգաց, որ Աշխենը մատները սաստիկ սեղմում են իր թևը, և երբ դարձավ ու նայեց ընկերուհու դեմքին, վախից քարացավ. — Աշխենի դեմքը մեռելի գույն էր ստացել, աչքերը չռած էին անսովոր սարսափով:

— Մեռե՞լ է, — աղաղակեց Աշխենը խելագարի պես:

— Ո՞վ... ի՞նչ ես ասում:

— Եվան:

— Գի՞ժ ես, ինչ ես, ինչեր ես դուրս տալիս:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ասա, թե չէ՝ այս րոպեիս ինձ կառքի տակ ձգեցի:

Եվ Աշխենը մինչև անգամ փորձեց, որ վեր կենա, բայց օր. Սահակյանը վրա ընկավ նրան և պինդ պահեց իր տեղը:

— Հիմա՛ր, խելագա՛ր, — բացականչեց նա: — Տեղդ հանգիստ նստիր, թե չէ... Ինչե՛ր ես անում, ի՛նչ հիմար բաներ ես մտածում: Ո՞րտեղից խելքիդ փչեց, թե մեռել է: Մեռել է, չէ, փտել է:

— Ա՛խ, անաստված, ինչո՞ւ ես սպանում ինձ, — արտասանեց Աշխենը սրտաճմլիկ ձայնով, և նրա աչքերը լքվեցին արտասուքով:

— Աշխեն ջան, խնդրում եմ հանգիստ մնա. Եվան ողջ և առողջ է, աստված է վկա, երդվում եմ արևովդ, ողջ և առողջ է:

— Չէ, չեմ հավատում, Վարո ջան. մեր տանը մի բան պատահել է, և դու ծածկում ես ինձնից:

— Հա, պատահել է, հիմա՞, — բացականչես օր. Սահակյանն ինքն իր անվստահության վրա զայրացած:

Աշխենը նոր սարսափով վրա ընկավ նրա ձեռքերին:

— Պատահե՞լ է... ի՞նչ ... ո՞ւմ... Ասա, աղաչում եմ, ասա:

Օր. Սահակյանը կամեցավ մի անգամից վերջ տալ այդ անտանելի գրությանը:

— Պատահել է, բայց ... ոչ Եվային, ինչպես դու ես կարծում:

— Հապա՞... հայրիկի՞ն... մայրիկի՞ն... Սուրենի՛ն... Հա՞:

— Չէ, չէ:

— Հապա՞, հապա՞:

— Դե, էլ, ո՞վ մնաց... ինքդ հասկացիր, էլի ...

— Արմենակի՞ն, — ճչաց Աշխենն այնպիսի սարսափելի ձայնով, որ կառապանը ետ նայեց:

— Այո, — կարճ պատասխանես օր. Սահակյանը, վախենալով նայել նրա դեմքին:

Աշխենը հանկարծ սաստիկ թուլություն զգաց ամբողջ մարմնի մեջ. ուզում էր էլի, ըստ երևույթին, ինչ-որ հարցնել, բայց ձայնը չհպատակեց նրան: Ինչ-որ սև բան, մշուշի պես, եկավ ծածկեց նրա աչքերի առաջը: Նա կամաց ետ ընկավ կառքի խորքը, և նրա ածքերի կոպերը ծածկվեցին:

Օր. Սահակյանը սաստիկ վախեցած վրա ընկավ նրա սառույց կտրած ձեռքերին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Աշխե՛ն...

Աշխենը աչքերը բաց արեց, և նրա անմիտ հայացքն ընկավ ընկերուհու վախից չռած աչքերին:

— Սիրտդ խո չի նեղանում: Աշխենը գլուխը շարժեց:

— Չէ, — շշնջաց նա հազիվ քսելի ձայնով և հենց այնպես էլ սառած մնաց:

Այնուհետև մինչև տուն հասնելը երկու ընկերուհիներից ոչ մեկը գրեթե ոչ մի խոսք չարտասանեց: Օր. Սահակյանը, Աշխենի սառած ձեռքն իր ձեռքի մեջ առած, երբեմն-երբեմն անհանգիստ հայացք էր ձգում նրա կտավի գույն ստացած դեմքին, իսկ Աշխենը, ետ ընկած կառքի խորքը անմիտ հայացքով անթարթ նայում էր կառապանի մեջքին և, ըստ երևույթին, ամենևին չէր իմանում, թե որտեղ է ինքը և ուր է գնում:

Կառքը վերջապես կանգ առավ Մարությանների տան առաջ: Օր. Սահակյանը շտապով իջավ և սեղմեց դռան զանգի կոճակը:

— Աշխե՛ն, իջիր, հասանք, — կանչեց նա:

Աշխենը, ըստ երևույթին բոլորովին հանգիստ, կամաց վեր կացավ կառքից և իջավ: կառքից: Օր. Սահակյանը բռնեց նրա ձեռքը տարավ դեպի դուռը, որ հենց նոր բաց արեց ծառան:

Աշխենը չտեսավ իրենց հին ծառայի բարևը, մտավ և հանդարտ քայլերով սկսեց բարձրանալ սանդուղքով, ձեռքով վանդակապատից բռնած: Հազիվ մինչև սանդուղքի գլուխը հասած, այլևս չկարողացավ առաջ գնալ և ուժասպառ հիվանդի պես, նստեց վերջին աստիճանի վրա:

Օր. Սահակյանը բոլոր իրեղենները տվեց ծառային, շտապով վճարեց կառապահին և հասավ ընկերահուն:

— Ի՞նչու ես նստել, վեր կաց, — ասաց նա և ուզեց օգնել, որ Աշխենը վեր կենա:

— Սպասիր, մի քիչ հանգստանամ, ծնկներս դողում են, — ասաց Աշխենը կամաց: — Զարմանալի է, ամբողջ մարմինս կարծես փալաս է դարձել, — ավելացրեց նա և գլուխը դրեց ծնկանը հենած ձեռքի վրա:

Այդ րոպեին սենյակներից մեկի դուռը բացվեց և նախասենյակը դուրս վազեց Եվան:

— Քույրիկ ջան, — աղաղակեց նա:

Աշխենը ցնցվեց, արագ բարձրացավ և կամաց ընկավ նրա գիրկը:

Մինչդեռ նրա գլուխը խաղաղ հանգչում էր հորեղբոր աղջկա ուսի վրա, Եվան իր գրկի մեջ պինդ սեղմելով նրա նիհար իրանը, հուսահատական հեկեկանքով համբուրում էր նրա հանգած աչքերը, նրա սառը շրթունքները: Այդ հեկեկանքի և համբույրների մեջ միացած էին կարոտը, վիշտը և մխիթարելու անհույս ցանկությունը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Մի՛թե ես քեզ այսպես պիտի ընդունեի, քույրիկ ջան, — ասում էր նա: — Մի՞թե ուրախության արտասուքների տեղ՝ վշտի և հուսահատության արցունքներ պիտի թափեի, իմ սիրելի, իմ անգին քույրիկ ...

Օր. Սահակյանը տեսավ, որ բանը հեռու կարող է գնալ և ուզում էր բաժանել նրանց, բայց այդ միջոցին Աշխենը կարծես հանկարծ ուշքի եկավ ինչ-որ խոր թմրությունից, կամաց ազատվեց Եվայի գրկից: Նրա գլուխն առավ իր ձեռքերի մեջ ու անձկալի վշտով համբուրեց նրա շրթունքները: Բայց նրա ալքերն առաջվա պես ցամաք էին. առաջվա պես լուռ էր նա. նրա բերնից վշտի ոչ մի խոսք, ոչ մի հառաչանք դուրս չէր եկել դեռ:

Արագ քայլերով դուրս եկավ Մարությանը:

Աշխենը մեկ ուզեց առաջ գնալ դեպի նա, բայց կանգ առավ քարացած, հանցավորի պես:

Մարությանը մոտեցավ նրան, գրկեց և համբուրեց նրա մազերը:

— Բարով ես եկել, զավակս, — ասաց նա, և նրա ձայնը սաստիկ դողաց: Նա կուլ տվեց թուքը և հարցրեց. — առո՞ղջ ես:

Այխենը բոլորովին կարկամած, միայն գլխով արավ:

— Պետք է ներես, որ մեզնից ոչ ոք չկարողացավ գալ քեզ դիմավորելու, — ասաց Մարությանն այս անգամ ավելի հանգիստ: — Օրիորդ Սահակյանը, երևի, ակած կլինի քեզ պատճառը: — Բան չկա, զավակս: Փառք տանք աստծուն, արհամարհանքով նայենք անպետքների վրա և մխիթարվենք նրանով, որ մեր կորուստն ապարդյուն կորուստ չէ: Սա մի զոհ էր, որ տվինք հայրենիքի սեղանի վրա... Դե, ներս եկեք, այստեղ ցուրտ է:

Ասիական փոքրիկ թախտի վրա կուչ էր եկել Թեկլեն: Այն աստիճանի փոխվել էր նա, որ Աշխենն առաջին նվագ չճանաչեց նրան: Վերին աստիճանի խղճալի տպավորություն էր գործում նա իր ցամաքած աչքերով և սառած դեմքով. նրա վշտի բոլոր հյութը կարծես քամվել ցամաքել էր:

Աշխենը չոքեց նրա առաջ, առավ նրա ձեռքը և լուռ համբուրեց:

Թեկլեն գրկեց նրա գլուխը, շրթունքները կպցրեց նրա ճակատին, այնուհետև, ցամաք աչքերով նայելով նրա աչքերին, սկսեց խաղաղ կերպով սգալ իր որդու մահը:

— Դու գնացիր և եկար, Աշխեն ջան, բայց գիտե՞ս, որ նա, իմ Արմենակս, էլ չի գալ, էլ չեմ տեսնիլ նրան... Անօրենները կախեցին նրան, խեղդեցին, որդի ջան... Ավելի լավ չէր լինիլ, որ իմ որդին իմ ձեռքերի վրա մեռներ... Գոնե կգիտենայի, թե որտեղ է նրա գերեզմանը և ամեն անգամ կգնայի կողբայի իմ վիշտը... Իսկ այժմ ո՞ւր գնամ ես, ո՞ւր փնտրեմ գերեզմանը:

Մարությանը չկարողացավ դիմանալ կնոջ այդ սրտաճմլիկ խոսքերին և բարձրաձայն հազալով դուրս գնաց շտապով:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Եվան թաշկինակը պինդ սեղմել էր աչքերին, և հեկեկանքը պատռում էր նրա սիրտը:

Օր. Սահակյանը նույնպես լալիս էր:

Աշխենն էր միայն, որ, կարծես անտարբեր ու հանգիստ լսում էր դժբախտ մոր ծանր վշտի խաղաղ արտահայտությունները, նրա առաջ չոքած: Նրան թվում էր, թե այդ ողբն իր համար է, թե ինքն է այդ ողբի առարկան: Եվ նա բոլորովին սառն էր ու անզգա, ինչպես մեռելը իր մահը ողբացողի առաջ ...

Աշխենը քաշվեց իր նախկին սենյակը, որ Եվան առանձին խնամքով պատրաստել էր առաջվա նման: Օր. Սահակյանն ու Եվան, խիստ անհանգստացած էին նրա տարօրինակ դրությունից, չէին կամենում մենակ թողնել նրան, բայց նա ասաց, որ ուզում է մի քիչ հանգստանալ, որովհետև հոգնած է և գիշերը չի քնել:

Եվ Աշխենը մենակ մնաց: Նա պառկած մահճակալի վրա, ձեռքերը դրեց գլխի տակ և քարացած աչքերը հառեց առաստաղին: Նրա դժգույն դեմքը դեռևս պահպանում էր առաջվա խաղաղ արտահայտությունը: Անակնկալ հարվածը կարծես բոլորովին բթացրեք էր նրա զգացումները: Ամեն ինչ նրա աչքում անշարժացել, սևացել էր, ինչպես սոսկալի հրդեհից հետո ծաղկափթիթ մի անտառ: Արմենակն այլևս չկար. այդ միևնույնն էր, թե հանգել էր այն փարոսը, որ լուսավորում էր իր դժվարին ճանապարհը: Այժմ ումի՞ց պիտի ստանար այն լույսն ու հույսը, որոնցով առաջնորդվում էր մինչև այժմ է Փորձության այս տաժանելի ժամին նա ավելի, քան երբևիցե, զգում էր, որ իր նոր սկսած գործունեության մեջ միակ խթանն ու քաջալերողն եղել է այն երիտասարդը, որին նվիրել էր իր կուսական սիրտն անդրանիկ սիրո բոլոր զորությամբ: Շատ անգամ, երբ գյուղական մռայլ կյանքի մեջ սովոր փափկակեցության ձգացումը պաշարել էր նրան և նա հուսահատված սկսել էր ողբալ իր անձնական դժբախտությունը, վերջ ի վերջո մխիթարվել և քաջալերվել էր միմիայն այն գիտակցությամբ, թե ո՞րքան պիտի ուրախանա Արմենակը, երբ իմանա, թե իր սիրած աղջիկը գործունեության ինչ ասպարեզ է ընտրել: Եվ նրան նոր ուժ, նոր եռանդ էր տալիս այն հույսը, թե կգա ժամանակ, երբ երկարամյա գործունեությունից հոգնած-վաստակած երկու սիրող սրտերը դարձյալ կհանդիպեն իրար միևնույն հարի տակ, ուր երկուսն էլ սնվել ու սիրել են իրար և պայծառ զգացումներով, կայտառ հոգով կպատմեն իրար, թե իրենցից յուրաքանչյուրն ինչ է արել: Նրանք կնայեն իրար առաջվանից ավելի մեծ անձկությամբ, նրանց փոխադարձ սերն ավելի ևս հաստատուն կլինի, սակայն ոչ այնպես աչք կուրացնելու չափ պաչծառ և այրելու չափ տաք, ինչպես ամառային արևի ճառագայթները, այլ անդորր ու քնքուշ, ինչպես գարնանային լուսնի լույսը: Երիտասարդական անդրանիկ սիրո կամովի ճնշված ցգացումն այլևս խուլ բողոք չի բարձրացնիլ առաջվա պես, աստծո սեղանի առաջ ողջակեզ գառան նման խոնարհ իր վիճակին՝ կասի. «ախ, այսպես ավելի լավ է»: Եվ երբ կգա հրաժեշտի ժամը և կկոչի նրանը նորից ի գործ, նրանք նույն պայծառ զգացումներով, նույն կայտառ հոգով և նոր ուժ, նոր եռանդ ստացած՝ կբաժանվեն իրարից, շարունակելու համար իրենց բարի գործը թշվառների օգտին... Ա՛խ, ցնորքներ, քաղցրի՛կ ցնորքներ... ո՞ր եք, ո՞ւր թռաք այդպես հանկարծ, այդպես անակնկալ... Նրա առաջ կանգնած է այժմ իրականությունը, դաժան, անողոք իրականությունը. եկավ և իր ահավոր շնչով հօդս ցնդեցրեց հրաշալի երազները, որոնցից դուրս խավարի և մահվան թագավորությունն է ... Էլ ինչո՞վ մխիթարվի, ինչո՞վ հուսա, ինչո՞վ նոր եռանդ, նոր ուժ ստանա... Աղբյուրը ցամաքեց, ծաղիկը պիտի թողնի անջուր, պապակած...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Դուռը զգուշորեն բացվեց, և ներս մտավ Եվան:

Աշխենը անձնատուր եղած իր մտքերին, նայեց նրան այնպիսի հայացքով, որից երևում էր, որ չի տեսնում նրան, հետո մեքենայաբար վեր կացավ և նստեց:

Եվան չոքեց նրա առաջ և. առավ նրա ձեռքը: Երկար ժամանակ արտասվալից աչքերով, անհուն սիրով ու կարեկցությամբ լուռ նայում էր Աշխենի գունատ, անզգայացած դեմքին:

— Այնպես հասկանում եմ քո վիշտը, քույրիկս, — վերջապես ասաց նա գրեթե շշնջալով, կարծես վախենալով խանգարել րոպեի հանդիսավորությունը: — Ես էլ, երբ անակնկալ իմացա եղբորս մահը, քեզ պես անզգա էի դարձել, չէի իմանում ինչ է պատահում ինձ և արտասուքի ոչ մի կաթիլ չէի կարողանամ թափել: Բայց հետո, բայց այժմ և այսուհետև ես միշտ լաց եմ եղել, լալիս եմ և պիտի լալ, քանի որ եղբորս հիշատակը կենդանի կմնա սրտումս: Ասում են, որ ժամանակն ամենակարող է, որ նա բուժում է բոլոր վշտերը: Եթե այդ ճշմարիտ է, եթե, հիրավի, ժամանակն այնպես պիտի անի, որ ես այլևս այսպես չպիտի տանջվեմ եղբորս մահվան համար և պետի մոռանամ նրան, — ես այդ չէի կամենալ, երբեք, երբեք, որովհետև այդ կնշանակեր, թե եղբայրս միևնույնն է եղել ինձ համար, ինչ-որ մի անշունչ առարկա, մի խաղայիք, որը ձեռքիցս ընկել կոտրվել է, և ես սկզբում ափսոսացել եմ, հետո մոռացել: Ոչ, այդ սարսափելի է, այդ անկարելի է, չեմ ուզում: Եթե հնարավոր լիներ, որ հավիտյան ապրեի, — սիրով կկրեի սրտիս մեջ այս անտանելի վիշտը, որպեսզի դրանով լիովին արտահայտած լինեի այն զգացումները, որ ես տածել եմ դեպի եղբայրս: Եղբորս մահից հետո ես այլևս ոչ մի ուրախություն չեմ ուզում. այդ սրբապղծություն կլիներ, այդ անարգանք կլիներ նրա հիշատակին: Իմ ուրախությունն իմ այդ վիշտն է. որ հպարտությամբ կրում եմ սրտիս մեջ և կփայփայեմ միշտ, քանի կենդանի եմ...

Մինչդեռ Եվան իրեն հատուկ կրակոտ արտահայտություններով իր վիշտն էր թափում հորեղբոր աղջկա առաջ, Աշխենը նստած էր անշարժ, անթարթ նայում էր նրա արտասվալից աչքերին և թվում էր, թե լսում է նրան առանց որևէ կարեկցության:

Եվան լռեց և կարծես հոգնած, գլուխը դրեց Աշխենի ծնկներին:

— Կարո՞ղ ես պատմել, թե ինչպես է պատահել նրա մահը, — կամաց հարցրեց Աշխենը:

Եվան վեր կացավ, դուրս գնաց և շատով վերադարձավ Բազենյանից ստացած հեղափոխական թերթը ձեռքին:

— Ահա կարդա, — ասաց նա ցույց տալով եղբոր մահվան վերաբերյալ տեղեկությունը:

Աշխենը թերթն առավ նրա ձեռքից և սկսեց կարդալ լուռ և խիստ ուշադիր: Կարդալուց հետո ձեռքերը թուլացած ընկան ծնկների վրա, և երկար ժամանակ նստած էր լուռ, գլուխը կրծքին խոնարհած: Հանկարծ գլուխը բարձրացրեց և հարցրեց.

— Ուրիշ տեղեկություն չունի՞ք:

— Մեր ունեցած տեղեկությունն այդ է միայն, — պատասխանեց Եվան:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ինչպե՞ս, սրա՞նից եք միմիայն իմացել:

— Այո:

Աշխենի մեռած դեմքը հանկարծ կենդանություն ստացավ, լույսը վառվեց նրա հանգած աչքերի մեջ: Նա վեր թռավ տեղից:

— Իսկ եթե սու՞տ լինի, — աղաղակեց նա: — Քի՞չ այսպիսի ստեր են գրում ժողովրդին գրգռելու համար...

Եվան վշտահար շարժեց գլուխը:

— Մենք էլ սկզբում այդպես էինք կարծում, — ասաց նա, — բայց ստուգեցինք և, դժբախտաբար, ճիշտ դուրս եկավ: Ա՛խ, եթե սուտ լիներ, եթե սուտ լիներ, — ավարտեց Եվան ծանր հառաչանքով:

Խաբուսիկ հույսը հանգավ Աշխենի աչքերի մեջ: Նորից թուլացած նստեց, խոնարհվեց ծնկների վրա և ճակատն առավ ձեռքերի մեջ: «Եթե սուտ լիներ... եթե սուտ լիներ ...» — կրկնում էր մտքումը Եվայի խոսքերը:

Եվան նստեց նրա մոտ և այս անգամ հանգիստ կերպով սկսեց մանրամասնորեն պատմել, թե եղբոր մահվան գույժն ինչ ազդեցություն և հետևանք ունեցավ իրենց տանը, թե ինչու այդ մասին ոչինչ չէին գրում Աշխենին և ինչու իրենցից ոչ ոք չգնաց երկաթուղու կայարան նրան դիմավորելու, բայց Եվան ոչ մի խոսք չարտասանեց Բազենյանի մասին, որը պատճառ էր դարձել Արմենակի մահվան գույժն առնելուն: Բազենյանի մասին ոչին չէր ուզում պատմել ոչ թե նրա համար, որ ամաչում էր Աշխենից և չէր ուզում, որ նա իմանա, թե ինչպես ինքը խաբվել էր այդ բախտախնդիր երիտասարդից, այլ նրա համար միայն, որ նույնիսկ Բազենյանի անունը լոկ խորին զզվանք ու զայրույթ էր ազդում նրան:

Եվան լռեց և սպասում էր, թե Աշխենը կխոսի, բայց Աշխենը շարունակ խոնարհված էր ծնկների վրա և այնքան հանգիստ էր երևում, որ թվում էր, թե մինչև անգամ չի շնչում: Եվան կամաց գրկեց նրա իրանը:

— Աշխեն ջան, ինչո՞ւ չես խոսում, — հարցրեց նա այնպես, ինչպես խոսում են ծանր հիվանդների հետ:

Աշխենը նստեց ուղիղ: Նրա աչքերը բացված էին լայն և կենտրոնացած նայում էին անորոշ տարածության մեջ:

— Ի՞նչ խոսեմ, — ասաց նա մեռած ձայնով:

— Ես ի՞նչ գիտեմ: Գոնե մի կերպ արտահայտիր վիշտդ:

— Ինչպե՞ս արտահայտեմ: Մազերս փետե՞մ, աղաղակե՞մ, թավալգլո՞ր գամ...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Չէ, ինչու: Բայց... ախր դու չափազանց ուրիշ տեսակ ես դարձել ... Ես քեզ համար եմ ասում, քեզ համար եմ հոգում:

Աշխենը նայեց Եվայի աղերս ող աչքերին և դառն կերպՎ Ժպտաց:

— Ի՛նձ համար ...

— Այո՛: Ես վախենում եմ, որ այդպես դու կհիվանդանաս:

Աշխենը շարժեց գլուխը:

— Ա՛յ խեղճ, ա՛յ թշվառ, այսուհետև քանի՞ գրոշ արժե իմ կյանքը, որ այդքան հոգում ես: Մինչև այժմ ես մի պայծառ աստղ ունեի, որ լուսավորում էր ճանապարհս, հանգավ այդ աստղը, այսուհետև դեպի ո՞ւր խարխափեմ... Պայծառ լույսից հետո հանկարծ զարհուրելի խավար է տիրել չորս կողմս... Ես այլևս ոչինչ չեմ տեսնում, ոչինչ ... Դեպի ու՞ր խարխափեմ ...

Հանգիստ, հանդիսավոր կերպով արտասանած այդ խոսքերից յուրաքանչյուրի վրա Եվան սարսուռ էր զգում իր ամբողջ մարմնի մեջ: Նա տեսավ, որ միևնույն հեղաշրջումը, որ կատարվել էր իր, կատարվում է և Աշխենի մեջ: Եվան այժմ միայն զգաց, թե որքան սարսափելի բան էր այդ:

— Այդ դո՞ւ ես ասում, Աշխեն, — շշնջաց նա, սարսափահար թեքվելով դեպի նրա դեմքը:

Աշխենը, պատասխանելու տեղ, նորից խոնարհվեց ծնկների վրա, դեմքն առավ ձեռքերի մեջ, և նրա ուսերն ու մեջքը սաստիկ ցնցվեցին:

Եվան մի ձեռքով գրկեց նրա իրանը, մյուս ձեռքով՝ գլուխը և շրթունքները սեղմեց նրա բարակ նիհար վզին:

Կարեկցության և ողջագուրանքի այդ լուռ արտահայտությունից Աշխենն այլևս չկարողացավ խեղդող հեկեկանքը: Նա սկսեց լալ ծանր և ուժգին: Լալիս էր տղամարդու պես, քարե արտասուքներով:

10

Աշխենը գրեթե ամենևին դուրս չէր գալիս իր սենյակից Թեյի, ճաշի և ընթրիքի ժամանակ միայն, երբ նրան հրավիրում էին սեղանատուն, դուրս էր գնում հանդարտ քայլերով, ցույց էր տալիս, թե ատում, խմում է, բայց իսկապես ոչինչ չէր ուտում, ոչինչ չէր խմում և նորից փակվում էր իր սենյակում: Եվ այդ բոլոր ժամանակ լուռ էր ձկան պես: Մինչև որ բան չէին հարցնում, ինքն ամենևին չէր խոսում: Նրա դեմքն այնքան անշարժացել, քարացել էր, որ թվում էր, թե այլև ոչ մտածում է, ոչ էլ զգում: Օր. ՍաՀակյանն ամեն օր այցելում էր նրան և ամեն անգամ հեռանում էր խիստ մտահոգ դրության մեջ: Պակաս մտահոգ դրության մեջ չէր նաև Մարաթյանը, որին խիստ ազդել էր եղբոր աղջկա վիշտը: Նույնիսկ Թեկլեն, մոռանալով իր դրությունը, ամեն անգամ հոգացողությամբ հարցնում էր Աշխենին, թե ինչո՞ւ է այդպես, հիվանդ խո չէ՞: Իսկ Եվան պարզապես հուսահատված էր. ոչինչ այնքան չէր վախեցնում նրան, որքան Աշխենի տարօրինակ հանգստությունը և լռությունը: Պատահում էր երբեմն, որ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ինքը մինչև անգամ ամբողջ ժամերով խոսում էր հորեղբոր աղջկա հետ և Աշխենի բերանից գրեթե ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսում: Նրա սիրտը ճաքում էր. նա ընկնում էր Աշխենի ոտները, արտասվալից աչքերով աղաչում-պաղատում էր, որ ձայն հանի, բան ասի: «Ի՞նչ ասեմ ասեմ, Եվա», — այդ էր լինում Աշխենի պատասխանը: Եվան իր մահճակալը տեղափոխել էր Աշխենի սենյակը, որպեսզի գիշերները նրան մենակ թողած չլինի: Ամեն գիշեր, երբ բարի գիշեր մաղթելով, ցույց էր տալիս, թե քնում է, վերմակի տակից երկար դիտում էր Աշխենին և տեսնում էր, որ նա, անշարժ պառկած, վշտահար կենտրոնացած հայացքով անթարթ նայում է անորոշ տարածության մեջ: Երբ այնուհետև, առավոտները, Եվան նայում էր նրան, տեսնում էր, որ նա կամ ամենևին չի քնել, կամ շատ քիչ է քնել — այնքան նրա դեմքը գունատ, աչքերը ուռած, կարմրած և մեռած էին լինում:

Աշխենի այդ վիճակը տեսնելով, Եվան մոռացեք էր իր սեփական վիշտը: Նա մտաբերում էր Աշխենի վերջին նամակը, համեմատում էր այդ նամակի մեջ արտահայտված ուրախությունը հորեղբոր աղջկա այժմյան թշվառության հետ, և անհուն կարեկցությունից ճմլվում էր նրա սիրտը, արտասուքով լցվում էին նրա աչքերը: Զգում էր, որ եթե Աշխենը վշտի և հուսահատության արտասուքներ թափեր, խոսքեր արտասաներ, — այնքան չէր ազդիլ իրեն, որքան ազդում էր իր այդ վերին աստիճանի խաղաղ դրությամբ, այդ հանդարտ, ցամաք աչքերով, այդ անտրտունջ լռությամբ: Նրա առաջ ներկայանում էր վերին աստիճանի սրտաշարժ մի պատկեր. նա տեսնում որ, բարձրաձայն բողոքելու իրավունք ունեցողը լուռ և անտրտունջ խոնարհվում է ճակատագրին: Դա զուտ քրիստոնեական համբերության փառավոր մի հաղթանակ էր, որ մի աղջիկ, մի թույլ արարած, կարողանում էր մարմնացնել իր մեջ:

Աշխենի անհուն վիշտն այդպիսի արտահայտությամբ իսկապես ոչ թե վիշտն էր ներկայանում Եվային, այլ հոգին ու սիրտը վեհացնող, մարդուն իր բոլոր մարմնական-անցողականը մոռացնող և աստվածության հասնող գերբնական մի երջանկության, որին նախանձում էր բոլոր սրտով: Եվ ինչպե՞ս չնախանձեր, երբ, կամա-ակամա համեմատելով, տեսնում էր, թե ի՞նչ ահագին վիհ կար իր սիրած երիտասարդի — Բազենյանի և Աշխենի սիրած երիտասարդի — Արմենակի միջև: Եվ մինչդեռ ինքն իր սիրած երիտասարդի լոկ անունն անգամ միշտ քստմնելով պիտի հիշի, Աշխենը, ընդհակառակը, ցմահ պաշտելով, շարունակ պիտի փայփայի իր սրտի խորքում այն երիտասարդի հիշատակը, որի շրթունքները մահվան վերջին րոպեին, ո՞վ գիտե, գուցե նրա անունն են շշնջացել: Գոնե Եվան այնպես էր զգում, որ ինքը չափազանց երջանիկ կլիներ, եթե իր սերը ծագեր նման պայմաններում, ինչպես Աշխենինը. և իր սիրած երիտասարդը գեթ հեռավոր կերպով նման լիներ Արմենակին, և մեռներ նման գործի համար, նման պարագաներուում, ինչ-որ Արմենակը ...

Մի գիշեր, երբ Եվան, իր մահճակալի վրա պառկած, գաղտագողի կերպով ղիտում էր Աշխենին և անձնատուր էր եղել այդպիսի մտածմունքների, տեսավ, որ Աշխենը վեր կացավ անկողնուց, մոտեցավ իր մահճակալին ե խոնարհվեց իր դեմքի վրա: Նա, վախեցած, վերմակը ետ քաշեց գլխից և նայեց հորեղբոր աղջկա աչքերին:

— Դու քնած չե՞ս, Եվա, — հարցրեց Աշխենը:

— Չէ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Թույլ կտա՞ս մոտդ պառկեմ:

Եվան լուռ տեղ տվեց նրան իր մահճակալի վրա:

Աշխենը պառկեց և գրկեց նրան:

— Հիշո՞ւմ ես, Եվա, վերջին նամակս, — հարցրեց նա:

— Հիշում եմ:

— Գրել էի, թե, որ վերադառնամ, այսպես միասին պիտի քնենք, այսպես գրկած: Հիշո՞ւմ ես:

— Ինչպես չէ:

Աշխենը մի շատ թույլ թառանչ քաշեց:

— Որ գիտենաս, Եվա, ինչքան ուրախ էի այդ նամակը գրելիս...Կամա-ակամա հավատում ես մեր պառավների այն նախապաշարումներին, որ ասում են, թե խիստ ուրախա ցածը շուտ կտխրի: Երեխան, որ շատ է ծիծաղում, ասում են լացի հոտ է գալիս: Միակ երջանկությունը, իրական, շոշափելի երջանկությունն ինձ համար այն պիտի լիներ, որ նորից պիտի տեսնեի քեզ, հայրիկին, մայրիկին, Սուրենին, Վարոյին: Ահա քանի օր է եկել եմ և տեսնում եմ ձեզ, բայց ո՞ւր է այն երջանկությունը, որ պիտի վայելեի, ո՞ւր է... Այդ երջանկությունն այն րոպեից թունավորվեց, ես այն րոպեից սպանվեցի, երբ երկաթուղու կայարանում չտեսա ձեզնից ոչ ոքի: Վարոն որ ասաց, թե չեք եկել, ինձ այնպես թվաց, թե մինչև այդ ժամանակ թռչում էի օդի մեջ, թեթե, ծտի պես, բայց հանկարծ թևերս կոտրեցին, և ես ցած ընկա ... Այժմ, երբ անցել են սարսափելի հարվածի առաջին օրերը, և ես կարծեմ մի խոր թմրությունից ուշքի եմ եկել, գիտե՞ս ինչի մասին եմ մտածում: Մտածում եմ ձեր մասին — հայրիկի մասին, մայրիկի մասին, քո մասին, Եվա ջան: Այսօր առաջին անգամ սարսափեցի, որ նայեցի մայրիկին, որքա՜ն նիհարել է, որքան ցամաքել: Իսկ հայրիկը ... ո՞ւր է նրա այն մշտական զվարթությունը, նրա այն վարակիչ աշխույժն ու եռանդը: Իսկ դո՞ւ, դո՞ւ, Եվա ջան ... ո՞ր է, ինչու այլևս չի հնչում քո արծաթահնչուն ծիծաղը... Այս ի՞նչ է պատահել ձեզ: Մի՞թե ձեզ էլ մանավանդ քեզ, Եվա ջան, վիճակված է ինձ նման չորացած մի ծառ դառնալ, կենսունակության բոլոր հյութից զրկված: Այդ սոսկալի է... Երբեք իմ օրինակը թող խրախուսանք չլինի քեզ համար, երբե՛ք: Հիշու՞մ ես ես այն խոսքերը, որ ասացիր ինձ գյուղ գնալուս օրը. « Օ, աստված չանի, — ասացիր, որ երբևիցե չոր ուղեղն իշխե իմ մեջ: Ամենամեծ դժբախտությունն ինձ համար այն օրը կլինի, — ասացիր, — երբ ես դադարեմ սրտով մտածելուց»: Արտով մտածելուց ... Մի մոռանար, Եվա, այդ հրաշալի խոսքերը և լաց եղիր, աղաղակիր, բողոքիր նույնիսկ իրեն աստծու դեմ, բայց երբեք, երբեք մի զսպիր քեզ ինձ պես և ինձ նման մի ասիր ի՞նչ օգուտ դրանից: Այդ մահ է, ավելի վատ, քան մահը: Պարզ օրինակն աչքիդ առաջն եմ: Սիրտս լցված է թույնով, վշտից քիչ է մնում խելագարվեմ. ուզում եմ գժի նման աղաղակել, ուզում եմ բարձրաձայն անիծել և հայհոյել ամենքին և ամեն ինչ, բայց սառն դատողությունս, — օ՛, այս գարշելի սառն դատողությունը, այս չոր ուղեղը, — ասում է ինձ՝ «ի՞նչ օգուտ դրանից»: Բայց և ի՞նչ օգուտ այս սառն դատողությունից, այս չոր աղեղից: Մի՞թե, որ զսպում եմ ինձ, որ սառն դատողությամբ ավելորդ բան եմ համարում հուսահատական աղաղակներ բարձրացնելը, տրտնջալը, բողոքելը, — մի՞թե այդպիսով չեմ տանջվում կամ պակաս եմ տանջվում: Ընդհակառակը: Ամեն անգամ, երբ արտասուքս գալիս, բռնում է բուկս,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

երբ անդիմադրելի պահանջ եմ զգում լաց լինելու, վշտից և հուսահատությունից մազերս փետելու և, սառն դատողությանս հետևելով, զսպում եմ ինձ, — ես միևնույն տանջանքն եմ զգում, ինչ տանջանք որ կզգար ծարավից պապակվող այն մարդը, որ ջրի տեղ հալած արճիճ խմեր: Մինչև այժմ ինքս ինձ պարծեցել եմ նրանով, թե իմ մեջ զարգացրել եմ ասկետական համբերության այնպիսի աննկուն մի ուժ, որով կարող եմ հաղթահարել ամեն բանի. բայց այժմ, կրիտիկական այս վայրկյաններին եմ միայն զգում, թե դրանով ի՞նչ սոսկալի թշվառության աղբյուր եմ պատրաստել ինձ համար: Երևակայիր, որ երբեմն նույնիսկ այնպես է թվում ինձ, թե վիշտս կեղծ է, որովհետև ինչո՞ւ չպետք է ամեն գիշեր ողողեմ բարձս արտասուքներով, ինչո՞ւ չպետք է խելագարվեմ վշտից, ինչո՞ւ այսպիսի մի ճգնաժամին կարողանում եմ այսպես և այս աստիճան սանձահարել ինձ: Ի՞նչ է նշանակում այս. — մի՞թե այն, որ ես արհեստական կերպով դուրս եմ շպրտել ինձ բնական օրենքների սահմանից և խարխափում եմ ինչ-որ անծանոթ, ոչ-մարդկային, վայրենի զգացումների և մտածողությունների աշխարհում... Լսի՛ր, Եվա: Ս՛ի՛ լռիր այդպես, խոսի՛ր: Ասա՛, գուցե, հիրավի, սիրտս մեռել է արդեն, գուցե իսպառ կորցրել եմ արդեն զգալու ընդունակությունը, գուցե վիշտս երևակայում եմ միայն, այլ Ոչ զգում... Ասա՛, Եվա ջան, ասա , աղաչում եմ. ի՞նչ ես մտածում, ի՞նչ է մտածում այս մասին քո սիրտը:
— Իմ սի՞րտը, — շշնշաց Եվան, և, գրկելով Աշխենի իրանը, պինդ սեղմեց կրծքին: — Ականջ դիր և կլսես, թե ինչ է մտածում սիրտս, նա նախանձում է քեզ...

Աշխենը ձեռքով արագ փակեց նրա բերանը:

— Նախանձո՞ւմ, — զարմանքով և սարսափով արտասանեց նա: — Անմիտ, այդ ի՞նչ ես ասում...

— Այո, նախանձում եմ քեզ, Աշխեն, ամբողջ սրտովս նախանձում, — եռանդով վրա բերեց Եվան, — որովհետև ես հազարապատիկ ավելի թշվառ եմ, քան թե դու... Դու չգի՛տես, դու ոչինչ չգիտես... եթե իմանաս, թե քո բացակայության ժամանակ ինչե՛ր են պատահել ինձ... Այդ մասին մինչև այժմ ոչինչ չեմ ասել քեզ, նամակներումս էլ ոչինչ չեմ գրել, որովհետև կամեցել եմ մոռացության տալ այն, ինչ որ պատահեց: իսկ այն, ինչ որ պատահեց, այն աստիճան վշտացրել է սիրտս, այն աստիճան վրդովել է հոգիս, որ ինձ թվում է, թե այլևս այն չեմ, ինչ որ առաջ: Գիտես, թե առաջ ինչքան միամիտ էի, ինչքան պայծառ ու մաքուր հայացք ունեի մարդկանց և աշխարհի վրա. իսկ այժմ ամեն ինչ կեղծ, ստոր, զզվելի է թվում ինձ և այնքան խարդախ, որ ես պատրաստ եմ նույնիսկ ամենամեծ սրբությանը չհավատալ:

Կուսական անդրանիկ սիրույս սրբությունն ես անարգված տեսա դեռևս իր սաղմի մեջ: Եվ անարգողը, երևակայիր, նա էր, որին պատրաստ էի նվիրաբերել այդ սերը: Թերևս այսքան չվշտանայի, այսքան չվրդովվեի, եթե սիրույս հետ սերտ կապով կապված չլիներ մի վսեմ գործ, որի համար գործեց և մահացավ եղբայրս: Եվ այդ պատճառով, ահա, անարգված սիրույս մեջ անարգված տեսա ոչ թե միայն սրտիս նորածին սրբության սրբոցը, այլև — անգին եղբորս գործանեությունը, նրա պաշտելի հիշատակը: Լսիր, քույրիկ, այժմ այլևս չեմ կարող լռել, բոլորը պիտի խոստովանեմ առաջին և վերջին անգամ: Եվ այս ոչ ոք չգիտի և ոչ ոք չպիտի իմանա, բացի քեզնից:

Եվ Եվան մանրամասնորեն սկսեց պատմել այն դեպքը, որ առիթ էր եղել ծանոթանալու և բարեկամանալու Բազենյանի հետ. նույնպիսի մանրամասնությամբ պատմեց Բազենյանի

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

հետ ունեցած հարաբերությունները, տեսակցությունները, խոսակցությունները. թե ինչ կարծիք ունեին սկզբում նրա մասին և թե ինչպես հետո իմացան, որ նա խաբեբայի մեկն է եղել: Եվան պատմում էր վառ գույներով և որքան պատմությունն առաջ էր տանում, այնքան վառվում էր, այն տեղերում, ուր Բազենյանի խաբեբայությունն էր պատմում, նրա ձայնը հնչում էր անզուսպ գարշանքով: Տպավորությունները դեռևս այնքան թարմ էին, որ նրան թվում էր թե իր պատմած դեպքերը հենց այդ րոպեին էին կատարվում:

Աշխենն ապուշ էր կտրվել: Նա մոռացել էր իր վիճակը և ագահությամբ ականջ էր դնում Եվայի կրակոտ խոսքերին: Եվայի պատմության ամբողջ ընթացքում խոսք չէր գտնում ասելու — այնքան այդ պատմությունը նորություն էր նրա համար:

— Ասա, ի՞նչ կզգայիր դու, — բացականչեց Եվան, պատմությունը վերջացնելուց հետո, — երբ հանկարծ իմանայիր, որ Արմենակն այն չի եղել ինչ-որ կարծում էիր, ինչի համոզված, ինչի հավատամ էիր անպայման: Կապշեիր, կվրդովվեիր կկատաղեիր, կհուսահատվեիր, չէ՞, երբ տեսնեիր, որ քո պաշտած երիտասարդը, որի մեջ իղձերիդ, բաղձանքներիդ մարմնացումն էիր տեսնում, ոչ այլ ինչ է եղել, եթե ոչ մի եզվիտ, մի խաբեբա, ամենաստորին տեսակի մի աֆերիստ, որի համար ամեն ինչ լավ է և ազնիվ, բացի լավից և ազնիվից, որի համար ամեն ինչ սուտ է, բացի սրբությունից: Այդ միևնույնը զգացի ես և զգում եմ դեռ այս րոպեիս էլ: Սիրել և հանկարծ ատել նրան, ում սիրում էիր, գարշել նրանից, — չէ՞ որ այդ վիճակի մեջ կարելի է խելագարվել: Եվ երբ մտածում եմ, որ եղբորս այնտեղ սպանեցին չարաչար, իսկ սա շրջում է այստեղ անհոգ ու երջանիկ, միամիտներին խաբելով այն գործի անունով, որի համար զոհվեց եղբայր ... Ասում ես՝ բողոքիր: Քեզ պես եմ ուզում բողոքել: Բայց ու՞մ դեմ, ասա, ո՞ւմ դեմ: Ցույց տուր, ասա, ո՞վ է այս անարդարության տնօրինողը, շոշափելի կերպով դիր դրան իմ առաջ, և կտեսնես, թե ինչպիսի զայրույթով սրտիս բոլոր մաղձը կթափեմ նրա վրա: Չկա, չես կարող:

Իսկ լոկ երևակայությամբ ստեղծել այսպիսի բոլոր անարդարությունների մի սկզբնապատճառ, — այդ թե շատ քիչ է և թե դրա վրա չես կարող զայրույթդ թափել: Շոշափելի մարմին եմ ուզում ես, մի մարմին, որ երևար աչքիս առաջ իբրև նյութ, որպեսզի անզուսպ ցասումով ապտակ տայի երեսին և ասեի դու անարդար ես, դու իրավունք չունիս այդպես վարվելու... ախ, քույրիկ, որ իմանաս, թե երբեմն ինչ սոսկալի մտքեր են անցնում գլխովս ... Գիտես, թե ինչ անգութ կերպով ենք վարվում մենք, մարդիկս, անասունների հետ. մենք ծեծում ենք շներին, մենք տանջում ենք ձիերին, մենք հրացանի գնդակով գետին ենք տապալում օդում իր համար ազատ թռչող թռչունը, մորթում ենք դեռ երեկ ծնված գառը և, կարծես թե, որովհետև այդ բոլորը մենք կարողանում ենք անել այդ մեր իրավունքն է, և խիղճը չի տանջում մեզ: Ինձ թվում է, թե մենք, մարդիկս էլ նույն այդ անկար անասունների դերն ենք խաղում մեզ անհասկանալի մի էակի ձեռքի, որ ամենաանգութ կերպով տանջում, չարչարում է մեզ, որովհետև կարողանում է: Ու թպրտում նրա ձեռքին, թպրտում իզուր, ինչպես հավը դանակի տակ, և ազատում չկա մեզ, — երբևք հավիտյան... Ո՞վ է նա, ի՞նչ է նա, ո՞ւր է նա, — ինչո՞ւ չգիտենք և ինչո՞ւ չպիտի կարողանանք մեր վրեժը լուծել:

Աշխենը, որ այս անգամ պարզապես սարսափով էր նայում Եվայի վառված աչքերին, այլևս չկարողացավ դիմանալ, կարծես նրան մի վտանգավոր ինքնամոռացությունից հանելու համար կամաց գրկեց նրա իրանը և շշնջաց.

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Լռիր, Եվա, լռիր... Չնայելով, որ դու այն ես ասում, ինչ-որ ես եմ մտածում, բայց... Այդ սարսափելի է: Լուռ մտածածն այնքան զգալի է, որքան այն, երբ այդ մտածածը խոսքերով է արտահայտվում: Մտքումդ ամենայն հանգստությամբ կարող ես հայհոյել, բայց բարձրաձայն — այդ շատ ծանր է: Այդ ես նոր եմ զգում, երբ դու պահանջում ես մեր բախտը տնօրինողին, որպեսզի ... ոչ, ես ետ եմ առնում իմ խոսքերը, Եվա, որովհետև... Ախ, մի թե մենք այնքան թուլամորթ ենք, որ չենք կարող մոռանալ մեր անձը, որպեսզի մեր հողին այսքան չպղտորվի: Նկատիր, որ մեր այս բոլոր տրտունջները ոչ այլ ինչ են, եթե ոչ տկար հոգու հուսահատական ողբ այն բանի համար, որ մեր անձնական երջանկությունը կորցրել ենք: Ինչու՞ միևնույն ողբը չենք բարձրացնում մենք, երբ տեսնում ենք ուրիշի թշվառությունը: Ինչո՞ւ ենք թույլ տալիս, որ մեր հոգին այնքան նեղ լինի, որ, բացի մեր անձից, ուրիշ ոչ ոքի համար տեղ չունենա իր մեջ: Եվ արդյոք այս եսասիրությանը չէ՞ պատճառը, որ մենք այսքան տանջվում ենք: Ո՛չ, ո՛չ, Եվա ջան, էլի հնազանդությունը, էլի լռությունը, էլի անձնուրացությունն, — այդ է միակ ճանապարհը հոգու և մտքի այս սարսափելի քաոսի մեջ չմոլորվելու համար: Վերջին նամակիս մեջ գրել էի քեզ, թե գալիս եմ երջանկության ուղիղ ճանապարհը: Դու գիտես, թե որն է այդ ճանապարհը: Եվ քանի որ ոտս դրել եմ արդեն այդ ճանապարհի վրա, պիտի գնամ առաջ մինչև վերջին շունչս: Այս խորհրդավոր ժամին, երբ ես կյանքիս ամենածանր րոպեներն եմ հաշվում, երբ անդառնալի կերպով արդեն թաղել եմ անձնական բախտավորությանս միակ հույսը, — այս ճգնաժամին շպրտում եմ ձեռնոցս բախտիս երեսին և աղաղակում՝ ինձ համար այլևս գոյություն չունի անձս: Ես կարծում էի, թե Արմենակի մահով հանգել է լուսատու աստղս, մինչդեռ, ընդհակառակը՝ այժմ է, որ այդ աստղը լուսավորում է ճանապարհս, առաջվանից ավելի պայծառ և կանչում է ինձ... Եվ ես պիտի գնամ նրա ետևից, պիտի գնամ, պիտի գնամ ...

— Եվ ինձ էլ պիտի տանես քեզ հետ, — շշնջաց Եվան, սրբազան մի սարսուռ զգալով իր մարմնի մեջ Աշխենի խոսքերի ազդեցության տակ:

Աշխենը պինդ գրկեց Եվայի իրանը:

— Գնանք, գնանք միայն նրա ետևից, — ասաց նա էքստազի մեջ.

17

Հետևյալ օրն առավոտյան, երբ օր. Սահակյանը գնաց Աշխենին տեսնելու, ինչպես անում էր ամեն առավոտ, Աշխենը նամակ էր գրում: Նախկին օրերի հետ համեմատած, այս անգամ նկատելի չէր այն բթացած վիշտը, որ իր կնիքն էր դրել նրա դեմքի վրա և խոսակցության ու շարժումների մեջ: Նա թողնում էր ծանր հիվանդությունից նոր առողջացած մարդու տպավորություն: Այդ անակնկալ փոփոխությունը խիստ ուրախացրեց օր. Սահակյանին:

— Փառք աստծո, որ այսօր լավ ես, — բացականչեց նա: — Լավ ես, չէ՞:

— Այո, վիշտս կարծես թե արդեն ... հնացավ, — հեգնեց Աշխենը դառնությամբ ժպտալով:

— Ա՛, դու մինչև անգամ ժպտում ես, — ծիծաղեց օր. Սահակյանը և, չափազանց ուրախությունից գրկելով պինդ համբուրեց նրան: — Որ իմանաս, սիրելիս, որքան մտահոգություն էր պատճառում ինձ դրությունդ, թեև գիտեի, որ դա անցողակի է և բնությունդ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

կհաղթի: Դու միշտ քաջ ես եղել և քաջ էլ մնացիր: Կեցցե՛ս: Բայց քեզ մի ուրախալի լուր հաղորդեմ: Մինասյանն այստեղ է:

— Այստե՞ղ է:

— Երեկ է եկել: Երեկոյան ինձ մոտ էր:

— Բայց նա ինձ ոչինչ չի ասել, թե գալու է, ինչո՞ւ է եկել:

— Նա գիրք է ուզում հրատարակել:

— Ճիշտ է, նա մի նոր բան է պատրաստել, բայց ասում էր, որ ամառը կհանձնի տպագրության:

— Քո գալուց հետո միտքը փոխել է:

— Իսկ ես նրան նամակ էի գրում այս բոպեիս:

— Ի՞նչ էիր գրում:

— Գրում էի, որ մի-երկու շաբաթ կուշանամ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև չի կարելի խո սրանց այսպես թողնել:

«Սրանց» բառն արտասանելիս Աշխենը ցույց տվեց հարևան սենյակի դուռը, դրանով հասկացնելով, թե խոսում է հորեղբոր ընտանիքի մասին:

— Նոր եմ տեսնում, թե ինչ սոսկալի փոփոխություն է կատարվել այստեղ: Հորեղբորս որ նայում եմ, ուղղակի չեմ ճանաչում: Էլ չեմ խոսում նրա կնոջ մասին: Իսկ Եվան... Իսկապես Եվայի համար է, որ ուզում եմ մնալ: Մենակ թողնել նրան այս մեռելության, այս վշտի մեջ — նշանակում է թողնել, որ նա... Չեմ իմանամ, ճշմարիտ, ինչ կպատահի նրան, — այնքան վտանգավոր ընթացք են ստացել նրա մտածմունքները: Երեկ գիշեր մենք երկար խոսում էինք, պարզապես չէի հավատում ականջներիս, թե ինձ հետ խոսողը Եվան է, իմ ճանաչած կենսաթրթիռ Եվան... Կմնամ, անպատճառ կմնամ մի երկու շաբաթ ավելի — և մինչև անգամ մտածում եմ, որ ինձ հետ գյուղ տանեմ նրան: Համենայն դեպս, մենակ թողնել նրան այստեղ անկարելի է:

— Դու նրա մասին ես հոգում, իսկ նա՝ քո մասին: Այդպես էլ պետք է. դուք կփրկեք իրար: Այդ միջոցին մտավ Եվան:

— Արի, արի այստեղ, այս բոպեիս քո մասին էինք խոսում, — ասաց օր. Սահակյանը:

Եվան հարցական հայացքով նախ նայեց նրան, հետո Աշխենին: Աշխենը գլխով արեց նրան և ժպտաց քնքուշ սիրո ժպիտով: Այդ ժպիտը խիստ զվարթացրեց Եվային:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Բամբասո՞ւմ էիք ինձ, — հարցրեց նա:

— Իհարկե, բամբասում: Աշխենը ասում էր, որ մտածմունքներդ ինչ-որ վտանգավոր ընթացք են ստացել, բայց կարծեմ, դու այնքան խելոք աղջիկ ես, որ...

— Իմ խելքը մի կողմ թող, Վարո, և ինձ այս ասա. թողնե՞մ, որ Աշխենը մի՛ երկու շաբաթ ավելի մնա ինձ մոտ:

— Ի՞նչ է, մի՞թե չես ուզում:

— Չեմ ուզում, — բացականչեց Եվան և գրկեց Աշխենի գլուխը: — Ես կուզեի մինչև անգամ փեշս փեշիցս կարել, որ երբեք չհեռանա ինձնից, բայց այդ զոհաբերությունն անել ինձ համար ի վնաս գործի...

— Բայց գիտե՞ս, Եվա ջան, Մինասյանն այստեղ է, — ասաց Աշխենը:

— Մի՞թե: Ո՞վ ասաց:

— Վարոյի մոտ է եղել երեկ երեկո:

— Հա՞-ա: Հետո՞, ինչո՞ւ չի գալիս մեզ մոտ:

— Երևի կգա, — ասաց օր. Սահակյանը: — Բայց զարմանալի մարդ է. գիտեմ, որ աղքատ է, իսկ հյուրանոցներում կողոպտում են. խնդրեցի, որ մեր տանը մնա, չկամեցավ:

— Ու, ի՞նչ լավ բան ասացիր, — բացականչեց Եվան: — Գիտե՞ս ինչ կա, Աշխեն, արի հրավիրենք, որ մեր տանը մնա. ազատ տեղ խո շատ ունինք: Հը՞, ի՞նչ ես կարծում: Լավ միտք չէ՞:

— Չի գալ, — ասաց օր. Սահակյանը:

— Չի գալ, — պնդեց Աշխենը:

— Կգա: Հայրիկիս կասեմ, որ բերի: Ապասեցեք: — Եվան դուրս վազեց և մի երկու րոպե չանցած ներս բերեց հորը:

— Հայրիկ, խոսք տուր սրանց մոտ, որ Մինասյանին կհրավիրես մեր տուն:

— Որտե՞ղ է իջած, ասացեք, ես իսկույն կգնամ նրա մոտ, — ասաց Մարությանը:

— Չի գալ, պարոն Մարության, — ասաց օր. Սահակյանը: — Մեր տանն ավելի համարձակությամբ կմնար, բայց վճռապես մերժեց:

— Այդ ե՛ս գիտեմ: Դուք ինձ ասացեք որտեղ է իջած:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— «Ֆրանսիա» հյուրանոցում:

— Այս րոպեիս գնում եմ նրա մոտ: Իսկ դուք գրազ եկեք կբերե՞մ, թե ոչ:

— Նա կգա, իհարկե, այցելության, — ծիծաղեց օր. Սահակյանը:

— Չէ, կբերեմ իր իրեղեններով, — վրա բերեց Մարությանը և շտապով դուրս գնաց:

Եվ անմիջապես դիմեց դեպի «Ֆրանսիա» հյուրանոց: Չափազանց ուրախ էր, ուրախ այն պատճառով, որ աղջկան և Աշխենին այնքան զվարթ էր տեսնում այդ օրը: Քայլում էր կայտառ քայլերով և զգում էր, թե վերադարձել է նախկին աշխույժը: Եվ շրջապատն ավելի քան հարմարում էր նրա տրամադրությանը: Օրթոդոքսների ծննդյան տոներն էին և մոտենամ էր Նոր տարին: Փողոցները լիքն էին ցնծալի դեմքերով: Օդն աղմկում էր ուրախական բացականչություններով: Մարդիկ և կանայք, իրար անցած, մրջյունների պես տանում էին՝ ոմանք — տոնածառ, ոմանք — կողովներով լի ուտելեղեն, ոմանք — փաթեթների մեջ նոր հագուստեղեն, ոմանք — ո՞վ դիտե ինչ, միայն թե ամենքը մի բան տանում էին, շտապում էին ուր-որ. ոչ ոք պարապ չէր, ամենքը զբաղված էին և ամենքի դեմքի վրա տոնական ցնծալի արտահայտություն կար: Եվ ձմեռային սառնամանիքն ուրույն գրավչություն էր տալիս այդ ընդհանուր կենդանությանն ու ժխորին:

«Ֆրանսիա» հյուրանոցում Մարությանը Մինասյանին գտավ իր սենյակում թեյ խմելիս: Մինասյանը նստած էր ձմեռային բավական հնացած վերարկուով և գլխարկով. առաջը դրած էր ձեռագիր մի տետրակ և համ թեյ էր խմում, համ մատիտով ուղղում ձեռագիրը: Սկզբում բավական շփոթվեց և չճանաչեց Մարությանին, բայց երբ Մարությանը տվեց իր անունը, գլխարկը վերցրեց և պինդ սեղմեց նրա ձեռքը:

— Պետք է ներեք ինձ, որ չճանաչեցի, — ասաց նա. — չէ որ ձեզ միայն մի անգամ եմ տեսել և, բացի դրանից, դուք չափազանց փոխվել եք: Ես ձեզ այդպես ծերացած չեմ տեսել երեք ամիս առաջ:

Մարությանը հառաչեց:

— Մի՞թե դուք չեք իմացել մեզ պատահած դժբախտությունը:

— Այո, օրիորդ Սահակյանը ինձ պատմեց երեկ: Ձեր որդու մահը չափազանց ցավալի է:

— Ի՞նչ արած: Նախախնամության տնօրինությունը մարդս չի կարող հասկանալ, գուցե որդուս մահն անհրաժեշտ էր այն գործի համար, որի համար մեռավ, գուցե նա ավետարանական ցորենի այն հատիկն էր, որ մեռնում է բաղում արդյունք տալու համար, — ո՞վ գիտե ... Գոնե ես աշխատում եմ դրանով մխիթարվել և, փառք աստծո, շատ էլ չեմ ընկճվում — թեև ասում եք, որ ինձ այսպես ծերացած չեք տեսել երեք ամիս առաջ: Երե՛ք ամիս առաք... Մի՞թե կարծում եք, որ երեք ամիսը կարճ ժամանակ է ծերանալու համար: Ծերանալ կարելի է մի օրում, մի ժամում, մի րոպեում, ձեզ ասեմ, որ ես ծերացա մի րոպեում, թերևս չհավատաք:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Խնդրում եմ, պարոն Մարության, այդ մի ասեք, — վրա բերեց Մինասյանը եռանդով: — Ես լիովին հասկանամ եմ ձեր դրությունն և ...

— Ինչևիցե, ինչևիցե, այդ թողնենք: Ես դրա համար չեմ եկել: Ես եկել եմ ձեզ հանդիմանելու, որ ուղղակի մեր տուն չեք իջել: Մենք պարզ ընտանիք ենք. մեզնից խորշելու ամենևին հարկ չկա, մանավանդ որ ձեր վարժուհին մեր աղջիկն է: Խնդրում եմ, վեր կացեք գնանք:

Մինասյանն ուզում էր հրաժարվել, բայց Մարությանը լսել անգամ չկամեցավ:

— Մի՞թե կարելի է այսպիսի ցուրտ սենյակում ապրել, — բացականչեց նա: — Ահա դուք մինչև անգամ թեյ խմելիս ստիպված եք վերարկուով նստել: Ես էլ վերարկուս չեմ հանում, որովհետև սարսափելի ցուրտ է այստեղ: Խնդրեմ, վերջացրեք ձեր թեյը, և մենք իսկույն կհավաքենք ձեր ունեցած-չունեցածը ու կգնանք մեր տուն: Փառք աստծո, ազատ տեղ ունինք: Ի նկատի ունեցեք, որ ես իսկապես հատուկ պատգամավոր եմ ուղարկված մերոնց կողմից: Օր. Սահակյանն էլ այս րոպեիս մեր տանն է: Ես ուզում եմ, որ այս տոներին ձեր միջոցով մի քիչ կենդանություն մտնի մեր տուն, թե չէ վիշտը մեր ամենիս էլ սպանում է: Դե, շուտ արեք, ես սպասում եմ:

Ճար չկար: Մինասյանը հավաքեց իր ունեցած-չունեցածը, որ ոչ այլ ինչ էր, եթե ոչ իր ջարդված ճամպրուկն ու յափնջին, և կես ժամից հետո Մարությանը նրան իրենց տուն էր տանում կառքով:

Եվան, Աշխենը և օր. Սահակյանը հավաքված էին Թեկլեի մոտ, երբ Մարությանը հաղթական կերպով ներս տարավ Մինասյանին: Ընդունելությունը շատ սիրալիր էր, բայց ընդհանուր տրամադրությունն առժամանակ խանգարեց Թելեն, որը, Մինասյանի մխիթարական խոսքեր ասած ժամանակ, սկսեց սովորական ողբն իր որդու մահվան համար: Մի բան, որ իսկույն նկատեց Մինասյանը, այո՝ Աշխենի մեջ կատարված փոփոխությունն էր: Օր. Սահակյանը նախորդ օրը, իբրև գաղտնիք, պատմել էր նրան, թե ինչ կապ կար Աշխենի և Մարությանի սպանված որդու միջև, և այդ բանը բավական զորեղ տպավորություն էր թողել նրա վրա: Այժմ նրան այնքան չէր ազդում որդեկորույս մոր աղեկտուր ողբը, որքան իր ծանր վիճակի հետ հաշտված Աշխենի լուռ վիշտը: Գյուղում, իրենց ամենօրյա հարաբերությունների ժամանակ, Մինասյանն արդեն կարողացել էր մի անգամ առմիշտ գնահատել Աշխենի արժանիքները, չափազանց հարգում էր նրան և, միևնույն ժամանակ, եղբայրական այնպիսի մի քնքուշ սեր էր տածում դեպի նա, որ այժմ հոգով չափ ցանկանում էր որևէ բանով մխիթարած լինել նրան, բայց ոչ մի խոսք չկարողացավ արտասանել, այլ միայն լուռ ու խիստ զգացված սեղմեց նրա ձեռքը: Մինչդեռ Եվային կարողացավ մի քանի մխիթարական խոսքեր ասել: Եվան, որ սկզբում զսպում էր իրեն, այժմ չկարողացավ դիմանալ և սկսեց լաց լինել մոր հետ: Աշխենը ներքին շրթունքներն առավ ատամների մեջ, նրա քթի պնչերը սաստիկ լայնացան, աչքերը լցվեցին արցունքով, և նա կամաց դուրս գնաց:

Մարությանները Մինասյանին հատկացրին առանձին սենյակ բոլոր հարմարություններով և ամեն կերպ աշխատում էին չճնշել նրա ազատությունը: Առաջին իսկ օրվանից զգալի եղավ Մինասյանի բարերար ազդեցությունը. ընտանեկան ծանր դժբախտության տակ ճնված Մարություններն ունեին մի հյուր, որ իր կենսաթրթիռ հայացքներով մեծ խթան էր նրանց համար վերակենդանանալու: Ձմեռային երկար գիշերներն ամենքը հավաքվում էին սեղանի շուրջը, գրեթե ամեն գիշեր նրանց հետ էր լինում օր. Սահակյանը, և լուսամուտների փեղկերը

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

փակված, պայծառ լուսավորված տաք սենյակում մինչև ուշ գիշեր տեղի էր ունենում ընդհանուր կենդանի զրուցադրություն այնպիսի առարկաների և երևույթների մասին, որոնք ընդունակ են բարձրացնելու մարդու սիրտը, հոգին, միտքը: Ժամերն անցնում էին թեթև, աննկատելի, նույնիսկ երբեմն սենյակում բարձրանում էր ուրախ առողջ մի քրքիջ:

18

Նոր տարու առաջին օրը Մինասյանը պատրաստվեց այցելություն տալու քաղաքում ունեցած իր բարեկամներին: Ամենից առաջ գնաց Շահյանի մոտ: Առավոտյան ժամը 11-ի մոտերքն էր: Նրան ընդունեց Շահյանի մայրը: Ամուսնու մահից հետո Թամարը բոլորովին պառավել էր, թեև տարիքով համեմատաբար ջահել կին էր: Խորշոմներով ծածկված նրա բարի, փափուկ դեմքն այս անգամ ավելի, քան երբևէ կրում էր մշտական թախիծի կնիքը: Մինասյանին որ տեսավ, չափազանց ուրախացավ, հետո սկսեց լաց լինել և գանգատվել իր վիճակից, ասաց, որ իր որդու դրությունը մեծ անհանգստություն է պատճառում իրեն. Լևոնը բոլորովին փոխվել է, ոչ ուտում է, ոչ խմում, ոչ խոսում, սենյակից ամենևին դուրս չի գալիս, սարսափելի բարկանում է, երբ մեկն անհանգստացնում է իրեն, իսկ բժշկի անունը լսել անգամ չի կամենում: Վերջը խեղճ պառավը թախանձագին աղաչեց Մինասյանին, որ իր ազդեցությունը գործ դնի Լևոնի վրա, իմանա նրա ցավը, որպեսզի կարելի լինի մի ճար անել:

Չնայելով, որ Մինասյանը նախապատրաստված էր, թե ինչ դրության մեջ պիտի գտներ Շահյանին, այնուամենայնիվ, երբ մտավ նրա սենյակը, ակամա կանգ առավ դռների մոտ ապշած:

Շահյանը նստած էր բազկաթոռի վրա, գլուխը ետ էր ձգել բազկաթոռի թիկունքին և ոտները դրել էր առջևը գտնված մի աթոռի վրա, այնպես որ գլուխն ու ոտների ծայրերը գրեթե հավասար բարձրության վրա էին գտնվում: Հագած էր իր տնային սովորական խալաթը, որ առջևից բոլորովին բաց էր և որի փեշերը փռվել էին հատակի վրա, արծվի կոտրատված թևերի պես: Խալաթի տակ, բացի շապիկից և վարտիքից, ուրիշ բան չուներ հագած: Ոտները մերկ էին և նրանց ծայրերից կախված էին փափուկ մաշիկները: Մազերը խիստ երկար էին և չէին սանրված, աչքերը, որոնց վրա չէր կրում սովորական ակնոցը, ուռած, կարմրած և պատած էին կես-կապտավուն, կես-սևագույն շրջանակներով, դեմքը գաջի գույն էր ստացել և խիստ լղարել էր: Թվում էր, թե նոր էր վեր կացել անկողնից խիստ անհանգիստ քնից հետո և դեռ ժամանակ չի ունեցել ոչ լվացվելու, ոչ հագնվելու:

Մինասյանը կարծում էր, թե իր առաջ տեսնում է ոչ թե Շահյանին, այլ նրա ուրվականը, և երկար ժամանակ կանգնակ էր դռների մոտ լուռ ու ապշած այն տարօրինակ փոփոխությունից, որ տեսնում էր ընկերոջ մոտ:

Շահյանը ոտները կամաց ցած դրեց աթոռից, այնքան զգուշորեն, որ ծայրերից կախված մաշիկները մնան ոտներին, հետո նստեց ուղիղ և նայեց Մինասյանին լուռ ու երկարաև, կարծես չկարողանալով իսկույն ճանաչել նրան:

Այնուհետև, երբ Մինասյանը մոտեցավ նրան, նա վեր կացավ դանդաղորեն և մեքենայաբար սկսեց կապել խալաթի ծոպերը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Լևոն, այդ դու ե՞ս, — հարցրեց Մինասյանը, այս անգամ ավելի ապշած նրա տարօրինակ համառ հայացքից քան թե նրա ընդհանուր արտաքինից:

Շահյանը չպատասխանեց: Նայում էր Մինասյանի աչքերին և շարունակում էր մեքենայաբար կապել խալաթի ծոպերը:

— Ի՞նչ ես այդպես նայում, չե՞ս ճանաչում, — բացականչեց Մինասյանը:

— Ինչպես չէ, — կամաց արտասանեց Շահյանը, սակայն դեռևս շարունակելով նայել նրան իր տարօրինակ համառ հայացքով:

— Դե, որ ճանաչում ես, ինչո՞ւ ես ինձ այդպես խոր նայում:

— Որովհետև... չէի սպասում, — պատասխանեց Շահյանը և նստեց բազկաթոռի վրա ծանր ու դանդաղորեն, երկար ժամանակ ոտի վրա մնալու անկարող հիվանդի նման: Ձայնն էլ հնչում էր թույլ ու խուլ, ինչպես հիվանդներինը: — Նստիր, ինչո՞ւ չես նստում, — ավելացրեց նա, իր առջև դրված աթոռը ցույց տալով:

Մինասյանը նստեց:

— Լևոն, այդ ի՞նչ է դրությունդ: Շատ ծանր հիվանդի ըպավորություն ես գործում: Ի՞նչ է հիվանդությունդ:

— Չգիտեմ:

— Ցավ չե՞ս զգում: Չե՞ս հազում:

— Ամենևին: Միայն ընդհանուր թուլություն եմ զգում: Հետո գլուխս ծանր է շարունակ և սիրտս կանոնավոր չի խփում:

— Եվ չես բժշկվում:

— Ոչ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև չեմ ուզում:

— Որովհետև հիմար ես, չնեղանաս, խնդրեմ, — վրա բերեց Մինասյանը մտերմական կշտամբանքով: — Ջոռո՞վ ես ուզում մեռնել, ինչ է:

Շահյանը չպատասխանեց: Նստած էր փալասի պես թ ույլ, գլուխը կրծքին կախած.

— Նո՞ր ես վեր կացել, — շարունակեց Մինասյանն իր հարցափորձը:

— Ոչ:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Հապա ինչո՞ւ մինչև հիմա հագնված չես:

— Ինչի՞ համար հագնվեմ:

— Ինչպե՞ս թե ինչի համար: Հապա ամբողջ օրն աւդպե՞ս ես մնում, — խալաթով և առանց երեսդ լվանալու:

— Ամբողջ օրը և ամեն օր:

— Բայց այսօր մարդ կարող է գալ մոտդ:

— Ի՞նչ մարդ: Ինչի՞ համար:

— Նոր տարին շնորհավորելու համար:

— Ի՞նչ նոր տարի:

— Այ, տնաշեն, բաս այսօր հունվարի մեկը չէ՞ :

— Հունվարի մեկը՞ ... Չգիտեմ, շատ կարելի է:

Մինասյանի զարմանքն իր գագաթնակետին հասավ: Աթոռը մոտ քաշեց և, նայելով Շահյանի հանգած աչքերին, առավ սրա ձեռքը:

— Լսիր, Լևոն, դու քեզ ապուշ ես ձևացնո՞ւմ, թե իսկապես ոչինչ չես հասկանում: Ինչպե՞ս թե չգիտես, որ այսօր Նոր տարի է:

— Ես չեմ հետաքրքրվում այդպիսի բաներով, — ասաց Շահյանը, ձեռքը խլելով նրա ձեռքի միջից, ե նստած տեղը ետ գլորեց իր բազկաթոռը: Ըստ երևույթին սկսել էր գրգռվել Մինասյանի հարցափորձից:

— Դու կորած ես, Լևոն, — բացականչեց Մինասյանը: — Մի՞թե Շոպենհաուերն է քեզ այդպես վայրենացրել, եթե, ավելին չասեմ: Բայց քեզ այդպես չի կարելի թողնել. քեզ անպատճառ հարկավոր է բժշկել և հիմնավորապես բժշկեր: Ես քեզ շատ բարի էի կարծում, մինչդեռ ամենաանխիղճներից մեկն ես եղել: Գիտե՞ս մայրդ այս րոպեիս ինչպես էր գանգատվում քեզնից: Մեղք չէ՞ այն խեղճ պառավը: Կարելի՞ է միթե մորն այդպես տանջել: Ինչո՞ւ չես մտնում նրա դրությունը: Մի՞թե չես հասկանում և չես տեսնում, թե ի՞նչ սոսկալի տանջանքներ է կրում, որ քեղ այդ դրության մեջ է տեսնում: Իսկ դու երբևիցե ուշադրություն դարձրե՞լ ես դրությանդ վրա: Մեկ նայիր հայելու մեջ, տես ինչ ես դարձել: Ճիշտը քեզ ասեմ, չճանաչեցի, որ մտա, և այժմ էլ չեմ ուզում հավատալ, թե այդ դու ես: Մի՞թե կարելի է որ մարդ կամովին ինքն իրեն այդպես սպանի: Երիտասարդ մարդ ես, ի՞նչ ես նստել տան չորս պատերի մեջ և ուղեղդ ու մարմինդ փտեցնում մետաֆիզիկական տխմար վերացումների մեջ: Մի քիչ թափահարիր քեզ, շարժվիր, դուրս արի լույս աշխարհ, պարզ օդ ծծիր, շփվիր մարդկանց հետ, վերջապես, — ապահովված մարդ ես, — պսակվիր, զավակներ, ժառանգներ ունեցիր, մխիթարիր պառավ մորդ, որի միանուագար զավակն ես, բախտավորվիր ինքդ և այն

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ժամանակ, ես համոզված եմ, Շոպենհաուերն ինքդ քո ձեռքով վառարանը կշպրտես: Ես հասկանում եմ հոռետեսությանը, երբ դա արդյունք է կյանքի դառն փորձության, և այդ դեպքում հոռետեսն արդարանալու հիմքեր ունի, բայց քո հոռետեսությունն ախր լոկ երևակայական է, լոկ մտավորական և բռնազբոսիկ, չունի իրական ոչ մի հիմք, հետևաբար և՝ ոչ մի արդարացում և, համենայն դեպս, անպայման կործանարար է: Դու չափազանց անփորձ ես, դու ամենևին չգիտես, թե կյանքի այն աննպատակավորության մեջ, որի վրա հիմնված է քո այդ շոպենհաուերյան հոռետեսական փիլիսոփայությունը, որպիսի մեծ և քաղցր նպատակներ կան, որոնց համար, հավատացնում եմ քեզ, արժե ապրել, գործել և տանջվել: Լսո՞ւմ ես, Լևոն, ինչ եմ ասում, — Հարցրեց Մինասյանը, տեսնելով, որ Շահյանը նստած է թմրած, գլուը կրծքին կախած:

— Լսում եմ, — կամաց արտասանես Շահյանը:

— Հետո՞: Ի՞նչ կասես:

Շահյանը գլուխն արագ բարձրացրեց և նայեց Մինասյանին այնպիսի մի հայացքով, որից երևում էր, որ մի միտք հանարծ կենդանություն տվեց նրան: Մի բոպե, լուռ ու կենտրոնացած, նայեց Մինասյանի աչքերին, ըստ երևույթին զբաղված այն մտքով, որ հենց նոր էր ծագել իր գլխում. հետո ասաց.

— Պատասխանս կստանաս գրավոր...

— Ինչպե՞ս թե գրավոր, — զարմացավ Մինասյանը:

— Գրավոր, — կրկնեց Շահյանը, կարծես ինքն իրեն, և նրա կենտրոնացած հայացքն ավելի կենդանություն ստացավ:

— Ես քեզ չեմ հասկանում: Այսինքն պատասխանդ կգրես թղթի վրա և ի՞նձ կտաս: Այդ ես ուզու՞մ ասել:

— Այո:

— Բայց ինչո՞ւ ախր: Լեզու չունի՞ս ինչ է: Թե ես խուլ եմ:

— Այո, ես լեզու չունիմ. և դուք էլ խուլ եք ...

— «Դո՞ւք»: Ո՞վ է այդ «դուք»-ը:

— Դուք, ամենքդ... Միայն դու չես, որ ասում ես ինձ այդ բաները. ուրիշներն էլ կան... կային: Եվ ես պետք է պատասխանեմ ամենքիդ... միանգամից: Եվ կպատասխանեմ... Եվ կտեսնեք, որ ճշմարիտը ես եմ... ես եմ...

Շահյանը մեր կացավ և սկսեց անցուդարձ անել սենյակում արագI, այնքան հուզված, որ Մինասյանին թվաց, թե հանկարծ մի հրաշք կատարվեց իր աչքի առաջ — մեռելը հարություն առավ: Սակայն այդ ամենը երկար չտևեց. Շահյանի աչքերի մեջ բռնկած կրակը հանգավ արագորեն, նա կարծես թե հոգնեց անսովոր արագ քայլելուց և գնաց նստեց մահճակալի վրա,

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

որ չափազանց անկարգ դրության մեջ էր: Նստեց, խոնարհվեց ծնկների վրա և գլուխը առավ ձեռքերի մեջ:

Մինասյանը վեր կացավ, մոտեցավ նրան և ձեռքը դրեց նրա ուսին:

— Լևոն, եկ քո բժիշկն ես դառնամ, — ասաց նա այնպես, ինչպես խոսում են ծանր հիվանդների հետ, քաջալերական տոնով և թեթև կատակով: — Եթե մի քանի օրում էլ նախկին Լևոնը չշինեմ, նախկին Լևոնից ավելի լավ Լևոն, առողջ ու կենսուրախ մի Լևոն — ինչ ուզում ես՝ ասա: Համաձա՞յն ես:

Շահյանը չպատասխանեց: Վեր կացավ և գնաց նստեց իր նախկին տեղը, բազկաթոռի վրա: Ըստ երևույթին, ուզում էր հեռու մնալ Մինասյանից: Սակայն Մինասյանը հետևեց նրան և այս անգամ գրկեց նրա ուսը:

— Բժշկությունը կսկսեմ հենց այսօրվանից, — ասաց նա: — Դրա համար հարկ կլինի, այժմ վեր կենաս, լվացվես, հագնվես, ինչպես կարգն է, և միասին դուրս գնանք: Այսօր Նոր տարի է, այցելությունների օր է: Ամենից առաջ կգնանք Մարությունների մոտ, դա այնպիսի մի հրաշալի ընտանիք է, որի մեջ մի ժամ ժամանակ անցնելն ինչ ասես արժե: Ի դեպ. լսե՞լ ես նրանց որդու մահը:

Շահյանը ցնցվեց և նայեց Մինասյանի աչքերին կարծես վախեցած:

— Մա՞հը, — հարցրեց նա, ըստ երևույթին առանձին ուշադրություն դարձնելով այդ բառի վրա, սակայն առանց այդ գաղափարը կապելու Մարությանի որդու հետ: — Մահը լավ բան է, — արտասանեց նա, և մի վայրկյան նրա աչքերը վառվեցին ինչ-որ տարօրինակ փայլով:

— Այո՛, մահը լավ բան է, Լևոն, երբ մարդ մեռնում է լավ գործի համար, վսեմ նպատակի համար, ինչպես Մարությանի որդին:

— Մահվան նպատակը ինքը մահը պետք է լինի, — նկատեց Շահյանն այս անգամ փիլիսոփայական հանգստությամբ:

— Հիմարություններ մի դուրս տար և վեր կաց գնանք, — ասաց Մինասյանը կամաց խփելով նրա մեջքին: — Ես կարծում եմ, որ դեռևս արյուն կա մեջդ և այդ արյունը կարելի է տաքացնել: Իսկ երբ որ կծերանանք, ես էլ կմիանամ քեզ հետ և միասին այնպիսի խոր փիլիսոփայությունների մեջ կմտնենք մահվան մասին, որ Շոպենհաուերի ոսկորները գերեզմանի մեջ պար կգան ուրախությունից: Մարություններն երեկ շատ էին հետաքրքրվում քեզնով և խնդրեցին, որ անպատճառ տանեմ քեզ իրենց մոտ: Հա, գիտե՞ս ինչ կա, Լևոն. արի քեզ ամուսնացնենք Մարությանի աղջկա հետ. նա հրաշալի աղջիկ է և այնպիսի երջանկության կտա քեզ, որ Շոպենհաուերն անգամ չի կարող խոստանալ նիրվանայի մեջ: Ա՛յ լավ միտք: Վեր կաց, վեր կաց:
Շահյանը վեր կենալու տեղ մի թառանչ քաշեց և խոնարհվեց ծնկների վրա:

— Կինը սոսկալի բան է, — ասաց նա: — Աստված նրան պատիժ է ստեղծել մարդկության համար: Նա դառն հաբ է շաքարի կեղևի մեջ: Կնոջ մարմինը... Ի՞նչ բան է կնոջ մարմինը: Ըստ երևույթին, ոչինչ, մարմին է, ինչպես մեր մարմինը. — ոսկորներ, միս և կաշի: Բայց ի՞նչ կա

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

նրա մեջ, այն ի՞նչ դև է թաքնված նրա մեջ, որ դուրս է սողում այնտեղից, մտնում է մարդու արյունը... Օ՛, այս կիրքը ... Ես ճանաչում էի մի կին. նա երևաց ինձ ինչպես մի երազ, և երազի պես էլ ցնդեց... Ինձ թվում է, թե ես կուտեի նրա մարմինը, կուտեի ուղղակի գազանի պես, եթե... Ո՞ւր է նա... Բեր նրան այստեղ, նրան միայն, ուրիշ ոչ մի կին, և ես պատրաստ եմ հարություն առնելու...

Մինասյանը խիստ հետաքրքրվեց և ուշի-ուշով ականջ էր դնում Շահյանի խոստովանությանը: Նրան խիստ զարմացրեց մանավանդ այն հանգամանքը, որ այնքան հանգիստ ու թմրած Շահյանն այժմ խոսում էր արտասովոր եռանդով և, ըստ երևույթին, ի ներքուստ զորեղապես հուզված: Բայց ո՞վ էր այն կինը, որի մասին խոսում էր նա, — Մինասյանը չկարողացավ իմանալ, որովհետև Շահյանը լռեց և այլևս ոչ մի խոսք չկամեցավ արտասանել այդ մասին:

— Բայց Մարությանների տունը գնո՞ւմ ենք, թե ոչ, — հարցրեց Մինասյանը:

— Ոչ, չենք գնում:

— Ինչո՞ւ:

— Որովհետև.... խնդրում եմ, խաչ քաշիր ինձ վրա և անցիր գնա:

— Իսկ եթե խաչ չքաշեմ ու չանցնեմ չգնամ:

— Դա պարզ բռնություն կլինի:

— Իսկ մորդ մասին չե՞ս մտածում:

— Ա՛խ, թո՛ղ, թե աստվածդ կսիրես, — բացականչեց Շահյանը ջղայնոտության հանկարծական բռնկումով: — Ո՞վ էր ասում նրան, որ ինձ նման մի թուլամորթ արարած ծնի: Ծնեց, ուրեմն թող կրի իր անմտության պատիժը: Չեմ հասկանում, նա ինչո՞ւ է ապրում:

— Խիղճդ չի՞ տանջում քեզ, որ այդպիսի բաներ ես ասում մորդ համար:

— Խիղճը վատ խորհրդատու է: Եթե քննես մարդկության ներքին կյանքը, կտեսնես, որ աշխարհիս երեսին ամենադժբախտն այն մարդիկ են, որոնք խիղճ ունին:

— Դու սոփեստ ես: Ասենք, սոփեստությունը հոռետեսների գլխավոր հատկանիշն է: Մի անգամ, որ վճռել ես հոռետես լինել, աշխատում ես ամեն բան թարս հասկանալ, քեզ համար սպիտակը սև է, շաքարը — լեղի, ծիծաղը — լաց, լույսը — խավար, այդպես և խիղճ ունենալը — դժբախտություն: Բայց ես չեմ ուզում քեզ հետ վիճաբանության բռնվել, որովհետև խոսքով քեզ չի կարելի համոզել: Սոփեստություններիդ բոլոր անհեթեթությունը կհասկանաս այն ժամանակ միայն, երբ կյանքի հորձանքը մտնես, երբ մարդկության գործուն անդամներից մեկը դառնաս: Բայց այդ բանը դու չես ուզում կամ, ավելի ճիշտն ասած, վախենում ես այդ բանից, որովհետև, ինչպես ինքդ շատ լավ բնորոշեցիր քեզ, դու թուլամորթ մարդ ես: Ես քեզ ասում եմ արի բժշկեմ քեզ, դու ինձ ասում ես, թե խաչ քաշեմ քեզ վրա: Մի՞թե, հիրավի, քո մեջ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

արդեն միանգամայն մեռել է ապրելու ձգտումը, որից աստված չի զրկել նույնիսկ ամենաչնչին զեռունին:

— Մեռել է, միանգամայն մեռել է, — ասաց Շահյանը, ետ ընկնելով բազկաթոռի մեջքին, և աչքերը փակեց ձանձրացած:

— Բայց ինչ-որ կնոջ մասին խոսելիս ասացիր, որ եթե նա քեզ մոտ լինի, հարության կառնես: Այդ բանն ինձ հիմք է տայիս կարծելու, որ դրությանդ պատճառն իսկապես սերն է, դժբախտ սերը: Հա՞:

— Այս սեր չէ, — պատասխանեց Շահյանը, գլուխը ետ ձգած բազկաթոռի մեջքին և աչքերը փակած: — Այա այն է, ինչ որ կա ամեն մարդու, ամեն կենդանի արարածի մեջ: Այս այն է, առանց որի մարդկությունը և առհասարակ բոլոր կենդանի աշխարհը պիտի մեռներ, չորանար և իսպառ ոչնչանար մի սերնդի վրա, ինչպես չորանում և ոչնչանում է րկրի կենարար թացությունից զրկված ծառը: Այս այն դևն է, որի մսաին խոսում էի, որ թաքնված է կնոջ մարմնի մեջ և այնտեղից մտնում է մարդու արյունը, վառում, բորբոքում, գազանացնում և նրան...

Մինասյանը մտառությամբ նայում էր Շահյանի շրթունքներին և աշխատում էր թափանցել նրա հոգու խորքը:

— Գիտե՞ս ինչ կա, Լևոն, — ասաց նա, երկարատև լռությունից հետո. — արի քո հիվանդությանն ուրիշ անուն տան — դու էրոտոման ես, այն սարսափելի Էրոտոմաններից, որոնք անկողին են մտնում կնոջ մարմնի մասին մտածելով, և անկողնուց վեր են կենում դարձյալ կնոջ մարմնի մասին մտածելով, բայց կնոջից այնքան հեռու են, որքան երկինքը երկրից: Խոստովանիր, այդպե՞ս է, թե ոչ:

— Ո՞վ գիտե, գուցե և ճիշտ է դիագնոզդ, բայց ամեն մարդ էրոտոման է առավել կամ նվազ չափով, ոմանք տեսականապես, ոմանք գործնականապես: Եվ եթե այս հիվանդություն է, ապա ամեն մարդ հիվանդ է և ամեն մարդ, և ամբողջ մարդկությունը պետք է բժշկվի: Պետք է բժշկվի հիմնովին, արմատից: Դևը, դևը ... Պետք է ոչնչացնել դևը — ահա բժշկության միակ միջոցը:

— Սխալվում ես, Լևոն. դևը ոչ թե պետք է ոչնչացնել և անկարելի է ոչնչացնել — այլ պետք է անվնաս դարձնել և իր բնական ճանապարհը տալ նրան: Քո դևն այդքան սարսափելի է թվում քեզ, որովհետև շեղվել է իր բնական ճանապարհից: Մենք կսանձենք նրան: Վեր կաց: Ես բժշկության ավելի լավ միջոցը գիտեմ:

Մինասյանը բռնեց Շահյանի երկու ձեռքից և ուզում էր զոռով վեր կացնել նրան, սակայն Շահյանը պինդ խրվեց բազկաթոռի մեջ և դեն հրեց ընկերոջն այնպիսի ուժով, որ Մինասյանն ամենևին չէր սպասում:

— Այդ ի՞նչ կոպիտ վարմունք է, — ասաց Շահյանը, փայլեցնելով նրա վրա իր աչքերը զսպված զայրույթով: — Ես այդպիսի բաներ չեմ սիրում: Ասացի քեզ, որ Մարությունների տուն չեմ գար:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

— Ուրիշ տեղ կտանեմ:

— Ոչ մի տեղ: Եվ խնդրում եմ ինձ հանգիստ թող: Այդ ի՞նչ խնամակալություն է, չեմ հասկանում:

Շահյանը խոսում էր այնպիսի վճռական եղանակով և այնքան վիրավորված, որ Մինասյանը մնացեք էր զարմացած, թե որտեղից գտնվեց հանկարծ այդքան կամքի ուժ և այդպիսի անձնասիրություն այդ մեռած երիտասարդի մեջ:

— Բայց դու կորած ես, Լևոն, եթե դուրս չգաս դեպի ազատ օդ, — բացականչեց Մինասյանը:

— Քեզ ի՞նչ, թող կորչեմ, քեզ ի՞նչ, — պատասխանեց Շահյանն այնքան դրդված, որ գաջի գույն ստացած նրա դեմքի վրա մինչև անգամ կարմրության պես մի բան երևաց:

Մինասյանը նորից փորձեց համոզել նրան այս անգամ ավելի լրջորեն և մտերմորեն, սակայն Շահյանը մնաց անդրդվելի:

— Դե, որ այդպես է, պետք է ճիշտ որ, խաչ քաշել քեզ վրա և անցնել գնալ, — բացականչեց Մինասյանը: — Այժմ մեղքն ա վարձքը քո շլինքին:

Մինասյանը դուրս եկավ Շահյանի մոտից միանգամայն համոզված, որ նրան փրկելու ոչ մի հույս չկա:

19

Այդ երեկո Մարությանների տանը խոսակցության առարկան Շահյանն էր: Մինասյանը նկարագրեց նրան իբրև ֆիզիկապես և մանավանդ իբրև հոգեպես կորած մի մարդու, որ հրաշքով միայն կարող էր ազատվել կյանքի համար:

— Բայց ի՞նչ կասեք, որ ես այդ հրաշքը գործեմ, — բացականչեց Մար ությանը:

— Այդ անկարելի է, — ասաց Մինասյանը: — Ես, որ այնքան մոտ եմ նրան, ոչ մի կերպ չկարողացա համոզել, որ շորերը հագնի և դուրս գա ինձ հետ:

— Իսկ եթե ես վաղը բերեմ նրան այստեղ:

— Ինչ ասեմ, մինչև որ չտեսնեմ, չեմ հավատար:

— Շատ բարի:

Հետևյալ օրը Մարությանի առաջին գործն այն եղավ, որ դիմեց դեպի Շահյանի տուն: Նրան ոգևորում էր ոչ այնքան «հրաշք գործելու», այսինքն Շահյանին փրկելու ցանկությունը, որքան այն, որ Շահյանին իրենց տուն բերելով կենդանության մի նոր հոսանքը պիտի մտցներ իր ընտանիքի մեջ ինչպիսի կենդանություն, որ մտցրել էր արդեն Մինասյանին իրենց տուն հրավիրելով, թեև նա շատ հեռու էր Մինասյանի ունեցած ընդունակությունները Շահյանին վերագրելու մտքից:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Իրենց տան փողոցը դեռ չէր ծռվել նա, երբ արագ քայլերով նրա դեմն ելավ օր. Սահակյանը:

— Նոր լուր իմացե՞լ եք, — կանչեց Օր. Սահակյանը՝ դեռ չմոտեցած:

— Ի՞նչ լուր:

— Շահյանը անձնասպանություն է գործել:

Մարությանը կանգ առավ քարացած:

— Այդ անկարելի է, — ասաց նա մեքենայաբար:

— Ձեզ ճիշտ բան եմ ասում. ատրճանակով ցրիվ է տվել իր հիմար ուղեղը: Իր կալվածների կառավարիչը պատմեց: Մեր բակումն է ապրում:

— Ե՞րբ, ի՞նչ եք ասում:

— Երեկ գիշեր: Այդպիսով Նոր տարվա առաջին իսկ օրը հայոց աշխարհը դժբախտություն ունեցավ զրկվելու մի երևելի կյանքից: Եվ, երևի, դրա՞ համար է, որ այդքան ազդվեցիք:

— Վա՛յ, խե՛ղճ, խե՛ղճ երիտասարդ, — արտասանեց Մարությանն անկեղծ ցավով: — Իսկ ես, երևակայեցեք, այս րոպեիս գնում էի, որ նրան մեր տուն բերեմ:

— Այդ ի՞նչ քամի էր փչել ձեր գլխին:

Մարությանը պատմեց Մինասյանի պատմածը Շահյանի մասին և ասաց, թե կամենում էր և հույս ուներ, որ կփրկի նրան:

— Ո՞՛ւմ պետք է փրկեիք. մի արդեն մեռած մարդո՞ւ — բացականչեց օր. Սահակյանը: — Մինասյանն երեկ նրա մոտից ուղղակի մեր տուն էր եկել և նրա մասին խոսում էր իբրև արդեն մեռած մարդու մասին: Ինձ որ հարցնես, ես ամենևին չեմ ցավում, որովհետև, միևնույն է, անպետք մարդ էր:

Մարությանը տխուր ու տրտում վերադարձավ տուն օր. Սահակյանի հետ:

Տանն ամենքի վրա խոր տպավորություն գործեց Շահյանի անձնասպանության լուրը: Թեկլեն սկսեց սգալ ցամաք աչքերով, բայց այնպիսի աղեկտուր խոսքերով, որ նույնիսկ օր. Սահակյանն արտասվեց: Եվան թաշկինակը սեղմել էր աչքերին և իզուր աշխատում էր զսպել խեղդող հեկեկանքը: Նա հիշում էր Շահյանի հետ ունեցած իր ծանոթությունը և թեպետ մի առանձին քնքուշ զգացում չէր տածում դեպի նա, բայց նրան շատ բարի ու անվնաս երիտասարդ էր համարում և այժմ սրտի խորքիը ցավում էր նրա եղեռնական վախճանի համար: Մինչդեռ Աշխենը նստած էր լուռ, անշարժ, կենտրոնացած հայացքը հառած մի կետի և նրա միտքը, հոգին թռել էր հեռու, այնտեղ, ուր նույնպես մեռել էր իր սիրած երիտասարդը, բայց բոլորովին այլ մահով — պատվավոր, օգտակար, խրախուսիչ մահով...

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մինասյանը տան չէր և Շահյանի անձնասպանության լուրն իմացավ այն ժամանակ, երբ ճաշին տուն եկավ: Թեև այդ լուրն այնքան էլ անակնկալ չէր նրա համար, բայց և այնպես այնպիսի ազդեցություն ունեցավ նրա վրա, ինչպես գլխին իջեցրած դագանակի մի հարվուած:

— Ա՛խ, թշվառականը, — բացականչեց նա, — Այդ ի՞նչ է արել: Հոգիս վկայում էր ախր, որ նա բնական մահով չի մեռնիլ: Բայց մա՛յրը... մա՛յրը: Օ՛, խեղճ պառավ: Ի՞նչ կլինի այժմ նրա դրությունը:

Մինասյանը շտապեց դեպի Շահյանի տուն և վերադարձավ ուշ երեկոյան, երբ Մարությունները նստած էին թեյի սեղանի շուրջը: Օր. Սահակյանն առավոտվանից մնացել էր Մարությունների տանը և սպասում էր Մինասյանի վերադարձին, որ իմանա Շահյանի անձնասպանության մանրամասնությունները: Մինասյանը մտավ հոգնած և խիստ տխուր: Նա սրտաճմլիկ մանրամասնություններ պատմեց Շահյանի մոր վիճակի մասին և ասաց, որ խեղճ պառավը պարզապես խելագարված է վշտից:

— Նա չճանաչեց ինձ և շուրջը հավաքված ազգականներին պատմում էր, որ գիշերը իր որդու սենյակում հանկարծ մի աթոռ էր վայր ընկել կոտրվել և, երբ շրխկոցի ձայնից ներս էր վազել այնտեղ, տեսել էր, որ իր Լևոնը հատակի վևա չոքած՝ նորոգում է կոտրված աթոռը: Ծառայի պատմածից, հիրավի, երևում է, որ Շահյանն անձնասպանությունը գործելիս չոքած է եղել գրասեղանի և աթոռի արանքում և վայր ընկնելիս գլորել է աթոռը: Ես տեսա թշվառականի դիակը. ատրճանակն արձակել է աջ քունքի վրա և գանգի մի մասը փշրել:

— Թուղթ-բան չի՞ թողել — հարցրեց Մարուլյանը:

— Երեք նամակ է թողել. մեկը մոր անունով, որի մեջ գրված էր՝ «Դժբախտ մայր, քեզ չեմ մեղադրում, որովհետև չես իմացել, թե ինչ ոճիր ես գործում»: Մյուսի մեջ գրված էր բառացի հետևյալը. «Անձնասպանությանս համար ոչ ոքի չմեղադրել, բացի աստծուց»: Իսկ երրորդն ահա այս ծրարն է իմ հասցեին:

Եվ Մինասյանը ծոցից հանեց մի մեծ ու հաստ ծրար

— Ի՞նչ է, — հարցրին այս ու այն կողմից խիստ հետաքրքրված:

— Այ, կարդացեք տեսեք ինչ է, — ասաց Մինասյանը, ծրարի միջից հանելով աշակերտական մի տետրակ կապույտ կազմով:

— Տվեք ինձ, ես կարդամ, — ասաց օր. Սահակյանը և տետրակն առավ նրա ձեռքից:

— Իսկ ինձ, եթե կարելի է, մի քիչ բան տվեք ուտելու, որովհետև այսօր ոչինչ չեմ կերել:

Եվան վեր թռավ տեղից:

— Ես պահել եմ ձեր այսօրվա ճաշը: Ո՛րտեղ կուտեք, այստե՞ղ, թե ձեր սենյակում:

— Այստեղ, այստեղ, ասա բերեն այստեղ, — պատվիրեց Մարությանը:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Այն միջոցին, երբ Մինասյանը, սեղանի ծայրը քաշված, ուտում էր իր ճաշը հոգնած մարդու դանդաղությամբ, օր. Սահակյանը, շրջապատված Մարությաններով, կարդամ էր հետևյալը.

20

ԻՄ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Հիշո՞ւմ ես, այսօր, որ կյանքի գովքն էիր անում, ես ասացի քեզ, որ պատասխանս կստանաս գրավոր: Արդ՝ ընդունիր գրությունս իբրև իմ պատասխանը և, եթե գտնես, որ ճշմարիտ չեմ ասում, այրիր այս նամակն այնպես, ինչպես որ ես երկրագունդը կայրեի, եթե կարողանայի:

Հետևում եմ անձնասպանների օրինակին և, այս ողորմելի անոթը — գանգս ցրիվ ածելուց առաջ, նամակներ եմ գրում: Մորս արդեն գրել եմ: Հիմա էլ քեզ եմ գրում, կյանքի օրներգու: Հա՛, մի նամակ էլ կգրեմ, որ անձնասպանությանս համար ոչ ոքի չմեղադրեն: Այդպես է կարգը և թող այդպես լինի: Կամ, եթե ուզում են անպատճառ մեղադրել մեկի, թող մեղադրեն նրան կամ այն բանին (անունը չգիտեմ. հավատացյալներն ասում են, որ անունը աստված է), որի կամքով ես անգոյությունից գոյություն ստացա, ապրեցի ամբողջ 27 տարի առանց իմանալու, թե ինչու, և այժմ գոյությունից նորեն գնում են դեպի անգոյություն՝ զզված և ձանձրացած այն բոլորից, ինչ-որ տեսա աշխարհ կոչված այս հսկայական հիմարանոցում:

Զարմանալի տափակություն կա մարդկանց ուղեղի մեջ. երբ որ տեսնում են, որ որևէ մեկի անձնասպանության մեջ շոշափելի կերպով ոչ ոք մեղավոր չէ, նրանք իրենց իրենց մեղադրանքը թափում են անձնասպանի գլխին: Մինչդեռ եթե նրանք մտքի մի քիչ խորություն ունենային, փառաց ի փառս պիտի բարձրացնեին անձնասպանին, և ոչ թե մեղադրեին: Եթե մեղադրանքի — և այն էլ մահացու մեղադրանքի — մի կետ կա առհասարակ բոլոր անձնասպանների համար, այդ այն է, որ նրանք ապրել են: Ապրել կնշանակի ամենամեծ հիմարությունը գործել: Արդ՝ կարելի՞ է մեղադրել նրան, ով չի ցանկանամ շարունակել հիմարություն գործել:

Ասում են, որ անձնասպանությունը խելագարության արգասիք է լինում: Այդպես ասողներն անշուշտ իրենք են խելագար կամ, եթե ըստ իրենց հասկացողության՝ խելագար չեն, խելագարությունը թարս են հասկանում: Գիտե՞ս որն է իսկական, արտոնյալ խելագարությունը. — ա՛յն, երբ զգում ես, տեսնում ես, համոզված ես, որ կյանքը դատարկ մի բան է, ավելի քան տորիչելյան դատարկությունը, և, այնուամենայնիվ, շարունակում ես ոչ թե միայն ապրել, այլև կաշուցդ դուրդ գալ, որ կարելույն չափ երկար ապրես:

Անձնասպանները ոչ թե խելագար են, այլ ամենաիմաստուն մարդիկ, որովհետև միայն նրանք գիտեն, թե ի՞նչ է կյանքի իսկական արժեքը: Իսկ կյանքի իսկական արժեքը, եթե արտահայտելու լինենք թվանշանով, դուրս կգա հսկայական

մի զրո, որի դատարկ շրջանագծի միջով իր սարտոմորտալներն է կատարում կամ, հայերեն ասենք, իր գլուխկոնծին է անում համաշխարհային կրկեսի այն միմոսը, որի անունն է մարդկություն ...

Անձնասպանները բացի ամենաիմաստուն մարդիկ լինելուց, այլ ամենաքաջ մարդիկն են: Ամենամեծ երկյուղը, որ պաշարում է մարդուն, մահվան երկյուղն է: Եվ իզուր չէ, որ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

օրենսդիրները պատժի ամենաբարձր աստիճանը մահվան պատիժն են սահմաներ: Ապրել կամենալ — նշանակում է մահից վախենալ: Արդ՝ ով մահից ոչ թե միայն չի վախենում, այլև ինքն է իրեն մահվան գիրկը նետում, — ամենաքաջը չէ՞:

Ապրելու և, այսպես կոչված, բնական մահվան սպասելու համար հարկավոր է երկու բան — կամ չմտածել, կամ հասնել մտածողության այն կետին, որի վրա մարդս կանգնած անսասան՝ ընդունակ դառնա արհամարհելու, միևնույն տխմար, աննպատակ բանը համարելու թե՛ կյանքը և թե մահը: Չմտածել չեմ կարող, որովհետև, դժբախտաբար, անասունից չեմ ծնված. կյանքն ու մահն էլ հավասարապես արհամարհել նույնպես չեմ կարող, որովհետև կյանքը չեմ փորձել նրան արհամարհելու չափ, որով և պայմանավորված է արհամարհանքը դեպի մահը:

Չգիտեմ, ինչպես կլինի ապագայում, բայց գիտեմ, որ այժմ մարդս ապրում է ոչ իր ցանկությամբ, ուզում եմ ասել, ոչ իր ազատ կամքով: Ինչպես որ նա իր ազատ կամքով չի ծնվում, այնպես և իր ազատ կամքով չէ, որ ապրում է: Նրան ծնում են և ստիպում, որ ապրի: Ծնում է բնությունը իրեն միայն հասկանալի նպատակով (կամ, գուցե, նա էլ ոչ մի նպատակ չունի), որի հետ մարդուն իրավունք չի տալիս գործ ունենալու: Նույն բնությունն է, որ ստիպում է նրան ապրել և դարձյալ ծածուկ է պահում նրանիկ այն նպատակը, որի համար ստիպում է նրան ապրել:

Սակայն անտանելին և միանգամայն անհասկանալին բնության ստիպմունքը չէ, այլ նույնիսկ մարդկային ստիպմունքը, որը ձևակերպված է ընտանիքի, շրջանի, հասարակության, ազգի, պետության և, վերջապես, ընդհանուր մարդկության նախապաշարմունքների, սովորությունների, հասկացողությունների, օրենքների, սկզբունքների մեջ: Գուցե ուրիշների համար այդ ստիպմունքն աննկատելի է և անզգալի, իսկ շատերի համար նույնիսկ քաղցր, բայց ինձ համար միշտ անտանելի է եղել և կլինի, եթե շարունակեմ ապրել:

Այժմ, երբ կանգնած եմ մահվան դռանը, այդ ստիպմունքը գոյություն չունի ինձ համար: Ես ազատ եմ, ինչպես օդը: Եվ, երբ մտածում եմ, որ վաղը և հավիտյան չպիտի մտածեմ այլևս, ինձ թվում է, թե այս րոպեին ամենաերջանիկն եմ ես բոլոր մարդ արարածների մեջ: Եթե մի բան կա, որից վախենում եմ այս րոպեին, այդ այն է, թե միգուցե այնպես պատահի, որ ստիպեն ինձ դարձյալ ապրել: Չէ՞ որ «քաղաքակրթությունն» ու «մարդասիրությունն» այնպիսի «բարոյական» (ի՛նչ տխմար բառեր) օրենքներ են սահմանել, որոնց զորությամբ մարդն ազատ չէ մինչև անգամ իր սեփական կյանքին վերջ տալու: Եթե ես, փոխանակ սենյակումս փակված՝ անձնասպանություն գործելու, կամենայի կամրջից գետը նետել ինձ, կբռնեին, թույլ չէին տալ: Եվ ես իրավունք չէի ունենալ բողոքելու: Իսկ եթե բողոքեի, գժատուն կտանեին ինձ: Ահա, թե ինչու անձնասպանությունն էլ գողության պես, ծածուկ է կատարվում: Բռնություն, բռնություն և բռնություն — ահա թե ինչով է շրջապատված մարը կյանքի մեջ: Եվ ես հրաժարվում եմ հասկանալ նրանց, որոնք դատապարտում են այդ բռնությունից իրենց օձիքն ազատողներին:

Չգիտեմ, իմ մահը ումնիցե ցավ կպատճառի՞, թե ոչ, բայց հաստատ գիտեմ, որ մայրս կամ իսկույն, կամ շատ շատով կմեռնի: Էհ, այդ ավելի լավ: «Մարդ մի անգամ պիտի մեռնի», բայց երանի՛ նրան, ով շուտ կմեռնի: Հազար ու բյուր երանի կլիներ, եթե ես մեռնեի այն ժամանակ, երբ չէր զարթնել գիտակցությունս:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Գիտակցություն... Ահա, թե որտեղ է մարդուս բոլոր թշվառության աղբյուրը: Կկամենայի իմանալ՝ ով է եղել այն երևելի ծաղրածուն, որ մարդուն անվանել է «ստեղծագործությունների պսակ» — մի անանման ծաղր, որ մենք ցարդ լուրջ բանի տեղ ենք ընդունում ու գործածում: Այն, ինչ-որ բնությունը մեզ տվել է իբրև լոկ պատիժ, մենք առանձին շնորհք ենք համարում և պարծենում: Նա մեզ գիտակցություն է տվել, որ շարունակ տանջվենք, իսկ մենք հիմարաբար կարծում ենք, թե դա մի պսակ է մեր գլուխը զարդարող:

Եթե ես աշխարհիս տերը լինեի, կհրամայեի ոչնչացնել աւն բոլորը, ինչ որ նպաստում է մարդու գիտակցության, իմացկանության զարգացմանը, որովհետև ամեն մի քայլ, որ տանում է դեպի զարգացումը, տանջանքի մի նոր դուռ է բաց անում մարդու համար: Գիտությունն ընդունակ է մարդու մեջ զարգացնելու մի անհագ հարցասիրություն, որի առաջ նույնիսկ ինքն ընկճվում է ինչպես մի թզուկ իր զարթեցրած հուժկու գազանի առաջ: Քաղաքակրթության գործն այն է, որ մարդու պահանջներն է ավելացնում — բոլորովին ավելորդ պահանջներ — և տասը նոր պահանջից հազիվ մեկին միայն կարողանում է գոհացում տալ: Մարդու ուղեղը հեքիաթական այն քնած վիշապն է, որ զարթնելուն պես անհագ քաղց է զգում, որքան շատ ես տալիս, որ քաղցը հագեցնե, այնքան ավելի է պահանջում: Արդ՝ քանի որ ընդունակ չես և անկարելի է նրա քաղցը հագեցնել, ավելի լավ չէ , որ թողնես հանգիստ քնած մնա իր համար: Քանի՞ գրոշ արժե մի դրություն, որ հին իմաստասերը բանաձևել է այս խոսքերով. «Ես միայն մի բան գիտեմ, այն՝ որ ոչինչ չգիտեմ»: Արժե՞ արդյոք, որ մարդ այնքան տանջվի, չարչարվի միմիայն այն բանի համար, որ վերջ ի վերջո իմանա, թե ինքը ոչինչ չգիտե:

Կարլեյը ասում է — «Երբ մարդը քաղցած է, հաց է պահանջում, բայց երբ կշտացավ, հարցնում է՝ ինչո՞ւ եմ ապրում»: Ես կուզեի, որ ոչ մի քաղցած մարդ չլիներ, այն ժամանակ ամեն մարդ կիմանար և կհամոզվեր, որ իզուր է ապրում: Այստեղ ես գալիս եմ մի զարմանալի եզրակացության. արդյոք քաղցածները չե՞ն, որ անմիջական պատճառ են հանդիսանում մարդկության կյանքի հարատևության:

Լավատեսներդ վախկոտ եք և իբրև վախկոտ՝ խաբեբա եք. Դուք խաբում եք թե ձեզ և թե ուրիշներին: Դուք համարձակություն չունիք ուղղակի նայելու միակ բացարձակ ճշմարտության՝ մահվան երեսին: Ձեր ամբողջ վարդապետությունը հիմնված է կեղծիքի և ինքնախաբեության վրա: Դուք սուտ եք խոսում, երբ կաշուց դուրս եք գալիս, ապացուցելու համար, թե ապրելը հիմարություն չէ: Կյանքին նվիրված բարձրաձայն օրհներգների մեջ դուք աշխատում եք խլացնել մահվան ճիչը, որ սարսափեցնելով սարսափեցնում է ձեզ: Դուք եք, որ ասպարեզ եք նետել «.գոյության կռիվը», որպեսզի փախուստ տաք մահից: Դուք շրջապատել եք ձեզ սիրո, ատելության, կրքի և նախանձի հազարավոր բարդ իլյուզիաներով, որպեսզի դրանց թանձր մշուշի մեջ չտեսնեք մահվան անդունդի անտակ խորությունը, որի մասին մտածելիս սառչում է ձեր արյունը: Ձեզ ծանոթ չէ մռայլ հոռետեսի հպարտ արհամարհանքը, որի առաջ փշրվում, խորտակվում է ամեն ինչ: Խելագարին հատուկ համառությամբ դուք գնում եք որոնելու, որ պաշտեք մի ինչ-որ, թե ինչ, ինքներդ էլ չգիտեք: Հին կռապաշտների նման աստվածներ եք հնարում ձեզ համար և երևակայում թե դրանք են ձեր որոնածը:

Օ, ողորմելինե՛ր, օ՜, թշվառականներ, օ՜, ատելի՛ ստրուկներ ...

Դեռևս Էպիկուրն է ասել՝ «Մահը մեզ չի վերաբերում: Եվ Շոպենհաուերը, — քո արհամարհած Շոպենհաուերը , — այսպես է բացատրում այդ խոսքերի իմաստը: «Երբ մենք գոյություն ունինք, չկա մահ, իսկ երբ կա մահ, — մենք չկանք: Կորցնել մի բան, որի բացակայությունը

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

կարելի չէ զգայ, դա ցավալի չէ ... հետևաբար գալիք անգոյությունը (մահը) մեզ չի վերաբերում, ինչպես որ չի վերաբերել անցյալ անգոյությանը» (այսինքն ա՛յն, երբ մենք դեռ չէինք ծնված):

Քանի րոպեից հետո ես այլևս չեմ լինիլ կամ, այլ խոսքով ասած, կլինեմ գալիք անգոյության մեջ: Մի քանի րոպեից հետո ընկած կլինեմ հատակի վրա գանգս ցրիվ եկած, արյան մեջ շաղախված: Մայրս, — խեղճ, դժբախտ պառավ, — կոծելիս կլինի ծնկները, սենյակս լիքը կլինի ոստիկաններով և հետաքրքիր մարդկանցով: Կուզեի մեռած ժամանակ էլ տեսնել՝ դիտելու համար այդ հիմար մարդկանց իրարանցումը, որպեսզի մի կուշտ ծիծաղեի:

Համլետն անշուշտ ամենամեծ տխմարներից մեկն է եղել դեռևս, որ տարակուսել է, թե միգուցե այնտեղ՝ անդրգերեզմանական կյանքի մեջ էլ ինչ-որ երազներ խանգարեն իր հավիտենական հանգիստը: Եթե մի վայրկյան անգամ այդպիսի տարակուսանք անցներ մտքով, այն ժամանակ մեռնելուց առաջ անշուշտ, յոթն օր կքավեի մեղքերս, մինչդեռ այժմ, ինչպես տեսնում ես, դեռ հայհոյում էլ եմ և հայհոյում ամենահանգիստ խղճով, որովհետև համոզված եմ, որ հայհոյանքը նույնքան արժեք ունի, որքան և աղոթքը, այսինքն — ոչ մի արժեք չունի:

Կան չափազանց խորամիտ, բայց խիստ բարեմիտ մարդիկ, որոնք այն աշխարհի կրոնական գաղափարները մեկնաբանում են իբրև իրականություն: Նրանք այնքան խելոք են, որ, իհարկե, չեն հավատում դժոխքի և դրախտի, սատանաների և հրեշտակների գոյության, բայց և իրենց խորամանկությամբ հանդերձ այնքան միամիտ են, որ կարծում են, թե կրոնական այդ ցնդաբանությունները, որ հանեն հիվանդոտ երևակայության աշխարհից և դնեն իմ առաջ իբրև իրական փաստ, ինձ և ինձպեսներին կհամոզեն, թե դրանք սուտ չեն:

Եթե կա մի բան, որ ճշմարիտ է, դա մահն է, որովհետև ճշմարիտն այն է, ինչ որ հավիտենական է, իսկ մահն է միայն, որ հավիտենական է: Ժամանակը գոյություն ունի այնքան, որքան մենք ապրում ենք, իսկ մեռնելուց հետո Ժամանակը գոյություն չունի կամ, ուրիշ խոսքով, գոյություն ունի այն, ինչ որ մենք անվանում ենք հավիտենականություն: Մենք մեզ համար սահմանել ենք ժամանակի որոշ չափեր և դրանով ենք ուզում չափել նույնիսկ անդրգերեզմանական կյանքի տևողությունը, եթե միայն կյանք կարելի է անվանել այն, որ մարմինս հող կլինի դարձած, այդ հողի վրա խոտ կլինի բուսած և այդ խոտի մեջ արածելիս կլինի մի գառ, որպեսզի այդ գառան միսն ուտողները վերջն ինձ պես հող դառնան և այլն... Կոմեդիա, կատարյալ կոմեդիա... Եվ երբ մտածում ես, որ համաշխարհային այդ կոմեդիան պիտի շարունակվի անվերջ, առանց վերջնական նպատակի... Ծիծաղում ես և, միևնույն ժամանակ, ապշում, որ մարդիկ այս բոլորը գիտենայով հանդերձ ինչ-որ նոր տարիներ են հնարել, ուրախանում են, տխրում, սիրում, ատում, նախանձում, սպանում, աշխարհ բերում նոր արարածներ... Հիմարանոց, հսկայական հիմարանոց... Կալիգուլան ափսոսում էր, թե ինչու հռոմեացիք մի գլուխ չունեին, որ թրի մի հարվածով վերջ տար նրանց կյանքին: Նա ափսոսում էր չարությունից: Նույնն ես եմ ափսոսում ամբողջ մարդկության համար, միայն խղճահարությունից:

Բայց եթե մարդկությունը մի գլուխ չունի, ես խո մի գլուխ ունիմ:

Գանգս ... «Ի՞նչ բան է այս անոթը, — ասում է Շելլինգը, — որ իր մեջ պարունակում է ամբողջ աշխարհը, ամբողջ երկինքը: Ի՞նչ բան է մոգական այս ամրոցը, որ սերն իր հրաշքներն է կատարում, ուր ամեն ինչ, ինչ որ փառավոր է և վեհ, ինչ-որ նողկալի է և սոսկալի, գտնվում է

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

իր սաղմի մեջ կողք-կողքի: Ի՞նչ բան է գանգ կոչված մարդկային այս գլուխը, որ ստեղծում է տաճարներ, աստվածներ, ինկվիզիցիա և դներ: — Որդի բնակարան»:

Այո , միմիայն որդի բնակարան: Բայց այդ միայն մահից հետո: Իսկ մահից առաջ — տանջանքի շտեմարան:
Օ՜, իսկույն, իսկույն կփարեմ, կոչնչացնեմ տանջանքի այս շտեմարանը: Բավական է, որքան այս անտանելի ծանրությունը կրեցի ուսերիս վրա, այլապես՝ մինչև երբ և ինչո՞ւ...
Շոպենհաուերը ասում է. «Մահվան բոպեն կարող է նման լինել ծա՛նր պատրանքից արթնանալուն»: Ես ուզում եմ արթնանալ կյանքի ծանր պատրանքից մահվան գիրկը նետվելով
Ես մեռնում եմ խղճալով ձեզ, կյանքի՛ ստրուկներ, որ ինչքան էլ կամենաք ապրել այնուամենայնիվ վերջ ի վերջո պիտի գաք իմ ետևից:
Շահյանի թաղմանը ներկա էին, ի միջի այլոց, օր. Սահակյանն ու Մարությանները: Մինասյանը չէր հեռանում հանգուցյալի մոր մոտից:
Շահյանը կարծես քնած էր դագաղի մեջ. Նրա ծնոտները կապած էին սպիտակ թաշկինակով, որ միևնույն ժամանակ ծածկում էր քունքի և գանգի ջարդված մասը: Նրա փոքր-ինչ բաց շրթունքների վրա սառել էր հեգնական մի ժպիտ:
Եվան եկեղեցում կանգնած էր դագաղի մոտ, և նրա ուշադրությունն ակամա գրավում էր հանգուցյայի այդ ժպիտը: Նրան թվում էր, թե Շահյանի շրթունքների վրա այդ ժպիտը մնացել էր այն բոպեից, երբ գրել էր իր վերջին տողերը. «Անձնասպանությանս համար ոչ ոքի չմեղադրել, քացի աստծուց»: Ի՞նչ էր այդ՝ կատա՞կ, թե՞ հայհոյանք: Մի՞թե կարելի է կատակ անել մահվան հետ: Եթե հայհոյանք — մի՞թե կարելի է հայհոյել խորհրդավոր անհայտության դռան առաջ կանգնած միջոցին... «Մի՞թե եղբայրս իր մահվան ժամանակ կարող էր այդպես ժպտալ», — մտածեց Եվան և նույն բոպեին փշաքաղվելով ետ նայեց ակամա:

Նա տեսավ Աշխենին, որ չոքած էր կանանց դասի սյունի տակ և խուլ հեկեկում էր, աչքերը թաշկինակի մեջ սեղմած ...

ՎԵՐՋ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com